Եկեղեցու Նախագահների ուսմունքները

Հովարդ Վ. Հանթեր

ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀՈՎԱՐԴ Վ. ՀԱՆԹԵՐ

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Գրքեր *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքից

Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (առարկայական համարը 36481)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Բրիգամ Յանգ (35554)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոն Թեյլոր (35969)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները.Վիլֆորդ Վուդրուֆ (36315)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Լորենզո Սնոու (36787)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ (35744)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հեբեր Ջ. Գրանթ (35970)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջորջ Ալբերտ Սմիթ (36786)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Դեյվիդ Օ. Մակքեյ (36492)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ (36907)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հարոլդ Բ. Լի (35892)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ (36500)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Էզրա Թաֆտ Բենսոն (08860)
Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Հովարդ Վ. Հանթեր (08861)

Այս գրքերը պատվիրելու համար դիմեք ձեր տեղական բաշխման կենտրոն կամ այցելեք ինտերնետային կայքը՝ store.lds.org Գրքերը մատչելի են նաև թվային ֆորմատներում LDS.org/hye և Gospel Library mobile app-ում:

Շնորհակալ կլինենք այս ձեռնարկի վերաբերյալ ձեր դիտողությունների և առաջարկների համար: Խնդրում ենք ներկայացնել դրանք.

Curriculum Development
50 East North Temple Street
Salt Lake City, UT 84150-0024 USA
Email: cur-development@ldschurch.org

Խնդրվում է նշել ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Չմոռանաք նշել ձեռնարկի վերնագիրը: Ապա ներկայացրեք ձեր դիտողություններն ու առաջարկները ձեռնարկի ուժեղ կողմերի և հնարավոր բարելավումների ենթակա մասերի վերաբերյալ:

© 2015 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են:
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Անգլերենի հաստատումը. 3/11
Թարգմանության հաստատումը. 3/11
Teachings of Presidents of the Church:Howard W. Hunter-ի
թարգմանությունը
Armenian
08861 201

Բովանդակություն

Նախաբան V
Պատմական ամփոփագիր X
Հովարդ Վ. Հանթերի կյանքն ու ծառայությունը 1
1 Հիսուս Քրիստոս՝ մեր միակ ուղին դեպի հույս և ուրախություն 45
2 «Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ». 57
3 Ձախորդություն՝ Աստծո ծրագրի մաս հանուն մեր հավերժական առաջընթացի 71
4 Ի վերուստ եկող օգնություն 87
5 Ջոզեֆ Սմիթ՝ Վերականգման մարգարե 103
6 Հիսուս Քրիստոսի Քավությունը և Հարությունը. 117
7 Շարունակվող հայտնություն ապրող մարգարեների միջոցով 131
8 Հռչակել Ավետարանը ողջ աշխարհին 143
9 Տասանորդի օրենքը 155
10 Սուրբ գրությունները՝ բոլոր ուսումնասիրություններից ամենաշահավետը 165
11 Ճշմարիտ մեծություն. 179
12 Վերադարձեք և մասնակցեք Տիրոջ խնջույքին 195
13 Տաճարը՝ մեր անդամակցության մեծ խորհրդանիշը. . . 203
14 Արագացնել ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքը 217
15 Տիրոջ ընթրիքի հաղորդությունը 229
16 Ամուսնություն՝ հավերժական համագործակցություն . . 239
17 Պահեք և պաշտպանեք ընտանիքը 253
18 Մենք հավատում ենք ազնիվ լինելուն. 269
19 Մեր պարտավորությունն Աստծո հանդեպ 281
20 Քայլել Փրկչի գթության ուղիով 295
21 Հավատք և վկայություն 309
22 Ուսուցանել ավետարանը 323
23 «Ոչ պակաս պիտանի». 337
24 Հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին 353
Տեսողական նյութերի ցանկ 365
Ցուցիչ 367

Howard W. Hunter

Նախաբան

Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հաստատել են *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները* շարքը՝ օգնելու ձեզ ավելի մոտենալ ձեր Երկնային Հորը և խորացնել ձեր հասկացողությունը Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանի վերաբերյալ: Եկեղեցու կողմից այս շարքին հատորներ ավելացնելուն զուգահեռ դուք կկարողանաք ստեղծել ավետարանական հղումների հավաքածու ձեր տան համար: Այս գրքերը նախատեսված են օգտագործելու անձնական ուսումնասիրության և կիրակնօրյա ուսուցման համար: Դրանք կարող են նաև օգնել ձեզ՝ պատրաստել այլ դասեր կամ ելույթներներ և պատասխանել Եկեղեցու վարդապետությանը վերաբերող հարցերին:

Այս գիրքը նկարագրում է Նախագահ Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները, ով ծառայել է որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ 1994 թվականի հունիսի 5-ից մինչև 1995 թվականի մարտի 3-ը:

Անհատական ուսումնասիրություն

Երբ ուսուցանեք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները, աղոթքով ոգեշնչում փնտրեք Սուրբ Հոգուց: Յուրաքանչյուր գլխի վերջում գտնվող հարցերը կօգնեն ձեզ խորհել, հասկանալ և կիրառել Նախագահ Հանթերի ուսմունքները: Հետևյալ գաղափարները կարող են նույնպես օգտակար լինել:

- Գրի առեք այն մտքերն ու զգացումները, որոնք գալիս են ձեզ Սուրբ Հոգուց, երբ դուք ուսումնասիրում եք:
- Ընդգծեք այն հատվածները, որոնք կամենում եք հիշել: Մտածեք այդ հատվածներն անգիր սովորելու մասին կամ նշելու դրանք ձեր սուրբ գրություններում՝ դրանց վերաբերող հատվածների կողքին:

- Կարդացեք որևէ գլուխ կամ հատված ավելի քան մեկ անգամ, որպեսզի կարողանաք ավելի խորը հասկանալ այն:
- Ինքներդ ձեզ հարցեր ուղղեք՝ ինչպես օրինակ. Ինչպե՞ս են Նախագահ Հանթերի ուսմունքները մեծացնում իմ հասկացողությունն ավետարանի սկզբունքների վերաբերյալ: Ի՞նչ է կամենում Տերը, որ ես սովորեմ այս ուսմունքներից:
- Հարցրեք ինքներդ ձեզ, թե ինչպես կարող են այս գրքի ուսմուքներն օգնել ձեզ անձնական մարտահրավերների և մտահոգությունների դեպքում:
- Ձեր սովորածով կիսվեք ընտանիքի անդամների և ընկերների հետ:

Ուսուցանել այս գրքից

Հետևյալ ուղենիշերը կարող են օգնել ձեզ՝ ուսուցանել այս գրքից, լինի տանը, թե եկեղեցում:

Պատրաստվեք ուսուցանել

Փնտրեք Սուրբ Հոգու առաջնորդությունը, երբ պատրաստվեք ուսուցանել: Աղոթքով ուսումնասիրեք գլուխը՝ վստահ լինելու Նախագահ Հանթերի ուսմունքների ձեր ըմբռնման մեջ: Դուք կարող եք ուսուցանել ավելի մեծ ուժով, երբ նրա խոսքերը ազդեն ձեզ վրա անհատապես (տես ՎևՈւ 11.21):

Գլուխների մեծ մասը պարունակում են ավելի շատ նյութ, քան դուք կկարողանաք քննարկել մեկ ժողովի ընթացքում: Աղոթքով ընտրեք ուսմունքները, որոնք զգում եք, որ կարող են լինել ամենօգտակարը:

Խրախուսեք մասնակիցներին ուսումնասիրել գլուխը նախքան դասը, որպեսզի ավելի լավ պատրաստված լինեն՝ մասնակցելու քննարկումներին և լավ օրինակ ծառայեն միմյանց :

Նախապատրաստվելով զբաղեցնել նրանց, ում դուք ուսուցանում եք, հատուկ ուշադրություն դարձրեք «Ուսումնասիրության և ուսուցման առաջարկներ» բաժնին, որը գտնվում է յուրաքանչյուր գլխի վերջում: Այդ բաժնում դուք կգտնեք հարցեր, սուրբ գրություններ և օգնություն ուսումնասիրողին կամ ուսուցանողին: Հարցերն ու սուրբ գրությունները կապված են գլխի նյութի

հետ: Ուսումնասիրության և ուսուցողական տեղեկատուները ավելի լայնորեն կիրառեք ավետարանն ուսումնասիրելիս և ուսուցանելիս:

Ներկայացրեք գլուխը

Երբ ներկայացնեք գլուխը, ձգտեք հաստատել մի այնպիսի մթնոլորտ, որտեղ Հոգին կարող է դիպչել մասնակիցների սրտերին ու մտքերին: Գուցե կամենաք օգտագործել հետևյալ գաղափարներից մեկը կամ ավելին.

- Կարդացեք և քննարկեք գլխի սկզբում գտնվող «Նախագահ Հովարդ Վ. Հանթերի կյանքից» վերնագրով բաժինը, իսկ հետո քննարկեք այն:
- Քննարկեք գլխից մի մեջբերում, նկար կամ սուրբ գրության որևէ հատված:
- Միասին երգեք որևէ օրհներգ:
- Համառոտակի կիսվեք թեմայի վերաբերյալ անձնական փորձառությամբ:

Խրախուսեք քննարկումներ Նախագահ Հանթերի ուսմունքների մասին

Երբ այս գրքից ուսուցանեք, հրավիրեք մյուսներին՝ կիսվել իրենց մտքերով, հարցեր ուղղեք, վկայեք և ուսուցանեք միմյանց: Երբ նրանք ակտիվորեն մասնակցեն, ավելի լավ պատրաստված կլինեն սովորելու և ստանալու անձնական հայտնություն:

Թույլ տվեք լավ քննարկումներ ծավալվեն ավելի շատ, քան փորձեք ներառել բոլոր ուսմունքները: Առաջնորդեք քննարկումները, որպեսզի դրանք կենտրոնանան Նախագահ Հանթերի ուսմունքների վրա:

Հարցերը, որ տրված են յուրաքանչյուր գլխի վերջում, արժեքավոր աղբյուր են քննարկումը խրախուսելու համար: Դուք կարող եք նաև մշակել ձեր սեփական հարցերը, որոնք հատկապես նրանց համար են, ում դուք ուսուցանում եք: Քննարկում խրախուսելու մի քանի այլ գաղափարներ տրված են ստորև.

- Խնդրեք մասնակիցներին կիսվել այն ամենով, ինչ նրանք սովորել են այդ գլխի իրենց անհատական ուսումնասիրությունից:

Կարող է օգտակար լինել կապվել մի քանի մասնակիցների հետ շաբաթվա ընթացքում և խնդրել, որ նրանք պատրաստված գան՝ կիսվելու այն ամենով, ինչ իրենք սովորել են:

- Հանձնարարեք գլխի վերջում ընտրված հարցերը անհատների կամ փոքր խմբերի: Խնդրեք մասնակիցներին՝ տվյալ գլխի մեջ գտնել այն ուսմունքները , որոնք վերաբերում են հարցերին: Ապա հրավիրեք նրանց՝ կիսվել իրենց մտքերով կամ գրի առնել դրանք:
- Միասին կարդացեք Նախագահ Հանթերի ուսմունքներից, որոնք տրված են տվյալ գլխում: Խնդրեք մասնակիցներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից և իրենց իսկ փորձառությունից, որոնք վերաբերում են այդ ուսմունքներին:
- Խնդրեք մասնակիցներին ընտրել մեկ բաժին և մտքում կարդալ այն: Հանձնարարեք նրանց, ովքեր ընտրել են նույն բաժինը, հավաքվել երկու կամ երեք հոգուց բաղկացած խմբերով և քննարկել այն, ինչ սովորել են:

Խրախուսեք, որ նրանք կիրառեն և կիսվեն

Նախագահ Հանթերի ուսմունքներն առավելագույնս իմաստալից կլինեն, երբ մարդիկ կիրառեն դրանք իրենց կյանքում և կիսվեն դրանցով ուրիշների հետ: Գուցե կամենաք օգտագործել հետևյալ գաղափարներից մեկը կամ ավելին.

- Հարցրեք մասնակիցներին, թե ինչպե՞ս կարող են նրանք կիրառել Նախագահ Հանթերի ուսմունքները՝ տանը, Եկեղեցում և այլ ոլորտներում ունեցած իրենց պարտականությունները կատարելիս: Օրինակ, գուցե դուք օգնեք նրանց խորհել և քննարկել, թե ինչպես կարող են կիրառել նրա ուսմունքները՝ որպես ամուսիններ, կանայք, ծնողներ, որդիներ, դուստրեր, տնային կամ այցելող ուսուցիչներ:
- Հրավիրեք մասնակիցներին՝ կիսվել իրենց սովորածը կիրառելու ընթացքում ունեցած փորձառություններով:
- Խրախուսեք մասնակիցներին՝ Նախագահ Հանթերի ուսմունքներով կիսվել ընտանիքի անդամների և ընկերների հետ:

Եզրափակեք քննարկումը

Համառոտ ամփոփեք դասը կամ խնդրեք որևէ մեկին կամ երկու ուրիշների անել այդ: Վկայեք ուսմունքների մասին, որոնք դուք քննարկել եք: Գուցե նաև կամենաք առաջարկել մյուսներին՝ կիսվել իրենց վկայություններով:

Տեղեկություն նյութերի աղբյուրների մասին

Այս գրքի ուսմունքները ուղիղ մեջբերումներ են Նախագահ Հովարդ Վ.Հանթերի քարոզներից կամ հոդվածներից: Հրատարակված աղբյուրներից մեջբերումները պահպանել են կետադրությունը, ուղղագրությունը, մեծատառերը և բնօրինակ աղբյուրների պարբերությունները, եթե խմբագրական և կամ տպագրական փոփոխություններն անհրաժեշտ են եղել բարելավելու դյուրընթեռնելիությունը: Քանի որ մեջբերումները պահպանում են հրատարակված աղբյուրներին հավատարմությունը, դուք գուցե տեքստում նկատեք փոքրիկ ոճական անհամապատասխանություններ : Օրինակ, դերանունները, որոնք վերաբերում են Աստվածությանը փոքրատառերով են որոշ մեջբերումներում, իսկ մյուսներում մեծատառերով:

Նախագահ Հանթերը հաճախ է օգտագործել *մարդիկ, մարդ,* և *մարդկություն* բառերը՝ դիմելով բոլոր մարդկանց՝ ինչպես արական այնպես էլ իգական սեռերին: Նա նաև հաճախ է օգտագործել դերանունները *նա* և *նրան* ի նկատի ունենալով երկու սեռերին էլ: Լեզվական այս կանոնները սովորական էին նրա դարաշրջանում և նա սովորաբար օգտագործում էր դրանք՝ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար:

Պատմական ամփոփագիր

Հետևյալ ժամանակագրությունն ապահովում է համառոտ պատմական հիմք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի ուսմունքների համար, որոնք ներկայացված են այս գրքում։

Նոյեմբերի 14, 1907 թվական	Ծնվել է Ջոն Վիլյամ (Վիլ) Հանթերի և Նելի Մարի Ռասմուսսեն Հանթերի ընտանիքում, Այդահո նահանգի Բոյսի քաղաքում։
Ապրիլի 4, 1920 թվական	Մկրտվել և հաստատվել է Բոյսիում։
Մայիս 1923 թվական	Ստանում է Արծիվ Սկաուտ Մրցանակը՝ հանդիսանալով Բոյսիի երկրորդ Արծիվ Սկաուտը։
Հունվար և Փետրվար, 1927 թվական	Իր խմբով՝ *Hunter's Croonaders,* երաժշտություն է ապահովում Ասիայում երկամսյա ճամփորդության ընթացքում։
Մարտ 1928 թվական	Տեղափոխվում է Հարավային Կալիֆորնիա
Ապրիլ 1928 թվական	Կալիֆորնիայում սկսում է աշխատել բանկում։
Հունիսի 10, 1931 թվական	Սոլթ Լեյքի Տաճարում ամուսնանում է Մարրիես Կլարա Մեյ (Քլեյր) Ջեֆֆսի հետ։
Հունվար 1932 թվական	Դեպրեսիայի պատճառով բանկերի փակման արդյունքում կորցնում է բանկի իր աշխատանքը, որից հետո մի շարք պատահական աշխատանքներ է կատարում։

Հունվար 1934 թվական	Սկսում է աշխատել Լոս Անջելեսի տարածաշրջանի Ջրհեղեղների վերահսկման կոմիտեի գլխավոր բաժնում։
Մարտի 20, 1934 թվական	Ծնվում է որդին՝ Հովարդ Վիլյամ (Բիլլի) Հանթեր կրտսերը։
Հոկտեմբերի 11, 1934 թվական	Մահանում է որդին՝ Հովարդ Վիլյամ (Բիլլի) Հանթեր կրտսերը։
Սեպտեմբեր 1935 թվական	Ընդունվում է Լոս Անջելեսի Հարավարևմտյան Համալսարանի Իրավաբանական Դպրոցը (այժմ Հարավարևմտյան Իրավաբանական Դպրոց)։
Մայիսի 4, 1936 թվական	Ծնվում է որդին՝ Ջոն Ջեյքոբ Հանթերը։
Հունիսի 29, 1938 թվական	Ծնվում է որդին՝ Ռիչարդ Ալեն Հանթերը։
Հունիսի 8, 1939 թվական	Ավարտում է իրավաբանական դպրոցը՝ լինելով երրորդն իր դասարանում։
Ապրիլ 1940 թվական	Սկսում է մասնավոր գործունեություն ծավալել որպես իրավաբան, աշխատելով կես դրույքով, իսկ հետո լրիվ դրույքով՝ մինչև 1945 թվականը։ Շարունակում է իրավաբան աշխատել մինչև Առաքյալ կանչվելը՝ 1959 թվականին։
1940 թվականի սեպտեմբերից մինչև 1946 թվականի նոյեմբերը	Կալիֆորնիայում ծառայում է որպես եպիսկոպոս Էլ Սերենո Ծխում։
1950 թվականի. փետրվարից մինչև 1959 թվականի նոյեմբերը	Կալիֆորնիայում ծառայում է որպես Փասադենա Ցցի նախագահ։
Նոյեմբերի 14, 1953 թվական	Իր 46 ամյակի օրը կնքվում է իր ծնողների հետ Մեսա Արիզոնա Տաճարում։

Հոկտեմբերի 9, 1959 թվական	Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի կողմից կանչվում է ծառայելու որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ։
Հոկտեմբերի 15, 1959 թվական	Կարգվում է որպես Առաքյալ և ձեռնադրվում որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի կողմից։
1964 թվականից մինչև 1972 թվականը	Ծառայում է որպես Եկեղեցու Ծագումնաբանական Միության նախագահ։
1965 թվականից մինչև 1976 թվականը	Ծառայում է որպես Պոլինեզիական Մշակութային Կենտրոնի նախագահ Հավայան կղզիներում։
1970 թվականից մինչև 1972 թվականը	Ծառայում է որպես Եկեղեցու Պատմաբան։
1974 թվականից մինչև 1979 թվականը	Օգնում է վերահսկել Երուսաղեմի Օրսոն Հայդի Հիշատակի Պարտեզի պլանավորման, ֆինանսավորման և կառուցման աշխատանքները։
Նոյեմբեր 1975 թվական	Երկու օրվա՝ շաբաթ և կիրակի օրերի ընթացքում ղեկավարում է 15 ցցերի կազմավորումը, որոնցից 5 ցցերը Մեխիկո Սիթիում էին։
1979 թվականից մինչև 1989 թվականը	Վերահսկում է Բրիգամ Յանգ Համալսարանի (ԲՅՀ) Մերձավոր Արևելքի Ուսումնասիրությունների Երուսաղեմի Կենտրոնի պլանավորման և կառուցման աշխատանքները։
Հոկտեմբերի 24, 1979 թվական	Իրականացնում է նվիրագործման ծառայություններ Երուսաղեմի Օրսոն Հայդի Հիշատակի Պարտեզում։
Հոկտեմբերի 9, 1983 թվական	Ավելի քան 10 տարվա հիվանդությունից հետո մահանում է Քլեյր Հանթերը։

Նոյեմբերի 10, 1985 թվական	Ձեռնադրվում է որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ, որը պայմանավորված էր քվորումի նախագահի՝ Մարիոն Գ. Ռոմնիի առողջական վատ վիճակով։
Հունիսի 2, 1988 թվական	Նախագահ Մարիոն Գ. Ռոմնիի մահից հետո ի սպաս է դրվում որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ։
Մայիսի 16, 1989 թվական	Նվիրագործում է ԲՅՀ Մերձավոր Արևելքի Ուսումնասիրությունների Երուսաղեմի Կենտրոնը։
Ապրիլի 12, 1990 թվական	Սոլթ Լեյքի Տաճարում ամուսնանում է Մարրիես Այնիս Իզան Ստանթոնի հետ։
Հունիսի 5, 1994 թվական	Ձեռնադրվում է որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 14-րդ Նախագահ։
Հոկտեմբերի 1, 1994 թվական	Հաստատվում է որպես Եկեղեցու Նախագահ գերագույն համաժողովի ընթացքում։
Հոկտեմբերի 9, 1994 թվական	Նվիրագործում է Օրլանդո Ֆլորիդա Տաճարը։
Դեկտեմբերի 11, 1994 թվական	Նախագահում է Եկեղեցու 2000-րդ ցցի (Մեխիկո Սիթիի Մեխիկո Քոնթրերաս Ցից) ստեղծման ընթացքում։
Հունվարի 8, 1995 թվական	Նվիրագործում է Բաունթիֆուլ Յուտա Տաճարը։
Մարտի 3, 1995 թվական	Մահանում է իր տանը Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, 87 տարեկան հասակում։

Հովարդ Վ. Հանթերի կյանքն ու ծառայությունը

1994 թվականի հունիսի 6-ին, որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ Հովարդ Վ. Հանթերի ձեռնադրվելուց մեկ օր անց, նա երկու հրավեր հղեց: Խոսելով մեղմ քաջալերանքով՝ նա ասաց.

«Նախ և առաջ, ես հրավիրում եմ Եկեղեցու բոլոր անդամներին՝ ապրելու երբևէ ամենամեծ ուշադրությունը սևեռելով Տեր Հիսուս Քրիստոսի կյանքի և օրինակի, հատկապես Նրա ցուցաբերած սիրո, հույսի և կարեկցանքի վրա: Ես աղոթում եմ, որ մենք կարողանանք ավելի շատ բարություն, ավելի շատ քաղաքավարություն, ավելի շատ խոնարհություն, համբերատարություն և ներողամտություն ցուցաբերել միմյանց հանդեպ»:[1]

Մարդկանց խրախուսելը, որ հետևեն Փրկչի օրինակին, տասնամյակներ շարունակ եղել է Նախագահ Հանթերի ուշադրության կենտրոնում: «Խնդրում եմ, հիշեք այս մի բանը», ասել է նա մի քանի տարի առաջ: «Եթե մեր կյանքը և հավատքը կենտրոնացած են Հիսուս Քրիստոսի և նրա վերականգնված ավետարանի վրա, ոչինչ չի կարող մշտապես սխալ ընթանալ: Մյուս կողմից, եթե մեր կյանքը չի կենտրոնացած Փրկչի և նրա ուսմունքների վրա, ոչ մի այլ հաջողություն երբևէ չի կարող հարատև լինել»:[2]

Եկեղեցու անդամներին ուղղված Նախագահ Հանթերի երկրորդ հրավերն էր՝ ավելի լիարժեք ճաշակել տաճարային օրհնությունները:

«Ես նաև հրավիրում եմ Եկեղեցու անդամներին հաստատել Տիրոջ տաճարը որպես իրենց անդամության մեծ խորհրդանիշ և երկնային միջավայր իրենց ամենասուրբ ուխտերի համար: Իմ ամենանվիրական ցանկությունն է, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ լինի տաճարին արժանի: Ես կուզենայի, որ յուրաքանչյուր չափահաս անդամ տաճարին արժանի լինի և տաճարային ընթացիկ երաշխավորագիր կրի, անգամ եթե տաճարի

Հովսարդ Վ. Հանթերը մանկության տարիներին

հեռավորությունը թույլ չի տալիս այդ պահին կամ հաճախակի օգտագործել այն:

Եկեք լինենք տաճար հաճախող և տաճար սիրող ժողովուրդ: Եկեք հաճախ գնանք տաճար՝ որքան ժամանակը, միջոցները և անձնական պայմանները ներում են: Եկեք գնանք ոչ միայն մեր մահացած նախնիների համար, այլև տաճարային երկրպագության՝ անձնական օրհնություն ստանալու համար, սրբության և ապահովության համար, որ տրվում է այդ սրբագործված և նվիրագործված պատերի ներսում: Տաճարը զեղեցիկ վայր է, այն հայտնության և խաղաղության վայր է: Այն Տիրոջ տունն է: Այն սուրբ է Տիրոջ համար: Այն պետք է սուրբ լինի մեզ համար»:[3]

Նախագահ Հանթերը շարունակեց հատուկ շեշտել այս երկու հրավերները՝ որպես Եկեղեցու Նախագահ՝ իր ծառայության ողջ ընթացքում: Չնայած նրա ժամանակը որպես Նախագահ տևեց ընդամենը ինը ամիս, այս հրավերները ոգեշնչեցին Եկեղեցու անդամներին՝ ողջ աշխարհով մեկ լինել ավելի Քրիստոսանման և փնտրել տաճարի օրհնություններն ավելի մեծ նվիրվածությամբ:

Սկիզբը

1800-ականների կեսերին Հովարդ Վ. Հանթերի նախնիները չորս տարբեր երկրներում միացան Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն: Նրա մոր կողմի նախնիները Դանիայից և Նորվեգիայից էին: Իրենց հայրենիքից արտագաղթելուց հետո նրանք Յուտայի նահանգի Մաունթ Փլեզանթի առաջին վերաբնակներից էին: Այս աննկուն ռահվիրաների հետնորդներից մեկը՝ Նելլի Ռասմուսսենը, դառնալու էր մարգարեի մայրը:

Իր հոր կողմից Հովարդն ուներ նախնիներ, ովքեր խորը արմատներ ունեին Շոտլանդիայում և Նոր Անգլիայում: Նրանք, ովքեր միացել էին Եկեղեցուն, մեծ զոհաբերություններ էին կատարել, սակայն նրանցից շատերը մի քանի տարի անց դադարեցին ակտիվ լինելուց: 1879 թվականին Ջոն Վիլյամ (Վիլ) Հանթերի ծնունդը նշեց երրորդ սերնդի սկիզբը Հանթերների շառավղում, որն այլևս կապ չուներ Եկեղեցու հետ: Եվ այնուամենայնիվ, Վիլ Հանթերը դառնալու էր մարգարեի հայրը:

Երբ Վիլ Հանթերը 8 տարեկան էր, նրա ընտանիքը տեղափոխվեց Բոյսի՝ Այդահոյի նահանգ: Մոտավորապես 16 տարի անց Վիլը հանդիպեց Նելլի Ռասմուսսենին, երբ նա եկավ Բոյսի՝ մնալու հորաքրոջ և հորեղբոր տանը: Վիլը շուտով սկսեց սիրահետել Նելլիին, և երկու տարի անց նա ամուսնության առաջարկ արեց: Նելլին որոշ ժամանակ տատանվում էր, բայց Վիլը համառություն դրսևորեց, և նա ի վերջո ընդունեց նրա առաջարկը: Զույգն ամուսնացավ Մաունթ Փլեզանթում, Յուտայի նահանգ, և վերադարձավ Բոյսի իրենց տունը կառուցելու համար: Նրանց առաջին զավակը՝ Հովարդ Վիլյամ Հանթերը, ծնվեց Բոյսիում 1907 թվականի նոյեմբերի 14-ին: Նրանց հաջորդ և վերջին զավակը՝ դուստրը, ում նրանք կոչեցին Դորոթի, ծնվեց 1909 թվականին:

Կյանքի համար հիմք կառուցելը

Երբ Հովարդը ծնվեց, Եկեղեցին Բոյսիում ուներ ընդամենը մեկ փոքրիկ ճյուղ: Հովարդի մայրը ճյուղի ակտիվ անդամ էր, ով մեծացրեց իր զավակներին ավետարանով: Նրա մասին Հովարդն ասել է. «Նա միշտ հավատարիմ է եղել: . . . Նա ծառայել է որպես Երեխաների Խմբի և [Երիտասարդ Կանանց] նախագահ: Ես հիշում եմ, որ եկեղեցի էի գնում մայրիկիս հետ, երբեմն ժողովի նախատեսված ժամից շուտ և մնում էինք ժողովներից հետո, որպեսզի նա կարողանար ավարտել իր աշխատանքը»:[4] Չնայած Հովարդների հայրը Եկեղեցու անդամ չէր, նա դեմ չէր ընտանիքի մասնակցությանը և երբեմն հաճախում էր հաղորդության ժողովներին նրանց հետ:

Ի լրումն իր երեխաներին Եկեղեցու միջոցառումներին առաջնորդելուն՝ Նելլի Հանթերը օգնեց նրանց՝ տանը կառուցել ամուր կրոնական հիմք : «Մայրս էր, ով օրինակ էր հանդիսանում ավետարանը մեզ ուսուցանելու գործում», հիշում էր Հովարդը: «Նրա ծնկներին մենք սովորել ենք աղոթել: . . . Ես վկայություն եմ ստացել իմ պատանեկության օրերին՝ իմ մոր ծնկների մոտ»:[5]

Բոյսի ճյուղը ծուխ դարձավ 1913 թվականին՝ Հովարդի վեց տարին լրանալուց մի քանի օր առաջ: Երկու տարի անց, երբ Հովարդն ութ տարեկան էր, նա ուրախությամբ սպասում էր իր մկրտությանը: «Ես շատ ոգևորված էի այդ հեռանկարով»,

ասել է նա։ Այնուամենայնիվ, նրա հայրը թույլտվություն չտվեց։ Հովարդը վերհիշում է. «Հայրս . . . կարծում էր, որ ես պետք է սպասեի, մինչև կիմանայի, թե կյանքի որ ուղին էի ցանկանում ընտրել։ Ես ցանկանում էի մկրտվել, սակայն ժամանակը եկավ և անցավ առանց այդ օրհնության»։[6]

Քանի որ Հովարդը չէր մկրտվել, նա չէր կարող կարգվել որպես սարկավագ, երբ դարձավ 12 տարեկան։ «Այդ ժամանակ իմ բոլոր ընկերներն արդեն կարգվել էին որպես սարկավագներ», ասել է նա։ «Քանի որ ես Եկեղեցում պաշտոնապես անդամ չէի, ես չէի կարողանում անել շատ բաներ, որ նրանք էին անում»։[7] Հովարդը հատկապես վհատվում էր այն պատճառով, որ չէր կարող բաժանել հաղորդությունը. «Ես նստում էի հաղորդության ժողովներին մյուս տղաների հետ միասին։ «Երբ գալիս էր պահը, որ նրանք պետք է բաժանեին հաղորդությունը, ես ցած էի սահում աթոռից։ Ես ինձ այնքան միայնակ էի զգում»։[8]

Հովարդը կրկին խնդրեց իր հորը, այս անգամ իր 10-ամյա քրոջ՝ Դորոթիի հետ. «[Մենք] սկսեցինք համոզել հայրիկին, որ թույլ տար մեզ մկրտվել։ Մենք նաև աղոթեցինք, որ նա ասեր՝ այո։ Մենք չափազանց ուրախ էինք, երբ նա ի վերջո տվեց իր համաձայնությունը»։[9] Հովարդի 12 տարին լրանալուց մոտ հինգ ամիս անց նա և Դորոթին մկրտվեցին հասարակական լողավազանում։ Կարճ ժամանակ անց Հովարդը կարգվեց որպես սարկավագ և առաջին անգամ բաժանեց հաղորդությունը։ «Ես վախեցած էի, սակայն նաև հուզված, որ ունեի այդ արտոնությունը», վերհիշել է նա։[10] Իր մյուս պարտականությունների շարքում Հովարդը աշխատեցնում էր փուքսը և վառում կրակը, որ ցուրտ կիրակնօրյա առավոտներին տաքացներ հավաքատունը։ «Լրիվ նոր աշխարհ բացվեց իմ առջև, երբ ես սովորեցի Եկեղեցու անդամ լինելու և քահանայություն կրելու պարտականությունները», ասել է նա։[11]

Երիտասարդ հասակում Հովարդը միացավ իր ծխի սկաուտների խմբին և ջանասիրաբար աշխատեց, որպեսզի շահեր լավագույն մրցանակը՝ Արծիվ Սկաուտ։ Երբ նա մոտեցավ իր նպատակին, ներգրավվեց ընկերական մրցման մեջ։ «Մենք երկուսով էինք պայքարում Արծիվ Սկաուտի համար Բոյսիում», հիշում էր նա։[12] Մյուս պատանին առաջինն ավարտեց

հանձնարարությունները, սակայն Հովարդը կարծես թե բավարարված էր լինելու երկրորդը, ով մրցանակ կստանար:[13]

Հովարդը սովորեց ջանասեր լինել կյանքի վաղ տարիներին: Նա օգնում էր այրիներին և մյուս հարևաններին, վաճառում էր լրագրեր և աշխատում իր հորեղբոր ագարակում: Երբ նա ավելի մեծացավ, նրա աշխատանքները ներառեցին գոլֆի խաղադաշտում մականներ տեղափոխելը, հեռագրեր բաժանելը, դեղատանը, լրագրատանը, հյուրանոցում, հանրախանութում և արհեստանոցում աշխատելը:

Դորոթի Հանթերն ասել է, որ իր եղբայրն ուներ «խթանիչ ձգտում» և «պայծառ միտք»:[14] Այս հատկանիշները լրացվում էին կարեկցանքի և մեծահոգության որակներով: Վերհիշելով նրա հոգատար վերաբերմունքը, Դորոթին ասել է. «Հովարդը միշտ ցանկանում էր լավ բան անել և լավը լինել: Որպես հրաշալի եղբայր՝ նա հոգում էր իմ մասին: Նա շատ սիրալիր էր մեր մոր ու հոր հանդեպ»:[15]

Հովարդը կարեկից էր նաև կենդանիների հանդեպ: «Ամեն անտուն կատու կարող էր ապաստան գտնել մեր տանը՝ նույնիսկ ընտանիքի առարկություններին հակառակ», ասել է նա:[16] Մի անգամ հարևանի տղաները տանջում էին մի փիսիկի՝ նետելով նրան Հանթերների տան մոտ գտնվող ոռոգման ջրի առուն: Ամեն անգամ, երբ փիսիկը փորձում էր վեր բարձրանալ, տղաները կրկին նրան հետ էին մղում: Շուտով նրանց մոտեցավ Հովարդը և փրկեց փիսիկին: «Փիսիկը պառկած էր այնտեղ գրեթե սատկած,- վերհիշում էր Դորոթին,- և նա նրան տուն բերեց»:[17]

«Նա չի ապրի», ասաց նրա մայրը:

«Մայրիկ, մենք պետք է փորձենք», պնդեց Հովարդը:[18]

Դորոթին ասել է, որ նրանք «փաթաթեցին նրան վերմակի մեջ, դրեցին տաք վառարանի կողքին և կերակրեցին», և այս հոգատարության շնորհիվ փիսիկը ոտքի կանգնեց և ապրեց ընտանիքի հետ շատ տարիներ:

1923 թվականին Հովարդը կարգվեց որպես ուսուցիչ, Բոյսիի Երկրորդ Ցցի ստեղծումից անմիջապես առաջ: Կարիք ունենալով մեկ այլ հավաքման վայրի և ակնկալելով հետագա աճ՝ տեղի Եկեղեցու ղեկավարները առաջարկեցին աղոթատուն կառուցել ցցի համար: Բոյսիի Սրբերին խնդրեցին շենքի կառուցման

Հովարդ Վ. Հանթերը կենտրոնում՝ Hunter's Croonaders խմբի հետ, 1927 թվական

համար նվիրաբերել 20000 դոլար:[19] Ժողովի ժամանակ, երբ ղեկավարները նվիրատվության կոչ արեցին, երիտասարդ Հովարդ Վ. Հանթերը եղավ առաջին անձնավորությունը, ով բարձրացրեց իր ձեռքը և պարտավորություն ստանձնեց: Նա ստանձնեց 25 դոլարի պարտավորություն, որը մեծ գումար էր 1923 թվականին՝ հատկապես 15 տարեկանի համար: «Ես աշխատում և գումար էի խնայում, մինչև որ կարողացա լիովին վճարել այն, ինչ պարտավորվել էի», ասել է նա հետագայում:[20] Աղոթատունն ավարտին հասցվեց 1925 թվականին, և Նախագահ Հեբեր Ջ. Գրանտը եկավ նվիրագործելու այն այդ դեկտեմբերին:[21]

Երիտասարդ տարիքից Հովարդն աչքի է ընկել երաժշտական ընդունակություններով և պատանեկության տարիներին նա սովորել է նվագել տարբեր գործիքների վրա: 16 տարեկանում նա հիմնեց իր սեփական երաժշտական խումբը, որը նա կոչեց *Hunter's Croonaders*: Այս խումբը հաճախ էր ելույթ ունենում Բոյսիի տարածքում պարերի, երեկույթների և այլ առիթների ժամանակ:

Երբ Հովարդը 19 տարեկան էր, նրա հետ պայմանագիր կնքեցին, որ նա երաժշտություն ապահովեր նավի վրա, որը ճամփորդելու էր դեպի Ասիա: 1927 թվականի առաջին երկու ամիսների ընթացքում Հովարդի հինգ հոգուց կազմված խումբը նվագում

էր ընթրիքների և պարերի ժամանակ, մինչ նավն անցնում էր Խաղաղ օվկիանոսը և կանգ առնում Ճապոնիայի, Չինաստանի և Ֆիլիպինների բազմաթիվ քաղաքներում: Այդ ճամփորդությունը ուսուցանող փորձառություն եղավ Հովարդի համար, որը թույլ տվեց նրան ծանոթանալ այլ մարդկանց և նրանց մշակույթի հետ: Չնայած, որ նա իր եկամուտի մեծ մասը ծախսեց գեղատեսիլ վայրերի և հուշանվերների վրա, նա այդ մասին ասել է. «Այն ամենը, ինչ սովորեցինք, արժանի էր նրան, ինչը մենք ծախսեցինք»:[22]

Մեծ որոշումների ժամանակներ

Երբ Հովարդը ճամփորդությունից տուն վերադարձավ, նա լսեց մի ուրախալի լուր. նրա բացակայության ժամանակ հայրը մկրտվել էր: Հաջորդ կիրակի Հովարդը և նրա հայրը առաջին անգամ միասին հաճախեցին քահանայության ժողովին: Հոգատար եպիսկոպոսը խրախուսում էր Վիլ Հանթերին մկրտվել, և Հովարդն ասել էր, որ «[տնային] ուսուցչի շնորհիվ էր, որ ավելի մեծ հետաքրքրություն առաջացավ նրա մոտ եկեղեցու հանդեպ»:[23]

Շրջագայությունից հետո Հովարդը վստահ չէր, թե ինչ էր անելու ապագայում: Նա շարունակում էր զբաղվել երաժշտական միջոցառումներով և այլ աշխատանքներով, ներառյալ իր սեփական բիզնեսը, սակայն սրանցից ոչ մեկը լավ կարիերայի հեռանկար չունեին: Երբ նրա բիզնեսը 1928 թվականին փակվեց, նա որոշեց այցելել Հարավային Կալիֆորնիայում ապրող իր ընկերներից մեկին: Ի սկզբանե նա ծրագրել էր մնալ ընդամենը մեկ կամ երկու շաբաթ, սակայն նա շուտով որոշեց մնալ և փնտրել այն, ինչը նա նկարագրել է որպես «հնարավորություն տվող աշխատանք»:[24] Կալիֆորնիայում նա գտնելու էր ոչ միայն աշխատանք, այլ նաև իր կնոջը, Եկեղեցում ծառայելու մեծ հնարավորություններ և տուն՝ երեք տասնամյակից ավելի:

Կալիֆորնիայում Հովարդի առաջին աշխատանքներն են եղել կոշիկ վաճառելը և ցիտրուսային պտուղների փաթեթավորման գործարանում աշխատելը, որտեղ որոշ օրեր երթուղային վագոնների վրա նա բարձում էր 45-ից 50 տոննա նարինջ: «Ես չգիտեի, որ այսքան շատ նարինջ կա աշխարհում», ասել է նա: Մի անգամ նա «շատ վատ օր անցկացրեց», քանի որ պետք է առանձնացներ կիտրոններն ըստ գույնի, բայց նա չէր

կարողանում տարբերել դեղին և կանաչ երանգները դալտոնիզմի պատճառով: «Մինչ օրը կվերջանար, ես կարծում էի, որ կունենայի նյարդային խանգարում»,վերհիշել է նա:[25]

Ցիտրուսային պտուղների գործարանում երկու շաբաթ աշխատելուց հետո Հովարդը աշխատանքի համար դիմեց բանկ Լոս Անջելեսում, որն անմիջապես աշխատանքի ընդունեց նրան և սկսեց արագ առաջ քաշել: Նա նաև շարունակեց իր երաժշտական միջոցառումները՝ երեկոյան ժամերին նվագելով զանազան խմբերի հետ: 1928 թվականի սեպտեմբերին՝ Հովարդի Կալիֆորնիա տեղափոխվելուց մոտ վեց ամիս անց, նրա ընտանիքը վերամիավորվեց, երբ ծնողները և քույրը տեղափոխվեցին այնտեղ:

Իր պատանեկության տարիներին Հովարդը հաճախել էր եկեղեցի, սակայն խորությամբ չէր ուսումնասիրել ավետարանը: Կալիֆորնիայում նա շատ ավելի մեծ ուշադրությամբ էր սկսել ուսումնասիրել ավետարանը: «Առաջին անգամ ես իսկապես սկսեցի ընկալել ավետարանը Ադամի Ծխի Կիրակնօրյա Դպրոցի դասարանում, որտեղ ուսուցանում էր Եղբայր Պիտեր Ա. Քլեյթոնը», վերհիշել է նա: «Նա ուներ հարուստ գիտելիքներ և երիտասարդներին ոգեշնչելու ունակություն: Ես ուսումնասիրում էի դասերը, կարդում արտադասարանային հանձնարարությունները, որ նա տալիս էր մեզ և մասնակցում էի հանձնարարված թեմայի շուրջ քննարկումներին: . . . Իմ կյանքի այս ժամանակահատվածի մասին խորհելիս ես մտածում եմ, որ սա էր այն պահը, երբ ավետարանի ճշմարտությունները սկսեցին բացվել իմ առջև: Ես միշտ ունեցել եմ վկայություն ավետարանի մասին, սակայն հանկարծ ես սկսեցի հասկանալ այն»:[26] Այդ Կիրակնօրյա Դպրոցի դասարանում ունեցած փորձառություններից սկիզբ առավ Հովարդի սերը ավետարանն ուսումնասիրելու հանդեպ, որը շարունակվեց ողջ կյանքի ընթացքում:

Լոս Անջելեսի տարածքում Հովարդը վայելում էր այլ երիտասարդ չափահասների հետ շփումը: Նրանք միասին հաճախում էին եկեղեցի, երբեմն գնալով երկու կամ երեք ծուխ մի կիրակի օրվա ընթացքում և մասնակցում էին բազմազան միջոցառումների: Այդ միջոցառումներից մեկը հարատև նշանակություն ունեցավ Հովարդի համար: Կալիֆորնիա գալուց մի քանի ամիս անց իր մի քանի ընկերների հետ նա հաճախել էր Եկեղեցու պարահանդեսներից մեկին, որից հետո գնացել էին ծովափ

զբոսնելու: Այդ երեկո Հովարդը հանդիպեց Կլարա Մեյ (Քլեյր) Ջեֆսին, ով հանդիպման էր եկել նրա ընկերներից մեկի հետ: Հովարդի և Քլեյրի մոտ շուտով ի հայտ եկավ փոխադարձ համակրանք, որը հասունացավ ու դարձավ սեր:

Նրանք մի քանի անգամ հանդիպեցին 1928 թվականին և ավելի լուրջ տրամադրվեցին հաջորդ տարի: «Նա ուներ բաց շագանակագույն մազեր և շատ գեղեցիկ աղջիկ էր», հետագայում ասել է Հովարդը: «Կարծում եմ, որ ամենաշատը ինձ վրա տպավորություն գործեց նրա վկայության խորությունը»:[27] 1931 թվականի գարնանային մի երեկո, նրանց հանդիպումից գրեթե երեք տարի անց, Հովարդը Քլեյրին տարավ դիտելու Խաղաղ օվկիանոսը բարձր մի վայրից: Այնտեղ նա ամուսնության առաջարկ արեց, իսկ Քլեյրն ընդունեց: Նա վերհիշել է.

«Մենք մեքենայով հասանք մինչև Պալոս Վերդես և մեքենան կանգնեցրինք զառիվայրում, որտեղ մենք կարող էինք դիտել Խաղաղ օվկիանոսից եկող ալիքները, որոնք բախվում էին քարերին լիալուսնի լույսի ներքո: Մենք խոսեցինք մեր ծրագրերի մասին, և ես աղամանդե մատանի դրեցի նրա մատին: Մենք շատ որոշումներ կայացրինք այդ գիշեր և որոշ հաստատուն վճիռներ մեր կյանքի վերաբերյալ»:[28]

Այդ վճիռները ստիպեցին Հովարդին կայացնելու կյանքը փոխող որոշում հարսանիքից չորս օր առաջ: Այդ գիշեր նրա խմբի ելույթից հետո նա հավաքեց իր գործիքները և երբեք այլևս չվերադարձավ այդ աշխատանքին: Պարահանդեսների և երեկույթների համար նվագելը «որոշ առումով գրավիչ երևույթ էր»,- ասել է նա,- «և ես լավ փող էի վաստակում», սակայն նա զգացել էր, որ կենսակերպի որոշ մասեր անհամատեղելի էին այն կյանքի հետ, որը նա պատկերացնում էր իր ընտանիքի համար: «Այս քայլով ես հրաժարվեցի մի բանից, ինչն ինձ դուր էր գալիս, [սակայն] որոշման համար երբեք չեմ զղջացել», ասել է նա տարիներ անց:[29] Նրա որդի Ռիչարդը նկատել է. «Ես հաճախ եմ մտածել նշանակալից կարգ ու կանոնի մասին (ես կոչում եմ այն վճռականություն), որը պահանջվում էր մի բան թողնելու համար, ինչը նա խորապես սիրում էր, քանի որ նա մեկ այլ բան ավելի էր գնահատում»:[30]

Դժվարություններ և օրհնություններ ամուսնության վաղ տարիներին

Հովարդը և Քլեյրը ամուսնացան Սոլթ Լեյք Սիթիի Տաճարում 1931 թվականի հունիսի 10-ին և վերադարձան Հարավային Կալիֆորնիա՝ միասին սկսելու իրենց կյանքը: Միացյալ Նահանգների տնտեսական վիճակը գնալով վատթարանում էր Մեծ Ճգնաժամի պատճառով և 1932 թվականի հունվարին բանկը, որտեղ աշխատում էր Հովարդը, ստիպված էր փակվել: Հաջորդ երկու տարիների ընթացքում նա զանազան աշխատանքներ է կատարել՝ փորձելով ծայրը ծայրին հասցնել: Նա և Քլեյրը որոշել էին անկախ լինել որքան հնարավոր է երկար ժամանակ, սակայն մեկ տարի անց նրանք ընդունեցին հրավերը՝ ժամանակավորապես ապրելու Քլեյրի ծնողների հետ:

1934 թվականի մարտին ծնվեց Հովարդի և Քլեյրի առաջին երեխան՝ որդի, ում նրանք անվանեցին Հովարդ Վիլյամ Հանթեր Կրտ. և կոչում էին Բիլլի: Ամռանը նրանք նկատեցին, որ Բիլլին կարծես թմրած լիներ: Բժիշկները նրա մոտ ախտորոշեցին սակավարյունություն և Հովարդը երկու անգամ արյուն տվեց փոխներարկումների համար, սակայն Բիլլիի վիճակը չլավացավ: Հետագա անալիզներից պարզվեց, որ առկա էր ծանր աղիքային խնդիր, ուստի բժիշկներն առաջարկեցին վիրահատություն: Հովարդը վերհիշել է. «Ինձ տարան մի սենյակ, ուր կողքիս պառկած էր նա և արյուն տվեցի վիրահատության ընթացքում: Վերջում բժիշկները հույս չէին տալիս»:[31] Երեք օր անց յոթ ամսական Բիլլին մահացավ, մինչ նրա ծնողները նստած էին նրա մահճակալի մոտ: «Մենք վշտից մտատանջ և ընդարմացած էինք, երբ գիշերը դուրս եկանք հիվանդանոցից», գրել է Հովարդը:[32] «Սա ծանր հարված էր մեզ համար»:[33]

Բիլլի ծնվելուց երկու ամիս առաջ Հովարդը աշխատանք էր ձեռք բերել Լոս Անջելեսի Ջրհեղեղների Վերահսկման Բաժնում: Այդ աշխատանքը կատարելիս նա առնչվում էր իրավաբանական փաստաթղթերի և դատական գործընթացների հետ, և նա որոշեց շարունակել իր աշխատանքը որպես իրավաբան: Այդ նպատակն իրականացնելը պահանջեց վճռականություն և տքնաջան աշխատանք տարիների ընթացքում: Չունենալով բակալավրի աստիճան՝ Հովարդը պետք է ավարտեր շատ

դասընթացներ, նախքան կկարողանար ընդունվել իրավաբանական համալսարան: Նա երեկոյան բաժնում էր սովորում, քանի որ պետք է շարունակեր աշխատել: Նույնիսկ իրավաբանական համալսարանում սովորելու տարիներին նա շարունակեց աշխատել լրիվ օրվա գրաֆիկով: «Ամբողջ օրն աշխատելը և երեկոյան համալսարան գնալը և ի լրումն այդ ամենին, սովորելու համար ժամանակ գտնելը հեշտ խնդիր չէր»,- գրել է նա:[34] «Ինձ համար անսովոր չէր մինչև ուշ գիշեր սովորելը»:[35] Հովարդը պահպանեց այդ խիստ ռեժիմը հինգ տարի, ի վերջո ավարտելով 1939 թվականին՝ որպես երրորդը դասարանում:

Մինչ Հովարդը սովորում էր իրավաբանական համալսարանում, Քլեյրը և նա ևս երկու զավակ ունեցան՝ Ջոնը 1936 թվականին և Ռիչարդը 1938 թվականին: Ջրհեղեղների Վերահսկման Բաժնում Հովարդի աշխատանքի շնորհիվ ընտանիքը կարողացավ գնել մի փոքրիկ տուն:

Էլ Սերենո ծխի եպիսկոպոս

1940 թվականին, իրավաբանական համալսարանն ավարտելուց գրեթե մեկ տարի անց նա կանչվեց ծառայելու որպես եպիսկոպոս Կալիֆորնիայի նորաստեղծ Էլ Սերենո ծխում: Անակնկալի գալով այս ծառայությունից՝ նա ասել է. «Ես միշտ կարծել եմ, որ եպիսկոպոսը պետք է լինի տարիքով ավելի մեծ մարդ, և ես հարցրի, թե ինչպես կարող էի լինել ծխի հայր երեսուներկու տարեկան հասակում»: Ցցի նախագահությունը պատասխանեց՝ հավաստիացնելով նրան, որ նա կարող էր «համապատասխանել հանձնարարությանը»: Չնայած, որ Հովարդը ցնցված էր, նա խոստացավ. «Ես կանեմ հնարավորը»:[36] Նա կատարեց այդ խոստումը մեծ նվիրվածությամբ, ոգեշնչմամբ և կարեկցանքով՝ որպես եպիսկոպոս ծառայելու ավելի քան վեց տարիների ընթացքում:

Եվս մեկ անգամ Հովարդից պահանջվում էր խիստ ռեժիմ և եռանդ, սակայն նա զգաց, որ ի պատասխան իր ծառայության ստանում էր բազմաթիվ օրհնություններ: «Ես ինձ գտնում էի հեղեղված հույժ կարևոր պարտականություններով», ասել է նա: «Դա փառահեղ աշխատանք էր և մեծ օրհնություն»:[37]

Հովսարդ և Քլեյր Հանթերները իրենց որդիների՝ Ջոնի և Ռիչարդի հետ

Նոր ծուխ ստեղծելու հրատապ անհրաժեշտությունից ելնելով՝ փնտրում էինք հավաքատեղի: Եպիսկոպոսությունը վարձակալում է մի քանի սենյակներ տեղի մասնաշենքում, և ծխի անդամները սկսում են միջոցներ խնայել իրենց սեփական հավաքատան համար: Եկեղեցու շենքի կառուցումը շուտով դադարեցվեց Երկրորդ Համաշխարհային պատերազմի պատճառով, սակայն ծխի անդամները նայում էին դեպի ապագան և շարունակում միջոցներ խնայել: Միջոցներ ստեղծելու համար ոմանք գնում էին թթու դրած բանջարեղեն արտադրող գործարան՝ սոխ կտրատելու, որը հայտնի էր որպես «սոխի ծրագիր»: Սոխի հոտը երկար էր մնում, որը դրդեց Եպիսկոպոս Հանթերին սրամտել. «Հաղորդության ժողովի ժամանակ հեշտությամբ կարելի էր ասել, թե ովքեր էին սոխ կտրատողները»:[38]

Ուրիշներն էլ միջոցներ ստեղծելու համար կաղամբ էին կտրատում թթու դրած կաղամբ արտադրող գործարանում, փաթեթավորում և վաճառում էին հավելյալ նախաճաշի համար նախատեսված հացահատիկ: «Սրանք երջանիկ օրեր էին, երբ մենք միասին աշխատում էինք, բոլոր խավերի և ունակությունների տեր մարդիկ աջակցում էին եպիսկոպոսությանը միջոցներ ստեղծելու համար, որպեսզի հավաքատուն կառուցվեր», վերհիշում է Նախագահ Հանթերը: Մեր ծուխը նման էր մի մեծ երջանիկ ընտանիքի»:[39] Մեծ համբերություն ցուցաբերելուց և մեծ զոհաբերություններից հետո ծխի սեփական հավաքատուն

Փասադենա Ցցի ղեկավարները, 1950 թվական։ Ձախից աջ. *Դեյքեն Ք. Բրոդիեղ՝ ցցի նախագահության առաջին խորհրդական, Հովարդ Վ. Հանթեր՝ նախագահ, Ա. Քայ Բերրի՝ երկրորդ խորհրդական, և Էմրոն «Ջաք» Ջոնս՝ գործավար։*

ունենալու նպատակն իրականացվեց 1950 թվականին, որպես եպիսկոպոս Հովարդի հետ կանչվելուց գրեթե չորս տարի անց։

Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին եպիսկոպոս լինելով՝ առանձնահատուկ խնդիրների առաջ էր կանգնում։ Ծխի շատ տղամարդիկ ծառայում էին բանակում՝ թողնելով ընտանիքներին առանց ամուսինների և տներն առանց հայրերի։ Տղամարդկանց քանակի նվազեցումը նաև խնդիրներ էր ստեղծում Եկեղեցու ծառայությունների հետ կապված։ Ուստի, որպես եպիսկոպոս իր պաշտոնավարման ընթացքում Հովարդը ծառայեց նաև որպես սկաուտների ղեկավար։ «Մենք ունեինք լավ պատանիների մի խումբ, ովքեր չէին կարող անտեսվել», ասել է նա։ «Ես գրեթե երկու տարի աշխատեցի տղաների հետ, և նրանք հրաշալի առաջընթաց ունեցան»։[40]

Հովարդը հետ կանչվեց եպիսկոպոսի իր կոչումից 1946 թվականի նոյեմբերի 10-ին։ «Ես միշտ երախտապարտ կլինեմ այս արտոնության և այդ տարիներին իմ սովորածի համար»,- ասել է նա։ Չնայած փորձառությունը «շատ առումներով բարդ» էր, նա և Քլեյրը «երախտապարտ էին արժեքների համար, որոնք այն բերել էր [իրենց] ընտանիք»։[41] Երախտագիտություն հայտնելով Եպիսկոպոս Հանթերի ծառայության համար, ծխի անդամներից մեկը գրել է. «Նա միավորեց մեր փոքր ծխի անդամների

ուժերը և սովորեցրեց մեզ հասնել նպատակների, որոնք անհասանելի էին թվում մեզ: Մենք որպես ծուխ միասին աշխատեցինք, մենք աղոթեցինք միասին, խաղացինք միասին և երկրպագեցինք միասին»:[42]

Չնայած Հովարդը հետ կանչվեց 1946 թվականին, նրա յուրահատուկ սերտ հարաբերությունները Էլ Սերենո Ծխի անդամների հետ շարունակվեցին: Նրա որդի Ռիչարդն ասել է, որ «մինչև իր կյանքի վերջը նա կապ էր պաշտպանում նրանց հետ և գիտեր, թե որտեղ էին նրանք և ինչ պայմաններում էին ապրում: Երբ նա մեկնում էր մի վայր, որտեղ ապրում էր հին ծխի անդամներից որևէ մեկը, նա կապվում էր նրանց հետ: Ծխի անդամների հանդեպ ունեցած սերը շարունակվեց նրա ողջ կյանքի ընթացքում»:[43]

Հոգ տանելով ընտանիքի համար և հաջողությունների հասնելով աշխատանքում

Հովարդ և Քլեյր Հանթերները սիրառատ ծնողներ էին, ովքեր ուսուցանել էին իրենց որդիներին արժեքների, պարտականությունների և ավետարանի կարևորության մասին: Երկուշաբթի երեկոն տնային ընտանեկան երեկոների համար նախատեսելու Եկեղեցու պաշտոնական հայտարարությունից դեռևս երկար ժամանակ առաջ Հանթերների ընտանիքը այդ երեկոն նվիրում էր ուսուցումներին, պատմություններ պատմելուն, միասին խաղալուն և տեղ գնալուն: Երբ ընտանիքը ճամփորդում էր, նրանք երբեմն գնում էին տաճարներ, որպեսզի Ջոնը և Ռիչարդը կարողանային փոխարինող մկրտություններ կատարել մահացածների համար: Հովարդը և նրա որդիները նաև վայելում էին ժամանակը, երբ միասին գնացքի նմուշներ էին կառուցում, գնում էին արշավների և կազմակերպում այլ բացօթյա միջոցառումներ:

Հովարդն աշխատում էր լրիվ դրույքով և միաժամանակ սովորում էր իրավաբանական համալսարանում, երբ ծնվեցին Ջոնը և Ռիչարդը, և նա կանչվեց եպիսկոպոս, երբ նրանք դեռևս փոքր էին՝ չորս և երկու տարեկան, ուստի ամուր ընտանիք ունենալը պահանջում էր լրացուցիչ նվիրվածություն Քլեյրի կողմից: Նա ուրախությամբ էր տալիս այդ նվիրվածությունը: «Իմ ցանկությունը և իմ ամենամեծ ձգտումը եղել է լավ կին լինելը, լավ

տնային տնտեսուհի և շատ լավ մայր լինելը», ասել է նա: «Մենք ջանասիրաբար աշխատել ենք, որ մեր տղաներին մոտ պահենք Եկեղեցուն. տղաները և ես հրաշալի ժամանակ ենք անցկացրել միասին»:[44] Հովարդը հաճախ է հարգանքի տուրք մատուցել Քլեյրին ՝ իրենց որդիներին մեծացնելիս նրա ազդեցության և զոհաբերությունների համար:

Ընտանիք պահելու և Եկեղեցու ղեկավար կոչումներում ծառայելու տարիներին Հովարդը նաև հաջող փորձ էր ձեռք բերել որպես իրավաբան: Հիմնականում աշխատելով բիզնեսմենների և խոշոր առևտրական կազմակերպությունների հետ, նա դարձել էր մեծ հարգանք վայելող իրավաբան: Նա ընտրվել էր ծառայելու ավելի քան երկու տասնյակ կազմակերպությունների տնօրենների խորհրդում:

Որպես մասնագետ Հովարդը հայտնի էր իր ազնվության, հստակ պատկերացում ունենալու, պարզ հաղորդակցման և արդար վերաբերմունքի համար: Նա նաև հայտնի էր որպես «մարդկանց իրավաբան»՝ մեկը, ով «թվում է, թե միշտ ժամանակ ուներ և հետաքրքրված էր օգնել մարդկանց՝ լուծելու իրենց խնդիրները»:[45] Մի իրավաբան ասել է, որ Հովարդը «ավելի շատ մտահոգվում էր տեսնելու, որ մարդիկ ստանում էին իրենց անհրաժեշտ օգնությունը, քան որ ինքը ստանար վարձատրություն դրա համար»:[46]

Փասադենա Կալիֆորնիա Ծխի Նախագահը

1950 թվականի փետրվարին Տասներկուսի Քվորումից Երեց Ստեփան Լ. Ռիչարդսը և Երեց Հարոլդ Բ. Լին մեկնեցին Կալիֆորնիա՝ արագ աճող Փասադենա Ցիցը բաժանելու համար: Նրանք հարցազրույց անցկացրին ցցի շատ եղբայրների՝ ներառյալ Հովարդի հետ: Աղոթքով խորհելուց հետո, թե ում կցանկանար Տերը կանչել ծառայելու որպես ցցի նախագահ, մոտ կեսգիշերին նրանք մարդ ուղարկեցին Հովարդի հետևից և նրան շնորհեցին այդ կոչումը: Երեց Ռիչարդսը և Երեց Լին ասացին նրան, որ լավ քներ գիշերը և զանգահարեր նրանց հաջորդ օրը վաղ առավոտյան՝ խորհրդականների իր առաջարկով: «Այդ գիշեր ես գնացի տուն, սակայն չքնեցի», ասել է Հովարդը: «Այս կոչումը չափազանց մեծ էր: Քլեյրը և ես երկար զրույց ունեցանք»:[47]

Տասներկու Առաքյալների Քվորումը, 1965 թվական։ Ձախից աջ նստած են՝ *Էզրա Թաֆտ Բենսոնը, Մարկ Ի. Պետերսենը (բազկաթոռի կողքին), Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը (քվորումի նախագահը) և Լեգրան Ռիչարդսը։* Ձախից աջ կանգնած են՝ *Գորդոն Բ. Հինքլին, Դելբերտ Լ. Ստեպլին, Թոմաս Ս. Մոնսոնը, Սպենսեր Վ. Քիմբալը, Հարոլդ Բ. Լին, Մարիոն Գ. Ռոմնիին, Ռիչարդ Լ. Էվանսը և Հովարդ Վ. Հանթերը։*

Երբ Նախագահ Հանթերը և նրա խորհրդականները հաստատվեցին, նրանք սկսեցին որոշել ցցի կարիքները։ Ցցի նոր նախագահության համար առաջնահերթությունն անդամներին օգնելն էր, որ ձեռք բերեին հոգևոր ուժ։ Մտահոգություններից մեկն այն էր, որ ընտանիքները դառնում էին մասնատված մասամբ այն պատճառով, որ նրանք ներգրավվում էին բազմաթիվ միջոցառումների մեջ։ Այն բանից հետո, երբ ղեկավարները միասին աղոթեցին և խորհրդակցեցին, նրանք ոգեշնչում զգացին հատուկ ուշադրություն դարձնել տնային ընտանեկան երեկոների վրա և նվիրել երկուշաբթի երեկոներն ընտանիքներին։ Ցցի բոլոր Եկեղեցիների շինությունները երկուշաբթի երեկոյան փակ էին, և «ոչ մի այլ միջոցառում չէր անցկացվում, որը կարող էր խանգարել այդ սրբազան երեկոյին»,-բացատրել է Նախագահ Հանթերը։[48]

Իր ծառայության վաղ շրջանում Նախագահ Հանթերը և Հարավային Կալիֆորնիայի մյուս ցցերի նախագահները հանդիպել էին Երեց Ստեփան Լ. Ռիչարդսի հետ՝ քննարկելու ավագ դպրոցի ուսանողների համար նախատեսված սեմինարիայի

ծրագիրը: Նախագահ Հանթերը վերհիշել է. «[Երեց Ռիչարդսը] բացատրեց, որ նրանք կցանկանային փորձարկել վաղ առավոտյան սեմինարիայի դասերը մի տարածքում, որտեղ օրենքը թույլ չէր տալիս [դպրոցի] ժամերից տրամադրել կրոնական կրթությանը»:[49] Նախագահ Հանթերը նշանակվել էր նախագահելու այն հանձնաժողովը, որն ուսումնասիրելու էր այդ գաղափարի իրագործելիությունը: Այս ուսումնասիրությունն ավարտելուց հետո հանձնաժողովը խորհուրդ տվեց ներկայացնել վաղ առավոտյան սեմինարիան երեք ավագ դպրոցների ուսանողներին: Որպես պատանի՝ Նախագահ Հանթերի որդի Ռիչարդը մասնակցում էր վաղ առավոտյան սեմինարիայի փորձարկմանը: Նա վերհիշել է.«Մենք կարծում էինք, որ դա խելահեղ միտք էր՝ առավոտյան 6.00-ին դասը սկսելը, սակայն այն դարձավ օրվա մեր ամենասիրած ժամը, երբ մենք կարող էինք եկեղեցու ընկերներով միասին լինել և սովորել»:[50] Այս ծրագիրը շուտով ընդլայնվեց, ներառելով մյուս ուսանողներին և Եկեղեցու երիտասարդության համար նախատեսված վաղ առավոտյան սեմինարիայի ծրագրի նախաբանն էր:

1951 թվականին հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ Առաջին Նախագահությունը հանդիպում ունեցավ Հարավային Կալիֆորնիայի ցցերի նախագահների հետ, որպեսզի հայտարարեին Լոս Անջելեսում տաճար կառուցելու իրենց ցանկության մասին: Մոտակայքում տաճար ունենալու հնարավորությունը մեծ ուրախություն պարգևեց և պահանջելու էր մեծ զոհաբերություն, քանի որ Եկեղեցու անդամներին խնդրել էին կառուցման համար նվիրաբերել 1 միլիոն դոլար: Երբ Նախագահ Հանթերը վերադարձավ Կալիֆորնիա, նա հանդիպեց ցցի և ծխերի ղեկավարների հետ և ասաց. «Մարդկանց հնարավորություն տվեք ստանալու մեծ օրհնություններ՝ տաճարի համար առատ նվիրատվություններ անելով»:[51] Վեց ամիսների ընթացքում Հարավային Կալիֆորնիայի անդամները 1.6 միլիոն դոլարի ներդրում էին կատարել տաճարը կառուցելու համար, որը նվիրագործվեց 1956 թվականին:

Բացի տաճարի և Եկեղեցու այլ շենքերի համար միջոցներ նվիրաբերելը, անդամները կամավոր աշխատանքների էին մասնակցում: Երբ հավաքատները կառուցվեցին, Նախագահ Հանթերը շատ ժամեր անցկացրեց՝ աջակցելով թիակներով, մուրճով

կամ վրձնով: Բացի դրանից, անդամներն անվճար աշխատում էին Եկեղեցու բարեգործական ծրագրերում, որոնք ներառում էին թռչնաբուծական ֆերմաները, ցիտրուսային պտուղների այգիները և պահածոների գործարանները: Ութ տարիների ընթացքում Նախագահ Հանթերը նշանակված էր կազմակերպելու 12 ցցերի աշխատանքն այս ծրագրերում, և նա ինքն էլ հաճախ աջակցում էր այդ աշխատանքներին: «Նա երբեք չէր խնդրում որևէ մեկին անել մի բան կամ կատարել մի հանձնարարություն, որն ինքն անձամբ չէր անի», նկատել է նրա ընկերներից մեկը:[52] Տարիներ անց, որպես Տասներկուսի Քվորումի անդամ, Երեց Հանթերն ասել է.

«Ես երբեք չեմ մասնակցել մռայլ բարեգործական ծրագրի: Ես բարձրացել եմ ծառեր և հավաքել կիտրոններ, մաքրել եմ մրգերի կեղևները, տեղափոխել եմ արկղեր, բեռնաթափել եմ բեռնատարներ, մաքրել եմ պահածոների գործարանը և հազար ու մի այլ բաներ, սակայն ամենաշատը ես հիշում եմ ծիծաղը, երգը և մարդկանց լավ վերաբերմունքը, ովքեր ներգրավված էին Տիրոջ ծառայության մեջ»:[53]

1953 թվականի նոյեմբերին Նախագահ և Քույր Հանթերները և Փասադենա Ցցի մյուս անդամները մեկնեցին Արիզոնա Տաճար՝ արարողություններ կատարելու համար: Նոյեմբերի 14-ին լրացավ Նախագահ Հանթերի 46 տարին, և այդ օրը նախքան նիստի սկսվելը տաճարի նախագահը խնդրեց նրան՝ դիմել նրանց, ովքեր հավաքված էին հավաքատանը: Նա հետագայում այս փորձառության մասին գրել է.

«Մինչ ես խոսում էի ներկաների համար, . . . հայրս և մայրս մտան հավաքատուն՝ սպիտակ հագնված: Ես գաղափար անգամ չունեի այն մասին, որ հայրս պատրաստվել էր իր տաճարային օրհնություններին, չնայած մայրս անհամբեր սպասում էր այդ օրվան բավական ժամանակ: Ես այնքան հուզված էի, որ չկարողացա շարունակել խոսել: Նախագահ Փիրսը [տաճարի նախագահը] մոտեցավ ինձ և ամեն բան բացատրեց: Երբ հայրս և մայրս այդ առավոտ եկել էին տաճար, նրանք խնդրել էին նախագահին, որ ինձ չասեին այն մասին, որ իրենք այնտեղ էին, քանի որ նրանք ուզում էին, որ դա լիներ ծննդյան անակնկալը: Սա մի ծնունդ էր, որը ես երբեք չեմ մոռացել, քանի որ այդ օրը նրանք ստացան

իրենց օժտումը, և ես արտոնություն ունեցա ներկա գտնվելու նրանց կնքմանը, որից հետո ես կնքվեցի նրանց հետ»:[54]

Մոտավորապես երեք տարի անց Նախագահ Հանթերի ընտանիքի հավերժական կապերն ամբողջացան, երբ Դորոթին կնքվեց իր ծնողների հետ նոր նվիրագործված Լոս Անջելես Կալիֆորնիա Տաճարում:

Որպես ցցի նախագահ, Հովարդն առաջնորդում էր սիրով: Մի կին, ով ցցում ծառայություն է ունեցել, ասել է. «Դու քեզ զգում էիր գնահատված, սիրված և անհրաժեշտ: . . . Նա մարդկանց պատասխանատու էր դարձնում, երբ նրանք կոչում էին ստանում, սակայն, երբ նրանք ցանկանում էին լսել նրա կարծիքը կամ ունենում էին նրա խորհիդի կարիքը, նա միշտ նրանց կողքին էր լինում: Մենք գիտեինք, որ ունեինք նրա ողջ աջակցությունը և որ նա հետաքրքրված էր մեզանով»:[55] Նրա խորհրդականներից մեկը նշել է. «Նա գովաբանում էր մարդկանց իրենց ձեռքբերումների համար և թույլ էր տալիս նրանց ավելի մեծ սպասելիքներ ունենալ»:[56] Ցցի մի անդամ, ով ասել է, որ Նախագահ Հանթերը եղել է իր ամենաազդեցիկ ուսուցիչը, բացատրել է. «Այս մարդը սիրում էր մարդկանց, տալով նրանց առաջնահերթություն, լսելով նրանց, որպեսզի հասկանար և կիսվելով իր փորձառություններով ուրիշների հետ»:[57]

Մինչև 1959 թվականի աշունը Հովարդ Վ. Հանթերը նախագահել էր Փասադենա Ցցում ավելի քան ինը տարի, մատուցելով ծառայություն, որն օրհնել էր հազարավոր Վերջին Օրերի Սրբերի կյանքը Հարավային Կալիֆորնիայում: Նրա ծառայությունը մոտ էր ավելի ծավալվելուն, որպեսզի օրհներ Եկեղեցու անդամների կյանքը ողջ աշխարհով մեկ:

Տասներկուսի Քվորում

«Դու պետք է վկայես իմ անվան մասին, . . . և դու պետք է առաջ ուղարկես իմ խոսքը մինչև աշխարհի ծայրերը» (ՎԱՌ 112.4):

1959 թվականի հոկտեմբերի 9-ին Սոլթ Լեյք Սիթիում գերագույն համաժողովի նիստերի միջև Հովարդն իմացավ, որ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը ցանկանում էր տեսնել իրեն: Նա անմիջապես գնաց Եկեղեցու Վարչական Գրասենյակ, որտեղ Նախագահ Մակքեյը ջերմորեն ողջունեց նրան և ասաց.

Բրիգամ Յանգի Համալսարանի Երուսաղեմի Կենտրոնը
Մերձավոր Արևելքի Ուսումնասիրությունների համար

«Նախագահ Հանթեր, . . . Տերը խոսել է: Դու կանչվել ես լինելու նրա հատուկ վկաներից մեկը, և վաղը դու կհաստատվես որպես Տասներկուսի Խորհրդի անդամ»:[58] Այդ փորձառության վերաբերյալ Հովարդը գրել է.

«Ես անզոր եմ բացատրելու այն զգացումը, որը պատեց ինձ: Աչքերս արցունքով լցվեցին, և ես չէի կարողանում խոսել: Ես երբեք այսքան լիովին խոնարհված չէի զգացել ինձ, ինչպես այն ժամանակ, երբ վայելում էի այս հիանալի, մեղմ, բարի մարդու՝ Տիրոջ մարգարեի ներկայությունը: Նա ասաց ինձ, թե ինչ մեծ ուրախություն, եղբայրների հետ հրաշալի շփում էր այն բերելու իմ կյանքում, և որ այսուհետև իմ կյանքը և ժամանակը նվիրելու էի Տիրոջը, որպես նրա ծառա, և որ ես այսուհետև պատկանելու էի Եկեղեցուն և ողջ աշխարհին: . . . Նա դրեց իր ձեռքն իմ ուսին և վստահեցրեց, որ Տերը սիրում էր ինձ, և ես ունենալու էի Առաջին Նախագահության և Տասներկուսի Խորհրդի հաստատող վստահությունը: . . . Ես [ասացի նրան], որ ուրախությամբ կտայի իմ ժամանակը, իմ կյանքը և իմ ողջ ունեցվածքը այս ծառայության համար»:[59]

Հենց որ Հովարդը դուրս եկավ Նախագահ Մակքեյի գրասենյակից, նա գնաց հյուրանոցի իր սենյակը և զանգեց Քլեյրին,

ով մեկնել էր Պրովո՝ այցելելու իրենց որդի Ջոնին, նրա կնոջը և նրանց երեխային: Սկզբում Հովարդը դժվարանում էր խոսել: Երբ նա վերջապես ասաց Քլեյրին իր կոչման մասին, այն մեծ հուզմունք պատճառեց երկուսին էլ:

Հաջորդ օրը գերագույն համաժողովի շաբաթ առավոտյան նիստի ժամանակ Հովարդ Վիլյամ Հանթերը հաստատվեց որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ: «Ես զգացի . . . աշխարհի ծանրությունն իմ ուսերի վրա», ասել է նա այդ պահի վերաբերյալ: «Կոնֆերանսի ընթացքում ես իմ տեղը չէի գտնում և խորհում էի, թե արդյոք ես երբևէ կկարողանայի զգալ, որ համապատասխանում էի այս տեղին»:[60]

Նախագահ Մակքեյը կանչեց Երեց Հանթերին՝ ելույթ ունենալ համաժողովի կիրակնօրյա ցերեկային նիստին: Հակիրճ ձևով իր կյանքն ամփոփելուց և իր վկայությունը բերելուց հետո նա ասաց.

«Ես ներողություն չեմ խնդրում արցունքների համար, որոնցով լցված են իմ աչքերն այս առիթով, քանի որ ես հավատացած եմ, որ տեսնում եմ ընկերների՝ Եկեղեցու իմ եղբայրներին և քույրերին, ում սիրտը նույն կերպ է բաբախում, ինչպես իմը՝ ուրախություն գտնելով ավետարանում և ուրիշներին ծառայելու մեջ:

Նախագահ Մակքեյ, . . . ես առանց որևէ վերապահման ընդունում եմ կոչումը, որը դուք տվեցիք ինձ, և ես հոժար եմ նվիրելու իմ կյանքը և այն ամենը, ինչ ունեմ, այս ծառայությանը: Քույր Հանթերն ինձ հետ միասին ստանձնում է այս պարտավորությունը»:[61]

Երեց Հանթերը Առաքյալ կարգվեց 1959 թվականի հոկտեմբերի 15-ին: 51 տարեկան հասակում նա հանդիսանում էր ամենակրտսեր անդամը Տասներկուսի Քվորումի անդամների մեջ, որոնց միջին տարիքը այդ ժամանակ մոտավորապես 66 էր:

Հաջորդ 18 ամիսների ընթացքում Երեց Հանթերը անընդհատ երթևեկում էր Կալիֆորնիա և Յուտա, մինչ նա ավարտին էր հասցնում իրավաբանի իր աշխատանքի հետ կապված անհրաժեշտ գործերը և նախապատրաստվում էր տեղափոխվելու: Նրա հաճախորդներից մեկն ասել է, որ «Եկեղեցին պիտի որ շատ ձեռնտու առաջարկ արած լիներ», որ կարողանար համոզել նրան թողնել իրավաբանի այսքան հաջողված գործունեությունը: Այդ կապակցությամբ Երեց Հանթերն իր օրագրում գրել է.

Նախագահ Հանթերը Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների Բրիգամ Յանգի Համալսարանի Երուսաղեմի Կենտրոնում՝ նախքան կենտրոնի նվիրագործումը

«Շատերը չեն հասկանում, թե ինչո՞ւ են մեր կրոնի մարդիկ արձագանքում ծառայելու կոչումներին կամ մեր ողջ ունեցածը տալու պարտավորություն ստանձնում: . . .Ես իսկապես վայելել եմ իրավաբանական գործունեությամբ զբաղվելը, սակայն այս կոչումը, որը տրվել է ինձ, ամբողջությամբ ստվերում կթողնի մասնագիտական կամ դրամական շահույթի ձգտումները»:[62]

Երեց Հանթերի առաքելական ծառայությունը տևելու էր ավելի քան 35 տարի, և այդ ժամանակահատվածում նա ճամփորդելու էր դեպի աշխարհի գրեթե յուրաքանչյուր երկիրը՝ որպես Հիսուս Քրիստոսի հատուկ վկա՝ իր պարտականությունը կատարելու համար (տես ՎԵՈՒ 107.23):

Յուտայի Ծագումնաբանական Միությունը

«Եկեք . . . մատուցենք Տիրոջը . . . մի գիրք, որը կպարունակի մեր մահացածների գրանցումները, որն արժանի կլինի ամեն ընդունելության» (ՎԵՈՒ 128.24):

1964 թվականին Առաջին Նախագահությունը առաջարկեց նշանակել Երեց Հանթերին լինելու Եկեղեցու Ծագումնաբանական Միության նախագահը, որն այն ժամանակ հայտնի էր

որպես Յուտայի Ծագումնաբանական Միություն: Այդ կազմակերպությունը նախորդում էր Եկեղեցու Պատմության Բաժնին: Դրա նպատակն էր հավաքել, պահպանել և կիսվել ծագումնաբանական տվյալներով ողջ աշխարհով մեկ: Երեց Հանթերը նախագահեց այդ միությունում ութը տարի, և այդ ժամանակահատվածում նա կանխատեսեց ընտանեկան պատմության աշխատանքի արագացնող, կատարելագործող և ընդլայնող հեռահար փոփոխությունները:

Մինչև 1969 թվականը կազմակերպությունը հավաքել էր «ավելի քան 670000 միկրոֆիլմեր, որը համարժեք էր յուրաքանչյուրը 300 էջից բաղկացած երեք միլիոն հատորների»: Այն նաև հավաքել էր «ընտանեկան խմբերի վեց միլիոն լրացված գրառումներ, 36 միլիոն անհատների քարտային ֆայլերի ցանկ և ավելի քան 90000 գրքերի հատորներ»:[63] Ամեն շաբաթ մոտավորապես 1000 միկրոֆիլմեր էին ավելացվում աշխարհի տարբեր մասերից: Այդ գրառումները մշակելը և դրանք հասանելի դարձնելը ուսումնասիրությունների և տաճարային աշխատանքի համար հսկայական աշխատանք էր: Երեց Հանթերի ղեկավարության ներքո Ծագումնաբանական Միությունը սկսեց օգտագործել վերջին համակարգչային տեխնոլոգիաները՝ աշխատանքին աջակցելու համար: Մի գրող նշել է, որ միությունը դարձել էր «մասնագիտական կազմակերպությունների մեջ աշխարհում հայտնի՝ իր գրառումներ պահպանելու միջոցների առաջադիմությամբ»:[64]

Երեց Հանթերը հետ կանչվեց Ծագումնաբանական Միության նախագահի կոչումից 1972 թվականին: Ամփոփելով նրա ջանքերի արդյունքները՝ Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ասել է. «Իր կյանքի մի նշանակալից հատված նա նվիրել է այդ աշխատանքին և դրել է հիմքեր և տվել ուղղություն, որոնցից Եկեղեցին մինչ օրս օգուտներ է քաղում»:[65]

Պոլինեզիական Մշակույթի Կենտրոն

«Ականջ դրեք, դո՜ւք, ժողովուրդնե՛ր հեռվի, և դո՜ւք, որ կղզիներում եք ծովի, լսեցեք միասին» (ՎԱՌ 1.1):

1965 թվականին Առաջին Նախագահությունը առաջարկեց նշանակել Երեց Հանթերին լինելու Պոլինեզիայի Մշակույթի Կենտրոնի խորհրդի նախագահը Լեյիում՝ Հավայան կղզիներում: Կենտրոնը բացվել էր դրանից ընդամենը 15 ամիս առաջ և

Հովարդ և Քլեյր Հանթերներ

կանգնած էր զանազան խնդիրների առաջ: Շատ քիչ զբոսաշրջիկներ էին հաճախում այնտեղ, և մարդիկ տարբեր կարծիքներ ունեին կենտրոնի նպատակների և ծրագրերի վերաբերյալ: Երեց Հանթերի նշանակումից մեկ շաբաթ անց նա գնաց Լեյի և սկսեց ուշադիր ուսումնասիրել կենտրոնի ուժեղ կողմերը և կարիքները:

Երեց Հանթերի ղեկավարության ներքո Պոլինեզիայի Մշակութային Կենտրոնը դարձավ Հավայան կղզիների ամենահայտնի զբոսաշրջության վայրերից մեկը՝ 1971թվականին՝ գրավելով գրեթե մեկ միլիոն այցելուների ուշադրությունը: Երեց Հանթերը նաև կանխատեսեց կենտրոնի և դրա ծրագրերի մեծածավալ ընդլայնումը: Երեց Հանթերի խոսքերով ասած՝ նաև կարևոր էր այն, որ կենտրոնը տալիս էր աշխատանք, որը հնարավորություն էր տալիս «Խաղաղ օվկիանոսի հարավի հազարավոր ուսանողների՝ աջակցություն գտնել կրթություն ստանալու համար, որոնցից շատերը [այլ կերպ] չէին կարող թողնել իրենց կղզիները՝ կրթություն ստանալու համար»:[66]

Պոլինեզիայի Մշակութային Կենտրոնում նախագահելուց 12 տարի անց Երեց Հանթերը հետ կանչվեց 1976 թվականին: Որպես նախագահ նրա ծառայությունը օգնեց իրականացնել Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի խոսքերը, ով 1955 թվականին

ասել էր, որ Լեյի փոքրիկ գյուղը ներուժ ուներ դառնալու «միսիոներական գործոն, ներգործելով ոչ թե հազարավորների, ոչ թե տասնյակ հազարավորների, այլ միլիոնավոր մարդկանց վրա, ովքեր կգան, ցանկանալով իմանալ, թե ինչ է իրենից ներկայացնում այս գյուղը և թե ինչ կարևորություն ունի այն»:[67]

Եկեղեցու Պատմաբան

«Տիրոջ գործավարի պարտականությունն է, որին նա նշանակել է, պատմություն և ընդհանուր եկեղեցական գրանցում վարել, այն բոլոր բաների վերաբերյալ, որոնք տեղի են ունենում Միոնում» (ՎևՈ 85.1):

1970 թվականի հունվարին Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը մահացավ, և Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ի սպաս դրվեց որպես Եկեղեցու նոր Նախագահ: Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը ծառայում էր որպես Եկեղեցու Պատմաբան նախորդ 49 տարիների ընթացքում, և երբ նա դարձավ Եկեղեցու Նախագահը, Երեց Հանթերը կանչվեց փոխարինելու նրան այդ հանձնարարության մեջ: «Նախագահ Սմիթն այնքան երկար տարիներ էր եղել Եկեղեցու Պատմաբանը, որ ես դժվարությամբ կարող էի պատկերացնել ինձ այդ կոչման մեջ», ասել է նա:[68]

Երեց Հանթերը ստանձնեց այս նոր պարտականությունն իրեն հատուկ ջանասիրությամբ: «Հանձնարարությունը, որը տրվում է Տիրոջ կողմից հայտնության միջոցով, շատ դժվարին է՝ թե հավաքելու և գրելու առաջադրանք կատարելը, և թե այդ նյութը Եկեղեցու անդամների համար մատչելի դարձնելը», ասել է նա:[69] *Եկեղեցու Նորություններում* հաղորդել են, որ Եկեղեցու Պատմաբանը «պատասխանատու է Եկեղեցու բոլոր գրառումները պահելու համար, ներառյալ արձանագրությունները, տաճարային գրառումները, բոլոր կարգումները, հայրապետական օրհնությունները և Եկեղեցու պատմության ներկայիս բանաքաղությունը»:[70]

1972 թվականին Տասներկուսի անդամները ազատվեցին իրենց որոշ վարչական պարտականություններից, որպեսզի նրանք կարողանային ավելի շատ ժամանակ նվիրել իրենց առաքելական ծառայությանը: Որպես այդ փոփոխության մի մաս Երեց Հանթերը ազատվեց Եկեղեցու Պատմաբանի կոչումից, սակայն պահպանեց իր Եկեղեցու Պատմության Բաժնի խորհրդականի դերը: «Այսպիսով, ես շարունակեցի ղեկավարել

իմ պաշտոնում, սակայն ազատվեցի գործելու պարտավորությունից», գրել է նա:[71] Նա շարունակեց կատարել խորհրդատուի իր դերը մինչև 1978 թվականը:

Ծառայություն Սուրբ Երկրում

Հովարդ Վ. Հանթերը յուրահատուկ սիրով սիրեց Սուրբ Երկիրը, երբ նա մեկնեց այնտեղ իր ընտանիքի հետ 1958 և 1960թվականներին: Որպես Առաքյալ իր ծառայության ընթացքում նա վերադարձավ այնտեղ երկու տասնյակից ավելի անգամներ: «Նրա ցանկությունը լինելու այնտեղ, որտեղ քայլել և ուսուցանել էր Փրկիչը, անհագ էր թվում», ասել է Տասներկուսի Քվորումից Երեց Ջեյմս Ի. Ֆաուստը:[72]

Քաջատեղյակ լինելով տարածաշրջանի խնդիրներին՝ Երեց Հանթերն իր հետ տանում էր սիրո և խաղաղության ուղերձ: «Թե հրեաները, թե արաբները մեր Հոր զավակներն են», ասել է նա: «Նրանք երկուսն էլ խոստումի զավակներ են, և որպես եկեղեցի, մենք կողմնակալություն չենք անում: Մենք սեր և հետաքրքրություն ունենք յուրաքանչյուր կողմի հանդեպ: Հիսուս Քրիստոսի ավետարանի նպատակն է առաջ բերել որքան հնարավոր է շատ սեր, միություն և եղբայրություն»:[73]

1972-1989թթ. ընթացքում Երուսաղեմում Երեց Հանթերն իրականացրել է կարևորագույն հանձնարարություններ երկու հատուկ ծրագրերի համար. Օրսոն Հայդ Հիշատակի Պուրակը և Բրիգամ Յանգի Համալսարանի (ԲՅՀ) Երուսաղեմի Կենտրոնը Մերձավոր Արևելքի Ուսումնասիրությունների համար: Եկեղեցու պատմության վաղ շրջանում՝ 1841թվականին, Տասներկուսի Քվորումից Երեց Օրսոն Հայդը նվիրագործման աղոթք ասաց Ձիթենյաց սարի վրա՝ Երուսաղեմի արևելքում: 1972 թվականին Առաջին Նախագահությունը Երեց Հանթերին խնդրեց փնտրել հարմար վայր՝ Երուսաղեմում Օրսոն Հայդին նվիրված հուշարձան կառուցելու համար: 1975 թվականին Երուսաղեմ քաղաքում բացվեց մի ուղի, որն ի վերջո դառնալու էր Օրսոն Հայդի Հիշատակի Պուրակ՝ կառուցված Ձիթենյաց սարի վրա:

Հաջորդ մի քանի տարիների ընթացքում Երեց Հանթերը բազմիցս մեկնեց Երուսաղեմ՝ հուշարձանի համար պայմանագրեր կնքելու և դրա նախագծումն ու կառուցումը վերահսկելու համար: Նախագիծն ավարտին հասցվեց 1979 թվականին և այդ տարի

Հովարդ և Ինիս Հանթերները

նվիրագործվեց Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի կողմից: Նվիրագործման ծառայությունները ղեկավարելուց հետո Երեց Հանթերն արտահայտեց իր կարծիքը, որ հուշահամալիրը «բարու մեծ ազդեցություն կունենա Եկեղեցու համար բարենպաստ պատկերն ընդլայնելու համար»:[74]

Նույնիսկ մինչև Օրսոն Հայդի Հիշատակի Պուրակի ավարտը, Երեց Հանթերը փնտրել էր մի վայր, որտեղ Եկեղեցին կարող էր կենտրոն կառուցել ԲՅՀ-ի ուսումնասիրությունների արտասահմանյան ծրագրի համար: Կենտրոնը նաև հանդիպման վայր էր ապահովելու Երուսաղեմի Ճյուղի անդամների համար: Այս նախագիծը վերահսկելը լինելու էր Երեց Հանթերի ծառայության ամենաբարդ, ամենամեծ հոգատարությունը պահանջող հանձնարարություններից մեկը:

Եկեղեցու ղեկավարները ընտրել էին մի վայր, սակայն հողատարածքի համար վարձակալական պայմանագրի և շինարարական ծրագրերի թույլտվություն ձեռք բերելը պահանջեց գրեթե հինգ տարվա, ինչպես Երեց Հանթերն է նկարագրել, «անվերջ աշխատանք»:[75] Մանրազնին քննարկումներից և բանակցություններից հետո Իսրայելի կառավարությունը թույլ տվեց, որպեսզի ընթանան կենտրոնի շինարարական աշխատանքները:

Մինչև 1988 թվականի մայիսը շինարարությունը մեծամասամբ ավարտին էր հասցված և վարձակալական պայմանագիրը պատրաստ էր ստորագրվելու: Այդ ժամանակ Հովարդ Վ. Հանթերը ծառայում էր որպես Տասներկուսի Գործող Նախագահ: Նա ողնաշարի բարդ վիրահատություն էր տարել նախորդ տարի և չէր կարողանում քայլել, սակայն նա մեկնեց Երուսաղեմ՝ վարձակալական պայմանագիրը ստորագրելու համար: Մինչ նա այնտեղ էր, ԲՅՀ ուսանողները և Երուսաղեմի Ճյուղի անդամները փոքրիկ երեկույթ կազմակերպեցին՝ իրենց երախտագիտությունը հայտնելու նպատակով: Ճյուղի պատմության մեջ կարդում ենք երեկույթի այս հոգեհույզ տեսարանի մասին. «Դեռևս գտնվելով ողնաշարի վիրահատության ապաքինման շրջանում՝ Նախագահ Հանթերը [Բրիգամ Յանգի Համալսարանի] գլխավոր մուտքից ներս մտավ անվասայլակին նստած՝ Նախագահ [Ջեֆրի Ռ.] Հոլլանդի օգնությամբ, մինչ երգչախումբը ողջունեց նրանց՝ երգելով «Սուրբ քաղաքը» օրհներգը»:[76] Արցունքները ցած էին գլորվում Նախագահ Հանթերի այտերի վրայով:

1989 թվականի մայիսին Նախագահ Հանթերը վերադարձավ Երուսաղեմ՝ կենտրոնը նվիրագործելու համար: Այս նվիրագործման ծառայությունը գագաթնակետն էր նրա և այլոց տասնամյա արտակարգ ջանքերի՝ իրականություն դարձնելու Երուսաղեմի Կենտրոնի հետ կապված հույսերը: «Նախագահ Հովարդ Վ. Հանթերը . . . մշտապես զբաղված էր այդ նախագծով և սիրառատ հսկիչն էր աշտարակի դեռևս այն ժամանակից սկսած, երբ այն ընդամենը երազանք էր», ասել է Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը:[77] Նվիրագործման աղոթքում Նախագահ Հանթերն ասել է.

«Այս շինությունը . . . կառուցվել է նրանց ապաստան լինելու համար, ովքեր սիրում են քեզ և ձգտում են սովորել քո մասին և հետևել քո Որդուն՝ մեր Փրկչին և Քավիչին: Այն գեղեցիկ է բոլոր առումներով՝ գեղեցկության օրինակ հանդիսանալով այն բանի, ինչն այն ներկայացնում է: Օ Հայր, մենք շնորհակալ ենք քեզ այս տունը քեզ համար կառուցելու արտոնության համար՝ քո որդիների և դուստրերի օգտի և ուսման համար»:[78]

Նախագահ Հանթերը իր Առաջին Նախագահության խորհրդականների հետ. Նախագահ Գորդոն Բ. Հինքլի (ձախից) և Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն (աջից)

Ընդլայնվող Եկեղեցին

«Սիոնը պիտի աճի զեղեցկությամբ և սրբությամբ. նրա սահմանները պիտի ընդլայնվեն. նրա ցցերը պիտի ամրացվեն» (ՎԱՈ 82.14):

Երբ 1959 թվականին Հովարդ Վ. Հանթերը կանչվեց որպես Առաքյալ, Եկեղեցին ուներ մոտավորապես 1,6 միլիոն անդամ: Հաջորդ տասնամյակների ընթացքում նա կարևոր դեր է խաղացել՝ աշխարհով մեկ Եկեղեցու աննախադեպ աճի հարցում: Հարյուրավոր հանգստյան օրեր նա մեկնել է ցցեր՝ անդամներին ամրացնելու և նոր ղեկավարներ կանչելու համար: Նա նաև հանդիպումներ է ունեցել տարբեր ազգերի կառավարության պաշտոնյաների հետ՝ օգնելով դռներ բացել միսիոներական աշխատանքի համար:

Մինչև 1975 թվականը Եկեղեցու անդամությունը հասավ մոտավորապես 3.4 միլիոնի և հատկապես արագ էր աճում Լատինական Ամերիկայում: Այդ տարվա վերջին Երեց Հանթերը և Երեց Ջ. Թոմաս Ֆիանսը՝ Տասներկուսի Խորհրդականը, հանձնարարություն ստացան բաժանելու 5 ցցեր Մեխիկո Սիթիում: Տարածաշրջանի ղեկավարների հետ հանդիպումից և ցցերի նախագահներից ստացված տվյալների վերանայելուց հետո Երեց Հանթերը կազմակերպեց այդ 5 ցցերից 15 ցցեր կազմավորելու գործընթացը՝ այդ ամենն անելով երկու օրվա ընթացքում:[79] Իրեն բնորոշ համեստությամբ՝ նա գրել է. «Ես կասկածում եմ, որ Եկեղեցում երբևէ եղած լինի նման մեծ կազմակերպություն, և մենք հոգնած էինք, երբ տուն հասանք»:[80]

Քլեյրը՝ նվիրված կողակից

«Իմ կինը եղել է քնքուշ ու սիրող զուգընկեր»,- ասել է Երեց Հանթերը, երբ նա 1959 թվականին կանչվեց Տասներկուսի Քվորումում ծառայելու:[81] Երկար տարիներ Քլեյրը սովորաբար ընկերակցում էր Երեց Հանթերին՝ որպես Առաքյալ իր ճամփորդությունների ընթացքում: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը վերհիշել է այն ժամանակների մասին, երբ նա նկատել է, թե ինչպես է Քլեյրը սեր ցուցաբերել Տոնգայի երեխաների հանդեպ. «Նա գրկում էր Տոնգայի այդ քնքուշ փոքրիկ երեխաներին և նստեցնում իր ծնկներին՝ մինչ նա խոսում էր նրանց հետ . . . և հետո բացատրում Երեխաների Խմբի ուսուցիչներին, թե որքան օրհնված և արտոնյալ էին նրանք, որ հնարավորություն ունեին ուսուցանելու այս թանկագին փոքրիկներին: Նա գիտեր մարդկային հոգու արժեքը»:[82]

1974 թվականին հարցազրույցի ժամանակ Քլեյրի մասին Նախագահ Հանթերն ասել է. «Մեր ամուսնության ողջ ընթացքում . . . նա միշտ կանգնած է եղել իմ կողքին՝ սիրով, հարգանքով և խրախուսելով: . . . Նրա աջակցությունը մեծ է եղել»:[83]

Այդ հարցազրույցի ժամանակ Քլեյրը սկսել էր առողջական լուրջ խնդիրներ ունենալ: Նախ նա ուժեղ գլխացավեր էր ունենում և երբեմն հիշողության կորուստ ու ապակողմնորոշում: Ավելի ուշ նա մի քանի անգամ թեթև կաթվածներ ստացավ, որի արդյունքում նա դժվարանում էր խոսել կամ շարժել իր ձեռքերը: Երբ նա հասավ այն վիճակին, որ մշտական հոգածության կարիք ուներ, Երեց Հանթերը որոշեց որքան հնարավորինս շատ ժամանակ

տրամադրել նրան՝ միևնույն ժամանակ կատարելով նաև իր պարտականությունները որպես Տասներկուսի Քվորումի անդամ: Նա պայմանավորվել էր մեկի հետ, ով կմնար Քլեյրի մոտ օրվա ընթացքում, իսկ նա հոգ էր տանում նրա մասին գիշերները: Երեց Հանթերն այս տարիների ընթացքում ևս ունեներ առողջական խնդիրներ՝ ներառյալ սրտի կաթվածը 1980 թվականին:

Քլեյրը ուղեղի ներքին արյունազեղում ունեցավ 1981 և ևս մեկը 1982թվականին: Երկրորդից հետո նրա վիճակն այնքան վատթարացավ, որ բժիշկները պնդեցին, որ նա բժշկական կենտրոն տեղափոխվեր, որպեսզի կարողանար պատշաճ բուժօգնություն ստանալ: Իր կյանքի վերջին 18 ամիսները նա անցկացրեց այդ կենտրոնում: Այդ ընթացքում Նախագահ Հանթերը այցելում էր նրան օրական առնվազն մեկ անգամ, բացառություն էին կազմում այն օրերը, երբ նա ճամփորդում էր՝ կատարելով Եկեղեցու հանձնարարությունները: Չնայած, որ Քլեյրը հաճախ չէր ճանաչում նրան, նա շարունակում էր ասել կնոջը իր սիրո մասին և համոզվել, որ վերջինս իրեն լավ էր զգում: Թոռնիկներից մեկն ասել է. «Նա միշտ շտապում էր տեսնել նրան, լինել նրա կողքին և հոգ տանել նրա մասին»:[84] Մտաբերելով իր հոր հոգատարությունն մոր հանդեպ՝ Ռիչարդ Հանթերը գրել է.

«Մայրս ուներ լավագույն հոգատարությունը, որ հնարավոր էր ունենալ իր կյանքի մայրամուտին, քանի որ հայրս էր հոգ տանում նրա համար: Ողջ ընտանիքը մեծ ակնածանքով և հարգանքով հետևում էր, մինչ նա ստանձնում էր խնամակալի դերը: . . . Ես հիշում եմ, թե որքան ծանր էր նրա համար, երբ բժիշկը զգուշացրեց, [որ] մայրս ամենավատ իրավիճակում կարող էր հայտնվել, եթե մնար տանը և չտեղափոխվեր մասնագիտացված խնամք ապահովող հաստատություն: Եթե նա տանը մնար, հայրս հավանական է նույնպես մահանար, փորձելով հոգ տանել նրա համար՝ իր իսկ ֆիզիկական սահմանափակումների պատճառով: Ապա նա մենակ կմնար իր մաքառումներում: Նրա նվիրվածությունը մայրիկի հանդեպ այն թանկագին բաներից մեկն է, որը միշտ կմնա մեր ընտանիքի հիշողության մեջ»:[85]

Քլեյրը մահացավ 1983 թվականի հոկտեմբերի 9-ին: Ականատես լինելով Երեց Հանթերի հոգատարությանը, մինչ Քլեյրը տառապում էր հիվանդության ավելի քան 10 տարիների ընթացքում, Երեց Ջեյմս Ի. Ֆաուստն ասել է. «Քնքշանքը, որն առկա

էր նրանց շփման մեջ, հուզիչ էր: Ես երբեք չեմ տեսել ամուսնու նվիրվածության նման օրինակ իր կնոջ հանդեպ»:[86]

Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը մահացավ 1985 թվականի նոյեմբերին, և Էզրա Թավտ Բենսոնը հաջորդեց նրան՝ որպես Եկեղեցու Նախագահ: Մարիոն Գ. Ռոմնին դարձավ Տասներկուսի Քվորումի Նախագահը՝ քվորումի ավագ անդամը լինելու շնորհիվ: Նախագահ Ռոմնիի առողջական խնդիրների պատճառով Երեց Հանթերը, ով ավագությամբ հաջորդն էր, ի սպաս դրվեց որպես Տասներկուսի Գործող Նախագահ: Նա դարձավ Տասներկուսի Նախագահը 1988 թվականի հունիսին՝ Նախագահ Ռոմնիի մահից երկու շաբաթ անց:

Նախագահ Հանթերը ծառայեց որպես Գործող Նախագահ կամ Տասներկուսի Քվորումի Նախագահ ութ ու կես տարի: Այդ ժամանակահատվածում Տասներկուսի ծառայությունը ողջ աշխարհում շարունակեց ընդլայնվել, և Եկեղեցու աճն ավելացավ՝ 5.9 միլիոն անդամից հասնելով 8.7 միլիոնի՝ ծխեր և ճյուղեր ունենալով 149 ազգերում և տարածքներում: «Սա Եկեղեցու պատմության իրադարձություններով լի ժամանակահատվածներից է», ասել է Նախագահ Հանթերը 1988 թվականին: «Այսօր քայլելը բավականաչափ արագ չէ: Մենք պետք է վազենք, որպեսզի համընթաց շարժվենք և առաջ տանենք աշխատանքը»:[87] Ողջ աշխարհում Հիսուս Քրիստոսի մասին վկայելու և Եկեղեցին կառուցելու պարտավորությունը կատարելիս Նախագահ Հանթերն առաջնորդում էր օրինակով: Որպես Տասներկուսի Նախագահ իր ծառայության ընթացքում նա ճամփորդել է ողջ Միացյալ Նահանգներում և ավելի քան 25 այլ երկրներում:

Նախագահ Հանթերն առաջ էր շարժվում՝ անկախ առողջական բազմաթիվ խնդիրներից: 1986 թվականին նա սրտի բաց վիրահատություն տարավ, և 1987 թվականին՝ ողնաշարի վիրահատություն: Չնայած նրա ողնաշարը լավացավ, նա չէր կարողանում քայլել ներվի վնասվելու և այլ բարդությունների պատճառով: Այդ հոկտեմբերին նա նստել էր անվասայլակին՝ մինչ ելույթ էր ունենում գերագույն համաժողովի ժամանակ: «Ներեցեք ինձ, եթե ես նստած մնամ մինչ կներկայացնեմ այս մի

քանի ակնարկները», ասել է նա ելույթի սկզբում: «Ընտրության արդյունքում չէ, որ ես խոսում եմ անվասայլակին նստած: Ես նկատեցի, որ դուք կարծես թե վայելում եք համաժողովը նստած, ուստի, ես կհետևեմ ձեր օրինակին»:[88]

Որոշելով կրկին քայլել՝ Նախագահ Հանթերը լարված ժամեր անցկացրեց զբաղվելով ֆիզիկական թերապիայով: Հաջորդ գերագույն համաժողովի ժամանակ՝ 1988 թվականի ապրիլին, նա դանդաղ քայլեց դեպի ամբիոնը՝ ձեռնափայտի օգնությամբ: Դեկտեմբերին նա ձեռնափայտի օգնությամբ մասնակցեց Առաջին Նախագահության և Տասներկուսի ամենշաբաթյա տաճարային ժողովին, առաջին անգամն էր ավելի քան մեկ տարվա ընթացքում, որ նա չէր եկել անվասայլակի վրա: «Երբ ես մտա խորհրդի սենյակը, եղբայրները կանգնեցին և ծափահարեցին», ասել է նա: «Սա առաջին անգամն էր, որ ես տաճարում ծափահարություն էի լսում: . . . Բժիշկների մեծ մասն ինձ ասել էր, որ ես երբեք չեմ կարողանա կանգնել կամ քայլել, սակայն նրանք սխալմամբ հաշվի չէին առել աղոթքի զորությունը»:[89]

1990 թվականի ապրիլին, երբ ավարտին էր մոտենում Տասներկուսի Քվորումի ժողովը, Նախագահ Հանթերը հարցրեց. «Որևէ մեկն ունի՞ ինչ-որ բան ասելու, ինչը օրակարգում ներառված չէ»: Երբ ոչ ոք չխոսեց, նա հայտարարեց. «Լավ, ուրեմն, . . . եթե ոչ ոք ոչինչ չունի ասելու, ես մտածեցի, որ պարզապես ձեզ կհայտնեմ, որ այսօր կեսօրին ես ամուսնանալու եմ»: Տասներկուսի անդամներից մեկն ասել է, որ հայտարարությունն այնքան անակնկալ էր, որ «յուրաքանչյուրը խորհեց, թե արդյոք ճիշտ էր լսել»: Նախագահ Հանթերը բացատրեց իր եղբայրներին. «Ինիս Ստանտոնը Կալիֆորնիայի մի հին ծանոթ է: Ես որոշ ժամանակ այցելում էի նրան, և ես որոշել եմ ամուսնանալ»:[90] Ինիսը եղել է Էլ Սերենո Ծխի անդամ, երբ Նախագահ Հանթերը եպիսկոպոս էր: Նրանց ուղիներն ավելի ուշ խաչվեցին, երբ Ինիսը տեղափոխվեց Յուտա և ընդունարանի աշխատող էր Եկեղեցու Գրասենյակի շենքում: Նրանք ամուսնացան Սոլթ Լեյքի տաճարում 1990 թվականին ապրիլի 12-ին՝ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կողմից:

Մոտավորապես յոթ տարի էր անցել Քլեյրի մահվանից հետո: Ինիսը մեծ մխիթարության և ուժի հրաշալի աղբյուր էր Նախագահ Հանթերի համար՝ որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ և Եկեղեցու Նախագահ իր ծառայության ընթացքում: Նա

ընկերակցում էր Նախագահ Հանթերին ճամփորդությունների մեծ մասի ընթացքում, որպեսզի հանդիպեր Սրբերին ողջ աշխարհով մեկ:

1993 թվականի փետրվարի 7-ին Նախագահ Հանթերը գնաց Բրիգամ Յանգի Համալսարան, որպեսզի խոսեր մի հավաքի ժամանակ, որին մասնակցում էին 17000 մարդ: Նա ուզում էր սկսել իր ելույթը, երբ մի մարդ վազելով մոտեցավ բեմահարթակին՝ մի ձեռքում բռնած փոքրիկ մի պայուսակ, իսկ մյուսում՝ մի սև առարկա: «Մնացեք ձեր տեղում», գոռացել էր մարդը: Նա սպառնացել էր պայթեցնել այն, ինչը հայտարարել էր, թե ռումբ է, եթե Նախագահ Հանթերը չկարդար նախապատրաստած հայտարարությունը: Նախագահ Հանթերը մերժեց և խիստ վճռական կանգնեց ամբիոնի մոտ ողջ ընթացքում, մինչ մարդը սպառնում էր նրան: Մինչ վախը և իրարանցումը տարածվեցին շինությունով մեկ, հավաքվածները սկսեցին երգել «Փառք Քեզ, Տեր, Մարգարեի համար» օրհներգը: Սպասողական վիճակի մի քանի րոպեներից հետո անվտանգության երկու աշխատակիցներ բռնեցին մարդուն, և փորձեցին ապահով պայմաններ ստեղծել Նախագահ Հանթերի համար: Երբ կարգ ու կանոնը վերականգնվեց, նա մի պահ հանգստացավ և ապա շարունակեց իր ելույթը: «Կյանքը շատ մարտահրավերներ ունի,- սկսեց նա և այնուհետև ավելացրեց,- ինչում համոզվեցինք»:[91]

Նախորդ 20 տարիների ընթացքում Նախագահ Հանթերը տարել էր բազմաթիվ դժվարություններ, ներառյալ վատթարացող առողջությունը, Քլեյրի մահը, բազմաթիվ օրեր հիվանդանոցում իր իսկ առողջական խնդիրների պատճառով և մեծ ցավ ու հաշմանդամություն: Նրա ուսմունքներն այդ տարիներին հաճախ կենտրոնանում էին հակառակորդի վրա և վկայություն էր բերում Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի մասին՝ որպես խաղաղության և օգնության աղբյուր փորձության պահին: Քարոզներից մեկի ժամանակ նա ուսուցանել է.

«Եկեղեցու Մարգարեները և Առաքյալները հանդիպել են . . . անձնական դժվարությունների: Ես հաստատում եմ, որ ես հանդիպել եմ մի քանիսին, և դուք էլ անկասկած ինքներդ կհանդիպեք մի քանիսին այժմ և ավելի ուշ ձեր կյանքում: Երբ այս փորձառությունները խոնարհեցնում են մեզ, կատարելագործում, ուսուցանում և օրհնում են մեզ, դրանք կարող են զորեղ

գործիքներ դառնալ Աստծո ձեռքում՝ դարձնելու մեզ ավելի լավ մարդիկ, դարձնելու մեզ ավելի երախտապարտ, ավելի սիրող և ավելի մտահոգ ուրիշների հանդեպ՝ մինչ ինքներս դժվար ժամանակներ ենք ապրում»:[92]

Նման ուսմունքները սիրառատ գրկախառնություն էին նրանց համար, ովքեր տառապում էին: Նախագահ Հովարդ Վ. Հանթերի ոգեշնչված խոսքերը քաջալերել են շատերին՝ դառնալու դեպի Փրկիչը, ինչպես ինքն է արել:

Եկեղեցու Նախագահ

«Նախագահ Հանթերը ամենասիրառատ, Քրիստոսանման մարդկանցից է, ում մենք երբևէ ճանաչել ենք: Նրա հոգևոր խորությունն այնքան մեծ է, որ անբացատրելի է: Երկար տարիներ լինելով Տեր Հիսուս Քրիստոսի հատուկ վկա, Նրա առաջնորդող ազդեցության ներքո՝ Նախագահ Հանթերը հոգևոր առումով նշանակալի կատարելագործման է հասել: Դա նրա ողջ էության աղբյուրն է» (Ջեյմս Ի. Ֆաուստ):[93]

1994 թվականի մայիսի 30-ին Նախագահ Էզրա Թավտ Բենսոնը մահացավ երկարատև հիվանդությունից հետո: Վեց օր անց Տասներկու Առաքյալների Քվորումը հանդիպում ունեցավ Սոլթ Լեյքի Տաճարում՝ Առաջին Նախագահությունը վերակազմավորելու համար: Որպես ավագ Առաքյալ՝ Հովարդ Վ. Հանթերը ի սպաս դրվեց որպես Եկեղեցու Նախագահ: Նա կանչեց Գորդոն Բ. Հինքլիին և Թոմաս Ս. Մոնսոնին, ովքեր ծառայել էին որպես Նախագահ Բենսոնի խորհրդականներ՝ լինելու իր խորհրդականները:

Հաջորդ օրը մամլո ասուլիսի ժամանակ Նախագահ Հանթերն իր առաջին ելույթն ունեցավ որպես Եկեղեցու Նախագահ: «Մեր ընկեր և եղբայր Էզրա Թավտ Բենսոնի մահը մեծ ցավ պատճառեց մեր սրտերին», ասել է նա: «Նրա կորուստը ես անձամբ շատ առանձնահատուկ ձևով եմ զգացել այն նոր պարտավորությունների ներքո, որոնք դրվել են ինձ վրա նրա մահից հետո: Ես շատ արցունք եմ թափել և փնտրել իմ Երկնային Հորն անկեղծ աղոթքով, ցանկանալով համապատասխան լինել այն բարձր և սուրբ կոչմանը, որն այժմ իմն է:

Այս վերջին ժամերի և օրերի ընթացքում ինձ մեծ ուժ է հաղորդում իմ հաստատուն վկայությունը, որ սա Աստծո աշխատանքն է, ոչ թե մարդկանց, որ Հիսուս Քրիստոսը լիազորված և կենդանի

գլուխն է այս եկեղեցու, և Նա առաջնորդում է այն խոսքով և գործով: Ես պարտավորվում եմ իմ կյանքով, իմ զորությամբ և իմ ողջ հոգով լիարժեք ծառայել Նրան»:[94]

Իր սերն արտահայտելուց հետո Նախագահ Հանթերը երկու հրավեր հղեց Եկեղեցու անդամներին: Առաջինը Հիսուս Քրիստոսի օրինակին հետևելիս ավելի ջանասեր լինելն էր, իսկ երկրորդը տաճարի օրհնությունները ավելի լիարժեք ճաշակելն էր (տես էջ 1-3): Նա նաև հրավիրեց նրանց, ովքեր ցավ են ապրել, պայքարում են կամ վախենում՝ «վերադարձեք [և] թույլ տվեք կանգնել ձեր կողքին և սրբել ձեր արցունքները»:[95]

Չնայած իր փխրուն առողջական վիճակին՝ Նախագահ Հանթերը վճռական էր տրամադրված՝ անելու այն , ինչ կարող էր, որ հանդիպեր և ամրացներ Սրբերին: Նախագահ դառնալուց երկու շաբաթ անց նա հանդես եկավ իր առաջին մեծ ելույթներով՝ խոսելով միսիայի նոր նախագահների հետ և այնուհետև ավելի քան 2200 միսիոներների հետ: Այդ ամսվա վերջում նա մեկնեց Իլինոյսի նահանգի Քարթեջ և Նավու քաղաքները՝ Ջոզեֆ և Հայրում Սմիթների նահատակության 150-րդ տարելիցի հիշատակը հավերժացնելու նպատակով: «Որտեղ էլ մենք գնում էինք, մարդիկ հավաքվում էին նրա շուրջը», ասել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին: «Նա սեղմում էր հազարավորների ձեռքը, մի յուրահատուկ ժպիտ շնորհելով, երբ երեխաները հավաքվում էին նրա շուրջը՝ նայելու նրա աչքերի մեջ և բռնելու նրա ձեռքը»:[96]

1994 թվականի հոկտեմբերի 1-ին գերագույն համաժողովի շաբաթ օրվա առավոտյան նիստի ժամանակ Եկեղեցու անդամները պաշտոնապես հաստատեցին Հովարդ Վ. Հանթերին որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ և որպես մարգարե, տեսանող և հայտնող: Իր առաջին ելույթի ժամանակ Նախագահ Հանթերը Եկեղեցու անդամների համար կրկնեց Փրկչի օրինակին հետևելու և «որպես ձեր անդամության մեծ խորհրդանիշ Տիրոջ տաճարին նայելու» իր հրավերները:[97] Նա կրկին շեշտը դրեց տաճարների վրա հաջորդ շաբաթ, երբ մեկնեց Ֆլորիդա՝ Օրլանդո Ֆլորիդա Տաճարը նվիրագործելու համար: «Ավետարանի ծրագիրը, որը Տերը հայտնել է, թերի է մնում առանց տաճարի,- ուսուցանել է նա,- քանի որ այնտեղ են կատարվում արարողությունները, որոնք անհրաժեշտ են կյանքի և փրկության Նրա ծրագրի համար»:[98]

Նոյեմբերին Նախագահ Հանթերը խոսել է արբանյակային հեռարձակմամբ, որը կազմակերպվել էր ի պատիվ Ծագումնաբանական Միության 100-րդ տարեդարձի, մի իրադարձություն, որը յուրահատուկ իմաստ ուներ նրա համար, քանի որ նա նախագահել էր այդ կազմակերպությունը 1964-1972 թվականներին: «Ես զարմանքով ետ եմ նայում տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը առաջ տանելու Տիրոջ գործերին», ասել է նա: Այնուհետև նա հայտարարել է. «Ես ունեմ մի կարևորագույն ուղերձ. Այս աշխատանքը պետք է արագացվի»:[99]

Նախագահ Հանթերը շարունակեց եռանդով աշխատել մինչև տարվա վերջ: Առաջին Նախագահության Սուրբ Ծննդյան հոգևոր երեկոյի ժամանակ Նա վկայեց Փրկչի մասին և կրկին շեշտեց Նրա օրինակին հետևելու կարևորությունը:

«Փրկիչը նվիրաբերեց Իր կյանքը ուրիշների կյանքն օրհնելուն: . . . [Նա] երբեք չէր տալիս ստանալու ակնկալիքով: Նա տալիս էր շռայլորեն և սիրով, և Նրա պարգևներն անգին էին: Նա աչքեր էր տալիս կույրին, ականջներ՝ խուլին և ոտքեր՝ կաղին. մաքրություն՝ անմաքուրին, ողջություն՝ հիվանդին և շունչ՝ անկենդանին: Նրա պարգևները հնարավորություն էին ոտնահարվածների, ազատություն՝ կեղեքվածների, ներում՝ ապաշխարողների, հույս՝ հուսահատվածների և լույս՝ խավարում գտնվողների համար: Նա տվեց մեզ Իր սերը, Իր ծառայությունը և Իր կյանքը: Եվ ամենակարևորը, Նա տվեց մեզ և բոլոր մահկանացուներին հարություն, փրկություն և հավերժական կյանք:

«Մենք պետք է ձգտենք տալ այնպես, ինչպես Նա տվեց: Մեր անձը տալը սուրբ պարգև է: «Մենք տալիս ենք, հիշելով այն ամենը, ինչ տվել է Փրկիչը»:[100]

Որպես իր ուղերձի մի մաս, նա նաև վերամշակել էր մի ուղերձ, որը լույս էր տեսել մի թերթում այն նույն տարին, երբ նա կանչվել էր որպես Առաքյալ.

«Այս Սուրբ Ծնունդին հաշտվեք նրանց հետ, ում հետ վիճել էիք: Փնտրեք մոռացված ընկերոջը: Վանեք կասկածները և փոխարինեք այն վստահությամբ: Նամակ գրեք: Տվեք մեղմ պատասխան: Քաջալերեք երիտասարդներին: Հավատարմություն ցուցաբերեք խոսքով և գործով: Պահեք խոստումը: Հրաժարվեք ոխակալությունից: Ներեք թշնամուն: Ներողություն

խնդրեք: Փորձեք հասկանալ: Քննեք ուրիշների հանդեպ ձեր պահանջները: Նախ մտածեք մեկ ուրիշի մասին: Եղեք բարի: Եղեք մեղմ: Մի քիչ ավելի շատ ծիծաղեք: Հայտնեք ձեր երախտագիտությունը: Ողջունեք անծանոթին: Ուրախացրեք մի երեխայի սիրտը: Վայելեք աշխարհի գեղեցկությունը և հրաշքները: Արտահայտեք ձեր սերը և ապա կրկին արտահայտեք այն»:[101]

Հաջորդ շաբաթ Նախագահ Հանթերը մեկնեց Մեխիկո Սիթի, որպեսզի կազմավորեր Եկեղեցու 2000-րդ ցիցը: Տասնինը տարի առաջ Մեխիկո Սիթիում նա կազմակերպել էր 15 ցցերի կազմավորումը 5 ցցերից՝ երկու օրվա ընթացքում: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին 2000-րդ ցցի կազմավորումը նկարագրում է որպես «Եկեղեցու պատմության նշանակալից ուղենիշ»:[102]

Այդ ամիսների ընթացքում մի երեկո Նախագահ Հանթերի որդի Ռիչարդը գտնվում էր Ջոզեֆ Սմիթի Հուշահամալիրում և տեսնում է, որ աշխատողներից մեկը անվասայլակով է: «Ես կարող էի ասել, որ դա նոր բան էր նրա համար», ասել է նա: «Ես գնացի, որ խոսեի նրա հետ և ասացի, որ հայրս անվասայլակ ուներ, ճիշտ ինչպես իրենն էր: Նա ասաց ինձ, որ իր Եկեղեցու մարգարեն նույնպես անվասայլակ ուներ, ճիշտ ինչպես իրենն էր: Նա ասաց, որ եթե մարգարեն կարողանում էր անել ադ, ապա միգուցե ինքը նույնպես կարողանար: Դա հույս էր տվել նրան: Ես կարծում եմ, որ հայրս շատերի կողմից է սիրվել: Հավանաբար, դրա պատճառներից մեկն այն է, որ նրանք տեսնում էին, որ նա տառապում էր ճիշտ այնպես, ինչպես իրենք, և նա արիաբար դիմանում էր այդ տառապանքներին, և դա հույս էր տալիս նրանց»:[103]

1995 թվականը Նախագահ Հանթերը սկսեց Բաունթիֆուլ Յուտա Տաճարի նվիրագործմամբ: Նա նախագահեց նվիրագործման վեց նիստերի ժամանակ, մինչև որ այնքան ուժասպառ եղավ, որ հիվանդանոց տեղափոխվեց: Մի քանի օր անց հիվանդանոցից դուրս գրվելուց հետո Եկեղեցին հայտարարեց, որ նա ուներ շագանակագեղձի քաղցկեղ, որը տարածվել էր նրա ոսկորների մեջ: Իր կյանքի վերջին հաջորդ վեց շաբաթների ընթացքում Նախագահ Հանթերը հրապարակային այլ հանդիպում չունեցավ, չնայած նա շարունակում էր հանդիպել իր խորհրդականների հետ և ղեկավարել Եկեղեցու գործերը իր բնակարանում: «Ես երախտապարտ եմ, որ նա հնարավորություն ունեցավ

նվիրագործելու [այդ տաճարը],- ասել է Նախագահ Գորդոն Բ. Հինքլին,- հատկապես հաշվի առնելով վաղ ժամանակներում նրա խնդրանքը, որ Եկեղեցու անդամները «նայեն Տիրոջ տաճարին որպես [իրենց] անդամության մեծ խորհրդանիշի»:[104]

Նախագահ Հովարդ Վ. Հանթերը մահացավ 1995 թվականի մարտի 3-ին՝ 87 տարեկան հասակում: Նրա վերջին բառը, որ ասվել է «շատ ցածր, մեղմ ձայնով» նրանց, ովքեր եղել են իր մահճակալի կողքին, պարզապես եղել է. «Շնորհակալություն»:[105] Չնայած որ նա Նախագահ է եղել ընդամենը ինը ամիս, նրա ազդեցությունը շատ մեծ է եղել: «Եկեղեցու անդամները ողջ երկրով մեկ կապվել էին նրա հետ յուրահատուկ ձևով՝ որպես իրենց մարգարե, տեսանող և հայտնող», ասել է Երեց Ջեյմս Ի. Ֆաուստը: «Նրանք նրա մեջ տեսնում էին հենց Փրկչի հատկանիշների մարմնավորումը: Նրանք ցայտուն կերպով արձագանքել են նրա մարգարեական ուղերձին՝ դարձնելու մեր կյանքերն ավելի Քրիստոսանման և մեր տաճարները՝ մեր երկրպագության կենտրոնը»:[106]

Նախագահ Հանթերի թաղման արարողության ժամանակ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին, հարգանքի տուրք մատուցելով, ասել է.

«Անտառում ընկել է մի հսկա ծառ՝ դատարկ տեղ թողնելով: Մի մեծ և ազդեցիկ ուժ է հեռացել մեզանից:

Շատ բան է ասվել նրա տառապանքների մասին: Ես կարծում եմ, որ այն ավելի երկար է տևել և ավելի սուր ու խորն է եղել, քան մեզանից որևէ մեկն իրականում իմացել է: Նա ձեռք էր բերել մեծ համբերատարություն ցավի հանդեպ և չէր բողոքում դրա համար: Այն, որ նա երկար ապրեց, ինքնին մի հրաշք էր: Նրա տառապանքը մխիթարել և մեղմացրել է շատերի ցավը, ովքեր տառապել են: Նրանք գիտեն, որ նա հասկանում էր, թե որքան ծանր է իրենց բեռը: Նա այս ամենին մոտենում էր յուրահատուկ սիրով:

«Շատ բան է ասվել նրա բարության, հոգատարության, ուրիշների հանդեպ նրա բարեկիրթ վերաբերմունքի մասին: Այդ ամենը ճիշտ է: Նա անձնատուր էր եղել Տիրոջ օրինակին, ում նա սիրում էր: Նա խոնարհ և հոգատար մարդ էր: Սակայն նա նաև կարողանում էր արտահայտել խիստ և իմաստուն կարծիքներ: . . .

Եղբայր Հանթերը բարի էր և մեղմ։ Սակայն նա նաև կարող էր լինել խիստ և համոզիչ իր հայտարարություններում։ . . . Նա փորձառու իրավաբան էր։ Նա գիտեր, թե ինչպես ներկայացներ խնդիրը։ Նա ենթադրությունները ներկայացնում էր կանոնավոր կերպով։ Այնուհետև նա կատարում էր իր եզրակացությունները։ Երբ նա խոսում էր, մենք բոլորս լսում էինք։ Նրա առաջարկները շատ հաճախ ընդունվում էին։ Սակայն, երբ դրանք չէին ընդունվում, նա հարմարվում էր և հանում իր առաջարկը։ . . .

Ահա արդեն երեսունվեց տարի՝ կրելով սուրբ առաքյալ լինելու թիկնոցը, նրան է պատկանել առաջնորդող և զորեղ ձայնը՝ հայտարարելու Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսմունքները և առաջ տանելու Եկեղեցու գործը։ Նա բազմիցս ճամփորդել է ողջ երկրով մեկ՝ Վարդապետին ծառայելով որպես ճշմարիտ և ունակ ծառա։ . . .

Հովարդ Վ. Հանթերը՝ մարգարեն, տեսանողը և հայտնողը, հաստատուն վկայություն ուներ Աստծո կենդանի իրականության՝ մեր Հավերժական Հոր մասին։ Նա մեծ համոզվածությամբ բերում էր իր վկայությունը Տեր Հիսուս Քրիստոսի՝ մարդկության Քավիչի աստվածայնության մասին։ Նա սիրով էր խոսում Մարգարե Ջոզեֆ Սմիթի և բոլոր նրանց մասին, ովքեր հաջորդել էին նրան հաջորդականության շղթայում մինչև Նախագահ Հանթերի ժամանակը։ . . .

«Թող Աստված օրհնի նրա հիշատակն ի բարին առ մեզ»։[107]

Հղումներ

1. Jay M. Todd, "President Howard W. Hunter: Fourteenth President of the Church," *Ensign,* July 1994, 4.
2. Howard W. Hunter, "Fear Not, Little Flock" (address given at Brigham Young University, Mar. 14, 1989), 2; speeches.byu.edu.
3. In Todd, "President Howard W. Hunter," 5.
4. In J M. Heslop, "He Found Pleasure in Work," *Church News,* Nov. 16, 1974, 4.
5. In Heslop, "He Found Pleasure in Work," 4, 12.
6. In Heslop, "He Found Pleasure in Work," 4.
7. Kellene Ricks, "Friend to Friend: From an Interview with Howard W. Hunter, President of the Quorum of the Twelve Apostles," *Friend,* Apr. 1990, 6.
8. In Gerry Avant, "Elder Hunter—Packed Away Musician's Career for Marriage," *Church News,* May 19, 1985, 4.
9. In Ricks, "Friend to Friend," 6.
10. In Heslop, "He Found Pleasure in Work," 4.
11. In Ricks, "Friend to Friend," 6.
12. In Avant, "Elder Hunter," 4.
13. "Eagle Scout Qualifies," *Idaho Statesman,* May 12, 1923; quoted in Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 41.

14. In Don L. Searle, "President Howard W. Hunter: Acting President of the Quorum of the Twelve Apostles," *Ensign,* Apr. 1986, 22.
15. In James E. Faust, "The Way of an Eagle," *Ensign,* Aug. 1994, 4.
16. Knowles, *Howard W. Hunter,* 22.
17. In James E. Faust, "The Way of an Eagle," 4, 6.
18. Knowles, *Howard W. Hunter,* 22.
19. Historical Sketch of the Boise Stake of The Church of Jesus Christ of Latter-day Saints (1924), 6, Church History Library, Salt Lake City.
20. Knowles, *Howard W. Hunter,* 41.
21. Բոյսիի Թաբերնաքլը ավերվել էր 1992 թվականին Բոյսիի Դպրոցական Համայնքի կողմից, որը գնել էր այն Եկեղեցուց դրանից մի քանի տարի առաջ (տես "Preservationists Protest Demolition Work on Tabernacle in Boise," *Deseret News,* Sept. 9, 1992, B3):
22. Knowles, *Howard W. Hunter,* 55.
23. In Heslop, "He Found Pleasure in Work," 4; see also Knowles, *Howard W. Hunter,* 57.
24. Knowles, *Howard W. Hunter,* 64.
25. Knowles, *Howard W. Hunter,* 65.
26. Knowles, *Howard W. Hunter,* 71.
27. Gerry Avant, "She Made Home a Happy Place," *Church News,* Nov. 16, 1974, 5.
28. Knowles, *Howard W. Hunter,* 79–80.
29. Knowles, *Howard W. Hunter,* 81.
30. Չհրապարակված ձեռագրերը պատկանում են Ռիչարդ Ա. Հանթերին: Այս գիրքը պարունակում է մի քանի մեջբերումներ Նախագահ Հանթերի որդուց՝ Ռիչարդից, քանի որ նա հնարավորություն ուներ տվյալներ և մտքեր տալու, մինչ նախապատրաստական աշխատանքներ էին տարվում գրքի համար: Նախագահ Հանթերի որդի Ջոնը չի մասնակցել խորհրդակցությանը, քանի որ նա մահացել էր 2007 թվականին:
31. Knowles, *Howard W. Hunter,* 87.
32. Knowles, *Howard W. Hunter,* 88.
33. Heslop, "He Found Pleasure in Work," 4.
34. Knowles, *Howard W. Hunter,* 91.
35. Knowles, *Howard W. Hunter,* 90.
36. Knowles, *Howard W. Hunter,* 94.
37. Heslop, "He Found Pleasure in Work," 4.
38. Knowles, *Howard W. Hunter,* 97.
39. Knowles, *Howard W. Hunter,* 98.
40. Knowles, *Howard W. Hunter,* 98.
41. Knowles, *Howard W. Hunter,* 100-101.
42. Charles C. Pulsipher, "My Most Influential Teacher," *Church News,* Jan. 10, 1981, 2.
43. Չհրապարակված ձեռագրերը պատկանում են Ռիչարդ Ա. Հանթերին:
44. Doyle L. Green, "Howard William Hunter: Apostle from California," *Improvement Era,* Jan. 1960, 37.
45. Cree-L Kofford, in Knowles, *Howard W. Hunter,* 120.
46. John S. Welch, in Knowles, *Howard W. Hunter,* 119.
47. Knowles, *Howard W. Hunter,* 123.
48. Knowles, *Howard W. Hunter,* 125.
49. Knowles, *Howard W. Hunter,* 131.
50. Չհրապարակված ձեռագրերը պատկանում են Ռիչարդ Ա. Հանթերին:
51. Knowles, *Howard W. Hunter,* 127.
52. Charles C. Pulsipher, "My Most Influential Teacher," 2.
53. Howard W. Hunter, "Welfare and the Relief Society," *Relief Society Magazine,* Apr. 1962, 238.
54. Knowles, *Howard W. Hunter,* 135. Իր պապիկի մասին Ռիչարդ Ա. Հանթերը գրել է. «Ես նրան միշտ իմացել եմ որպես Եկեղեցու հավատարիմ անդամ: Նրան միշտ գտնում էինք ինչ-որ լավ գործ անելիս: Դուք կկոչեիք նրան «Պարոն Մորմոն»: Նրա հարևաններից և ծխի անդամներից շատերը պատմում էին պատմություններ բարի և հոգատար գործերի վերաբերյալ, որոնք նա արել էր: Նա Եկեղեցու համայնքում սիրված էր (չտպագրված ձեռագիր):
55. Knowles, *Howard W. Hunter,* 137.
56. Knowles, *Howard W. Hunter,* 139.
57. Betty C. McEwan, "My Most Influential Teacher," Church News, June 21, 1980, 2.
58. Knowles, *Howard W. Hunter,* 144.
59. Knowles, *Howard W. Hunter,* 144.
60. Knowles, *Howard W. Hunter,* 145-46.
61. In Conference Report, Oct. 1959, 121.
62. Knowles, *Howard W. Hunter,* 151.

63. Douglas D. Palmer, "The World Conference on Records," *Improvement Era,* July 1969, 7.
64. Jay M. Todd, "Elder Howard W. Hunter, Church Historian," *Improvement Era,* Apr. 1970, 27.
65. Knowles, *Howard W. Hunter,* 194.
66. Knowles, *Howard W. Hunter,* 208.
67. Knowles, *Howard W. Hunter,* 205.
68. Todd, "President Howard W. Hunter," 27.
69. Todd, "President Howard W. Hunter," 27.
70. "New Church Historian Called," *Church News,* Feb. 14, 1970, 3.
71. Knowles, *Howard W. Hunter,* 197.
72. James E. Faust, "Howard W. Hunter: Man of God," *Ensign,* Apr. 1995, 27.
73. Howard W. Hunter, "All Are Alike unto God," *Ensign,* June 1979, 74.
74. Knowles, *Howard W. Hunter,* 215.
75. Knowles, *Howard W. Hunter,* 218.
76. Knowles, *Howard W. Hunter,* 222; abbreviations spelled out.
77. Gerry Avant, "He Wanted to Visit the Holy Land 'Just One More Time,'" *Church News,* Mar. 11, 1995, 9.
78. Francis M. Gibbons, *Howard W. Hunter: Man of Thought and Independence, Prophet of God* (2011), 119.
79. "Growth in Mexican Cities Explodes into 16 Stakes," *Church News,* Nov. 22, 1975, 3.
80. Knowles, *Howard W. Hunter,* 202.
81. In Conference Report, Oct. 1959, 121.
82. Knowles, *Howard W. Hunter,* 168-69.
83. In Avant, "She Made Home a Happy Place," 5.
84. Searle, "President Howard W. Hunter," 25.
85. Չհրապարակված ձեռագրերը պատկանում են Ռիչարդ Ա. Հանթերին։
86. James E. Faust, in "President Howard W. Hunter: The Lord's 'Good and Faithful Servant,'" *Ensign,* Apr. 1995, 15.
87. In Dell Van Orden, "Exciting Time in Church History," *Church News,* June 25, 1988, 6.
88. Howard W. Hunter, "The Opening and Closing of Doors," *Ensign,* Nov. 1987, 54.
89. Knowles, *Howard W. Hunter,* 284.
90. Knowles, *Howard W. Hunter,* 291.
91. Knowles, *Howard W. Hunter,* 305-6.
92. Howard W. Hunter, "An Anchor to the Souls of Men," *Ensign,* Oct. 1993, 71.
93. James E. Faust, "The Way of an Eagle," 13.
94. Todd, "President Howard W. Hunter," 4.
95. Todd, "President Howard W. Hunter," 5; see also Howard W. Hunter, "Exceeding Great and Precious Promises," *Ensign,* Nov. 1994, 8.
96. Gordon B. Hinckley, "A Prophet Polished and Refined," *Ensign,* Apr. 1995, 34.
97. Howard W. Hunter, "Exceeding Great and Precious Promises," *Ensign,* Nov. 1994, 8.
98. Gerry Avant, "Temple Is Dedicated in Sunshine State," *Church News,* Oct. 15, 1994, 3.
99. Howard W. Hunter, "We Have a Work to Do," *Ensign,* Mar. 1995, 64.
100. Howard W. Hunter, "The Gifts of Christmas," *Ensign,* Dec. 2002, 18.
101. Howard W. Hunter, "The Gifts of Christmas," 18–19; adapted from "What We Think Christmas Is," *McCall's,* Dec. 1959, 82–83.
102. Gordon B. Hinckley, "A Prophet Polished and Refined," 34.
103. Չհրապարակված ձեռագրերը պատկանում են Ռիչարդ Ա. Հանթերին։
104. Gordon B. Hinckley, "A Prophet Polished and Refined," 34.
105. Dell Van Orden, "14th President of the Church Dies at Age 87; He Touched Millions of Lives across the World," *Church News,* Mar. 11, 1995, 3.
106. James E. Faust, "Howard W. Hunter: Man of God," 26.
107. Gordon B. Hinckley, "A Prophet Polished and Refined," 33–35.

«Որքա՞ն հաճախ ենք մենք մտածում Փրկչի մասին: Որքա՞ն խորապես և որքա՞ն երախտագիտորեն ենք մենք մտածում Նրա կյանքի մասին: Որքանո՞վ ենք գիտակցում Նրա կենտրոնական լինելը մեր կյանքում:

Հիսուս Քրիստոս՝ մեր միակ ուղին դեպի հույս և ուրախություն

«Եթե մեր կյանքերը և մեր հավատքը կենտրոնացած լինեն Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի վրա, ոչինչ երբևէ չի կարող մշտապես սխալ ընթանալ»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Նախագահ Հովարդ Վ Հանթերի ուսմունքներում մի նշանավոր թեմա կա, որ ճշմարիտ խաղաղությունը, բժշկությունը և երջանկությունը գալիս են միայն այն դեպքում, երբ մարդը ձգտում է ճանաչել և հետևել Հիսուս Քրիստոսին: Նախագահ Հանթերն ուսուցանել է, որ «Քրիստոսի ուղին ոչ միայն *ճիշտ* ուղին է, այլ բացարձակապես *միակ* ուղին դեպի հույս և ուրախություն»:[1]

Նախագահ Հանթերը համարձակ էր նաև Փրկչի աստվածային առաքելության մասին վկայելիս: «Որպես կարգված Առաքյալ և Քրիստոսի հատուկ վկա, ես տալիս եմ ձեզ իմ հանդիսավոր վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է, փաստորեն Աստծո Որդին», հայտարարել է նա: «Նա Մեսիան է՝ մարգարեաբար կանխատեսված Հին Կտակարանի մարգարեների կողմից: Նա է Իսրայելի հույսը, ում գալուստի համար Աբրահամի, Իսահակի և Հակոբի զավակներն աղոթել են երկար դարերի ընթացքում սահմանված պաշտամունքով: . . .

«Սուրբ Հոգու զորությամբ է, որ ես բերում եմ իմ վկայությունը: Ես գիտեմ Քրիստոսի իրական լինելու մասին՝ կարծես թե ես տեսել էի իմ աչքերով և լսել էի իմ ականջներով: Ես գիտեմ նաև, որ Սուրբ Հոգին կհաստատի իմ վկայության ճշմարտացիությունը բոլոր նրանց սրտերում, ովքեր լսում են հավատքի ականջով»:[2]

Զգալով մղում դեպի այն վայրերը, որտեղ Հիսուսն էր ծառայել, Նախազահ Հանթերը ճանապարհորդեց դեպի Սուրբ Երկիր ավելի քան երկու տասնյակ անգամ: Երեց Ջեյմս Ի. Ֆաուստը Տասներկու Առաքյալների Քվորումից ասել է, որ Երուսաղեմը մագնիսի պես էր նրա համար: . . . Նրա ցանկությունը՝ լինել այնտեղ, որտեղ Փրկիչն էր քայլել և ուսուցանել, թվում էր անհագ: Նա սիրում էր բոլոր վայրերը և բոլոր հնչյունները: Նա հատկապես սիրում էր Գալիլեան: Բայց նա սիրում էր մեկ վայր բոլորից առավել: Նա *միշտ* ասում էր. «Եկեք գնանք «Պարտեզի Գերեզմանը», ուղղակի մեկ անգամ էլհանուն հին օրերի»: Նա այնտեղ նստում էր և մտորում, կարծես ներթափանցում էր իր և Փրկչի միջև եղած վարագույրի միջով»:[3]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Մենք ավելի լավ պետք է ճանաչենք Քրիստոսին, քան մենք ճանաչում ենք Նրան, և հիշենք Նրան ավելի հաճախ, քան մենք հիշում ենք Նրան:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները երգում են ակնածանքով.

Հիսուս, լոկ միտքը Քո մասին
Լցնում է սիրուս քաղցրությամբ,
Բայց շատ ավելի քաղցր է դեմքդ տեսնել
Եվ քո ներկայությամբ հանգիստ առնել: . . .

. . . Որքա՞ն հաճախ ենք մենք մտածում Փրկչի մասին: Որքա՞ն խորապես և որքա՞ն երախտագիտորեն ենք մենք մտածում Նրա կյանքի մասին: Որքանո՞վ ենք գիտակցում Նրա կենտրոնական լինելը մեր կյանքում:

Օրինակ, սովորական աշխատանքային օրվա, շաբաթվա կամ արագասլաց ամսվա որքան մասն ենք մենք նվիրում«Հիսուս, լոկ միտքը Քո մասին» տողերին: Հավանաբար մեզանից ոմանց համար ոչ բավականաչափ:

Անկասկած, կյանքը կլիներ ավելի խաղաղ, իհարկե ամուսնությունները և ընտանիքները կլինեին ավելի ուժեղ, անշուշտ համայնքները և ազգերը կլինեին ավելի ապահով և ավելի բարի

«Թող որ մենք ավելի նվիրված և կարգապահ Քրիստոսի հետևորդներ լինենք Թող որ մենք փայփայենք Նրան մեր մտքերում և նրա անունը արտաբերենք սիրով»:

և ավելի կառուցողական, եթե Հիսուս Քրիստոսի ավետարանը «քաղցրությամբ» կարողանար լցնել մեր սրտերը:

Եթե մենք ավելի շատ ուշադրություն չդարձնենք մեր սրտերի մտքերին, հետաքրքիր է՝ թե ինչ հույս կարող ենք ունենալ պահանջելու այդ մեծ ուրախությունը, այդ ավելի քաղցր պարգևը՝ մի օր նրա սիրառատ «դեմքը տեսնելու, Եվ Նրա ներկայությամբ հանգիստ առնելու» համար:

Մեր կյանքի յուրաքանչյուր օրը և տարվա ամեն եղանակին . . . , Հիսուսը հարցնում է մեզանից յուրաքանչյուրին, ինչպես Նա հարցրեց Իր հաղթական մուտքից հետո Երուսաղեմ՝ շատ տարիներ առաջ, «Ձեզ ի՞նչպէս է երևում Քրիստոսի համար, նա ո՞ւմ որդին է:» (Մատթ. ԻԲ.42:)

Մենք հայտարարում ենք, որ Նա Աստծո Որդին է և այդ փաստի իրականությունը, պետք է մեր հոգիներն ավելի հաճախ հուզի:[4]

Մենք պետք է ավելի լավ ճանաչենք Քրիստոսին, քան ճանաչում ենք Նրան, և հիշենք Նրան ավելի հաճախ, քան մենք հիշում ենք Նրան, մենք ավելի քաջաբար պետք է ծառայենք Նրան, քան

մենք ծառայում ենք Նրան: Այն ժամանակ մենք կխմենք դեպի հավերժական կյանք բխող ջուրը և կուտենք կյանքի հացը:[5]

2

Հիսուսը հույսի և տնական ուրախության մեր միակ ճշմարիտ աղբյուրն է :

Օ հույս ամեն փշրված հոգու,
Ուրախություն բոլոր հեզերի,
Ընկածների հանդեպ, որքան բարի ես Դու,
Որքան բարի նրանց հանդեպ, ովքեր որոնում են:

Ինչպիսի գեղեցիկ երաժշտության հատված , և ինչպիսի հույսի ուղերձ է խարսխված Քրիստոսի ավետարանում: Կա՞ արդյոք մեկը մեր մեջ, կյանքի որ ճանապարհին էլ լինի, ով հույսի կարիք չունենա և չձգտի ավելի մեծ ուրախության: Սրանք մարդկային հոգու համընդհանուր կարիքներն ու ձգտումներն են, և դրանք են Քրիստոսի խոստումներն իր հետևորդներին: Հույսը տրվում է «յուրաքանչյուր փշրված հոգուն» և ուրախությունը գալիս է «բոլոր հեզերին»:

Զղջումը թանկ արժե, դա մեր հպարտության և անզգայունակության գինն է, բայց այն հատկապես մեր մեղքերի գինն է: Քանզի ինչպես Թագավոր Լամոնիի հայրը գիտեր քսան դար առաջ. սա է ճշմարիտ հույսի գինը: «Ո՜վ Աստված, աղաղակեց նա,դու քեզ հայտնի չէի՞ր դարձնի ինձ, և ես կհրաժարվեմ իմ բոլոր մեղքերից՝ քեզ գիտենալու համար, և որպեսզի ես կարողանամ բարձրանալ մեռելներից և փրկվել վերջին օրը»: (Ալմա 22:18:) Երբ մենք նույնպես կամենում ենք հրաժարվել բոլոր մեր մեղքերից՝ ճանաչելու նրան և հետևելու նրան, մենք ևս կլցվենք հավերժական կյանքի ուրախությամբ:

Իսկ ի՞նչ կասեք հեզերի մասին: Մի աշխարհում, որը գերզբաղված է ահաբեկչության միջոցով հաղթելուն և համար առաջինը լինելու ձգտմամբ, մարդկանց մեծ ամբոխ հերթ չի կանգնում գրքեր գնելու , որոնք կոչ են անում լոկ հեզություն: Բայց հեզերը կժառանգեն երկիրը՝ բավականին տպավորիչ հավաքական նվաճում և արված *առանց* ահաբեկչության: Վաղ թե ուշ, և մենք աղոթում ենք, որ ավելի վաղ *քան թե* ուշ, ամենքը կընդունեն, որ Քրիստոսի ուղին ոչ միայն *ճիշտ* ուղին է, այլ բացարձակապես *միակ* ուղին դեպի հույս և ուրախություն: Յուրաքանչյուր ծունկ

կծալվի և յուրաքանչյուր լեզու կխոստովանի, որ մեղմությունն ավելի լավ է, քան կոպտությունը, որ բարությունն ավելի հիանալի է, քան բռնությունը, որ մեղմ ձայնը հեռացնում է ցասումը: Ի վերջո և ավելի շուտ քան երբ դա հնարավոր է, մենք պետք է ավելի նման լինենք Նրան: . . .

Հիսուս,մեր միակ բերկրանքն ես Դու,
Քանի որ Դու ես մեր պարգևը,
Հիսուս, արդ եղիր մեր փառքն այժմ
Եվ հավերժ:

Դա իմ անձնական աղոթքն է և իմ ցանկությունը ողջ աշխարհի համար: . . . Ես վկայում եմ, որ Հիսուսը տևական ուրախության միակ ճշմարիտ աղբյուրն է , որ մեր միակ տևական խաղաղությունը Նրա մեջ է: Ես իսկապես ցանկանում եմ, որ Նա լինի «մեր փառքն այժմ», փառքը, որ մեզանից յուրաքանչյուրը տենչում է անհատապես և միակ պարգևը, որը մարդիկ և ազգերը կարող են մշտապես թանկ պահել: Նա է մեր պարգևը ժամանակի և հավերժության մեջ: Ամեն այլ պարգև ի վերջո անպտուղ է: Յուրաքանչյուր այլ շքեղություն թոշնում է ժամանակի հետ և լուծվում տարրերի հետ: Ի վերջո, . . . մենք չենք ճանաչի ոչ մի ճշմարիտ ուրախություն, բացի Քրիստոսից:

. . . Թող որ մենք լինենք Քրիստոսի ավելի նվիրված և կարգապահ հետևորդներ: Թող որ մենք փայփայենք Նրան մեր մտքերում և արտաբերենք նրա անունը սիրով: Թող որ մենք ծնկի գանք Նրա առջև հեզությամբ և ողորմածությամբ: Թող որ մենք օրհնենք ուրիշներին, որ նրանք կարողանան անել նույնը:[6]

3

Մեծագույն անհրաժեշտությունը ողջ աշխարհում՝ ակտիվ և անկեղծ հավատքն է Փրկչի և Նրա ուսմունքների հանդեպ:

Ոմանք հայտարարում են, որ հնառճ է Աստվածաշնչին հավատալը: Արդյո՞ք հնառճ է հավատալ Աստծուն, Հիսուս Քրիստոսին, Կենդանի Աստծո Որդուն: Արդյո՞ք հնառճ է հավատալ Նրա քավող զոհաբերությանը և հարությանը: Եթե դա այդպես է, ես հայտարարում եմ ինձ հնառճ և Եկեղեցին է հնառճ: Մեծ պարզությամբ Տերն ուսուցանեց հավերժական կյանքի սկզբունքները և դասեր, որոնք բերում են երջանկություն նրանց, ովքեր

Փրկիչը կարող է հանդարտեցնել մեր կյանքի փոթորիկները:

հավատում են հավատքով: Խելամիտ չի թվում ենթադրել, որ անհրաժեշտություն է Տիրոջ այս ուսմունքների արդիականացումը: Նրա ուղերձները վերաբերում են սկզբունքների, որոնք հավերժական են:[7]

Այս դարում, ինչպես ամեն մի դարում մեզանից առաջ, և ամեն մի դարում, որոնք կհետևեն, մեծագույն կարիքը ողջ աշխարհում Նազարեթցի Հիսուսի՝ կենդանի Աստծո, կենդանի Որդու հիմնական ուսմունքների հանդեպ ակտիվ և անկեղծ հավատքն է: Քանի որ շատերը մերժում են այդ ուսմունքները, դա է ողջ պատճառը, թե ինչու Հիսուս Քրիստոսի ավետարանի անկեղծ հավատացյալները պետք է հռչակեն դրա ճշմարտությունը և օրինակով ցույց տան արդար, մեղմաբարո կյանքի ուժն ու խաղաղությունը: . . .

Ինչպե՞ս պետք է գործենք, երբ մեզ վիրավորում են, սխալ հասկանում, անազնվորեն կամ անբարյացակամորեն վերաբերվում, կամ մեր դեմ մեղք գործում: Ի՞նչ պետք է անենք, եթե վիրավորվում ենք նրանց կողմից, ում մենք սիրում ենք կամ մեզ շրջանցում են առաջխաղացման համար, կամ կեղծ

մեղադրանքներ բարդում, կամ անարդարաբար հարձակումներ գործում մեր դրդապատճառների վրա։

Մենք արդյո՞ք կռվով ենք պատասխանում։ Արդյո՞ք մենք ավելի մեծ գումարտակ ենք ուղարկում։ Արդյո՞ք վերադառնում ենք աչք աչքի տեղ, ատամ ատամի տեղ սկզբունքին, թե . . . գալիս ենք այն գիտակցությանը, որ սա ի վերջո թողնում է մեզ կույր և անատամ։ . . .

Իր կյանքի փառահեղությամբ և իր ուսմունքների օրինակով, Քրիստոսը տվել է մեզ շատ խորհուրդներ՝ միշտ դրանց կցված ապահով խոստումներով։ Նա ուսուցանում էր վեհությամբ և իշխանությամբ, որը հույսով էր լցնում կրթվածներին և տգետներին, հարուստներին և աղքատներին, առողջներին և հիվանդներին։[8]

Ձգտեք կառուցել անձնական վկայություն Հիսուս Քրիստոսի և քավության վերաբերյալ։ Քրիստոսի կյանքի ուսումասիրությունը և Նրա իրական լինելու վկայությունը մի բան է, որին մեզանից յուրաքանչյուրը պետք է ձգտի։ Երբ մենք սկսում ենք հասկանալ Նրա առաքելությունը և քավությունը, որ Նա կատարեց, մենք կկամենանք ապրել ավելի շատ Նրա նման ։[9]

4

Երբ մենք հավատք գործադրենք Փրկչի հանդեպ, Նա կհանդարտեցնի մեր կյանքի անհանգիստ ջրերը։

Մենք բոլորս հանկարծահաս որոշ փոթորիկներ ենք տեսել մեր կյանքում։ Դրանցից մի քանիսը . . . կարող են լինել դաժան և երկյուղալի և հնարավոր է՝ կործանարար։ Որպես անհատներ, որպես ընտանիքներ, որպես համայնքներ, որպես ազգեր, նույնիսկ՝որպես եկեղեցի, մենք ունեցել ենք հանկարծահաս բարձրացող փոթորիկներ, որոնք ստիպել են մեզ հարցնել այսպես թե այնպես. «Վարդապետ, հոգդ չէ, որ կորչում ենք» [Մարկոս Դ.38։] Եվ այսպես թե այնպես մենք միշտ լսում ենք փոթորիկից հետո լռության մեջ.«Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. ի՞նչպէս հաւատք չունիք» [Մարկոս Դ.40]]։

Մեզանից ոչ ոք չի կամենա մտածել, որ մենք հավատք *չունենք*, բայց կարծում եմ Տիրոջ նուրբ նախատինքն այստեղ շատ տեղին է։ Այս մեծ Եհովան, ում մենք ասում ենք, որ վստահում ենք և որի անունը մենք վերցրել ենք մեզ վրա, Նա է, ով ասաց.«Թող հաստատություն լինի ջրերի մեջտեղը, և ջրերը ջրերից բաժանի»

(Ծննդ. Ա.6)։ Եվ Նա էր այն մեկը, ով ասաց. «Թող երկնքի տակի ջրերը միասին հավաքվեն մեկտեղ, և թող երկիրը ցամաք լինի» (Ծննդ. Ա.9)։ Բացի այդ, այդ Նա էր, ով բաժանեց Կարմիր ծովը՝ թույլ տալով Իսրայելացիներին անցնել միջովը չոր գետնի վրայով (տես Ել. ԺԴ.21–22)։ Անշուշտ, չպետք է զարմանալի լիներ, որ նա կարող էր հրամայել մի քանի տարրերի, որոնք գործում էին Գալիլեայի ծովի վրա։ Եվ մեր հավատքը պետք է հիշեցնի մեզ, որ Նա կարող է հանդարտեցնել մեր կյանքի անհանգիստ ջրերը։ . . .

Մենք բոլորս կունենանք ինչ որ ձախորդություն մեր կյանքում։ Կարծում եմ մենք կարող ենք դրանում միանգամայն համոզված լինել ։ Դրա որոշ մասը կունենա ներուժ՝ լինելու կատաղի և վնասակար ու կործանարար։ Դրանցից մի քանիսը կարող են նույնիսկ լարել մեր հավատքը սիրառատ Աստծո հանդեպ, ով ունի զորություն՝ սպասավորելու սփոփանք մեզ համար։

Այդ սրտնեղություններին կարծում եմ, մեր բոլորի Հայրը կասեր. «Ինչո՞ւ այդպես վախկոտ էք. ի՞նչպես հաւատք չունիք»։ Եվ իհարկե, դա պետք է լինի հավատք ողջ ճանապարհորդության համար, ողջ փորձառության համար, մեր ողջ կյանքի համար, ոչ թե պարզապես մնացած հատվածներում և փոթորկոտ պահերին։ . . .

Հիսուսն ասել է.«աշխարհքումը նեղություն կունենաք. բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհքին» (Հովհաննես ԺՁ.33)։[10]

5

Երբ մենք կենտրոնացնում ենք մեր կյանքը Փրկչի վրա, մենք չպետք է վախենանք, և մեր մտահոգությունները կդառնան ուրախություններ։

Ես բավականաչափ գիտեմ ձեր մշտազբաղ և տենդագին կյանքի մասին, գիտենալով, որ երբեմն հուսահատվում եք։ Դուք, հավանաբար, երբեմն նույնիսկ մի փոքր անհանգստանում եք։ Ես ամեն բան գիտեմ դրա մասին ։ . . .

Իմ ուղերձն է այսօր ձեզ՝ «մի վախենար փոքրիկ հոտ»։ Այն քաջալերում է ձեզ, որ դուք ուրախանաք կյանքի մեծ օրհնություններով։ Դա հրավեր է ձեզ՝ զգալ ավետարանով ապրելու մեծ հուզմունքը և մեր Երկնային Հոր մեծ սերը։ Կյանքը սքանչելի է՝ նույնիսկ դժվարին ժամանակներում, իսկ երջանկություն, ուրախություն և խաղաղություն կա կանգառներում՝ ճանապարհի ողջ երկայնքով և դրանց անվերջ բաժիններ՝ ճանապարհի վերջում։

Իհարկե, շատ բաներ կան անհանգստանալու՝ դրանցից մի քանիսը՝շատ լուրջ , բայց դա է պատճառը, որ մենք խոսում ենք հավատքի և հույսի և գթության ավետարանական տերմիններով: Որպես Վերջին Օրերի Սրբեր մերն է «առատ կյանքը», և մենք փորձում ենք շեշտել մեր օրհնությունները և հնարավորությունները, մինչդեռ մենք նվազեցնում ենք մեր հիասթափությունները և անհանգստությունները: «Փնտրեք ջանասիրաբար, աղոթեք անդադար և եղեք հավատացող, և բոլոր բաները միաժամանակ կգործեն ձեր բարիքի համար»(ՎևՈւ 90.24): Ես ուզում եմ հիշեցնել ձեզ այդ խոստման մասին: . . .

Խնդրում եմ հիշեք այդ մի բանը: Եթե մեր կյանքերը և մեր հավատքը կենտրոնացած լինեն Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգված ավետարանի վրա, ոչինչ երբևէ չի կարող մշտապես սխալ ընթանալ: Մյուս կողմից, եթե մեր կյանքերը կենտրոնացած չեն Փրկչի և Նրա ուսմունքների վրա, ոչ մի ուրիշ հաջողություն չի կարող երբևէ մշտապես ճիշտ լինել: . . .

Մենք բոլորս մաքառում ենք առողջական խնդիրների հետ ժամանակ առ ժամանակ, մինչդեռ ուրիշները դա անում են անընդհատ: Տկարությունն ու հիվանդությունը մահկանացու կյանքի բեռի մի մասն են: Ունեցեք հավատք և եղեք դրական: Քահանայության զորությունը իրական է և այնքան շատ լավ բաներ կան կյանքում, նույնիսկ, եթե մենք ֆիզիկապես մաքառում ենք: Ուրախություն է իմանալ, որ չի լինի վնասվածք կամ հիվանդություն Հարության ժամանակ:

Մեր մտահոգություններից մի քանիսը կարող են գալ գայթակղությունների ձևով: Մյուսները կարող են դժվար որոշումներ լինել՝ կապված կրթության, կամ կարիերայի, կամ փողի, կամ էլ ամուսնության հետ: Ինչպիսին էլ լինի ձեր բեռը, դուք կգտնեք ձեզ անհրաժեշտ ուժը Քրիստոսի մեջ: Հիսուս Քրիստոսն է Ալֆան և Օմեգան՝ տառացիորեն սկիզբը և վերջը: Նա մեզ հետ է սկզբից մինչ վերջ, և որպես այդպիսին, ավելին է, քան հանդիսատես մեր կյանքում: . . .

Եթե լուծը, որի տակ մենք մաքառում ենք, հենց մեղքն է, ուղերձը նույնն է: Քրիստոսը գիտի մեր մեղքերի լիակատար ծանրությունը, քանի որ Նա է առաջինը կրել այն: Եթե մեր բեռը մեղքը չէ կամ գայթակղությունը, այլ հիվանդությունը, կամ աղքատությունը, կամ մերժումը, դա նույնն է: Նա գիտի: . . .

Նա տառապեց այնքան շատ, ավելի՝ քան մեր մեղքերը։ Նա, ում Եսայիան անվանեց «վշտերի մարդ», (Եսայիա ԾԳ.3, Մոսիա 14.3) գիտի կատարելապես ամեն խնդիր, որով մենք անցնում ենք, որովհետև նա ընտրեց կրել մեր բոլոր դժվարությունների և ցավերի լրիվ ծանրությունը։ . . .

Եղբայրներ և քույրեր, դուք ունեցել եք և կունենաք բազմատեսակ տագնապներ և մարտահրավերներ, բայց ընդունեք կյանքն ուրախությամբ և հավատքով լի։ Կանոնավորապես ուսումնասիրեք սուրբ գրությունները։ Աղոթեք ջերմեռանդորեն ։ Հնազանդվեք Հոգու և մարգարեների ձայնին։ Արեք այն ամենը, ինչ կարող եք՝ օգնելու ուրիշներին։ Դուք կգտնեք մեծ երջանկություն այդ ճանապարհով։ Մի փառահեղ օր բոլոր ձեր տագնապները կդառնան ուրախություններ։

Ինչպես Ջոզեֆ Սմիթը գրեց մաքառող Սրբերին Լիբերթի բանտի իր բանտախցիկից.

Եկեք ուրախությամբ *անենք ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է. և հետո, թող մենք կանգնենք հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելու Աստծո փրկությունը և նրա բացահայտվող բազուկը* [ՎԵՈՒ 123.17, շեշտադրումն ավելացված է]։

[Մարգարե Ջոզեֆ Սմիթին ուղղված Տիրոջ խոսքերը։]

«Ուստի, մի վախեցիր, փոքրի՛կ հոտ. բարիք գործիր. թող երկիրն ու դժոխքը միանան քո դեմ, քանզի, եթե դու կառուցված ես իմ վեմի վրա, նրանք չեն կարող գերիշխել։ . . .

Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք։

Տեսեք խոցվածքը, որ ծակեց իմ կողը, և նաև բևեռների նշանները՝ իմ ձեռքերի ու ոտքերի վրա. եղեք հավատարիմ, պահեք իմ պատվիրանները և դուք կժառանգեք երկնքի արքայությունը։ [ՎԵՈՒ 6.34–37]։[11]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Մտածեք, թե ինչպես դուք կպատասխանեիք Նախագահ Հանթերի հարցերին բաժին 1ում: Ինչպե՞ս կարող ենք Հիսուս Քրիստոսին ավելի կենտրոնական դարձնել մեր կյանքում: Ինչպե՞ս կարող ենք Նրան ավելի կենտրոնական դարձնել մեր տներում: Ինչպե՞ս կարող ենք մենք ճանաչել Քրիստոսին ավելի լավ, քան մենք ճանաչում ենք Նրան:
- Ի՞նչ «արժե մեզ համար» ստանալ հույս, ուրախություն և խաղաղություն, որը Քրիստոսն է առաջարկում: (տես բաժին 2:) Ե՞րբ եք դուք զգացել խաղաղություն և ուրախություն, որը գալիս է Փրկչից:
- Ինչո՞ւ եք կարծում.«մեծագույն անհրաժեշտությունը ողջ աշխարհում ակտիվ և անկեղծ հավատքն է Հիսուս Նազովրեցու հիմնական ուսմունքների հանդեպ»: (Տես բաժին 3:) Ինչպե՞ս կարող եք ցույց տալ ձեր հավատքը Քրիստոսի ուսմունքների հանդեպ, երբ զգում եք « վիրավորված, սխալ հասկացված կամ ձեր հանդեպ մեղք է գործված»:
- Ի՞նչ կարող ենք սովորել Նախագահ Հանթերի ուսմուքներից վախի և հավատքի մասին: (Տես բաժին 4:) Ինչպե՞ս կարող է հավատքն օգնել մեզ հաղթահարել վախը: Խորհրդածեք այն դեպքերի մասին, երբ Փրկիչը հանդարտեցրել է փոթորիկները ձեր կյանքում, երբ դուք հավատք եք գործադրել Նրա հանդեպ:
- Ինչպե՞ս կարող է Նախագահ Հանթերի խորհուրդը բաժին 5ում օգնել մեզ «կյանքն ընդունել ուրախորեն», նույնիսկ երբ մենք տանում ենք վշտեր, հիասթափություններ և հիվանդություններ: Ինչպե՞ս կարող ենք զարգացնել հավերժական հեռանկար: Ինչպե՞ս է Փրկիչն օգնել ձեզ ունենալ ավելի լիառատ կյանք:

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս ԺԱ.28–30, Հովհաննես ԺԴ.6, 2 Նեփի 31.19–21, Ալմա 5.14–16,7.10–14, 23.6,Հելաման 3.35, 5.9–12, ՎևՈ 50.40–46,93.

Օգնություն ուսումնասիրողին

«Երբ ուսումնասիրեք, խնամքով ուշադրություն դարձրեք գաղափարներին, որոնք գալիս են ձեր միտքը և զգացումներին, որոնք գալիս են ձեր սիրտը» (*Քարոզիր իմ ավետարանը* [2004], 18)։ Մտածեք ձեր ստացած տպավորություններն արձանագրելու մասին, նույնիսկ, եթե թվում է, դրանք կապ չունեն այն խոսքերի հետ, որոնք դուք կարդում եք։ Դրանք գուցեև հենց այն բաներն են, որոնք Տերը կամենում է հայտնել ձեզ։

Հղումներ

1. "Jesus, the Very Thought of Thee," *Ensign,* May 1993, 65.
2. "An Apostle's Witness of Christ," *Ensign,* Jan. 1984, 70.
3. James E. Faust, "Howard W. Hunter: Man of God," *Ensign,* Apr. 1995, 27.
4. Հիսուս, լոկ միտքը Քո մասին
5. «Ինչպիսի՞ մարդ եք պարտավոր լինել դուք։ *Ensign,* May 1994, 64; see also "He Invites Us to Follow Him," *Ensign,* Sept. 1994, 5.
6. Հիսուս, լոկ միտքը Քո մասին
7. See Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 318.
8. "*The Beacon in the Harbor of Peace,*" *Ensign,* Nov. 1992, 18.
9. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 30.
10. "Master, the Tempest Is Raging," *Hymns,* no. -35.
11. "Fear Not, Little Flock" (address given at Brigham Young University, Mar. 14, 1989), 1–2, 4–5; speeches.byu.edu.

«Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ»

«Խաղաղությունը կարող է համակել մարդուն միայն անմնացորդ նվիրման դեպքում, նվիրվելով նրան, ով խաղաղության Իշխանն է, ով զորություն ունի խաղաղություն հաստատելու»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Տասներկուսի Քվորումից Նախագահ Հովարդ Վ. Հանթերի գործընկերներից մեկը նկարագրել է նրան որպես մի մարդու, ով ունի «արտասովոր համբերություն, որը գալիս է մեծ ներքին խաղաղությունից»:[1] Նախագահ Հանթերը հաճախ է խոսել ներքին խաղաղության մասին՝ ուսուցանելով, որ մարդը կարող է ստանալ այն՝ միայն առ Աստված դառնալով, վստահելով Նրան, հավատք գործադրելով և ձգտելով կատարել Նրա կամքը: Նման խաղաղությունն օգնել է նրան բազմաթիվ դժվարին ժամանակներում:

1975թ. վերջին բժիշկը ուղեղի վիրահատություն խորհուրդ տվեց Նախագահ Հանթերի կնոջը՝ Քլեյրին: Նախագահ Հանթերին մտատանջում էր այն հարցը, թե արդյոք վիրահատությունը լավագույն տարբերակ էր հանդիսանում Քլեյրի համար, քանի որ այն կհյուծեր նրա փխրուն մարմինը և միգուցե չէր լավացնելու նրա վիճակը: Նա գնաց տաճար, խորհրդակցեց ընտանիքի անդամների հետ և շուտով զգաց, որ վիրահատությունը լավագույն հույսն էր ներշնչում Քլեյրի վիճակը որոշակիորեն թեթևացնելու համար: Նկարագրելով վիրահատության օրվա իր զգացումները՝ նա գրել է.

«Ես նրան ուղեկցեցի մինչև վիրահատարանի դռները, համբուրեցի նրան և նրան ներս տարան: Մինչ ժամանակն անցնում էր, ես սպասում էի և խորհում: . . . Հանկարծ լարված անհանգստությունը փոխարինվեց խաղաղության զգացումով: Ես հասկացա, որ ճիշտ որոշում էր կայացվել և իմ աղոթքները տեղ էին հասել»:[2]

Մենք պետք է «մեր հայացքն ուղղենք դեպի Հիսուսը» և երբեք «մեր հայացքը չհեռացնենք նրանից, ում մենք պետք է հավատանք»:

1989թ. Նախագահ Հանթերը մեկ այլ փորձառություն ունեցավ, երբ նա խաղաղություն զգաց անախորժ իրավիճակում: Նա Երուսաղեմում էր՝ Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների Բրիգամ Յանգի Համալսարանի Երուսաղեմի Կենտրոնը նվիրագործելու նպատակով: Մի քանի խմբակցություններ բողոքարկել էին Երուսաղեմում Եկեղեցու առկայության դեմ, և ոմանք էլ սպառնացել էին բռնության դիմել: Նվիրագործման խոսնակներից էր Տասներկուսի Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերը, ով հետագայում պատմել է հետևյալ միջադեպը.

«Մինչ ես խոսում էի, իրարանցում նկատվեց միջանցքի վերջում: Զինվորական համազգեստով մարդիկ էին մտել սենյակ: Նրանք մի երկտող ուղարկեցին Նախագահ Հանթերին: Ես շրջվեցի և հարցրեցի, թե ինչ անել: Նա ասաց. «Մտավախություն կա, որ սենյակում ռումբ կա տեղադրված: Դուք վախենո՞ւմ եք»: Ես ասացի՝ ոչ: Նա ասաց. «Ոչ էլ ես եմ վախենում. ավարտեք ձեր ելույթը»:[3] Նվիրագործման ծառայություններն անցան առանց միջադեպի. ոչ մի ռումբ էլ չկար այնտեղ:

Նման իրավիճակներում Նախագահ Հանթերը վստահում էր խաղաղության մասին Փրկչի տված այս խոստումին, որը նա հաճախ էր մեջբերում. «Խաղաղությիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղությիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. Ձեր սիրտը չխռովի եւ չվախենայ» (Հովհաննես ԺԴ.27):

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Հիսուս Քրիստոսն իրական խաղաղության մեր աղբյուրն է:

Քրիստոսի ծննդյան մասին նախապես մարգարեանալով այդ իրադարձությունից ավելի քան 700 տարի առաջ՝ Եսայիա մարգարեն օգտագործել է մեծ հիացմունք արտահայտող տիտղոսներ: . . . Տիտղոսներից մեկը, որը մեր արդի աշխարհում մասնավորապես հետաքրքրական է, «Խաղաղության Իշխանն» է (Թ.6): «Իշխանութիւնը շատացնելուն եւ խաղաղութեանը վերջ չկայ»,- հայտարարել է Եսայիան (հ.7): Ինչպիսի հուզումնալից հույս պատերազմներից հոգնած և մեղքերով ծանրաբեռնված աշխարհի համար:[4]

Խաղաղությունը, որը փափագում է աշխարհը, պատերազմների դադարեցման ժամանակաշրջան է. սակայն մարդիկ չեն գիտակցում, որ խաղաղությունը գոյության մի վիճակ է, որը մարդուն տրվում է միայն Աստծո կողմից սահմանված ժամկետներով և պայմաններով, և ոչ մի այլ ճանապարհով:

Եսայիայի գրքի սաղմոսներում են գտնվում հետևյալ խոսքերը. «Հաստատ միտքը պահում ես խաղաղ խաղաղութիւնով, որովհետեւ քեզ է յուսացած»: (Ես. ԻԶ.3:) Եսայիայի կողմից նշված այս կատարյալ խաղաղությունը տրվում է մարդուն միայն առ Աստված հավատքի միջոցով: Սա անհասկանալի է անհավատ աշխարհի համար:

Իր կյանքի վերջին իրադարձությունների ժամանակ, երբ Հիսուսն ընթրիք ունեցավ Տասներկուսի հետ, նա լվաց նրանց ոտքերը, հացը կտրեց նրանց համար և փոխանցեց նրանց բաժակը. ապա, երբ Հուդան հեռացավ նրանցից, Վարդապետը որոշ ժամանակ խոսեց նրանց հետ: Այլ բաների շարքում, նա ասաց իր վերահաս մահվան և ժառանգության մասին, որը թողնելու էր նրանցից յուրաքանչյուրին: Նա չէր կուտակել իրեր, կալվածքներ կամ հարստություն: Գրություններում չի խոսվում ոչ մի ուրիշ ունեցվածքի մասին, բացի նրա կրած հագուստներից, և հաջորդ օրը՝ խաչելությունից հետո սա բաժանվելու էր զինվորների կողմից, ովքեր վիճակ էին գցելու նրա հանդերձների համար: Իր աշակերտներին տված նրա ժառանգությունն ամփոփվում էր այս հասարակ, սակայն խորիմաստ բառերում. «Խաղաղությիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղությիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. Ձեր սիրտը չխռովի և չվախենայ»: (Հովհաննես ԺԴ.27:)

Նա օգտագործեց ողջույնի և օրհնության հրեական ձևը. «Իմ խաղաղությիւնն եմ տալիս ձեզ»: Այս ողջույնը և օրհնությունը նրանց կողմից չպետք է ընդունվեր սովորական ձևով, քանի որ նա ասաց. «ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ»: Դրանք դատարկ ցանկություններ չէին, ոչ էլ պարզապես քաղաքավարի արարողություն, ինչպես աշխարհիկ մարդիկ են օգտագործում բառերն ըստ ընդունված կարգի, այլ որպես խաղաղության հեղինակ և Իշխան, նա տվեց այն նրանց: Նա պարզևեց դա նրանց և ասաց. «Ձեր սիրտը չխռովի և չվախենայ»: Մի քանի ժամ անց նրանք փորձության էին ենթարկվելու,

սակայն նրա խաղաղությունն ունենալով, նրանք կկարողանային հաղթահարել վախը և ամուր կանգնել:

Այդ հիշարժան երեկոյի ժամանակ նրանց ուղղված նրա վերջին նախադասությունը եղավ հետևյալը. «. . . աշխարհքումը նեղութիւն կունենաք. բայց քաջացէք, ես յաղթել եմ աշխարհքին»: (Հովհաննես ԺԶ.33:)[5]

2

Մենք խաղաղություն ենք ձեռք բերում, երբ ապրում ենք ավետարանի սկզբունքներով:

Տիեզերքում կա միայն մեկ առաջնորդող ձեռք, միայն մեկ իրական հուսալի լույս, մեկ անսպառ փարոս աշխարհի համար: Այդ լույսը Հիսուս Քրիստոսն է, աշխարհի լույսը և կյանքը, լույսը, որը Մորմոնի Գրքի մարգարեն նկարագրել է որպես «լույս, որն անվերջ է, որը երբեք չի կարող խավարեցվել»: (Մոսիա 16.9:)

Երբ մենք փնտրում ենք ապահովության և խաղաղության ափը, լինենք մենք անհատ կանայք կամ տղամարդիկ, համայնքներ կամ ազգեր, Քրիստոսը միակ փարոսն է, ում մենք կարող ենք վերջ ի վերջո ապավինել: Նա իր առաքելության մասին ասել է. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը»: (Հովհաննես ԺԴ.6:) . . .

Խորհեք, օրինակ, իր հետևորդներին տված Քրիստոսի այս հրահանգի մասին: Նա ասաց. «Սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին. բարի արէք ձեզ ատողներին. եւ աղօթք արէք ձեզ չարչարողների եւ ձեզ հալածողների համար»: (Մատթ. Ե.44:)

Խորհեք, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ զուտ այս մեկ հորդորը ձեր և իմ հարևանների շրջանում, համայնքներում, որտեղ ապրում եք դուք և ձեր երեխաները, ազգերի մեջ, որոնք կազմում են մեր մեծ համընդհանուր ընտանիքը: Ես հասկանում եմ, որ այս վարդապետությունը մեծ մարտահրավեր է ներկայացնում, բայց, անշուշտ դա ավելի հաճելի մարտահրավեր է, քան սարսափելի խնդիրները, որոնք պատերազմի և աղքատության և ցավի արդյունք են, որոնց հետ աշխարհը շարունակում է բախվել:[6]

Երբ մենք փորձում ենք օգնել նրանց, ովքեր նեղացրել են մեզ, երբ մենք աղոթում ենք նրանց համար, ովքեր անարդարացի են վարվել մեզ հետ, մենք կարող ենք գեղեցիկ կյանքով ապրել:

Մենք կարող ենք խաղաղություն ունենալ, երբ միավորվում ենք Հոգու և միմյանց հետ, մինչ ծառայում ենք Տիրոջը և պահում ենք նրա պատվիրանները։[7]

Աշխարհը, որում մենք ապրում ենք, լինի այն տանը մոտ կամ հեռու, ունի Հիսուս Քրիստոսի ավետարանի կարիքը։ Այն պատրաստում է միակ ուղին, որով աշխարհը երբևէ խաղաղություն կգտնի։ . . . Մենք կարիք ունենք ավելի խաղաղ աշխարհի, ավելի խաղաղ ընտանիքներում և շրջապատում և համայնքներում մեծանալու կարիքն ունենք։ Նման խաղաղություն ապահովելու և այն մեծացնելու համար «մենք պետք է սիրենք ուրիշներին, նույնիսկ մեր թշնամիներին պետք է սիրենք այնպես, ինչպես մեր ընկերներին» [*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 420]։ . . . Մենք պետք է բարեկամության ձեռք մեկնենք։ Մենք պետք է լինենք ավելի բարի, ավելի մեղմ, ավելի ներողամիտ և ավելի ուշ բարկացող։[8]

Աստված հիմնականում գործում է համոզելով և համբերությամբ և երկայնամտությամբ, ոչ թե պարտադրմամբ և բացարձակ առճակատմամբ։ Նա գործում է մեղմ խնդրանքով և քաղցր թովչանքով։[9]

Խաղաղության խոստում չեն ստանում նրանք, ովքեր մերժում են Աստծուն, ովքեր չեն պահում նրա պատվիրանները, կամ նրանք, ովքեր խախտում են նրա օրենքները։ Եսայիա մարգարեն խոսել է ղեկավարների անկման և ապականության մասին և ապա, շարունակելով իր նախազգուշացումները, ասել է. «Բայց ամբարիշտները ալեծուփ ծովի նման են, որ չէ կարող հանդարտել, եւ նորա ջուրերը տիղմ ու ցեխ են դուրս տալիս։ Խաղաղութիւն չկայ, ասում է իմ Աստուածը, ամբարիշտների համար»։ (Ես. ԾԷ.20–21։) . . .

. . . Փրկչի հանդեպ անտարբերությունը կամ Աստծո պատվիրաններում թերանալը հանգեցնում են անապահով մի վիճակի, ներքին խառնաշփոթի և հակառակության։ Սրանք խաղաղությանը հակառակ բաներ են։ Խաղաղությունը կարող է համակել մարդուն միայն անմնացորդ նվիրման դեպքում, նվիրվելով նրան, ով խաղաղության Իշխանն է, ով զորություն ունի խաղաղություն հաստատելու»։[10]

Աշխարհի խնդիրները, որոնք հաճախ արտահայտվում են աղաղակող խորագրերում, պետք է հիշեցնեն մեզ, որ փնտրենք

«Անշահախնդիր ծառայությամբ լեցուն կյանքը նաև լցված կլինի խաղաղությամբ, որը վեր է ամեն հասկացողությունից»:

խաղաղություն, որն առաջ է գալիս Քրիստոսի ավետարանի պարզ սկզբունքներով ապրելու արդյունքում: Այդ աղմկոտ փոքրամասնությունները չեն խանգարի մեր հոգու խաղաղությանը, եթե մենք սիրենք մեր մերձավորներին և հավատանք Փրկչի քավող զոհաբերությանը և համոզված լինենք, որ նա մեզ կտա հավերժական կյանք: Որտե՞ղ մենք կարող ենք գտնել նման հավատք այս անհանգիստ աշխարհում: Տերն ասել է. «Խնդրեցէք՝ եւ կտրուի ձեզ,

որոնեցէք եւ կգտնէք, դուռը թակեցէք եւ կբացուի ձեզ։ Որովհետեւ ամեն ով որ խնդրում է՝ առնում է. եւ ով ով որոնում է՝ գտնում է, եւ ով որ դուռը թակում է՝ բացվում է նորան։ (Ղուկաս ԺԱ.9–10։)[11]

Թվում է, որ երկու հավերժական ճշմարտություններ պետք է ընդունվեն բոլորի կողմից, եթե մենք ցանկանում ենք խաղաղություն գտնել այս աշխարհում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում։ (1) Հիսուսը Քրիստոսն է, մեր Երկնային Հոր հավերժական որդին, ով աշխարհ եկավ մարդկությանը մեղքից և մահից փրկելու գլխավոր նպատակով, և նա ապրում է, որ մեզ հետ բերի դեպի Հոր ներկայությունը։ (2) Ջոզեֆ Սմիթը, ով նրա մարգարեն էր՝ բարձրացված այս վերջին օրերում, վերականգնելու էր այն ճշմարտությունը, որը կորել էր մարդկության համար օրինազանցության պատճառով։ Եթե բոլոր մարդիկ ընդունեն և ապրեն այս երկու հրաշալի ճշմարտություններով, խաղաղություն կտիրի աշխարհին։[12]

Եթե դուք ինքներդ դիմակայեք . . . գայթակղություններին և որոշեք ամեն օր ջանասիրաբար աշխատել՝ ապրելու Բերքահավաքի Օրենքի համաձայն՝ մաքուր, բարոյական մտքերով և վարքով, արդար ու ազնիվ հարաբերություններով, ազնվորեն և խղճմտանքով կատարելով ձեր ուսումնասիրությունները, ծոմապահությամբ, աղոթքով և երկրպագությամբ, դուք կինձեք ազատության պտուղները և ներքին խաղաղությունն ու բարգավաճումը։[13]

Անշահախնդիր ծառայությամբ լեցուն կյանքը նաև լցված կլինի խաղաղությամբ, որը վեր է ամեն հասկացողությունից։ . . . Այս խաղաղությունը կարող ենք ձեռք բերել միայն այն ժամանակ, երբ ապրում ենք ավետարանի սկզբունքներով։ Այս սկզբունքներից է կազմված Խաղաղության Իշխանի ծրագիրը։[14]

Մեր աշխարհում շատ բաներ են նախատեսված հազար ու մի տեսակ մեղքերի և գայթակղությունների միջոցով անձնական խաղաղությունը կործանելու համար։ Մենք աղոթում ենք, որ սրբերը կարողանան ապրել իրենց կյանքը՝ համաձայն Հիսուս Նազովրեցու՝ մեզ թողած օրինակի։

Մենք աղոթում ենք, որ Սատանայի ջանքերը խափանվեն, որ անձնական կյանքերը կարողանան խաղաղ ու հանգիստ լինել, որ ընտանիքները կարողանան մոտ լինել և մտահոգված ամեն անդամի համար, որ ծխերը և ցցերը, ճյուղերն ու շրջանները

կազմեն Քրիստոսի մեծ մարմինը՝ աջակցելով ամեն կարիքի դեպքում, հանգստացնելով ամեն ցավ, բուժելով ամեն վերք, մինչև որ ողջ աշխարհը, ինչպես Նեփին էր խնդրում, «առաջ [մղվի] Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ՝ ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր՝ Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ։ . . .

Իմ սիրելի եղբայրներ»,- շարունակել է Նեփին,- «սա է ճանապարհը. և չկա ոչ մի այլ ճանապարհ»։ (2 Նեփի 31.20–21։)[15]

3

Փրկիչը կարող է օգնել մեզ գտնելու խաղաղություն՝ անկախ մեր շուրջը տիրող խառնաշփոթից։

Հիսուսը զերծ չէր վշտից ու ցավից, տառապանքից ու հարվածներից։ Լեզուն ի զորու չէ նկարագրելու այն անսահման բեռը, որը նա կրեց, ոչ էլ մենք իմաստություն ունենք հասկանալու Եսայիա մարգարեի նկարագիրը նրա վերաբերյալ, որպես «ցաւի տեղեակ»։ (Ես. ԾԳ.3։) Նրա նավը տարուբերվում էր ջրերի վրա իր կյանքի մեծ մասի ընթացքում, և, առնվազն սա է մարդկանց կարծիքը, որ այն ի վերջո կործանիչ հարված ստացավ Գողգոթայի ժայռոտ ափին։ Մեզանից պահանջվում է, որ մենք մահկանացու աչքերով չնայենք կյանքին. հոգևոր տեսլականով մենք գիտենք, որ խաչի վրա տեղի էր ունենում ինչ-որ մի այլ բան։

Խաղաղությունը Փրկչի շուրթերի վրա և սրտի մեջ էր, անկախ այն ամենից, թե ինչ կատաղի փոթորիկ էր մոլեգնում։ Թող որ մենք էլ լինենք այդպիսին՝ մեր իսկ սրտում, մեր իսկ տանը, աշխարհի մեր ազգերում և նույնիսկ ժամանակ առ ժամանակ Եկեղեցուն հասցված հարվածների ժամանակ։ Մենք չպետք է ակնկալենք, որ կյանքը պիտի անցնի առանց անհատական կամ խմբակային որոշ հակասությունների։[16]

Մարդը կարող է ապրել գեղեցիկ ու խաղաղ միջավայրում, սակայն, ներքին ընդվզումների և տարաձայնությունների պատճառով գտնվի մշտական խառնաշփոթի մեջ։ Մյուս կողմից, մարդը կարող է գտնվել լիակատար ոչնչացման և արյունահեղ պատերազմի մեջ, սակայն ունենա անասելի խաղաղության անդորրը։ Եթե մենք նայենք մարդկանց և աշխարհի ուղիներին, մենք կգտնենք խառնաշփոթություն և իրարանցում։ Սակայն, եթե մենք դառնանք դեպի Աստված, մեր անհանգիստ հոգին խաղաղություն

կգտնի: Սա պարզ արտահայտվում է Փրկչի խոսքերում. «աշխարհքումը նեղութիւն կունենաք» (Հովհաննես ԺԶ.33). և Տասներկուսին և ողջ մարդկությանը թողած իր կտակում նա ասել է. «Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղությիւնն եմ տալիս ձեզ. ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս . . .»: (Հովհաննես ԺԴ.27:)

Մենք կարող ենք այժմ գտնել այս խաղաղությունը հակասությունների աշխարհում, եթե մենք միայն ընդունենք այս մեծ պարգևը և նրա հետևյալ հրավերը. «Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնավորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ:

Ձեզ վերայ առէք իմ լուծը եւ ինձանից սովորեցէք. որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ. եւ ձեր անձերի համար հանգստութիւն կ'գտնէք»: (Մատթ. ԺԱ.28-29:)

Այս խաղաղությունը պաշտպանում է մեզ աշխարհիկ աղմուկից: Իմացությունը, որ Աստված ապրում է, որ մենք նրա զավակներն ենք և որ նա սիրում է մեզ, հանգստություն է բերում անհանգիստ սրտին: Հարցի պատասխանը գտնվում է առ Աստված և նրա Որդի Հիսուս Քրիստոսի նկատմամբ ունեցած հավատքի մեջ: Սա խաղաղություն կբերի մեզ այժմ և հավերժության մեջ, որը կհետևի այս կյանքին:[17]

Շփոթմունքի և շտապողականության, նյութական առաջընթացի այս աշխարհում մենք պետք է վերադառնանք Քրիստոսի պարզությանը: . . . Մենք պետք է ուսումնասիրենք Վարդապետի ուսուցանած ճշմարտությունների պարզ հիմունքները և զերծ մնանք հակասություններից: Մեր հավատքն առ Աստված պետք է իրական լինի և ոչ թե շահադիտական: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը կարող է զարգացնող և վերափոխող ազդեցություն ունենալ, և այն իսկապես ընդունելը մեզ տալիս է իմաստալից, հոգևոր փորձառություն: Մորմոնական կրոնի ուժեղ կողմերից մեկը համոզմունքների այս կիրառումն է ամենօրյա մտածելակերպում և վարքում: Սա փոխարինում է խառնաշփոթը և իրարանցումը խաղաղությամբ և հանդարտությամբ:[18]

4

Մեր հայացքը Հիսուսի վրա սևեռելով՝ մենք կարող ենք հաղթանակ ձեռք բերել այն տարրերի վրա, որոնք կործանում են խաղաղությունը:

Եկեք վերհիշենք հրաշալի պատմություններից մեկը, երբ Քրիստոսը հաղթեց մի բանի, ինչը կարծես ստուգում և փորձում է մեզ, և վախ է ներշնչում մեր սրտին: Երբ Քրիստոսի աշակերտները դուրս էին եկել Գալիլեայի ծովում իրենց հերթական ճամփորդության, մութ գիշեր էր, և բնությունն իր տարերքի մեջ էր: Ալիքներն ալեկոծվում էին, և քամին ուժգնանում էր, և այս մահկանացու, թուլակազմ մարդկանց պատել էր վախը: Ցավոք, նրանց հետ չկար մեկը, ով կհանգստացներ և կփրկեր նրանց, քանի որ Հիսուսը մենակ մնացել էր ափում:

Ինչպես միշտ, նա հսկում էր նրանց: Նա սիրում էր նրանց և մտահոգվում էր նրանց համար: Իրենց ամենադժվար պահին նրանք նայեցին և մթության մեջ տեսան մի անձնավորության, որի հագուստները տարուբերվում էին քամուց, ով քայլում էր իրենց ուղղությամբ ծովի ալիքների վրայով: Այդ պատկերից վախեցած՝ նրանք սկսեցին աղաղակել, մտածելով, որ դա ուրվական էր, որը քայլում էր ալիքների վրայով: Եվ փոթորկի ու մթության մեջ նրանց համար, ինչպես և հաճախ մեզ համար, երբ պատված ենք լինում կյանքի խավարով, օվկիանոսն այնքան մեծ և նավակներն այնքան փոքր են թվում, և նրանք լսեցին խաղաղության կատարյալ և հուսադրող մի ձայն, որն այս պարզ հայտարարությունն արեց. «Ես եմ՝ մի վախենաք»: Պետրոսը բացականչեց. «Տէր, եթէ դու ես, հրամայիր ինձ, որ ջրերի վերայով քեզ մօտ գամ»: Եվ Քրիստոսը նրան տվեց այն նույն պատասխանը, որը տալիս է մեզ բոլորիս. «Եկ»:

Պետրոսը նավի տախտակամածից ցատկեց անհանգիստ ալիքների մեջ, և մինչ նրա հայացքը սևեռված էր Տիրոջ վրա, քամին կարող էր խառնել նրա մազերը և ջուրը կարող էր մի փոքր թրջել նրա հանդերձները, սակայն ամեն ինչ լավ էր: Միայն այն ժամանակ, երբ տատանվող հավատքով նա իր հայացքը հեռացրեց Վարդապետից՝ նայելու կատաղի ալիքներին և իր ոտքերի տակ գտնվող սև անդունդին, միայն այդ ժամանակ նա սկսեց ընկղմվել: Կրկին, ինչպես մեզանից շատերը, նա աղաղակեց.

«Տէր, փրկիր ինձ»: Ոչ էլ Հիսուսն էր լքել նրան: Նա մեկնեց իր ձեռքը և բռնեց խեղդվող աշակերտին՝ մեղմորեն հանդիմանելով նրան. «Թերահաւատ, ի՞նչու երկմտեցիր»:

Ապա, ապահով մտնելով իրենց փոքրիկ նավակը, նրանք տեսան, թե ինչպես քամին խաղաղվեց, և ալիքների ալեկոծությունը փոխարինվեց մեղմ ծփանքով: Շուտով նրանք հասան իրենց համար ապահով մի վայր՝ իրենց անվտանգ նավահանգստին, որտեղ բոլորն էլ հույս ունեն, որ մի օր կհասնեն: Նավում գտնվողները, ինչպես նաև աշակերտները, լցված էին խորը զարմանքով: Նրանցից մեկը դիմեց նրան մի տիտղոսով, որի մասին ես հայտարարում եմ այսօր. «Ճշմարիտ՝ դու Աստուծոյ Որդին ես»: (Farrar, *The Life of Christ*, pp. 310–13; տես Մատթ. ԺԴ.22–33:)

Ես խորապես համոզված եմ, որ եթե որպես անհատներ, որպես ընտանիքներ, համայնքներ և ազգեր, մենք կարողանանք Պետրոսի նման սևեռել մեր հայացքները Հիսուսի վրա, մենք նույնպես կկարողանանք հաղթանակած քայլել «անհավատության մեծացող ալիքների» վրա և մնալ «անվախ՝ կասկածի բարձրացող ալիքների մեջ»: Բայց, եթե մենք հեռացնում ենք մեր հայացքը նրանից, ում մենք պետք է հավատանք, քանի որ դա շատ հեշտ է անել, և աշխարհը մեծապես գայթակղվում է անելու դա, եթե մենք նայում ենք մեր շուրջը գտնվող սարսափելի և կործանարար տարրերի զորությանը և ցասմանը, նրան նայելու փոխարեն, ով կարող է օգնել և փրկել մեզ, ապա մենք անխուսափելիորեն կընկղմվենք տարաձայնությունների, վշտի և հուսահատության ծովում:

Նման պահերին, երբ մենք զգում ենք, որ ջրհեղեղները փորձում են խեղդել մեզ և ջրի հորձանքները պատրաստվում են կուլ տալ մեր հավատքի հողմակոծ նավակը, ես աղոթում եմ, որ մենք կարողանանք փոթորիկների և խավարի մեջ միշտ լսել աշխարհի Փրկչի այդ քաղցր խոսքերը. «Քաջ եղէք, ես եմ՝ մի վախենաք»: (Մատթ. ԺԴ.27:)[19]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Նախագահ Հանթերն ուսուցանում է, որ Հիսուս Քրիստոսն իրական խաղաղության մեր աղբյուրն է (տես բաժին 1)։ Ի՞նչ փորձառություններ եք ունեցել, որոնք օգնել են ձեզ իմանալ այս ճշմարտության մասին։ Ինչպե՞ս մենք կարող ենք ստանալ խաղաղությունը, որն առաջարկում է Հիսուսը։
- Ինչպե՞ս է ուրիշներին օգնելը մեզ խաղաղություն բերում։ (Տես բաժին 2։) Ինչպե՞ս է ավետարանով ապրելն օգնում մեզ խաղաղություն ունենալ։ Ինչո՞ւ է Փրկչին «անվերապահորեն նվիրվելը» կարևոր, որպեսզի մենք խաղաղություն ունենանք։
- Վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները բաժին 3-ում։ Ինչպե՞ս եք դուք զգացել ձեր հոգսերից ձեզ ազատելու Փրկչի խոստման իրականացումը, երբ դուք եկել եք Նրա մոտ։
- Անդրադարձեք Նախագահ Հանթերի՝ Պետրոսը քայլում է ջրերի վրա պատմությանը (տես բաժին 4)։ Ի՞նչ կարող ենք սովորել այս պատմությունից այն մասին, թե ինչպես գտնել խաղաղություն դժվար ժամանակներում։ Ինչպե՞ս է Փրկիչն օգնել ձեզ «քաջ լինել» և «չվախենալ» դժվար ժամանակներում։

Առնչվող սուրբ գրություններ

Սաղմոս ԽԶ.10, ՁԵ.8, Եսայիա ԼԲ.17, Մարկոս Դ.36–40, Հռովմայեցիս Ը.6, Գաղատացիս Ե.22–23, Փիլիպպեցիս Դ.9, Մոսիա 4.3, ՎևՈւ 19.23, 59.23, 88.125

Օգնություն ուսուցչին

Դասարանի անդամներին հրավիրեք ընտրել գլխի բաժիններից մեկը, որը նրանք կցանկանային քննարկել, և կազմել խումբ նրանց հետ, ովքեր ընտրել են նույն բաժինը։ Յուրաքանչյուր խմբին հորդորեք գլխի վերջում գտնվող հարցերից քննարկել իրենց թեմային վերաբերող հարցը։

Հղումներ

1. In Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 185.
2. In Knowles, *Howard W. Hunter,* 266.
3. Boyd K. Packer, "President Howard W. Hunter—He Endured to the End," *Ensign,* Apr. 1995, 29.
4. "The Gifts of Christmas," *Ensign,* Dec. 2002, 16.
5. In Conference Report, Oct. 1966, 15-16.
6. "The Beacon in the Harbor of Peace," *Ensign,* Nov. 1992, 18.
7. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 40.
8. "A More Excellent Way," *Ensign,* May 1992, 61, 63.
9. "The Golden Thread of Choice," *Ensign,* Nov. 1989, 18.
10. In Conference Report, Oct. 1966, 16.
11. In Conference Report, Oct. 1969, 113.
12. *The Teachings of Howard W. Hunter,* 172–73.
13. *The Teachings of Howard W. Hunter,* 73-74.
14. "The Gifts of Christmas," 19.
15. In Conference Report, Apr. 1976, 157.
16. "Master, the Tempest Is Raging," *Ensign,* Nov. 1984, 35.
17. In Conference Report, Oct. 1966, 16-17.
18. In Conference Report, Oct. 1970, 131-32.
19. "The Beacon in the Harbor of Peace," 19.

Զախորդություն՝ Աստծո ծրագրի մաս հանուն մեր հավերժական առաջընթացի

«Երբ [մահկանացու կյանքի դժվարությունները] խոնարհեցնում են մեզ և զսում մեզ և ուսուցանում մեզ և օրհնում մեզ, դրանք կարող են հզոր միջոցներ լինել Աստծո ձեռքերում մեզ ավելի լավ ժողովուրդ դարձնելու համար»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

1980 թվականի ապրիլյան գերագույն համաժողովի ժամանակ Երեց Հովարդ Վ. Հանթերը՝այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, պատմեց, թե ինչպես Սամոայում մի մեծ բազմության հետ միասին դիտում էր թիանավերի մրցույթը: «Բազմությունն անհանգիստ էր , ասաց նա,շատերի աչքերն ուղղված էին դեպի ծովը՝ հետևելով [նավերի]. հայտնվելուն: Հանկարծ մի բղավոց լսվեց ամբոխի միջից, երբ հեռվում նավակները հայտնվեցին տեսադաշտում: Նրանցից յուրաքանչյուրն ուներ հիսուն հոգիանոց ուժեղ թիավարների անձնակազմ, ովքեր թիակները ռիթմով ընկղմում էին ջրի մեջ և հանում՝ ստիպելով նավերին առաջ շարժվել ալիքների միջով և փրփրեցնելով ջուրը՝ ստեղծելով մի գեղեցիկ տեսարան:

Նավերն ու մարդիկ շուտով ամբողջովին հայտնվեցին տեսադաշտում, երբ նրանք սլանում էին դեպի վերջնագիծը: Չնայած այս ուժեղ մարդիկ քաշում էին իրենց ողջ զորությամբ, նավի ծանրությունը հիսուն մարդու հետ շարժվում էր ընդդեմ մի հզոր հակադիր ուժի՝ջրի դիմադրության դեմ:

Բազմության ծափահարությունները հասան գագաթնակետին, երբ առաջին թիանավն հատեց վերջնագիծը:

Մեր փորձություններին մեջ Փրկիչը հղում է մեզանից յուրաքանչյուրին այն իրավերը, որը Նա հղեց Բեթհեզդայի ջրավազանի մոտ գտնվող մարդուն. «Կամենո՞ւմ ես առողջ լինել»: Հովհաննես Ե.6:

Մրցույթից հետո Երեց Հանթերը քայլեց դեպի նավակների կայանման վայրը և խոսեց թիավարներից մեկի հետ, ով բացատրեց, որ նավի քթամասն այնպես է կառուցված, որ այն կտրում է և բաժանում ջուրը՝ օգնելու հաղթահարել դիմադրությունը, որը դանդաղեցնում է նավի արագությունը: Հետո նա բացատրեց, որ թիակները ջրի դիմադրության դեմ քաշելը ստեղծում է ուժ, որը ստիպում է նավին առաջ շարժվել: Դիմադրություն ստեղծում է ինչպես ընդդիմությունը, այնպես էլ առաջընթաց շարժումը»:[1]

Երեց Հանթերն օգտագործեց Սամոայի նավերի մրցույթը՝ ներկայացնելու մի ելույթ, որը նվիրված էր ձախորդության նպատակներին: Որպես Առաքյալ՝ իր ծառայության ընթացքում, նա շատ անգամներ է խոսել ձախորդության մասին, տալով խորհուրդ, հույս և խրախուսանք: : Նա խոսել է անձնական փորձից ելնելով, համբերությամբ տանելով կյանքին սպառնացող հիվանդություններ և այլ փորձություններ: Նա վկայել է ամուր համոզմունքով, որ դժբախտության պահերին «Հիսուս Քրիստոսն ունի ուժ՝ հեշտացնելու մեր դժվարությունները և թեթևացնելու մեր բեռները»:[2]

Հովարդ Վ. Հանթերի Ուսմունքները

1

Ձախորդությունը մեր հավերժական առաջընթացի համար Աստծո ծրագրի մասն է:

Ես նկատել եմ, որ կյանքը՝ ամեն կյանք, ունի վերելքների և վայրէջքների լրիվ բաժինը: Մենք աշխարհում իսկապես տեսնում ենք շատ ուրախություններ և վշտեր , շատ փոխված ծրագրեր և նոր ուղղություններ, շատ օրհնություններ, որոնք միշտ չէ որ նման են օրհնությունների և շատ բաներ, որոնք խոնարհեցնում են մեզ, կատարելագործում մեր համբերությունը և ամրացնում մեր հավատքը: Մենք բոլորս ժամանակ առ ժամանակ ունեցել ենք այդ փորձությունները, և ես ենթադրում եմ՝ միշտ կունենանք: . . .

. . .Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը , ով շատ լավ գիտեր տառապանքի, հուսահատության և իր վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքների մասին, մի անգամ գրել է.

«Լինելով մարդ արարած, մենք կկամենայինք մեր կյանքից հեռացնել ֆիզիկական ցավը և հոգեկան տառապանքը և ինքներս մեզ համար ապահովեինք մշտական հանգստություն և հարմարավետություն, սակայն, եթե մենք փակենք վշտի ու դժբախտության դռները, հնարավոր է, որ մենք հեռացնենք մեր ամենալավ ընկերներին ու բարերարներին: Տառապանքը կարող է մարդկանց դարձնել սրբեր, երբ նրանք սովորեն համբերություն, համբերատարություն և ինքնատիրապետում» [*Faith Precedes the Miracle* (1972), 98]:

Այդ մտքի մեջ Նախագահ Քիմբալն ակնարկում է դռներ փակելը կյանքի որոշակի փորձառությունների վրա: . . .Մեր կյանքում մշտապես դռներ են փակվում, իսկ դրանցից մի քանիսի փակվելը պատճառում է իսկական ցավ և սրտնեղություն: Իսկ ես *իրոք* հավատում եմ, որ երբ այդպիսի մի դուռ փակվում է , մեկ այլ դուռ է բացվում (և գուցե մեկից ավելին), հույսով և օրհնություններով մեր կյանքի այլ բնագավառներում, որոնք մենք չէինք հայտնաբերի այլ հանգամանքներում:

. . . Մի քանի տարի առաջ [Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին] ասաց, որ բոլոր տղամարդիկ և կանայք, ներառյալ ամենահավատարիմներն ու նվիրվածները, ձախորդություն և չարչարանքներ են կրելու իրենց կյանքում, որովհետև Ջոզեֆ Սմիթի խոսքերով, «Մարդիկ պետք է տառապեն, որպեսզի կարողանան գալ Սիոնի սարը և վեհացվեն երկինքներից վեր» [*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները՝ Ջոզեֆ Սմիթ* (2007), 230; see Conference Report, Oct. 1969, 57]:

Նախագահ Ռոմնին ասել է.

« Սա չի նշանակում, որ մենք տենչում ենք տառապել: Մենք խուսափում ենք ամեն ինչից, որքան կարողանում ենք: Սակայն մենք գիտենք այժմ, և մենք բոլորս գիտեինք, երբ մենք ընտրեցինք գալ մահկանացու կյանք, որ մենք այստեղ կստուգվենք ձախորդության և չարչարանքի հնոցում: . . .

[Բացի այդ,] Հոր ծրագրով Իր զավակների ստուգման և [զտման համար] բացառություն չէր նույնիսկ Ինքը՝ Փրկիչը : Տառապանքը, որ Նա իր վրա վերցրեց դիմանալու համար, և որին Նա իսկապես դիմացավ, հավասարապես միավորեց բոլոր տղամարդկանց և կանանց տառապանքն ամենուրեք: Դողալով

և արնահոսելով և ցանկանալով ընկրկել գավաթից, նա ասել է.«Ես ճաշակեցի ու ավարտեցի իմ նախապատրաստությունները մարդկանց զավակների համար» (ՎևՈւ 19.18–19)»(in Conference Report, Oct. 1969, p. 57);

Մենք բոլորս պետք է ավարտենք մեր « նախապատրաստությունները մարդկանց զավակների համար»[ՎևՈւ 19.19]: Քրիստոսի նախապատարաստությունները լիովին տարբեր էին մեր սեփականից, բայց մենք բոլորս պետք է նախապատրաստություններ կատարենք, դռներ բացենք: Այդպիսի կարևոր նախապատրաստություններ կատարելը հաճախ պահանջում է մի քիչ ցավ, որոշ անսպասելի փոփոխություններ կյանքի ճանապարհին և մի քիչ հնազանդություն, «ճիշտ՝ ինչպես երեխան է ենթարկվում իր հորը» [Մոսիա 3.19]: Աստվածային նախապատրաստությունները վերջացնելը և սելեստիալ դռները բացելը իրոք կարող է տանել մեզ , անկասկած հասցնել մեզ, հենց ընդհուպ մեր մահկանացու կյանքի եզրափակիչ ժամերը: [3]

Մենք մահկանացու կյանք ենք եկել դիմադրության հանդիպելու համար: Դա մեր հավերժական առաջընթացի ծրագրի մասն է կազմում: Առանց գայթակղության, հիվանդության, ցավի և վշտի չէր կարող լինել բարություն, արժանիք, շնորհակալություն բարորության համար կամ ուրախություն: . . . Մենք պետք է հիշենք, որ նույն դիմադրության ուժերը, որոնք խանգարում են մեր առաջընթացին, ընձեռում են մեզ հաղթահարելու հնարավորություններ: [4]

2

Մեր մահկանացու տառապանքները մեր աճի և փորձառության համար են:

Երբ [մահկանացու կյանքի դժվարությունները] խոնարհեցնում են մեզ, և զտում մեզ, և ուսուցանում մեզ, և օրհնում մեզ, դրանք կարող են հզոր միջոցներ լինել Աստծո ձեռքերում՝ մեզ ավելի լավ մարդիկ դարձնելու, դարձնելու մեզ ավելի երախտապարտ, ավելի սիրառատ, ավելի հոգատար՝ ուրիշ մարդկանց հանդեպ՝ նրանց դժվարության պահերին:

Այո, մենք բոլորս ունենում ենք դժվարին պահեր, անհատապես և հավաքականապես, բայց նույնիսկ ամենադժվար պահերին, հին դարերում թե ներկա ժամանակներում, այդ խնդիրներն ու մարգարեությունները երբեք նախատեսված չեն եղել որևէ

Երբ Զոզեֆ Սմիթը Լիբերթի բանտում էր, Տերը հայտնի դարձրեց նրան, որ ձախողությունը կարող է տալ մեզ փորձառություն և լինել մեր օգտի համար:

բան անելու, բացի արդարներին օրհնելուց, և օգնելու նրանց, ովքեր ավելի քիչ արդար են՝ գնալու դեպի ապաշխարություն: Աստված սիրում է մեզ, և սուրբ գրքերն ասում են մեզ, որ Նա «իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» [Հովհաննես Գ.16]:[5]

Մորմոնի Գրքի մեծ հայրապետ Լեքին, խրախուսաբար է խոսել իր որդի Հակոբի հետ, ով ծնվել էր անապատում՝ չարչարանքի և ընդդիմության մի ժամանակահատվածում: Հակոբի կյանքն այնպիսին չէր , որ նա էր ակնկալում, ոչ էլ այնպիսին, ինչպիսին փորձառության իդեալական ընթացքը կարող է ուրվագծած լիներ: Նա տառապել էր նեղություններից և անհաջողություններից, բայց Լեքին խոստացել էր, որ այդ նեղությունները կսրբագործվեին ի օգուտ իր որդու (տես 2 Նեփի 2.2):

Ապա Լեքին ասել է այս խոսքերը, որոնք դարձել են դասական.

«Քանզի, անպայման պետք է, որ հակադրություն լինի բոլոր բաներում: Եթե այդպես չլիներ, . . . արդարությունը չէր կարող

իրագործվել, ոչ էլ ամբարշտությունը, ո՛չ սրբությունը, ո՛չ էլ թշվառությունը, ո՛չ լավը, ո՛չ էլ վատը։(2 Նեփի 2.11)։

Ես մեծ մխիթարություն եմ ստացել տարիների ընթացքում կյանքի որոշակի ցավի և հուսախաբության այս բացատրությունից։ Ես նույնիսկ ավելի մեծ մխիթարություն եմ ստանում, որ տղամարդկանցից և կանանցից մեծագույնները, ներառյալ Աստծո Որդին, դիմակայել են այդպիսի ընդդիմության, որպեսզի ավելի լավ հասկանան հակադրությունը արդարակեցության և ամբարշտության միջև, սրբության և թշվառության, բարու և չարի միջև։ Լիբերթիի բանտում՝ մութ ու խոնավ բանտարկությունից Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեց, որ եթե մենք կանչվում ենք անցնել չարչարանքի միջով, դա մեր աճի և փորձառության համար է և ի վերջո կհամարվի մեր բարիքի համար (տես ՎևՈւ 122.5–8)։

Որտեղ մի դուռ փակվում է, մեկ ուրիշն է բացվում՝նույնիսկ բանտում գտնվող մարգարեի համար։ Մենք միշտ չէ, որ բավականաչափ իմաստուն ենք, կամ էլ բավականաչափ փորձառու՝ համապատասխանաբար դատելու բոլոր հնարավոր մուտքերն ու ելքերը։ Առանձնատունը, որն Աստված պատրաստում է իր սիրելի զավակներից յուրաքանչյուրի համար, կարող է ունենալ միայն որոշ միջանցքներ և բազրիքներ, հատուկ գորգեր և վարագույրներ, որոնցով նա կկամենար մեզ անցկացնել մեր ճանապարհին՝ դրանց տիրանալու համար։ . . .

Մեր կյանքի տարբեր ժամանակներում, հավանաբար մեր կյանքում կրկնվող պահերի ժամանակ, մենք պետք է ընդունենք, որ Աստված գիտի այն, ինչ մենք չգիտենք և տեսնում է այն, ինչ մենք չենք տեսնում։ «Որովհետեւ իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, եւ ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն, ասում է Տերը»(Եսայիա ԾԵ.8)։

Եթե դուք տանը դժվարություններ ունեք երեխաների հետ, ովքեր մոլորվել են, եթե դուք տանում եք ֆինանսական անհաջողություններ և հուզական լարվածություն, որը սպառնում է ձեր տներին և ձեր երջանկությանը, եթե դուք պետք է դիմակայեք կյանքի կամ առողջության կորստի, թող խաղաղություն լինի ձեր հոգում։ Մենք երբեք մեր դիմադրելու կարողությունից վեր չենք գայթակղվի» [տես Ա Կորնթացիս Ժ.13, Ալմա 13.28, 34.39]։ Մեր շրջանցումները և հուսահատությունները նեղ և անձուկ ճանապարհն են դեպի Նա։[6]

3

Մենք ամեն պատճառ ունենք լավատես լինելու, նույնիսկ դժվարության պահերին:

Միշտ էլ եղել են որոշ դժվարություններ մահկանացու կյանքում և միշտ էլ կլինեն: Բայց իմանալն այն, ինչ մենք գիտենք, և ապրելով այնպես ինչպես, ակնկալվում է, որ մենք ապրենք, չկա իսկապես տեղ, արդարացում հոռետեսության և հուսահատության համար:

Իմ կյանքի ընթացքում ես տեսել եմ երկու համաշխարհային պատերազմներ, գումարած Կորեան, գումարած Վիետնամը և [մյուսները]: Ես իմ ուղին հարթել եմ Դեպրեսիայի միջով և հասցրել եմ գնալ իրավաբանական համալասարան, միևնույն ժամանակ կազմելով երիտասարդ ընտանիք: Ես տեսել եմ բաժնետոմսերի շուկաները և աշխարհի տնտեսությունները խենթանալիս և տեսել եմ, թե ինչպես են մի քանի բռնապետեր և բռնակալներ խենթացել՝ առաջացնելով բավականին խնդիրներ ողջ աշխարհում այդ ժամանակ:

Այսպիսով, ես հուսով եմ դուք չեք հավատա, որ ողջ աշխարհի դժվարությունները դիզվել են ձեր տասնամյակում, կամ որ գործերն այդքան վատ երբեք չեն եղել, քան դրանք անձնապես ձեզ համար են, կամ որ դրանք այլևս երբեք լավ չեն լինի: Ես հավաստիացնում եմ ձեզ, որ գործերն ավելի վատթար են եղել և դրանք *միշտ* ավելի կլավանան: Դրանք միշտ էլ լավանում են, հատկապես, երբ մենք Հիսուս Քրիստոսի ավետարանով ենք ապրում և սիրում այն և հնարավորություն տալիս, որ այն ծաղկի մեր կյանքում: . . .

Ի հակառակ նրա, ինչ ոմանք կարող ենասել, որ դուք ունեք ամեն պատճառ երջանիկ լինելու և լավատես ու վստահ այս աշխարհում: Յուրաքանչյուր սերունդ, իր ժամանակի սկսվելուց ի վեր, ունեցել է հաղթահարելու որոշ բաներ և լուծելու որոշ խնդիրներ:[7]

4

Երբ մենք գալիս ենք դեպի Հիսուս Քրիստոս, Նա հեշտացնում է մեր դժվարությունները և թեթևացնում մեր բեռները:

«Ինձ մոտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ:

«Քրիստոսի հետևորդներին ամեն սերնդում կոչ է արվում, իրականում պատվիրվում է, լցված լինել հույսի կատարյալ պայծառությամբ»:

Ձեզ վրա առէք իմ լուծը եւ ինձանից սովորեցէք. որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ. եւ ձեր անձերի համար հանգստութիւն կգտնէք:

Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև (Մատ. ԺԱ.2830:) . . .

. . . Աստծո Որդու կողմից հասցվող օգնության այս սքանչելի առաջարկը չէր սահմանափակվում միայն Իր օրերի Գալիլեացիներով: Իր քաղցր լուծը ուսին առնելու և թեթև բեռն ընդունելու այս կոչը սահմանափակված չէ անցած սերունդներով: Դա եղել է և համընդհանուր կոչ է բոլոր մարդկանց, բոլոր քաղաքներին և ազգերին, յուրաքանչյուր տղամարդու և կնոջ ու երեխայի ամենուրեք:

Մեր իսկ մեծ կարիքի դեպքերում մենք չպետք է չճանաչված թողնենք մեր աշխարհի հոգսերին և մտահոգություններին տրված այս անխափան պատասխանը: Ահա այստեղ է անձնական խաղաղության և պաշտպանության խոստումը: Ահա այստեղ է բոլոր ժամանակաշրջաններում մեղքին թողություն

տալու իշխանությունը: Մենք ևս պետք է հավատանք, որ Հիսուս Քրիստոսն իշխանություն ունի՝ հեշտացնելու մեր դժվարությունները և թեթևացնելու մեր բեռները: Մենք ևս պետք է գանք դեպի Նա և այնտեղ հանգստություն ստանանք մեր գործերից:

Իհարկե այդպիսի խոստումների հետ գալիս են պարտավորություններ: «Վերցրեք իմ լուծը ձեզ վրա», աղերսում է Նա: Աստվածաշնչյան ժամանակներում լուծը մի գործիք էր, որը մեծ օգնություն էր նրանց համար, ովքեր վարում էին դաշտը: Այն թույլ էր տալիս, որ մի երկրորդ անասունի ուժը միակցվեր և զուգակցված մեկ կենդանու ջանքով կիսվեր և նվազեր գութանի կամ սայլի ծանր աշխատանքը: Բեռը, որը ճնշող էր կամ գուցե անհնարին կրելու մեկի համար, կարող էր հավասարապես և հարմարավետ կրվել երկուսի կողմից, որոնք կապվում են մի ընդհանուր լծով: Նրա լուծը պահանջում է մեծ և լուրջ ջանք, բայց նրանց համար, ովքեր իսկապես դարձի են եկել, լուծը հեշտ է և բեռը թեթև է դառնում:

Ինչո՞ւ դիմակայել կյանքի բեռին միայնակ, հարցնում է Քրիստոսը, կամ ինչո՞ւ դիմակայել դրանց ժամանակավոր աջակցությամբ, որն արագ փոխվում է: Բեռնավորվածների համար դա Քրիստոսի լուծն է, դա իշխանությունն է ու խաղաղությունը կանգնելու կողք կողքի Աստծո հետ, որը կապահովի աջակցություն, հավասարակշռություն և ուժ՝ դիմակայելու մեր մարտահրավերներին և դիմանալու մեր խնդիրներին այստեղ՝ մահկանացու կյանքի կարծրահող դաշտում:

Ակնհայտորեն, կյանքի անձնական բեռները տարբերվում են անձից անձ , բայց մեզանից ամեն մեկն ունի դրանք: . . . Իհարկե, որոշ վշտեր առաջանում են այն աշխարհի մեղքերից, որը չի հետևում [մեր] Երկնային Հոր խորհրդին: Ինչ էլ որ լինի պատճառը, թվում է, մեզանից ոչ ոք ազատ չէ կյանքի մարտահրավերներից: Ինչպես մեկին, այնպես էլ բոլորին, Քրիստոսն ասել է. . . Քանի որ մենք բոլորս պետք է կրենք ինչ որ բեռներ և ուսերին վերցնենք ինչ որ լուծ, ինչո՞ւ ոչ, թող այն լինի Իմը: Իմ խոստումն է ձեզ, որ իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև: (Տես Մատթ. ԺԱ..28–30:)[8]

5

Վերջին օրերի Սրբերին պետք չէ վախենալ վերջին օրերի նեղություններից:

Սուրբ գրությունները . . . նշում են, որ կլինեն ժամանակաշրջաններ, երբ ողջ աշխարհը կունենա որոշ դժվարություններ: Մենք գիտենք, որ մեր ժամանակաշրջանում անիրավությունը, դժբախտաբար, կլինի լիովին ակնհայտ, և դա կբերի իր անխուսափելի դժվարությունները և ցավն ու պատիժը: Աստված կկրճատի այդ անիրավությունն իր իսկ հարմար ժամանակին, բայց մեր խնդիրն է՝ ապրել լիակատար և հավատարմորեն, և ինքներս չանհանգստանանք, տագնապի մատնվենք աշխարհի վայերի համար կամ, երբ այն պետք է ավարտվի: Մեր խնդիրն է ունենալ ավետարանը մեր կյանքում և լինել պայծառ լույս, քաղաք հիմնված բլրի վրա, որն արտացոլում է Հիսուս Քրիստոսի ավետարանի գեղեցկությունը և ուրախությունն ու երջանկությունը, որը միշտ կգա ամեն ժողովրդի ամեն դարում, ովքեր պահում են պատվիրանները:

Այս վերջին ժամանակաշրջանում կլինի մեծ նեղություն: (Տես Մատթ. 24.21;) Մենք գիտենք, որ կլինեն պատերազմներ և պատերազմների լուրեր (տես ՎԵՈՒ 45.26) և որ ողջ երկիրը կլինի խառնաշփոթի մեջ (տես ՎԵՈՒ 45.26): Բոլոր ժամանակաշրջաններն ունեցել են իրենց վտանգավոր ժամանակները, բայց մեր օրը կներառի իսկական վտանգ: (Տես Բ Տիմ. Գ.1.) Չար մարդիկ կծաղկեն (տես Բ Տիմ. Գ.13), բայց հետո չար մարդիկ շատ հաճախ են ծաղկել: Աղետներ կգան և անօրինությունը կշատանա: (Տես ՎԵՈՒ 45.27:)

Անխուսափելիորեն այսպիսի մարգարեություններից մի քանիսի արդյունքը վախն է, և դա վախ չէ, որը սահմանափակված է երիտասարդ սերնդով: Դա վախ է, որը կիսում են ամեն տարիքի մարդիկ, ովքեր չեն հասկանում այն, ինչ մենք ենք հասկանում:

Բայց ես կամենում եմ շեշտել, որ այս զգացումներն անհրաժեշտ չեն հավատարիմ Վերջին Օրերի Սրբերի համար, և դրանք չեն գալիս Աստծուց: : Հնադարյան Իսրայելին մեծ Եհովան ասել է.

Զօրացիր և քաջ եղիր. մի վախենար և մի զարհուրիր,. որովհետև քո Տէր Աստուածը քեզ հետ է ամէն տեղ, ուր որ գնաս: . . .

Եւ քո առաջից գնացողը նոյն ինքն Եհովան է, նա քեզ հետ է լինելու, նա քեզ չի թողիլ եւ քեզ չի ձգիլ. մի վախենար և մի զարհուրիր»: (Երկ. Օր. ԼԱ.6, 8:)

Իսկ ձեզ ժամանակակից Իսրայելի մեր սքանչելի սերունդ, Տերն ասել է.

«Ուստի, մի վախեցիր, փոքրի՛կ հոտ. բարիք գործիր. թող երկիրն ու դժոխքը միանան քո դեմ, քանզի, եթե դու կառուցված ես իմ վեմի վրա, նրանք չեն կարող գերիշխել: . . .

Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք»: (ՎևՈւ 6.34, 36:)

Մեր ժամանակակից ողջ սուրբ գրությունները լի են այսպիսի խորհրդով: Լսեք այս հիանալի վերահավաստիացումը. «Մի վախեցեք, փո՛քր երեխաներ, քանզի դուք իմն եք, և ես հաղթել եմ աշխարհին, և դուք նրանցից եք, որոնց իմ Հայրը տվել է ինձ». (ՎևՈւ 50:41) «Ճշմարիտ ասում եմ ձեզ, իմ բարեկամնե՛ր. Մի՛ վախեցեք. թող ձեր սրտերը մխիթարվեն. այո՛, ամեն ժամանակ ուրախ եղեք, և ամեն ինչի համար գոհություն հայտնեք» (ՎևՈւ 98:1)

Այդպիսի հիանալի խորհրդի լույսի ներքո, կարծում եմ, մեզ հանձնարարված է մի քիչ ավելի ուրախանալ և մի քիչ ավելի քիչ հուսահատվել, շնորհակալություն հայտնել նրա համար, ինչ մենք ունենք և մեզ տրված Աստծո օրհնությունների մեծության համար, և մի քիչ ավելի քիչ խոսել այն մասին, թե ինչ կարող ենք չունենալ, կամ ինչ տագնապ կարող է ուղեկցել դժվարին ժամանակներում այս կամ որևէ այլ սերնդում:

Մեծ հույսի և հուզումնալի ժամանակ

Վերջին Օրերի Սրբերի համար սա մեծ հույսի և հուզումնալի ժամանակ է՝ Վերականգման մեծագույն ժամանակաշրջաններից մեկը և ուստի մեծագույն ժամանակաշրջաններից մեկը որևէ տնտեսության մեջ, քանի որ մերը մեծագույնն է բոլոր տնտեսություններից: Մենք պետք է ունենանք հավատք և հույս՝ Քրիստոսի որևէ հետևորդի համար այս երկու հիմնական մեծ արժանիքները: Մենք պետք է շարունակենք վստահություն գործադրել առ Աստված, քանի որ դա առաջին սկզբունքն է մեր հավատքի հանգանակում: Մենք պետք է հավատանք, որ Աստված ունի ողջ իշխանությունը, որ Նա սիրում է մեզ, և որ

Նրա աշխատանքը հնարավոր չէ կանգնեցնել կամ ձախողել մեր անձնական կյանքում կամ աշխարհում ընդհանրապես: . . .

Ես խոստանում եմ ձեզ Տիրոջ անունով, ում ծառան եմ ես, որ Աստված միշտ կպաշտպանի և հոգ կտանի Իր ժողովրդին: Մենք կունենանք մեր դժվարությունները, ինչպես ամեն սերունդ և ժողովուրդ է ունեցել դժվարություններ: Բայց Հիսուս Քրիստոսի ավետարանով դուք ունեք ամեն հույս և խոստում և վերահավաստիացում: Տերն իշխանություն ունի Իր Սրբերի վրա և միշտ կպատրաստի խաղաղության, պաշտպանության և ապահովության վայրեր Իր ժողովրդի համար: Երբ մենք հավատք ունենանք առ Աստված, մենք կարող ենք հույս ունենալ ավելի լավ աշխարհի համար: Մարգարե Եթերն ուսուցանել է հնադարում (իսկ նա գիտեր ինչ որ բան դժբախտությունների մասին). «Ուստի, ով որ հավատում է Աստծուն, կարող է անկասկած հուսալ ավելի լավ աշխարհի համար, այո, նույնիսկ մի տեղի՝ Աստծո աջ կողմում, հույս, որը գալիս է հավատքից, դառնում է խարիսխ մարդկանց հոգիների համար, ինչը դարձնում է նրանց կայուն և հաստատուն, միշտ հարստացնում բարի գործերով, առաջնորդում՝ փառաբանելու Աստծուն»: (Եթեր 12.4;)

Քրիստոսի աշակերտներին ամեն սերնդում կոչ է արվել, իրականում պատվիրվել, լցված լինել հույսի կատարյալ պայծառությամբ: (Տես 2 Նեփ. 31.20:)

Զգուշով ցրել վախը

. . . Եթե մեր հավատքն ու հույսը խարսխված են Քրիստոսի մեջ, Նրա ուսմունքներում, պատվիրաններում և խոստումներում, ապա մենք կարողանում ենք վստահել մի բանի, որն իսկապես նշանակալի է, ճշմարտապես սքանչագործ, որը կարող է կիսել Կարմիր ծովը և առաջնորդել ժամանակակից Իսրայելը դեպի մի տեղ «ուր ոչ ոք չի գա վնասելու կամ վախեցնելու»: (*Hymns,* 1985, no. 30.) Վախը, որ կարող է գալ մարդկանց վրա դժվարին օրերին, գլխավոր զենքն է սատանայի զինանոցի, որը նա օգտագործում է մարդկությանը դժբախտ դարձնելու համար: Նա , ով վախենում է, կորցնում է կյանքի համար պայքարում չարի դեմ կռվելու ուժը: Այդ պատճառով չարի զորությունը միշտ փորձում է վախ առաջացնել մարդկանց սրտերում: Ամեն դարում և ամեն ժամանակաշրջանում մարդկությունը դիմակայել է վախին:

Որպես Աստծո զավակներ և Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետնորդներ, մենք պետք է ձգտենք ցրել վախը մարդկանց միջից: Երկչոտ, վախկոտ ժողովուրդը չի կարող իր աշխատանքը լավ անել, և նա չի կարող անել Աստծո աշխատանքն ընդհանրապես: Վերջին Օրերի Սրբերն ունեն աստվածայնորեն նշանակված առաքելություն կատարելու, որը պարզապես չպետք է ցրիվ գա վախից և տագնապից:

Տիրոջ մի Առաքյալ ավելի վաղ ասել է հետևյալը. «Վախի դեմ հաղթանակի բանալին տրվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով. «Եթե պատրաստ լինեք, դուք չեք վախենա»: (ՎևՈւ 38:30) Այդ աստվածային ուղերձը պետք է կրկնվի այսօր ամեն ցցում և ծխում» Elder John A. Widtsoe, in Conference Report, Apr. 1942, 33.

Արդյոք մենք նախապատրաստվա՞ծ ենք անձնատուր լինել Աստծո պատվիրաններին: Արդյոք մենք նախապատարատվա՞ծ ենք հաղթահարել մեր ախորժակը: Արդյոք մենք նախապատրաստվա՞ծ ենք հնազանդվել արդար օրենքին: Եթե մենք ազնվորեն կարողանանք պատասխանել՝ այո, այդ հարցերին, մենք կարող ենք հրամայել վախին հեռանալ մեր կյանքից: Անկասկած վախի աստիճանը մեր սրտերում կարող է լավ չափվել արդարակյաց ապրելու մեր նախապատրաստվածությամբ, ապրելով մի ձևով, որը պետք է բնորոշի յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի ամեն դարում և ժամանակաշրջանում:

Վերջին Օրերում ապրելու պարտությունը, պատիվն ու պատասխանատվությունը

Թույլ տվեք եզրափակել Մարգարե Ջոզեֆ Սմիթի մեծագույն մտքերից մեկով, որ ես երբևէ կարդացել եմ, ով դիմակայեց այնպիսի ահռելի դժվարությունների իր կյանքում, և ով իհարկե վճարեց ամենամեծ գինը իր հաղթանակի համար: Բայց նա հաղթական *էր*, և նա երջանիկ էր, դիմացկուն, լավատես մարդ: Նրանք, ովքեր գիտեին նրան, զգում էին նրա ուժն ու քաջությունը, նույնիսկ ամենախավար ժամանակներում: Նա չէր ընկճվում հոգով կամ ցանկանում մնալ վիատության մեջ:

Նա ասել է մեր ժամանակի մասին՝ ձեր և իմ, որ մերն է պահը. «որի համար մարգարեները, քահանաները և թագավորները [անցյալ դարերում] ապրել են առանձնահատուկ հրճվանքով,

[Աստծո բոլոր այս հնադարյան վկաները] ուրախության ակնկալիքով սպասել են այն օրվան, որում մենք ենք ապրում, բոցավառված երկնային և ուրախալի ակնկալիքներով՝ նրանք երգել են և գրել ու մարգարեացել մեր այս օրվա մասին, մենք արտոնյալ ժողովուրդ ենք, որին Աստված է [ընտրել] առաջ բերելու Վերջին Օրերի փառքը»[*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները՝ Ջոզեֆ Սմիթ,* 186]:

Ինչպիսի~ արտոնություն: Ինչպիսի~ պատիվ: Ինչպիսի~ պատասխանատվություն: Եվ ինչպիսի~ ուրախություն: Մենք ունենք ամեն պատճառ ժամանակի և հավերժության համար ուրախանալու և շնորհակալություն հայտնելու մեր կյանքի որակի և այն խոստումների համար, որոնք տրվել են մեզ: [9]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ինչպես կարող է օգնել իմանալը, որ ձախորդությունը մեր հավերժական առաջընթացի համար Աստծո ծրագրի մասն է: (Տես բաժին 1.) Ինչո՞ւ եք կարծում, որ ձախորդությունը անհրաժեշտ մասն է մահկանացու կյանքի:
- Վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները բաժին 2ում ձախորդության որոշ նպատակների վերաբերյալ: Ինչպե՞ս եք նկատել, որ ձախորդությունը կարող է մեր օգտի համար լինել: Ինչպե՞ս կարող ենք սկսել տեսնել ձախորդությունը Տիրոջ հավերժական տեսանկյունից:
- Ինչո՞ւ, ինչպես Նախագահ Հանթերն է ուսուցանել« մենք ունենք ամեն պատճառ լինելու երջանիկ և լավատես, նույնիսկ՝ դժվարության պահերին: (Տես բաժին 3.) Ինչպե՞ս կարող ենք ավելի մեծ լավատեսություն զարգացնել այսպիսի ժամանակներում: Որո՞նք են այն օրինությունները, որոնք մենք շարունակում ենք ունենալ նույնիսկ ամենադաժան ձախորդության ժամանակ:
- Ինչպե՞ս ենք ընդունում Փրկչի հրավերը թույլ տալու Նրան կրել մեր դժվարությունները և թեթևացնել մեր բեռները: (Տես բաժին 4.) Ի՞նչ է նշանակում վերցնել Նրա լուծը մեզ վրա: Ինչպե՞ս է Փրկիչն օգնել ձեզ դժվարության պահերին:

- Նախագահ Հանթերն ուսուցանել է, որ վերջին օրերի վերաբերյալ վախի զգացումները չեն գալիս Աստծուց (տես բաժին 5)։ Ինչպե՞ս է վախով ապրելը վնասակար։ Ինչպե՞ս կարող ենք ավելի շուտ ապրել հույսով և հավատքով, քան վախով։

Սոնչվող սուրբ գրություններ

Հովհ. ԺԴ.27, ԺԶ.33, Եբր. Դ.14–16, Ե.8–9, 1 Նեփի 1.20,Ալմա 36.3, ՎևՈւ 58.2–4, 101.4–5,121.7–8, 122.7–9

Օգնություն ուսումնասիրողին

«Շատերը գտնում են, որ ուսումնասիրության համար լավագույն ժամանակը առավոտն է՝ գիշերային հանգստից հետո։ . . . Ուրիշները նախընտրում են ուսումնասիրել խաղաղ ժամերին, երբ աշխատանքն ու օրվա մտահոգություններն ավարտվել են։ . . . Հավանաբար, օրվա ժամից ավելի կարևոր է, որ կանոնավոր ժամ սահմանվի ուսումնասիրության համար (Howard W. Hunter, "*Reading the Scriptures*," *Ensign,* Nov. 1979, 64)։

Հղումներ

1. "God Will Have a Tried People," *Ensign,* May 1980, 24.
2. "Come unto Me," *Ensign,* Nov. 1990, 17–18.
3. "The Opening and Closing of Doors," *Ensign,* Nov. 1987, 54, 59.
4. "God Will Have a Tried People," 25–26.
5. "An Anchor to the Souls of Men," *Ensign,* Oct. 1993, 71.
6. "The Opening and Closing of Doors," 59–60.
7. "An Anchor to the Souls of Men," 70.
8. Come unto Christ, 17-18.
9. "An Anchor to the Souls of Men," 71–73.

Ի վերուստ եկող օգնություն

«Հավանաբար, ոչ մի խոստում կյանքում ավելի հավաստիացնող չէ, քան կարիքի պահին աստվածային աջակցության և հոգևոր առաջնորդության խոստումը»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Հովարդ Վ. Հանթերը սովորել է աղոթել, երբ նա երիտասարդ տղա էր: «Մայրս սովորեցրեց ինձ աղոթել և շնորհակալություն հայտնել Երկնային Հորն այն ամենի համար, ինչը ես վայելում էի», ասել է նա: «Ես հաճախ շնորհակալություն էի հայտնում Նրան աշխարհի գեղեցկության և հրաշալի ժամանակների համար, որ անց էի կացնում ագարակում, գետի ափին և սկաուտների հետ: Ես նաև սովորել էի խնդրել Նրանից բաներ, որոնք ես ուզում էի կամ անհրաժեշտ էին ինձ: . . . Ես գիտեի, որ Աստված սիրում և լսում է ինձ»:[1]

Իր ողջ կյանքի ընթացքում Նախագահ Հանթերը դիմել է աղոթքին՝ որպես աստվածային աջակցության աղբյուրի, և նա ուսուցանել է ուրիշներին անելու նույնը: Օրինակ, երբ նա ծառայում էր որպես եպիսկոպոս, մի մարդ իր ծխում զայրույթ էր արտահայտել մեկ այլ մարդու հանդեպ: Նախագահ Հանթերի խորհուրդը արտացոլել էր նրա վկայությունը օգնության մասին, որը գալիս է աղոթքի միջոցով.

«Ես ասացի նրան. «Եղբայր իմ, եթե դուք տուն գնաք և աղոթեք նրա համար ամեն առավոտ և ամեն երեկո, ես կհանդիպեմ ձեզ հետ ուղիղ երկու շաբաթ անց, հենց այս նույն ժամին, և ապա մենք կորոշենք, թե ինչ պիտի արվի»:

Այս խորհրդին հետևելուց հետո մարդը վերադարձավ և խոնարհաբար ասաց այն մարդու վերաբերյալ. «Նա օգնության կարիք ունի»:

«Տերը խոստացել է, որ եթե մենք խոնարհ լինենք . . . կարիքի պահին և օգնություն խնդրենք նրանից, մենք կարող ենք «զորացվել և օրհնվել բարձրից» (ՎԱՌ 1.28):

«Դուք ցանկանո՞ւմ եք օգնել նրան»: Հարցրել էր Նախագահ Հանթերը:

«Այո, իհարկե», ասել էր մարդը:

«Ողջ ատելությունն ու ողջ վիրավորանքն անցել էին», ավելի ուշ վերհիշում էր Նախագահ Հանթերը: «Այդպես է պատահում, երբ մենք աղոթում ենք միմյանց համար»:[2]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Մեր Երկնային Հայրը խոստացել է կարիքի պահին աստվածային աջակցություն և հոգևոր առաջնորդություն տալ մեզ:

Բոլորիս կյանքում էլ լինում են պահեր, երբ մենք երկնային օգնության կարիք ենք զգում՝ առանձնահատուկ և հրատապ ձևով: Բոլորս էլ ունենում ենք պահեր, երբ մեզ ճնշում են իրավիճակները կամ շփոթության մեջ են գցում ուրիշներից ստացած խորհուրդները, և մենք հոգևոր առաջնորդություն ստանալու մեծ կարիք ենք զգում՝ ճիշտ ուղին գտնելու և ճիշտ գործելու մեծ կարիք: Այս վերջին օրերի տնտեսության սուրբ գրքերի ներածական մասում Տերը խոստացել է, որ եթե մենք խոնարհ լինենք կարիքի պահին և օգնություն խնդրենք նրանից, մենք կարող ենք «զորացվել և օրհնվել բարձրից, և ժամանակ առ ժամանակ գիտելիք ստանալ»: (ՎևՈ 1.28:) Մենք կունենանք այդ օգնությունը, եթե միայն փնտրենք այն, վստահենք դրան և հետևենք այն բանին, որ Մորմոնի Գրքում Բենիամին թագավորը կոչում է «Սուրբ Հոգու հորդորներ»: (Մոսիա 3.19:)

Հավանաբար, ոչ մի խոստում կյանքում ավելի հավաստիացնող չէ, քան կարիքի պահին աստվածային աջակցության և հոգևոր առաջնորդության խոստումը: Դա երկնքից տրված ձրի պարգև է. պարգև, որի կարիքը մենք ունենք մեր վաղ երիտասարդության տարիքից մինչև մեր կյանքի ամենավերջին օրերը: . . .

Հիսուս Քրիստոսի ավետարանով մենք ունենք օգնություն բարձրից: «Ուրախ եղեք»,- ասում է Տերը,- «քանզի ես ձեր ուղեկիցը կլինեմ»: (ՎևՈ 78.18:) «Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը կլուսավորի քո միտքը, որն ուրախությունով կլցնի քո հոգին»: (ՎևՈ 11.13:)

Ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի աստվածայնության մասին: Աստված ապրում է և տալիս է մեզ իր Հոգին: Կյանքում դժվարությունների հանդիպելիս և կյանքի խնդիրների առջև կանգնելիս՝ թող որ մենք բոլորս էլ խնդրենք այդ պարգևը Աստծուց՝ մեր Հորից և հոգևոր ուրախություն գտնենք:[3]

2

Ջոզեֆ Սմիթի նման մենք էլ կարող ենք դիմել սուրբ գրություններին և աղոթքին, որպեսզի ուսուցանվենք ի վերուստ:

Պատանի մարգարե Ջոզեֆ Սմիթը . . . ձգտում էր իմանալ Տիրոջ միտքը և կամքը՝ իր կյանքի խառնաշփոթ ու մտահոգող ժամանակներում: . . . Պալմիրայի, Նյու Յորք, մոտակայքում գտնվող տարածքը դարձել էր «կրոնի շուրջ անսովոր հուզումների» մի վայր՝ Ջոզեֆի այնտեղ անցկացրած պատանեկության տարիներին: Հիրավի, նրան թվում էր, որ այն կլանել էր երկրի այդ ողջ շրջանը, և նա գրում էր, որ «մարդկանց մեծ բազմություններ» միանում էին կրոնական տարբեր խմբակցությունների, որոնք մարդկանց մեջ առաջացնում էին նկատելի «իրարանցումներ և բաժանումներ» [Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.5]:

Տասնչորսը նոր բոլորած պատանու համար ճշմարտության իր որոնումներն ավելի դժվարին ու շփոթեցնող էին դարձել, քանի որ Սմիթների ընտանիքի անդամներն այդ պահին տարբեր կրոնական նախապատվություններ ունեին:

Այժմ, երբ ծանոթ եք այդ ենթատեքստին, ես հրավիրում եմ ձեզ խորհել դյուրազգաց տարիքում գտնվող տղայի այս ուշագրավ մտքերի և զգացումների շուրջ: Նա գրել է.

«Այս մեծ հուզումների ժամանակ միտքս համակված էր լուրջ մտախոհությամբ ու մեծ անհանգստությամբ. բայց չնայած իմ զգացումները խորն էին ու հաճախ շատ սուր, ես շարունակում էի ինձ հեռու պահել բոլոր այդ խմբակցություններից, . . . այնքան մեծ էին տարբեր դավանանքների միջև եղած տարաձայնություններն ու վիճաբանությունները, որ մարդկանց ու իրերին անծանոթ այնպիսի մի երիտասարդի համար, ինչպիսին ես էի, անհնար էր որոշակի եզրակացության գալ, թե ով է ճիշտ, և ով է սխալ:

Մենք կարող ենք հետևել Ջոզեֆ Սմիթի օրինակին՝ իմաստություն փնտրելով Աստծուց:

Ժամանակ առ ժամանակ միտքս խորապես հուզվում էր, քանի որ աղմուկն ու ժխորը շատ մեծ էր ու անդադար: . . .

Խոսքերի պատերազմի և տարաձայնությունների այդ աղմուկի մեջ, ես հաճախ ինքս ինձ հարց էի տալիս. Ի՞նչ անել: Այս բոլոր խմբակցություններից ո՞րն է ճիշտ. կամ, միգուցե նրանք բոլորը սխա՞լ են: Եթե դրանցից որևէ մեկը ճիշտ է, ապա ո՞րն է այն, և ի՞նչպես կարող եմ դա իմանալ:

Ճգնելով այդ ծայրագույն դժվար կացության մեջ, որի պատճառը կրոնամոլների այդ խմբավորումների վիճաբանություններն էին, մի օր ես ընթերցում էի Հակոբոսի Թուղթը, որի առաջին գլխի հինգերորդ հատվածում ասվում է. *Բայց եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում. և կտրվի նրան:*

Սուրբ գրքի ոչ մի հատված երբևէ այդպիսի ուժով չի ազդել մարդու սրտի վրա, ինչպես այդ ժամանակ եղավ ինձ հետ: Այն ասես մեծ ուժով ներթափանցեց սրտիս զգացմունքների խորքը: Ես նորից ու նորից վերընթերցեցի այն, իմանալով, որ եթե կար մեկը, որն իմաստության կարիք ուներ Աստծուց, այդ ես էի. քանզի, թե ինչպես վարվել, ես չգիտեի և երբեք չէի իմանա, եթե չստանայի ավելի շատ իմաստություն, քան այդ ժամանակ ունեի» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.8-12):

Իհարկե այն, ինչ պատահեց հետո, փոխեց մարդկության պատմության ուղղությունը: Որոշելով «խնդրել Աստծուց»՝ պատանի Ջոզեֆը գնաց իր գյուղական տան մոտ գտնվող պուրակը: Այնտեղ, ի պատասխան նրա ջերմեռանդ աղոթքի, Աստված՝ Հավերժական Հայրը, և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին Ջոզեֆին և խորհուրդներ տվեցին նրան: Այդ մեծ հայտնությունը, որի մասին ես խոնարհաբար վկայում եմ, պատասխանեց մեր տնտեսության ավելի շատ հարցերի, քան լոկ այն հարցին, թե որ եկեղեցուն պատանի Ջոզեֆը պիտի կամ չպիտի միանար:

Սակայն իմ նպատակը . . . չէ Վերականգնման առաջին պահերն ուրվագծելը, չնայած, որ այն սուրբ գրությունների ամենասուրբ պատմություններից մեկն է: Դրա փոխարեն ես ցանկանում եմ ընդգծել այս շատ երիտասարդ և անուսում տղայի ցուցաբերած հոգևոր զգայնության տպավորիչ աստիճանը:

Մեզանից քանի՞սը կարող էին տասնչորս տարեկանում կամ ցանկացած տարիքում հաստատուն մնալ և խելամտությունը պահպանել, երբ բազմաթիվ ուժեր են ձգում ու հրապուրում մեզ, հատկապես, երբ դա վերաբերում էր մեր հավերժական փրկության կարևոր թեմային: Մեզանից քանի՞սը կարող էին դիմանալ հուզական պայքարին, որը կարող է առաջանալ, երբ ծնողները տարբեր կրոնական նախապատվություններ ունեն: Մեզանից քանի՞սը կարող էին տասնչորս կամ հիսուն տարեկանում մեր հոգում և սուրբ գրություններում փնտրել այն հարցերի պատասխանները, որոնք Պետրոս Առաքյալը կոչում է «Աստուծոյ խորքն»: (Ա Կոր. Բ.10:)

Որքան ուշագրավ է . . . որ այս պատանին պիտի խորապես փնտրեր սուրբ գրություններում, և ապա դիմեր անձնական աղոթքին, որոնք թերևս հանդիսանում են հոգևոր խորաթափանցության և հոգևոր տպավորության երկու մեծագույն աղբյուրները, որոնք հասանելի են տիեզերքի ողջ մարդկության համար: Իհարկե, նրան մտատանջում էին տարբեր կարծիքներ, սակայն նա որոշել էր անել ճիշտը և գտնել ճիշտ ուղին: Նա հավատում էր, ինչպես դուք և ես պետք է հավատանք, որ նա կարող էր ուսուցանվել և օրհնվել ի վերուստ, ինչն էլ տեղի ունեցավ:

Սակայն, մենք կարող ենք ասել, որ Ջոզեֆ Սմիթը շատ հատուկ հոգի էր, և նրա դեպքը յուրահատուկ էր: Ի՞նչ է սպասվում մեզ, երբ այժմ միգուցե ավելի մեծ ենք, առնվազն տասնչորս

տարեկանից բարձր, և մեզ տրված չէ բացելու ավետարանի տնտեսություն: Մենք նույնպես պետք է որոշումներ կայացնենք, ճիշտ կողմնորոշվենք խառնաշփոթության մեջ և ճիշտ լուծումներ գտնենք բազում խնդիրների վերաբերյալ բանավեճերում, որոնք իրենց ազդեցությունն են թողնում մեր կյանքի վրա: Աշխարհը լի է նման բարդ որոշումներով և, երբեմն, երբ հանդիպում ենք դրանց, մենք կարող ենք զգալ մեր տարիքը կամ մեր տկարությունները:

Երբեմն մեզ կթվա, որ մեր հոգևոր մակարդակն իջել է: Որոշ օրերի, երբ փորձում ենք լարել մեր ողջ ուժերը, մենք կարող ենք նույնիսկ զգալ, որ Աստված մոռացել է մեզ, մեզ մենակ է թողել մեր խառնաշփոթության և մտահոգության մեջ: Սակայն այդ զգացումն այլևս արդարացված չէ մեր միջի ավելի տարիքավորների համար, քան նրանց, ովքեր ավելի երիտասարդ են և ավելի անփորձ: Աստված ճանաչում և սիրում է մեզ՝ բոլորիս: Մենք՝ յուրաքանչյուրս նրա դուստրերն ու որդիներն ենք, և ինչ էլ կյանքի դասերը բերեն մեզ, խոստումը շարունակում է ճշմարիտ մնալ. «Բայց եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կ'տրուի նորան»: (Հակոբոս Ա.5:)[4]

3

Աղոթքը հոգևոր գիտելիք և առաջնորդություն ստանալու ուղիներից մեկն է:

Աշխարհիկ գիտելիքները և իմաստությունը և բոլոր ժամանակավոր բաները տրվում են մեզ մեր ֆիզիկական զգայարանների միջոցով՝ աշխարհիկ, անցողիկ միջոցներով: Մենք շոշափում ենք, մենք տեսնում ենք, մենք լսում ենք, համտեսում ենք, զգում ենք հոտը և սովորում ենք: Այնուամենայնիվ, հոգևոր գիտելիքը, ինչպես Պետրոսն է ասել, հոգևոր ձևով է մեզ տրվում՝ դրա հոգևոր աղբյուրից: Պետրոսը շարունակում է.

«Բայց շնչաւոր մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում. որովհետեւ նորանք յիմարութիւն են նորա համար. եւ չէ կարող էլ գիտենալ՝ որովհետեւ հոգեւոր կերպով են քննվում»: (Ա Կոր. Բ.14:)

Մենք հասկացել ենք և գիտենք, որ հոգևոր գիտելիք ստանալու միակ ուղին մեր Երկնային Հորը խնդրելն է Սուրբ Հոգու միջոցով, Հիսուս Քրիստոսի անունով: Երբ մենք անում ենք սա,

«Աղոթքի միջոցով Հայր Աստծուն արտահայտում ենք մեր հոգում եղածը»:

և եթե մենք հոգևոր առումով պատրաստված ենք, մենք տեսնում ենք բաներ, որոնք մեր աչքերը նախկինում չեն տեսել, և մենք լսում ենք բաներ, որոնք միգուցե մենք չենք լսել նախկինում՝ բաներ, որոնք «պատրաստեց Աստուած», եթե օգտագործենք Պետրոսի բառերը: (Ա Կոր. Բ.9:) Այս բաները մենք ստանում ենք Սուրբ Հոգու միջոցով:

Մենք հավատում ենք և վկայում ենք աշխարհին, որ այսօր հնարավոր է հաղորդակցվել Երկնային Հոր հետ և առաջնորդություն ստանալ Տիրոջից: Մենք վկայում ենք, որ Աստված խոսում է մարդու հետ, ինչպես նա արել է Փրկչի օրերում և Հին Կտակարանի ժամանակներում:[5]

4

Մենք միշտ կարող ենք աղոթել, և ոչ միայն հուսահատության պահերին:

Մեր ներկա ժամանակները թվում է, թե հուշում են, որ աղոթքով լի նվիրվածությունը և ակնածանքը սրբությունների հանդեպ

ողջամիտ չէ, կամ ցանկալի չէ, կամ երկուսն էլ։ Սակայն, այնուամենայնիվ, թերահավատ «ժամանակակից» մարդիկ ունեն աղոթքի կարիքը։ Վտանգավոր պահեր, մեծ պատասխանատվություն, խորը անհանգստություն, ճնշող վիշտ՝ այս մարտահրավերները, որոնք ցնցում են մեզ մեր նախկին ինքնավստահ վիճակից և խախտում մեր սովորական ապրելակերպը, ի հայտ կբերեն մեր ներքին մղումները։ Եթե թույլ տանք, դրանք կխոնարհեցնեն մեզ, կփափկացնեն մեզ և կդարձնեն դեպի հարգալից աղոթքը։

Եթե աղոթքը լոկ ջղաձգական աղաղակ է ճգնաժամի պահին, ապա դա չափազանց եսասեր մոտեցում է, և մենք սկսում ենք ընկալել Աստծուն՝ որպես մեր վիճակը բարելավող կամ ծառայությունների գործակալություն, որ պետք է օգնի մեզ միայն դժվարին իրավիճակներում։ Մենք պետք է հիշենք Ամենաբարձրյալին օր ու գիշեր, միշտ, ոչ թե լոկ այն պահերին, երբ մնացած բոլոր աջակցությունները ձախողվում են, և մենք անհապաղ օգնության կարիք ունենք։ Եթե մարդկային կյանքում կա որևէ տարր, որը մեզ հանգեցնում է զարմանահրաշ հաջողության և անգնահատելի արժեք է ներկայացնում մարդկային հոգու համար, դա աղոթքով լի, ակնածալից, անկեղծ հաղորդակցությունն է մեր Երկնային Հոր հետ։

«Տէր, ականջ դիր իմ խօսքերին, եւ միտքդ առ իմ աղաղակը։

Միտքդ դիր իմ աղաղակի ձայնին, ով իմ Թագաւոր եւ իմ Աստուած. որովհետեւ դէպի քեզ եմ աղաչում։

Տէր, առաւօտանց լսիր իմ ձայնը, առաւօտանց պատրաստ կլինիմ քեզ համար ու կսպասեմ։ (Սաղ. Ե.1–3։)

Թերևս այն, ինչի կարիքն այս աշխարհն ունի ամեն բանից առավել, Տիրոջը սպասելն է, ինչպես ասել է Սաղմոսացը, սպասել մեր ուրախության մեջ, ինչպես նաև մեր չարչարանքների մեջ, մեր առատության մեջ, ինչպես նաև մեր կարիքի մեջ։ Մենք պետք է մշտապես սպասենք և ընդունենք Աստծուն որպես ամեն լավ բան տվող և որպես մեր փրկության աղբյուր։ . . .

Մեր հասարակության զգալի մասից աղոթքի, ակնածանքի և երկրպագության հոգին հեռացվել է։ Տղամարդիկ և կանայք զանազան առումներով խելացի են, հետաքրքիր կամ հաջողակ, սակայն լիարժեք կյանքի համար նրանց պակասում է մեկ

կարևորագույն տարր: Նրանք չեն սպասում: Նրանք չեն տալիս խոստումներն արդարությամբ [տես ՎԵՈՒ 59.11]: Նրանց խոսքերը փայլում են, սակայն սուրբ չեն: Նրանց քննարկումները սրամիտ են, սակայն իմաստուն չեն: Լինի դա գրասենյակում, առանձնասենյակում կամ լաբորատորիայում, նրանք ունեն արժանապատվության շատ ցածր մակարդակ, ովքեր ցուցադրում են իրենց սահմանափակ լիազորությունները և ապա գտնում, որ անհրաժեշտ է հայհոյել այդ անսահմանափակ լիազորությունները, որոնք գալիս են վերևից:

Ցավոք, մենք երբեմն տեսնում ենք ակնածանքի այդ պակասը նույնիսկ Եկեղեցում: Երբեմն մենք ներս ենք մտնում մեծ աղմուկով, մտնում և դուրս ենք գալիս ժողովներից անհարգալից ձևով, մինչդեռ այն պետք է լինի աղոթքի և մաքրագործման երկրպագություն: Ակնածանքը երկնային մթնոլորտ է ստեղծում: Աղոթքի միջոցով Հայր Աստծուն արտահայտում ենք մեր հոգում եղածը: Մենք ավելի ենք նմանվում մեր Հորը նրան սպասելով, միշտ նրան հիշելով և մեծապես մտահոգվելով նրա աշխարհով և նրա աշխատանքով:[6]

5

Մենք զարգացնում ենք հոգևոր գիտելիք ստանալու մեր ունակությունը, երբ ժամանակ ենք տրամադրում խորհելու, մտորելու և աղոթելու համար:

Հոգևոր առումով զարգանալը և աստվածային ամենավեհ ազդեցություններին ենթարկվելը հեշտ բան չէ: Դա ժամանակ է պահանջում և հաճախ ներառում է պայքար: Դա տեղի չի ունենում պատահաբար, այլ իրականանում է միայն կանխամտածված ջանքերի, առ Աստված կանչելու և նրա պատվիրանները պահելու միջոցով: . . .

Մարգարե Ջոզեֆ Սմիթը . . . մեզ տվել է հավանաբար ամենապարզ հայտարարությունը այն ամենի մասին, թե ինչ է անհրաժեշտ հոգևոր դառնալու համար, ներառելով նաև ժամանակը և համբերությունը, որոնք մենք պետք է ընդունենք, որ այդ գործընթացի մի մասն են կազմում: [Նա] ասել է. «Մենք համարում ենք, որ Աստված մարդուն ստեղծել է ուղեղով, որը սովորելու կարողություն ունի, և ընդունակությամբ, որը կարող է ավելանալ այն ուշադրությանը և ջանասիրությանը համաչափ, որը տրվում

է երկնքից բանականությանը հաղորդվող լույսին. և որ մարդ որքան մոտենում է կատարելությանը, այնքան մաքրվում են նրա հայացքները և այնքան մեծանում է նրա ուրախությունը, մինչև որ նա հաղթահարում է իր կյանքի չար բաները և կորցնում է մեղք գործելու ամեն ցանկություն, և հին սրբերի նման, հասնում է հավատքի այն աստիճանին, երբ նա պարուրվում է իր Արարչի զորությամբ ու փառքով և հափշտակվում է երկինք՝ Նրա հետ բնակվելու: Այնուամենայնիվ, մենք համարում ենք, որ սա մի կայարան է, որին ոչ ոք չի հասել մեկ ակնթարթում» [*Եկեղեցու Նախապահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 224]:[7]

Մենք պետք է ժամանակ տրամադրենք, որպեսզի նախապատրաստենք մեր մտքերը հոգևոր բաների համար: Հոգևոր ներուժի զարգացումը չի գալիս իշխանությունը շնորհելու հետ: Պետք է լինի ցանկություն, ջանք և անհատական նախապատրաստություն: Այն անշուշտ պահանջում է . . . ծոմապահություն, աղոթք, սուրբ գրությունների ուսումնասիրություն, փորձառություն, խորհրդածություն և արդարակյաց կյանքի սով և ծարավ:

Ես օգտակար եմ գտնում Ամենակարող Աստծո այս խորհուրդները վերանայելը.

«Եթե խնդրես, դու կստանաս հայտնություն հայտնության վրա, գիտություն գիտության վրա, որ կարողանաս իմանալ խորհուրդներն ու խաղաղարար բաները, որոնք բերում են ուրախություն, որոնք բերում են կյանք հավերժական» (ՎևՈ 42.61):

Խնդրեք Հորը՝ իմ անունով, հավատքով հավատալով, որ պիտի ստանաք, և դուք կունենաք Սուրբ Հոգին, որը ցույց է տալիս բոլոր բաները, որոնք նպատակահարմար են մարդկանց զավակների համար» (ՎևՈ 18.18):

«Թող հավերժության հանդիսավոր բաները հանգչեն ձեր մտքերում» (ՎևՈ 43.34):

«Ոչ էլ նախօրոք հոգ արեք, թե ինչ եք ասելու. բայց շարունակ ձեր մտքում գանձեք կյանքի խոսքերը, և հենց նույն պահին ձեզ կտրվի ամեն մարդու համար չափված բաժինը» (ՎևՈ 84.85):

«Փնտրեք ջանասիրաբար, աղոթեք անդադար և եղեք հավատացող, և բոլոր բաները միաժամանակ կգործեն ձեր բարիքի համար, եթե դուք ուղիղ քայլեք և հիշեք ուխտը, որով ուխտ եք կապել միմյանց հետ» (ՎևՈ 90.24):

«Աստված ձեզ գիտելիք կտա իր Սուրբ Հոգու միջոցով, այո, Սուրբ Հոգու անասելի պարգևով, որը հայտնի չի դարձվել աշխարհի սկզբից մինչև հիմա» (ՎևՈւ 121.26)։

Սրանք խոստումներ են, որոնք Տերն անշուշտ կկատարի, եթե մենք նախապատրաստենք մեր անձերը։

Ժամանակ տրամադրեք խորհրդածելու, մտորելու համար և աղոթեք հոգևոր հարցերի վերաբերյալ։[8]

6

Աստված կօգնի մեզ աճել հոգևոր առումով քայլ առ քայլ։

Երբ մենք ձգտում ենք հոգևոր լինել, դժվարություններից մեկը կայանում է նրանում, որ մենք այնպիսի զգացողություն ենք ունենում, որ շատ բան կա անելու, իսկ մենք շատ հարցերում թերանում ենք։ Կատարելությունը մի բան է, որին մեզանից յուրաքանչյուրը դեռ պիտի հասնի. սակայն մենք կարող ենք օգտագործել մեր ուժեղ կողմերը, սկսել այնտեղից, որտեղ գտնվում ենք և երջանկություն փնտրել, որը կարող ենք գտնել Աստծո բաներին հետամուտ լինելով։ Մենք պետք է հիշենք Տիրոջ խորհուրդը.

«Ուստի, մի ձանձրացեք բարին գործելուց, քանզի դուք դնում եք հիմքը մի մեծ գործի։ Եվ փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է։

Ահա, Տերը պահանջում է սիրտն ու պատրաստակամ միտքը. և պատրաստակամն ու հնազանդը կճաշակեն Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին»։ (ՎևՈւ 64.33-34։)

Ինձ համար միշտ քաջալերող է եղել այն, որ Տերն ասել է, որ «պատրաստակամն ու հնազանդը կճաշակեն Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին»։ Մենք բոլորս կարող ենք լինել պատրաստակամ և հնազանդ։ Եթե Տերն ասեր, որ կատարյալները կճաշակեն Սիոնի հողի բարիքն այս վերջին օրերին, ես ենթադրում եմ, որ մեզանից ոմանք կհուսահատվեին և կհանձնվեին։ . . .

Սկսելու վայրն այստեղ է։ Սկսելու ժամանակը հիմա է։ Մենք պետք է առաջ շարժվենք դեպի մեր նպատակը քայլ առ քայլ։ Աստված, ով «ծրագրել է մեր երջանկությունը», կառաջնորդի մեզ ինչպես փոքր երեխաների, և մենք այդ գործընթացի ժամանակ կհասնենք կատարելության։

Մեզանից ոչ մեկը չի հասել կատարելության կամ հոգևոր աճի զագաթնակետին, որը հնարավոր է մահկանացու կյանքում: Յուրաքանչյուր ոք կարող է և պետք է ունենա հոգևոր առաջընթաց: Հիսուս Քրիստոսի ավետարանը այդ հոգևոր աճի աստվածային ծրագիրն է հավերժորեն: Այն ավելին է, քան վարքի օրենսգիրքը: Այն ավելին է, քան կատարյալ հասարակական պատվերը: Այն ավելին է, քան ինքնակառավարման բարելավման և ինքնորոշման մասին լավը մտածելը: Ավետարանը Տեր Հիսուս Քրիստոսի փրկող զորությունն է՝ իր քահանայությամբ և աջակցությամբ և Սուրբ Հոգով: Հավատալով Տեր Հիսուս Քրիստոսին և հնազանդվելով նրա ավետարանին, քայլ առ քայլ կատարելագործվելով մեր ճանապարհին, խնդրելով ամրություն, բարելավելով մեր մոտեցումները և ձգտումները, մենք հաջողությամբ կհայտնվենք Բարի Հովվի հոտում: Դա պահանջում է կարգապահություն, ուսուցում, աշխատանք և ուժ: Բայց, ինչպես ասել է Պողոս Առաքյալը. «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»: (Փիլ. Դ.13:)

Ժամանակակից հայտնությունը տալիս է այս խոստումը. «Ապավինիր այն Հոգուն, որն առաջնորդում է բարիք գործել. այո, արդար գործել, խոնարհ քայլել, արդարությամբ դատել. և դա է իմ Հոգին:

Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ քեզ. Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը կլուսավորի քո միտքը, որն ուրախությունով կլցնի քո հոգին.

Եվ այն ժամանակ դու կիմանաս, կամ դրանով դու կիմանաս բոլոր բաները, ինչ-որ կցանականաս ինձանից, որոնք վերաբերում են արդարության բաներին, հավատքով հավատալով ինձ, որ դու պիտի ստանաս: (ՎևՈւ 11.12–14:)[9]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Բաժին 1-ը կարդալուց հետո խորհեք ժամանակների մասին, երբ դուք երկնային օգնության կարիք եք ունեցել: Ինչպե՞ս է աստվածային օգնության խոստումը դժվարին պահերին օրհնել ձեր կյանքը:

- Բաժին 2-ում ի՞նչ կարող ենք սովորել Ջոզեֆ Սմիթի օրինակից, որը կօգնի մեզ, երբ խառնաշփոթության մեջ լինենք: Ինչպե՞ս կարող ենք ավելի մեծ հոգևոր զգայնություն զարգացնել, ինչպիսին էր Ջոզեֆինը:
- Խորհեք Նախագահ Հանթերի ուսմունքների մասին, թե ինչպես ենք մենք հոգևոր գիտելիք ստանում (տես բաժին 3): Ինչպե՞ս կարող ենք մեծացնել մեր ցանկությունը և ունակությունը՝ հոգևոր գիտելիք ստանալու համար: Ի՞նչ ճանապարհներով է հոգևոր գիտելիքն օգնել ձեզ:
- Ինչո՞ւմ է կայանում վտանգը, եթե ընկալում ենք Աստծուն «որպես մեր վիճակը բարելավող կամ ծառայությունների գործակալություն, որ պետք է օգնի մեզ միայն դժվարին իրավիճակներում»: (Տես բաժին 4:) Ինչպե՞ս է աղոթքն օրհնություն եղել ձեզ համար:
- Բաժին 5-ում Նախագահ Հանթերը սովորեցնում է մեզ, թե ինչպես զարգացնել հոգևորը: Ինչո՞ւ է ջանք անհրաժեշտ հոգևոր ուժ զարգացնելու համար: Ի՞նչ կարող ենք սովորել սուրբ գրություններից, որոնք Նախագահ Հանթերը մեջբերում է այս բաժնում:
- Վերանայեք հոգևոր աճի վերաբերյալ Նախագահ Հանթերի ուսմունքները բաժին 6-ում: Ինչպե՞ս է հոգևոր աճը ձեզ համար եղել քայլ առ քայլ գործընթաց: Ինչպե՞ս կարող են Նախագահ Հանթերի ուսմունքներն այս բաժնում լինել օգտակար, եթե դուք զգում եք, որ թերանում եք ձեր հոգևոր աճի մեջ:

Առնչվող սուրբ գրություններ

Սաղմոս ԻԵ.5, Առակաց Գ.6, 2 Նեփի 32.8–9, Ալմա 5.46, 34.17–27, 37.36–37, ՎևՈւ 8.2–3, 88.63, 112.10, Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.13–17

Օգնություն ուսուցչին

Հրավիրեք դասարանի անդամներին՝ ուսումնասիրել գլուխը, փնտրելով նախադասություններ կամ պարբերություններ, որոնք կարևոր են նրանց համար: Խնդրեք նրանց՝ կիսվել այս նախադասություններով կամ պարբերություններով և բացատրել, թե ինչու են դրանք կարևոր:

Հղումներ

1. Kellene Ricks, "Friend to Friend: From an Interview with Howard W. Hunter, President of the Quorum of the Twelve Apostles," *Friend,* Apr. 1990, 6.
2. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 39-40.
3. "Blessed from on High," *Ensign,* Nov. 1988, 59, 61.
4. "Blessed from on High," 59, -60.
5. "Conference Time," *Ensign,* Nov. 1981, 13.
6. "Hallowed Be Thy Name," *Ensign,* Nov. 1977, 52–53.
7. "Developing Spirituality," *Ensign,* May 1979, 25.
8. *The Teachings of Howard W. Hunter,* 36-37.
9. "Developing Spirituality," 25-26.

«Զոզեֆ Սմիթը ոչ միայն մեծ մարդ էր, այլ ոգեշնչված ծառա էր՝ Աստծո մարգարեն»։

Ջոզեֆ Սմիթ՝ Վերականգման մարգարե

«Ես բերում եմ հանդիսավոր վկայություն Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին որպես Տիրոջ օծյալ ծառա այս վերջին օրերում»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Ենսի Նովելը, ով Հովարդ Վ. Հանթերի հայրական կողմից նախատատերից մեկն էր, տեղափոխվեց Լեպեեր, Միչիգան 1830ականների կեսերին: 1842 թվականին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մի միսիոներ եկավ Լեպեեր Նավուից, Իլլինոյս: Ենսին լսեց նրա ուղերձը, աղոթեց դրա մասին և վկայություն ստացավ, որ նա ուսուցանում էր ճշմարտությունը: Նա գնաց Նավու՝ ավելի շատ բան իմանալու Եկեղեցու մասին, և իր օրագրում նա այս գրառումը կատարեց իր փորձառության մասին:

«Ես գնացի լսելու Մորմոն քարոզիչին [Ջոզեֆ Սմիթին] մեծ զգուշությամբ, հուսալով, որ չեմ խաբվի: Նրա թեման Քրիստոսի երկրորդ գալուստն էր: Ես վկայություն ունեի, որ նա խոսում էր ճշմարտությունը, և որ Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե էր, կանչված և կարգված Աստծո կողմից՝ կատարելու մեծ աշխատանք, որովհետև նա ստեղծել էր ճշմարտությունը, ինչպես ուսուցանվել էր Հիսուս Քրիստոսի կողմից: Ես խնդրեցի, որ ինձ մկրտեն»:[1]

Իր նախատատ Ենսի Նովելի նման Հովարդ Վ. Հանթերը հաստատուն վկայություն ուներ Ջոզեֆ Սմիթի մարգարեական առաքելության վերաբերյալ: Եկեղեցու Նախագահ կանչվելուց երեք շաբաթ հետո, նա ճանապահորդեց Նավու՝ նշելու Ջոզեֆի և Հայրում Սմիթի նահատակության 150ամյակը: Մի ժողովում, որը տեղի ունեցավ Նավուի Տաճարային վայրում, Նախագահ Հանթերն ասաց.

«Այն պատասխանատվությունը, որ ես զգում եմ Մարգարե Ջոզեֆի աշխատանքը պաշտոնապես ստանձնելու կապակցությամբ, լցնում է ինձ վճռականությամբ՝ անելու այն ամենը, ինչ կարող եմ, այն ժամանակի և եղանակի ընթացքում, որն ինձ է տրամադրված: Անկասկած Ջոզեֆը հավատարիմ էր և ճշմարիտ իր ժամանակին և եղանակին: . . . Ես բերում եմ հանդիսավոր վկայություն Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին՝ որպես Տիրոջ օծյալ ծառա՝ այս վերջին Օրերում: Հիսուս Քրիստոսի աստվածայնության և իրականության վկայությանը ես ավելացնում եմ իմ սեփականը:[2]

Այդ օրը, ավելի ուշ, մի ժողովում, որը տեղ էր ունեցել Քարթրեջի բանտում, Նախագահ Հանթերը վկայել է. «Ջոզեֆ Սմիթը, ով տվեց իր կյանքը այս տեղում, այն գործիքն էր, որը Տերն օգտագործեց՝ վերականգնելու Իր ավետարանի լրիվությունը և Իր քահանայության իշխանությունը»:[2]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Հայր Աստված և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին՝ սկսելու Վերականգնումը:

Շատ անգամներ է ավետարանը տրվել աշխարհին մարգարեների միջոցով և ամեն անգամ այն կորել [է] անհնազանդության պատճառով: 1820թ. լռությունը խախտվեց, և Տերը նորից հայտնվեց մարգարեին: Մարգարե Ջոզեֆ Սմիթը, կարողացավ վկայել իր սեփական դրական գիտելիքով, որ Աստված ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն է, Աստծո Որդին՝ Հարություն առած Էակ՝ Հորից առանձին և ակնհայտ: Նա չվկայեց այն մասին, ինչին նա հավատում էր, կամ ինչ նա և մյուսները կարծում էին, կամ ենթադրում, այլ այն, ինչ նա գիտեր: Այս գիտելիքը տրվեց նրան, որովհետև Հայր Աստված և Որդին հայտնվեցին նրան անձնապես և խոսեցին նրա հետ:[4]

Աստված . . . հայտնվեց նրան [Ջոզեֆ Սմիթին]՝ որպես անհատական էակ: Հետագայում Հայրը և Որդին ցույց տվեցին անհերքելի ճշմարտությունը, որ նրանք առանձին և որոշակի անձնավորություններ են: Իսկապես, Հոր և Որդու փոխհարաբերությունը վերահաստատվեց մարգարե տղայի հետ՝

աստվածային ծանոթացմամբ. «Սա Իմ սիրելի Որդին է: Լսի՛ր Նրան»: [Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17].[5]

Երբ տղամարդիկ լսեցին, որ երիտասարդ Ջոզեֆ Սմիթը պնդում էր, որ Ինքը Աստվածն էր հայտնվել տղային, նրանք ծաղրեցին նրան և հեռու շրջվեցին նրանից, ճիշտ, ինչպես Քրիստոնեական ժամանակաշրջանում իմաստուն և կարողունակ մարդիկ Աթենքում հեռու շրջվեցին մի եզակի մարդուց, որը ծառայում էր նրանց մեջ: Սակայն փաստը մնում է, որ Պողոսը այն վաղ փորձառությունից, միակ մարդն էր գիտության այդ մեծ քաղաքում, ով գիտեր, որ մարդը կարող է անցնել մահվան դարպասների միջով և ապրել: Նա միակ մարդն էր Աթենքում, ով կարող էր հստակորեն զանազանել տարբերությունը կռապաշտության ձևականության և միակ ճշմարիտ և կենդանի Աստծո սրտառուչ երկրպագության միջև: [Տես Գործք ԺԷ.19–20, 22–23:][6]

Նրանք, ովքեր հերքեցին Փրկչին, երբ Նա երկիր եկավ հայտարարությամբ, որ Նա Աստծո Որդին էր, ասացին Նրա մասին. «Չէ՞ որ սա հիւսան որդին է»: (Մատթեոս ԺԳ.55:) Երբ Ջոզեֆը հայտարարեց, որ նա տեսիլք էր տեսել և տեսել էր Հորը և Որդուն, հարց առաջացավ հարևանների, քահանաների և քաղաքացիների մտքերում և շուրթերին. «Չէ որ սա ագարակատիրոջ որդին է»: Քրիստոսը հալածվեց և մահվան մատնվեց, բայց ժամանակն էր նրա պաշտպանը Այն, ինչ պատահեց հյուսնի որդու հետ, նույնը պատահեց ագարակատիրոջ որդու հետ:[7]

Ջոզեֆ Սմիթը ոչ միայն մեծ մարդ էր, այլ նա Տիրոջ ոգեշնչված ծառան էր՝ Աստծո մարգարեն: Նրա մեծությունը կայանում էր մեկ բանում՝ իր հայտարարության ճշմարտացիության մեջ. որ նա տեսել էր Հորը և Որդուն և, որ նա արձագանքեց այդ աստվածային հայտնության իրականությանը: . . .

Ես վկայում եմ . . . որ Հայրը և Որդին իսկապես հայտնվեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթին՝ սկսելու վերջին օրերի այս մեծ աշխատանքի առաջընթացը մեր օրերում:

Ես վկայում եմ, որ մարգարե պատանին, ով այնքան շատ ուղիներով մնում է գլխավոր հրաշքն . . . այս Եկեղեցու փորձառության, կենդանի ապացույց է այն բանի, որ Աստծո ձեռքերով և աշխարհի Փրկչի առաջնորդության ներքո, թույլ և պարզ բաներն առաջ կգան և կջախջախեն հզորներին և ուժեղներին:[8]

2

Հիսուս Քրիստոսը վերահաստատել է Իր Եկեղեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:

1830 թվականի ապրիլին, . . . տղամարդկանց և կանանց մի խումբ, գործելով հնազանդությամբ Աստծո պատվիրաններին, հավաքվեցին Պր. Պիտեր Ուիթմեր [Ավ.]ի տանը՝ կազմավորելու Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: . . . Նրանցից ոչ մեկին հատուկ կրթության կամ նշանակալի ղեկավարության հետ կապված որևէ հատուկ պահանջ չներկայացվեց : Նրանք պատվավոր մարդիկ էին և հարգված քաղաքացիներ, բայց փաստորեն ճանաչված չէին իրենց իսկ անմիջական հարևանությունից դուրս: . . .

Այդ խոնարհ, սովորական մարդիկ հավաքվեցին, որովհետև նրանցից մեկը՝Ջոզեֆ Սմիթ Կրտ.ը՝ մի շատ երիտասարդ տղա, ներկայացրել էր մի շատ ուշագրավ պնդում: Նա հայտարարել էր նրանց և բոլոր մյուսներին, ովքեր կամեցել էին լսել, որ նա խորը և կրկնվող երկնային հաղորդակցություններ էր ստացել՝ ներառյալ Հայր Աստծո և նրա Սիրելի Որդու, Հիսուս Քրիստոսի վերաբերյալ մի բաց տեսիլք: Որպես այդ հայտնության փորձառությունների արդյունք՝ Ջոզեֆ Սմիթն արդեն հրատարակել էր Մորմոնի Գիրքը՝ մի հիշատակարան Ամերիկայի հնադարյան բնակիչների հետ Քրիստոսի գործերի մասին: Այնուհետև Տերը պատվիրեց այս երիտասարդին՝ այդ ժամանակ ընդամենը քսանչորս տարեկան, վերահաստատել Եկեղեցին, որը գոյություն էր ունեցել Նոր Կտակարանի ժամանակներում, և որը իր վերականգված մաքրությամբ պետք է կրկին անվանվեր իր գլխավոր անկյունաքարի և հավերժական գլխավորի՝ Տեր Հիսուս Քրիստոսի անունով :

Այսպիսով, խոնարհաբար, բայց նշանակալիորեն բացվեց առաջին տեսարանը Եկեղեցու մեծ դրամայում, որն ի վերջո կազդեր ոչ միայն այդ մարդկանց սերնդի վրա, այլ ողջ մարդկային ընտանիքի վրա: . . . Համեստ սկիզբ, այո, բայց պնդումը, որ Աստված խոսել էր, թե Քրիստոսի Եկեղեցին կրկին կազմավորվել էր, և նրա վարդապետությունները վերահաստատված էին աստվածային հայտնությամբ, ամենանշանավոր հայտարարությունն էր, որ արվել էր աշխարհին, անձնապես Փրկչի օրերից

սկսած, երբ Նա քայլեց Հուդայի արահետներով և Գալիլեայի բլուրներով։[9]

[Ջոզեֆ Սմիթի ստացած] հայտնության մասը հրահանգն էր՝ վերահաստատելու ճշմարիտ և կենդանի Եկեղեցին, որը վերականգվեց այս ներկա ժամանակներում, ինչպես այն գոյություն էր ունեցել Փրկչի սեփական մահկանացու ծառայության օրերում։ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին «կազմավորվել է համաձայն պատվիրանների և հայտնությունների, որոնք մեզ են տրվել Նրա կողմից այս վերջին օրերում, ինչպես նաև համաձայն Եկեղեցու կարգի, ինչպես արձանագրված է Նոր Կտակարանում»(*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 138)։ . . .

. . . Նրանք, ովքեր մկրտվեցին Եկեղեցում 1830 թվականի ապրիլի վեցին, հավատում էին անհատական Աստծո գոյությանը, նրանք հավատում էին, որ Նրա իրականությունը, Նրա Որդի Հիսուս Քրիստոսի իրականությունը, կազմում են այն հավերժական հիմքը, որի վրա կառուցված է այս եկեղեցին։[10]

[Ջոզեֆ Սմիթի] և հետագա իրադարձությունների միջոցով քահանայությունը և ավետարանը իր լրիվությամբ մեկ անգամ ևս վերականգվեցին երկրի վրա, այլևս երբեք կրկին չվերցվելու։ [տես ՎևՈւ 65.2]։ Քրիստոսի Եկեղեցին, Աստծո արքայությունը վերահաստատված էր երկրի վրա և կանխորոշված՝ համաձայն սուրբ գրքերի, առաջ գնալու՝ մինչև որ լցնի ողջ երկիրը [տես Դանիել Բ.35]։[11]

3

Ջոզեֆ Սմիթը մարգարե էր, տեսանող և հայտնող։

Մարգարե Ջոզեֆ Սմիթի աշխարհ գալը մարգարեության իրականացումն էր, որն ասվել էր շատ դարեր առաջ Հովսեփի կողմից, ում վաճառել էին Եգիպտոս։

Քանզի Հովսեփն իսկապես վկայեց՝ ասելով. Տերը՝ իմ Աստվածը, մի տեսանող կբարձրացնի, որը կլինի մի ընտրյալ տեսանող՝ իմ երանքի պտղի համար։ . . . Եվ նա կկոչվի իմ անվամբ. և դա կլինի իր հոր անվամբ»։(2 Նեփի 3.6, 15)։

Ջոզեֆ Սմիթ Կրտ.ը անվանվեց հնադարյան Հովսեփի անունով, ով գերի տարվեց Եգիպտոս և նաև իր հոր անունով՝ Ջոզեֆ

Մարգարե Ջոզեֆ Սմիթի կյանքն «առաջնորդվում էր հայտնությամբ»:

Սմիթ Ավ.ի, այսպիսով իրականացնելով այս մարգարեությունը: Նա հայտնի է որպես Մարգարե Ջոզեֆ Սմիթ և կոչվում է «Տեսանող Ջոզեֆ»: Նա հաճախ նշվում է որպես «մարգարե, տեսանող և հայտնող»:

«Մարգարե» և «Տեսանող» և «Հայտնող» բառերը հաճախ օգտագործվում են միմյանց փոխարինելով և համարվում են շատերի կողմից միևնույն բանը: Այնուամենայնիվ դրանք նույնը չեն և այդ երեք բառերն ունեն առանձին և հստակ իմաստներ:

[Երեց] Ջոն Ա. Վիդսոուն սահմանում է մարգարե բառը որպես ուսուցիչ, մեկը, ով տարածում է ճշմարտություն: Նա ուսուցանում է ճշմարտությունը՝ ինչպես այն հայտնի է դարձվել Տիրոջ

կողմից մարդուն և ոգեշնչմամբ է բացատրում այն մարդկանց հասկացողության համար: «Մարգարե» բառը հաճախ օգտագործվում է բնութագրելու մեկին, ով հայտնություն և ուղղություն է ստանում Տիրոջից: Շատերը կարծում են, որ մարգարեն հիմնականում ապագա իրադարձությունները և պատահարները կանխագուշակող է, բայց սա միայն մարգարեի բազմաթիվ գործառույթներից մեկն է: Նա Տիրոջ խոսնակն է:

Տեսանողը նա է, ով տեսնում է: Սա չի նշանակում, որ նա տեսնում է իր բնական աչքերով, այլ ավելի շուտ իր հոգևոր աչքերով: Տեսանելու պարգևը գերբնական օժտում է: Ջոզեֆը նման էր Մովսեսին՝ հնադարյան տեսանողին, և Մովսեսը տեսավ Աստծուն դեմ առ դեմ, բայց նա բացատրում է, թե ինչպես նա տեսավ Նրան հետևյալ բառերով .

Բայց այժմ իմ սեփական աչքերը տեսան Աստծուն. բայց ոչ իմ բնական, այլ իմ հոգևոր աչքերը, քանզի իմ բնական աչքերը չէին կարող տեսնել. քանզի ես կչորանայի և կմահանայի նրա ներկայության մեջ. բայց նրա փառքն ինձ վրա էր. և ես տեսա նրա երեսը, քանզի ես կերպարանափոխվեցի նրա առաջ:(Մովսես 1.11):

Մենք չպետք է ենթադրենք, որ հոգևոր առումով տեսնելը տառացիորեն տեսնել չէ: Այդպիսի տեսողությունը պատկերացում չէ կամ երևակայություն: Առարկան փաստորեն տեսնում են, բայց ոչ բնական աչքերով: Մեզանից յուրաքանչյուրն ունի հոգևոր աչքեր, որոնք մեր բնական աչքերի մասն են կազմում: Սկզբում մենք ստեղծվել ենք ոգեղեն և ապա մեր մարմիններն են ստեղծվել՝ որպես ծածկույթ մեր ոգիների համար: Մեզ ասվել է, որ մենք մեր առաջին վիճակում քայլում էինք տեսողությամբ: Սա հոգևոր աչքերի տեսողության միջոցով էր, որովհետև մեզ դեռ տրված չէին մարմիններ բնական աչքերով: Բոլոր մարդիկ ունեն հոգևոր աչքեր, բայց միշտ չէ, որ արտոնություն ունեն օգտագործելու այդպիսի տեսողությունը, մինչև չկենդանացվեն Տիրոջ Հոգով: . . .

Սուրբ Հոգու զորությամբ որոշ մարդիկ , ովքեր ուղարկվում են երկիր այդ նպատակով, կարողանում են տեսնել և նկատել բաները, որոնք վերաբերում են Աստծուն: Տեսանողը մեկն է, ով տեսնում է և գիտի այն բաները, որոնք անցյալում են, և նաև այն բաները, որոնք պիտի գան, և նրանց միջոցով պիտի բոլոր բաները հայտնի դառնան (տես Մոսիա 8.15–17): Կարճ ասած, նա է այն մեկը, ով տեսնում է, ով քայլում է Տիրոջ լույսով՝ հոգևոր

աչքերը բաց և կենդանացված Սուրբ Հոգու զորությամբ: Մովսեսը, Սամուելը, Եզեկիան և շատ ուրիշներ տեսանողներ էին, որովհետև նրանք արտոնված էին ունենալ ավելի մոտիկից տեսողություն աստվածային փառքի և զորության, քան մյուս մահկանացուներն ունեն:

Հայտնությունը հայտնի է դարձնում ինչ որ բան, որը հայտնի չէ, կամ որը նախկինում հայտնի է եղել մարդկանց, բայց վերցվել է նրանց հիշողությունից: Հայտնությունը միշտ կապ ունի ճշմարտության հետ և այն միշտ գալիս է հավանության աստվածային կնիքով: Հայտնությունը ստանում են տարբեր ձևերով, բայց այն միշտ ենթադրում է, որ հայտնողն այնպես է ապրել և իրեն պահել, որ համահունչ լինի կամ ներդաշնակության մեջ լինի հայտնության աստվածային ոգու հետ՝ ճշմարտության ոգու հետ և հետևաբար կարողանա ստանալ աստվածային ուղերձներ:

Ամփոփելով, մենք կարող ենք ասել, որ մարգարեն աստվածային ճշմարտության ուսուցիչ է, տեսանող բառի ողջ իմաստով: [Ջոզեֆ Սմիթի] հոգևոր տեսողության զգացումը կենդանացվել էր նշանակալի չափով և հոգևոր շունչ տրվել Սուրբ Հոգու կողմից: Այդ պարգևի շնորհիվ էր, որ նա տեսավ Հորը և Որդուն, երբ գնաց անտառ աղոթելու: Երբ մենք հետևում ենք նրա կյանքին և գործերին այդ տեսակետից ելնելով, մենք գտնում ենք, որ նա չէր փորձում առաջանալ իր սեփական ուժերով: Նա կախված էր Տիրոջից և այնտեղից էր ստանում իր օգնությունն ու հրահանգավորումը: Նրա կյանքն առաջնորդվում էր հայտնության միջոցով:[12]

4

Փառք տանք մարդուն, ով տեսավ Եհովային:

Երբ մենք երգում ենք Ջոզեֆ Սմիթի մասին «Փառք տանք մարդուն» (*Հիմներ,* 1999, էջ 50), մենք այնքան շատ գովելի բաներ ենք հիշում նրա մասին:

Մենք գովաբանում ենք նրան ոչ միայն Եհովայի, այլ նաև երկնային այլ անձնավորությունների հետ իր հաղորդակցվելու ունակության համար: Այնքան շատերն այցելեցին, բանալիներ տվեցին և ուսուցանեցին այդ «ընտրյալ տեսանողին», որը բարձրացվել էր վերջին օրերին(2 Նեփի 3.67): Երբ Հայր Սմիթն օրհնեց երիտասարդ Ջոզեֆին 1834 թվականին, նա հայտարարեց, որ հնադարյան Հովսեփը տեսավ Եգիպտոսում այս վերջին

օրերի տեսանողին: Հնադարյան Հովսեփը լաց եղավ, երբ նա հասկացավ, թե ինչպես Մարգարե Ջոզեֆի աշխատանքը կօրհներ վաղ օրերի Հովսեփի բազում ժառանգներին:

Մենք ևս գովաբանում ենք Ջոզեֆ Սմիթին նրա ջանասիրության, թարգմանելու և հարյուրավոր սուրբ գրության էջեր հայտնությամբ ստանալու նրա կարողության համար: Նրա միջոցով էր գալիս հայտնությունը: Ըստ հաշվարկների՝ նրա միջոցով ավելի շատ սուրբ գրության սքանչելի էջեր են հայտնվել, քան որևէ այլ մարդու միջոցով պատմության մեջ:

Մենք գովաբանում ենք Ջոզեֆին ոչ միայն դիմանալու նրա կարողության համար, այլ «լավ դիմանալու համար» (ՎևՈ 121.8): Վաղ օրերին, երբ նա տղա էր, կատարվեց մի ցավոտ վիրահատություն նրա ոտքի վրա, առանց որի նա չէր կարողանա կատարել Սիոնի Ճամբարի հետագա դժվարին երթը՝ Օհայոյից մինչև Միսսուրի: Այդ երթի ընթացքում Ջոզեֆը «ժամանակի մեծ մասը քայլում էր և ձեռք բերեց բշտիկապատ, արյունոտված և ցավող ոտքերի մի լրիվ բաժին» [*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ,* 287]: Մենք նմանապես գովաբանում ենք նրան և Էմմային իրենց կենսաբանական և որդեգրած վեց երեխաների ցավալի վաղաժամ մահվան կորուստը համբերությամբ տանելու համար: Ծնողները, ովքեր նույնիսկ մեկ երեխա են կորցրել, լցվում են կարեկցանքով:

Մենք գովաբանում ենք Ջոզեֆին հալածանքին դիմանալու կարողության համար՝ ներառյալ երկար և խիստ զրկանքները Լիբերթիի բանտում: Շատերի համար ամեն ինչ այնքան անհույս էր թվում այն ժամանակ: Սակայն երկնքի Տերը վերահավաստիացրեց բանտարկված Ջոզեֆին, որ «աշխարհի ծայրերը գիտելիք կփնտրեն քո անվան մասին» (ՎևՈ 122.1): Մենք ապրում ենք այնպիսի օրերում, երբ աճող հետաքրքրություն կա Ջոզեֆ Սմիթի և վերականգված ավետարանի մասին:

Ջոզեֆը վաղուց է կատարել իր ցանկությունը, որ կարողանար քաշով հավասարվել՝ հավասարակշռելով» հների հետ:[*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ,* 230]: Մենք կարող ենք այժմ երգել, թե ինչպես Ջոզեֆը «թագադրվեց հին մարգարեների շարքում» (*Hymns,* 1985, no. 27):

Մենք գովաբանում ենք Ջոզեֆին շարունակական և կրկնվող դավաճանություններին և հիասթափություններին դիմանալու համար: Այսպիսով նա Քարթեջ գնաց «ինչպես գառը մորթվելու», «հանգիստ ինչպես ամառային առավոտը», և «խիղճը մաքուր . . . բոլոր մարդկանց առաջ» (ՎևՈ 135.4): Նա չգնաց Քարթեջ դառնացած: Նա չգնաց Քարթեջ բողոքելով: Տոկալու ինչպիսի~ սքանչելի կարողություն:

Ջոզեֆը գիտեր, թե որ ուղղությամբ էր նայում: Այդ ուղին դեպի Փրկիչ Հիսուս Քրիստոսն էր, ում նա լսում էր այն ժամանակից ի վեր, ինչ Երկնային Հայրն առաջին անգամ հրահանգեց երիտասարդ Ջոզեֆին՝ ասելով. «Սա է Իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան»: [Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17].[13]

5

Մարգարե Ջոզեֆ Սմիթի կյանքն ու առաքելությունն օգնում է մեզ շրջվել դեպի այն ուղիները, որոնք տանում են դեպի հավերժական կյանք:

Ես երախտապարտ եմ այս մարդու համար, նրա ուսմունքների համար, նրա հայտնությունների համար, նրա համար, ինչ թողել է մեզ , քանզի նրա միջոցով էր, որ ավետարանը վերականգվեց երկրի վրա: Կարծում եմ ողջ պատմության մեջ չկա ավելի գեղեցիկ պատմություն, քան պարզ, գրավիչ պատմությունը մի պատանու մասին, ով գնաց իր տան մտակայքում գտնվող անտառը՝ ծնկի գալով աղոթքով և ընդունելով երկնային այցելուների:

Այժմ մենք նայում ենք նրա կյանքին և նրա աշխատանքներին: Շատերն էին հետաքրքրվում դրանցով՝ այդ բոլորի ետևում գտնելու գրված խոսքի առեղծվածը, բայց չկա առեղծված: . . . Կար պարզ հավատք՝ երիտասարդ տղայի հավատքը, ով պետք է ուսուցանվեր Աստծո հետ կապված բաներում: Եվ երբ ժամանակն անցնում էր, այս երիտասարդ տղան՝ առանց կրթական նվաճումների և առանց կրթության, կրթվեց Տիրոջ կողմից այն բաների համար, որոնք պետք է գային:

Այսպիսով, մեզ տրված է բանականություն և խելք: Մենք ընդամենը պետք է կրթենք և զարգացնենք այն՝ ինչպես Տերն է հրահանգել Ջոզեֆին և ունենանք պարզ հավատք՝ ինչպես նա ուներ և հոժարակամ լինենք՝ հետևելու հասարակ հրահանգներին:

Երբ մենք այդպես ենք անում և հետևում այն ուղուն, որ Տերն է կամենում, որ մենք հետևենք և սովորենք դասերը, որ Նա է կամենում, որ մենք սովորենք, մենք հայտնաբերում ենք, որ մեր կյանքերը մաքրվում են այն ամենից, ինչը հակառակ է Աստծո նպատակներին, և դա այդպես էր Ջոզեֆի հետ: Նա դարձավ կատարյալին ավելի մոտ մի մարդ, քանի որ նա մաքրել էր իր հոգին և իր միտքը, Տիրոջը մոտիկ էր ապրում և կարող էր խոսել Նրա հետ, լսել Նրա խոսելը այն բաների մասին, որը նա թողել է մեզ համար իր հայտնությունների միջոցով: Իր հոգևոր աչքերի միջոցով նա կարողացել է տեսնել այն, ինչն անցել է, և այն՝ ինչ առջևում է, և մենք ունենք ապացույց այն բաների ճշմարտացիության մասին, որոնք նա տեսել է: . . .

Ես երախտապարտ եմ Եկեղեցու իմ անդամակցության համար, և իմ վկայությունը դրա աստվածայնության մասին կախված է այն պատանու պարզ պատմությունից, ով ծնկի իջավ ծառերի ներքո և ընդունեց երկնային այցելուների՝ ոչ թե մեկ Աստծո, այլ երկու առանձին անհատական անձնավորությունների՝ Հորը և Որդուն, կրկին հայտնելով աշխարհին Աստվածագլխի անձնավորությունների մասին: Իմ հավատքն ու վկայությունը կախված է այս պարզ պատմությունից, քանի որ, եթե դա ճշմարիտ չէ, մորմոնականությունը փլուզվում է: Եթե դա ճշմարիտ է, իսկ ես վկայություն եմ բերում, որ ճշմարիտ է, դա միակ մեծագույն իրադարձությունն է ողջ պատմության մեջ:

Իմ աղոթքն է, [որ] երբ մենք հարգանքի տուրք ենք մատուցում այս մեծ մարգարեին և մտածում նրա կյանքի մասին, որ մենք երախտագիտություն ունենանք մեր սրտերում այն բաների համար, որոնք եկել են մեր կյանք նրա տեսանող լինելու և մեզ տրված նրա հայտնությունների շնորհիվ՝ ընտիր տեսանող, բարձրացված Տիրոջ կողմից՝ առաջնորդելու մեզ այս վերջին օրերում, որ մենք կարողանանք շրջել մեր ոտնահետքերը՝ ետ դեպի այդ ուղիները, որոնք կառաջնորդեն մեզ դեպի վեհացում և հավերժական կյանք:[14]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Խորհեք Ջոզեֆ Սմիթի առաջին տեսիլքի վերաբերյալ Նախագահ Հանթերի ուսմունքների մասին(տես բաժին 1)։ Ինչպե՞ս է Առաջին Տեսիլքի ձեր վկայությունն ազդել ձեզ վրա։ Ինչո՞ւ է կարևոր Վերջին Օրերի Սրբերի համար ունենալ վկայություն, որ Ջոզեֆ Սմիթը եղել է Աստծո մարգարեն։
- Որո՞նք են ձեր տպավորությունները, երբ վերանայում եք Նախագահ Հանթերի ուսմունքները Եկեղեցու կազմավորման վերաբերյալ։ (Տես բաժին 2)։ Ի՞նչ օրհնություններ են եկել ձեզ և ձեր ընտանիքին Հիսուս Քրիստոսի վերականգված Եկեղեցու միջոցով։
- Ինչո՞ւ է օգտակար *մարգարե, տեսանող,* և *հայտնող*տիտղոսների իմաստները հասկանալը։ (Տես բաժին 3)։ Ինչպե՞ս եք օրհնվել մարգարեների, տեսանողների և հայտնողների կողմից։
- Բաժին 4ում Նախագահ Հանթերը ընդգծում է Ջոզեֆ Սմիթին գովաբանելու որոշ պատճառներ։ Ինչպե՞ս են այս ուսմունքները մեծացնում մեր երախտագիտությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի հանդեպ։ Ի՞նչ կարող ենք սովորել Ջոզեֆ Սմիթի օրինակից։
- Վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները Ջոզեֆ Սմիթի հավատքի, հոգևոր կրթության և հնազանդության վերաբերյալ (տես բաժին 5)։ Ինչքանո՞վեն այս ուսմունքները կիրառելի մեզ համար։ Ինչպե՞ս կարող ենք մենք երախտագիտություն ցույց տալ այն օրհնությունների համար, որոնք եկել են մեզ Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով։

Առնչվող սուրբ գրություններ

Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց Ծ.25–33,Դանիել Բ.44,Եփեսացիս Բ.19–22, Դ.11–14, ՎևՈւ 1.17–32, 5:9–10, 122.1–2, 135,Ջոզեֆ Սմիթ—Պատմություն

Օգնություն ուսումնասիրողին

«Երբ զգաք ուրախությունը, որը գալիս է ավետարանը հասկանալուց, դուք կկամենաք կիրառել, ինչ սովորում եք։ Ձգտեք ապրել ներդաշնակության մեջ ձեր հասկացողության հետ։

Այդպես անելը կզորացնի ձեր հավատքը, գիտելիքը և վկայությունը» (*Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 19)։

Հղումներ

1. In Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 7; see also page 6.
2. "The Temple of Nauvoo," *Ensign,* Sept. 1994, 63–64.
3. "Come to the God of All Truth," *Ensign,* Sept. 1994, 73.
4. In Conference Report, Oct. 1963, 100–101.
5. "The Sixth Day of April, 1830," *Ensign,* May 1991, 64.
6. "The Sixth Day of April, 1830," 63.
7. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 228.
8. "The Sixth Day of April, 1830," 64–65.
9. "The Sixth Day of April, 1830," 63.
10. "The Sixth Day of April, 1830," 64.
11. In Conference Report, Oct. 1963, 101.
12. "Joseph Smith the Seer," in *The Annual Joseph Smith Memorial Sermons,* 2 vols. (1966), 2:193–94.
13. "The Temple of Nauvoo," 63–64.
14. "Joseph Smith the Seer," 2:197–98.

Փրկչի դատարկ գերեզմանը «հայտարարում է ողջ աշխարհին. «Այստեղ չէ, այլ յարութիւն առաւ»» (Ղուկաս ԻԴ.6):

Հիսուս Քրիստոսի Քավությունը և Հարությունը

«Մենք կբարձրանանք մահկանացու մահից՝ ունենալու հավիտենական կյանք՝ Փրկչի քավող զոհաբերության և հարության շնորհիվ»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

1934թ. մարտին ծնվեց Հովարդ և Քլեյր Հանթերների առաջին երեխան. մի որդի, ում նրանք անվանեցին Հովարդ Վիլյամ Հանթեր կրտսեր, իսկ կոչում էին Բիլլի: Ամռանը նրանք նկատեցին, որ Բիլլին կարծես թմրած լիներ: Բժիշկները նրա մոտ ախտորոշեցին սակավարյունություն և Հովարդը երկու անգամ արյուն տվեց փոխներարկումների համար, սակայն Բիլլիի վիճակը չլավացավ: Հետագա անալիզներից պարզվեց, որ առկա էր ծանր աղիքային խնդիր, որի պատճառով Բիլլը արյուն էր կորցնում: Բժիշկները վիրահատություն կատարեցին, որի ընթացքում Հովարդը պառկած էր իր որդու կողքին՝ արյուն տալու համար, սակայն արդյունքները քաջալերող չէին: Երեք օր անց՝ 1934 թվականի հոկտեմբերի 11-ին, փոքրիկ Բիլլին լուռ մահացավ, մինչ նրա ծնողները նստած էին նրա անկողնու կողքին: «Մենք վշտից մտատանջ և ընդարմացած էինք, երբ գիշերը դուրս եկանք հիվանդանոցից», գրել է Հովարդը:[1]

Բիլլի մահվան և մյուս սիրելիների մահվան փորձառությունների ընթացքում Նախագահ Հանթերին օգնեց Փրկչի Քավության և Հարության իր վկայությունը: «Մենք խորապես համոզված ենք, որ [Քավությունը] իրականություն է,- վկայել է նա,- ոչինչ ավելի կարևոր չէ փրկության աստվածային ծրագրում, քան Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերությունը: Մենք հավատում ենք, որ փրկությունը գալիս է քավության շնորհիվ: Առանց դրա արարման ողջ ծրագիրը ոչինչ կդառնա: . . . Առանց այս քավող զոհաբերության ժամանակավոր մահը վերջը կլիներ և չէր լինի

հարություն և նպատակ մեր հոգևոր կյանքում: Չէր լինի հավերժական կյանքի հույս»:[2]

Ապրիլի գերագույն համաժողովներին, որոնք տեղի են ունենում մոտավորապես Զատկի տոների ժամանակ, Նախագահ Հանթերը հաճախ խոսել է Հիսուս Քրիստոսի Հարության մասին: 1983 թվականի ապրիլի գերագույն համաժողովին նա ասել է.

«Զատկի այս տոներին ես խիստ զգում եմ Փրկչի հարության իրականության մասին վկայելու իմ հանձնարարության կարևորությունը: Իմ եղբայրներ և քույրեր, Աստված կա երկնքում, ով սիրում և հոգ է տանում ձեզ և ինձ համար: Մենք ունենք Երկնային Հայր, ով ուղարկեց իր հոգեղեն զավակներից Անդրանիկին՝ մարմնում իր Միածնին՝ լինելու աշխարհիկ օրինակ մեզ համար, իր վրա վերցնելու աշխարհի մեղքերը և, ի վերջո, խաչվելու աշխարհի մեղքերի համար և հարություն առնելու: . . .

Դա իսկապես գեղեցիկ ուղերձ է՝ կյանք է լինելու մահից հետո. մենք կարող ենք վերադառնալ՝ կրկին ապրելու մեր Երկնային Հոր հետ, այն զոհաբերության շնորհիվ, որը Փրկիչն է կատարել մեզ համար և մեր իսկ ապաշխարության և պատվիրանների հնազանդվելու շնորհիվ:

Զատկի առավոտի փառահեղ լուսաբացին, երբ Քրիստոնյա աշխարհի մտքերը մի քանի անցողիկ պահերի դառնում են դեպի Հիսուսի հարությունը, եկեք մենք երախտագիտություն հայտնենք մեր Երկնային Հորը փրկության մեծ ծրագրի համար, որը նախապատրաստվել է մեզ համար»:[3]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Քավությունը սիրո ամենամեծ արարքն է՝ գործված մեր Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի կողմից:

Հիսուս Քրիստոսի Քավությունը նախասահմանված հանձնարարություն էր՝ տրված մեր Երկնային Հոր կողմից՝ փրկելու իր զավակներին նրանց ընկած վիճակից հետո: Դա սիրո արարք էր, գործված մեր Երկնային Հոր կողմից՝ թույլ տալու իր Միածնին՝ կատարելու քավող զոհաբերություն: Եվ դա սիրո

ամենամեծ արարքն էր, գործված նրա Սիրելի Որդու կողմից՝ իրականացնելու Քավությունը։

Ես բազմաթիվ առիթներով կանգնել եմ Գեթսեմանի պարտեզում։ Ես խորհել եմ իմ մտքում Փրկչի տառապանքների, ցավի մասին, այն ցավի, որը նա զգացել էր, երբ մեր Երկնային Հայրը թույլ տվեց նրան, մեզ համար անըմբռնելի ձևով, իր վրա վերցնել ողջ մարդկության ցավն ու մեղքերը։ Իմ հոգին լցվում էր ցավով, երբ ես մտածում էի մարդկության համար նրա կատարած մեծ զոհաբերության մասին։

Ես կանգնել եմ Գողգոթայի՝ գանգի տեղի ստորոտում, և խորհել խաչելության նվաստացման մասին, որը հանգեցրեց մեր Փրկչի ֆիզիկական մահվանը, որը սակայն իրականացրեց նրա և ողջ մարդկության անմահությունը։ Եվ կրկին իմ հոգին ճնշվել է։

Եվ ես կանգնել եմ պարտեզի գերեզմանի առջև և պատկերացրել եմ հարության այն փառահեղ օրը, երբ Փրկիչը դուրս է եկել գերեզմանից կենդանի, հարություն առած, անմահ։ Այդ մտորումների մեջ իմ սիրտը լցվել է ուրախությամբ։

Այս փորձառությունների շնորհիվ ես զգացել եմ, որ պետք է դուրս թափեմ իմ հոգին զոհունակությամբ և երախտագիտությամբ առ մեր Երկնային Հայրը, այն սիրո համար, որ նա և նրա Որդին տվել են մեզ փառահեղ քավող զոհաբերության միջոցով։ Չարլզ Գաբրիելի խոսքերով ասած՝ «Հիսուսի մեծ սիրուց ես մնում եմ զարմացած, շփոթված շնորհներից, որ տալիս է ինձ սրտանց։ Դողում եմ այն մտքից, որ խաչվեց նա ինձ համար, որ ինձ՝ մեղավորիս համար մեռավ տանջահար։ Հրաշալի է, որ հոգում է իմ մասին կյանքը տալու չափ։ Հրաշալի, հոյակապ է, հոյակապ»։ . . .

Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը, իմ եղբայրներ և քույրեր, որ մեր Երկնային Հայրն աշխարհ ուղարկեց իր սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, իրագործելու պայմանները, որոնց հիման վրա իրականանալու էր փրկության ծրագիրը։ Քավությունը ներկայացնում է նրա մեծ սերը մեր հանդեպ։[4]

2

Փրկիչն Իր վրա վերցրեց մեր բոլոր մեղքերը, թուլությունները, վիշտը և ցավը:

Երբ նրանք հանդիպեցին նշելու Զատիկը, Հիսուսը և նրա Առաքյալները ճաշակեցին հաղորդության խորհրդանիշերը, որը նա նախաձեռնեց այս վերջին ընթրիքի հետ միասին և հետո քայլեց դեպի Ձիթենյաց սարը:

Մինչև վերջ լինելով ուսուցիչ, ինչպես միշտ, նա շարունակեց իր ուսուցումը զոհաբերության գառան թեմայով: Նա ասաց նրանց, որ ինքը զարկվելու էր, և որ նրանք ցրվելու էին ինչպես առանց հովիվ ոչխարները (տես Մատթեոս ԻԶ.31): «Բայց իմ յարութիւն առնելուցը յետոյ»,- ասել է նա,- «ձեզանից առաջ կգնամ Գալիլեա» (Մատթեոս ԻԶ.32):

Հետագա ժամերի ընթացքում նրա քրտինքը թափվեց արյան կաթիլներով, խարազանվեց հենց ղեկավարների կողմից, ովքեր հայտարարում էին, որ իրենք էին նրա օրենքը պահողները և խաչվեց ավազակների հետ միասին: Դա եղել է այնպես, ինչպես Բենիամին թագավորն է մարգարեացել Մորմոնի Գրքում. «Նա կտանի փորձություններ և մարմնի ցավ, քաղց, ծարավ և հոգնածություն, նույնիսկ ավելին, քան մարդ կարող է տանել և չմահանալ. քանզի ահա, արյուն կգա յուրաքանչյուր ծակոտիից, այնքան մեծ կլինի նրա տվայտանքն իր ժողովրդի ամբարշտության և պղծությունների համար: . . .

Նա գալիս է յուրայինների մոտ, որպեսզի փրկություն գա մարդկանց զավակներին, . . . և նույնիսկ այս բոլորից հետո, նրանք մարդ կհամարեն նրան և կասեն, որ նա դև ունի և կխարազանեն ու կխաչեն նրան» (Մոսիա 3.7, 9):

Մենք պարտական ենք Ալմա մարգարեին՝ նրա տառապանքների վերաբերյալ մեր լիակատար գիտելիքի համար. «Նա պիտի գնա առաջ՝ տանելով ցավեր և չարչարանքներ, և փորձություններ ամեն տեսակի. և դա՝ որպեսզի խոսքը կարողանա իրագործվել, որն ասում է. նա վեր կառնի իր վրա իր ժողովրդի ցավերն ու հիվանդությունները:

Եվ նա իր վրա վեր կառնի մահ, որ կարողանա արձակել մահվան կապանքները, որոնք կապում են իր ժողովրդին. և նա իր վրա վեր կառնի նրանց թուլությունները, որպեսզի նրա սիրտը

լցվի ողորմությամբ, ըստ մարմնի, որպեսզի նա կարողանա իմանալ, ըստ մարմնի, ինչպես սատարել իր ժողովրդին՝ ըստ նրանց թուլությունների» (Ալմա 7.11–12)։

Մտածեք այդ մասին։ Երբ նրա մարմինը վերցվեց խաչի վրայից և հապճեպորեն դրվեց փոխառված գերեզմանում, նա՝ Աստծո անմեղ Որդին, արդեն իսկ վերցրել էր իր վրա ոչ միայն ամեն մարդկային հոգու մեղքերը և գայթակղությունները, ովքեր կապաշխարեին, այլ նաև մեր բոլոր հիվանդությունները, վշտերը և ամեն տեսակի ցավերը։ Նա տարավ այս չարչարանքները, ինչպես մենք ենք տանում դրանք համաձայն մարմնի։ Նա տառապեց դրանց բոլորի համար։ Նա արեց սա՝ կատարելագործելու իր ողորմությունը և իր կարողությունը՝ բարձրացնելու մեզ ամեն աշխարհիկ փորձությունից վեր։[5]

Մենք կարող ենք, ըստ էության, սխալ ընտրություններ, վատ ընտրություններ, վնասակար ընտրություններ կատարել։ Եվ երբեմն մենք հենց դա էլ անում ենք, սակայն այդտեղ է, որ Հիսուս Քրիստոսի առաքելությունն ու ողորմությունը հանդես են գալիս ողջ ուժով և փառքով։ . . . Նա մեր կատարած սխալ ընտրությունների համար պատրաստել է միջնորդական քավություն։ Նա մեր բարեխոսն է Հոր մոտ և ի սկզբանե վճարել է սխալների և անմտությունների համար, որոնք մենք հաճախ ենք տեսնում մեր ազատության կիրառման ժամանակ։ Մենք պետք է ընդունենք նրա պարգևը, ապաշխարենք այդ սխալները և հետևենք նրա պատվիրաններին, որպեսզի կարողանանք լիարժեք օգտվել այս փրկագնումից։ Առաջարկը միշտ մատչելի է. ճանապարհը միշտ բաց է։ Մենք միշտ կարող ենք՝ նույնիսկ մեր ամենամութ ժամին և ամենակործանարար սխալների դեպքում, նայել Աստծո Որդուն և ապրել։[6]

3

Հիսուս Քրիստոսը բարձրացավ գերեզմանից և Հարության առաջին պտուղն էր։

Եկեք ինձ հետ ետ գնանք ժամանակի մեջ՝ դեպի Սուրբ Երկրի այն վերջին դրվագները։ Մոտ էր մեր Տիրոջ մահկանացու կյանքի վերջը։ Նա բժշկեց հիվանդներին, կենդանացրեց մահացածներին և մեկնաբանեց սուրբ գրությունները՝ ներառյալ իր իսկ մահվան և հարության մարգարեությունները։ Նա ասաց իր աշակերտներին.

Հիսուս Քրիստոսը հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն Իր հարությունից կարճ ժամանակ անց (տես Հովհաննես Ի.1-18):

«Ահա վեր ենք ելնում Երուսաղէմ, եւ մարդի Որդին կմատնուի քահանայապետներին եւ դպիրներին եւ կդատապարտեն նորան մահով,

Եւ կմատնեն նորան հեթանոսներին՝ խայտառակելու եւ ծեծելու եւ խաչ հանելու. եւ նա երրորդ օրը հարութիւն կառնէ» (Մատթեոս Ի.18-19): . . .

Երբ սկսվում էր այդ երրորդ օրը, Մարիամ Մագդաղենացին և «միւս Մարիամը» եկան գերեզմանը, որում դրվել էր նրա անշունչ մարմինը [Մատթեոս ԻԸ.1, տես նաև Մարկոս ԺԶ.1, Ղուկաս ԻԴ.10]: Քահանայապետները և Փարիսեցիները նախօրոք գնացել էին Պիղատոսի մոտ և համոզել էին նրան, որ պահակներ դներ գերեզմանի դռան մոտ՝ «մի գուցէ աշակերտները գիշերը գան՝ նորան գողանան. եւ ժողովրդին ասեն՝ Մեռելներից յարութիւն առաւ» (Մատթեոս ԻԷ.64): Սակայն երկու մեծ հրեշտակ գլորել էին գերեզմանի դռան քարը, և այնտեղ գտնվող պահակները այդ տեսարանից սարսափած փախել էին:

Երբ կանայք մոտեցան գերեզմանին, նրանք գտան այն բաց և դատարկ: Հրեշտակները սպասել էին, որ հայտնեին նրանց ամենամեծ ավետիսը, որ մարդկային ականջները երբևէ լսել էին. «Այստեղ չէ.. որովհետեւ յարութիւն առաւ, ինչպէս ասեց» (Մատթեոս ԻԸ.6):[7]

Քրիստոնեության ոչ մի վարդապետություն ավելի կարևոր չէ ողջ մարդկության համար, քան Աստծո Որդու հարության վարդապետությունը: Նրա միջոցով եկավ բոլոր տղամարդկանց, կանանց և երեխաների հարությունը, ովքեր երբևէ ծնվել են կամ երբևէ կծնվեն աշխարհում:

Չնայած որ մեր վարդապետությունում մենք մեծ կարևորություն ենք տալիս հարությանը, հավանաբար մեզանից շատերը գուցե դեռ լիովին չեն հասկանում դրա հոգևոր նշանակությունը և հավերժական վեհությունը: Եթե մենք հասկանայինք, մենք կհիանայինք դրա գեղեցկությամբ, ինչպես արեց Հակոբը՝ Նեփիի եղբայրը, և մենք կսարսռայինք այլընտրանքից, որին կհանդիպեինք, եթե ստացած չլինեինք այս աստվածային պարգևը: Հակոբը գրել է.

«Օ՜հ, իմաստությունն Աստծո, նրա ողորմությունը և շնորհը: Քանզի, ահա, եթե մարմինն այլևս չբարձրանա, մեր հոգիները պետք է դառնան ենթակա այն հրեշտակին, որն ընկել էր Հավերժական Աստծո ներկայությունից և դարձել դև՝ այլևս չբարձրանալու (2 Նեփի 9.8):

Անշուշտ, հարությունը ամեն քրիստոնյայի հավատքի կենտրոնն է. դա ամենամեծն է այն բոլոր հրաշքներից, որոնք կատարվել են աշխարհի Փրկչի կողմից: Առանց դրա, մենք իսկապես

անհուսալի վիճակում կլինենք: Թույլ տվեք ինձ մեջբերել Պողոսի խոսքերը. «Եթէ մեռելների յարութիւն չկայ, . . . ուրեմն ունայն է մեր քարոզութիւնը, . . . եւ մենք էլ Աստուծոյ սուտ վկաներ ենք գտնվում, որ Աստուծոյ համար վկայեցինք, թէ Քրիստոսին յարութիւն տուավ: . . . Եթէ Քրիստոս յարութիւն չէ առել՝ ունայն է ձեր հաւատքը. եւ դեռ ձեր մեղքերի մեջ էք» (Ա Կորնթացիս ԺԵ.13–15, 17):[8]

Առանց Հարության Հիսուս Քրիստոսի ավետարանը դառնում է իմաստուն ասացվածքների և կարծես թե անբացատրելի հրաշքների շարան, սակայն ասացվածքներ և հրաշքներ՝ առանց վերջնական հաղթանակի: Ոչ, վերջնական հաղթանակը վերջին հրաշքի մեջ է ամփոփված. մարդկության պատմության մեջ առաջին անգամ մեկը, ով մահացած էր, բարձրացրեց իրեն կենդանի անմահության մեջ: Նա Աստծո Որդին *էր*՝ մեր անմահ Երկնային Հոր Որդին, և նրա հաղթանակը ֆիզիկական և հոգևոր մահվան դեմ այն բարի լուրն է, որ ամեն քրիստոնյա լեզու պետք է հայտարարի:

Հավերժական ճշմարտությունն այն է, որ Հիսուս Քրիստոսը բարձրացավ գերեզմանից և Հարության առաջին պտուղն էր: (Տես Ա Կոր. ԺԵ.23:) Այս հրաշալի իրադարձության վկաները չեն կարող կասկածի ենթարկվել:

Ընտրյալ վկաների շարքում են Տիրոջ Առաքյալները: Անշուշտ, սուրբ առաքյալի կոչման պարտականություններից մեկն է վկայություն բերել աշխարհին Տեր Հիսուս Քրիստոսի աստվածայնության մասին: Ջոզեֆ Սմիթն ասել է. «Մեր կրոնի հիմնական սկզբունքները Առաքյալների և Մարգարեների վկայությունն է Հիսուս Քրիստոսի մասին, որ Նա մահացավ, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ և համբարձվեց երկինք. իսկ մեր կրոնի բոլոր մյուս բաները լոկ դրա հավելումներն են»: (History of the Church, 3:30.) . . .

Իր Առաքյալներին ուսուցանելիս Քրիստոսը նրանց հայտնել էր, «թէ պէտք է մարդի Որդին շատ չարչարուի, եւ անարգուի ծերերիցը եւ քահանայապետներիցը եւ դպիրներիցը, եւ սպանուի եւ երեք օրից յետոյ յարութիւն առնէ»: (Մարկոս Ը.31:) Այդպես էլ եղավ: Նա խաչվեց և դրվեց գերեզմանում: Երրորդ օրը նա բարձրացավ կրկին ապրելու՝ ողջ մարդկության Փրկիչը և Հարության առաջին պտուղը: Այս քավող զոհաբերության շնորհիվ

բոլոր մարդիկ կազատվեն գերեզմանից և կրկին կապրեն: Սա միշտ եղել է Առաքյալների վկայությունը, որին ես ավելացնում եմ իմ վկայությունը:[9]

4

Հիսուսը շատերին հայտնվեց Իր Հարությունից հետո:

Իր հարությանը հաջորդող օրերին Տերը շատերին հայտնվեց: Նա նրանց ցույց տվեց իր հինգ առանձնահատուկ վերքերը: Նա քայլեց, խոսեց և կերավ նրանց հետ, կարծես թե ապացուցելու համար, որ կասկածից դուրս է այն փաստը, որ հարություն առած մարմինը իսկապես ֆիզիկական մարմին է՝ շոշափելի մսից ու ոսկորից: Ավելի ուշ նա ծառայեց նեփիացիներին, ում նա պատվիրեց. «Բարձրացեք և առաջ եկեք ինձ մոտ, որ դուք կարողանաք մտցնել ձեր ձեռքն իմ կողը, և նաև, որ դուք կարողանաք շոշափել բևեռների նշաններն իմ ձեռքերի ու իմ ոտքերի վրա, որ դուք կարողանաք իմանալ, որ ես եմ Իսրայելի Աստվածը, և ամբողջ երկրագնդի Աստվածը, և սպանվել եմ աշխարհի մեղքերի համար:

Եվ . . . բազմությունն առաջ եկավ, և մտցրեց իրենց ձեռքերը նրա կողը, և շոշափեց բևեռների նշանները նրա ձեռքերի ու նրա ոտքերի վրա. և դա նրանք արեցին, առաջ գալով մեկ առ մեկ, մինչև որ նրանք բոլորն առաջ եկան և տեսան իրենց իսկ աչքով, և շոշափեցին իրենց ձեռքերով, և իմացան անկասկած ու վկայեցին, որ այդ նա էր, որի մասին գրվել էր մարգարեների կողմից, որ պիտի գար» (3 Նեփի 11.14–15):

Բոլոր տղամարդկանց ու կանանց պարտականությունն ու ուրախությունն է «փնտրել այս Հիսուսին, որի մասին [վկայել] են մարգարեներն ու առաքյալները» (Եթեր 12.41) և ունենալ հոգևոր վկայություն նրա աստվածայնության մասին: Դա իրավունքն ու օրհնությունն է բոլոր նրանց, ովքեր խոնարհաբար փնտրում են լսել Սուրբ Հոգու ձայնը, որ վկայություն է բերում Հոր և նրա հարություն առած Որդու մասին:[10]

Նրանց վկայությունը, ովքեր տեսել են [Հիսուսին] որպես կենդանի մարդ իր մահից հետո, երբեք չեն հերքվել: Նա հայտնվել է առնվազն տասը կամ տասնմեկ անգամ՝ Մարիամ Մագդաղենացուն և մյուս կանանց պարտեզում, երկու աշակերտներին Էմմաուսի ճանապարհին, Պետրոսին Երուսաղեմում,

առաքյալներին, երբ Թովմասը ներկա չէր և կրկին, երբ նա այնտեղ էր, առաքյալներին՝ Գալիլեայի ծովում և սարի վրա՝ միանգամից ավելի քան 500 եղբայրների, Հակոբոսին՝ Տիրոջ եղբորը և առաքյալներին համբարձման ժամանակ:[11]

Որպես մեկը, ով կանչվել և կարգվել է վկայություն բերելու Հիսուս Քրիստոսի անվան մասին ողջ աշխարհին, ես վկայում եմ Զատկի այս շրջանում, որ նա ապրում է: Նա ունի փառավորված, անմահ մարմին՝ մսից ու ոսկորներից: Նա Հոր Միածին Որդին է մարմնում: Նա է Փրկիչը՝ Լույսը և Կյանքն աշխարհի: Իր խաչելությունից և մահից հետո նա, որպես հարություն առած էակ, հայտնվեց Մարիամին, Պետրոսին, Պողոսին և շատ ուրիշների: Նա իրեն ցույց տվեց նեփիացիներին: Նա ցույց տվեց իրեն Ջոզեֆ Սմիթին՝ պատանի մարգարեին, և բազմաթիվ այլ մարդկանց մեր տնտեսությունում:[12]

5

Մենք կբարձրանանք մահից և հավիտենական կյանք կունենանք:

Զատիկը տոն է անմահության ձրի պարգևի՝ տրված բոլոր մարդկանց, որը վերականգնում է կյանքը և բուժում բոլոր վերքերը: Չնայած, որ բոլորը կմահանան որպես աճի ու զարգացման հավերժական ծրագրի մի մաս, այնուամենայնիվ, մենք բոլորս կարող ենք մխիթարություն գտնել Սաղմոսիչի հայտարարությունում. «Իրիկունը լաց է գալիս, իսկ առաւօտը ցնծութիւն»: (Սաղ. Լ.5:)

Հոբն էր, որ տվեց մի հարց, որը կարող է կոչվել բոլոր ժամանակների հարց. «Եթէ մարդս մեռաւ, մի՞թէ կկենդանանայ»: (Հոբ ԺԴ.14:) Քրիստոսի պատասխանը հնչում է ժամանակների միջով մինչև հենց այս ժամը. «Որովհետեւ ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կլինիք»: (Հովհաննես ԺԴ.19:)[13]

Մահվան ժամանակ հոգին և մարմինը առանձնանում են: Հարությունը կրկին կմիավորի հոգին մարմնի հետ, և մարմինը դառնում է հոգեղեն մարմին, որն ունի միս և ոսկոր, սակայն կենդանացած հոգով՝ արյան փոխարեն: Այսպիսով, հարությունից հետո մեր մարմինները, կենդանացած հոգով, կդառնան անմահ և երբեք չեն մահանա: Սա է Պողոսի հայտարարությունների իմաստը, որ «կայ շնչաւոր մարմին, կայ եւ հոգեւոր մարմին» և «որ մարմին եւ արիւն չեն կարող Աստուծոյ արքայութիւնը

ժառանգել» [տես Ա Կորնթացիս ԺԵ.44,50]: Բնական մարմինը միս և արյուն է, սակայն կենդանացած հոգով՝ արյան փոխարեն, այն կարող է և կմտնի արքայությունը: . . .

Ես համոզված եմ, որ Աստված ապրում է և որ Հիսուսը Քրիստոսն է: Ինչպես Պողոսը վկայություն բերեց Կորնթոսի սրբերին իր նամակով Զատկի այդ տոնին շատ տարիներ առաջ, ես ավելացնում եմ իմ վկայությունը, որ մենք կբարձրանանք ժամանակավոր մահից, ունենալու հավիտենական կյանք՝ Փրկչի քավող զոհաբերության և հարության շնորհիվ: Ես մտովի պատկերացնում եմ նրան բազուկներն առաջ մեկնած բոլոր նրանց, ովքեր կլսեն.

«. . . Ես եմ յարութիւնը եւ կեանքը. ինձ հաւատացողը թէեւ մեռնի էլ, կապրի:

Եւ ամեն ով որ կենդանի է եւ ինձ հաւատում է, յաւիտեան չի մեռնիլ»: (Հովհաննես ԺԱ.25-26:)[14]

Քրիստոսի հարությունը ազդարարում է անմահության օրհնությունը և հավերժական կյանքի հնարավորությունը: Նրա դատարկ գերեզմանը հայտարարում է ողջ աշխարհին. «Այստեղ չէ, այլ յարութիւն առաւ»: (Ղուկաս ԻԴ.6:) Այս խոսքերը պարունակում են ողջ հույսը, վստահությունը և համոզմունքը, որ անհրաժեշտ են մեզ աջակցելու համար մեր դժվար և երբեմն վշտով լցված կյանքում:[15]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ինչպե՞ս է Քավությունը ներկայացնում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի սերը մեր հանդեպ: (Տես բաժին 1:) Ինչպե՞ս կարող ենք երախտագիտություն ցույց տալ սիրո այս պարգևի հանդեպ: (Տես ՎևՈւ 42.29:)
- Երբ դուք վերանայեք բաժին 2-ը, փնտրեք բազմաթիվ ուղիները, որով Քավությունն օրհնում է մեզ: Ինչպե՞ս են Նախագահ Հանթերի ուսմունքները և սուրբ գրություններն օգտագործելը մեծացնում ձեր հասկացողությունը Քավության վերաբերյալ: Ինչպիսի՞ փորձառություններ են ամրացրել ձեր վկայությունը Քավության վերաբերյալ: Ինչպե՞ս կարող է Քավության զորությունը ամրացնել ձեզ՝ ձեր փորձությունների ժամանակ:

- Ի՞նչ տպավորություններ ունեցաք մինչ ուսումնասիրեցիք Նախագահ Հանթերի ուսմունքները Հարության մասին: (Տես բաժին 3:) Ինչպե՞ս մենք կարող ենք ավելի լավ գնահատել Հարության նշանակությունը:
- Վերանայեք բաժին 4-ը, որում Նախագահ Հանթերը մանրամասնում է Հիսուս Քրիստոսի Հարության բազմաթիվ վկայությունները: Ինչո՞ւ է այս վկաների վկայությունն այդքան արժեքավոր:
- Խորհեք Նախագահ Հանթերի ուսմունքի շուրջ, ըստ որի Հարությունը տալիս է «ողջ հույսը, վստահությունը և համոզմունքը, որ անհրաժեշտ են մեզ աջակցելու համար մեր դժվար և երբեմն վշտով լցված կյանքում» (բաժին 5): Ինչպե՞ս է Հարությունը հույսի և մխիթարության աղբյուր հանդիսանում ձեզ համար: Ինչպե՞ս է Հարության մասին վկայությունը հարստացրել ձեր կյանքը:

Առնչվող սուրբ գրություններ

Հովհաննես 10.17–18, 2 Նեփի 2.6–9, 22–27, 9.19–25, 3 Նեփի 27.13–16, ՎԵՈՒ 18.10–16, 19.15–20, Մովսես 6.59–60

Օգնություն ուսումնասիրողին

«Պլանավորեք ուսումնասիրության այնպիսի վարժություններ, որոնք կկառուցեն Փրկչի հանդեպ ձեր հավատքը» (*Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 22): Օրինակ, երբ դուք ուսումնասիրում եք, դուք կարող եք ինքներդ ձեզ հետևյալ հարցերը տալ. «Ինչպե՞ս կարող են այս ուսմունքներն օգնել ինձ՝ մեծացնել իմ հասկացողությունը Հիսուս Քրիստոսի Քավության վերաբերյալ: Ինչպե՞ս կարող են այս ուսմունքներն օգնել ինձ Փրկչին ավելի նմանվել»:

Հղումներ

1. Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 88; see also 86–87.
2. Conference Report, Oct. 1968, 139.
3. "Evidences of the Resurrection," *Ensign*, May 1983, 16.
4. "The Atonement of Jesus Christ" (address given at mission presidents' seminar, June 24, 1988), 2–3, 7, Church History Library, Salt Lake City; see also *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 8–9.
5. "He Is Risen," *Ensign*, May 1988, 16–17.
6. "The Golden Thread of Choice," *Ensign*, Nov. 1989, 18.
7. "He Is Risen," 16–17.
8. "He Is Risen," 16.
9. "An Apostle's Witness of the Resurrection," *Ensign,* May 1986, 16–17.
10. "He Is Risen," 17.
11. In Conference Report, Apr. 1963, 106.
12. "He Is Risen," 17.
13. "An Apostle's Witness of the Resurrection," 16.
14. In Conference Report, Apr. 1969, 138-39.
15. "An Apostle's Witness of the Resurrection," 15–16.

Որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, Նախագահ Հովսեփ Վ. Հանթերը խորհուրդ էր տալիս Սրբերին՝ հետևել Եկեղեցու Նախագահին։

Շարունակվող հայտնություն ապրող մարգարեների միջոցով

«Մենք առաջնորդվում ենք Աստծո ապրող մարգարեի կողմից՝ մարդ, ով ստանում է հայտնություն Տիրոջից»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

1994թվականի հոկտեմբերին գերագույն համաժողովում Եկեղեցու Նախագահ հաստատվելուց հետո, Հովարդ Վ. Հանթերն արտահայտեց իր զգացումները իր սրբազան պարտականությունների վերաբերյալ.

«Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք շնորհակալ ենք ձեզ՝ ձեր հաստատող քվեարկության համար: Ես եկել եմ ձեր առջև խոնարհաբար և հեզությամբ, տխուր մեր սիրելի մարգարե Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնի վերջերս կյանքից հեռանալու առթիվ: Միրտս զգացված է իմ սիրելի ընկորոջ մահվան կապակցությամբ, հատկապես նոր պարտականությունների լույսի ներքո, որոնք տրվել են ինձ:

Ես շատ արցունքներ թափեցի և որոնում էի իմ Երկնային Հորը անկեղծ աղոթքով՝ ցանկանալով լինել հավասար այս բարձր և սուրբ կոչմանը: Ես աղոթել եմ արժանի լինել՝ կրելու այն հանձնարարությունը, որը տասներեք այլ տղամարդիկ այս տնտեսությունում կրել են: Երևի միայն նրանք, ովքեր նայում են վարագույրի այն կողմից, կարող են լիովին հասկանալ պատասխանատվության ծանրությունը և խորը կախվածությունը Տիրոջից, որ ես եմ զգում՝ ընդունելով այս սրբազան կոչումը:

Նախագահ Հանթերը բացատրեց, որ նա ուժ և վստահություն գտավ իր համոզմունքի մեջ, որ Եկեղեցին առաջնորդվում է ոչ թե մարդկանց կողմից այլ անձնապես Հիսուս Քրիստոսի

կողմից, ով նախապատրաստում է և ոգեշնչում նրանց, ում Նա կանչում է նախագահելու.

Իմ մեծագույն ուժը անցած այս ամիսների ընթացքում եղել է իմ մնայուն վկայությունը, որ սա Աստծո աշխատանքն է և ոչ թե մարդկանց: Հիսուս Քրիստոսը Եկեղեցու գլուխն է: Նա է առաջնորդում այն՝ խոսքով և գործով: Խոսքերով հնարավոր չէ արտահայտել, թե ինչ պատիվէ ինձ համար՝ կանչված լինել որոշ ժամանակով որպես գործիք Նրա ձեռքերում՝ նախագահելու Նրա Եկեղեցին: Բայց առանց այն գիտելիքի, որ Քրիստոսն է Եկեղեցու գլուխը, ոչ ես, ոչ էլ որևէ այլ մարդ չէր կարող կրել կոչման ծանրությունը, որ ինձ տրվել է:

Ստանձնելով այս պատասխանատվությունը, ես ընդունում եմ Աստծո հրաշագործ ձեռքն իմ կյանքում: Նա անընդհատ խնայել է իմ կյանքը և վերականգնել իմ ուժը, անընդհատ ետ է բերել ինձ հավերժության եզրից և թույլ է տվել ինձ շարունակել իմ մահկանացու ծառայությունը ևս մեկ ժամանակահատված: Ես հարց եմ տվել ինձ այդ առիթով, ինչո՞ւ է Նա խնայել իմ կյանքը : Բայց այժմ ես դրել եմ այդ հարցը մի կողմ և միայն խնդրում եմ Եկեղեցու անդամների հավատքն ու աղոթքները, որպեսզի կարողանանք միասին աշխատել, ես էլ տքնելով ձեզ հետ, իրականացնելու Աստծո նպատակները մեր կյանքի այս ժամանակահատվածում: . . .

Երեսունհինգ տարի է անցել այն ժամանակից, երբ ես հաստատվեցի որպես Տասներկուսի Քվորումի անդամ: Այդ տարիները հարուստ են եղել նախապատարսատությամբ: . . . Իմ քայլերն ավելի դանդաղ են այժմ, բայց իմ միտքը հստակ է և իմ հոգին երիտասարդ է: . . .

Ինձանից առաջ եղած իմ Եղբայրների նման, ես այս կոչման հետ հավաստիացում եմ ստանում, որ Աստված կուղղորդի Իր մարգարեին: Ես խոնահաբար ընդունում եմ ծառայելու կոչումը և հայտարարում Սաղմոսողի հետ. «Տերն է իմ զորութիւնը եւ իմ վահանը.իմ սիրտը նորան է յուսացել, և նա ինձ օգնութիւն եղաւ» (Սաղ. ԻԸ.7):[1]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Յուրաքանչյուր ժամանակաշրջանում Աստված մարգարեներ է կանչել՝ որպես Իր խոսնակներ:

Երբ շրջում ենք Հին Կտակարանի էջերը, այնտեղ հայտնվում են անցած դարերի մեծ մարդկանց գրվածքները, ում կոչում են մարգարեներ: Նոր Կատակարանի գրքերը , այլ բաների շարքում, պարունակում են գրվածքներ, ուսմունքներ և ավելի ուշ ժամանակաշրջանի մարդկանց պատմություն, ովքեր նշանակված էին որպես մարգարեներ: Մենք ունենք նաև աշխարհի արևմտյան մասի մարգարեների հիշատակարաններ, ովքեր բարձրացրել են իրենց ձայնը, հայտարարելով Տիրոջ խոսքը, բողոքելով անարդարակեցության դեմ, և ուսուցանելով ավետարանի սկզբունքները: Նրանք բոլորը թողել են իրենց վկայությունները:

Մարգարեն նա է, ում Տերը կանչել և աճեցրել է՝ առաջ տանելու Աստծո նպատակներն իր զավակների մեջ: Նա մեկն է, ով ստացել է քահանայություն և խոսում է իշխանությամբ: Մարգարեները ուսուցիչներ են և ավետարանի պաշտպաններ: Նրանք վկայություն են բերում Տեր Հիսուս Քրիստոսի աստվածայնության մասին: Մարգարեները կանխագուշակել են ապագա իրադարձությունները, բայց սա ամենակարևորը չէ իրենց պարտականություններից, չնայած դա կարող է մարգարեական ուժի որոշակի ապացույց լինել:

Արդարակյաց ղեկավարությունը անհրաժեշտ է եղել ժամանակի յուրաքանչյուր տնտեսությունում, և այս նպատակով Աստված ընտրել է մարգարեներ՝ նրանց այս մահկանացու գոյություն գալուց շատ առաջ [տես Երեմիա Ա.5, Աբրահամ 3.23]:[2]

Տիրոջ հայտնությունների ուսումնասիրությունը սուրբ գրություններում հաստատում է այն փաստը, որ շարունակական հայտնությունն է, որ առաջնորդում է մարգարեներին և Եկեղեցին ամեն մի դարում: Եթե չլիներ շարունակական հայտնությունը, Նոյը նախապատրաստված չէր լինի ջրհեղեղին, որն ընդգրկեց երկրագունդը: Աբրահամը չէր առաջնորդվի Խառանից դեպի Հեբրոն՝ Խոստումի Երկիրը: Շարունակական հայտնությունն առաջնորդեց Իսրայելի զավակներին գերությունից՝ ետ դեպի

խոստացված երկիր: Մարգարեների միջոցով հայտնությունն առաջնորդեց միսիոներական ջանքերը, ուղղություն տվեց Սողոմոնի տաճարի վերակառուցմանը և դատապարտեց հեթանոսական սովորույթների ներթափանցումն Իսրայելացիների մեջ:

Նախքան Քրիստոսի համբարձվելը, նա խոստացավ մնացած տասնմեկ առաքյալներին. «Եւ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր մինչեւ աշխարհքի վերջը»: (Մատթ. ԻԸ.20:) Իր համբարձումից հետո, Նա առաջնորդեց Եկեղեցին հայտնությամբ, մինչև Առաքյալների մահը և Հիսուս Քրիստոսի Եկեղեցու հետագա ուրացությունը: [3]

Իր պատմության ընթացքում, ներառյալ հենց այս օրը, Եկեղեցին ունեցել է մարգարե, տեսանող և հայտնող: Եկեղեցու գլխին Հիսուս Քրիստոսն է, ով հրահանգում է Իր մարգարեին: . . . Նրա խորհրդականները [և] Տասներկուսի Խորհրդի անդամները . . . նույնպես մարգարեներ են, տեսանողներ և հայտնողներ: . . . Եկեղեցու անդամները ստիպված չեն լսել մի անորոշ շեփորի: Նրանք կարող են հավատալ իրենց ղեկավարների ձայնին, իմանալով, որ իրենք առաջնորդվում են Տիրոջ կողմից: [4]

2

Աստված այսօր առաջնորդություն է ապահովում ապրող մարգարեների միջոցով:

Վերջին օրերի մի բնորոշ նշան, որը կնախորդի Տիրոջ վերջնական երկրորդ գալուստին, տեսիլքով տեսավ այն նույն Առաքյալը, ով գրեց Հայտնության գիրքը: Նա ասել է.

«Եւ տեսայ մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մէջ, որ յաւիտենական աւետիք ունէր, որ աւետարանէր երկրի վերայ բնակողներին. Եւ ամեն ազգի եւ ցեղի եւ լեզուի եւ ժողովրդի» (Հայ. ԺԴ.6:) . . .

Մենք վկայում ենք ողջ աշխարհին, որ երկնային սպասավորներ արդեն հայտնվել են մեր դարում, երկնքից բերելով իշխանություն և վերականգնելով ճշմարտությունները, որոնք կորել էին աղավաղված ուսմունքների և սովորույթների միջոցով: Աստված խոսել է կրկին և այսօր շարունակում է առաջնորդություն ապահովել իր բոլոր երեխաների համար՝ ապրող մարգարեի միջոցով : Մենք հայտարարում ենք, որ Նա, ինչպես խոստացված է, միշտ Իր ծառաների հետ է, և ուղղորդում է Իր Եկեղեցու գործերը ողջ աշխարհում: Ինչպես անցյալ ժամանակներում, հայտնությունը ղեկավարում է միսիոներական աշխատանքները, տաճարների

կառուցումը, քահանայության պաշտոնյաների կանչելը և նախազգուշացնում է հասարակության չարիքից , որը կարող է խանգարել մեր Հոր զավակների փրկությանը։

Ջոզեֆ Սմիթին՝ ժամանակակից պատգամախոսին, տրված մի հայտնության մեջ Տերն ասել է.

«Քանզի ես անաչառ եմ անձանց հանդեպ, և կամենում եմ, որ բոլոր մարդիկ իմանան, որ սրընթաց գալիս է օրը. դեռևս ժամը չէ, բայց մոտ է՝ առ ձեռն, երբ խաղաղությունը պիտի վերցվի երկրի վրայից, և դևը զորություն պիտի ունենա իր իսկ տիրապետության վրա։

«Եվ նաև Տերը զորություն պիտի ունենա իր սրբերի վրա, և պիտի թագավորի նրանց մեջ»։ (ՎԱՌ 1.35–36։)

Փրկիչն այսօր թագավորում է Սրբերի մեջ շարունակական հայտնության միջոցով։ Ես վկայում եմ, որ Նա Իր ծառաների հետ է այսօր և կլինի մինչև երկրագնդի վերջը։

Թող մեր կանխատեսությունը չլինի այնքան նեղ, որ մենք հայտնությունը վերագրենք միայն հին մարգարեներին։ Աստված ողորմած է և սիրում է իր զավակներին բոլոր դարերում, և Իրեն հայտնի է դարձրել այս ժամանակների պատմության մեջ։ [5]

Տերը բացահայտել է Իր միտքը և կամքը իր օծյալ մարգարեներին։ Առկա է հայտնության անվերջ հոսք, որն անընդհատ հոսում է երկնքի ակունքներից՝ դեպի Աստծո օծված ծառաները երկրի վրա։ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մահից սկսած Իր մարգարեներին ուղղված Տիրոջ ձայնը շարունակվել է ինչպես նախկինում։ [6]

3

Հոգևոր սովի այս օրերում, մենք կարող ենք գտնել հոգևոր առատություն՝ ականջ դնելով մարգարեի ձայնին։

Սովը Հին Կտակարանի ժամանակների սովորական պատուհասներից էր և մարդիկ հասկանում էին բերքի ավերման ու սովահար ժողովրդի կործանարար հետևանքները։ Ամովսը այս ըմբռնումը բերեց խիստ ուշադրության կենտրոն՝ հոգևոր սովի իր կանխագուշակության միջոցով։ Նա ասել է.«. . .ոչ թէ հացի սով եւ ոչ ջրի ծարաւ, այլ Տիրոջ խոսքը լսելու» [Ամովս Ը.11]։ . . .

Մարդկանց և կրոնական հաստատությունների ներկայիս խառնաշփոթի և հիասթափության մասին տեղեկությունները, երբ նրանք փորձում են լուծել իրենց կրոնական կասկածները և կոնֆլիկտները, հիշեցնում են մեզ Ամովսի այս խոսքերի մասին. «. . .նրանք պիտի ման գան Տիրոջ խօսքը որոնելու համար, եւ պիտի չգտնեն» [Ամովս Ը.12]:

Նրանք ձգտում են լուծում գտնել՝ առանց կառուցելու հայտնության վեմի վրա, ինչպես Տերն է ասել, որ պետք է արվի [տես Մատթեոս ԺԶ.17–18]: . . .

. . . Խառնաշփոթն ու հիասթափությունները, որոնցից տառապում է աշխարհը, բնորոշ չեն Եկեղեցու հավատարիմ անդամներին : . . . Գոյություն ունի հավաստի ձայն նրանց համար, ովքեր ունեն հավատք և կամք՝ հավատալու: Իհարկե մենք ապրում ենք սովի օրերում, ինչպես նկարագրվել է Ամովսի կողմից: . . .Այնուամենայնիվ, նրա մեջ, ինչ երևում է հոգևոր սով, կան շատերը, ովքեր գտել են հոգևոր առատություն:

Իմ. . .խոնարհ վկայությունն է, որ ավետարանը իր լրիվությամբ վերականգվել է այս վերջին օրերում և որ կա մարգարե երկրի վրա այսօր, ով հաղորդում է Տիրոջ միտքն ու կամքը նրանց, ովքեր կամենում են լսել և ունեն հավատք՝ հետևելու: [7]

4

Եթե մենք հետևենք ապրող մարգարեների ուսմունքներին, մենք անհաջողություն չենք ունենա:

Անցյալ տնտեսությունների և դարերի մարդկանց ամենակարևոր մարգարեն նա էր, ով այդ ժամանակ էր ապրում, ուսուցանում և հայտնում էր Տիրոջ կամքը իրենց ժամանակում: Անցյալ տնտեսություններից յուրաքանչյուրում մարագարեներ են բարձրացվել որպես խոսնակներ՝ այդ որոշակի դարի ժողովրդի համար և այդ դարի որոշակի խնդիրների համար:

Ներկայումս ապրող մարգարեն է, ով մեր առաջնորդն ու մեր ուսուցիչն է: Նրանից է, որ մենք ուղղություն ենք ստանում ժամանակակից աշխարհում: Երկրագնդի բոլոր անկյուններից մենք, ովքեր հաստատում ենք նրան որպես Տիրոջ մարգարե, արտահայտում ենք մեր երախտագիտությունը աստվածային առաջնորդության այս աղբյուրի համար: . . .

«Համաժողովի ժամանակահատվածը հոգևոր վերածնունդի սեզոն է, երբ գիտելիքը և վկայությունն ընդարձակվում են և ամրացվում:

Երբ մարգարեները սկզբից մինչև մեր օրերը վերանայում են անցնում մեր հիշողության մեջ, մենք տեղեկանում ենք այն մեծ օրհնությանը, որը գալիս է մեզ ապրող մարգարեի ազդեցությունից: Պատմությունը պետք է որ ուսուցանի մեզ, որ եթե մենք չկամենանք ականջ դնել նախազգուշացումներին և հետևել Տիրոջ մարգարեի ուսմունքներին, մենք ենթակա կլինենք Աստծո դատաստաններին: [8]

Միայն Եկեղեցու Նախագահն իրավունք ունի ստանալ հայտնություններ ողջ Եկեղեցու համար կամ պաշտոնական մեկնաբանություններ տալ սուրբ գրությունների կամ Եկեղեցու վարդապետությունների վերաբերյալ.

«Ոչ ոք չի նշանակվի՝ ստանալու պատվիրաններ ու հայտնություններ այս եկեղեցում, բացի [Եկեղեցու Նախագահից], քանզի նա ստանում է դրանք, ճիշտ ինչպես Մովսեսը»(ՎևՈւ 28.2):[9]

Եթե մենք հետևենք Եկեղեցու ղեկավարների խորհրդին, խրատին և ուսմունքներին, որոնք մեզ են տրվում նրանց հրահանգներում, մենք անհաջողություն չենք ունենա այն բաներում, որոնք կարևոր են մեր իսկ անձնական փրկության և վեհացման համար: [10]

Ես համակված եմ երախտագիտությամբ հայտնությունների համար, որը հաստատել է այն սքանչելի համակարգը, որի միջոցով կառավարվում է Նրա Եկեղեցին: Յուրաքանչյուր մարդ, ով կարգվում է որպես Առաքյալ և ի սպաս դրվում որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, հաստատվում է որպես մարգարե, տեսանող և հայտնող: Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը կանչված և կարգված են՝ կրելու քահանայության բանալիները, ունենալու իշխանություն և պատասխանատվություն՝ կառավարելու Եկեղեցին, սպասավորելու եկեղեցական արարողությունները, ինչպես նաև ուսուցանելու եկեղեցու վարդապետությունը և հաստատելու ու վարելու նրա գործերը»:

Երբ նախագահը հիվանդ է կամ չի կարողանում լիարժեք գործել իր պաշտոնի բոլոր պարտականություններում, նրա երկու Խորհրդականները միասին կազմում են Առաջին Նախագահության քվորումը՝ առաջ տանելու Նախագահության աշխատանքը: Մեծ հարցերը, ծրագրերը կամ վարդապետությունները աղոթքով քննարկվում են Առաջին Նախագահության Խորհրդականների և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից: Ոչ մի որոշում չի կայացվում Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի կողմից՝ առանց բոլոր առնչություն ունեցողների հետ լիակատար համաձայնության:

Հետևելով այս ոգեշնչված ձևին, Եկեղեցին առաջ կշարժվի առանց խոչընդոտների: Եկեղեցու կառավարումը և մարգարեական պարգևների գործադրումը միշտ կվստահվի այն առաքելական իշխանություններին, ովքեր կրում են և գործադրում քահանայության բոլոր բանալիները: [11]

5

Գերագույն համաժողովում մենք ոգեշնչված խորհուրդներ ենք ստանում մարգարեներից, տեսանողներից և հայտնողներից:

Երբ ես խորհել եմ [գերագույն] համաժողովի ուղերձների մասին, ես տվել եմ ինձ հետևյալ հարցը. Ինչպե՞ս կարող եմ օգնել ուրիշներին՝ ճաշակել մեր Երկնային Հոր բարությունից և օրհնություններից: Պատասխանը կայանում է այն ուղղությանը հետևելու մեջ, որը ստանում ենք նրանցից, ում հաստատում ենք որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ և ուրիշ Գերագույն Իշխանավորներ: Եկեք ուսումնասիրենք նրանց խոսքերը, որոնք խոսվում են Հոգու ոգեշնչման ներքո և հաճախ անդրադառնանք դրանց: Տերը հայտնել է Իր կամքը Սրբերին այս համաժողովում: [12]

Եկեղեցու մարգարեների, տեսանողների, հայտնողների և մյուս Գերագույն Իշխանավորների կողմից շատ ոգեշնչված խորհուրդներ են տրվում գերագույն համաժողովի ընթացքում: Ժամանակակից օրերի մեր մարգարեները խրախուսել են մեզ կարևորել համաժողովի մեր Եկեղեցու ամսագրերի հրատարակությունների ընթերցանությունը և դրանք դարձնել մեր անձնական ուսումնասիրության մշտական մաս: Այսպիսով, գերագույն համաժողովը ինչ որ տեղ դառնում է հավելված կամ շարունակություն Վարդապետություն և Ուխտերի համար: [13]

Համաժողովի ժամանակը հոգևոր վերածննդի ժամանակ է, երբ գիտելիքն ու վկայությունը ընդարձակվում են և ամրապնդվում, որ Աստված ապրում է և օրհնում նրանց, ովքեր հավատարիմ են: Դա մի ժամանակ է, երբ ըմբռնումը, որ Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին, վառվում է նրանց սրտերում, ովքեր վճռականություն ունեն ծառայելու Նրան և պահելու Նրա պատվիրանները: Համաժողովը այն ժամանակն է, երբ մեր ղեկավարները մեզ տալիս են ոգեշնչված ուղղություններ մեր կյանքերը կառավարելու վերաբերյալ, մի ժամանակ է, երբ հոգիներն աշխուժանում են և որոշումներ են ընդունվում՝ լինել ավելի լավ ամուսիններ և կանայք, ավելի լավ հայրեր և մայրեր, ավելի հնազանդ որդիներ և դուստրեր, ավելի լավ ընկերներ և հարևաններ : . . .

Մենք, որ այսօր հանդիպում ենք այստեղ [գերագույն համաժողովում] պահանջում են առանձնահատուկ գիտելիք Փրկչի

ավետարանի մասին։ Ամենազարմանալին նրանց համար, ովքեր մեզ հետ առաջին անգամ են ծանոթանում, մեր հայտարարությունն է աշխարհին, որ մենք առաջնորդվում ենք ապրող մարգարեի կողմից, մեկի, ով հաղորդակցվում է, ոգեշնչվում և հայտնություն ստանում Տիրոջից։[14]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները բաժին 1-ում։ Ինչո՞ւ է Աստված տվել մարգարեներ յուրաքանչյուր տնտեսության համար։ Որո՞նք են մարգարեների որոշ գործառույթները։ Ինչպե՞ս կարող ենք օգնել երեխաներին՝ ձեռք բերել վկայություն մարգարեների մասին։
- Ինչպե՞ս է ապրող մարգարե ունենալն օրհնում մեզ այսօր։ (Տես բաժին 2։) Ինչո՞ւ է կարևոր, որ կա «հայտնության ավերջանալի հոսք», որ հոսում է Աստծուց դեպի իր կենդանի մարգարեները։
- Որո՞նք են այն ապացույցները, որ մենք ապրում ենք «հոգևոր սովի» ժամանակաշրջանում։ (Տես բաժին 3։) Ի՞նչ օրհնություններ եք դուք ստացել՝ ականջ դնելով ապրող մարգարեի ձայնին։
- Նախագահ Հանթերն ուսուցանում է, որ «միայն Եկեղեցու Նախագահին իրավունք ունի հայտնություններ ստանալ ողջ Եկեղեցու համար» (բաժին 4)։ Ինչո՞ւ է օգտակար սա իմանալը։ Ինչո՞ւ է օգտակար իմանալը, որ «մենք անհաջողություն չենք ունենա», երբ մենք հետևենք մարգարեին։
- Մտածեք գերագույն համաժողովի կարևորության մասին ձեր կյանքում։ (Տես բաժին 5։) Որո՞նք են այն ուսմունքները գերագույն համաժողովից, որոնք օրհնել են ձեզ։ Ինչպե՞ս կարող եք գերագույն համաժողովի ազդեցությունը ավելի հզոր դարձնել ձեր կյանքում և տանը։

Առնչվող սուրբ գրություններ

Ամովս Գ.7, Մատ. Ժ.41, Ղուկաս Ա.68–70, Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Բ. Պետրոս Ա.20–21, Մոսիա 8.15–18, ՎևՈւ 1.14–16, 37–38, 21.1, 4–6, 43.2–6, 107.91–92

Օգնություն ուսուցչին

Որպես դաս, ցուցակագրեք գրատախտակի վրա մի քանի հարցեր, որ մարդիկ այլ հավատքներից կարող է ունենան այդ գլխի թեմայի վերաբերյալ: Հրավիրեք դասարանի անդամներին՝ վերանայել գլուխը, որոնելով պատասխաններ այդ հարցերին և հետո կիսվել իրենց գտածով:

Հղումներ

1. "Exceeding Great and Precious Promises," *Ensign,* Nov. 1994, 7–8.
2. In Conference Report, Oct. 1963, 99.
3. "No Man Shall Add to or Take Away," *Ensign,* May 1981, 65.
4. "Spiritual Famine," *Ensign,* Jan. 1973, 65.
5. "No Man Shall Add to or Take Away," 65.
6. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 196.
7. "Spiritual Famine," 64–65.
8. In Conference Report, Oct. 1963, 101.
9. *The Teachings of Howard W. Hunter,* 225.
10. *The Teachings of Howard W. Hunter,* 223.
11. "Exceeding Great and Precious Promises," 7. President Hunter spoke these important principles while he was President of the Church.
12. "Follow the Son of God," *Ensign,* Nov. 1994, 87.
13. *The Teachings of Howard W. Hunter,* 212.
14. "*Conference Time," Ensign,* Nov. 1981, 12–13.

«Հիսուս Քրիստոսի ավետարանը . . . համաշխարհային համատոք է համապարփակ ուղերձով»:

Հռչակել Ավետարանը ողջ աշխարհին

«Մենք հոգիների փրկության, դեպի Քրիստոս գալու՝ մարդկանց հրավիրելու գործի մեջ ենք»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

1979 թվականին Երեց Հովարդ Վ. Հանթերը, այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, ասել է. «Ես լիովին հավատում եմ, որ մոտ ապագայում մենք կտեսնենք որոշ մեծ առաջխաղացումներ՝ դեպի բոլոր ազգերը ավետարանի տարածման գործում, որ երբևէ տեղի է ունեցել այս տնտեսությունում կամ որևէ նախորդ տնտեսությունում: Ես համոզված եմ, որ մենք կկարողանանք ետ նայել հետադարձ հայացք ձգելով . . . արձանագրել, ինչպես Ղուկասն է արել, «Եվ Աստուծոյ խօսքը աճում էր» (Գործք Զ.7)»:[1]

Երբ Երեց Հանթերն ասում էր այս խոսքերը, քաղաքական սահմանափակումներն արգելում էին միսիոներներին՝ ավետարանը քարոզել Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում և Սովետական Միությունում: 10 տարիների ընթացքում այդ սահմանափակումներից շատերը սկսեցին վերացվել: 1989 և 1990 թվականներին Բեռլինի Պատը, որն առանձնացնում էր Արևմտյան և Արևելյան Գերմանիան մոտավորապես 30 տարի, քանդվեց: Նախագահ Հանթերն այդ ժամանակ ծառայում էր որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ, և նա արտահայտել է հետևյալ մտքերը այդ պատմական իրադարձության և մյուս փոփոխությունների առթիվ, որոնք տեղի էին ունենում աշխարհում.

«Վերջերս մեծ ուշադրություն է դարձվում Բեռլինի Պատին: Իհարկե մենք բոլորս շատ գոհ ենք, որ այդ պատը քանդվեց, ներկայացնելով ինչպես դա անում է կրկին ձեռք բերված ազատությունները: . . . Երբ մենք փորձում ենք հասկանալ մոլորակը պարուրող համաձայնության ոգին և դա իմաստավորել

ավետարանի ենթատեքստում, մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. Միթե՞ սա Տիրոջ ձեռքը չէ, որը հեռացնում է քաղաքական խոչընդոտները և ճեղք բացում նախկինում անառիկ պատերի մեջ՝ ավետարանն ուսուցանելու համար, բոլորը համահունչ լինելով աստվածային ծրագրին և աստվածային ժամանակացույցին»: [2]

Նախագահ Հանթերը զգաց, որ այդ փոփոխությունները կարևոր պատասխանատվություն էին դնում Եկեղեցու անդամների վրա: Երբ նոր ազգեր բացվեցին միսիոներական աշխատանքի համար, նա ասաց, որ ավելի շատ միսիոներներ պետք կլինեն՝ կատարելու ողջ աշխարհին ավետարանը հռչակելու հանձնարարությունը:[3]

Նախագահ Հանթերի ձգտումը՝ հասնել Աստծո բոլոր զավակներին, անկախ ազգությունից կամ համոզմունքից, ակնհայտ էր Մերձավոր Արևելքում կատարած նրա աշխատանքում: Առաջին Նախագահությունը նրան կարևոր հանձնարարություններ տվեց Երուսաղեմում, ներառյալ Օրսոն Հայդի հիշատակին նվիրված այգու և մերձավոր արևելքի ուսումնասիրություններին նվիրված՝ Բրիգամ Յանգի Համալսարանի Երուսաղեմի կենտրոնի կառուցման վերահսկողությունը: Չնայած այդ տարածաշրջանում քարոզել չէր թույլատրվում, Նախագահ Հանթերը տևական ընկերական կապեր ստեղծեց նրանց հետ, ում հետ նա աշխատում էր, ինչպես հրեաների, այնպես էլ արաբների հետ: Հիսուս Քրիստոսի ավետարանի նպատակն է առաջ բերել սեր, միասնություն և բարձրագույն կարգի եղբայրություն», ասել է նա: [4]

Ողջ աշխարհով մեկ Աստծո զավակների հետ իր աշխատանքում, Նախագահ Հանթերի ուղերձը նույնն էր. «Մենք ձեր եղբայրներն ենք, մենք չենք նայում որևէ ազգի կամ ազգության որպես երկրորդ կարգի քաղաքացիներ: Մենք հրավիրում ենք բոլորին . . . ուսումնասիրել մեր ուղերձը և ստանալ մեր ընկերակցությունը»: [5]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Վերականգված ավետարանը բոլոր մարդկանց համար է, հիմնված այն համոզմունքի վրա, որ բոլորը նույն Աստծո զավակներն են:

Հիսուս Քրիստոսի ավետարանը, այն ավետարանը, որ մենք ուսուցանում ենք և որի արարողությունները մենք կատարում

ենք, համաշխարհային հավատք է՝ համապարփակ ուղերձով: Այն ոչ սահմանափակ է, ոչ մասնակի, ոչ ենթակա պատմության կամ նորաձևության: Դրա էությունը համընդհանուր է և հավերժորեն ճշմարիտ: Դրա ուղերձը համայն աշխարհի համար է, որը վերականգվել է այս վերջին օրերում՝ բավարարելու երկրի վրա յուրաքանչյուր ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի հիմնական պահանջները: Այն վերահաստատվել է, ինչպես դա եղել է սկզբում՝ կառուցելու եղբայրություն, պահպանելու ճշմարտությունը և փրկելու հոգիներ: . . .

Ավետարանի ուղերձում, ամբողջ մարդկային ցեղը մեկ Աստծուց սերված մեկ ընտանիք է: Բոլոր տղամարդիկ և կանայք ոչ միայն ունեն ֆիզիկական ազգակցություն՝ ետ գնալով մինչև Ադամն ու Եվան՝ իրենց առաջին երկրային ծնողները, այլ նաև հոգևոր ժառանգականություն՝ ետ գնալով դեպի Աստված՝ Հավերժական Հայրը: Այսպիսով, բոլոր մարդիկ երկրի վրա տառացիորեն եղբայրներ և քույրեր են Աստծո ընտանիքում:

Աստծո այս համընդհանուր հայրությունը հասկանալու և ընդունելու միջոցով է, որ բոլոր մարդկային էակները կարող են լավագույնս գնահատել Աստծո մտահոգությունն իրենց համար և նրանց փոխհարաբերությունը միմյանց հանդեպ: Սա կյանքի և սիրո ուղերձ է, որն ուղիղ հարվածում է բոլոր ճնշող ավանդույթներին , որոնք հիմնված են ցեղական, լեզվական, տնտեսական կամ քաղաքական դիրքի, կրթական աստիճանի կամ մշակութային ծագման վրա, քանի որ մենք բոլորս նույն հոգևոր ծագումն ունենք: Մենք ունենք աստվածային տոհմածառ. ամեն մարդ Աստծո հոգևոր զավակն է:

Այս ավետարանական տեսանկյունից չկա տեղ՝ սահմանափակ, նեղ կամ կանխակալ տեսակետների համար: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Սերը Աստվածության գլխավոր հատկանիշներից մեկն է և պարտավոր է դրսևորվել նրանց կողմից, ովքեր ձգտում են լինել Աստծո որդիները: Աստծո սիրով լցված մարդը չի ձգտում օրհնել միայն իր ընտանիքը, այլ տարածում է այն ողջ աշխարհի վրա՝ ցանկանալով օրհնել ողջ մարդկային ցեղը» [*Եկեղեցու նախագահների ուսմունքները՝ Ջոզեֆ Սմիթ* (2007), 330–31]: . . .

Վերականգված ավետարանը աստվածային սիրո մի ուղերձ է՝ ուղղված բոլոր մարդկանց՝ ամենուրեք, որը հիմնված է այն

համոզմունքի վրա, որ բոլոր մարդիկ նույն Աստծո զավակներն են: Այս գլխավոր կրոնական ուղերձը հիանալի արտացոլում է գտել Առաջին Նախագահության 1978 թվականի, փետրվարի 15-ի հայտարարության մեջ, հետևյալ ձևով.

«Հիմնված հնադարյան և ժամանակակից հայտնության վրա, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ուրախությամբ սովորեցնում է և հրապարակում է քրիստոնեական վարդապետությունը, որ բոլոր տղամարդիկ և կանայք եղբայրներ և քույրեր են, ոչ միայն ընդհանուր մահկանացու նախնիների արյունակցական կապերով, այլ նաև որպես Հավերժական Հոր տառացիորեն հոգևոր զավակներ» [Statement of the First Presidency Regarding God's Love for All Mankind, Feb. 15, 1978]:

Վերջին Օրերի Սրբերն ունեն դրական և ներգրավող մոտեցում նրանց հանդեպ , ովքեր մեր հավատքից չեն: Մենք հավատում ենք, որ նրանք տառացիորեն մեր եղբայրներն ու քույրերն են, որ մենք նույն Երկնային Հոր որդիներն ու դուստրերն ենք: Մենք ունենք դեպի Աստված ետ տանող ընդհանուր ծագումնաբանություն:[6]

2

Եկեղեցին ունի ավետարանը բոլոր ազգերին ուսուցանելու առաքելություն :

Եկեղեցին՝ լինելով Աստծո թագավորությունը երկրի վրա, առաքելություն ունի բոլոր ազգերի հանդեպ: «Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նրանց մկրտելով Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունովը.

Նորանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ որ ձեզ պատվիրեցի՝ պահեն»(Մատթ. ԻԸ.19–20): Տիրոջ շուրթերից դուրս եկած այս խոսքերը չգիտեն ազգային սահմաններ, դրանք սահմանափակված չեն որևէ ցեղով կամ մշակույթով: Մեկ ազգ ավելի արտոնված չէ մյուսից: Հորդորը հստակ է՝ «աշակերտեցեք*բոլոր*ազգերը»: . . .

Որպես Տիրոջ Եկեղեցու անդամներ, մենք պետք է անձնական նախապաշարմունքներից վեր բարձրացնենք մեր հայացքը: Մենք պետք է հայտնագործենք գերագույն ճշմարտությունը, որ իսկապես մեր Հայրն անաչառ է մարդկանց հանդեպ: Երբեմն մենք ոչ ճիշտ ձևով վիրավորում ենք ուրիշ ազգերի եղբայրների

«Մենք հոգիներ փրկելու գործում ենք»։

և քույրերի՝ մի ազգությանը պատկանող մարդկանց վերագրելով մյուսներից վեր բացառիկություն։ . . .

Պատկերացրեք շատ որդիներ ունեցող մի հոր, որոնցից յուրաքանչյուրն ունի տարբեր խառնվածք, ընդունակություններ և հոգևոր հատկանիշներ։ Միթե՞ նա մեկին ավելի քիչ է սիրում, քան մյուսին։ Թերևս այն որդին, ով ամենաքիչ հոգևոր հակվածությունն ունի, ավելի շատ ունի հոր ուշադրությունը, աղոթքները և աղերսանքները, քան մյուսները։ Միթե՞ դա նշանակում է, որ նա մյուսներին ավելի քիչ է սիրում։ Կարո՞ղ եք պատկերացնել, որ մեր Երկնային Հայրը սիրի իր մեկ ազգության պատկանող զավակին ավելի շատ, քան մյուսներին։ Որպես Եկեղեցու անդամներ, մենք պետք է հիշենք Նեփիի կոչ անող հարցը. «Չգիտե՞ք դուք, որ կան մեկից ավելի ազգեր»։ (2 Նեփի 29.7)։ . . .

Բոլոր ազգությունների պատկանող մեր եղբայրներին և քույրերին մենք բերում ենք մեր հանդիսավոր վկայությունը և վկայում, որ Աստված խոսել է մեր օրերում և ժամանակներում, որ երկնային սուրհանդակներ են ուղարկվել, որ Աստված հայտնել է Իր միտքը և կամքը մարգարե Ջոզեֆ Սմիթին։ . . .

Քանի որ Հայրը սիրում է իր բոլոր զավակներին, մենք պետք է սիրենք բոլոր մարդկանց՝ ամեն մի ռասայից, մշակույթից և ազգությունից, և սովորեցնենք նրանց ավետարանի սկզբունքները, որ նրանք կարողանան ընդունել այն և գան Փրկչի աստվածայնության իմացությանը։[7]

Եղբայրություն ստեղծելու և հայտնի դարձած ճշմարտությունն ուսուցանելու մեր խոնարհ ջանքերում, մենք ասում ենք աշխարհի ժողովրդին այն, ինչ Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթն է այնքան սիրով առաջարկել.

«Մենք չենք եկել վերցնելու ձեզանից ճշմարտությունը և առաքինությունը, որը դուք ունեք։ Մենք չենք եկել ձեզ մեղադրելու կամ էլ քննադատելու։ . . . Պահեք այն ողջ բարությունը, որ դուք ունեք, և թույլ տվեք մեզ՝ բերել ձեզ ավելի շատ բարություն, որպեսզի կարողանաք ավելի երջանիկ լինել և որպեսզի կարողանաք պատրաստվել մտնելու Երկնային Հոր ներկայությունը»։[8]

Մենք հոգիներ փրկելու գործում ենք՝ դեպի Քրիստոս գալու մարդկանց հրավիրելու գործում, նրանց դեպի մկրտության ջրերը բերելու, որպեսզի կարողանան առաջ գնալ այն ուղիով, որը տանում է դեպի հավերժական կյանք։ Այս աշխարհը Հիսուս Քրիստոսի ավետարանի կարիքն ունի։ Ավետարանն է ապահովում միակ ճանապարհը, որով աշխարհը երբևէ կունենա խաղաղություն։[9]

Որպես Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամներ, մենք ձգտում ենք ի մի բերել ողջ ճշմարտությունը։ Մենք ձգտում ենք ընդարձակել սիրո և հասկացողության շրջանակը երկրագնդի մարդկանց միջև։ Այսպիսով մենք ձգտում ենք խաղաղություն և երջանկություն հաստատել ոչ միայն Քրիստոնեության մեջ, այլ նաև ողջ մարդկության մեջ։ . . .

Այն, ինչը հիմնադրելիս Ջոզեֆ [Սմիթը] միջոց հանդիսացավ՝ այսինքն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, այժմ համաշխարհային կրոն է, ոչ միայն պարզապես այն պատճառով, որ դրա անդամներն այժմ գտնվում են ողջ աշխարհով մեկ, այլ գլխավորապես այն պատճառով, որ այն ունի համապարփակ և ընգրկուն ուղերձ, որը հիմնված է ողջ ճշմարտության ընդունման վրա, վերականգված՝ ողջ մարդկության կարիքները բավարարելու համար։

. . . Մենք ուղարկում ենք սիրո և հույսի այս ուղերձը ողջ աշխարհին։ Եկեք դեպի ողջ ճշմարտության Աստվածը, ով

շարունակում է խոսել Իր զավակների հետ մարգարեների միջոցով: Լսեք Նրա ուղերձը, ով շարունակում է ուղարկել Իր ծառաներին՝ քարոզելու հավիտենական ավետարանը՝ ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի: Եկեք և հյուրասիրվեք սեղանի մոտ, որը դրվել է ձեր առջև Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից: Միացեք մեզ, երբ մենք ձգտում ենք հետևել Բարի Հովվին, ով տվել է այն: [10]

3

Նրանք, ովքեր զգացել են Հիսուս Քրիստոսի Քավությունը, պարտավորության տակ են՝ վկայություն բերելու Նրա մասին:

Ի՞նչ կապ ունի Քավությունը միսիոներական աշխատանքի հետ: «Ցանկացած պահի, երբ մենք մեր կյանքում զգում ենք Քավության օրհնությունները, մենք չենք կարող զսպել մեր մտահոգությունը [ուրիշների] բարօրության համար:

Մորմոնի Գրքում կան բազմաթիվ օրինակներ, որոնք պարզաբանում են այս սկզբունքը: Երբ Լեքին ճաշակեց ծառի պտղից, որը խորհրդանշում է Քավությունից ճաշակելը, նա ասաց. «Ես սկսեցի փափագել, որ իմ ընտանիքն էլ ճաշակի դրանից»(1 Նեփի 8.12): Երբ Ենովսը զգաց իր դարձը և ստացավ թողություն իր մեղքերից, Հիսուս Քրիստոսի հանդեպ իր հավատքի շնորհիվ, նա ասաց.«Ես սկսեցի ցանկություն զգալ իմ եղբայրների՝ Նեփիացիների բարօրության համար» (Ենովս 1.9): Ապա նա աղոթեց Լամանացիների ՝ Նեփիացիների անողոք թշնամիների համար: Ապա կա Մոսիայի չորս որդիների՝ Ամմոնի, Ահարոնի, Օմների և Հիմնիի օրինակը, ովքեր մեղքերի թողություն ստացան Քավության միջոցով և հետո տքնեցին տարիներ շարունակ Լամանացիների մեջ՝ բերելու նրանց դեպի Քրիստոս: Հիշատակարանը նշում է, որ նրանք չէին կարողանում տանել այն միտքը, որ որևէ հոգի պիտի ոչնչանա (Մոսիա 28.3):

Ուխտյալի այս գերագույն օրինակը, ով փափագում է կիսվել ավետարանով ուրիշների հետ, լավագույն ձևով պարզաբանվում է Ալմա Կրտ.-ի օրինակով: Ես կուզեի կարդալ նրա վկայությունը: . . .

«. . .Այդ ժամանակից ի վեր՝ մինչև այժմ, ես տքնել եմ առանց դադարելու, որ ես կարողանամ ապաշխարության բերել հոգիներ. որ ես կարողանամ բերել նրանց՝ ճաշակելու այն սաստիկ

ուրախությունից, որից ես ճաշակեցի. որ նրանք նույնպես կարողանան ծնվել Աստծուց և լցվել Սուրբ Հոգով» [Ալմա 36.24, տես նաև Ալմա 36.12–23]:

Մարդու դարձի գալու մեծ ապացույց է հանդիսանում ավետարանով ուրիշների հետ կիսվելու նրա ցանկությունը» (*The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams [1997], 248–49): Այս պատճառով է Տերը պարտավորություն տվել Եկեղեցու յուրաքանչյուր անդամի՝ լինել միսիոներ:

Լսեք այն ուխտի մասին, որ մարդ վերցնում է իր վրա, երբ մկրտվում է Եկեղեցում:

«Քանի որ դուք փափագում եք գալ Աստծո հոտը և կոչվել նրա ժողովուրդը, և հոժար եք կրելու մեկդ մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն,

Այո, և հոժար եք սգալու նրանց հետ, ովքեր սգում են. այո, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ մինչև մահ, որպեսզի դուք կարողանաք փրկագնվել Աստծո կողմից և համարվեք նրանց հետ, ովքեր պատկանում են առաջին հարությանը, որպեսզի դուք կարողանաք հավերժական կյանք ունենալ» (Մոսիա 18.8–9):

Մենք պետք է կանգնենք որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, բոլոր բաներում [և] բոլոր տեղերում: Մենք նորոգում ենք այդ ուխտը հաղորդության ժամանակ, երբ մենք ուխտում ենք վերցնել Քրիստոսի անունը մեզ վրա:

Միսիոներական աշխատանքը Նրա անունը մեզ վրա վերցնելու կարևոր ուղիներից մեկն է: Փրկիչն ասել է, որ եթե մենք փափագում ենք վերցնել մեզ վրա Նրա անունը սրտի ողջ նվիրվածությամբ, մենք կանչված ենք գնալու ողջ աշխարհը և քարոզելու նրա ավետարանն ամեն արարածի (տես ՎևՈւ 18.28): . . .

Մեզանից նրանք, ովքեր ճաշակել են Քավությունը, պատասխանատվության տակ են՝ բերելու հավատարիմ վկայություն մեր Տիրոջ և Փրկչի մասին: . . . Ուրիշների հետ ավետարանով կիսվելու կոչը ներկայացնում է մեր մեծ սերը մեր Երկնային Հոր զավակների հանդեպ, ինչպես նաև Փրկչի հանդեպ և այն բանի հանդեպ, ինչ Նա արել է մեզ համար: [11]

4

Տիրոջ օգնությամբ մենք կարող ենք հաղթահարել ավետարանով կիսվելու բոլոր խոչընդոտները :

Ինչպես Արևելյան Եվրոպայի պատերը . . . այնպես էլ աշխարհի շատ այլ մասեր փլուզվում են, համապատասխանաբար ավելի շատ միսիոներների կարիքը՝ ավետարանը ողջ երկրագնդին տանելու աստվածային հանձնարարությունը կատարելու համար, անշուշտ մեծանում է: Արդյո՞ք պատրաստ ենք բավարարելու այդ անկանխատեսելի հանգամանքը:

Նոր պահանջները բավարարելու համար, որոնք տրվում են մեզ վերջին օրերի այս մեծ միսիոներական աշխատանքում, հավանաբար մեզանից ոմանք (հատկապես ավագ սերունդը, ում ընտանիքները մեծացել են) պետք է ընդհանուր հայտարարի գան՝ որոշելու, թե արդյո՞ք «պատերը», որոնք մենք կառուցել ենք մեր սեփական մտքերում, պետք է վար իջեցվեն:

Օրինակ, ինչ կասեիք «հարմարավետության պատի» մասին, որը թվում է խանգարում է շատ զույգերի և միայնակների միսիա գնալուն: Ի՞նչ կասեք պարտքի «ֆինանսական պատի մասին, որը խանգարում է որոշ անդամների գնալու ունակությանը, կամ «թոռնիկների պատը», կամ «առողջության պատը», կամ «ինքնավստահության պակասության պատը», կամ« օրինազանցության պատը», կամ վախի, կասկածի կամ ինքնագոհության պատերը: Միթե՞ որևէ մեկը իսկապես մեկ րոպե անգամ կասկածում է, որ Տիրոջ օգնությամբ նա կարող է փլուզել այդ պատերը:

Մենք արտոնված ենք եղել ծնվել այս վերջին օրերում, ի տարբերություն որոշ ավելի վաղ տնտեսության, օգնելու ավետարանը տանել ողջ երկրագնդին: Չկա ավելի մեծ կոչում այս կյանքում: Եթե մենք գոհանում ենք թաքնվելով ինքնաշեն պատերի ետևում, մենք պատրաստակամորեն հրաժարվում ենք այն օրհնություններից, որոնք այլապես մերը կլինեին: Տերը ժամանակակից օրերի հայտնությունում բացատրում է այդ մեծ կարիքը.

«Քանզի ահա արտը սպիտակել է՝ արդեն հնձին հասել. և ահա, ով զցում է իր մանգաղն իր զորությամբ, նա հավաքում է ի պահուստ, այնպես որ, նա չի կորչում, այլ փրկություն է բերում իր հոգուն»: (ՎևՈ 4.4)

Տերը շարունակում է բացատրել այդ նույն հայտնությունում, որակավորումները, որոնց կարիքը մենք ունենք լավ միսիոներներ լինելու համար։ Շատ լավ իմանալով մեր թուլությունները և մեր վերապահումները, երբ մենք կանգնում ենք մեր ինքնաշեն պատի հսկայական դարպասի առջև, Նա վերահավաստիացնում է մեզ, որ բոլոր խոչընդոտները հաղթահարելու համար աստվածային օգնություն կհասցվի, եթե մենք միայն կատարենք մեր բաժինը, պարզ խոստումով. «Խնդրեք, և ձեզ կտրվի, թակեք և ձեզ համար կբացվի» (ՎԼՈ 4.7)։

Թող Աստված օրհնի մեզ, որ մեր մտքերի պատերը չշեղեն մեզ այն օրհնություններից, որոնք կարող են լինել մերը։[12]

Կրկին ու կրկին Իր մահկանացու ծառայության ընթացքում, մեր Տերն արձակեց մի կոչ, որն ինչպես հրավեր էր՝ այնպես էլ մարտակոչ։ Պետրոսին և Անդրեասին Քրիստոսն ասաց. «Իմ ետեւից եկէք, եւ ես ձեզ մարդկանց որսորդ կշինեմ» (Մատթեոս Դ.19)։ . . .

Ավելի վաղ մարգարեներն ուսուցանել են, որ ամեն կարողունակ, արժանավոր երիտասարդ պետք է ծառայի լիաժամկետ միսիայում։ Ես շեշտում է այս անհրաժեշտությունն այսօր։ Մենք մեծ կարիք ունենք նաև կարողունակ, հասուն զույգերի՝ միսիոներական դաշտում ծառայելու համար։ Հիսուսն ասաց իր աշակերտներին. «Հունձքը շատ է, բայց մշակները քիչ. ուրեմն աղաչեցէք հունձքի Տիրոջը, որ մշակներ հանէ իր հունձքը» (Ղուկաս Ժ.2)։[13]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Խորհեք Նախագահ Հանթերի ուսմունքների մասին՝ այն բանի վերաբերյալ, որ ավետարանը բոլոր մարդկանց համար է, հիմնված այն ճշմարտության վրա, որ մենք բոլորս նույն Աստծո զավակներն ենք (տես բաժին 1)։ Երբ մենք կիսվում ենք ավետարանով, ինչպե՞ս կարող է այն օգնել մեզ պահել մեր մտքում, որ յուրաքանչյուր մարդ տառացիորեն մեր եղբայրն է կամ քույրը։
- Ի՞նչ ենք մենք սովորում Նախագահ Հանթերի ուսմունքներից բաժին 2-ում, այն մասին, թե ի՞նչ է Երկնային Հայրը զգում Իր

զավակների հանդեպ: Ի՞նչ կարող եք անել ավելի շատ սիրելու բոլոր մարդկանց և կիսվելու ավետարանով նրանց հետ:

- Ինչպե՞ս կպատասխանեիք Նախագահ Հանթերի հարցին. «Ի՞նչ կապ ունի միսիոներական աշխատանքը Քավության հետ»: (Տես բաժին 3:) Ինչպե՞ս կարող եք մեծացնել ուրիշների հետ ավետարանով կիսվելու ձեր փափագը: Ի՞նչ օրհնություններ են եկել ձեզ, երբ դուք կիսվել եք ավետարանով ինչ որ մեկի հետ, կամ երբ ինչ որ մեկը կիսվել է դրանով ձեզ հետ:
- Բաժին 4-ն ուսումնասիրելուց հետո, մտածեք այն «պատերի» մասին, որոնք խանգարում են ձեզ ստանալ միսիոներական աշխատանքի օրհնությունները: Քննարկեք ուղիներ այդ խոչընդոտները հաղթահարելու համար:

Սոնչվող սուրբ գրություններ

Ամովս 9.9, 2 Նեփի 2.6–8, Մոսիա 28.1–3, Ալմա 26.37, ՎևՈւ 18.10–16, 58.64, 68.8, 88.81, 90.11, 123.12, Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.31

Օգնություն ուսուցչին

«Սուրբ Հոգին կարող է հուշել մեկ կամ ավելի բաներ, որոնք դուք ուսուցանում եք՝ խթանելու դատողություններ, որոնք ուրիշները կարիք ունեն լսելու: Բաց եղեք հուշումների հանդեպ, որոնք դուք ստանում եք՝ հրավիրելու որոշակի մարդկանց արտահայտվել: Դուք կարող եք նույնիսկ տպավորված զգալ խնդրելու որևէ անձնավորության, ով կամավոր չի արտահայտել իր տեսակետները» (*Teaching, No Greater Call* [1999], 63):

Հղումներ

1. "All Are Alike unto God," *Ensign,* June 1979, 74.
2. "Walls of the Mind," *Ensign,* Sept. 1990, 9–10.
3. See "Walls of the Mind," 10.
4. "All Are Alike unto God," 74.
5. "All Are Alike unto God," 74.
6. "The Gospel—A Global Faith," *Ensign,* Nov. 1991, 18–19.
7. "All Are Alike unto God," 72–74.
8. «Ավետարան՝ Համաշխարհային Հավատք», 19, Ջորջ Ալբերտ Սմիթի այդ միտքը գտնվում է գրքում՝ *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները՝ Ջորջ Ալբերտ Սմիթ* (2011), 152:
9. "Follow the Son of God," *Ensign,* Nov. 1994, 88.
10. "Come to the God of All Truth," *Ensign,* Sept. 1994, 73.
11. "The Atonement of Jesus Christ" (address given at the mission presidents' seminar, June 24, 1988), 4–7, Church History Library, Salt Lake City; see also *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 248–49.
12. "Walls of the Mind," 10.
13. "Follow the Son of God," 88.

«Տասանորդ վճարելը զորացնում է հավատքը, մեծացնում է հոգևորությունը և հոգևոր կարողությունը և ամրացնում վկայությունը»:

Տասանորդի օրենքը

«Տասանորդի օրենքի վերաբերյալ վկայությունը զալիս է դրանով ապրելուց»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Հովարդ Վ, Հանթերի և Քլեր Ջեֆֆսի ամուսնությունից քիչ առաջ Հովարդը գնաց իր եպիսկոպոսի մոտ՝ ձեռք բերելու տաճարային երաշխավորագիր: Նա զարմացավ, որ հարցազրույցի ընթացքում եպիսկոպոսը հարցրեց, թե արդյոք նա կարող էր պահել իր կնոջն ու ընտանիքին իր եկամտով: Հովարդը հիշում էր. «Երբ ես ասացի նրան, թե որքան էի վաստակում, նա ասաց, որ իր կասկածի պատճառը, թե կկարողանայի պահել կնոջս, հիմնված էր տասանորդի գումարի վրա, որ ես վճարել էի»:

Մինչ այդ ժամանակը Հովարդը լրիվ տասանորդ վճարող չէր, որովհետև նա չէր հասկացել լրիվ տասանորդ վճարելու կարևորությունը: Նա բացատրել է. «Քանի որ հայրս Եկեղեցու անդամ չէր այն տարիների ընթացքում, երբ ես տանն էի, տասանորդի մասին երբեք քննարկում չէր եղել մեր ընտանիքում, և ես երբեք չէի հասկացել դրա կարևորությունը»:

Հովարդն ասաց, որ երբ նա և եպիսկոպոսը շարունակեցին խոսել, եպիսկոպոսը իր «իր բարյացակամ ձևով . . .ուսուցանեց ինձ օրենքի կարևորությունը, և երբ ես ասացի նրան, որ ես այսուհետև լինելու էի լրիվ տասանորդ վճարող, նա շարունակեց հարցազրույցը և հանգստացրեց իմ սրտնեղությունը՝ լրացնելով և ստորագրելով երաշխավորագրի թերթիկը»:

Երբ Հովարդը պատմեց Քլերին այդ փորձառության մասին, նա իմացավ, որ նա միշտ վճարել էր լրիվ տասանորդ: «Մենք որոշեցինք, որ մենք ապրելու էինք այդ օրենքով մեր ամուսնական ողջ կյանքում, և որ տասանորդը լինելու էր առաջին տեղում», ասաց նա: [1]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Տասանորդի օրենքի Տիրոջ սահմանումը պարզ է:

[Տասանորդի] օրենքը պարզ է շարադրված որպես «իրենց տարեկան ամբողջ եկամտի մեկ տասներորդը»(ՎԵՈՒ 119.4): Եկամուտ նշանակում է շահույթ, աշխատավարձ, արդյունք: Դա վարձված մարդու աշխատավարձն է, գործարարությամբ զբաղվողի շահույթը, աճեցնողի կամ արտադրողի արդյունքը, կամ մարդու որևէ այլ աղբյուրից եկամուտը: Տերն ասել է, որ դա գործող օրենք է «հավիտյան», ինչպես դա եղել է անցյալում: [2]

Տիրոջ բոլոր պատվիրանների և օրենքների պես [տասանորդի օրենքը] պարզ է, եթե մենք մի քիչ հավատք ունենանք: Տերն իրականում ասել է. «Հանեք տասնորդական կետը և տեղափոխեք այն մեկով»: Ի՞նչ է տասանորդի օրենքը: Դա ուղղակի այնքան պարզ է:[3]

2

Տասանորդի օրենքը գոյություն է ունեցել սկզբից ի վեր և շարունակվում է այսօր:

Աստվածաշնչում հստակ «տասանորդ» բառի առաջին հիշատակումը գտնվում է Հին Կտակարանի հենց առաջին գրքում: Աբրամը. . . հանդիպեց Մելքիսեդեկի՝ Սաղեմի թագավորի և Ամենաբարձրյալ Աստծո քահանայի հետ: Մելքիսեդեկն օրհնեց նրան և, Աբրամը «ամենիցը տասանորդ տվեց նորան»: (Ծն. ԺԴ.24:)

Մի քանի գլուխ հետո նույն գրքում, Հակոբը Բեթելում ուխտ կապեց այս խոսքերով.«Այն ամենից որ դու ինձ տաս ես քեզ տասանորդ տամ»: [Ծննդ. ԻԸ.20–22.]

Երրորդ հիշատակությունը Ղևտեցոց օրենքի հետ է կապված: Տերը խոսեց Մովսեսի միջոցով.

«Եւ երկրի բոլոր տասանորդը՝ երկրի հունտերիցըեւ ծառերի պտուղիցը՝ Եհովայինն է, նա սո ւրբ է Եհովայի համար» (Ղևտ. ԻԷ.30):

Ղևտեցոց օրենքի համաձայն տասանորդները տրվում էին Ղևտացիներին նրանց պահպանությանը, և նրանցից իրենց հերթին պահանջվում էր տասանորդներ վճարել նրանից, ինչ

նրանք ստացել էին, ինչպես ցույց է տրվել Տիրոջ խոսքերով, երբ Նա հրահանգել էր Մովսեսին։

«Այսպէս խօսիրՂեւտացիների հետ եւ ասիր նորանց. Երբոր Իսրայէլի որդիներից տասանորդը առնեք, որ նորանց կողմանէ ձեզ տուի ժառանգուեան համար, այն ժամանակ նորանից տասանորդի տասաներորդը առնեք բարձրացնելու պատարագ մատուցանէք Եհովայի համար»։ (Թուոց ԺԸ.26։)

Սա հստակորեն ցույց է տալիս, որ տասանորդի օրենքը Ղևտական օրենքի մասն էր և վճարվում էր բոլոր մարդկանց կողմից, նույնիսկ իրենց՝ Ղևտացիների կողմից, ում պատվիրվում էր վճարել տասանորդ տասանորդներից, որոնք նրանք ստացել էին նրանց կողմից։

Կան մարդիկ, ովքեր համարում են, որ տասանորդի օրենքը միայն ղևտական կառույց է, բայց պատմությունը հաստատում է այն փաստը, որ այն եղել է և հանդիսանում է համընդհանուր օրենք։ Այն հիմնական էր մովսեսական օրենքում։ Այն գոյություն է ունեցել սկզբից ի վեր և գտնվում է հնադարյան եգիպտական օրենքում, Բաբելոնում և կարող է նկատվել ողջ աստվածաշնչյան պատմության մեջ։ Այն հիշատակվել է Մարգարե Ամովսի կողմից [տես ԱմովսԴ.4] և Նէեմիայի կողմից, ում հանձնարարվել էր Երուսաղեմի պատերի վերակառուցումը [տես Նէեմիա Ժ.37–38, ԺԲ.44, ԺԳ.5, 12]։ Դրանից կարճ ժամանակ հետո Մաղաքիան սկսեց մի նույնիսկ ավելի մեծ խնդիր՝ հավատքի և ազգային ոգու վերակառուցումը։ Իր գերագույն ջանքով հարված հասցնելու նրանց ցանկասիրությանը, ովքեր կրոնասեր էին միայն անունով, նա Աստծո դեմ հանցագործության մեղադրանք ներկայացրեց նրանց։

Մի՞թե մարդ կկողոպտի Աստծուն։ Սակայն դուք կողոպտել եք ինձ։ Բայց դուք ասում եք. Ի՞նչ բանում ենք մենք կողոպտել քեզ։ Տասանորդներում և ընծաներում։

Դուք անիծված եք անեծքով, քանզի դուք կողոպտել եք ինձ, նույնիսկ այս ամբողջ ազգը։

«Բոլոր տասանորդը տարէք գանձատունը, որ իմ տանը պաշար լինի, և մէկ փորձեցէք սորանով, ասում է Զորաց Տերը, թէ արդեօք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները եւ

օրհնություն թափել ձեզ համար՝ մինչև որ նորա համար տեղ չլինի» (Մաղ. Գ.8-10:) . . .

Մաղաքիայի խոսքերը փակում են Հին Կտակարանը տասանորդի օրենքի կրկնությամբ՝ նշելով, որ սույն օրենքի վերացում չէր եղել, որը գոյություն էր ունեցել ի սկզբանե: Ուստի Նոր Կտակարանի տնտեսությունը սկսվում է այս հորդորի ներքո: . . .

Այս տնտեսությունում ավետարանի վերականգնումից ոչ շատ անց, Տերը մի հայտնություն տվեց իր ժողովրդին վերջին օրերի մի մարգարեի միջոցով՝ սահմանելով օրենքը . . . :

«Եվ դրանից հետո, նրանք, ովքեր այդպես տասանորդ են տվել, պետք է վճարեն իրենց տարեկան ամբողջ եկամուտի մեկ տասներորդը. և սա մնայուն օրենք պիտի լինի նրանց համար հավիտյան, իմ սուրբ քահանայության համար, ասում է Տերը» (ՎևՈւ 119.4:)[4]

3

Մենք ընծա ենք տալիս և նաև վճարում մի պարտավորություն մեր տասանորդներով:

Տասանորդը Աստծո օրենքն է իր զավակների համար, սակայն վճարումը լիովին կամավոր է: Այդ տեսակետից այն չի տարբերվում Հանգստյան օրվա օրենքից կամ նրա օրենքներից որևէ մեկից: Մենք կարող ենք մերժել որևէ մեկը կամ դրանք բոլորը: Մեր հնազանդությունը կամավոր է, բայց վճարելու մեր մերժումը չի վերացնում կամ ոչնչացնում օրենքը:

Եթե տասանորդը կամավոր հարց է, ապա դա ընծա՞ է, թե պարտավորություն՝ վճարելու: Այդ երկուսի միջև կա մի հիմնական տարբերություն: Ընծան կամավոր, առանց քննարկման փողի կամ ունեցվածքի փոխանցում է : Դա առանց պատճառի է: Ոչ ոք պարտավորություն չի կրում ընծա մատուցելու: Եթե տասանորդը ընծա լիներ, մենք կկարողանայինք տալ ինչ որ ցանկանայինք, երբ ցանկանայինք կամ ամենևին ընծա չմատուցեինք: Դա դնում է մեր Երկնային Հորը այն նույն կատեգորիայում, ինչպես փողոցի մուրացկանը, որին մենք կարող ենք գցել մետաղադրամ և անցնել:

Տերը հաստատել է տասանորդի օրենքը, և քանի որ այն Նրա օրենքն է, դա դառնում է մեր պարտավորությունը պահելու այն,

«Տասանորդ վճարելը բեռ չէ, այլ մեծ արտոնություն»:

եթե մենք սիրում ենք Նրան և ունենք ցանկություն պահելու նրա պատվիրանները և ստանալու Նրա օրհնությունները: Այդ ձևով դա դառնում է պարտք: Մարդը, ով չի վճարում իր տասանորդը, որովհետև նա պարտքի մեջ է, պետք է իրեն հարց տա, թե արդյոք նա պարտքի մեջ չէ Տիրոջ հանդեպ: Վարդապետն ասել է.«Բայց փնտրեք, նախ, Աստծո արքայությունը և նրա արդարությունը, և բոլոր այս բաները կտրվեն ձեզ»: (Մատթ. Զ.33:)

Մենք չենք կարող քայլել արևելք և արևմուտք միևնույն ժամանակ: Մենք չենք կարող ծառայել և Աստծուն, և մամոնային: Այն մարդը, ով մերժում է տասանորդի օրենքը, նաէ, ով ազնվորեն չի փորձել այն: Իհարկե դա ինչ որ բան արժե: Պահանջվում է աշխատանք և միտք ու ջանք ավետարանի օրենքներով կամ սկզբունքներով ապրելու համար: . . .

Հնարավոր է, որ մենք ընծա մատուցենք և նաև վճարենք մեր պատավորությունը մեր տասանորդներով: Տիրոջն ենք վճարում պարտավորությունը: Ընծան մեր ընկերակիցներինն է Աստծո արքայությունը կառուցելու համար: Եթե որևէ մեկը լրջամտորեն հետևում է քարոզմանը, որը կատարվում է միսիոներների

կողմից, Եկեղեցու ուսուցանման ծրագրին, կրթական մեծ համակարգին և երկրպագության տներ կառուցելու շինարարական ծրագրին, կգա մի գիտակցում, որ դա բեռ չէ տասանորդը վճարելու համար, այլ մեծ արտոնություն: Ավետարանի օրհնությունները կիսվում են շատերի հետ՝ մեր տասանորդների միջոցով:[5]

4

Տիրոջը զոհաբերություն մատուցելը պետք է տվողի համար թանկ լինի:

Բ Սամուել ԻԴ.18-25-ումմենք կարդում ենք, որ Դավիթը չէր կամենում Տիրոջը զոհաբերել այն, ինչ իր համար ոչինչ չարժեր: Նա անկասկած պատճառաբանում էր, որ եթե ընծան տվողի համար չարժեր ինչ որ թանկարժեք բան, դա հարմար չէր Տիրոջ համար զոհաբերություն լինելու:

Քրիստոսն ասում է, որ ավելի երանելի է տալը, քան ստանալը [տես Գործք Ի.35], սակայն կան մարդիկ, ովքեր տալիս են միայն այն դեպքում, եթե դա նրանց ոչինչ չարժե: Սա Վարդապետի ուսմունքների համաձայն չէ, ով ասել է. «Եթէ մէկը կամենում է իմ ետեւից գայ, թող իր անձն ուրանայ»(Մատթեոս ԺԶ.24):

Կան մարդիկ, ովքեր չեն կամենում ապրել տասանորդի օրենքով ծախսերի պատճառով: Սա հակադրության մեջ է Դավթի նկատառումին, ով չէր զոհաբերում Տիրոջը այն, ինչը իր համար ինչ- որ բան չարժեր: Բարոյական այն մեծ սկզբունքները, որոնք պարունակվում են տասանորդի օրենքում, անտեսվում են նրանց կողմից, ովքեր տասանորդ վճարողներ չեն և նրանց մոտ բացակայում է օրենքի և դրա պատճառների հասկացողությունը:[6]

5

Տասանորդ վճարելը մեծ օրհնություններ է բերում:

Տերն է տվել [տասանորդի] օրենքը: Եթե մենք հետևում ենք Նրա օրենքին, մենք բարգավաճում ենք, բայց, երբ մենք գտնում ենք, որ մեր մտածածը ավելի լավ ուղի է, ձախողման ենք հանդիպում: Երբ ես ճանապարհորդում եմ Եկեղեցիներով և տեսնում տասանորդ վճարելու արդյունքները, ես զալիս եմ այն եզրակացության, որ դա բեռ չէ, այլ մեծ օրհնություն:[7]

Վճարեք ազնիվ տասանորդ: Այս հավերժական օրենքը, որը հայտնի է դարձվել Տիրոջ կողմից և գործադրվել

հավատարիմների կողմից, հնադարյան մարգարեների կողմից ընդհուպ ներկա ժամանակը, ուսուցանում է մեզ՝ Տիրոջն առաջին տեղում դնել մեր կյանքում: Մեզ գուցե չխնդրվի զոհաբերել մեր տները կամ մեր կյանքը, ինչպես դա առաջին Սրբերի դեպքում էր: Մեր մարտակոչն այսօր մեր եսասիրությունը հաղթահարելն է: Մենք վճարում ենք տասանորդ, որովհետև մենք սիրում ենք Տիրոջը, ոչ թե այն պատճառով, որ մենք միջոցներ ունենք դա անելու: Մենք կարող ենք ակնկալել, որ Տերը կբացի «երկնքի պատուհանները» (Մաղաքիա Գ.10) և վար կտեղա օրհնություններ հավատարիմների վրա: [8]

Մենք հետևում ենք Տիրոջը մեր հանդեպ Իր բարությունից մի մաս վերադարձնելու սկզբունքին, և այդ մասը մենք անվանում ենք տասանորդ: Տասանորդն . . . ամբողջապես կամավոր է: Մենք կարող ենք վճարել տասանորդ կամ չվճարել: Նրանք, ովքեր անում են, ստանում են օրհնություններ, որոնք հայտնի չեն մյուսներին: [9]

Մարի Ֆիլդինգ Սմիթը անսասան ռահվիրա մայր էր, ով Մարգարեի եղբայր՝ Հայրապետ Հայրում Սմիթի այրին էր: . . . Մի գարուն, երբ ընտանիքը բացեց իրենց կարտոֆիլի հորերը, նա պատվիրեց իր տղաներին հանել մի բեռ ամենալավ կարտոֆիլից՝ տանելու այն տասանորդի գրասենյակ:

Գրասենյակի աստիճանների մոտ նրանք հանդիպեցին գործավարներից մեկին, ով [ընդդիմացավ], երբ տղաները սկսեցին բեռնաթափել կարտոֆիլը: «Այրի Սմիթ,- ասաց նա, անկասկած հիշելով նրա փորձություններն ու զոհաբերությունները,-ամոթ է, որ դու պետք է վճարես տասանորդ»: Նա . . . նախատեց նրան տասանորդ վճարելու համար և կոչեց նրան ոչ իմաստուն և խելամիտ: . . .

Փոքրամարմին այրին իր ողջ հասակով մեկ ձգվեց և ասաց. «Ոիլյամ, դուք ինքներդ պիտի ամաչեք ձեզանից: Ուզո՞ւմ եք ինձ զրկել օրհնությունից: Եթե ես չվճարեմ իմ տասանորդը, ես պիտի ակնկալեմ, որ Տերը ետ կպահի Իր օրհնություններն ինձանից. ես վճարում եմ տասանորդը ոչ միայն այն պատճառով, որ դա Աստծո օրենքն է, այլ որովհետև ես օրհնության եմ սպասում՝ այդ անելով: Պահելով այս և մյուս օրենքները, ես ակնկալում եմ՝ բարգավաճել և կարողանալ ապահովել իմ ընտանիքը»: (Joseph Fielding Smith, *Life of Joseph F. Smith* [Salt Lake City, 1938], 158–59.)[10]

Տասանորդի սկզբունքը պետք է լինի ավելին, քան մաթեմատիկական, մեխանիկական պատրաստակամություն օրենքի հետ: Տերը դատապարտեց Փարիսեցիներին, համեմունքներից մեխանիկորեն տասանորդ վճարելու համար, առանց հասնելու հոգևորության մակարդակին [տես Մատթեոս ԻԳ.23]: Եթե մենք վճարում ենք մեր տասանորդները Տիրոջ հանդեպ մեր սիրո պատճառով, կատարյալ ազատությամբ և հավատքով, մենք փոքրացնում ենք մեր տարածությունը նրանից, և մեր փոխհարաբերությունը Նրա հետ դառնում է մտերիմ: Մենք ազատվում ենք օրինականության գերությունից և մեզ հպվում է հոգին, և մենք մեզ զգում ենք Աստծո հետ մեկ:

Տասանորդ վճարելը ուժեղացնում է հավատքը, մեծացնում հոգևորությունը և հոգևոր կարողությունը և ամրացնում վկայությունը: Այն տալիս է բավարարվածություն՝ իմանալով, որ կատարում է Տիրոջ կամքը: Այն բերում է օրհնություններ, որոնք գալիս են ուրիշների հետ նպատակների միջոցով կիսվելուց, որի համար օգտագործվում է տասանորդը: Մենք չենք կարող թույլ տալ մերժել մեզ այս օրհնությունները: Մենք չենք կարող թույլ տալ չվճարել մեր տասանորդը: Մենք որոշակի փոխհարաբերություն ունենք ապագայի հանդեպ, ինչպես նաև ներկայի հանդեպ: Ինչ ենք տալիս և ինչպես ենք տալիս և ուղին, որով մենք կատարում ենք մեր պարտականությունները Տիրոջ առջև, հավերժական նշանակություն ունի:

Տասանորդի օրենքի վերաբերյալ վկայությունը գալիս է դրանով ապրելուց:[11]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Վերանայեք տասանորդի օրենքի սահմանումը բաժին 1-ում: Ի՞նչ է տասանորդը: Ի՞նչ կարող ենք սովորել Նախագահ Հանթերից տասանորդի օրենքի պարզության մասին:
- Ի՞նչ հասկացողություններ եք ձեռք բերել Նախագահ Հանթերի ուսմունքներից տասանորդի պատմության վերաբերյալ: (Տես բաժին 2:) Ինչո՞ւ է ձեր կարծիքով Նախագահ Հանթերը կամենում, որ մենք հասկանանք, որ տասանորդի օրենքը «եղել է և համընդհանուր օրենք է»:

- Ինչպե՞ս ենք մենք և «ընծա մատուցում, և նաև պարտավորություն վճարում»: (Տես բաժին 3:) Ինչպե՞ս կարող է տասանորդ վճարելը ցույց տալ ձեր սերը Տիրոջ հանդեպ: Ինչպե՞ս կարող ենք մենք սկսել զգալ, որ տասանորդ վճարելը արտոնություն է, ոչ թե բեռ:
- Ինչո՞ւ պետք է Տիրոջը զոհաբերություն մատուցելը արժենա տվողին ինչ_ որ թանկարժեք բան: (Տես բաժին 4:) Ինչպե՞ս կարող է տասանորդը վճարելու որևէ մարտահարվեր կամ դժկամություն հաղթահարվել:
- Վերանայեք այն բազմաթիվ օրհնությունները, որոնք Նախագահ Հանթերն ասում է, որ գալիս են տասանորդ վճարելուց (տես բաժին 5): Ինչպե՞ս եք տեսել այս օրհնությունները ձեր կյանքում:

Սոնչվող սուրբ գրություններ

Ալմա 13.15, ՎևՈւ 64.23, 104.14–18, 119, 120, Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Տասանորդ»

Օգնություն ուսումնասիրողին

Երբ առաջին անգամ եք կարդում գլուխը, գուցե կամենաք արագ կարդալ կամ վերանայել վերնագրերը՝ մի համառոտ տեղեկություն ստանալու բովանդակության վերաբերյալ: Ապա կարդացեք գլուխը լրացուցիչ անգամներ, ավելի դանդաղ գնալով և ուսումնասիրելով այն խորությամբ: Գուցե կամենաք կարդալ յուրաքանչյուր բաժինը՝ մտքում ունենալով ուսումնասիրության հարցերը: Երբ այս անեք, դուք կարող եք բացահայտել խորը ըմբռնումներ և գործածություններ:

Հղումներ

1. See Eleanor Knowles, Howard W. Hunter (1994), -81.
2. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 105; see also Conference Report, Apr. 1964, 35.
3. *The Teachings of Howard W. Hunter,* 105.
4. In Conference Report, Apr. 1964, 33-35.
5. In Conference Report, Apr. 1964, 35-36.
6. *The Teachings of Howard W. Hunter,* 106; see also Conference Report, Apr. 1964, 33.
7. *The Teachings of Howard W. Hunter,* 105.
8. *The Teachings of Howard W. Hunter,* 105.
9. "Dedication of Goteborg Chapel" (address given in Goteborg, Sweden, on Sept. 10, 1967), 1, Church History Library, Salt Lake City.
10. Howard W. Hunter, *That We Might Have Joy* (1994), 136–37.
11. In Conference Report, Apr. 1964, 36.

«Մենք հուսով ենք՝ դուք կարդում եք և ուսումնասիրում սուրբ գրություններն ամեն օր՝ որպես անհատներ և որպես ընտանիքներ։

Սուրբ գրությունները՝ բոլոր ուսումնասիրություններից ամենաշահավետը

«Թող մեզանից յուրաքանչյուրը. . . ավելի մոտենա մեր Հորը, որ Երկնքում է և Նրա սիրելի Որդուն՝ սուրբ գրությունների հեւոնողական ուսումնասիրությամբ»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Նախագահ Հովարդ Վ. Հանթերը մեծ սեր ուներ սուրբ գրությունների հանդեպ և դրանց նվիրված ուսանող էր: Այս սերն ու ուսումնասիրությունը արտացոլվել են նրա ուսմունքներում, որոնք լցված էին կանոնիկ գրքերից պատմություններով և այլ հատվածներով: Հաճախ, երբ ուսուցանում էր որևէ ավետարանական սկզբունք՝ հատկապես գերագույն համաժողովում, նա ընտրում էր առնվազն մեկ պատմություն սուրբ գրություններից, պատմում էր մանրամասնորեն և դրանից կիրառումներ էր քաղում:

Օրինակ, երբ ուսուցանում էր Աստծուն նվիրված լինելու մասին, նա հիշում էր Յեսուին, Միսաքին և Աբեդնոգովին և մյուսներին հին Կտակարանից, ովքեր ցույց տվեցին այդպիսի նվիրվածություն (տես գլուխ 19): Երբ ուսուցանում էր ծառայության մասին, նա օգտագործում էր օրինակներ Մորմոնի Գրքից՝ ցույց տալու, թե ինչպես են որոշ մարդիկ, ովքեր ստացել էին փոքր կոչում «ոչ քիչ ծառայողունակ» քան մյուսները, ում ծառայությունն ավելի տեսանելի էր: (տես գլուխ 23). Երբ ուսուցանում էր այն մասին, թե ինչպես ունենալ ներքին խաղաղություն խառնաշփոթժամանակներում, նա կրկին օգտագործում էր տարածված հատվածներ սուրբ գրություններից՝ ներառյալ ջրի վրա քայլելու Պետրոսի պատմությունը (տես գլուխ 2): Երբ ուսուցանում էր հաղորդության մասին, նա տալիս էր ենթատեքստ՝

վերանայելով Իսրայելի որդիների պատմությունը և Զատիկը (տես գլուխ 15)։

Նախագահ Հանթերը գիտեր սուրբ գրությունների կարևորությունը՝ մարդուն օգնելիս, որպեսզի վկայություն ձեռք բերի Հիսուս Քրիստոսի մասին։ Ուստի, նա հաճախ էր ուսուցանում պատմություններ սուրբ գրքից Փրկչի ծառայության, խաչելության և հարության մասին։ Նա հայտարարել է.

«Ես երախտապարտ եմ սուրբ գրությունների գրադարանի համար, որի միջոցով Հիսուս Քրիստոսի մասին ավելի մեծ գիտելիք կարելի է սովորել նվիրված ուսումնասիրության միջոցով։ Ես երախտապարտ եմ, որ բացի Հին և Նոր Կտակարաններից, Տերը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մարգարեների միջոցով ավելացրել է այլ բացահայտված վկայություններ Քրիստոսի համար՝ Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, և Թանկագին Մարգարիտը, և ես գիտեմ, որ այդ բոլորը Աստծո խոսքն են։ Սրանք վկայություն են բերում, որ Հիսուսը Քրիստոսն է՝ կենդանի Աստուծոյ Որդին»։[1]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Սուրբ գրություններն ուսումնասիրելը ամենաշահավետն է բոլոր ուսումնասիրություններից, որում մենք կարող ենք ընդգրկվել։

Ողջ ճշմարտության կենտրոնում է այն վկայությունը, որ Նազարեթցի Հիսուսը Քրիստոսն է՝ Մեծ Եհովան, Աշխարհի Փրկիչը և Կենդանի Աստծո Միածին Որդին։ Այս է սուրբ գրությունների ուղերձը։ Այս սուրբ գրություններից յուրաքանչյուրում կա աղերսանք՝ հավատալ և ունենալ հավատք Աստծո՝ Երկնային Հոր և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ և այս սուրբ գրությունների առաջինից մինչև վերջին գիրքը, կոչ է՝ կատարել Աստծո կամքը և պահել Նրա պատվիրանները։[2]

Երբ մենք հետևում ենք սուրբ գրությունները կարդալու և ուսումնասիրելու մեր ղեկավարների խորհրդին, բազմատեսակ բարիքներ և օրհնություններ են գալիս մեզ։ Սա ամենաշահավետն է բոլոր ուսումնասիրություններից, որում մենք կարող ենք ընդգրկվել։ . . .

Սուրբ գրությունները պարունակում են արձանագրություն Աստծո ինքնահայտնության մասին, և դրանց միջոցով Աստված խոսում է մարդու հետ: Որտե՞ղ կարող է ժամանակի ավելի շահավետ օգտագործում լինել, քան սուրբ գրությունների գրադարանից գրականության ընթերցումը, որն ուսուցանում է մեզ՝ ճանաչել Աստծուն և հասկանալ մեր փոխհարաբերությունը Նրա հետ: Ժամանակը միշտ շատ թանկ է մշտազբաղ մարդկանց համար, և մենք կզրկվում ենք այդ արժեքից, երբ ժամեր ենք վատնում մակերեսային և փոքրարժեք բաներ կարդալու և նայելու վրա:[3]

Մենք հուսով ենք, որ դուք կարդում եք և ուսումնասիրում սուրբ գրություններն ամեն օր, որպես անհատներ և ընտանիքներ: Մենք չպիտի թեթևամտորեն վերաբերվենք Տիրոջ պատվիրանին. «Քննեցէք գրքերը, որ դուք կարծում էք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանք, եւ նորանք են որ ինձ համար վկայում են»(Հովհաննես Ե.39): Հոգին կգա ձեր տները և ձեր կյանքերը, երբ դուք կարդաք հայտնությամբ տրված խոսքը: [4]

Մենք պարտավոր ենք ունենալ մի Եկեղեցի, որը լի է կանանցով և տղամարդկանցով, ովքեր խորապես գիտեն սուրբ գրությունները, ովքեր խաչաձև մեջբերումներ են կատարում և նշում են դրանք, ովքեր դասեր են պատրաստում և ելույթներ Թեմատիկ Ուղեցույցից, և ովքեր տիրապետում են քարտեզներին, Աստվածաշնչյան բառարանին և մյուս օժանդակ նյութերին, որոնք պարունակվում են կանոնիկ գրքերի սքանչելի հավաքածուի մեջ: Այնտեղ ակնհայտորեն ավելի շատ բան կա, քան մենք կարող ենք արագ տիրապետել: Իհարկե սուրբ գրքիդաշտը «սպիտակել է՝ արդեն հնձին հասել» [տես ՎևՈ 4.4]: . . .

Իհարկե, ոչ այս, ոչ էլ որևէ այլ տնտեսությունում, սուրբ գրությունները՝ Աստծո հարատև, լուսավորող խոսքն այնպես հեշտ մատչելի չի եղել և այնպես օգտակար ձևով կառուցված՝ յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի համար, ովքեր կհետազոտեն դրանք: Աստծո գրավոր խոսքն ամենաընթեռնելի և մատչելի ձևն է, որ երբևէ տրվել է՝ ներկայացնելու անդամներին աշխարհի պատմության մեջ: Իհարկե, մենք պատասխանատվության կենթարկվենք, եթե մենք չկարդանք դրանք:[5]

2

Սուրբ գրություններն ուսումնասիրելը օգնում է մեզ սովորել և հնազանդվել Աստծո կամքին:

Որպեսզի հնազանդ լինենք ավետարանի օրենքին և Հիսուս Քրիստոսի ուսմունքներին, մենք նախ պետք է հասկանանք օրենքը և պարզենք Աստծո կամքը: Սա լավագույնս իրականացվում է՝ հետազոտելով և ուսումնասիրելով սուրբ գրությունները և մարգարեների խոսքերը: Այս ձևով մենք ծանոթանում ենք այն բաների հետ, որոնք Աստված հայտնի է դարձրել մարդուն:

Հավատո հանգանակներում մեկը հայտարարում է. « Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ» (Հավատո Հանգանակ 1.9):

Աստծո կամքը հայտնի է դարձվել սուրբ գրություններում և այս պատճառով մեզ պատվիրվել է կարդալ դրանք՝ ճշմարտությունը գտնելու համար: Տերը բացատրել է Օլիվեր Քաուդերիին՝ ինչպես պարզել այս ճշմարտությունները: Նա ասել է. «Ահա, ես պատվիրան եմ տալիս քեզ, որ դու վստահես այն բաներին, որոնք գրված են, քանզի դրանցում բոլոր բաները գրված են՝ իմ եկեղեցու, իմ ավետարանի և իմ վեմի հիմնադրման վերաբերյալ» ՎևՈւ 18.3–4):

Պողոսը գրել է իր լավ ընկեր Տիմոթէոսին՝ հորդորելով նրան կարդալ սուրբ գրությունները և իր նամակում ասել է. «Եւ որ մանկութիւնից սուրբ գրքերը գիտես, որ կարող են քեզ իմաստուն անել փրկութեան համար այն հաւատքի ձեռովն որ Քրիստոս Յիսուսումն է»: Հետո նա ավելացրել է. «Ամեն Գիրք աստուածաշունչ են եւ օգտակար՝ վարդապետութեան, եւ յանդիմանութեան, եւ ուղղելու, եւ արդարութեան խրատելու համար»: (Բ Տիմոթեոս Գ.15–16): . . .

Մեր Եկեղեցու առաջնորդները մեծ շեշտադրում են արել սուրբ գրությունները և հին ու ժամանակակից մարգարեների խոսքերը կարդալու հարցի վրա: Հայրերին ու մայրերին խնդրել են կարդալ սուրբ գրությունները, որպեսզի նրանք պատշաճորեն ուսուցանեն իրենց երեխաներին: Մեր երեխաները կարդում են սուրբ գրությունները, որպես ծնողների կողմից տրված օրինակի

արդյունք: Մենք ուսումնասիրում ենք սուրբ գրությունները մեր ընտանեկան երեկոների ընթացքում, և որոշ ընտանիքներ վաղ առավոտյան նույն ժամին կարդում են սուրբ գրությունները միասին: . . . Սա է այն ուղին, որով մենք սովորում ենք իմանալ Տիրոջ կամքը, որպեսզի մենք հնազանդ լինենք:[6]

Մտածեք սուրբ գրությունների հերթականության մասին, որը սկսվում է ջանասիրություն ցուցաբերելով Աստծո խոսքի հանդեպ, այնուհետև շարունակվում է դեպի խոստում, որ եթե մենք անենք այդ, մենք կարող ենք զնալ հենց Իր ներկայությունը:

Եվ այժմ ես ձեզ պատվիրան եմ տալիս, որ զգուշանաք ձեր համար, որ ջանասիրաբար ուշք դարձնեք հավերժական կյանքի խոսքերին:

Քանզի դուք պետք է ապրեք Աստծո բերանից դուրս եկող ամեն մի խոսքով:

Քանզի Տիրոջ խոսքը ճշմարտություն է, և այն ինչ ճշմարտություն է՝ լույս է, և այն ինչ լույս է՝ Հոգի է, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի Հոգին: . . .

Եվ ամեն ոք, ով ականջ է դնում Հոգու ձայնին, գալիս է Աստծո մոտ, այսինքն՝ Հոր» (ՎևՈ 84.43–45, 47):

Դա սքանչելի ճանապարհորդություն է, որը սկսվում է Աստծո խոսքով, և որը բարձրակետին է հասնում վեհացմամբ: «Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք»(2 Նեփի 32.3):[7]

Ես ձեզ եմ հղում Աստծո հայտնությունները որպես չափանիշ, որով մենք պետք է ապրենք մեր կյանքը, և որով մենք պետք է գնահատենք ամեն որոշում և ամեն գործ: Այսինքն, երբ անհանգստություններ և դժվարություններ եք ունենում, դիմակայեք դրանց՝ դառնալով դեպի սուրբ գրքերը և մարգարեները: [8]

3

Սուրբ գրությունները հասկանալը պահանջում է կենտրոնացած, հետևողական, աղոթքով լցված ուսումնասիրություն:

Մենք հորդորում ենք ձեզանից յուրաքանչյուրին՝ ուշադրությամբ մտածել, թե ներկայումս դուք որքան ժամանակ եք հատկացնում սուրբ գրությունների մասին աղոթքով խորհելուն:

Սուրբ գրություններն ուսումնասիրելը «ամենաշահավետն է բոլոր ուսումնասիրություններից, որում մենք կարող ենք ընդգրկվելվել»:

Որպես Տիրոջ ծառաներից մեկը, ես կոչ եմ անում ձեզ անել հետևյալը.

1. Կարդացեք, խորհեք և աղոթեք սուրբ գրությունների վերաբերյալ ամեն օր՝ որպես Եկեղեցու անհատական անդամներ:

2. Կանոնավորապես անցկացրեք սուրբ գրությունների ընտանեկան ընթերցանություն: Մենք գովում ենք նրանց, ովքեր արդեն անում են այդ և հորդորում նրանց, ովքեր դեռ չեն սկսել, անցեք գործի՝ առանց հապաղելու: . . .

Թող որ մեզանից յուրաքանչյուրն առաջ գնա անսասան վճռականությամբ՝ լինելու ավելի շատ աղոթքով լցված, ձգտելով ավելի լիարժեք ապրել Հոգով և ավելի մոտենալ մեր Երկնային Հորը ու Նրա Միրելի Որդուն սուրբ գրությունների հետևողական ուսումնասիրության միջոցով: [9]

Կարդալու սովորությունները շատ տարբերեն: Կան արագ ընթերցողներ, դանդաղ ընթերցողներ, ոմանքամեն անգամ կարդում են միայն փոքրիկ հատվածներ, իսկ մյուսները համառորեն կարդում են առանց դադարի՝ մինչև վերջացնեն գիրքը: Նրանք, ովքեր խորանում են սուրբ գրությունների

գրադարանում, այնուամենայնիվ պարզում են, որ հասկանալը պահանջում է ավելին, քան պատահական ընթերցումները կամ ուշադիր ուսումնասիրությունը. անպայման պետք է լինի կենտրոնացված ուսումնասիրություն: Անշուշտ սուրբ գրություններն ամեն օր ուսումնասիրողը ձեռք է բերում ավելի շատ, քան նա, ով զգալի ժամանակ է նվիրում՝ մեկ օր և ապա թողնում, որ օրերն անցնեն նախքան շարունակելը: Ոչ միայն ամեն օր պետք է ուսումնասիրենք , այլև պետք է սահմանենք մի կանոնավոր ժամ, երբ կկարողանանք կենտրոնանալ՝ առանց ընդմիջելու:

Չկա ավելի օգտակար բան, քան աղոթքը, որպեսզի բացվի սուրբ գրություններն ընկալելու մեր հասկացողությունը: Աղոթքի միջոցով մենք կարող ենք լարել մեր միտքը, որպեսզի պատասխաններ գտնենք մեր որոնումներին: Տերն ասել է.«Խնդրեք եւ կտրուի ձեզ. որոնեցէք եւ կգտնէք, դուռը թակեցէք եւ կբացուի ձեզ».(Ղուկաս ԺԱ.9): Ահա Քրիստոսի վերահավաստիացումը, որ եթե մենք խնդրենք, որոնենք և թակենք, Սուրբ Հոգին կառաջնորդի մեր հասկացողությունը, եթե մենք պատրաստ լինենք և կամենանք ընդունել:

Շատերը գտնում են, որ ուսումնասիրելու համար լավագույն ժամանակը առավոտն է՝ գիշերվա հանգստից հետո, երբ մեր ուղեղը մաքրված է բազմաթիվ հոգսերից, որոնք ընդհատում են միտքը: Մյուսները գերադասում են ուսումնասիրել խաղաղ ժամերին, երբ օրվա աշխատանքն ու տագնապները ավարտված են և մի կողմ դրված, այսպիսով վերջացնելով օրը խաղաղությամբ և անդորրով, որը գալիս է սուրբ գրությունների հետ հաղորդակցվելուց:

Հավանաբար ուսումնասիրության համար ավելի կարևոր է կանոնավոր ժամ սահմանելը, քան օրվա ժամանակը: Կատարյալ կլիներ, եթե մեկ ժամ ամեն օր տրամադրեիք, բայց եթե դա հնարավոր չէ՝ կանոնավոր կես ժամը կհանգեցնի նշանակալի ձեռքբերման: Մեկ քառորդ ժամը քիչ ժամանակ է, բայց զարմանալի է, թե որքան լուսավորում և գիտելիք կարելի է ձեռք բերել այդքան իմաստալի նյութի վերաբերյալ: Կարևոր էթույլ չտալ, որ որևէ այլ բան խանգարի մեր ուսումնասիրությանը:

Ոմանք նախընտրում են միայնակ ուսումնասիրել, բայց ընկերակիցների հետ միասին կարելի է արդյունավետ ուսումնասիրություն կատարել: Ընտանիքները մեծապես օրհնվում են, երբ իմաստուն հայրերը և մայրերը հավաքում են իրենց երեխաներին

իրենց շուրջը, միասին կարդում հոգևոր գրադարանի գրքերի էջերից, իսկ հետո ազատ քննարկում գեղեցիկ պատմությունները և մտքերը՝ ըստ բոլորի հասկացողության: Հաճախ երիտասարդներն ու փոքրիկները զարմանալի կռահումներ են ունենում և արժևորում են կրոնի հիմնական գրականությունը :

Մենք չպետք է կարդանք ինչպես պատահի, այլ մշակենք կանոնավոր ծրագիր ուսումնասիրության համար: Կան մարդիկ, ովքեր ամեն օրկամ ամեն շաբաթ կարդում են որոշակի թվով էջեր կամ որոշակի թվով գլուխներ: Սա կարող է լիովին արդարացված և հաճելի լինել, եթե մարդը կարդում է հաճույքի համար, բայց դա չի հանդիսանում իմաստալի ուսումնասիրություն: Ավելի լավ է տրամադրել որոշակի քանակությամբ ժամանակ սուրբ գրքերի ուսումնասիրության համար ամեն օր, քան ունենալ որոշված քանակությամբ գլուխներ կարդալու որոշում: Երբեմն մենք համարում ենք , որ մի հատվածի ուսումնասիրությունը խլում է ողջ ժամանակը:[10]

4

Յարիոսի սուրբ գրքի համառոտ պատմության մասին խորհելը հանգեցնում է հասկացողության և իմաստի մեծ խորության:

Հիսուսի կյանքը, գործերը և ուսմունքները կարող են արագ ընթերցվել: Պատմությունները պարզ են շատ դեպքերում և մատչելի են պատմվում: Տերը քիչ բառեր է օգտագործել իր ուսմունքներում, բայց յուրաքանչյուրն այնքան հակիրճ է իմաստով, որ դրանք միասին ստեղծում են մի հստակ պատկեր ընթերցողի համար: Սակայն երբեմն, շատ ժամեր կարող են ծախսվել՝ խորհելով խորիմաստ մտքերի վրա, որոնք արտահայտվել են մի քանի պարզ բառերով:

Եղել է մի դեպք Փրկչի կյանքում, որը նշվել է Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի կողմից: Պատմվածքի մեծ մասը պատմվում է Մարկոսի կողմից ընդամենը երկու կարճ հատվածներում և հինգ խոսքով՝ հաջորդ հատվածում: . . .

«Եւ ահա գալիս է ժողովրդապետերից մեկը՝ անունը Յայրոս. եւ երբոր նորան տեսաւ, ընկաւ նորա ոտները.

Եվ նորան շատ աղաչում էր եւ ասում . Թէ Աղջիկս վախճանելու մոտ է, գաս ձեռքդ նորա վերայ դնես, որպեսզի ազատուի եւ ապրի»:

Եւ Հիսուսը նորա հետ գնաց»(Մարկոս Ե.22-24):

Պատմության այդ մասի ընթերցման ժամանակը մոտ երեսուն վայրկյան է: Այն կարճ է և ոչ բարդ: Տեսողական պատկերը հստակ է և նույնիսկ երեխան կարող է կրկնել այն առանց դժվարության: Բայց, երբ մենք ժամանակ ենք անցկացնում՝ մտածելով և խորհրդածելով, հասկացողության և իմաստի մեծ խորություն է մեզ բացվում: . . .

. . . Հիսուսը և նրանք, ովքեր նրա հետ էին, հենց նոր էին կտրել անցել Գալիլեայի ծովը և մարդկանց բազմությունը, ովքեր սպասում էին նրան, հանդիպեցին նրան Կափառնայումի մոտ՝ ծովափին: «Եվ ահա գալիս է ժողովրդապետերից մեկը»: Ավելի մեծ ժողովարաններն այդ օրերում նախագահվում էին երեցների խորհրդի կողմից, որը ղեկավարվում էր ղեկավարի կամ կառավարիչի կողմից: Այդ մարդը տիտղոսավոր և հարգված անձնավորություն էր, ում վրա հրեաները նայում էին մեծ ակնածանքով:

Մատթեոսը չի տալիս այդ գլխավոր երեցի անունը, իսկ Մարկոսը ճանաչում է նրան՝ ավելացնելով նրա տիտղոսին «Յարիոս» անունը: Ոչ մի ուրիշ տեղ սուրբ գրություններում այս մարդու անունը չի հայտնվում, բացի այս դեպքից, սակայն նրա հիշատակն ապրում է պատմության մեջ՝ Հիսուսի հետ այդ կարճ շփման պատճառով: Շատ շատ կյանքեր դարձել են հիշարժան, որոնք հակառակ դեպքում կկորչեին անհայտության մեջ, եթե չլիներ Տիրոջ ձեռքի հպումը, որը մտքի և գործի, նոր ու ավելի լավ կյանքի նշանակալի փոփոխություն առաջացրեց:

«Եւ երբոր նորան տեսաւ, ընկաւ նորա ոտները»:

Հիսուսի ոտքերի մոտ ծնկի գալը, ով համարվում էր թափառաշրջիկ ուսուցիչ՝ բժշկելու շնորհքով, անսովոր հանգամանք էր մի մարդու համար, ով ուներ տիտղոս և հարգանք, կառավարիչ էր ժողովարանում: Կրթված և հարգված շատ ուրիշ մարդիկ ևս տեսնում էին Հիսուսին, բայց անտեսում էին Նրան: Նրանց մտքերը փակ էին: Այսօր էլ նույնն է, խոչընդոտներ են կանգնած շատերի ճանապարհին՝ Նրան ընդունելու համար:

«Եվ նորան շատ աղաչում էր եւ ասում .թէ Աղջիկս վախճանելու մոտ է»: Սա բնորոշ է այն վիճակին, որը հաճախ լինում, երբ մարդը գալիս է դեպի Քրիստոս, ոչ այնքան իր սեփական անձի կարիքի համար, այլ սիրելի մարդու ծայրահեղ վիճակի պատճառով: Այն սարսուռը, որ մենք լսում ենք Յարիոսի ձայնում, երբ նա ասում է «Աղջիկս», խռովում է մեր հոգիները կարեկցանքով, երբ մենք մտածում ենք ժողովարանում բարձր դիրքի տեր մարդու մասին, ով ծնկի էր իջել Փրկչի առաջ:

Ապա գալիս է հավատքի մեծ դրսևորում . «Աղաչում եմ, գաս ձեռքդ նորա վերայ դնես, որպեսզի ազատուի եւ ապրի»: Սրանք վշտից տանջահար հոր հավատքի խոսքեր չէին, այլ նաև հիշեցնում մեզ, որ ինչի վրա Հիսուսը իր ձեռքերն է դնում՝ ապրում է: Եթե Հիսուսը դնում է Իր ձեռքերը ամուսնության վրա՝ այն ապրում է: Եթե Նրան թույլատրվում է Իր ձեռքերը դնել ընտանիքի վրա՝ այն ապրում է:

Հետևում են խոսքերը. «Եւ Հիսուսը նորա հետ գնաց»: Մենք չպիտի ենթադրեինք, որ այս իրադարձությունը օրվա ծրագրերի մեջ էին: Տերը ետ էր եկել ծովի վրայով, որտեղ բազմությունը Նրան էր սպասում, որ իրենց ուսուցաներ: . . . Նրան ընդհատեց հոր աղաչանքը: Նա կարող էր անտեսել խնդրանքը, որովհետև շատ ուրիշները սպասում էին Նրան: Նա կարող էր ասել Յարիոսին, որ վաղը կգար տեսնելու նրա դստերը , բայց «Հիսուսը գնաց նրա հետ»: Եթե մենք հետևում ենք Տիրոջ ոտնահետքերին, մի՞թե մենք այնքան զբաղված պիտի լինենք, որ անտեսենք մեր ընկերակիցների կարիքները:

Պարտադիր չէ կարդալ պատմության մնացած մասը: Երբ նրանք հասան ժողովարանի կառավարիչի տունը, Հիսուսը բռնեց փոքր աղջկա ձեռքը և բարձրացրեց նրան մահացած տեղից: Նույն ձևով նա կբարձրացնի և հարություն կտա յուրաքանչյուր մարդու դեպի նոր և ավելի լավ կյանք, ով թույլ կտա Փրկչին բռնել իր ձեռքը:

5

Մորմոնի Գիրքն ու Վարդապետություն և Ուխտերը մեզ ավելի կմոտեցնեն Քրիստոսին:

Մորմոնի Գիրքը

Ամենանշանակալի ռեսուրսներից մեկը, որ Տերն ապահովել է մեզ՝ օգնելու այս աստվածային աշխատանքն իրականացնելու համար՝ Մորմոնի Գիրքն է, որը ենթավերնագրվել է. «Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին»: [Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնը] վճռականորեն հորդորել է մեզ՝ չանտեսել այս սրբազան սուրբ գրության հատորի կարդալն ու նրա պատվիրաններին հետևելը: «Նրա մեծ առաքելությունն է,-նա ուսուցանել է մեզ,- բերել մարդկանց դեպի Քրիստոս [և այսպիսով դեպի Հայրը], իսկ բոլոր մյուս բաները երկրորդական են»: (*Ensign,* May 1986, p. 105:) Մենք հուսով ենք, որ դուք՝ եղբայրներ և քույրեր, սնուցում եք ձեր հոգիները՝ կանոնավորապես կարդալով Մորմոնի Գիրքը և մյուս սուրբ գրությունները և օգտագործում դրանք ձեր ծառայություններում:[12]

Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է: Մենք հրավիրում ենք ձեզ՝ կարդալ այս սքանչելի հիշատակարանը: Այն ամենանշանավոր հատորն է, որ գոյություն ունի այսօր: Կարդացեք այն ուշադրությամբ և աղոթքով, և երբ դուք դա անեք, Աստված կտա ձեզ վկայություն դրա ճշմարտացիության մասին՝ ինչպես խոստացել է Մորոնին (Տես Մորոնի 10.4):[13]

Մորմոնի Գիրքը կարդալու, ուսումնասիրելու և աղոթքով նրա բովանդակության վերաբերյալ հաստատում որոնելու միջոցով է, որ մենք վկայություն ենք ստանում, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո մարգարեն էր, և որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերականգնվել է երկրի վրա: [14]

[Մորմոնի Գրքի] ընթերցանությունը խորը ազդեցություն կունենա ձեր կյանքի վրա: Այն կընդարձակի ձեր գիտելիքն այն մասին, թե ինչպես է Աստված վարվում մարդու հետ և կտա ավելի մեծ ցանկություն՝ ապրելու ներդաշնակության մեջ ավետարանի ուսմունքների հետ: Այն նաև հզոր վկայություն կտա ձեզ Հիսուսի մասին:[15]

Վարդապետություն և Ուխտեր

Վարդապետություն և Ուխտերը առանձնահատուկ գիրք է: Այն միակ գիրքն է ամբողջ երկրի երեսին մի նախաբանով, որ Արարիչն՝ Ինքն է կազմել: Բացի այդ, սուրբ գրությունների այս գիրքը պարունակում է ավելի շատ ուղղակի մեջբերումներ Տիրոջից, քան գոյություն ունեցող սուրբ գրությունների որևէ այլ գիրք:

Այն ոչ մի հնադարյան փաստաթղթի թարգմանություն չէ, այլ ժամանակակից ծագում ունի: Դա հայտնության գիրք է մեր օրերի համար: Դա առանձնահատուկ և աստվածայնորեն ոգեշնչված հայտնությունների հավաքածու է, որը եկել է Աստծո մարգարեների միջոցով մեր օրերում՝ ի պատասխան հարցերի, մտահոգությունների և մարտահրավերների, որոնց իրենք և մյուսներն էին դիմակայում: Այն պարունակում է աստվածային պատասխաններ իրական կյանքի խնդիրներին՝ ներառյալ իրական մարդկանց: . . .

Դուք գիտակցո՞ւմ եք, որ կարդալով Վարդապետություն և Ուխտերը, կարող եք լսել Տիրոջ ձայնը սուրբ գրությունների միջոցով: [տես ՎևՈւ 18.33–36]: . . . Այդ լուսավորող ձայնը սովորաբար կգա ձեր միտքը որպես «մտքեր» և ձեր սիրտը որպես «զգացումներ» (տես ՎևՈւ 8.1–3): Այդ վկայության խոստումը . . . մատչելի է յուրաքանչյուր արժանավոր տղամարդու, կնոջ և երեխայի, ով աղոթքով ձգտում է այդպիսի վկայության: Արդյո՞ք մեզանից յուրաքանչյուրը չպիտի վճռի կարդալ, ուսումնասիրել, խորհել և աղոթել այս սրբազան հայտնությունների վերաբերյալ:[16]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ի՞նչ փորձառություններ են օգնել ձեզ հասկանալ, որ սուրբ գրություններն ուսումնասիրելը «ամենաշահավետն է բոլոր ուսումնասիրություններից»: (Տես բաժին 1:) Ինչպե՞ս կարող ենք զորացնել մեր պարտավորությունը՝ լինել «կանայք և տղամարդիկ, ովքեր խորապես գիտեն սուրբ գրությունները»:
- Ինչպե՞ս կարող է սուրբ գրություններն ուսումնասիրելն օգնել մեզ ավելի հնազանդ լինել: (Տես բաժին 2:) Ինչպե՞ս եք նկատել, որ «Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք»: (2 Nephi 32.3):
- Նախագահ Հանթերի խորհուրդը ինչ առումներով կարող է օգնել ձեզ՝ ուսումնասիրել սուրբ գրությունները: (Տես բաժին 3:) Ինչպե՞ս է սուրբ գրությունների հետևողական, աղոթքով ուսումնասիրությունն օրհնել ձեզ:
- Ի՞նչ եզրահանգումներ կարող ենք կատարել Յարիոսի դստերը բժշկելու Փրկչի մասին պատմությունից: (Տես բաժին 4:) Ինչպե՞ս կարող է այսպիսի մի քանի հատվածների մասին խորհելը հարստացնել ձեր սուրբ գրությունների ուսումնասիրությունը:
- Ինչպե՞ս են Մորմոնի Գիրքը և Վարդապետություն և Ուխտերն օգնել ձեզ՝ ավելի մոտենալ Փրկչին: (Տես բաժին 5:) Որո՞նք են մի քանի այլ ուղիները, որոնցով այս սրբազան հատորներն ազդել են ձեզ վրա: Մտածեք կիսվել այս սուրբ գրությունների մասին ձեր վկայությամբ ընտանիքի անդամների և ուրիշների հետ:

Սոնչվող սուրբ գրություններ

Յեսու Ա.8, Առակներ Լ.5, 1 Նեփի 15.23–24, 2 Նեփի 3.12,Ալմա 31.5, 37.44, Հելաման 3.29–30, ՎևՈւ 98.11

Օգնություն ուսումնասիրողին

«Կարդալը, ուսումնասիրելը և խորհելը նույնը չեն: Մենք կարդում ենք բառեր և կարող ենք ունենալ գաղափարներ: Մենք ուսումնասիրում ենք և կարող ենք հայտնաբերել օրինակներ և կապակցություններ սուրբ գրքերում: Բայց, երբ մենք խորհում ենք, հայտնություն ենք հրավիրում Հոգու միջոցով: Խորհելը ինձ համար մտածելն է ու աղոթելը, որ ես անում եմ սուրբ գրություններն ուշադիր կարդալուց և ուսումնասիրելուց հետո»: (Հենրի Բ. Այրինգ, «Ծառայեք Հոգով», *Ensign*կամ *Լիահոնա,*նոյ. 2010, 60):

Հղումներ

1. "Reading the Scriptures," *Ensign,* Nov. 1979, 65.
2. *Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները,* ed. Clyde J. Williams (1997), 50:
3. "Reading the Scriptures," 64.
4. *Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները* 53–54:
5. *Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները,* 51:
6. "Obedience" (address given at the Hawaii Area Conference, June 18, 1978), 3–5, Church History Library, Salt Lake City; the last paragraph is also in *The Teachings of Howard W. Hunter,* 52.
7. "Eternal Investments" (address to CES religious educators, Feb. 10, 1989), 3; si.lds.org.
8. "Fear Not, Little Flock" (address given at Brigham Young University, Mar. 14, 1989), 2; speeches.byu.edu.
9. *Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները* 51-52:
10. "Reading the Scriptures," 64.
11. "Reading the Scriptures," 64–65.
12. "The Mission of the Church" (address given at the regional representatives' seminar, Mar. 30, 1990), 2.
13. *Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները,* 54.
14. «Մեր հավատքի սյունները» *Ensign,* Sept. 1994, 54:
15. Հարության վկաները, *Ensign,* May 1983, 16:
16. *Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները* 55-56:

Ճշմարիտ մեծություն

«Ամենօրյա կյանքի փոքր դրվագներում հեւոնոդական ջանք գործադրելը տանում է դեպի ճշմարիտ մեծության»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ուսուցանել է, որ ճշմարիտ մեծությունը գալիս է ոչ թե աշխարհիկ հաջողությունից, այլ «ծառայության և զոհաբերության . . . հազարավոր փոքր գործերից, որը հանդիսանում է մեկի կյանքը տալը կամ կորցնելը հանուն ուրիշների և հանուն Տիրոջ»:[1] Նախագահ Հանթերն ապրեց իր կյանքը համաձայն այս ուսմունքի: Փոխանակ փնտրելու ուրիշների ուշադրությունն ու շնորհակալությունը, նա կատարում էր ամենօրյա ծառայության և զոհաբերության գործեր, որոնք հաճախ աննկատ էին մնում:

Նախագահ Հանթերի համեմատաբար աննկատ ծառայության մի օրինակ էր այն խնամքը, որ ավելի քան մեկ տասնամյակ նա տանում էր իր կնոջ հանդեպ, երբ վերջինս մաքառում էր վատթարացող առողջական վիճակի հետ: 1970-ականների սկզբին Քլեր Հանթերը սկսեց գլխացավեր զգալ և ունենալ հիշողության կորուստ: Նա հետագայում տարավ մի քանի փոքրիկ կաթվածներ, որից հետո նրա համար դժվարացավ խոսելը և ձեռքերն օգտագործելը: Երբ նա սկսեց մշտական խնամքի կարիք զգալ, Նախագահ Հանթերն անում էր՝ ինչ կարողանում էր, միևնույն ժամանակ կատարելով իր պարտականությունները՝ որպես Առաքյալ: Նա գտավ ինչ որ մեկին , որ մնար Քլերի հետ օրվա ընթացքում, իսկ ինքը խնամում էր նրան գիշերը:

Ուղեղի արյունազեղումը 1981 թվականին Քլերին դարձրեց քայլելու կամ խոսելու անընդունակ: Այնուամենայնիվ, Նախագահ Հանթերը երբեմն օգնում էր նրան դուրս գալ իր

Հովսեպ և Քլեր Հանթեր

անվասայլակից և ամուր բռնում էր նրան, որպեսզի նրանք կարողանային պարել, ինչպես պարել էին տարիներ առաջ։

Երբ Քլերը տարավ երկրորդ արյունազեղումը, բժիշկները պնդեցին, որ նրան տեղափոխեին խնամքի կենտրոն և նա մնաց այնտեղ իր կյանքի վերջին 18 ամիսների ընթացքում։ Այդ ընթացքում Նախագահ Հանթերն այցելում էր նրան ամեն օր, բացառությամբ այն դեպքերից, երբ ճանապարհորդում էր Եկեղեցու հանձնարարություններով։ Երբ նա տուն էր վերադառնում, օդանավակայանից ուղիղ գնում էր նրա մոտ՝ նրա հետ լինելու համար։ Նա ժամանակի մեծ մասը կամ խորը քնած էր , կամ չէր ճանաչում նրան, բայց Նախագահ Հանթերը շարունակում էր պատմել կնոջն իր սիրո մասին և հոգ տանում, որ նա հարմարավետ զգար։

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, հետագայում ասել է Նախագահ Հանթերի «իր կնոջ՝ Քլերին քնքուշ սիրով խնամելու մասին ավելի քան տասը տարի, երբ նա լավ չէր, դա տղամարդու ազնվագույն նվիրումն էր կնոջը, որը մեզանից շատերն են տեսել մեր կյանքում»։[2]

Նախագահ Հանթերի մահից հետո մի կենսագրական տպվեց *Ensign* ամսագրում, որը մեջբերեց նրա ուսմունքները ճշմարիտ մեծության մասին և ամփոփեց, թե ինչպես էին դրանք առաջնորդել նրան իր կյանքում.

«Չնայած բնածին համեստությունը կխանգարեր նրան երբևէ համեմատություն կատարել, Նախագահ Հանթերը համապատասխանում էր մեծության իր իսկ սահմանումին։ Նրա մեծությունը երևան էր գալիս նրա կյանքի այն շրջաններում, երբ ուշադրության կենտրոնում չէր, երբ նա շրջադարձային ընտրություն էր կատարում՝ տքնաջան աշխատելու, ձախողումից հետո կրկին փորձելու և իր մերձավորին օգնելու համար։ Այդ հատկանիշներն արտացոլվում էին նրա հաջողության հասնելու նշանավոր ունակության մեջ՝ այնպիսի տարաբնույթ նախաձեռնություններում, ինչպիսիք էին՝ երաժշտությունը, իրավաբանությունը, գործարարությունը, միջազգային հարաբերությունները, ատաղձագործությունը և այդ բոլորից բացի Տիրոջ «բարի և հավատարիմ ծառա» լինելը [Մատթեոս ԻԵ.21]։ . . .

« Եկեղեցու տասնչորսերորդ Նախագահի համար Տիրոջ նպատակների կատարումը նույնքան անձնուրաց և բնական էր, որքան նրա կատարածգործերը որպես՝ դպրոցական, երիտասարդ հայր, նվիրված եպիսկոպոս և անխոնջ Առաքյալ: Տիրոջ այգին, ինչպես Հովարդ Վ. Հանթերն էր տեսնում այն, պահանջում է մշտական խնամք, և այն ամենը, ինչ Վարդապետն էր պահանջում նրանից. «բարի և հավատարիմ ծառա լինելն էր»: Նախագահ Հանթերը կատարեց դա ճշմարիտ մեծությամբ, մշտապես ուշադրություն դարձնելով Փրկչի օրինակին, ում նա ծառայեց մինչև վերջ»:[3]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Մեծության աշխարհիկ սահմանումը հաճախ մոլորեցնող է և կարող է հուշել վնասակար համեմատություններ:

Շատ Վերջին Օրերի Սրբեր երջանիկ են և վայելում են հնարավորություններ, որոնք կյանքն է առաջարկում: Սակայն ես մտահոգված եմ, որ մեզանից ոմանք դժբախտ են: Մեզանից ոմանք զգում են, որ մենք հեռու ենք մեր սպասված կատարելատիպերից: Ես առանձնապես մտահոգվում եմ նրանց համար, ովքեր արդար են ապրել, բայց մտածում են, քանի որ իրենք աշխարհում կամ Եկեղեցում չեն հասել նրան, ինչին մյուսներն են հասել, որ իրենք ձախողվել են: Մեզանից յուրաքանչյուրը փափագում է հասնել մեծության ինչ որ աստիճանի այս կյանքում: Իսկ ինչո՞ւ ոչ: Ինչ որ մեկն ասել է, որ մեզանից յուրաքանչյուրի ներսում կա մի հսկա, ով մաքառում է սելեստիալ հայրենաբաղձության դեմ: (Տես Եբր. ԺԱ.13–16, ՎԱՈ 45.11–14):

Գիտակցումը, թե ով ենք մենք և ինչ կարող ենք դառնալ, հավաստիացնում է մեզ, որ Աստծո հետ ոչ մի բան իրականում անհնարին չէ: Այն ժամանակից ի վեր, երբ մենք իմանում ենք, որ Հիսուսը կամենում է, որ մենք լինենք կենսախինդ մարդ, ժամանակի ընթացքում, երբ մենք ավելի լիարժեք ենք սովորում ավետարանի հիմնական սկզբունքները, մենք սովորում ենք ձգտել կատարելության: Այդ դեպքում մեզ համար նորություն չէ խոսել նվաճման կարևորության մասին: Դժվարություն է

«Ճշմարիտ մեծությունը [գալիս է] ծառայության հազարավոր փոքրիկ գործերից և հանձնարարություններից ու զոհաբերությունից, որոնք բաղկացած են կյանքը ուրիշների և Տիրոջ համար տալուց կամ կորցնելուց :

առաջանում, երբ աշխարհի արժեզրկված ակնկալիքները փոխում են մեծության սահմանումը:

Ո՞րն է իսկական մեծությունը: Ի՞նչն է մարդուն մեծ դարձնում:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որը կարծես թե երկրպագում է իր իսկ տեսակի մեծությանը և առաջացնում իր իսկ տեսակի հերոսներ: Տասնութից մինչև քսանչորս տարեկան երիտասարդ տարիքի մարդկանց շրջանում վերջերս կատարված հետազոտությունը բացահայտեց, որ այսօրվա երիտասարդությունը նախընտրում է «ուժեղ, միայնակ գնացող, բոլոր անսովոր արգելքները հաղթող» անհատներն, և որ նրանք հստակորեն ձգտում են իրենց կյանքը ձևավորել ըստ դյութիչ և «անսահման հարուստների» օրինակի: 1950-ականների հերոսներն էին՝ Վինստոն Չերչիլը, Ալբերտ Շվայցերը, Նախագահ Հարրի Տրումենը, Թագուհի Էլիզաբեթը և Հելեն Քելլերը՝ կույր և խուլ գրող դասախոսը: Սրանք կերպարներ էին, ովքեր կամ օգնել էին ձևավորել պատմությունը կամ հանրաճանաչ էին իրենց

ոգեշնչող կյանքով: Այսօր լավագույն տասնյակի հերոսների մեծ մասը կինոաստղեր են և շոու բիզնեսի այլ ներկայացուցիչներ, որը ցույց է տալիս մեր վերաբերմունքի փոփոխությունը : (See *U.S. News & World Report,* 22 Apr. 1985, pp. 44–48.)

Ճիշտ է, որ աշխարհի հերոսները շատ երկար չեն մնում հասարակության հիշողության մեջ, բայց այնուամենայնիվ, երբեք չեմպիոնների կամ նվաճողների պակաս չկա : Գրեթե ամեն օր մենք լսում ենք նոր ռեկորդներ սահմանող մարզիկների, գիտնականների մասին, ովքեր նոր ու սքանչելի սարքավորումներ, մեքենաներ և պրոցեսներ են հնարում, բժիշկների մասին, ովքեր կյանքեր են փրկում նոր մեթոդներով: Մենք մշտապես ենթարկվում ենք հատկապես շնորհալի երաժիշտների, զվարճացնողների, յուրօրինակ տաղանդավոր արվեստագետների, ճարտարապետների և շինարարների ազդեցությանը: Ամսագրերը, ցուցանակները և հեռուստատեսային գովազդը հեղեղում են մեզ կատարյալ ատամնաշարով և անթերի դիմագծերով մարդկանց լուսանկարներով, ովքեր նորաձև հագուստներ են կրում, և անում այն, ինչ անում են «հաջողակ» մարդիկ:

Քանի որ մենք մշտապես ենթարկվում ենք *մեծության* աշխարհի սահմանումին, հասկանալի է, որ մենք համեմատում ենք , թե ով ենք մենք և ովքեր՝ ուրիշները, կամ թվում է թե կան, ու նաև համեմատում , թե ինչ ունենք մենք, և ինչ՝ ուրիշները: Չնայած ճիշտ է, որ համեմատություններ անելը կարող է օգտակար լինել և խթանել մեզ՝ շատ բարիք կատարել և բարելավել մեր կյանքը, մենք հաճախ թույլ ենք տալիս անազնիվ և անպատշաճ համեմատություններ՝ կործանելով մեր երջանկությունը, երբ դրանք ստիպում են մեզ զգալ չկայացած, ոչ լիարժեք կամ անհաջողակ: Երբեմն այս զգացումների պատճառով մենք կատարում ենք սխալներ և մնում մեր ձախողումների վրա, անտեսելով մեր կյանքի այն կողմերը, որոնք կարող են պարունակել ճշմարիտ մեծության տարրեր: [4]

2

Հետևողական ջանք գործադրելը ամենօրյա կյանքի փոքր գործերում, տանում է դեպի ճշմարիտ մեծություն:

1905 թվականին Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն արտահայտեց հետևյալ խորը դատողությունը ճշմարիտ մեծության մասին.

«Մարգարե Ջոզեֆը սովորական Քրիստոնյա էր: Նա մտահոգվում էր փոքր բաների մասին, ծառայության ամենօրյա խնդիրների և մյուսներին հոգ տանելու մասին»:

«Այն ամենը, ինչ մենք կոչում ենք արտասովոր, նշանավոր կամ անսովոր, կարող են ստեղծել պատմություն, բայց դրանք չեն ստեղծում իրական կյանք:

Ի վերջո, ամենաճշմարիտ մեծությունն է լավ կատարել այն ամենը, ինչն Աստված է սահմանել ողջ մարդկության համընդհանուր ճակատագրի համար: Լավ հայր կամ լավ մայր լինելն ավելի մեծ է, քան կայացած գեներալ կամ պետական գործիչ լինելը: (*Juvenile Instructor,* 15 Dec. 1905, p. 752.)

Այս դատողությունը հարց է առաջացնում. Որո՞նք են Աստծո կարգած բաները, որոնք «ողջ մարդկության համընդհանուր ճակատագիրն են»: Անշուշտ, դրանք ներառում են այն ամենը,

ինչը պետք է արվի, որպեսզի դառնանք լավ հայր կամ լավ մայր, լավ որդի կամ լավ դուստր, լավ ուսանող կամ լավ ընկեր կամ լավ հարևան :

. . . Հետևողական ջանք գործադրելը ամենօրյա կյանքի փոքր գործերում տանում է դեպի ճշմարիտ մեծության: Մասնավորապես, դա ծառայության հազարավոր փոքրիկ գործերը, հանձնարարություններն ու զոհաբերությունն է, որոնք բաղկացած են կյանքը ուրիշների և Տիրոջ համար տալուց կամ կորցնելուց: Դրանք ներառում են մեր Երկնային Հոր և ավետարանի մասին գիտելիք ձեռք բերելը: Դրանք ներառում են ուրիշներին դեպի հավատք բերելն ու Նրա արքայությանը անդամակցելը: Այս բաները սովորաբար աշխարհի ուշադրությանը կամ համակրանքին չեն արժանանում: [5]

3

Մարգարե Ջոզեֆ Սմիթը մտահոգված էր ծառայության ամենօրյա խնդիրներով և մյուսների մասին հոգ տանելով:

Ջոզեֆ Սմիթը սովորաբար չի հիշվում, որպես գեներալ, քաղաքապետ, ճարտարապետ, խմբագիր կամ նախագահության թեկնածու: Մենք հիշում ենք նրան, որպես Վերականգման մարգարե, մարդ, ով նվիրված էր Աստծո սիրուն և Նրա աշխատանքն առաջ տանելուն: Մարգարե Ջոզեֆը սովորական Քրիստոնյա էր: Նա մտահոգվում էր փոքր բաների, ծառայության ամենօրյա խնդիրների և մյուսներին հոգ տանելու մասին: Երբ տասներեք տարեկան տղա էր Լայման Օ. Լիթլֆիլդը ուղեկցում էր Սիոնի ճամբարին, որը գնաց դեպի Միսսուրի: Նա հետագայում պատմեց այս դեպքը՝ մի փոքրիկ, բայց Մարգարեի կյանքում անձնապես կարևոր ծառայության քայլի մասին.

«Ճանապարհորդությունը ծայրահեղ հոգնեցուցիչ էր բոլորի համար, և ֆիզիկական տառապանքը, որն ուղեկցվում էր մեր եղբայրների կողմից տարած հալածանքների մասին իրազեկությամբ, ում համար մենք ճանապարհորդելիս նեցուկ էինք, ստիպեց ինձ մի օր ընկնել մելամաղձության գիրկը: Երբ ճամբարը պատրաստվում էր մեկնել, ես հոգնած նստել էի ճանապարհի եզրին և մտորում էի: Մարգարեն ճամբարի ամենազբաղված մարդն էր, բայց երբ նա տեսավ ինձ, կտրվեց

մյուս պարտականությունների մեծ բեռից՝ մխիթարության մի խոսք ասելու երեխային: Ձեռքը գլխիս դնելով, նա ասաց, «Քո համար տեղ չկա՞, տղաս: Եթե չկա, մենք պետք է ստեղծենք այն»: Այս հանգամանքը երկար ժամանակ տպավորություն գործեց իմ մտքի վրա, և ավելի հասուն տարիների հոգսերը դրանք չջնջեցին: (In George Q. Cannon, *Life of Joseph Smith the Prophet,* Salt Lake City: Deseret Book Co., 1986, p. 344.)

Մեկ այլ առիթով, երբ Իլինոյսի Նահանգապետ Կառլինն ուղարկեց շերիֆ Թոմաս Քինգին՝ Ադամսի շրջանից և մի քանի ուրիշների՝ որպես զորախումբ՝ ձերբակալելու Մարգարեին և հանձնելու նրան Միսսուրիի նահանգապետ Բոգսի պատվիրակներին, շերիֆ Քինգը մահացու հիվանդացավ: Նավուում Մարգարեն շերիֆին տարավ իր տուն և չորս օր եղբոր պես խնամեց նրան: (Ibid., p. 372:) Փոքրիկ, բարի և սակայն ծառայության կարևոր գործերը հազվադեպ չէին Մարգարեի համար:

Գրելով [Մարգարե Ջոզեֆ Սմիթի] Նավուում խանութ բացելու մասին , Երեց Ջորջ Ք. Քենոնը գրել է.

«Մարգարեն՝ ինքը չէր վարանում զբաղվել առևտրական և արտադրական գործերով, ավետարանը, որ նա քարոզում էր, ինչպես ֆիզիկական փրկության , այնպես էլ հոգևոր վեհացման համար էր, և նա կամենում էր անել գործնական աշխատանքի իր բաժինը: Նա անում էր այդ՝ առանց մտածելու անձնական շահի մասին: (Ibid., p. 385.)

Իսկ մի նամակում Մարգարեն գրել է.

« [Կարմիր աղյուսե խանութը Նավուում] լեփ լեցուն էր, և ես ամբողջ օրը կանգնած էի վաճառասեղանի ետևում՝ անդադար բաժանելով ապրանքները, ինչպես ամեն վաճառող, որին դուք երբևէ տեսել եք, գոհացնելու նրանց, ովքեր ստիպված էին եղել առանց իրենց Սուրբ Ծննդյան և Նոր Տարվա ճաշերի մնալ շաքարի, կերամաթի, չամիչի և այլնի, սակավության պատճառով, և նաև՝ ինքս ինձ, քանի որ ես սիրում եմ սպասավորել Սրբերին և ծառայել բոլորին՝ հուսալով, որ գուցե վեհացվեմ Տիրոջ ուրույն ժամանակին: (Ibid., p. 386.)

Այս տեսարանի վերաբերյալ Ջորջ Ք. Քենոնը մեկնաբանել է.

« Ինչպիսի~ պատկեր է այստեղ ներկայացված: Մարդ, ով ընտրվել է Տիրոջ կողմից՝ դնելու Իր Եկեղեցու հիմքը և լինելու

դրա Մարգարեն և Նախագահը, ուրախություն և հպարտություն է գտնում իր եղբայրներին և քույրերին սպասավորելով ծառայի նման: . . . Ջոզեֆը երբեք չտեսավ այն օրը, երբ նա չզգար, որ ծառայում էր Աստծուն և ձեռք բերում շնորհ Հիսուս Քրիստոսի աչքում՝ ցուցաբերելով բարություն և ուշադրություն «նույնիսկ սրանցից ամենափոքրի հանդեպ»: (Ibid., p. 386.)[6]

4

Ճշմարիտ մեծությունը գալիս է դժվարությունների դեմ համառորեն մաքառելուց և այն ուղիներով ծառայելուց, որոնք հաճախ աննկատ են:

Երեցների քվորումի լավ քարտուղար, Սփոփող Միության ուսուցիչ, սիրալիր հարևան կամ ունկնդրող ընկեր լինելը մեծ մասամբ հենց այն է, ինչ ճշմարիտ մեծությունն է ներկայացնում իրենից: Ի հեճուկս կյանքի սովորական մաքառումների և հնարավոր ձախողումների՝ անել լավագույնը և շարունակել համբերել կյանքի շարունակվող դժվարությունների մեջ, երբ այդ մաքառումներն ու խնդիրները նպաստում են ուրիշների առաջընթացին ու երջանկությանը և ինչ որ մեկի անձնական հավերժական փրկությանը՝ ահա սա է ճշմարիտ մեծությունը:

Մենք բոլորս կամենում ենք հասնել մեծության ինչ որ չափի այս կյանքում: Շատերն արդեն հասել են մեծ բաների, մյուսները ձգտում են հասնել մեծության: Թույլ տվեք քաջալերել ձեզ՝ հասնելու և միևնույն ժամանակ հիշելու, թե ով եք դուք: Թույլ մի տվեք, որ աշխարհիկ մեծության վաղանցիկ ցնորքը հաղթի ձեզ: Շատ մարդիկ են կորցնում իրենց հոգիները այդպիսի գայթակղություններից: Ձեր բարի անունը չարժե վաճառել ոչ մի մի գնով: Ճշմարիտ մեծությունը հավատարիմ մնալն է՝ «Հավատարիմ հավատքին, որը մեր ծնողներն են փայփայել, հավատարիմ մնալով այն ճշմարտությանը, որի համար մարտիրոսներն են մահացել»: (*Օրհներգեր,* հ. 254)

Ես վստահ եմ, որ մեր մեջ կան շատ մեծ, աննկատ և մոռացված հերոսներ : Ես խոսում եմ նրանց մասին , ովքեր լուռ և հետևողականորեն անում են այն գործերը, որոնք պարտավոր են անել: Ես խոսում եմ նրանց մասին, ովքեր միշտ տեղում են և ովքեր միշտ պատրաստակամ են: Ես նկատի ունեմ այն մոր արտասվոր քաջությունը, ով ժամերով, օր ու գիշեր մնում է և հոգ

տանում հիվանդ երեխային, մինչ նրա ամուսինը աշխատանքի է կամ համալսարանում: Ես ներառում եմ նրանց, ովքեր կամավոր արյուն են հանձնում կամ աշխատում տարեցների հետ: Ես մտածում եմ նրանց մասին, ովքեր հավատարմորեն կատարում են քահանայության և եկեղեցու պարտականությունները և այն ուսանողների մասին, ովքեր կանոնավորապես գրում են տուն՝ շնորհակալություն հայտնելու իրենց ծնողներին՝ նրանց սիրո և աջակցության համար:

Ես նաև խոսում եմ նրանց մասին, ովքեր ուրիշների մեջ հավատք և ցանկություն են սերմանում ավետարանով ապրելու համար, նրանց մասին, ովքեր ակտիվորեն աշխատում են կառուցելու և ձևավորելու ուրիշների կյանքը՝ ֆիզիկապես, սոցիալապես և հոգևորապես: Ես նկատի ունեմ այն մարդկանց, ովքեր ազնիվ, բարի և աշխատասեր են իրենց ամենօրյա հանձնարարություններում, բայց նաև Վարդապետի ծառաներն են և Նրա ոչխարների հովիվները:

Այժմ ես մտադրություն չունեմ արժեզրկել աշխարհի այն մեծ ձեռքբերումները, որոնք մեզ այնքան շատ հնարավորություններ են տվել և որոնք մեր կյանք են բերում մշակույթ, կարգուկանոն և խանդավառություն : Ես պարզապես առաջարկում եմ, որ մենք փորձենք ավելի որոշակիորեն կենտրոնանալ այն բաների վրա, որոնք մեծագույն արժեք ունեն կյանքում: Դուք կհիշեք, որ Փրկիչն էր, որ ասաց. «Եւ ձեզանից մեծը թող ձեր ծառան լինի»: (Մատ. ԻԳ.11):[7]

5

Իսկական մեծությունը պահանջում է հետևողական, փոքր, իսկ երբեմն էլ սովորական քայլեր՝ երկար ժամանակի ընթացքում:

Մեզանից յուրաքանչյուրը հանդիպել է մարդկանց, ովքեր դարձել են հարուստ կամ հաջողակ գրեթե վայրկենապես՝ մի գիշերվա ընթացքում: Բայց ես կարծում եմ եմ, որ չնայած այսպիսի հաջողությունը ոմանք կարող են ձեռք բերել առանց երկարատև պայքարի, մեծությունը ակնթարթային չի լինում: Ճշմարիտ մեծության հասնելը երկարատև գործընթաց է: Այն կարող է ներառել պատահական անհաջողություններ: Վերջնական արդյունքը ոչ միշտ կարող է հստակ տեսանելի լինել, բայց

թվում է, որ այն միշտ պահանջում է կանոնավոր, հետևողական, փոքր և երբեմն սովորական ու աշխարհիկ քայլեր՝ երկար ժամանակի ընթացքում: Մենք պետք է հիշենք, որ Տերն է ասել .«Փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է»: (ՎԿՈ 64.33):

Ճշմարիտ մեծությունը երբեք արդյունք չէ պատահական իրադարձության կամ միանգամյա ջանքի կամ նվաճման: Մեծությունը պահանջում է բնավորության զարգացում: Այն պահանջում է բազմաթիվ ճիշտ որոշումների կայացում բարու և չարի ամենօրյա ընտրությունների միջև, որի մասին Երեց Բոյդ Ք. Փաքերն ասել է. «Տարիների ընթացքում այս փոքրիկ ընտրությունները կմիախառնվեն միմյանց և հստակ ցույց կտան , թե ինչն ենք մենք արժևորում»: (*Ensign,* Nov. 1980, p. 21.) Այդ ընտրությունները նաև հստակորեն ցույց կտան, թե ով ենք մենք:[8]

6

Սովորական գործերը հաճախ ամենամեծ դրական ազդեցությունն են ունենում ուրիշների վրա:

Երբ մենք գնահատում ենք մեր կյանքը, կարևոր է, որ հաշվի առնենք ոչ միայն մեր նվաճումները, այլ նաև այն պայմանները, որոնցում մենք աշխատել ենք: Մենք յուրաքանչյուրս տարբեր ենք և առանձնահատուկ, մենք յուրաքանչյուրս տարբեր մեկնարկային կետեր ենք ունեցել կյանքի մրցավազքում, մենք յուրաքանչյուրս ունենք տաղանդների և հմտությունների եզակի խառնուրդ, մենք յուրաքանչյուրս ունենք մեր սեփական մարտահարվերների և խոչընդոտների բաժինը, որոնց դեմ պայքարում ենք: Ուստի, ինքներս մեզ մեր դատելը և մեր նվաճումները չպետք է պարզապես ներառեն մեր ձեռքբերումների չափը կամ մեծությունը և թիվը. այն պետք է նաև ներառի պայմանները, որոնք գոյություն են ունեցել և այն ազդեցությունը, որ մեր ջանքերն ունեցել են ուրիշների վրա:

Մեր ինքնագնահատման վերջին բաղադրիչը՝ այսինքն, մեր կյանքի ազդեցությունը ուրիշների կյանքի վրա, կօգնի մեզ հասկանալ, թե ինչու կյանքի որոշ սովորական, հասարակ գործեր պետք է այդքան բարձր գնահատվեն: Հաճախ սովորական գործերի կատարումն է, որ դրական մեծ ազդեցություն ունի ուրիշների կյանքի վրա, համեմատած այն բաների հետ, որոնք աշխարհն այնքան հաճախ կապում է մեծության հետ: [9]

7

Անելով այն բաները, որ Աստված է սահմանել որպես կարևոր՝ կառաջնորդի դեպի ճշմարիտ մեծություն:

Ինձ թվում է, որ մեծության այն տեսակը, որին մեր Երկնային Հայրն է կամենում, որ մենք հետամուտ լինենք, հասանելիության սահմաններում է բոլորի համար, ովքեր ավետարանի ցանցի մեջ են: Մենք անսահման քանակությամբ հնարավորություններ ունենք՝ անել բազմաթիվ պարզ և մանր բաներ, որոնք ի վերջո մեզ կդարձնեն մեծ: Նրանց, ովքեր իրենց կյանքը նվիրաբերել են իրենց ընտանիքների համար ծառայությանը և ուրիշների և Տիրոջ համար զոհաբերությանը, իմ լավագույն խորհուրդն է՝ պարզապես ավելի շատ անել նույնը:

Նրանց, ովքեր առաջ են տանում Տիրոջ աշխատանքն այնքան հանգիստ, բայց բազում նշանակալի ուղիներով, նրանց, ովքեր երկրի աղն են և աշխարհի ուժը և յուրաքանչյուր ազգի ողնաշարը, մենք ուղղակի կկամենայինք արտահայտել մեր հիացմունքը: Եթե դուք դիմանաք մինչև վերջ, և եթե դուք լինեք քաջարի Հիսուսի վկայության մեջ, դուք կհասնեք իսկական մեծության և մի օր կապրեք մեր Երկնային Հոր ներկայության մեջ:

Ինչպես Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն է ասել. «Եկեք չփորձենք արհեստական կյանքով փոխարինել ճշմարիտ կյանքը»: (*Juvenile Instructor,* 15 Dec. 1905, p. 753): Եկեք հիշենք, որ անելով այն գործերը, որոնք Աստծո կողմից սահմանվել են կարևոր, պետքական ու անհրաժեշտ, չնայած աշխարհը կարող է վերաբերվել դրանց որպես անկարևոր ու աննշան, ի վերջո կառաջնորդեն դեպի ճշմարիտ մեծություն:

Մենք պետք է ձգտենք հիշել Պողոս Առաքյալի խոսքերը, հատկապես եթե մենք դժգոհ ենք մեր կյանքից և զգում ենք, որ չենք հասել ինչ-որ մեծության չափի: Նա գրել է.

«Որովհետեւ մեր այժմեան թեթեւ նեղութիւնը ամենագերազանց յաւիտենական փառքի մեծութիւն է գործում մեզ համար,

Որ այս երեւող բաներին չենք մտիկ անում, այլ աներեւոյթներին. որովհետեւ երեւողները ժամանակաւոր են, իսկ չերեւողները յաւիտենական» (Բ Կոր. Դ.17–18):

Փոքր բաներն էական են: Մենք չենք հիշում Փարիսեցու զոհաբերած գումարը, այլ հիշում ենք այրի կնոջ լուման, չենք

հիշում Փղշատցիների բանակի ուժն ու զորությունը, այլ Դավթի խիզախությունն ու համոզմունքը:

Թող որ մենք երբեք չհուսալքվենք ամենօրյա այն գործերն անելիս, որն Աստված է սահմանել՝ լինելու «մարդկանց ընդհանուր ճակատագիրը»:[10]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ինչո՞ւ ենք մենք երբեմն շփոթում, թե որն է ճշմարիտ մեծությունը: (Տես բաժին 1:) Ինչո՞ւ է մեծության աշխարհիկ սահմանումը հանգեցնում այն բանին, որ որոշ մարդիկ իրենց զգան չկայացած ու դժբախտ :
- Ինչպե՞ս է Նախագահ Հանթերի ճշմարիտ մեծության սահմանումը տարբերվում աշխարհիկ սահմանումից: (Տես բաժին 2:) Ինչպե՞ս կարող է ճշմարիտ մեծության այս սահմանումն օգնել ձեզ ձեր կյանքում: Խորհեք որոշ առանձնահատուկ «փոքր բաների» շուրջ, որոնց, լավ կլիներ, ավելի շատ ժամանակ և ուշադրություն հատկացնել:
- Ի՞նչն է տպավորել ձեզ Ջոզեֆ Սմիթի ծառայության փոքր գործերից, ինչպես նկարագրված է բաժին 3-ում: Որո՞նք են ծառայության այն փոքր գործերը, որոնք օրհնել են ձեզ:
- Վերանայելով բաժին 4-ի օրինակները, որոշեք, թե ի՞նչ է նշանակում ճշմարիտ մեծություն: Երբևէ տեսե՞լ եք մարդկանց՝ այս ուղիներով ճշմարիտ մեծություն դրսևորելիս:
- Ի՞նչ կարող ենք բաժին 5-ի ուսմունքներից սովորել այն մասին, թե ինչպես հասնել ճշմարիտ մեծության:
- Որո՞նք են այն օրինակները, որոնք դուք տեսել եք, «երբ սովորական գործերի մեր կատարումը, մեծագույն դրական ազդեցությունն է ունեցել ուրիշների կյանքի վրա»: (Տես բաժին 6:)
- Մտածեք բաժին 7-ի Նախագահ Հանթերի ուսմունքների մասին : Ինչպե՞ս է ծառայությունն ու զոհաբերությունը տանում դեպի ճշմարիտ մեծության: Ինչպե՞ս է «Հիսուսի մասին

վկայության մեջ անվեհեր» մնալն օգնում մեզ՝ հասնել ճշմարիտ մեծության:

Սոնչվող սուրբ գրություններ

Ա Սամուել ԺԶ.7,Ա Տիմոթեոս Դ.12, Մոսիա 2.17, Ալմա 17.24–25, 37.6, Մորոնի10.32, ՎևՈւ 12.8, 59.23, 76.5–6, 88.125

Օգնություն ուսուցչին

«Երբ աղոթքով նախապատրաստվեք ուսուցանելու կարող եք առաջնորդվել՝ շեշտելով որոշակի սկզբունքներ: Դուք գուցե ձեռք բերեք ըմբռնում, թե ինչպես ներկայացնել որոշ գաղափարներ: Դուք կարող եք բացահայտել օրինակներ, առարկայական դասեր և ոգեշնչող պատմություններ կյանքի պարզ գործունեության մեջ: Դուք գուցե տպավորված զգաք՝ հրավիրելու մի բացառիկ անձնավորության դասին օժանդակելու համար: Դուք գուցե հիշեք անձնական մի փորձառության մասին, որով կարող եք կիսվել» (*Teaching, No Greater Call* [1999]

Հղումներ

1. «Ի՞նչ է ճշմարիտ մեծությունը»: *Ensign,* Feb. 1987, 71):
2. James E. Faust, "Howard W. Hunter: Man of God," *Ensign,* Apr. 1995, 28.
3. "President Howard W. Hunter: The Lord's 'Good and Faithful Servant,'" *Ensign,* Apr. 1995, 9, 16.
4. «Ի՞նչ է ճշմարիտ մեծությունը»: 70:
5. «Ի՞նչ է ճշմարիտ մեծությունը»: 70–71:
6. «Ի՞նչ է ճշմարիտ մեծությունը»: 71:
7. «Ի՞նչ է ճշմարիտ մեծությունը»: 71–72:
8. «Ի՞նչ է ճշմարիտ մեծությունը»: 72:
9. «Ի՞նչ է ճշմարիտ մեծությունը»: 72:
10. «Ի՞նչ է ճշմարիտ մեծությունը»: 72:

«Մեզանից յուրաքանչյուրը պետք է ընթերցի և վերընթերցի կորած ոչխարի առակը: . . .Հուսով եմ, որ այդ առակի ուղերձը կտպավորվի մեզանից յուրաքանչյուրի սրտերում»:

Վերադարձեք և մասնակցեք Տիրոջ խնջույքին

«Օգնության հասեք ավելի պակաս ակտիվներին և գիտակցեք ուրախությունը, որը կտրվի ձեզ և նրանց, ում դուք օգնում եք»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Եկեղեցու Նախագահ դառնալուց մեկ օր անց Նախագահ Հովարդ Վ. Հանթերը այս սիրառատ հրավերն ուղղեց Եկեղեցու անդամներին, ովքեր ակտիվ մասնակցություն չէին ցուցաբերում.

«Նրանց, ովքեր օրինազանցություն են գործել կամ վիրավորվել են, մենք ասում ենք՝ վերադարձեք: Նրանց, ովքեր ցավ են ապրել, պայքարում են և վախենում են, մենք ասում ենք՝ թույլ տվեք կանգնել ձեր կողքին և սրբել ձեր արցունքները: Նրանց, ովքեր շփոթված են և բոլոր կողմերից ենթարկվում են մեղքի հարձակումներին, մենք ասում ենք՝ եկեք բոլոր ճշմարտությունների Աստծո մոտ և շարունակվող հայտնությունների Եկեղեցի: Վերադարձեք: Կանգնեք մեզ հետ: Շարունակեք առաջ շարժվել: Եղեք հավատացող: Ամեն ինչ լավ է, և ամեն ինչ լավ է լինելու: Մասնակցեք խնջույքին, որը տեղի է ունենում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում և ձգտեք հետևել Բարի Հովվին, ով պատրաստել է այն: Ունեցեք հույս, գործադրեք հավատք, ստացեք և տվեք գթասրտություն՝ Քրիստոսի մաքուր սերը»:[1]

Մի քանի ամիս անց գերագույն համաժողովի իր առաջին ելույթում՝ որպես Եկեղեցու Նախագահ, Նախագահ Հանթերն ասել է, որ ինքը տպավորություն է ունեցել, որ պիտի շարունակի այս շեշտադրումը: «Վերադարձեք», կրկնել է նա: «Տառացիորեն ընդունեք [Փրկչի] «Եկ, հետևիր ինձ» հրավերը: . . . Նա միակ ճշմարիտ ճանապարհն է. նա է լույսն աշխարհի»:[2]

Իր կյանքի ընթացքում Նախագահ Հանթերն օգնել է Եկեղեցու բազմաթիվ անդամների՝ վերադառնալ ակտիվության: Պատմելով վաղ չափահասության շրջանի նման մի փորձառության մասին, նա ասել է.

«Իմ ծխի եպիսկոպոսը նշանակեց ինձ որպես ծխի ուսուցիչ մի եղբոր համար, ով պարծենում էր, որ Եկեղեցու ամենաավագ սարկավագն էր: Տնային ուսուցումը ծխի ուսուցումն էր այդ օրերում: Նրա խնդիրն այն էր, որ սիրում էր գոլֆ խաղալ կիրակի օրը: Հիասթափեցնող էր նրա և նրա կնոջ հետ ամիսներ շարունակ տևող հանդիպումները և ակնհայտ առաջընթաց չտեսնելը: Սակայն ի վերջո նրան ասվեց ճիշտ բառը և արձագանքը չուշացավ: Այդ բառը *ուխտն* էր: Մենք հարցրեցինք նրան. «Ի՞նչ նշանակություն ունի ձեզ համար մկրտության ուխտը»: Նրա դեմքի արտահայտությունը փոխվեց, և առաջին անգամ մենք տեսանք նրան լուրջ կողմից: Ի վերջո նա եկավ մեր դասերին, թողեց գոլֆը և իր կնոջը տարավ տաճար»:[3]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Կորած ոչխարի առակն ուսուցանում է մեզ՝ փնտրել նրանց, ովքեր կորել են:

Առաջին Նախագահությունը Եկեղեցու անդամներին [հղել է] կարևոր հրավեր . . . :

«Նրանց, ովքեր դադարել են ակտիվ լինել և նրանց, ովքեր քննադատող են դարձել, մենք ասում ենք. «Վերադարձեք: Վերադարձեք և մասնակցեք Տիրոջ խնջույքին, և կրկին ճաշակեք Սրբերի հետ ընկերակցելու քաղցր և բավարարող պտուղները»:

Մենք վստահ ենք, որ շատերն են ցանկացել վերադառնալ, սակայն կաշկանդված են զգացել անելու այդ: Մենք վստահեցնում ենք ձեզ, որ դուք կգտնեք ձեզ ընդունող բաց բազուկներ և հոժար ձեռքեր՝ աջակցելու ձեզ»: (*Ensign,* March 1986, p. 88.)

Կարծում եմ, որ մենք բոլորս էլ տպավորվել էինք այս վեհանձն կոչով, որը հավասարազոր է Մորմոնի Գրքում Ալմա մարգարեի խոսքերին, որոնք վերաբերում են հրավերին, որը հղված է Տիրոջ կողմից: Նա ասել է.

«Սիա նա ուղարկում է մի հրավեր բոլոր մարդկանց, քանզի ողորմության բազուկները մեկնված են դեպի նրանց, և նա ասում է. Ապաշխարեք, և ես կընդունեմ ձեզ:

Այո, նա ասում է. Եկեք ինձ մոտ, և դուք կճաշակեք կենաց ծառի պտղից. այո, դուք կուտեք և կխմեք կյանքի հացից ու ջրից անհատույց.

Այո, եկեք ինձ մոտ և առաջ բերեք արդարության գործեր»: (Ալմա 5.33-35:)

Մեզանից յուրաքանչյուրը պետք է ընթերցի և վերընթերցի կորած ոչխարի առակը, որը գտնվում է Ղուկասի ԺԵ գլխում, սկսելով չորրորդ հատվածից.

«Ձեզանից ո՞վ է այն մարդը, որ հարիւր ոչխար ունենայ, նորանցից մէկը կորցնէ. չի՞ թողիլ իննսուն եւ ինը անապատումը, եւ այն կորածի ետեւից գնալ, մինչեւ որ գտնէ նորան:

Եւ երբոր գտնէ, ուրախանալով իր ուսերի վերայ կդնէ նորան:

Եւ տուն գալով, բարեկամներին եւ դրացիներին կկանչէ եւ նորանց կասէ. Ուրախացէք ինձ հետ. որովհետեւ իմ կորած ոչխարը գտայ» [Ղուկաս ԺԵ.4–6]: . . .

Մարգարե Ջոզեֆ Սմիթը նշանակալի կերպով փոփոխել է մեկ հատված Ջոզեֆ Սմիթի Թարգմանության մեջ: Այն ասում է. «Ձեզանից ո՞վ է այն մարդը, որ հարիւր ոչխար ունենայ, նորանցից մէկը կորցնէ. չի՞ թողիլ իննսուն եւ ինը, *եւ այն կորածի ետեւից գնալ անապատը,* մինչեւ որ գտնէ նորան: (ՋՍԹ, Ղուկաս ԺԵ.4, շեղագիրն ավելացված է:)

Սյդ թարգմանությունը հուշում է, որ հովիվը թողնի իր ապահով հոտը և գնա անապատ, որը նշանակում է աշխարհում փնտրել նրան, ով կորել է: Որտեղի՞ց է կորել: Կորել է հոտից, որտեղ կա պաշտպանություն և ապահովություն: Հուսով եմ, որ այդ առակի ուղերձը կտպավորվի մեզանից յուրաքանչյուրի սրտում:[4]

2

Տերն ակնկալում է, որ մենք լինենք Նրա ենթահովիվները և գտնենք նրանց, ովքեր պայքարում են կամ կորել են:

Ի՞նչ պետք է անենք մենք, որպեսզի օգնենք նրանց, ովքեր անապատում կորցրել են իրենց ճանապարհը:

Ելնելով այն բանից, ինչ Վարդապետն է ասել իննսունիններին թողնելու և մեկին գտնելու համար անապատ գնալու մասին և ելնելով Առաջին Նախագահության հրավերից, որն ուղղված է նրանց, ովքեր դադարել են ակտիվ լինել կամ քննադատական են մոտենում վերադառնալուն, մենք հրավիրում ենք ձեզ՝ ներգրավվել հոգիներ փրկելու գործում: Օգնության հասեք ավելի պակաս ակտիվներին և գիտակցեք ուրախությունը, որը կտրվի ձեզ և նրանց, ում դուք օգնում եք, եթե դուք և նրանք մասնակցեք վերադառնալու և Տիրոջ խնջույքին մասնակցելու հրավերներին:

Տերը՝ մեր Բարի Հովիվը, ակնկալում է, որ մենք լինենք Նրա ենթահովիվները և գտնենք նրանց, ովքեր պայքարում են կամ կորել են: Մենք չենք կարող ձեզ ասել, թե ինչպես անել դա, սակայն երբ դուք ներգրավվեք և ոգեշնչում փնտրեք, ջանքերի արդյունքում հաջողության կհասնեք ձեր տարածքներում, . . . ցցերում և ծխերում: Որոշ ցցեր արձագանքել են նախկին խնդրանքներին և ունեցել են ուշագրավ հաջողություն:

Ծանոթ օրհներգի խոսքերը պարունակում են մեզ տրված Տիրոջ կոչը.

Լսիր, նա սիրով կանչում է,
Մեղմորեն ասում այսօր.
«Չե՞ս փնտրի իմ կորածներին,
Որ մոլորվել են ճամփին»:

Եվ այդ օրհներգը, որը հաճախ ենք երգում, նշում է, թե ինչը պիտի լինի մեր պատասխանը.

«Դարձրու մեզ ենթահովիվներ,
Տուր մեզ սեր, որը խորն է:
Ուղարկիր մեզ դեպի անապատ,
Փնտրենք մոլորված ոչխարին»:

(*Hymns,* 1985, no. 221.)

Եթե մենք անենք սա, հավերժական օրհնություններ կտրվեն մեզ:[5]

Կորածին, դժբախտին և ճանապարհը կորցրածին փնտրելը Տիրոջ աշխատանքն է: . . . Ալմայի աղոթքով լի խնդրանքը մեր հանձնարարության սրբության լավ հիշեցում է:

«Ո՛վ Տեր, խնդրում եմ շնորհիր մեզ, որ մենք կարողանանք հաջողություն ունենալ՝ [հոգիներին] կրկին Քրիստոսով դեպի քեզ բերելու: Ահա, ո՛վ Տեր, նրանց հոգիներն արժեքավոր են» (Ալմա 31.34–35):

«Ո՛վ Տեր, խնդրում եմ շնորհիր մեզ, որ մենք կարողանանք հաջողություն ունենալ՝ [հոգիներին] կրկին Քրիստոսով դեպի քեզ բերելու:

Ահա, ո՛վ Տեր, նրանց հոգիներն արժեքավոր են»: (Ալմա 31.34–35:)[6]

3

Մեր գլխավոր նպատակն է օգնել մարդկանց վերադառնալ Աստծո ներկայություն:

Տարիների ընթացքում Եկեղեցին մեծ ջանքեր է գործադրել՝ ետ բերելու համար նրանց, ովքեր ավելի պակաս ակտիվ են: . . . Եվ ո՞րն է այդ ամենի նպատակը: Դա մեր եղբայրների և քույրերի հոգիները փրկելն է և տեսնելը, որ նրանք ստացել են վեհացման արարողությունները:

Երբ ես ծառայում էի որպես ցցի նախագահ Լոս Անջելեսի տարածքում, իմ խորհրդականները և ես խնդրեցինք մեր եպիսկոպոսներին՝ հոգատարությամբ ընտրել չորս կամ հինգ զույգեր, ովքեր ցանկանում էին մեծացնել իրենց աճը Եկեղեցում: Ոմանք ոչ ակտիվ էին, մյուսներն էլ նորադարձներ, սակայն նրանք մեծ ցանկություն ունեին հոգևոր առումով աճելու: Մենք նրանց

հրավիրեցինք ցցի դասի և ուսուցանեցինք ավետարանը։ Տաճարի վրա հատուկ ուշադրություն դարձնելու փոխարեն՝ մենք շեշտեցինք Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ ավելի լավ հարաբերությունները։ Մեր հոգատար ընտրության գործընթացը հաջողության երաշխիք դարձավ, և այս զույգերի մեծ մասն ակտիվ դարձավ և գնաց տաճար։

Թույլ տվեք կիսվել [մեկ այլ] փորձառությամբ։ . . . Ծխերից մեկում մենք ունեինք մի եղբայր, ով չէր հաճախում որևէ ժողովի։ Նրա կինը անդամ չէր։ Նա թշնամաբար էր տրամադրված, ուստի մենք չէինք կարող տնային ուսուցիչներ ուղարկել նրանց տուն։ Եպիսկոպոսը մոտեցել էր այս եղբորը և ասել, որ նա հարաբերություն ուներ Փրկչի հետ, որը նա պետք է ընդլայներ։ Եղբայրը բացատրել էր եպիսկոպոսին իր ոչ անդամ կնոջ հետ ունեցած խնդիրը, ուստի եպիսկոպոսը խոսել էր նրա հետ, շեշտելով նույն բանը՝ Տիրոջ հետ ունեցած հարաբերությունը, որը պետք է ընդլայներ։ Նրա տրամադրվածությունը չփոխվեց, սակայն ուրախ էր իմանալու, որ Վերջին Օրերի Սրբերը հավատում են Քրիստոսին, և արդյունքում նա զիջեց իր որոշ դիրքերը։

Հաջողությունն անմիջապես չեկավ, սակայն նրանք, ովքեր այցելության էին գնում նրանց տուն, շարունակեցին ընդգծել Տիրոջ հետ զույգի հարաբերության կարևորությունը։ Ժամանակի ընթացքում նա բարեկամաբար տրամադրվեց և, ի վերջո, համաձայնեց իր ամուսնու հետ գալ ցցի դասին, որն ուսուցանում էին բարձրագույն խորհրդի անդամները։ Մենք շեշտը դրեցինք ուխտի վրա, որը մարդը կապում է մկրտվելիս և այլ ուխտերի վրա։ Ի վերջո, նա դարձավ Եկեղեցու անդամ, և ամուսինը դարձավ քահանայության արդյունավետ ղեկավար։ . . .

Ինձ վրա մեծ տպավորություն է գործել Մորմոնի Գրքի տիտղոսաթերթի նախադասություններից մեկը, որը նկարագրում է այդ սուրբ գրքի նպատակներից մեկը. «Որպեսզի նրանք [Իսրայելի տունը վերջին օրերում] կարողանան իմանալ *Տիրոջ ուխտերը*»։ (շեղագրերն ավելացված են։) Որպես ցցի նախագահություն՝ մենք ոգեշնչվել էինք այդ ավելի պակաս ակտիվների հետ կիսվելիս շեշտը դնել դրա վրա։ Մենք փորձեցինք կոչով դիմել նրանց, հիմնվելով ուխտերի կարևորության վրա, որ նրանք կապել էին Տիրոջ հետ. ապա մենք ուսուցանեցինք նրանց մկրտության ուխտի և մյուս ուխտերի կարևորությունը,

որոնք նրանք կարող էին կապել, որն էլ նրանց կմիավորեր որպես հավերժական ընտանիք։[7]

Տեղական մակարդակով Եկեղեցու սահուն գործունեության ողջ նպատակն է՝ որակել անհատներին վերադառնալու Աստծո ներկայություն։ Դա կարող է տեղի ունենալ միայն նրանց արարողություններ ստանալու և տաճարում ուխտեր կապելու միջոցով։[8]

Մեր ջանքերը կենտրոնանում են փրկագնման ուխտերը և ավետարանի արարողությունները բոլոր մարդկանց համար մատչելի դարձնելու վրա. ոչ անդամի համար մեր միսիոներական աշխատանքի միջոցով, ավելի պակաս ակտիվների համար ընկերակցության և ակտիվացնելու ջանքերի միջոցով, ակտիվ անդամների համար մասնակցության և Եկեղեցում ծառայելու միջոցով և նրանց համար, ովքեր անցել են վարագույրի մյուս կողմը, մահացածների փրկության աշխատանքի միջոցով։[9]

Եկեղեցու յուրաքանչյուր անդամի մենք առաջնորդում ենք դեպի մեկ նպատակ։ Դա կայանում է նրանում, որ բոլորը ստանան ավետարանի արարողությունները և ուխտեր կապեն մեր Երկնային Հոր հետ, որպեսզի նրանք կարողանան վերադառնալ նրա ներկայություն։ Դա է մեր գլխավոր նպատակը։ Արարողությունները և ուխտերը միջոցներ են այդ աստվածային էությունը ձեռք բերելու համար, որը մեզ կրկին կվերադարձնի նրա ներկայություն։ . . .

Հիշեք նպատակը՝ հրավիրել բոլորին գալ Քրիստոսի մոտ։ . . .

Ես վկայում եմ, իմ եղբայրներ և քույրեր, նրա աստվածայնության և զորության մասին, փրկելու նրանց, ովքեր կգան իր մոտ կոտրված սրտով և փշրված հոգով։ Արարողությունների և նրա Սուրբ Հոգու միջոցով ամեն մարդ կարող է մաքուր դառնալ։[10]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Նախագահ Հանթերը խրախուսում է յուրաքանչյուր Եկեղեցու անդամի ընթերցել և վերընթերցել կորած ոչխարի առակը (տես բաժին 1, Ղուկաս ԺԵ.4–7)։ Ի՞նչ ուղերձներ եք դուք ստանում այդ առակից և առաջին բաժնի մյուս ուսմունքներից։

Խորհեք, թե ինչպես կարող են այդ ուսմունքներն առաջնորդել ձեզ, երբ ծառայում եք Եկեղեցում:

- Ո՞րն է մեր պարտականությունը որպես Տիրոջ ենթահովիվներ: (Տես բաժին 2:) Ինչպե՞ս կարող ենք օգնել մարդկանց վերադառնալ Եկեղեցի: Ինչպե՞ս եք դուք (կամ մեկը, ում դուք գիտեք) օրհնվել մեկի կողմից, ով օգնության է հասել ձեզ, երբ դուք պայքարում էիք կամ մոլորվել էիք:
- Ի՞նչ կարող ենք սովորել փորձառություններից, որոնք Նախագահ Հանթերը մեջբերում է 3-րդ բաժնում: Ինչպե՞ս կարող է ուխտերին կարևորություն տալն օգնել Եկեղեցու անդամներին՝ վերադառնալ ակտիվության:

Առնչվող սուրբ գրություններ

Եզեկիել ԼԴ.1–16, Ղուկաս ԺԵ.11–32, Հովհաննես Ժ.1–16, 26–28, ԺԳ.35, Ա Հովհաննես Ա.7, Մոսիա ԺԸ.8–10, Հելաման Զ.3, 3 Նեփի 18.32, Մորոնի 6.4–6, Վևու 38.24

Օգնություն ուսումնասիրողին

Սկզբունքը ճշմարտություն է, որն առաջնորդում է որոշումները և արարքները: «Երբ կարդաք, հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ ավետարանական սկզբունք է ուսուցանվում այս հատվածում: Ի՞նչպես կարող եմ կիրառել սա իմ կյանքում»: (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* [1999], 17):

Հղումներ

1. Jay M. Todd, "President Howard W. Hunter: Fourteenth President of the Church," *Ensign,* July 1994, 5.
2. "Exceeding Great and Precious Promises," *Ensign,* Nov. 1994, 8.
3. "Make Us Thy True Undershepherds," *Ensign,* Sept. 1986, 9.
4. "Make Us Thy True Undershepherds," 7–8.
5. "Make Us Thy True Undershepherds," 9.
6. "The Mission of the Church" (address given at the regional representatives' seminar, Mar. 30, 1990), 4.
7. "*Make Us Thy True Undershepherds,*" 8-9.
8. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 218.
9. *The Teachings of Howard W. Hunter,* 245-46.
10. *The Teachings of Howard W. Hunter,* 218.

Տաճարը՝ մեր անդամակցության մեծ խորհրդանիշը

«Իմ սրտի ամենանվիրական ցանկությունն է, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ լինի արժանի՝ մտնելու տաճար»։

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Հովարդ Վ. Հանթերի մայրը Եկեղեցու հավատարիմ անդամ էր իր ողջ կյանքում, բայց նրա հայրը մկրտված չէր մինչև Հովարդը դարձավ 19 տարեկան։ Տարիներ անց, երբ Հովարդը ցցի նախագահ էր Կալիֆոռնիայում, ցցի անդամները ուղևորություն կատարեցին դեպի Մեսա Արիզոնա Տաճարը տաճարային աշխատանք կատարելու համար։ Նախքան նիստի սկսվելը տաճարի նախագահը նրան խնդրեց ելույթ ունենալ նրանց համար, ովքեր հավաքվել էին աղոթատանը։ Դա Նախագահ Հանթերի 46-րդ ծննդյան տարեդարձն էր։ Նա հետագայում գրեց այդ փորձառության մասին.

«Մինչ ես խոսում էի համայնքի համար, . . . հայրս և մայրս մտան աղոթատուն ճերմակ հագած։ Ես գաղափար չունեի, որ հայրս պատրաստ էր իր տաճարային օրհնությունների համար, չնայած մայրս մի որոշ ժամանակ անհանգստացած էր այդ առիթով։ Ես այնպես էի հուզված, որ չկարողացա շարունակել խոսքս։ Նախագահ Փիերսը [տաճարի նախագահը] մոտեցավ ինձ և բացատրեց ընդհատելու պատճառը։ Երբ հայրս և մայրս եկել էին տաճար այդ առավոտ, նրանք խնդրել էին նախագահին, որ ինձ չասեր, որ իրենք այնտեղ էին, որովհետև նրանք ուզում էին, որ դա լիներ ծննդյան օրվա անակնկալ։ Դա մի ծննդյան օր էր, որը ես երբեք չմոռացա, որովհետև այդ օրը նրանք օժտում ստացան և ես արտոնություն ունեցա ականատես լինել նրանց կնքմանը, որից հետո ես կնքվեցի նրանց հետ»։[1]

Մեսա Արիզոնա Տաճարը, որտեղ Նախագահ Հոլպրդ Վ. Հանթերը 1953 թվականին կնքվեց իր ծնողների հետ :

Հետագայում 40 տարուց մի քիչ ավելի անց, երբ Հովարդ Վ. Հանթերը որպես Եկեղեցու Նախագահ իր առաջին հրապարակային ելույթն ունեցավ, անդամներին ուղղված նրա գլխավոր ուղերձներից մեկն էր՝ ավելի մեծ նվիրումով ձգտել տաճարային օրհնությունների:[2] Նա շարունակում էր շեշտել այդ ուղերձը՝ որպես Նախագահ ողջ իր ծառայության ընթացքում: Խոսելով 1994թվականի հունիսին Նավուի տաճարի տարածքում, նա ասաց.

«Այս ամսվա սկզբին ես սկսեցի իմ ծառայությունը՝ արտահայտելով խորը ցանկություն, որ ունենանք տաճարին արժանավոր դառնալու ավելի ու ավելի շատ Եկեղեցու անդամներ: Ինչպես [Զոզեֆ Սմիթի] օրերում, արժանավոր և օժտում ստացած անդամներ ունենալը ողջ աշխարհում արքայությունը կառուցելու բանալին է: Տաճարային արժանավորությունը հավաստիացնում է, որ մեր կյանքը ներդաշնակության մեջ է Տիրոջ կամքի հետ և մենք համահունչ ենք՝ ստանալու Նրա առաջնորդությունը մեր կյանքում: [3]

Մի քանի ամիս անց՝ 1995 թվականի հունվարին, Նախագահ Հանթերի վերջին հրապարակային գործը Յուտայում Բաունթիֆուլի Տաճարի նվիրագործումն էր: Նվիրագործման աղոթքում, նա խնդրեց, որ տաճարի օրհնությունները հարստացնեին բոլոր նրանց կյանքերը, ովքեր մտնում էին այնտեղ:

«Մենք խոնարհաբար աղոթում ենք, որ Դու ընդունես այս շինությունը և թող Քո օրհնությունները լինեն դրա վրա: Թող Քո ոգին մասնակցի և ուղեկցի բոլորին, ովքեր պաշտոնավարում են այստեղ, որպեսզի սրբությունը գերիշխի յուրաքանչյուր սենյակում: Թող որ բոլորը, ովքեր մտնում են, ունենան մաքուր ձեռքեր և անբիծ սրտեր: Թող որ նրանք շենացած լինեն իրենց հավատքում և հեռանան խաղաղության զգացումով, գովաբանելով Քո սուրբ անունը: . . .

« Թող որ այս Տունն ապահովի խաղաղության ոգի բոլորին, ովքեր հետևում են դրա վեհափառությանը, և հատկապես նրանց, ովքեր մտնում են իրենց սեփական սրբազան արարողությունների համար և կատարում վարագույրից այն կողմ գտնվող աշխատանք իրենց սիրելիների համար: Թող որ նրանք զգան Քո աստվածային սերն ու ողորմածությունը: Թող որ նրանք արտոնված լինեն ասելու, ինչպես ասել է Սաղմոսողը հնում.

«Մենք իրար հետ քաղցրութիւնով խորհուրդ էինք անում, և Աստուծոյ տունն էինք գնում ամբոխի հետ»:

Երբ մենք նվիրագործում ենք այս սրբազան շինությունը, մենք հենց մեր կյանքն ենք վերանվիրաբերում Քեզ և Քո աշխատանքին»:[4]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները



1

Մեզ համար խրախուսելի է հիմնել տաճարը, որպես մեր անդամակցության մեծ խորհրդանիշ:

Այս սրբազան պաշտոնին [Եկեղեցու Նախագահ] իմ կանչի ընթացքում, կոչ է արվել Եկեղեցու բոլոր անդամներին՝ հաստատելու Տիրոջ տաճարը որպես իրենց անդամակցության մեծ խորհրդանիշ և մի աստվածային միջավայր՝ իրենց ամենասրբազան ուխտերի համար:

Երբ ես մտածում եմ տաճարի մասին, ես հիշում եմ այս խոսքերը.

«Տաճարն ուսուցման վայր է, որտեղ Աստծո արքայության վերաբերյալ խորը ճշմարտություններ են բացահայտվում: Այն խաղաղության վայր է, որտեղ միտքը կարող է կենտրոնանալ հոգևոր բաների վրա և աշխարհիկ հոգսերը կարող են մի կողմ դրվել: Տաճարում մենք ուխտեր ենք կապում՝ հնազանդվելու Աստծո օրենքներին և խոստումներ են տրվում մեզ՝ միշտ պայմանավորված մեր հավատարմությամբ, որոնք տարածվում են դեպի հավերժություն» (*The Priesthood and You,* Melchizedek Priesthood Lessons—1966, Salt Lake City: The Church of Jesus Christ of Latter-day Saints, 1966, p. 293):

Տերն Ինքը մեզ տված Իր հայտնություններում տաճարը դարձրել է մեծ խորհրդանիշ Եկեղեցու անդամների համար: Ուշադրություն դարձրեք, թե ինչպիսի վերաբերմունք և վարքագիծ է Տերը մատնանշել, Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Կիրթլենդի Սրբերին տրված Իր խորհրդում, երբ նրանք պատրաստվում էին տաճար կառուցել: Այս խորհուրդը դեռևս կիրառելի է.

«Կազմակերպվեք. նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան. և հաստատեք մի տուն, այսինքն՝ աղոթքի տուն, ծոմապահության տուն, հավատքի տուն, ուսման տուն, փառքի տուն,

կարգ ու կանոնի տուն, Աստծո տուն» (Վարդապետություն և Ուխտեր 88.119)։ Արդյո՞ք այդ վերաբերմունքը և վարքը իսկապես արտահայտում է այն, թե մեզանից յուրաքանչյուրն ինչ է փափագում և ձգտում լինել։ . . .

Որպեսզի տաճարն իսկապես խորհրդանիշ լինի մեզ համար, մենք պետք է ցանկանանք դա։ Մենք պետք է արժանի ապրենք՝ տաճար մտնելու համար։ Մենք պետք է պահենք մեր Տիրոջ պատվիրանները։ Եթե կարողանանք մեր կյանքում հետևել Վարդապետին, և Նրա ուսմունքներն ու օրինակը դարձնենք մեզ համար գլխավոր օրինակ, մեզ համար դժվար չի լինի արժանի լինել տաճարին, հաստատուն և հավատարիմ լինել կյանքի ամեն քայլափոխում, քանի որ մենք նվիրված կլինենք վարքի և հավատքի միակ սուրբ չափանիշին։ Տանը լինի , թե խանութում, դպրոցում թե դպրոցն ավարտելուց տարիներ անց, անկախ նրանից լիովին միայնակ կգործենք, թե մի խումբ մարդկանց համաձայնությամբ, մեր ուղին կլինի հստակ, և մեր չափանիշները՝ ակնհայտ։

Անչափ կարևոր է, որ կարողանաք ձեր սկզբունքները պահել, ապրել ազնիվ և հավատքով՝ ըստ ձեր համոզմունքների։ Ճշմարիտ սկզբունքին այդ նվիրվածությունը՝ մեր անձնական կյանքում, մեր տանը, ընտանիքում և ամենուր, որտեղ հանդիպում և շփվում ենք այլ մարդկանց հետ, Աստված մեզանից ի վերջո պահանջում է այդ նվիրվածությունը։ Դա պահանջում է ողջ հոգով, խորապես համակող, հավերժորեն փայփայված նվիրվածություն սկզբունքներին, որոնք գիտենք, որ ճշմարիտ են Աստծո տված պատվիրաններում։ Եթե մենք լինենք հավատարիմ և նվիրված Տիրոջ սկզբունքներին, ապա միշտ կլինենք տաճարին արժանի, և Տերն ու Նրա սուրբ տաճարները կլինեն Նրա հետևորդ լինելու մեծ խորհրդանիշները։[5]

2

Մեզանից յուրաքանչյուրը պետք է ձգտի արժանի լինել՝ ստանալու տաճարային երաշխավորագիր։

Իմ ամենանվիրական ցանկությունն է, որ Եկեղեցու ամեն մի անդամ արժանի լինի մտնելու տաճար։ Տիրոջը կգոհացներ, եթե յուրաքանչյուր չափահաս անդամ արժանի լիներ և կրեր ընթացիկ տաճարային երաշխավորագիր։ Այն բաները,

«Եպիսկոպոսներն ու ցցի նախագահները. . . ուղղում են ձեզ մի քանի հարցեր ձեր արժանավորության վերաբերյալ՝ որակավորելու տաճարային երաշխավորագրի համար:

որոնք մենք պետք է անենք և չպետք է անենք՝ տաճարային երաշխավորագրին արժանի լինելու համար, հենց դրանք են, որ կապահովեն, որ մենք երջանիկ լինենք որպես անհատներ և որպես ընտանիքներ:[6]

Մեր Երկնային Հայրը հստակորեն ընդգծել է, որ նրանք, ովքեր տաճար են մտնում, պետք է մաքուր լինեն և զերծ աշխարհի մեղքերից: Նա ասել է.«Եվ որքան որ իմ ժողովուրդը Տիրոջ անունով տուն կառուցի ինձ համար, և թույլ չտա, որ որևէ անմաքուր բան մտնի այնտեղ, որպեսզի այն չապականվի, իմ փառքը պիտի հանգչի դրա վրա, . . .Բայց եթե այն պղծվի, ես չեմ մտնի այնտեղ, և իմ փառքը չի լինի այնտեղ. քանզի ես չեմ մտնի անսուրբ տաճարներ» (ՎԿՈ 97.15, 17):

Կարող է ձեզ համար հետաքրքիր լինի իմանալ, որ սովորաբար Եկեղեցու Նախագահն էր ստորագրում յուրաքանչյուր տաճարային երաշխավորագիրը: Ահա թե որքան ուժեղ էին առաջին նախագահները զգում արժանավորության կարևորությունը տաճար մտնելու համար: 1891թվականին պատասխանատվությունը դրվեց եպիսկոպոսների և ցցի նախագահների վրա, ովքեր տալիս

են մի քանի հարցեր տաճարային երաշխավորագրի համար՝ ձեր արժանավորության որակավորման վերաբերյալ: Դուք պետք է իմանաք, թե ինչ է սպասվում ձեզանից, որպեսզի որակավորվեք տաճարային երաշխավորագրի համար:

Դուք պետք է հավատաք Աստծուն՝ Հավերժական Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն: Դուք պետք է հավատաք, որ սա նրանց սրբազան և աստվածային աշխատանքն է: Մենք խրախուսում ենք ձեզ ամեն օր աշխատել ձեր վկայությունը շենացնելու՝ Երկնային Հոր և Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ: Հոգին, որ զգում եք, Սուրբ Հոգին է, որ վկայում է ձեզ Նրանց իսկության վերաբերյալ: Հետագայում դուք ավելի շատ բան կսովորեք, ուսուցման և արարողությունների միջոցով բացահայտված Աստվածագլխի մասին:

Դուք պետք է հաստատեք Եկեղեցու մյուս Բարձրագույն Իշխանություններին և տեղական իշխանություններին: Երբ դուք բարձրացնում եք ձեր ձեռքը, երբ այս ղեկավարների անունները ներկայացվում են, դուք ցույց եք տալիս, որ կաջակցեք նրանց իրենց պարտականություններում և իրենց խորհուրդներում, որ նրանք տալիս են ձեզ:

Սա վարժություն չէ՝ հարգանքի տուրք մատուցելու նրանց, ում Տերը կանչել է նախագահելու: Ավելի շուտ դա ճանաչումն է փաստի, որ Աստված կանչել է մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ և ուրիշներ՝ որպես Գերագույն Իշխանավորներ: Դա պարտավորություն է, որ դուք կհետևեք այն հրահանգներին, որոնք գալիս են Եկեղեցու նախագահող պաշտոնյաներից: Նմանապես դուք պետք է վստահություն զգաք եպիսկոպոսի և ցցի նախագահի և Եկեղեցու մյուս ղեկավարների հանդեպ: Նրանց հաստատելու ձախողումը, ովքեր իշխանություն ունեն, անհամատեղելի է տաճարում ծառայելու հետ:

Դուք պետք է բարոյապես մաքուր լինեք՝ սուրբ տաճար մտնելու համար: Մաքրաբարոյության օրենքը պահանջում է, որ դուք սեռական հարաբերություններ չունենաք որևէ մեկի հետ, բացի ձեր ամուսնուց կամ կնոջից: Մենք հատկապես խրախուսում ենք ձեզ՝ աչալուրջ լինել ձեր բարոյական մաքրությունն արատավորելու սատանայի գայթակղությունների դեմ:

Դուք պետք է հավաստիանաք, որ ձեր ընտանիքի անդամների հանդեպ ձեր փոխհարաբերություններում չկա ոչ մի բան, որ ներդաշնակ չէ Եկեղեցու ուսմունքների հետ: Մենք հատկապես խրախուսում ենք [երիտասարդությանը] հնազանդվել [իրենց] ծնողներին արդարակեցությամբ: Ծնողները պետք է զգոն լինեն հավաստիանալու, որ իրենց հարաբերություններն ընտանիքի անդամների հետ ներդաշնակության մեջ լինեն ավետարանի ուսմունքերի հետ և երբեք չկիրառեն բռնություն կամ անտեսում:

Տաճար մտնելու համար դուք պետք է ազնիվ լինեք ուրիշների հետ բոլոր ձեր գործնական հարաբերություններում: Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք ունենք սրբազան պարտավորություն՝ երբեք չլինել խաբեբա կամ անազնիվ: Մեր հիմնական մաքրությունը վտանգված է, երբ մենք խախտում ենք այս ուխտը:

Տաճարային երաշխավորագիր ստանալու որակավորվման համար դուք պետք է ձգտեք անել ձեր պարտականությունը Եկեղեցում՝ հաճախելով հաղորդությանը, քահանայության և մյուս ժողովներին: Դուք պետք է նաև ձգտեք հնազանդվել ավետարանի կանոններին, օրենքներին և պատվիրաններին: Սովորեք. . . ընդունել կոչումները և մյուս պարտականությունները, որոնք տրվում են ձեզ: Եղեք ակտիվ մասնակիցներ ձեր ծխերում և ճյուղերում և եղեք այնպիսին , որին ղեկավարները կարող են վստահել:

Տաճար մտնելու համար դուք պետք է լրիվ տասանորդ վճարող լինեք և ապրեք «Իմաստության Խոսք»-ով: Այս երկու պատվիրանները, որոնք պարզ են իրենց հրահանգներով, բայց վիթխարի կարևորություն ունեն մեր հոգևոր աճի համար, էական են մեր անձնական արժանավորությունը վավերացնելիս: Դիտարկումները շատ տարիների ընթացքում ցույց են տվել, որ նրանք, ովքեր հավատարմորեն վճարում են իրենց տասանորդը և պահում «Իմաստության խոսքը», սովորաբար հավատարիմ են բոլոր մյուս հարցերում, որոնք կապված են սուրբ տաճար մտնելու հետ:

Սրանք թեթևամտորեն վերաբերվելու հարցեր չեն: Երբ որ տաճար մտնելուն արժանի ենք համարվում, մենք կատարում ենք արարողություններ, որոնք ամենասրբազանն են, որ սպասավորվում են երկրի վրա: Այս արարողությունները վերաբերում են հավերժության բաներին: [7]

3

Տաճարային աշխատանք կատարելը մեծ օրհնություններ է բերում անհատներին և ընտանիքներին:

Որքան փառահեղ բան է մեզ համար՝ տաճար գնալու արտոնություն ունենալ մեր անձնական օրհնությունների համար: Մեր անձնական օրհնությունների համար տաճար գնալուց հետո, որքան փառահեղ արտոնություն է՝ աշխատանք կատարել նրանց համար, ովքեր արդեն հեռացել են այս կյանքից: Այս տեսանկյունից տաճարային աշխատանքն անշահախնդիր աշխատանք է: Չնայած, երբ էլ մենք տաճարային աշխատանք ենք կատարում այլ մարդկանց համար, ի պատասխան օրհնություն ենք ստանում: Այնպես որ զարմանալի չէ մեզ համար, որ Տերը ցանկանում է, որ Իր ժողովուրդը լինի տաճարը կարևորող ժողովուրդ: . . .

. . .Եկեք գնանք ոչ միայն մեր մահացած նախնիների համար, այլև տաճարային երկրպագության անձնական օրհնության համար, սրբության և ապահովության համար, որ տրվում է այդ սրբագործված և նվիրագործված պատերի ներսում: Երբ տաճար ենք հաճախում, մենք ավելի լիարժեք և խորապես ենք սովորում կյանքի նպատակը և Տեր Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության նշանակությունը: Եկեք դարձնենք տաճարը, տաճարային երկրպագությունը և տաճարային ուխտերը մեր երկրային վերջնական նպատակը և մահկանացու զերագույն փորձառությունը: [8]

Մեր տաճարային այցելություններն իրականացնում են մի քանի բաներ, մենք ենթարկվում ենք Տիրոջ հրահանգներին՝ իրականացնելու մեր սեփական արարողությունների աշխատանքը, մենք օրհնում ենք մեր ընտանիքները կնքող արարողություններով, և մենք կիսվում ենք մեր օրհնություններով ուրիշների հետ՝ կատարելով նրանց համար այն, ինչ նրանք չեն կարող անել իրենց համար: Բացի սրանցից, մենք բարձրացնում ենք մեր սեփական մտքերը, ավելի ենք մոտենում Տիրոջը, պատվում ենք քահանայությունը և հոգևոր դարձնում մեր կյանքը: [9]

Մենք անձնական օրհնություններ ենք ստանում, երբ տաճար ենք այցելում: Մեկնաբանելով, թե ինչպես է մեր կյանքն օրհնվում տաճար այցելելով, Երեց Ջոն Ա. Ուիդսոն նշել է.

«Տաճարային աշխատանքը . . . տալիս է սքանչելի հնարավորություն՝ կենդանի պահելու մեր հոգևոր գիտելիքն ու ուժը:

. . . Հավերժության հզոր հեռանկարը բացվում է մեր առջև սուրբ տաճարներում, մենք տեսնում ենք ժամանակը իր անսահման սկզբով մինչև իր անվերջ ավարտը, և հավերժական կյանքի դրաման է ծավալվում մեր առջև: Այդ ժամանակ ես ավելի հստակ եմ տեսնում իմ տեղը տիեզերքում, իմ տեղը Աստծո նպատակների մեջ, ես ավելի լավ եմ կարողանում դնել ինձ այնտեղ, որտեղ ես պատկանում եմ, և ես ավելի լավ եմ կարողանում գնահատել և կշռադատել, առանձնացնել և կազմակերպել իմ կյանքի սովորական, հասարակ պարտականությունները, որպեսզի փոքր բաներն ինձ չճնշեն կամ հեռու տանեն իմ հայացքը ավելի մեծ բաներից, որ Աստված է տվել մեզ (in Conference Report, Apr. 1922, pp. 97–98):[10]

Մտածեք Կիրթլենդի Տաճարի նվիրագործման մեծ աղոթքի փառահեղ ուսմունքների մասին, մի աղոթք, որը Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ իրեն հայտնությամբ է տրվել: Դա մի աղոթք է, որը շարունակում է պատասխանել մեզ՝ անձնապես, մեզ՝ որպես ընտանիքներ, և մեզ՝ որպես մի ժողովուրդ, քահանայության շնորհիվ, որը Տերը տվել է մեզ՝ օգտագործելու Իր սուրբ տաճարներում:

«Եվ արդ Սուրբ Հայր,- աղերսում էր Մարգարե Ջոզեֆ Սմիթը,- մենք քեզ խնդրում ենք օգնել մեզ՝ քո ժողովրդին, քո շնորհով, . . . որ մենք կարողանանք արժանի գտնվել քո աչքում, ապահովելու այն խոստումների կատարումը, որոնք դու տվել ես մեզ՝ քո ժողովրդին, մեզ տրված հայտնություններում.

Որ քո փառքը հանգչի քո ժողովրդի վրա: . . .

Եվ մենք խնդրում ենք քեզ, Սո՛ւրբ Հայր, որ քո ծառաները կարողանան դուրս գալ այս տնից քո զորությամբ զինված, և որ քո անունը լինի նրանց վրա, և քո փառքը պարուրի նրանց, և քո հրեշտակները պահպանեն նրանց»[ՎևՈ 109.10–12, 22]:[11]

Տաճարային այցելությունները ստեղծում են հոգևորություն: Դա Եկեղեցու ամենասքանչելի ծրագրերից մեկն է, որ մենք ունենք հոգևորապես զարգանալու համար: Սա դարձնում է որդիների սրտերը դեպի իրենց հայրերը և հայրերի սրտերը դեպի իրենց որդիները (Մաղաքիա Դ.6): Սա առաջացնում է ընտանեկան համերաշխություն և միասնականություն:[12]

4

Եկեք շտապենք դեպի տաճար:

Եկեք մեր երեխաների հետ կիսվենք տաճարում ունեցած մեր հոգևոր զգացողություններով: Եվ եկեք ավելի լրջորեն և հանգիստ սովորեցնենք նրանց՝ պատշաճորեն բացատրելով Տիրոջ տան նպատակների մասին: Տաճարի նկար ունեցեք ձեր տանը, որպեսզի ձեր երեխաները տեսնեն այն: Նրանց սովորեցրեք Տիրոջ տան նպատակների մասին: Խնդրեք նրանց՝ դեռ վաղ տարիքից պլանավորել գնալ այնտեղ և արժանի մնալ այդ օրհնությանը: Եկեք նախապատրաստենք յուրաքանչյուր միսիոների, որ արժանի լինի տաճար գնալու և դարձնի ավելի մեծ նպատակակետ, քան միսիոներական կանչ ստանալը: Եկեք ծրագրենք և ուսուցանենք ու խնդրենք մեր երեխաներին ամուսնանալ Տիրոջ տանը: Եկեք վերահաստատենք ավելի մեծ ուժով, քան մենք երբևէ արել ենք անցյալում, որ իսկապես նշանակություն ունի, թե որտեղ ենք ամուսնանում և ինչ իշխանությամբ ենք հայտարարվում՝ մարդ ու կին:[13]

Տերը գոհանում է մեր երիտասարդներով, ովքեր արժանի են տաճար գնալու և փոխարինող մկրտություններ կատարելու նրանց համար, ովքեր կյանքում մկրտվելու հնարավորություն չեն ունեցել: Տերը գոհանում է, երբ մենք արժանի ենք տաճար գնալու՝ անձնապես կապելու մեր ուխտերը Նրա հետ և կնքվելու որպես զույգեր և ընտանիքներ: Եվ Տերը գոհանում է, երբ մենք արժանի ենք տաճար գնալու՝ կատարելու նույն փրկարար ծեսերը նրանց համար, ովքեր մահացել են. նրանցից շատերը մեծ անհամբերությամբ են սպասում իրենց համար այդ ծեսերի կատարմանը:[14]

Նրանց, ովքեր չեն ստացել իրենց տաճարային օրհնությունները, կամ ովքեր չեն կրում ընթացիկ տաճարային երաշխավորագիր, կարո՞ղ եմ խրախուսել խոնարհաբար և սիրով աշխատել այն օրվա ուղղությամբ, երբ կկարողանան մտնել Տիրոջ տունը: Նա խոստացել է նրանց, ովքեր հավատարիմ են իրենց ուխտերում. «Եվ եթե իմ ժողովուրդն ականջ դնի իմ ձայնին, և իմ ծառաների ձայնին, որոնց ես նշանակել եմ առաջնորդելու իմ ժողովրդին, ահա, ճշմարիտ ասում եմ ձեզ, նրանք չեն հեռացվի իրենց տեղից(ՎևՈ 124.45): . . . Ես խոստանում եմ, որ ձեր անձնական հոգևորությունը, փոխհարաբերությունը ձեր ամուսնու

կամ կնոջ հետ և ընտանեկան փոխհարբերությունները կօրհնվեն և կամրացվեն, երբ դուք կանոնավորապես հաճախեք տաճար: [15]

Եկեք լինենք տաճարհաճախող և տաճարսիրող ժողովուրդ: Եկեք հաճախակի գնանք տաճար՝ որքան ժամանակը, միջոցները և անձնական պայմանները ներում են: Եկեք գնանք ոչ միայն մեր մահացած նախնիների համար, այլև տաճարային երկրպագության անձնական օրհնության համար, սրբության և ապահովության համար, որ տրվում է այդ սրբագործված և նվիրագործված պատերի ներսում: Տաճարը գեղեցիկ վայր է, այն հայտնության և խաղաղության վայր է: Այն Տիրոջ տունն է: Այն սուրբ է Տիրոջ համար: Այն պետք է սուրբ լինի մեզ համար: [16]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Խորհեք բաժին 1-ում տրված Նախագահ Հանթերի ուսմունքների մասին: Ինչպե՞ս կարող ենք «հաստատել Տիրոջ տաճարը որպես [մեր] անդամակցության մեծ խորհրդանիշ»:
- Վերանայեք տաճարային երաշխավորագրի համար պահանջները, ինչպես ուրվագծված է բաժին 2-ում: Ինչպե՞ս է այս պահանջներով ապրելն օրհնել ձեզ և ձեր ընտանիքը: Ինչո՞ւ է մեզանից պահանջվում ձգտել «մաքուր և աշխարհիկ մեղքերից զերծ լինել», երբ մենք տաճար ենք մտնում:
- Վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները տաճարային աշխատանք կատարելու օրհնությունների մասին (տես բաժին 3): Ինչպե՞ս է տաճարային արարողություններին մասնակցելն օրհնել ձեր և ձեր ընտանիքի կյանքը: Ինչպե՞ս կարող եք ավելի լիարժեք օգտվել տաճարային օրհնություններից: Կարո՞ղ եք կիսվել մի ժամանակի մասին, երբ հոգևոր ուժ կամ ուղղորդում եք զգացել տաճարում: Եթե դուք դեռ չեք եղել տաճարում, խորհեք թե ինչպես կարող եք պատրաստվել ստանալու այդ օրհնությունը:
- Որո՞նք են մի քանի ուղիները, որոնցով կարող ենք օգնել երեխաներին և երիտասարդությանը սովորել տաճարների մասին և զարգացնել սեր դրանց հանդեպ: (Տես բաժին 4:) Ինչպե՞ս կարող ենք օգնել երեխաներին և երիտասարդությանը՝

ցանկանալ ամուսնանալ Տիրոջ տանը: Ինչո՞ւ է կարևոր, որ մենք տաճար գնանք «այնքան հաճախ, որքան ժամանակը, միջոցները և անձնական հանգամանքները թույլ կտան»:

Սոնչվող սուրբ գրություններ

Սաղմոս ԾԵ.14, Եսայիա Բ.2–3, ՎևՈւ 97.12–17, 110.6–10, 124.39–41, 138.53–54, Bible Dictionary, *"Temple"*

Օգնություն ուսուցչին

«Հաճախ դասը կպարունակի ավելի շատ նյութ, քան դուք կարող եք ուսուցանել այն ժամանակահատվածի ընթացքում, որը ձեզ տրված է: Այդպիսի դեպքերում, դուք պետք է ընտրեք նյութը, որն ամենաօգտակարը կլինի նրանց համար, ում դուք ուսուցանում եք»: (Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում [1999], 98–99):

Հղումներ

1. See Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 135.
2. See Jay M. Todd, "President Howard W. Hunter: Fourteenth President of the Church," *Ensign,* July 1994, 4–5.
3. "The Temple of Nauvoo," *Ensign,* Sept. 1994, 62–63.
4. Text of the Bountiful Utah Temple dedicatory prayer, in "'Magnificent Edifice' Consecrated to [the] Lord," *Church News,* Jan. 14, 1995, 4.
5. "The Great Symbol of Our Membership," *Ensign,* Oct. 1994, 2, 5.
6. "Exceeding Great and Precious Promises," *Ensign,* Nov. 1994, 8.
7. "Your Temple Recommend," *New Era,* Apr. 1995, 6–9.
8. "A Temple-Motivated People," *Ensign,* Feb. 1995, 5.
9. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 240.
10. "We Have a Work to Do," *Ensign,* Mar. 1995, 65.
11. "The Great Symbol of Our Membership," 4.
12. *The Teachings of Howard W. Hunter,* 239–40.
13. "A Temple-Motivated People," 5.
14. "The Great Symbol of Our Membership," 5.
15. *The Teachings of Howard W. Hunter,* 240-41.
16. "The Great Symbol of Our Membership," 5.

Հովարդ Վ. Հանթերի ծնողները՝ Ջոն Վիլյամ (Վիլ) Հանթեր և Նելլի Մարի Ռազմուսսեն Հանթեր

Արագացնել ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքը

«Անշուշտ Տերը կաջակցի մեզ, եթե մենք գործի դնենք մեր լավագույն ջանքերը՝ ընտանեկան պատմության հետազոտության և տաճարային աշխատանքների հետ կապված պատվիրանը պահելիս»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Ընտանեկան պատմությունը միշտ մոտ է եղել Նախագահ Հովարդ Վ. Հանթերի սրտին: Պատանեկության տարիներից սկսած նա մեծ հետաքրքրությամբ է լսել իր նախնիների վերաբերյալ պատմությունները: Երբ նա մեծացավ, շատ ժամանակ նվիրեց իր ընտանիքի պատմության հետազոտությանը:[1] 1972թ., մինչ նա Եկեղեցու հանձնարարությամբ Եվրոպայում էր, իր կնոջ՝ Քլեյրի հետ, տարբեր տեղեր այցելեցին Դանիայում, որտեղ ապրել էին նրա նախնիները: Գյուղերից մեկում նրանք գտան այն եկեղեցին, որտեղ Նախագահ Հանթերի մեծ պապը՝ Ռազմուսսենը, մկրտվել էր, և որտեղ երկրպագության էր գալիս ընտանիքը: Այս փորձառությունը խորացրեց Նախագահ Հանթերի երախտագիտությունը իր մայրական կողմի նախնիների հանդեպ: Նա նմանատիպ այցելություններ կատարեց Նորվեգիայում և Շոտլանդիայում, որտեղ ապրել էին այլ նախնիներ:[2]

Նախագահ Հանթերի որդին՝ Ռիչարդը, հիշում է իր հոր սերը ընտանեկան պատմության հանդեպ.

«Իր ողջ կյանքի ընթացքում նա եղել է ջանասեր հետազոտող: Նա հաճախ իր իրավաբանական պրակտիկայի ընթացքում գնում էր Լոս Անջելեսի հանրային գրադարան, որպեսզի հետազոտություններ կատարեր լայնածավալ ծագումնաբանական

բաժնում: Նա իր հետազոտությունները, ընտանեկան խմբերի թերթերը, տոհմաբանական թերթիկները և իր լսած պատմությունները անձամբ գրում էր հուշամատյաններում:

Երբեմն ես ճամփորդում էի նրա հետ, երբ մեկնում էր բազմաթիվ համաժողովների՝ որոշակի հանձնարարություններով: Նա հուշամատյաններից մի քանիսը դնում էր մեքենայի բեռնախցիկում և ցցի համաժողովից հետո ասում էր. «Արի գնանք [այս] զարմիկիս տուն մի քանի րոպեով: Կան մի քանի տարեթվեր, որոնք ուզում եմ ճշտել»: Մենք գնում էինք զարմիկի տուն: Նա բեռնախցիկից հանում էր հուշամատյանները, և շուտով հյուրասենյակի սեղանը ծածկվում էր ընտանեկան խմբերի թերթիկներով:

Եթե ընտանիքի անդամներից մեկը ցանկանում էր համոզվել, որ իր հետազոտությունների արդյունքում ճիշտ տվյալներ ուներ, զանգահարում կամ գրում էր հայրիկին, որպեսզի ճշտեր փաստերը, քանի որ նրանք գիտեին, որ հայրիկն ուներ դրանք: Աշխատանքը, որը նա կատարեց, վիթխարի էր»:[3]

Մի անգամ, երբ Նախագահ Հանթերը ծառայում էր Տասներկուսի Քվորումում, այցելեցին նրա տնային ուսուցիչները և ասացին. «Մենք ցանկանում ենք ձեզ ցույց տալ մեր ընտանեկան խմբերի թերթերը, որոնք մենք պատրաստել ենք: . . . Այս երեկո մենք ժամանակ չունենք տեսնելու ձերը, սակայն հաջորդ անգամ կցանկանայինք տեսնել դրանք»:

«Այսպիսով, դա ինձ անչափ հետաքրքրեց»,- ասաց Նախագահ Հանթերը: «Ես մեկ ամիս պատրաստվում էի տնային ուսուցիչների հաջորդ այցին»:[4]

1964-1972թթ. Հովարդ Վ. Հանթերը նախագահում էր Յուտայի Ծագումնաբանական Միությունում (տես էջ 19): 1994թ. Նախագահ Հանթերի մեծարման և Ծագումնաբանական Միության 100 ամյակի հիշատակին նվիրված ժողովի ժամանակ նա ասել է.

«Իմ ութսունյոթ ամյակի նախօրեին ես զարմանքով ետ եմ նայում տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը առաջ տանելու Տիրոջ գործերին: Երբ ես Յուտայի Ծագումնաբանական Միության նախագահն էի, մենք տեսլականներ ունեինք, թե ինչ զորությամբ էր այն առաջ մղվելու: Այժմ մենք տեսնում ենք, որ ինչ-որ փառահեղ բան է տեղի ունենում ողջ աշխարհում: Ավետարանն առաջ է շարժվում՝ ընդգրկելով բոլոր

ազգերին, ցեղերին, լեզուներին և ժողովուրդներին: Տաճարները տեղակայված են ողջ աշխարհով մեկ, և Եղիայի հոգին դիպչում է անդամներից շատերի սրտերին, ովքեր կատարում են ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքներ աննախադեպ արագությամբ»:[5]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Տաճարները կառուցվել են արարողություններ կատարելու համար, որոնք կարևոր են Աստծո զավակների փրկության ու վեհացման համար:

Տաճարները սուրբ են Տիրոջ և նրանց ամենամոտ հաղորդակցման պատճառով, ովքեր ստանում են սուրբ քահանայության ամենաբարձր և ամենասուրբ արարողությունները: Տաճարում է, որ աշխարհի բաները միավորվում են երկնային բաների հետ: . . . Աստծո մեծ ընտանիքը կմիանա ավետարանի փրկագործող արարողությունների միջոցով: Տաճարների նպատակն է իրականացնել մահացածների փոխարեն արվող աշխատանքը և ողջերի արարողությունները:

Վերջին Օրերի Սրբերի կողմից աշխարհին հայտարարված ավետարանը Հիսուս Քրիստոսի ավետարանն է, որը վերականգնվել է երկրի վրա այս տնտեսությունում և ողջ մարդկության փրկագնման համար է: Տերն ինքը հայտնել է, թե ինչն է առանցքային իր զավակների փրկության և վեհացման համար: Առանցքային կետերից մեկն այն է, որ տաճարները պետք է կանգնեցվեն արարողությունների կատարման համար, որոնք չեն կարող կատարվել որևէ այլ վայրում:

Երբ սա բացատրում են աշխարհի բոլոր այն մարդկանց, ովքեր գալիս և տեսնում են մեր տաճարները, նրանք ամենից հաճախ հարցնում են, թե ի՞նչ արարողություններ են կատարվում տաճարներում:

Մկրտություն մահացածների համար

Ի պատասխան, մենք հաճախ նախ բացատրում ենք արարողությունը, որը հայտնի է որպես մկրտություն մահացածների համար: Մենք նշում ենք, որ բազմաթիվ քրիստոնյաներ հավատում են, որ մահվան ժամանակ Տիրոջ առաջ մեր կարգավիճակը

որոշվում է ողջ հավերժության համար, քանզի մի՞թե Քրիստոսը չի ասել Նիկոդեմոսին. «Ճշմարիտ ճշմարիտ ասում եմ քեզ. եթէ մեկը ջրից եւ Հոգուց չծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել» (Հովհաննես Գ.5)։ Սակայն մենք գիտենք, որ շատ մարդիկ մահացել են առանց մկրտության արարողության, և այսպես, համաձայն Նիկոդեմոսին արած Քրիստոսի հայտարարության, նրանք կզրկվեն Աստծո թագավորություն մտնելու հնարավորությունից։ Սա բարձրացնում է հետևյալ հարցը՝ Աստված արդա՞ր է։

Պատասխանն է՝ իհարկե Աստված արդար է։ Ակնհայտ է, որ Նիկոդեմոսին արված Փրկչի հայտարարությունը ենթադրում է, որ մկրտություններ կարող են արվել նրանց համար, ովքեր մահացել են, ովքեր չեն մկրտվել։ Վերջին Օրերի մարգարեներն ասել են մեզ, որ մկրտությունը երկրային արարողություն է, որը կարող է կատարվել միայն ողջերի կողմից։ Այդ դեպքում, ինչպե՞ս կարող են նրանք, ովքեր մահացած են, մկրտվել, եթե միայն ողջերը կարող են կատարել արարողությունները։ Դա էր Պետրոս Առաքյալի թեման Կորնթացիներին գրելիս, երբ նա տվեց հետևյալ հարցը.

«Ապա եթէ ոչ, ի՞նչ կանեն մեռելների համար մկրտուղները եթէ արդարեւ մեռելները յարութիւն չառնեն. էլ ինչո՞ւ են նորանց համար մկրտվում»։ (Ա Կոր. ԺԵ.29։)[7]

Արդյո՞ք խելամիտ է թվում այն, որ մարդիկ, ովքեր ապրել են երկրի վրա և մահացել են առանց մկրտվելու հնարավորության, պետք է զրկված մնան հավերժության մեջ։ Կա՞ արդյոք անմիտ որևէ բան, երբ ողջերը կատարում են մկրտություններ մահացածների համար։ Հավանաբար մահացածների համար մկրտության աշխատանք կատարելու ամենամեծ օրինակը Վարդապետն ինքն է։ Նա տվեց իր կյանքը որպես փոխարինող քավություն, որպեսզի բոլոր նրանք, ովքեր մահանում են, կրկին ապրեն և ունենան հավերժական կյանք։ Նա արեց մեզ համար այն, ինչը մենք չէինք կարող անել ինքներս մեզ համար։ Նման կերպով մենք կարող ենք արարողություններ կատարել նրանց համար, ովքեր հնարավորություն չեն ունեցել անելու դրանք [իրենց] կյանքի ընթացքում։[8]

«Իսկապես, որ չկա ոչ մի աշխատանք , որը հավասար լինի տաճարային աշխատանքին»:

Օժտում

Օժտումը մեր տաճարներում կատարվող մեկ այլ արարողություն է: Այն բաղկացած է երկու մասից. առաջինը մի շարք հրահանգներ են և երկրորդը խոստումներ կամ ուխտեր, որոնք կապում է օժտում ստացող անձնավորությունը՝ արդար ապրելու և Հիսուս Քրիստոսի ավետարանի պահանջներին ենթարկվելու խոստումներ: Օժտումը մի արարողություն է, որը մեծ օրհնություն է բերում Սրբերին՝ թե ողջերին և թե մահացածներին: Այսպիսով, այն նաև մի արարողություն է, որը կատարվում է ողջերի կողմից մահացածների համար. այն կատարվում է նրանց համար, ում մկրտության աշխատանքն արդեն իսկ կատարված է:

Սելեստիալ ամուսնություն

Մեկ այլ տաճարային արարողություն է սելեստիալ ամուսնությունը, որի ժամանակ կինը կնքվում է ամուսնու հետ և ամուսինը կնքվում է կնոջ հետ հավերժության համար: Մենք իհարկե գիտենք, որ քաղաքացիական ամուսնություններն ավարտվում են մահվան ժամանակ. սակայն հավերժական ամուսնությունները, որոնք կատարվում են տաճարում, կարող են գոյություն ունենալ հավերժորեն: Ամուսնու և կնոջ հավերժական ամուսնությունից

հետո ծնված երեխաները մեխանիկորեն կնքվում են իրենց ծնողների հետ հավերժության համար: Եթե երեխաները ծնվում են նախքան ամուսնու հետ կնոջ կնքվելը, կա տաճարային կնքման արարողություն, որը կարող է կնքել այս երեխաներին իրենց ծնողների հետ հավերժության համար, և նմանապես երեխաները կարող են փոխարինաբար կնքվել ծնողների հետ, ովքեր մահացել են: . . .

Քահանայության այս բոլոր արարողությունները կարևոր են մեր Երկնային Հոր զավակների փրկության ու վեհացման համար:[9]

2

Ընտանեկան պատմության աշխատանքի նպատակն է տաճարային օրհնությունները մատչելի դարձնել բոլոր մարդկանց համար:

Անշուշտ, մենք՝ վարագույրի այս կողմում գտնվողներս, մեծ աշխատանք ունենք անելու: . . . Տաճարներ կառուցելը մեծ նշանակություն ունի մեզ և մարդկության համար, և մեր պարտականությունները պարզ են դառնում: Մենք պետք է կատարենք քահանայության տաճարային ծեսերի աշխատանքը, որն անհրաժեշտ է մեր սեփական վեհացման համար: Այնուհետև մենք պետք է կատարենք անհրաժեշտ աշխատանքը նրանց համար, ովքեր հնարավորություն չեն ունեցել ընդունելու ավետարանը կյանքի ընթացքում: Մյուսների համար աշխատանքը կատարվում է երկու քայլով. առաջինը՝ ընտանեկան պատմության հետազոտությամբ գտնել մեր նախնիներին , և երկրորդը՝ կատարել տաճարային ծեսերը, տալով նրանց նույն հնարավորությունները, որ ունեն ապրողները:

Այնուամենայնիվ, Եկեղեցու շատ անդամների համար տաճար այցելելու հնարավորությունները սահմանափակ են: Նրանք անում են, ինչ կարող են: Նրանք կատարում են ընտանեկան պատմության ուսումնասիրություն, որից հետո տաճարային ծեսերը կատարվում են ուրիշների կողմից: Եվ հակառակը, կան անդամներ, ովքեր մասնակցում են տաճարային աշխատանքին, սակայն չեն զբաղվում իրենց սեփական տոհմաբանության պատմությամբ: Թեև նրանք աստվածային ծառայություն են

մատուցում՝ օգնելով ուրիշներին, նրանք օրհնություն են կորցնում, երբ չեն փնտրում իրենց սեփական տոհմի նախնիներին, ինչպես աստվածայնորեն հրահանգել են վերջին օրերի մարգարեները:

Ես հիշում եմ մի քանի տարի առաջ ունեցած նման մի փորձառություն: Ծոմապահության և վկայության ժողովի վերջում եպիսկոպոսը նշեց. «Այսօր մենք հոգևոր փորձառություն ունեցանք՝ լսելով յուրաքանչյուրիս բերած վկայությունները: Դա տեղի ունեցավ այն բանի շնորհիվ, որ մենք եկել ենք ծոմ պահած՝ համաձայն Տիրոջ օրենքի: Սակայն եկեք երբեք չմոռանանք, որ օրենքը բաղկացած է երկու մասից. մենք ծոմ ենք պահում, հրաժարվելով ուտելիքից և հեղուկներից, և մենք նվիրաբերում ենք այդպիսով խնայվածը եպիսկոպոսի շտեմարանին՝ ի շահ նրանց, ովքեր ավելի կարիքավոր են»: Ապա նա ավելացրեց. «Հուսով եմ, որ մեզանից ոչ ոք այսօր չի հեռանա միայն կես օրհնությամբ»:

Ես գիտեմ, որ նրանք, ովքեր կատարում են ընտանիքի պատմության հետազոտություն և ապա կատարում տաճարային աշխատանք նրանց համար, ում անունները գտել են, կունենան լրացուցիչ ուրախություն՝ ստանալով օրհնության երկու մասերը:

Դեռ ավելին, մահացածները անհամբեր սպասում են, որ Վերջին Օրերի Սրբերը գտնեն իրենց անունները և ապա գնան տաճարներ իրենց փոխարեն սպասավորելու համար, որպեսզի նրանք կարողանան հոգևոր աշխարհում ազատվել բանտից: Մենք բոլորս պետք է ուրախություն գտնենք սիրո այս մեծ աշխատանքում:[10]

Ընտանեկան պատմության աշխատանքի նպատակն է տաճարային օրհնությունները մատչելի դարձնել բոլոր մարդկանց համար՝ թե ողջերի, թե մահացածների համար: Երբ մենք այցելում ենք տաճար և կատարում ենք մահացածների համար աշխատանքը, մենք խորը զգացմունքներ ենք ձեռք բերում Աստծո հետ համաձայնության գալու վերաբերյալ և ավելի լավ ենք սկսում հասկանալ մարդկության փրկության նրա ծրագիրը: Մենք սովորում ենք սիրել մեր մերձավորներին՝ ինչպես սիրում ենք ինքներս մեզ: Իսկապես, որ չկա այն աշխատանքին հավասարը, որը կատարվում է տաճարում:[11]

3

Թող որ մենք անվեհեր լինենք՝ մեր ընտանիքի պատմության և տաճարային աշխատանքն արագացնելիս:

Երբ մենք տաճարում աշխատանք ենք կատարում նրանց համար, ովքեր հեռացել են մեզանից, մեզ հիշեցվում է Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի խորհուրդը, ով հայտարարել է. «Հանուն նրանց մեր գործադրած ջանքերի միջոցով իրենց գերության շղթաները կընկնեն, և նրանց շրջափակող խավարը կցրվի, որպեսզի լույսը շողա նրանց վրա, և նրանք կլսեն հոգևոր աշխարհում այն աշխատանքի մասին, որը կատարվել է այստեղ նրանց համար իրենց երեխաների միջոցով, և կուրախանան» [Conference Report, Oct. 1916, 6]:[12]

Այս սուրբ աշխատանքը՝ [ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքը], նշանակալից տեղ է զբաղեցնում Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի սրտերում և մտքերում: Ես խոսում եմ բոլոր Եղբայրների անունից, երբ շնորհակալություն եմ հայտնում նրանց, ովքեր արժեքավոր ներդրումներ են կատարել վարագույրի մյուս կողմում գտնվողների համար փրկող արարողություններ ապահովելով: . . . Մենք երախտապարտ ենք կամավորների այն բանակի համար, ովքեր առաջ են տանում այս մեծ աշխատանքը ողջ երկրում: Շնորհակալություն բոլորին այն ամենի համար, ինչը շատ լավ է արվում:

Ջոզեֆ Սմիթ Մարգարեն ասել է. «Մեծագույն պատասխանատվությունն այս աշխարհում, որ Աստված դրել է մեզ վրա, մեր մահացածներին որոնելն է» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 505): Նա նաև ասել է. . . . «Այն Սրբերը, ովքեր անտեսում են այն՝ իրենց մահացած բարեկամների համար, անում են դա ի վնաս իրենց իսկ փրկության» [*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ,* 501]:

Այս կարևորագույն հայտնության վերաբերյալ նույն տեսլականն ունենալով՝ Նախագահ Բրիգամ Յանգն ասել է. «Մենք աշխատանք ունենք կատարելու, որն իր ասպարեզում այնքան կարևոր է, որքան Փրկչի աշխատանքն է եղել այդ ասպարեզում: Մեր հայրերը չեն կարող կատարյալ դառնալ առանց մեզ. մենք չենք կարող կատարյալ դառնալ առանց նրանց: Նրանք կատարել են իրենց գործը և այժմ քնել են: Մենք այժմ կանչված ենք

կատարելու մերը, որը մեծագույն աշխատանքն է, որը մարդը երբևէ կատարել է երկրի վրա» (*Discourses of Brigham Young,* sel. John A. Widtsoe, Salt Lake City: Deseret Book Co., 1941, p. 406)։

Ամեն մարգարե, ով առաջնորդել է այս եկեղեցին սկսած Ջոզեֆ Սմիթի օրերից մինչև այժմ, կրկնել է այս նույն վեհ ճշմարտությունը։ Առաջնորդվելով այս ճշմարտություններով՝ Եկեղեցին, սկսած այս տնտեսության սկզբնական շրջանից, ներգրավվել է Աստծո բոլոր որդիների և դուստրերի փրկության և վեհացման աշխատանքում, անկախ այն բանից, թե երբ են նրանք ապրել երկրի վրա։

Մենք՝ այս օրերում ապրողներս, նրանք ենք, ում Աստված նախքան ծնվելը նշանակել է լինելու իր ներկայացուցիչները երկրի վրա այս տնտեսությունում։ Մենք Իսրայելի տնից ենք։ Մեր ձեռքերում կրում ենք սրբազան զորություններ՝ լինելու ազատիչներ Սիոն սարի վրա վերջին օրերում [տես Աբդիա Ա.21]։

Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի հետ կապված ես ունեմ մի կարևորագույն ուղերձ. Այս աշխատանքը պետք է արագացվի։ Աշխատանքը, որը սպասում է կատարվելուն, ապշեցուցիչ է և մարդկային հասկացողությունից վեր։ Անցյալ տարի [1993թ.] մենք կատարել ենք փոխարինող տաճարային օժտումներ մոտավորապես հինգ ու կես միլիոն մարդու համար, սակայն այդ տարվա ընթացքում մահացել է մոտավորապես հիսուն միլիոն մարդ։ Սա կարող է անօգտակար թվալ աշխատանքի համար, որը դրված է մեր առաջ, սակայն մենք չենք կարող մտածել անօգտակարության մասին։ Անշուշտ Տերը կաջակցի մեզ, եթե մենք գործի դնենք մեր լավագույն ջանքերը՝ ընտանեկան պատմության հետազոտության և տաճարային աշխատանքների հետ կապված պատվիրանը պահելիս։ Տաճարների մեծ աշխատանքը և ամենը, որ աջակցում են դրան, պետք է ընդլայնվի։ Դա շատ կարևոր և հրատապ է։ . . .

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, թող որ մենք անվեհեր լինենք՝ մեր ընտանիքի պատմության և տաճարային աշխատանքն արագացնելիս։ Տերն ասել է. «Ճշմարիտ այսպես է ասում Տերը. Թող իմ տաճարի աշխատանքը, և բոլոր գործերը, որոնք ես նշանակել եմ ձեզ, շարունակվեն և չդադարեն. և թող ձեր ջանասիրությունը, և ձեր հետևողականությունը, և համբերությունը,

և ձեր աշխատանքները կրկնապատկվեն, և դուք ոչ մի դեպքում չեք կորցնի ձեր վարձքը, ասում է Զորաց Տերը» (ՎևՈ 127.4)։

Ես քաջալերում եմ ձեզ ձեր ջանքերում Մարգարե Զոզեֆ Սմիթի հետևյալ խոսքերով. «Եղբայրներ, արդյոք չպե՞տք է մենք շարունակենք այս մեծ գործը։ Գնացեք առաջ և ոչ թե ետ։ Քաջություն, եղբայրներ. և առաջ, առաջ դեպի հաղթանակ։ Թող ձեր սրտերը ցնծան և մեծապես ուրախանան։ Թող երկիրը երգով բռնկվի։ Թող մահացածները հավերժական գովքի օրհներգ ասեն Էմմանուել Թագավորին, որը, նախքան աշխարհի լինելը, կարգել է այն, ինչը մեզ հնարավորություն կտա բանտից փրկագնելու նրանց. քանզի բանտարկյալները պիտի ազատվեն» (ՎևՈ 128.22)։

Ես սիրում եմ այս աշխատանքը։ Ես գիտեմ, որ Տերը կպատրաստի այն ամենը, ինչ կպահանջվի այն իրագործելու համար, երբ մենք նվիրված անենք մեր բաժինը։ Թող Տերն օրհնի մեզանից յուրաքանչյուրին, մինչ մենք մեր ավանդը կներդնենք այս մեծ աշխատանքում, որը մենք պետք է կատարենք մեր օրերում։[13]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Խորհեք բաժին 1-ի առաջին նախադասության շուրջ։ Ինչպե՞ս է տաճարում արարողություններ կատարելն օգնել ձեզ ավելի մոտենալ Աստծուն։ Այս բաժնի ո՞ր տեղեկությունը կարող է օգնել ձեզ՝ բացատրել տաճարների նպատակները նրան, ով չի հասկանում դրանք։
- Ե՞րբ եք դուք ունեցել ընտանեկան պատմության հետազոտության և տաճարային աշխատանքի «օրհնությունների երկու մասերի» փորձառություն։ (Տես բաժին 2։) Ինչպե՞ս կարող ենք ներառել երեխաներին և ընտանիքի մյուս անդամներին այս կարևոր աշխատանքում։
- Երբ դուք վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները բաժին 3-ում, խորհեք, թե ինչ կարևորություն է Տերը տալիս ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքին։ Ինչպե՞ս են արագացվում ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքներն այսօր։ Ինչպե՞ս կարող ենք մեծացնել մեր մասնակցությունը այս աշխատանքում։

Սոնչվող սուրբ գրություններ

Եսայիա ԽԲ.6–7, Մաղաքիա Դ.5–6, Ա Պետրոս Գ.18–20, Դ.6, ՎևՈւ 2, 110.12–15, 124.28–30, 128.15–18, 138.57–59

Օգնություն ուսումնասիրողին

Նմանեցնելով մարգարեի խոսքերը ձեզ, մտածեք այն մասին, թե ինչպես են նրա ուսմունքները կապված ձեզ հետ (տես *Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 170)։ Ձեր ուսումնասիրության ընթացքում մտածեք ինքներդ ձեզ հարցնել, թե ինչպես այդ ուսմունքները կարող են օգնել ձեզ՝ մտահոգությունների, հարցերի և մարտահրավերների ժամանակ ձեր կյանքում։

Հղումներ

1. Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 186.
2. Francis M. Gibbons, *Howard W. Hunter: Man of Thought and Independence, Prophet of God* (2011), 16–18.
3. Unpublished manuscript by Richard A. Hunter.
4. Knowles, *Howard W. Hunter,* 192.
5. "We Have a Work to Do," *Ensign,* Mar. 1995, 64.
6. "The Golden Thread of Choice," *Ensign,* Nov. 1994, 2.
7. "A Temple-Motivated People," *Ensign,* Feb. 1995, 2.
8. "Elijah the Prophet," *Ensign,* Dec. 1971, 71.
9. "A Temple-Motivated People," 2, 4.
10. "A Temple-Motivated People," 4, -5.
11. "We Have a Work to Do," 65.
12. Text of the Bountiful Utah Temple dedicatory prayer, in "'Magnificent Edifice' Consecrated to [the] Lord," *Church News,* Jan. 14, 1995, 4.
13. "We Have a Work to Do," 64–65.

«Այս արեք իմ հիշատակի համար» (Ղուկաս ԻԲ.19):

Տիրոջ ընթրիքի հաղորդությունը

«Երբ [Հիսուսը] վերցրեց հացը և կտրեց այն, և վերցրեց բաժակն ու օրհնեց այն, նա ներկայացնում էր իրեն որպես Աստծո Գառ, ով ապահովելու էր հոգևոր սնունդ և հավերժական փրկություն»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Հովարդ Վ. Հանթերին մեծացրել են Վերջին Օրերի ակտիվ Սուրբ մայրը և լավ հայրը, ով այդ ժամանակ չէր միացել որևէ եկեղեցու: Նրա հայրը դեմ չէր, որ ընտանիքը հաճախեր Եկեղեցի. նա նույնիսկ երբեմն նրանց հետ միասին հաճախում էր հաղորդության ժողովին, սակայն չցանկացավ, որ իր երեխաները մկրտվեին, երբ նրանք 8 տարեկան էին: Նա կարծում էր, որ նրանք չպիտի կայացնեին այդ որոշումը, մինչև ավելի մեծանային: Երբ Հովարդը դարձավ 12 տարեկան, նա չէր կարող ստանալ Ահարոնյան Քահանայությունը և կարգվել սարկավագ, քանի որ չէր մկրտվել: Չնայած որ նա կարողանում էր երիտասարդ տղամարդկանց հետ մասնակցել այլ միջոցառումների, Հովարդը խորապես հուսահատվում էր, որ նա չէր կարող բաժանել հաղորդությունը նրանց հետ:

«Հաղորդության ժողովին ես նստում էի մյուս տղաների հետ միասին», պատմում է նա: «Երբ գալիս էր պահը, որ նրանք պետք է բաժանեին հաղորդությունը, ես ցած էի սահում աթոռից: Ես ինձ այնքան միայնակ էի զգում: Ես ցանկանում էի բաժանել հաղորդությունը, սակայն չէի կարող, քանի որ չէի մկրտվել»:[1]

12 տարին բոլորելուց մոտ հինգ ամիս անց Հովարդը համոզեց իր հորը, որ թույլ տա իրեն մկրտվել: Դրանից կարճ ժամանակ անց նա կարգվեց որպես սարկավագ: «Հիշում եմ, թե ինչպես առաջին անգամ բաժանեցի հաղորդությունը», ասել է նա: «Ես վախեցած

էի, սակայն ոգևորված՝ ունենալով այդ արտոնությունը: Ժողովից հետո եպիսկոպոսը զովեց ինձ իմ պահելածևի համար»:[2]

Երբ Հովարդ Վ. Հանթերը կանչվեց որպես Առաքյալ, նա հաճախ մասնակցում էր հաղորդության արարողությանը մյուս Բարձրագույն Իշխանավորների հետ Սոլթ Լեյքի Տաճարում: Երեց Դեյվիդ Բ. Հեյթը, ով ծառայել է Երեց Հանթերի հետ Տասներկուսի Քվորումում, նկարագրել է փորձառություն, երբ լսել է նրան հաղորդությունն օրհնելիս.

«Ես կցանկանայի, որ ողջ Եկեղեցու Ահարոնյան Քահանայության տղաները կարողանային ունենալ նույն հնարավորությունը, լսելու Երեց Հովարդ Վ. Հանթերին հաղորդությունն օրհնելիս, ինչպես մենք ենք լսել տաճարում: Նա Հիսուս Քրիստոսի հատուկ վկան է: Մինչ ես լսում էի նրան, թե ինչպես էր խնդրում մեր Երկնային Հորը, որ օրհներ հաղորդությունը, ես մեծ հոգևոր ուժ զգացի նրա մեջ: Յուրաքանչյուր բառը պարզ և իմաստալից էր: Նա չէր շտապում: Մեր Երկնային Հորը դիմելիս նա ներկայացնում էր բոլոր Առաքյալներին»:[3]

Այս պատմությունները ցուցադրում են ողջ կյանքի ընթացքում Նախագահ Հանթերի ակնածանքը Քրիստոսի քավիչ զոհաբերության սուրբ խորհրդանիշերի հանդեպ:

Ինչպես ցույց են տալիս այս գլխի ուսուցումները, ուղիներից մեկը, որով Նախագահ Հանթերը փորձում էր օգնել Եկեղեցու անդամներին հասկանալ հաղորդության կարևորությունը, դրա կապը բացատրելն է Զատկի հին տոնի հետ և վերանայելը, թե ինչպես Փրկիչը ներկայացրեց այս արարողությունը Իր աշակերտների հետ Զատկի ընթրիքի ընթացքում:

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Զատիկը հայտարարում է, որ մահը չունի մշտական իշխանություն մեզ վրա:

[Զատիկը] հրեական տոներից ամենահինն է, որի ժամանակ տոնվում է մի իրադարձություն, որը տեղի է ունեցել Մովսեսի ավանդական օրենքը ստանալուց առաջ: Յուրաքանչյուր սերնդի այն հիշեցնում է Իսրայելի զավակների վերադարձը խոստումի երկիր և դրան նախորդող բազմաթիվ չարչարանքները

Եգիպտոսում։ Այն նշում է մարդկանց անցումը հպատակությունից ու գերությունից դեպի ազատություն և փրկություն։ Այն Հին Կտակարանի գարնան տոնն է, երբ բնությունը կենդանանում է, աճում ու ցանկալի արդյունք տալիս։

Զատիկը կապված է քրիստոնեական Զատկի տոնի հետ։ . . . Զատիկը [և նոր ուխտի Զատիկը] վկայում են Աստծո տված մեծ պարգևի և զոհաբերության մասին, որ ներառում է այդ պարգևը։ Այս երկու մեծ կրոնական տոներն էլ հայտարարում են, որ մահը կզատվի մեզանից և չի ունենա հարատև զորություն մեզ վրա, և որ մահը հաղթանակ չի ունենա։

Եգիպտոսից Իսրայելի զավակներին ազատելիս Եհովան անձամբ խոսեց Մովսեսի հետ վառվող թփի միջից՝ ասելով.

«Իրաւ տեսայ իմ ժողովրդի չարչարանքը, որ Եգիպտոսումն է, եւ գործավարների պատճառով նորանց աղաղակը լսեցի. որովհետեւ նորանց նեղութիւնները իմացայ։ . . .

Ուստի եկ հիմա քեզ Փարաւօնի մօտ ուղարկեմ, եւ հանիր իմ ժողովուրդը՝ Իսրայէլի որդիքը Եգիպտոսիցը»։ (Ելից Գ.7, 10։)

Քանի որ Փարավոնն անզիջում էր, բազմաթիվ պատուհասներ բերվեցին Եգիպտոսի վրա, սակայն, այնուամենայնիվ, «Փարաւօնի սիրտը կարծրացաւ, եւ Իսրայէլի որդիներին չարձակեց»։ (Ելից Թ.35։)

Ի պատասխան Փարավոնի այդ մերժմանը՝ Տերն ասաց. «Եւ ամեն առաջինեկը կմեռնի Եգիպտոսի երկրումը՝ իր աթոռի վերայ նստող Փարաւօնի առաջինեկից մինչեւ երկանքի ետեւին եղող աղախնի առաջինեկը եւ բոլոր անասունների առաջինեկը»։ (Ելից ԺԱ.5։)

Որպես պաշտպանություն այս վերջին և ամենասարսափելի պատժից, որը վրա էր հասել եգիպտացիներին, Տերը հրահանգեց Մովսեսին, որ Իսրայելի որդիներից յուրաքանչյուրը վերցներ մի անարատ գառ։

«Եւ արիւնիցն առնեն եւ տների երկու կողմի դրանդիներին եւ վերի սեմին քսեն, ուր որ նորան պիտի ուտեն։

Եւ միսն այն գիշերն ուտեն. նորան կրակի վերայ խորոված՝ եւ բաղարջ ուտեն լեղի խոտերով։ . . .

Եւ այսպէս ուտեք նորան. ձեր գոտիները ձեր մէջքին՝ եւ ձեր կոշիկները ձեր ոտքերին՝ եւ ձեր ցուպերը ձեր ձեռքին լինելով, եւ նորան շտապելով ուտէք. նա զատիկ է Եհովային: . . .

Եւ երբոր կլինի որ ձեր որդիքը ձեզ կասեն. Ի՞նչ է ձեր այս պաշտօնը:

Այն ժամանակ ասէք, որ սա զատկի զոհն է Եհովայի համար, որ Եգիպտոսի մէջ Իսրայէլի որդիների տների վերայից անցաւ»: (Ելից ԺԲ.7–8, 11, 26–27:)

Երբ իսրայելացիները փախան Փարաւոնի ձեռքից և եգիպտացիների անդրանիկները մահացան, իսրայելացիներն, ի վերջո, անցան Հորդանանը: Գրված է, որ «Իսրայելի որդիքը բանակ տուին Գաղգաղայումը, եւ զատիկն արին ամսի տասնեւչորսերորդ օրը իրիկնադէմին՝ Երիքովի դաշտերումը»: (Հեսու Ե.10:) Եվ այդպես էին վարվում հրեա ընտանիքները տարեցտարի, այդ թվում նաև Հովսեփի ու Մարիամի ու պատանի Հիսուսի ընտանիքը:[4]

2

Զատկի տոնի ընթրիքի ժամանակ Փրկիչը հաստատեց հաղորդության արարողությունը:

Ինչպես Հովհաննեսի Ավետարանն է հստակեցնում, Զատկի ընթրիքը շեշտադրեց հատկանշական հիմնաքարեր Քրիստոսի մահկանացու ծառայության ընթացքում: Իր ծառայության ընթացքում՝ առաջին Զատիկի ժամանակ, Հիսուսը հայտնի դարձրեց իր առաքելությունը, մաքրագործելով տաճարը, երբ նա դուրս հանեց դրամափոխներին և կենդանիներ վաճառողներին: Երկրորդ Զատիկի ժամանակ Հիսուսը հայտնի դարձրեց իր զորությունը՝ նկանակների և ձկների հրաշքի միջոցով: Այստեղ Քրիստոսը ներկայացրեց խորհրդանիշեր, որոնք ավելի ուշ պիտի ունենային էլ ավելի մեծ նշանակություն Վերնատանը: «Ես եմ կեանքի հացը»,- ասաց նա: «Ինձ մօտ եկողը չի սովիլ, եւ ինձ հաւատացողը երբէք չի ծարաւիլ»: (Հովհաննես Զ.35:)

Իհարկե, դա լինելու էր իր վերջին Զատիկի ընթրիքը, որը կտար այս հինավուրց տոնի լիարժեք պատկերը: Մինչ իր մահկանացու ծառայության այդ վերջին շաբաթը՝ Հիսուսը հստակ գիտեր, թե այս Զատիկն ինչ նշանակություն էր ունենալու իր համար: Վտանգն արդեն իսկ կախված էր օդում: Մատթեոսը գրել է.

«Երբ նա վերցրեց հացը և կտրեց այն, և վերցրեց բաժակը և օրհնեց այն, նա ներկայացնում էր իրեն որպես Աստծո Գառ*»:*

«Երբոր Յիսուսը այս ամեն խօսքերը վերջացրեց, իր աշակերտներին ասեց.

Գիտէք, որ երկու օրից յետոյ զատիկ կլինի. եւ մարդի Որդին կմատնուի խաչուելու»: (Մատթ. ԻԶ.1-2:)

Լիովին գիտակցելով իրեն սպասվելիքը՝ Հիսուսը խնդրեց Պետրոսին և Հովհաննեսին՝ պատրաստություններ տեսնել Զատիկի ընթրիքի համար: Նա ասաց նրանց, որ հարցնեն մի առանձնատան տիրոջը. «Ո՞ւր է այն օթեւանը, ուր ես զատիկն ուտեմ իմ աշակերտների հետ»: (Ղուկաս ԻԲ.11:)

Ծնվելիս նրա միայնությունը պետք է ինչ որ առումով կրկնվեր իր մահվան միայնության ժամանակ: Աղվեսները որջեր ունեին

և թռչունները բներ, բայց Մարդու Որդին տեղ չուներ իր գլուխը դնելու համար՝ ոչ իր ծնվելու օրը, ոչ էլ մահկանացու կյանքի վերջին ժամերին [տես Մատթեոս Ը.20]:

Ի վերջո, ավարտվեցին Զատիկի տոնի ընթրիքի նախապատրաստությունները, ավանդույթ, որն ուներ մոտավորապես հազար հինգ հարյուր տարվա պատմություն: Հիսուսը նստեց իր աշակերտների հետ և այս ավանդական ընթրիքի զոհաբերության գառն ուտելուց, հացն ու գինին ճաշակելուց հետո նա ուսուցանեց նրանց Աստծուց տրված այդ վաղեմի օրհնության ավելի նոր և ավելի սուրբ նշանակությունը:

Նա վերցրեց տափակ, կլոր բաղարջի նկանակներից մեկը, օրհնեց այն և կտրեց, որ բաժաներ Առաքյալներին՝ ասելով. «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս արէք իմ յիշատակի համար»: (Ղուկաս ԻԲ.19:)

Երբ բաժակը լցվեց, նա վերցրեց այն, գոհացավ, հրավիրեց նրանց խմել դրանից, ասելով. «Այս բաժակը նոր ուխտն է իմ արիւնովը, որ ձեզ համար թափվում է»: (Ղուկաս ԻԲ.20:) Պողոսն այդ մասին ասել է. «Որովհետեւ քանի անգամ որ այս հացն ուտէք, եւ այս բաժակը խմէք, Տիրոջ մահը պատմեցէք՝ մինչեւ որ Նա կգայ»: (Ա Կորնթ. ԺԱ.26:)

Հացը և գինին, այլ ոչ թե կենդանիները և խոտաբույսերն էին դառնալու Գառի մարմնի և արյան խորհրդանիշերը, խորհրդանիշեր, որոնք պետք է միշտ ուտել և խմել ակնածանքով և ի հիշատակ նրա:

Այս պարզ, սակայն տպավորիչ կերպով Փրկիչը հաստատեց արարողությունը, որը հայտնի է որպես Տիրոջ Ընթրիքի հաղորդություն: Գեթսեմանի տառապապանքներով, Գողգոթայի զոհաբերությամբ և պարտեզի գերեզմանից հարություն առնելու միջոցով, Հիսուսը կատարեց հին օրենքը և սկիզբ դրեց մի նոր տնտեսության՝ հիմնված զոհաբերության ավելի բարձր, ավելի սուրբ օրենքի վրա: Մարդկանցից այլևս չէր պահանջվի մատուցելու իրենց հոտի անդրանիկ գառին, քանի որ Աստծո Անդրանիկը եկել էր առաջարկելու իրեն՝ որպես «անսահման և հավերժական զոհաբերություն»:

Քավության և Հարության մեծությունը կայանում է նրանում, որ ոչ միայն զատվում ենք մահից, այլ ստանում ենք հավերժական կյանքի պարգևը անսահման զոհաբերության շնորհիվ:[5]

Որքան պատշաճ էր այս հին ուխտի պահպանման կատարման ընթացքում [Զատիկի ընթրիքը], որ Հիսուսը պետք է հաստատեր ապահովության նոր ուխտի խորհրդանիշերը՝ իր իսկ մարմնի ու արյան խորհրդանիշերը: Երբ նա վերցրեց հացը և կտրեց այն և վերցրեց բաժակը և օրհնեց այն, նա ներկայացնում էր իրեն որպես *Աստծո Գառ*, ով ապահովելու էր հոգևոր սնունդ և հավերժական փրկություն:[6]

3

Մեր մասնակցությունը հաղորդությանը մի հնարավորություն է՝ մեր կյանքը վերանայելու և մեր ուխտերը վերանորոգելու համար:

Վերջերս ես . . . հնարավորություն ունեցա հաճախելու հաղորդության ծառայությանը մեր տան տարածքի ծխում: . . . Մինչ քահանաները նախապատրաստում էին հաղորդությունը, մենք երգում էինք.

Հայր մեր, լսիր աղոթքը մեր,
Այս սուրբ օրը օրհնանք քեր,
Երբ նշխարներն ենք ուտում,
Փրկչի սերն ենք ճաշակում:

[*Օրհներգեր,* հ. 21]

Քահանան ծնկի իջավ մանրացված հացի առաջ և աղոթեց. «Որ նրանք կարողանան ուտել, ի հիշատակ Որդուդ մարմնի, և վկայեն քեզ, ո՛վ Աստված, Հա՛յր Հավերժական, որ նրանք հոժար են իրենց վրա վերցնել անունը քո Որդու և միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները»: (ՎԵՈՒ 20.77:) Սարկավագները բաժանեցին հացը՝ անցնելով աղոթատնով մեկ: Նրանցից մեկը մոտեցավ մեր շարքին և պահեց արծաթագույն սկուտեղը, մինչ ես ճաշակում էի: Ապա ես պահեցի սկուտեղը, որպեսզի Քույր Հանթերը կարողանար ճաշակել, և նա պահեց այն իր կողքին նստած անձնավորության համար: Այսպիսով սկուտեղն անցավ ողջ շարքով մեկ՝ մինչ յուրաքանչյուրը ծառայում էր և ծառայում էին իրեն:

Ես խորհեցի իրադարձությունների մասին, որոնք տեղի էին ունեցել մոտավորապես երկու հազար տարի առաջ այն երեկոյան, երբ Հիսուսին դավաճանեցին։ . . . Տիրոջ ընթրիքի հաղորդությունը հաստատվեց [կենդանիների] զոհաբերությանը փոխարինելու և հիշեցում լինելու բոլոր նրանց համար, ովքեր ճաշակում են, որ նա իրոք զոհաբերություն կատարեց նրանց համար և լինելու լրացուցիչ հիշեցում ուխտերի համար, որոնք նրանք կապել են հետևելու Նրան, պահելու Նրա պատվիրանները և հավատարիմ լինելու մինչև վերջ։

Մինչ [ես] մտածում էի այդ մասին, հիշեցի Պողոսի խրատը՝ Կորնթոսում գտնվող եկեղեցուն ուղղված իր նամակում։ Նա ասել է. «Ուրեմն ով որ այս հացն ուտէ՝ կամ Տիրոջ բաժակը խմէ անարժանութեամբ, նա պարտական կլինի Տիրոջ մարմնին եւ արիւնին։

Ուրեմն թող մարդ փորձէ իր անձը, եւ ապա այն հացիցն ուտէ՝ եւ այն բժակիցը խմէ։

Որովհետեւ անարժանութեամբ ուտողը եւ խմողն իր անձի համար դատաստան է ուտում եւ խմում, որ չէ որոշում Տիրոջ մարմինը»։ (Ա Կոր. ԺԱ.27–29։)

Ես անհանգստացա։ Ես ինձ տվեցի այս հարցը. «Արդյո՞ք ես Աստծուն ամեն բանից վեր եմ դնում և պահում Նրա բոլոր պատվիրանները»։ Ապա եկան խորհրդածություններն ու որոշումները։ Տիրոջ հետ ուխտ կապելը, որ միշտ պահենք նրա պատվիրանները, լուրջ պարտավորություն է և հաղորդություն ընդունելով՝ այդ ուխտը վերանորոգելը հավասարաչափ լուրջ է։ Հաղորդության սպասավորման ժամանակ լուրջ խորհրդածություններ ունենալը մեծ նշանակություն ունի։ Դրանք ինքնաքննման, ինքնադիտողության, ինքնաճանաչման պահեր են, խորհելու և որոշումներ կայացնելու պահեր։

Այդ պահին մյուս քահանան էր ծնկի իջնում սեղանի մոտ, աղոթելով, որ բոլորը, ովքեր կըմպեն, «կարողանան անել այդ, ի հիշատակ Որդուդ արյան, որ հեղվել է իրենց համար, . . . որ նրանք միշտ հիշում են նրան, որպեսզի նրանք նրա Հոգին իրենց հետ ունենան»։ (ՎԵՈՒ 20.79։)

Բոլորը լուռ մտորում էին. լռությունը խախտում էր միայն փոքր երեխան, ում մայրն անմիջապես գրկում էր նրան։ Ցանկացած բան, որ խախտում է լռությունը այս սրբազան արարողության

ընթացքում, անտեղի է թվում, սակայն փոքրիկի ձայնը միանշանակ չի զայրացնի Տիրոջը: Նրան նույնպես գրկել է սիրող մայրը մահկանացու կյանքի սկզբում, որը սկսվեց Բեթլեհեմում և ավարտվեց Գողգոթայի խաչի վրա:

Երիտասարդ տղամարդիկ ավարտեցին հաղորդությունը սպասավորելը: Ապա հնչեցին քաջալերող խոսքեր և հրահանգներ, փակման օրհներգը և աղոթքը, և սուրբ պահերը՝ աշխարհիկ հոգսից ազատ, մոտեցան ավարտին [տես «Սուրբ աղոթք», *Hymns,* no. 144]: Տուն վերադառնալիս . . . այս միտքը ծագեց իմ գլխում. Ինչ հրաշալի կլիներ, եթե բոլոր մարդիկ հասկանային մկրտության նպատակը և հոժար լինեին այն ընդունելու, ցանկանային պահել ուխտերը, որոնք կապել են այդ արարողության ժամանակ՝ ծառայելու Տիրոջը և ապրելու Նրա պատվիրաններով, և, ի լրումն, ցանկանային ճաշակել հաղորդությունից Հանգստության օրը՝ վերանորոգելու համար Նրան ծառայելու և մինչև վերջ հավատարիմ մնալու այդ ուխտերը: . . .

Հաղորդության ժողովին մասնակցելը և հաղորդությունն ընդունելը օրն ավելի իմաստալից դարձրեց, և ես զգացի, որ ավելի լավ սկսեցի հասկանալ պատճառը, թե ինչու է Տերն ասել. «Եվ որ դու կարողանաս էլ ավելի անբիծ պահել քեզ աշխարհից, դու պետք է գնաս աղոթքի տուն և քո հաղորդությունները մատուցես իմ սուրբ օրը.

Քանզի, ճշմարիտ, դա է քեզ նշանակված օրը, որ քո աշխատանքներից հանգստանաս և քո տուրքը մատուցես Բարձրյալին»: (ՎևՈ 59.9-10:)[7]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները, որոնք վերաբերում են հին Իսրայելում Զատիկի տոներին (տես բաժին 1): Ի՞նչ կարող ենք սովորել Զատիկից: Ինչպե՞ս է Զատիկը կապված քրիստոնեական Զատիկի տոնի հետ:
- Վերանայեք Նախագահ Հանթերի Փրկիչը հաստատում է հաղորդությունը զեկույցը (տես բաժին 2): Ինչո՞ւ է այս իրադարձությունը կարևոր ձեզ համար: Ի՞նչ եղանակներով է

հաղորդությունը «ապահովության ուխտ» հանդիսանում մեզ համար։

- Ի՞նչն է տպավորություն թողել ձեզ վրա հաղորդություն ընդունելու վերաբերյալ Նախագահ Հանթերի պատմության մեջ բաժին 3-ում։ Ի՞նչ կարող ենք սովորել այս պատմությունից՝ հաղորդությունն ավելի իմաստալից դարձնելու համար։ Ինչպե՞ս է հաղորդություն ճաշակելը օրհնություն ձեզ համար։

Սոնչվող սուրբ գրություններ

Ա Կորնթացիս Ե.7–8, ԺԱ.23–29, 3 Նեփի 18.3–14, 20.8–9, Մորոնի 6.5–6, ՎևՈւ 20.75–79, 27.1–2

Օգնություն ուսուցչին

«Երբ մենք ուսուցանում ենք ավետարանը, մենք պետք է խոնարհաբար ընդունենք, որ Սուրբ Հոգին է ճշմարիտ ուսուցիչը։ Մենք ունենք բացառիկ հնարավորություն ծառայելու որպես գործիքներ, ում միջոցով Սուրբ Հոգին կարող է ուսուցանել, վկայել, մխիթարել և ոգեշնչել» (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* [1999], 41)։

Հղումներ

1. In Gerry Avant, "Elder Hunter—Packed Away Musician's Career for Marriage," *Church News,* May 19, 1985, 4.
2. In J M. Heslop, "He Found Pleasure in Work," *Church News,* Nov. 16, 1974, 4.
3. David B. Haight, "The Sacrament," *Ensign,* May 1983, 13.
4. "Christ, Our Passover," *Ensign,* May 1985, 17–18.
5. "Christ, Our Passover," 18–19.
6. "His Final Hours," *Ensign,* May 1974, 18.
7. "Thoughts on the Sacrament," *Ensign,* May 1977, 24–25.

Ամուսնություն՝ հավերժական համագործակցություն

«Կյանքի մեծագույն համագործակցությունը ամուսնությունն է, այն փոխհարաբերությունը, որն ունի տևական և հավերժական կարևորություն»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Երբ Հովարդ Վ. Հանթերը 20 տարեկան էր, նա հանդիպեց Քլեր Ջեֆֆսի հետ, Եկեղեցու մի պարահանդեսում՝ Լոս Անջելոսում, Կալիֆորնիա, երբ [Քլերը] ժամադրվում էր նրա ընկերներից մեկի հետ: Պարերից հետո մի քանի երիտասարդ ամուրիներ գնացին օվկիանոս ալեսահքի: Հովարդը կորցրեց իր փողկապը, և Քլերը կամավոր քայլեց նրա հետ ափի երկայնքով՝ օգնելու նրան գտնել այն: Հետագայում Հովարդն ասաց. «Հաջորդ անգամ, երբ մենք դուրս գնացինք, ես վերցրեցի Քլերին, իսկ [ընկերս] գնաց մեկ ուրիշի հետ»:[1]

Հաջորդ տարի նրանք սկսեցին լուրջ ժամադրվել և մի գարնանային երեկո՝ իրենց հանդիպումից մոտ երեք տարի անց, Հովարդը տարավ Քլերին օվկիանոսի վրա մի գեղեցիկ տեսարան դիտելու: «Մենք [նայում էինք] Խաղաղ օվկիանոսից գլորվող ալիքներին, որոնք բախվում էին ժայռերին լիալուսնի լույսի տակ», գրել է նա: Այդ գիշեր Հովարդը ամուսնության առաջարկ արեց, և Քլերն ընդունեց: «Մենք խոսեցինք մեր ծրագրերի մասին, - ասել է նա,-[և] շատ որոշումներ ընդունեցինք այդ գիշեր և մի քանի ամուր վճիռներ՝ մեր կյանքի վերաբերյալ»:

Հովարդն ու Քլերն ամուսնացանք Սոլթ Լեյքի տաճարում, 1931 թվականի հունիսի 10-ին: Հաջորդ 52 տարիների ընթացքում, նրանց սերը խորացավ, երբ նրանք մեծացնում էին իրենց որդիներին, ծառայում էին Եկեղեցում և իրենց մարտահրավերներին դիմակայում հավատքով:

«Տաճարում մենք ստանում ենք տղամարդկանց և կանանց համար մատչելի բարձրագույն արարողությունը՝ միմյանց հետ ամուսիններիի և կանանց կնքումը հավերժության համար»:

Նրանց երջանկությունը՝ որպես զույգ, ակնհայտ էր իրենց ընտանիքի համար։ Ռոբերտ Հանթերը՝ նրանց ամենամեծ թոռը, ասել է. «Երբ մտածում եմ Հանթեր պապիկի մասին, ես մտածում եմ ավելի շատ սիրող ամուսնու օրինակի, քան որևէ այլ բանի մասին։ . . . Դուք իսկապես սիրո կապ էիք զգում նրանց երկուսի միջև»։ [3]

Նախագահ Հանթերի սերն իր կնոջ հանդեպ հատկապես ակնհայտ էր, երբ նա հոգ էր տանում նրան՝ նրա կյանքի վերջին տասնամյակում, երբ վերջինս մաքառում էր առողջական լուրջ խնդիրների հետ։ Երբ Քլերը հեռացավ կյանքից 1983թ. հոկտեմբերի 9-ին, դա մի «աղետալի հարված» էր Նախագահ Հանթերին։ [4]Նա գրել է, որ երբ տուն եկավ նրա մահվան օրը, «տունը ցուրտ թվաց, երբ ես քայլում էի [տանը], ամեն ինչ հիշեցնում էր նրան»։[5]

Մոտ յոթ տարի մենակ մնալուց հետո, Նախագահ Հանթերն ամուսնացավ Ինիս Սթենթոնի հետ 1990թ. ապրիլին։ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին կատարեց ծիսակատարությունը Սոլթ Լեյքի տաճարում։ Ինիսը մեծ սփոփանքի և ուժի աղբյուր էր Նախագահ Հանթերի համար իր ծառայության ընթացքում, որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ և որպես Եկեղեցու Նախագահ։ Նա ուղեկցում էր նրան իր ճանապարհորդություններից շատերի ընթացքում, երբ նա հանդիպում էր Սրբերին ողջ աշխարհում։

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստը՝ Տասներկուսի Քվորումից, խոսել է այն օրհնության մասին, որ Ինիսը դարձավ Նախագահ Հանթերի համար. «[Քլերի] կյանքից հեռանալուց հետո միայնության մի քանի տարիներ էին նրա համար, մինչև Ինիսի հետ ամուսնանալը։ Միասին նրանք կիսեցին այնքան շատ երջանիկ հիշողություններ և փորձառություններ»։ Ապա դիմելով Քույր Հանթերին, նա ասաց. «Մենք անսահման երախտապարտ ենք ձեզ Ինիս, նրա հետ ձեր ընկերակցության և ձեր սիրալիր ու նվիրված հոգատարության համար։ Դուք փայլ բերեցիք նրա աչքերին, և ուրախություն նրա կյանքի և ծառայության ավարտական տարիներին»։ [6]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից և նախատեսված է հավերժական լինել:

Տերն ամուսնություն է սահմանել մեզ համար: Նա ասել է.«Դրա համար՝ մարդը կթողնի իր հորը և իր մորը, և կհարի իր կնոջը. և նրանք կլինեն մեկ մարմին» (Մատթեոս ԺԹ.5):[7]

Կյանքի մեծագույն համագործակցությունը ամուսնության մեջ է՝ այն փոխհարաբերության, որն ունի տևական և հավերժական նշանակություն:[8]

Փրկության ծրագրի գիտելիքն ունենալով որպես հիմք, մարդը, ով քահանայություն է կրում, նայում է ամուսնությանը որպես սրբազան արտոնություն և պարտականություն: Ոչ տղամարդու, ոչ էլ կնոջ համար լավ չէ միայնակ լինելը: Տղամարդն ամբողջական չէ առանց կնոջ: Ոչ էլ կարող են լրացնել իրենց ստեղծման չափը առանց մեկ մեկու (տես Ա Կոր. ԺԱ.11, Մովսես 3.18): Ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև կարգված է Աստծո կողմից (տես ՎևՈւ 49.15–17): Միայն ամուսնության նոր և հավիտենական ուխտի միջոցով նրանք կարող են իրականացնել հավերժական ամուսնության օրհնությունները (տես ՎևՈւ 131.1–4, 132.15–19):[9]

Ամուսնությունը հաճախ համարվում է որպես համագործակցություն Աստծո հետ: Սա պարզապես պատկերավոր արտահայտություն չէ: Եթե այդ համագործակցությունը մնում է ուժեղ և ակտիվ, տղամարդն ու կինը կսիրեն միմյանց, ինչպես նրանք սիրում են Աստծուն, և նրանց տուն կգա մի քաղցրություն և գորովանք, որը կբերի հավերժական հաջողություն:[10]

Առաջին ամուսնությունը կատարվել է Տիրոջ կողմից: Դա հավերժական ամուսնություն էր, որովհետև դեռևս չկար այնպիսի բան, ինչպիսին ժամանակն է, երբ այդ ծիսակատարությունը տեղի ունեցավ: Ծիսակատարությունը կատարվեց մի զույգի համար, որը ենթակա չէր մահվան, այսպիսով, այդ հանգամանքների ներքո փոխհարաբերությունը երբեք վախճան չէր ունենալու: Անկումից հետո, մեր առաջին ծնողները դուրս քշվեցին Պարտեզից: Նրանք այդ ժամանակ դարձան մահվան ենթակա,

բայց նրանց խոստացվեցվ հարություն: Ոչ մի անգամ չի ասվել, որ նրանց հավերժական ամուսնությունը պետք է ավարտվեր:[11]

Տաճարում մենք ստանում ենք բարձրագույն արարողությունը, որը մատչելի է տղամարդկանց և կանանց՝ ամուսինների և կանանց՝ միմյանց հետ կնքումը հավերժության համար: Մենք հույս ունենք, որ մեր երիտասարդ մարդիկ բացի տաճարային ամուսնությունից, ուրիշ ոչ մի բանի հետ չեն համաձայնվի:[12]

Ճիշտ այնպես, ինչպես մկրտությունն է պատվիրան Տիրոջից, այնպես էլ՝ տաճարային ամուսնությունը: Ինչպես մկրտությունն է կարևոր Եկեղեցի ընդունվելու համար, այնպես էլ տաճարային ամուսնությունն է կարևոր մեր վեհացման համար Աստծո ներկայության մեջ: Դա մեր ճակատագրի մի մասն է կազմում: Մենք չենք կարող կատարել մեր վերջնական նպատակներն առանց դրա: Մի բավարարվեք սրանից ավելի քիչ որևէ բանով:

Դուք չեք ընդունի մկրտության որևէ աշխարհիկ ձև, այնպես չէ՞: Աստված ունի մկրտության իր ձևը՝ ընկղմամբ մեկի կողմից, ով կրում է իշխանություն: Այդ դեպքում դուք կընդունե՞ք ամուսնության աշխարհիկ ձևը: Նա ունի նաև ամուսնության իր ձևը. Դա տաճարային ամուսնությունն է:[13]

Ես աղոթում եմ, որ Տերն օրհնի մեզ, որ մենք կարողանանք իրականացնել մեր գոյության պատճառը և այն, ինչ պետք է անենք՝ գտնելու մեր ուղին դեպի վեհացում և հավերժական կյանք: Հավերժական ծրագրի մասն է՝ ամուսնությունը սրբազան պահելը: Եթե մենք պատրաստ ենք համաձայնել, արարողությունները դառնում են մշտատև հավիտյան: Ինչպիսի փառահեղ բան է ունենալ այս հասկացողությունը և ունենալ այս բացահայտված ճշմարտությունները մեզ համար:

2

Երբ որոշում եք, թե ում հետ ամուսնանալ, եղեք համբերատար, ունեցեք հավատք և մնացեք արժանի՝ ստանալու աստվածային օգնություն:

Կարծում եմ, մեծագույն որոշումը, որ դուք պետք է կատարեք,. . . այն որոշումն է, որ դուք պատրաստվում եք ձևավորել ձեր կյանքը հավերժության համար, իսկ դա ձեր ամուսնությունն է: Համոզված եմ, որ դուք կհամաձայնեիք ինձ հետ, որ սա կլինի շատ ավելի կարևոր, քան որևէ այլ բան, որ դուք կանեք

«Երբ ապաստում եք խոստացված օրհնություններին, . . . ջերմեռանդորեն ներգրավվեք բարի գործերում՝ ներառյալ ձեր իսկ զարգացման գործում»:

ձեր կյանքում, որովհետև ձեր աշխատանքն ու ձեր մասնագիտությունը կամ ինչ որ դուք պատրաստվում եք անել, ոչ այնքան կարևոր է, որքան հավերժական արժեքները: . . . [Ամուսնության վերաբերյալ որոշումը ազդելու է ձեզ վրա ողջ հավերժության ընթացքում, այն պատրաստվում է ազդել ձեզ վրա, մինչ դուք ապրում եք այստեղ՝ երկրի վրա նույնպես: [15]

Մի . . . նետվեք դեպի փոխհարաբերություն՝ առանց պատշաճ կանխամտածվածության և ոգեշնչման: Աղոթքով որոնեք Տիրոջ առաջնորդությունը այս հարցի կապակցությամբ: Մնացեք արժանի՝ ստանալու այդ աստվածային օգնությունը: [16]

Ձեզանից շատերն . . . անհանգստանում են սիրատածման, ամուսնության և ընտանիք սկսելու վերաբերյալ: Դուք հավանաբար չգտնեք ձեր ապագա ամուսնու անունը Նեփիի տեսիլքում կամ Հայտնության գրքում, ձեզ երևի չի ասվի դա հրեշտակի կողմից կամ նույնիսկ ձեր եպիսկոպոսի կողմից: Որոշ բաներ դուք պետք է պարզեք ինքներդ: Ունեցեք հավատք և եղեք հնազանդ և օրհնությունները կգան: Փորձեք համբերատար լինել: Փորձեք թույլ չտալ, որ այն, ինչ դուք չունեք, կուրացնի ձեզ այն բաների հանդեպ, ինչ դուք իրականում ունեք: Եթե դուք շատ

մտահոգվեք ամուսնության մասին, այն կարող է քայքայել դրա բուն հնարավորությունը: Ապրեք լիարժեք և հավատարմորեն՝ որպես մեկ անձնավորություն, նախքան դուք կունենաք անհարկի մտահոգություն երկուսով ապրելու վերաբերյալ:[17]

Խոստացված օրհնություններին սպասելիս մարդ չպետք է նշի ժամանակը, քանի որ առաջ շարժվելու ձախողումը ինչ որ չափով հետընթաց է: Ջերմեռանդորեն ներգրավվեք բարի գործերում՝ ներառյալ ձեր իսկ զարգացման գործում:[18]

3

Ոչ մի օրհնություն չի մերժվի արժանավոր անձանց, ովքեր ամուսնացած չեն:

Սա Հիսուս Քրիստոսի եկեղեցին է, ոչ թե ամուսնացածների կամ չամուսնացածների, կամ որևէ այլ խմբի, կամ անձնավորության եկեղեցի: Ավետարանը, որ մենք քարոզում ենք, Հիսուս Քրիստոսի ավետարանն է, որը ներառում է բոլոր փրկարար արարողություններն ու ուխտերը, որոնք անհրաժեշտ են փրկելու և վեհացնելու ամեն անձնավորության, ով կամենում է ընդունել Քրիստոսին և պահել պատվիրանները, որ Նա և մեր Երկնային Հայրը տվել են: [19]

Ոչ մի օրհնություն, ներառյալ հավերժական ամուսնությունը և հավերժական ընտանիքը, չի մերժվի որևէ արժանավոր մարդու: Թեև այն կարող է տևել որոշ չափով ավելի երկար, երևի նույնիսկ այս մահկանացու կյանքից այն կողմ, ոմանց համար այս օրհնությանը հասնելը չի մերժվի: . . .

Այժմ, կարո՞ղ եմ խորհրդի և սիրո մի քանի խոսք հաղորդել:

Ձեզ, ովքեր*չամուսնացած տղամարդիկ եք.*Մի հետաձգեք ամուսնությունը, որովհետև կատարյալ կարիերա և ֆինանսական դիրք չունեք: . . . Հիշեք, որ որպես քահանայություն կրող, դուք պարտավորություն ունեք նախաձեռնություն վերցնել հավերժական ընկերակից որոնելու համար:

Ձեզ՝ *չամուսնացած կանայք,*Աստծո մարգարեների խոստումն է միշտ եղել, որ Տերը տեղյակ է ձեր մասին, եթե դուք հավատարիմ լինեք,*բոլոր*օրհնությունները ձերը կլինեն: Առանց ամուսնության և ընտանիքի լինելն այս կյանքում ընդամենը ժամանակավոր վիճակ է, իսկ հավերժությունը երկար ժամանակ է:

Նախագահ Բենսոնը հիշեցրել է մեզ, որ «ժամանակը հաշվվում է միայն տղամարդկանց համար: Աստված ունի ձեր հավերժական հեռանկարը»: (*Ensign,* Nov. 1988, p. 97:) Լցրեք ձեր կյանքն արժեքավոր իմաստալից գործունեությամբ:

Ձեզ, ովքեր *ամուսնալուծություն*եք ունեցել. Թույլ մի տվեք, որ հիասթափությունը կամ ձախողման զգացումը գունավորի կյանքի կամ ամուսնության ձեր ընկալումը: Մի կորցրեք հավատքն ամուսնության հանդեպ կամ հանդուրժեք, որ դառնությունը քայքայի ձեր հոգին և ավերի ձեզ կամ նրանց, ում դուք սիրում եք կամ սիրել եք:[20]

4

Հաջողակ ամուսնությունը պահանջում է մեր լավագույն ջանքերը ավետարանի սկզբունքներով ապրելու համար:

[Ամուսնությունը] . . . ձեռքբերովի վարվելակերպ է: Մեր գիտակից ջանքերը, և ոչ թե բնազդն է որոշում հաջողությունը: Շարժիչ ուժը բխում է բարությունից, իսկական սիրուց և միմյանց երջանկության և բարեկեցության համար ուշադրությունից:

Մինչև ամուսնանալը մենք նայում էինք կյանքին մեր տեսանկյունից, բայց այդ շեմն անցնելուց հետո մենք սկսեցինք հաշվի առնել այն՝ մեկ ուրիշի տեսանկյունից ևս: Անհրաժեշտություն կա զոհաբերությունների և ճշգրտումների, որպես սիրո և հավաստիացման դրսևորումներ:

Հաճախ ասվում է, որ երջանիկ և հաջողակ ամուսնանալն ընդհանրապես ոչ այնքան ճիշտ անձնավորության հետ ամուսնանալն է, որքան*ճիշտ անձնավորություն լինելը:* Վիճակագրությունը, որը ցույց է տալիս ամուսնալուծության բարձր տոկոս, կարող է արտահայտել զուգընկերների ոչ իմաստուն ընտրությունները: Եթե նրանք ամուսնացած լինեին այլ անձնավորությունների հետ, այդ որոշակի խնդիրը գուցե վերացվեր, բայց անկասկած, մեկ ուրիշ խնդիր կլիներ դրա փոխարեն: Զուգընկերոջ իմաստուն ընտրությունը մեծ ներդրում է հաջող ամուսնության համար, սակայն իր մասը լիովին կատարելու գիտակից ջանքը մեծագույն տարրն է, որը նպաստում է հաջողությանը:[21]

Չնայած ճշմարիտ է, որ արժանի զույգերը ձեռք կբերեն վեհացում սելեստիալ արքայությունում, յուրաքանչյուր տղամարդ

Երբ ամուսինն ու կինը «սիրում են միմյանց, ինչպես նրանք սիրում են Աստծուն, . . . նրանց տուն կգա մի քաղցրություն և զորությանք, որը կբերի հավերժական հաջողություն»:

և կին, ովքեր կնքված են հավերժական կապով, պետք է անձնապես արժանի լինեն այդ օրհնությանը:

Հավերժական ամուսնությունը պիտի բաղկացած լինի արժանավոր տղամարդուց և արժանավոր կնոջից, որոնցից երկուսն էլ մկրտված լինեն ջրով և Հոգով, ովքեր անձնապես զնացել են տաճար՝ ստանալու իրենց օժտումները, ովքեր անձնապես խոստացել են հավատարիմ լինել Աստծուն և իրենց զուգընկերոջը ամուսնական ուխտում, և ովքեր անձնապես պահել են իրենց ուխտերը՝ անելով այն ամենը, ինչ Աստված ակնկալում է նրանցից: [22]

Ավետարանի սկզբունքներով ապրելը ամուսնությունը երջանիկ է դարձնում: . . . Երբ երկու մարդիկ կարողանում են ապրել ավետարանի սկզբունքներով, ամուսնությունը կարող է քաղցր լինել և այն կարող է երջանիկ լինել:[23]

5

Ամուսիններն ու կանայք պետք է աշխատեն միասին՝ զորացնելու ամուսնության կապերը:

Գթություն և համբերություն թերությունների հանդեպ

Զուգընկերների մեծ մասը թերություններ ունեն: . . . Ռիչարդ Լ. Էվանսը մի անգամ ասել է.«Հավանաբար մեզանից յուրաքանչյուրը կարողանար գոյակցել կատարյալ մարդկանց հետ, բայց մեր խնդիրն է գոյակցել թերի մարդկանց հետ» [*Richard Evans' Quote Book* (1971), 165]: Մենք հասկանում ենք ամուսնության մեջ, որ գործ չունենք կատարյալ մարդկանց հետ, մենք ձգտում ենք կատարելության, և ճանապարհորդում ենք այն ուղիով, որում մենք հույս ունենք գտնել կատարելություն, բայց մենք պետք է ունենանք հասկացողություն՝ տալու մեր լավագույնը և գեղեցիկ դարձնելու կյանքը : . . .

. . . Աստվածաշունչն ասում է մեզ. «[Գթությունը] երկայնամիտ է և [բարի]» (տես Ա Կորնթացիս ԺԳ.4): Այդպիսի սերը այն տեսակի է, որը հեշտորեն անձնատուր չի լինում, չի դադարեցվում ըստ հաճույքի և դեն գցվում, ինչպես մեկանգամյա օգտագործման պլաստմասսա, այլ, որը դիմակայում է կյանքի բոլոր փոքր դժվարություններին՝ ձեռք ձեռքի տված միահյուսելով հոգիները, որը մարդկային երջանկության մեծագույն արտահայտությունն է:[24]

Սրտի միասնություն

Անկասկած ամենաերջանիկ ամուսնությունները նրանք են, որտեղ ձեր սիրտը իմ սիրտն է, իմ ցավը քո ցավն է, իմ հաղթանակը քո հաղթանակն է, իմ մտահոգությունը քո մտահոգությունն է: Սրտի, հոգու, մարմնի միասնությունը թվում է ավելի մեծ մարտահրավեր, քան երբևէ նախկինում՝ այնպիսի աշխարհում, որում թվում է հարցը հետևյալն է. «Ի՞նչ կա սրանում ինձ համար»: Խիստ մեծ թվով ամուսնական զույգեր պարզապես դարձել են ավելի շուտ թևքի զարդարանք, քան սրտի մի մաս:[25]

Հավատարմություն՝ մտքում, խոսքում և գործերում

Տղամարդը, ով կրում է քահանայություն, ցույց է տալիս կատարյալ բարոյական հավատարմություն իր կնոջը և չի տալիս պատճառ՝ կասկածելու իր հավատարմությանը: Ամուսինը պետք է սիրի իր կնոջը՝ իր ողջ սրտով և հարի նրան և ուրիշ ոչ մեկի (տեսՎև Ու 42.22–26): Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է.

«*Ուրիշ ոչ մեկի*խոսքերը բացառում են ամեն մեկին և ամեն ինչ: Այդ ժամանակ կողակիցը դառնում է առաջնահերթ ամուսնու կամ կնոջ կյանքում և ոչ թե հասարակական կյանքը, մասնագիտական կյանքը, քաղաքական կյանքը, կամ որևէ այլ հետաքրքրություն, ոչ էլ անձնավորություն կամ որևէ բան, չպիտի երբևէ գերակայություն ներկայացնի կողակից զուգընկերոջ համեմատությամբ» (*The Miracle of Forgiveness,* Salt Lake City: Bookcraft, 1969, p. 250):

Տերն արգելում է, և Նրա Եկեղեցին դատապարտում է ամուսնությունից դուրս որևէ և ամեն մի ինտիմ հարաբերություն: Տղամարդու կողմից անհավատարմությունը կոտրում է իր կնոջ սիրտը և կորցնում նրա և նրա երեխաների վստահությունը (տես Հակոբ 2.35):

Եղեք հավատարիմ ձեր ամուսնական ուխտերում՝ մտքով, խոսքով և գործով: Պոռնոգրաֆիան, սիրահետումը և անմաքուր պատկերացումները քայքայում են մարդու բնավորությունը և հարվածում երջանիկ ամուսնության հիմքերին: Ամուսնության մեջ միասնությունն ու վստահությունը այդ պատճառով կործանվում է: Մարդը, ով չի վերահսկում իր մտքերը, և այդպիսով շնություն է գործում իր սրտում, եթե նա չի ապաշխարում, չի ունենա Հոգին, այլ կմերժի հավատքը և պիտի վախենա (տես ՎևՈւ 42.23, 63.16):[26]

Քնքշություն և հարգանք մտերմության մեջ

Ձեզ պահեք վեր որևէ բռնակալական և անարժան պահելաձևից ամուսնու և կնոջ միջև քնքուշ, մտերիմ փոխհարաբերությունում: Քանի որ ամուսնությունը կարգված է Աստծուց, ինտիմ հարաբերությունը ամուսինների և կանանց միջև բարի է և պատվաբեր Աստծո աչքում: Նա պատվիրել է, որ նրանք լինեն մեկ մարմին, և որ նրանք բազմանան և լցնեն աշխարհը (տես Մովսես 2.28, 3.24): Դուք պետք է սիրեք ձեր կնոջը, ինչպես Քրիստոսը սիրեց Եկեղեցին և իրեն տվեց՝ հանուն նրա (տես Եփես. Ե.25–31):

Քնքշությունն ու հարգանքը՝ ոչ երբեք եսասիրությունը. պետք է լինեն առաջնորդող սկզբունքներ ամուսնու և կնոջ միջև՝ ինտիմ հարաբերության մեջ: Յուրաքանչյուր զուգընկեր պիտի հոգատար և զգայուն լինի մյուսի կարիքների և ցանկությունների

հանդեպ։ Ցանկացած բռնակալական, անպարկեշտ կամ անվերահսկելի վարքագիծ ամուսնու և կնոջ միջև ինտիմ փոխհարաբերության ժամանակ դատապարտվում է Տիրոջ կողմից։

Ցանկացած մարդ, ով բռնանում է կամ նվաստացնում իր կնոջը ֆիզիկապես կամ հոգեպես, մեղավոր է դառնաղետ մեղքում և կարիք ունի անկեղծ և լուրջ ապաշխարության։ Տարբերությունները պետք է պարզվեն սիրով և բարությամբ և փոխադարձ համաձայնության ոգով։ Տղամարդը միշտ պետք է իր կնոջ հետ խոսի սիրով և բարությամբ, նրան վերաբերվելով մեծագույն հարգանքով։ Ամուսնությունը նման է նուրբ ծաղկի . . . և պետք է սնուցվի անընդհատ սիրո և գորովանքի արտահայտություններով։[27]

Ուշադիր ունկնդրելը

Շատ խնդիրներ կարող են արագորեն լուծվել և շատ դժվարին իրավիճակներ պարզաբանվել, եթե մենք հասկանանք, որ կան դեպքեր, երբ մենք պետք է լսենք։ Դպրոցում մենք սովորում էինք դասը, երբ լսում էինք, բայց ձախողվում էինք, երբ հրաժարվում էինք ուշադրություն դարձնել։ Ամուսնության մեջ առկա է փոխըմբռնման բացարձակ բացակայություն, մինչև մենք չկամենանք լսել։ . . . Իհարկե, մենք պետք է խոսենք, բայց մենք պետք է լսենք մյուս տեսակետը, որպեսզի բավականաչափ մեծացնենք մեր հասկացողությունը՝ խելացի որոշում ընդունելու համար։ Լսող ականջը հաճախ կարող է տարբերություն առաջացնել։[28]

Անեսասիրություն

Ընկերասիրությունը չի կարող հարատևել, եթե այն հիմնված է եսասիրության ավազների վրա։ Ամուսնությունները չեն հարատևում, երբ նրանք չունեն հիմք, բացի ֆիզիկական գրավչությունից և դրանք չունեն հիմք՝ ավելի խորը սիրո և հավատարմության համար։[29]

Մենք հուսով ենք, որ դուք՝ ամուսնացածներդ , կհիշեք սիրո զգացումները, որոնք առաջնորդեցին ձեզ դեպի Տիրոջ տան զոհասեղանը։ Մեր սրտերը տխրում են, երբ մենք իմանում ենք շատերի մասին, ում սերը սառել է կամ ով եսասիրության կամ օրինազանցության պատճառով մոռացել է կամ թեթևամտորեն է վերաբերվում ամուսնական ուխտերին, որ իրենք արել են տաճարում։ Մենք աղերսում ենք ամուսիններին և կանանց՝ սեր և հարգանք ունենալ միմյանց հանդեպ։ Իսկապես դա կլիներ

մեր ամենամեծ հույսը, որ յուրաքանչյուր ընտանիք օրհնվեր մորով և հորով, ովքեր արտահայտում են սեր միմյանց հանդեպ, ովքեր հարգալից են միմյանց հանդեպ, և ովքեր աշխատում են միասին ամրացնել ամուսնական կապերը: [30]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Բաժին 1-ում Նախագահ Հանթերը շեշտում է, որ ամուսնությունը կարգված է Աստծո կողմից և նախատեսված է, որ լինի հավերժական: Ինչպե՞ս կարող է այս իմացությունն ազդել ձեր կողակցի հետ փոխհարաբերության վրա: Ի՞նչ է նշանակում ձեզ համար, որ ամուսնությունը «Աստծո հետ համագործակցություն» է: Երեխաներին նույնպես կարելի է խրախուսել՝ մնալ մաքուր և արժանի՝ տաճարում ամուսնանալու համար :
- Ի՞նչ եք մտածում և ի՞նչ տպավորություններ ունեք Նախագահ Հանթերի այն խորհրդի վերաբերյալ, թե ում հետ եք որոշել ամուսնանալ: (Տես բաժին 2:)
- Ինչպե՞ս կարող է Նախագահ Հանթերի խոստումներն ու խորհուրդը բաժին 3-ում օգնել մարդկանց, ովքեր ամուսնացած չեն: Ինչպե՞ս կարող ենք կիրառել Նախագահ Հանթերի ուղերձը, որ «սա Հիսուս Քրիստոսի եկեղեցին է, ոչ թե ամուսնացածների կամ միայնակների եկեղեցի»:
- Ի՞նչ եք կարծում ի՞նչ ի նկատի ունի Նախագահ Հանթերն՝ ասելով, որ ամուսնությունը «ձեռքբերովի վարվելակերպ է»: (Տես բաժին 4:) Ե՞րբ եք տեսել, որ ավետարանի սկզբունքներով ապրելը երջանկություն է բերել ամուսնության մեջ: Եթե դուք ամուսնացած եք, մտածեք, թե ի՞նչ կարող եք անել ավելի լիարժեք ցույց տալու ձեր սերը ձեր կողակցին:
- Մտածեք Նախագահ Հանթերի խորհրդի մասին բաժին 5-ում: Ինչպե՞ս կարող են կողակիցներն ավելի մեծ համբերություն զարգացնել միմյանց թերությունների հանդեպ: Ինչպե՞ս կարող են կողակիցները զարգացնել ավելի մեծ «սրտի միասնություն»: Ինչպե՞ս կարող են կողակիցները հավատարմություն ցույց տալ ամուսնության մեջ՝ մտքերով, խոսքով և գործով:

Սոնչվող սուրբ գրություններ

Ծննդոց Բ.18, 21–24, Հակոբ 2.27, 31–33, 4 Նեփի 1.11, ՎևՈւ 42.22, Մովսես 3.19–24, տես նաև «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին», *Ensign,* Nov. 2010, 129

Օգնություն ուսումնասիրողին

Ավետարանի ձեր ուսումնասիրությունը ամենաարդունավետն է, երբ դուք ուսուցանվում եք Սուրբ Հոգու կողմից։ Ավետարանի ձեր ուսումնասիրությունը միշտ սկսեք աղոթքով, որպեսզի Սուրբ Հոգին օգնի ձեզ սովորել» (Քարոզիր Իմ Ավետարանը [2004], 21)։

Հղումներ

1. See Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 72.
2. In Knowles, *Howard W. Hunter,* 79–80.
3. In Don L. Searle, "President Howard W. Hunter, Acting President of the Quorum of the Twelve Apostles," *Ensign,* Apr. 1986, 24–25.
4. Gordon B. Hinckley, "A Prophet Polished and Refined," *Ensign,* Apr. 1995, 34.
5. In Knowles, *Howard W. Hunter,* 270; see also 264, 267, 269.
6. James E. Faust, "Howard W. Hunter: Man of God," *Ensign,* Apr. 1995, 28.
7. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 137.
8. *The Teachings of Howard W. Hunter,* 130.
9. "Being a Righteous Husband and Father," *Ensign,* Nov. 1994, 49.
10. *The Teachings of Howard W. Hunter,* 130.
11. *The Teachings of Howard W. Hunter,* 132.
12. *The Teachings of Howard W. Hunter,* 130.
13. *The Teachings of Howard W. Hunter,* 131–32.
14. "Divine Creation of Women" (address given at the Australia Area Conference, Adelaide, Australia, Nov. 30, 1979), 7, Church History Library, Salt Lake City.
15. *The Teachings of Howard W. Hunter,* 141–42.
16. "The Church Is for All People," *Ensign,* June 1989, 77.
17. "Fear Not, Little Flock" (address given at Brigham Young University, Mar. 14, 1989), 4; speeches.byu.edu.
18. "The Church Is for All People," 77.
19. "The Church Is for All People," 76.
20. "The Church Is for All People," 76–77.
21. *The Teachings of Howard W. Hunter,* 129–30.
22. "The Church Is for All People," 76.
23. *The Teachings of Howard W. Hunter,* 137.
24. *The Teachings of Howard W. Hunter,* 135–36.
25. *The Teachings of Howard W. Hunter,* 137.
26. "Being a Righteous Husband and Father," 50.
27. "Being a Righteous Husband and Father," 51.
28. *The Teachings of Howard W. Hunter,* 129.
29. In Conference Report, Oct. 1967, 12.
30. *The Teachings of Howard W. Hunter,* 130–31.

Պահեք և պաշտպանեք ընտանիքը

«Տունը կարող է երբեմն սովորական տեղ թվալ իր առօրյա պարտականություններով, սակայն նրա հաջողությունը պետք է մեր բոլոր ձգտումներից մեծագույնը լինի»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Հովարդ Վ. Հանթերը մեծացել է սիրառատ, աշխատասեր մի ընտանիքում, որտեղ նա սովորել է իր ծնողներից, որ երջանիկ օջախ կառուցելը հաճախ զոհաբերություն է պահանջում: Ամուսնանալուց ոչ շատ առաջ, նա մի զոհաբերություն կատարեց, որ անհրաժեշտ էր իր ապագա ընտանիքի բարօրության համար:

Հովարդը երաժշտության հանդեպ սեր էր զարգացրել երիտասարդ տարիքում: Նա սկզբում սովորեց դաշնամուր, ապա ջութակ նվագել , իսկ հետո ինքնուրույն սովորեց նվագել շատ ուրիշ գործիքների վրա: Երբ դեռահաս էր, նա ստեղծեց իր սեփական նվագախումբը՝ «*Hunter's Croonaders*», որը նվագում էր պարահանդեսներում և այլ իրադարձությունների ժամանակ Այդահո նահանգի Բոյս քաղաքում: Երբ նա 19 տարեկան էր, նրա նվագախումբը վարձեցին դեպի Ասիա երկամսյա նավարկությունը երաժշտությունով ապահովելու համար:[1]

Նավարկությունից վերադառնալուց մեկ տարի հետոՀովարդը տեղափոխվեց Հարավային Կալիֆորնիա, որտեղ նա շարունակում էր նվագել տարբեր խմբերի հետ: Կալիֆորնիայում նա հանդիպեց Քլեր Ջեֆսին, որին ամուսնանալու առաջարկություն արեց 1931 թվականի գարնանը: Նրանց ամուսնությունից չորս օր առաջ Հովարդը նվագում էր իր նվագախմբում, իսկ հետո հավաքեց գործիքները և այլևս երբեք չնվագեց որպես մասնագետ երաժիշտ: Երաժշտություն ապահովելը պարահանդեսների

Ընտանիքը «զերազանցում է ամեն մի այլ հետաքրքրություն կյանքում»:

և երեկույթների համար «ինչ որ տեղ դյութիչ էր,- ասել է նա,- և ես լավ փող էի վաստակում», բայց նա զգում էր, որ այդ ապրելակերպի որոշ կողմեր անհամատեղելի էին այն տիպի կյանքի հետ, որ նա էր պատկերացնում իր ընտանիքի համար: «Դա ինչ-որ դատարկության զգացում թողեց մի բանից, որից ես բավականություն էի ստանում, [բայց] որոշման համար երբեք չեմ զղջացել,- ասել է նա տարիներ անց: [2]

Հովարդը և Քլերն օրհնվեցին երեք որդիներով՝ Հովարդ Ուիլյամ (Բիլլի), Ջոն և Ռիչարդ: Ի դժբախտություն իրենց՝ Բիլլին մահացավ մանուկ հասակում: Մինչ Ջոնն ու Ռիչարդը մեծանում էին, Հանթերները ստեղծեցին սերտ միասնական ընտանիք: Հովարդը իրավաբանական պրակտիկայով և Եկեղեցու կոչումներով լիազբաղ գրաֆիկ ուներ, բայց նա և Քլերը առաջնահերթ դարձրին իրենց ընտանիքը: Նախքան Եկեղեցու կողմից երկուշաբթի երեկոն ընտանեկան պատմության երեկոյի օր նշանակելը, Հանթերները այդ երեկոն մի կողմ էին դրել, որպես ավետարանն ուսուցանելու ժամանակ, պատմելով պատմություններ, խաղալով խաղեր և միասին տեղեր հաճախելով: Տղաներին հաճախ հանձնարարություններ էին տրվում դասերի համար:

Հովարդն ու իր որդիները զարգացրին ընդհանուր հետաքրքրություններ, ինչպես օրինակ՝ գնացքների մոդելները: Նրանք գնացքներ էին սարքում կոմպլեկտներից և կառուցեցին մի բարդ երկաթուղագիծ ճանապարհներով, որոնք ամրացված էին ֆաներայի թերթերին: Նա հիշում էր. «Մեր ամենասիրելի ժամանցներից մեկը երկաթուղային բակեր գնալն էր . . . Հարավային խաղաղօվկիանոսյան Ալամբրա երկաթուղային կայարանի մոտ՝ գաղափարներ վերցնելու մեր կցուղիների և սարքավորումների համար»: [3]

Ի վերջո Նախագահ և Քույր Հանթերի ընտանիքն աճեց՝ ներառելով 18 թոռներ: Բացի իր երեխաներին և թոռներին արած երկարատև այցելություններից, Նախագահ Հանթերի այցելություններից շատերը «ոտքի վրա» էին տեղի ունենում՝ թռիչքների ժամանակ, երբ Եկեղեցու հանձնարարությունները նրան տանում էին Կալիֆորնիայի միջով: Քանի որ Ջոնը հաճախ էր տանում իր երեխաներին օդանավակայան այդ թռիչքների ընթացքում, նրանք երբեմն նրա մասին ակնարկում էին որպես.«պապիկը, ով ապրում է օդանավակայնում»: [4]

Նախագահ Հանթերը իր որդիների, թոռների և նրանց ընտանիքների հետ 1994 թվականի հոկտեմբերի 2-ին, այն օրը, երբ նա հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ:

Հովարդ Հանթերի ուսմունքները

1

Ընտանիքն ամենակարևոր մասն է հասարակությունում, Եկեղեցում և հավերժության մեջ:

Ընտանիքն ամենակարևոր կազմակերպությունն է ժամանակի և հավերժության մեջ և որպես այդպիսին, գերազանցում է ամեն մի այլ հետաքրքրություն կյանքում:[5]

Եկեղեցին պատասխանատվություն ունի, և իշխանություն՝ պահպանելու և պաշտպանելու ընտանիքը, որպես հասարակության հիմք: Ընտանեկան կյանքի ձևանմուշը, որը հաստատվել է մինչև աշխարհի հիմնադրումը, ապահովում է երեխաների համար ծնվելու և դաստիարակվելու հոր և մոր կողմից, ովքեր ամուսին և կին են՝ օրենքով ամուսնացած: Ծնող լինելը սրբազան պարտավորություն է և արտոնություն՝ երեխաներին ողջունելով որպես «Տիրոջ ժառանգություն»(Սաղ. ՃԻԷ.3):

Անհանգիստ հասարակությունն այժմ սկսում է տեսնել, որ ընտանիքի խորտակումը հանգեցնում է աշխարհի վրա մարգարեների կողմից գուշակված աղետներին: Աշխարհի խորհրդակցությունները և քննարկումները հաջողության կհասնեն միայն այն ժամանակ, երբ նրանք ընտանիքը սահմանեն, ինչպես Տերն

է բացահայտել այն: «Եթէ Տերը չշինէ տունը՝ զուր են աշխատում նորա շինողները »(Սաղ. ՃԻԷ.1):[6]

Փնտրելով անձանց և ընտանիքների բարօրությունը, կարևոր է հիշել, որ Եկեղեցու հիմնական միավորն ընտանիքն է: Սակայն, կենտրոնանալով ընտանիքի վրա, մենք պետք է հիշենք, որ աշխարհում, որում մենք ապրում ենք, ընտանիքները չեն սահմանափակվում հայր, մայր և երեխաներ ավանդական խմբավորումով: Ընտանիքները Եկեղեցում այսօր բաղկացած են նաև առանց երեխաների [ամուսիններից և կանանցից], երեխաների հետ միայնակ ծնողներից և մենակ ապրող միայնակ անձանցից: . . . Այս ընտանիքներից յուրաքանչյուրը պետք է ստանա քահանայության աչալուրջ խնամքը: Հաճախ նրանք, ովքեր ամենաուշադիր աչալուրջ խնամքի կարիքն ունեն, այն ընտանիքներն են, որոնք ոչ ավանդական կառուցվածք ունեն: Հոգատար և նվիրված տնային ուսուցիչներ անհրաժեշտ են յուրաքանչյուր տանը: Ոչ ոք չպետք է անտեսվի:[7]

2

Ծնողները գործընկերներ են տան ղեկավարությունում և իրենց երեխաներին սիրելու և պաշտպանելու խիստ պարտականության տակ են:

Ծնողական պարտականությունները մեծագույն կարևորությունն ունեն: Մեր ջանքերի արդյունքները հավերժական հետևանքներ կունենան մեզ համար և տղաների ու աղջիկների համար, ում մենք մեծացնում ենք: Որևէ մեկը, ով դառնում է ծնող, խիստ պարտականության տակ է՝ պաշտպանելու և սիրելու [իրենց] երեխաներին և օգնելու նրանց վերադառնալ իրենց Երկնային Հոր մոտ: Բոլոր ծնողները պետք է հասկանան, որ Տերն անմեղ չի համարի նրանց, ովքեր անտեսում են այս պարտականությունները:[8]

Հայրերն ու մայրերը մեծ պատասխանատվություն ունեն այն երեխաների հետ կապված, ովքեր վստահվել են նրանց խնամքին: . . .Առակաց գրքում մենք գտնում ենք այս հորդորը ծնողներին.

«Կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ, որ ծերացած էլ՝ չի հեռանալ նորանից» (Առակաց ԻԲ.6):

Մեծագույն ուսուցումը, որ կարող է տրվել երեխային, այն է, որ գալիս է ծնողների օրինակից: Ծնողները պետք է օրինակ

հանդիսանան երիտասարդներին՝ իրենց հետևելու համար: Մեծ ուժ է գալիս այն տնից, որտեղ արդար սկզբունքներ են ուսուցանվում, որտեղ կա սեր և հարգանք միմյանց հանդեպ, որտեղ աղոթքն ազդեցություն է թողել ընտանեկան կյանքում և որտեղ կա հարգանք այն բաների հանդեպ, որոնք վերաբերում են Աստծուն:[9]

Արդյունավետ ընտանեկան ղեկավարությունը. . .պահանջում է շատ և որակով ժամանակի ծախս: Ընտանիքի ուսուցումը և կառավարումը չպետք է թողնվի . . . հասարակությանը, դպրոցին կամ նույնիսկ Եկեղեցուն:[10]

Տղամարդը, ով քահանայություն է կրում, հարգում է ընտանիքն, ինչպես այն կարգվել է Աստծուց: Ձեր ընտանիքի ղեկավարումը ձեր ամենակարևոր և սրբազան պարտականությունն է: . . .

Տղամարդը, ով քահանայություն է կրում, ղեկավարում է իր ընտանիքի հաճախումները Եկեղեցի, որպեսզի նրանք իմանան ավետարանը և լինեն ուխտերի և արարողությունների պաշտպանության ներքո: Եթե դուք պետք է վայելեք Տիրոջ օրհնությունները, դուք պետք է կարգի դնեք ձեր սեփական տները: Ձեր կնոջ հետ մեկտեղ, դուք եք որոշում ձեր տան հոգևոր մթնոլորտը: Ձեր առաջին պարտականությունը ձեր սեփական հոգևոր կյանքը կարգավորելն է՝ սուրբ գրքերի կանոնավոր ուսումնասիրությամբ և ամենօրյա աղոթքով: Ապահովեք և պատվեք ձեր քահանաությունը և տաճարային ուխտերը, խրախուսեք ձեր ընտանիքին անել նույնը: [11]

Տղամարդը, ով քահանայություն է կրում, ակնածանք ունի մայրության հանդեպ: Մայրերին տրված է մի սրբազան արտոնություն՝ «մարդկանց հոգիներ բերել, քանզի դրանով է իմ Հոր գործը շարունակվում, որպեսզի նա փառավորվի» (ՎևՈւ 132.63):

. . . Քահանայությունը չի կարող ստեղծել իր ճակատագիրը, ոչ էլ Աստծո նպատակները կիրականացվեն առանց մեր օգնականների: Մայրերը կատարում են այնպիսի աշխատանք, որը քահանայությունը չի կարող անել: Կյանքի այս պարգևի համար քահանայությունը պիտի անսահման սեր ունենա իրենց երեխաների մայրերի հանդեպ:

[Եղբայրներ,] պատվեք ձեր կանանց անզուգական և աստվածայնորեն նշանակված դերը որպես մայր Իսրայելում և երեխաներ բերելու և դաստիարակելու նրա հատուկ կարողությունը:

Մենք բազմանալու և երկիրը լցնելու և մեր երեխաներին և թոռներին լույսով և ճշմարտությամբ դաստիարակելու աստվածային պատվիրանի ներքո ենք (տես Մովսես 2.28, ՎևՈւ 93.40)։ Որպես սիրով լցված զուգընկեր, դուք կիսում եք երեխաների խնամքը։ Օգնեք նրան՝ կառավարել և պահել ձեր տունը։ Օգնեք ուսուցանել, կրթել և կարգապահ դարձնել ձեր երեխաներին։

Դուք պետք է կանոնավորապես արտահայտեք ձեր կնոջը և երեխաներին ձեր ակնածանքն ու հարգանքը։ Իսկապես, մեծագույն բաներից մեկը, որ հայրը կարող է անել իր երեխաների համար, նրանց մորը սիրելն է։[12]

Տղամարդը, ով քահանայություն է կրում, ընդունում է իր կնոջը որպես զուգընկեր տունը և ընտանիքը ղեկավարելիս՝ լիովին ընդունելով և լիովին մասնակցելով բոլոր հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը։ Անհրաժեշտության դեպքում Եկեղեցում և տանը պետք է լինի նախագահող պաշտոնյա (տես ՎևՈւ 107.21)։ Աստվածային նշանակմամբ տանը նախագահելու պատասխանատվությունը դրված է քահանայություն կրողի վրա (տես Մովսես 4.22)։ Տերը նախատեսել է, որ կինը օգնական լինի տղամարդու համար (*օգնական* նշանակում է հավասար), այսինքն, հավասար զուգընկեր և անհրաժեշտ՝ լիարժեք ընկերակցության համար։ Արդարությամբ նախագահելն անհրաժեշտություն է առաջացնում պատասխանատվությունը կիսելու ամուսնու և կնոջ միջև, դուք միասին եք գործում իմացությամբ և մասնակցությամբ՝ բոլոր ընտանեկան հարցերում։ Տղամարդու համար անկախ գործելը կամ առանց հաշվի առնելու իր կնոջ զգացմունքներն ու խորհուրդը ընտանիքը ղեկավարելիս, նշանակում է անարդար իշխանություն գործադրել։[13]

Մենք խրախուսում ենք ձեզ, եղբայրներ, հիշել, որ քահանայությունը միայն արդար իշխանություն է։ Վաստակեք ձեր երեխաների հարգանքն ու վստահությունը նրանց հետ ձեր սիրառատ փոխհարաբերության միջոցով։ Արդարակյաց հայրը պաշտպանում է իր երեխաներին իր ժամանակով և ներկայությամբ նրանց սոցիալական, կրթական և հոգևոր գործերում և պարտականություններում։ Սիրո և գորովանքի քնքուշ արտահայտությունները երեխաների հանդեպ ինչպես հոր, այնպես էլ մոր պարտականությունն է։ Ասեք ձեր երեխաներին, որ սիրում եք նրանց։[14]

3

Մեր տները պետք է լինեն սիրո, աղոթքի և ավետարանի ուսուցման վայրեր:

Մենք պարզապես պետք է ունենանք սեր և ազնվություն և ուժեղ սկզբունքներ մեր տներում: Մենք պետք է ունենանք մնայուն նվիրվածություն ամուսնության և երեխաների ու բարոյականության հանդեպ: Մենք պետք է հաջողության հասնենք այնտեղ, որտեղ հաջողությունն առավել կարևոր է հաջորդ սերնդի համար:

Անկասկած այն տունն է ուժեղագույնը և գեղեցկագույնը, որտեղ տեսնում ենք, որ յուրաքանչյուր մարդ զգայուն է մյուսների զգացմունքների հանդեպ՝ ձգտելով ծառայել մյուսներին, ձգտելով ապրել տանը այն սկզբունքներով, որոնք մենք ավելի շատ ցույց ենք տալիս հասարակական իրավիճակներում: Մենք պետք է փորձենք ավելի տքնաջան ապրել ավետարանով մեր ընտանեկան շրջանակներում: Մեր տներն արժանի են ամենահավատարիմ պարտավորություններին: Երեխան իրավունք ունի զգալու, որ իր տանը նա ապահով է, որ այնտեղ նա պաշտպանության վայր ունի արտաքին աշխարհի վտանգներից ու չարիքից: Ընտանիքի միասնությունն ու ազնվությունն անհրաժեշտ են այս կարիքը բավարարելու համար: Երեխան կարիք ունի ծնողների, ովքեր երջանիկ են իրենց փոխհարաբերություններում միմյանց հետ, ովքեր աշխատում են ուրախությամբ կատարյալ ընտանեկան ապրելակերպի իրականացման ուղղությամբ, ովքեր սիրում են իրենց երեխաներին անկեղծ և անշահախնդիր սիրով և ովքեր նվիրված են ընտանիքի հաջողությանը:[15]

Երբ ընտանեկան տնային երեկոներն առաջին անգամ ներկայացվեցին որպես Եկեղեցու պաշտոնական ծրագիր, Առաջին Նախագահությունն ասաց. «Եթե Սրբերը հնազանդվեն [ընտանեկան տնային երեկոներ անցկացնելու] այս խորհրդին, մենք խոստանում ենք, որ մեծ օրհնություններ կլինեն արդյունքում: Տանը սերը և հնազանդությունը ծնողների հանդեպ կմեծանա: Հավատքը կզարգանա Իսրայելի երիտասարդության սրտերում և նրանք ձեռք կբերեն զորություն՝ ճակատամարտելու իրենց պաշարող չարի ազդեցությունների ու գայթակղությունների դեմ: Մենք վերահաստատում ենք խոստացված օրհնությունները

«Մենք պետք է լինենք աղոթող և. . . թույլ տանք, որ մեր երեխաներն իմանան մեր սիրո և մտահոգության մասին:

նրանց, ովքեր հավատարմությամբ ընտանեկան տնային երեկոներ են անցկացնում:

Երկուշաբթի օրվա երեկոն պետք է պահվի ընտանեկան տնային երեկոյի համար: Տեղական ղեկավարները պետք է ապահովեն, որ Եկեղեցու շենքերն ու շինությունները փակ լինեն, որպեսզի ծխի կամ ցցի միջոցառումներ չպլանավորվեն երկուշաբթի օրվա երեկոների համար և, որպեսզի ընտանեկան տնային երեկոների այլ խանգարումներից խուսափեն:

Հիմնական շեշտադրումը ընտանեկան տնային երեկոյի վրա պետք է լինի ընտանիքների համար միասին ավետարանն ուսումնասիրելը: Մենք հիշեցնում ենք, որ Տերը հորդորել է ծնողներին՝ ուսուցանել իրենց երեխաներին ավետարանը, աղոթել և պահել հանգստության օրը: Սուրբ գրություններն ամենակարևոր աղբյուրներն են ավետարանն ուսուցանելու համար:[16]

Աղոթեք որպես ընտանիքներ ինչպես երեկոյան, այնպես էլ առավոտյան: Ի՞նչ մեծ օրհնություններ են գալիս այն երեխաների կյանք, ովքեր լսում են Տիրոջն ուղղված իրենց բարօրության համար իրենց ծնողների խնդրանքը: Անկասկած երեխաները, ովքեր

գալիս են այդպիսի արդար ծնողների ազդեցության ներքո, ավելի լավ կպաշտպանվեն հակառակորդի ազդեցություններից :[17]

Որպեսզի ծնողներն ու երեխաները ավելի լավ հասկանան միմյանց, մի ծրագիր է ստեղծվել եկեղեցու կողմից, որը հայտնի է որպես «Ընտանեկան Խորհուրդ»: Այս խորհուրդը կանչվում է և ղեկավարվում ծնողների կողմից, և մասնակցում են ընտանիքի բոլոր անդամները: Այն ամրացնում է ընտանեկան կապերը, հավաստիացնում է երեխաներին, նրանց «պատկանելիությունը» և համոզում նրանց, որ ծնողները հետաքրքրվում են նրանց խնդիրներով: Այս ընտանեկան ժողովներն ուսուցանում են փոխադարձ հարգանք միմյանց հանդեպ, վերացնում են եսասիրությունը և շեշտադրում են Ոսկե Կանոնը [տեսՄատ. Է.12] տանը և մաքուր կյանքով ապրելը: Ուսուցանվում է ընտանեկան երկրպագություն և աղոթք բարության և ազնվության դասերի հետ միասին: Ընտանիքի խնդիրը սովորաբար այնքան սերտ շրջանակում է հակադրվում, որ դրա իսկական չափսերը և նշանակությունը հեշտ չէ գնահատել, բայց երբ ընտանիքներն ուժեղ են և միաբան Աստծուն ծառայելու ջանքերում և պահում են Նրա պատվիրանները, մեր ժամանակակից խնդիրներից շատերն անհետանում են:[18]

[Եղբայրներ,] լրջությամբ կրեք ավետարանը ձեր ընտանիքին ուսուցանելու ձեր պարտականությունը՝ կանոնավոր ընտանեկան տնային երեկոների, ընտանեկան աղոթքի, հավաքների և սուրբ գրությունների ընթերցանության ժամի և այլ ուսուցողական պահերի միջոցով: Հատուկ շեշտ դրեք միսիոներական ծառայության և տաճարային ամուսնության վրա: Որպես տան հայրապետ, գործադրեք ձեր քահանայությունը համապատասխան արարողությունները ձեր ընտանիքի համար կատարելու միջոցով և օրհնություններ տալով ձեր կնոջն ու երեխաներին: Ձեր փրկությունից հետո եղբայրներ, չկա ոչ մի բան այնքան կարևոր ձեզ համար, որքան ձեր կնոջ և երեխաների փրկությունը: [19]

4

Հաջողակ ծնողը նա է, ով սիրել է, զոհաբերել, հոգ տարել, ուսուցանել և սպասավորել երեխայի կարիքները:

Գերագույն Իշխանավորներն ունեն արտոնություն՝ հանդիպելու և ծանոթանալու Եկեղեցու անդամների հետ ողջ աշխարհում, ովքեր հետևողականորեն ապրել են լավ կյանքով և մեծացրել

իրենց ընտանիքները ավետարանի ազդեցությամբ։ Այս Սրբերը վայելել են մեծ օրհնություններ և սփոփանք, որը կարող է գալ՝ ետ նայելուց, որպես ծնողներ, տատիկ պապիկներ և մեծ տատիկ ու պապիկ, երկարատև և հաջող ծնողական ջանքերի ընթացքում։ Անշուշտ սա մի բան է, որ մեզանից յուրաքանչյուրը կուզենար։

Սակայն Եկեղեցում և աշխարհում կան շատերը, ովքեր ապրում են հանցանքի և անարժանության զգացումներով, որովհետև նրանց որդիներից և դուստրերից մի քանիսը հոտից հեռացել են կամ մոլորվել։ . . .

. . . Մենք հասկանում ենք, որ պարտաճանաչ ծնողները փորձում են անել ամեն հնարավորը, սակայն գրեթե բոլորն էլ գործում են սխալներ։ Մարդը չի նախագծում ծնողդառնալը, բայց շուտով գիտակցում է, որ կլինեն շատ սխալներ ճանապարհին։ Անշուշտ մեր Երկնային Հայրը գիտի, երբ Նա վստահում է Իր հոգևոր զավակներին՝ երիտասարդ և անփորձ ծնողներին, որ կլինեն սխալներ և մոլորություններ դատողության մեջ։ . . .

. . . Մեզանից յուրաքանչյուրն անզուգական է։ Յուրաքանչյուր երեխա անզուգական է։ Ինչպես մեզանից յուրաքանչյուրը սկսում է կյանքի մրցավազքըտարբեր կետերից, և ինչպես մեզանից յուրաքանչյուրն ունի տարբեր զորություններ և թուլություններ ու տաղանդներ, այդպես էլ ամեն երեխա օրհնված է իրեն հատուկ մի շարք բնութագրիչ գծերով։ Մենք չպիտի կարծենք, որ Տերը կդատի մեկի հաջողությունը ճիշտ նույն կերպ՝ ինչպես մյուսինը։ Որպես ծնողներ, մենք հաճախ ենք այդպես ենթադրում, եթե մեր երեխան չի դառնում հաջողակ այնամենում, ինչում մենք ձախողվել ենք։ Մենք պետք է զգույշ լինենք մեր դատողություններում։ . . .

Հաջողված ծնողը նա է, ով սիրել է, նա է, ով զոհաբերել է, նա է, ով հոգ է տարել, ուսուցանել է և բավարարել երեխայի կարիքները։ Եթե դուք արել եք այսամենը, և ձեր երեխան միևնույն է, կամակոր է, քմահաճ կամ աշխարհիկ, կարող է այնուամենայնիվ այնպես լինել, որ դուք հաջողակ ծնող լինեք։ Հավանաբար կան երեխաներ, ովքեր աշխարհ են եկել, որպեսզի մարտահրավեր լինեն ամեն մի ծնողական զույգի համար ամեն հանգամանքներում ։ Նմանապես, գուցե կան այնպիսիները, ովքեր կօրհնեին իրանց հոր կամ մոր կյանքերը և կլինեին նրանց ուրախությունը։։

Իմ մտահոգությունն է այսօր, որ կան ծնողներ, ովքեր գուցե իրենց հասցեին խիստ դատողություններ են անում և թույլ տալիս, որ այդ զգացումները կործանեն իրենց կյանքը, երբ փաստորեն նրանք արել են ամեն հնարավորը և պետք է շարունակեն հավատքով: [20]

Հայրը կամ մայրը, [ում երեխան մոլորվել է] միայնակ չէ: Մեր առաջին ծնողներն իմացել են ցավ ու տառապանք՝ տեսնելով իրենց երեխաներից ոմանց հավերժական կյանքի ուսմունքները մերժելիս: (Տես Մովսես 5.27): Դարեր հետո Հակոբն իմացավ իր ավագ որդիների նախանձի և չար զգացումների մասին՝ իր սիրելի Հովսեփի հանդեպ: (Տես Ծննդ. ԼԷ.1–8:) Մեծ մարգարե Ալման, ով ուներ որդի Ալմա անունով, ամբողջ ժամանակ աղոթեց Տիրոջը՝ իր որդու ապստամբ վարքի համար և անկասկած ճնշված էր մտահոգությունից և անհանգստությունից, տարաձայնություններից և ամբարշտությունից, որ իր որդին էր առաջացնում նրանց մեջ, ովքեր Եկեղեցում էին: (Տես Մոսիա 27.14:) Մեր Երկնային Հայրն էլ է կորցրել Իր հոգեղեն զավակներից շատերին աշխարհի պատճառով, նա գիտի ձեր սրտի զգացումները: . . .

Անձնատուր մի եղեք մի տղայի կամ աղջկա համար, ով մոլորվել է: Շատերը, ովքեր թվում է լրիվ կորած էին, վերադարձել են: Մենք պետք է միշտ աղոթենք և եթե հնարավոր է, թող մեր երեխաներն իմանան մեր սիրո և մտահոգության մասին: . . .

. . . Իմացեք, որ մեր Երկնային Հայրը կընդունի սերն ու զոհաբերությունը, անհանգստությունն ու մտահոգությունը, եթե նույնիսկ մեր մեծ ջանքերն անհաջող են եղել: Ծնողների սրտերը հաճախ կոտրվում են, սակայն նրանք պետք է հասկանան, որ վերջնական պատասխանատվությունը դրված է երեխայի վրա, քանի որ ծնողներն ուսուցանել էին ճիշտ սկզբունքներ:

. . .Ինչպիսին էլ լինի վիշտը, ինչպիսին էլ լինի մտահոգությունը, ինչպիսին էլ լինի ցավն ու տանջանքը, ուղի որոնեք՝ այն շահավետ օգտագործման դարձնելու համար, գուցե օգնելով ուրիշներին խուսափել նույն խնդիրներից, կամ գուցե զարգացնելով ավելի մեծ ըմբռնում ուրիշների զգացումների հանդեպ, ովքեր մաքառում են նույն ձևով: Անշուշտ մենք կունենանք մեր Երկնային Հոր սիրո ավելի խորը ըմբռնումը, երբ աղոթքի միջոցով, մենք ի վերջ սկսենք հասկանալ, որ Նա հասկանում է և կամենում, որ մենք առաջ նայենք: . . .

Մենք երբեք չպետք է թույլ տանք սատանային, որ նա մեզ հիմարացնի՝ ստիպելով մտածել , որ ամեն ինչ կորած է: Եկեք հպարտանանք բարի և ճիշտ բաներով, որ մենք արել ենք, մերժենք և դուրս գցենք մեր կյանքից այն բաները, որոնք սխալ են, նայենք դեպի Տերը ներման ուժի և սփոփանքի համար և ապա առաջ շարժվենք: [21]

5

Մեր տները պետք է լինեն սուրբ վայրեր, որտեղ կարելի է ապրել ավետարանի սկզբունքներով և որտեղ Տիրոջ Հոգին կարող է բնակվել:

Մենք հուսով ենք, որ հուսահատությունը չի հաղթի ձեզ՝ ձեր ընտանիքներն արդարակեցության մեջ մեծացնելու ձեր փորձերում: Հիշեք, որ Տերն է պատվիրել այս. «Բայց իմ աշակերտները պիտի կանգնեն սուրբ տեղերում և չեն շարժվի»(ՎԱՌ 45.32):

Չնայած ոմանք մեկնաբանում են սա՝ նկատի ունենալով տաճարը, որն իսկապես այդպես է, այն նաև ներկայացնում է տները, որոնցում մենք ապրում ենք: Եթե դուք ջանասիրաբար աշխատեք՝ ձեր ընտանիքներն արդարակեցությամբ առաջնորդելու, խրախուսելով և մասնակցելով՝ ամենօրյա ընտանեկան աղոթքին, սուրբ գրությունների ընթերցմանը, ընտանեկան երեկոյին, և սեր ու աջակցություն ցույցաբերեք միմյանց հանդեպ ավետարանի ուսմունքներով ապրելիս, դուք կստանաք Տիրոջ խոստացած օրհնությունները՝ արդար ժառանգներ մեծացնելիս:

Աշխարհում, որտեղ անշեղորեն աճում է ամբարշտությունը , որքան կարևոր է, որ մեզանից յուրաքանչյուրը «կանգնի սուրբ տեղերում» և պարտավորվի լինել ճշմարիտ և հավատարիմ Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսմունքներին:[22]

Ընտանիքում հաջողության հասնելու համար ծնողները պետք է սեր և հարգանք ունենան միմյանց հանդեպ: Ամուսինները՝ քահանայություն կրողները, պետք է իրենց կանանց ամենաբարձր ձևով գնահատեն երեխաների մոտ, իսկ կանայք պետք է սիրեն և աջակցեն իրենց ամուսիններին: Ի պատասխան՝ երեխաները սեր կունենան իրենց ծնողների հանդեպ և միմյանց հանդեպ: Այդ ժամանակ տունը կդառնա սուրբ տեղ, որտեղ ավետարանի սկզբունքները կարող են լավագույն ձևով ապրել և որտեղ Տիրոջ Հոգին կարող է բնակվել: Հաջողակ հայր կամ

հաջողակ մայր լինելը շատ ավելի մեծ է, քան ղեկավարությունում կամ բիզնեսում, կառավարությունում կամ աշխարհիկ գործերում բարձր պաշտոններ գրավելը: Տունը կարող է երբեմն սովորական տեղ թվալ՝ իր առօրյա պարտականություններով, սակայն նրա հաջողությունը պետք է լինի մեր կյանքի բոլոր ձգտումներից մեծագույնը:[23]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Երբ վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները գրքի բաժին 1-ը, մտածեք ընտանիքի կարևորության մասին: Ո՞րն է Եկեղեցու պատասխանատվությունը ընտանիքի համար: Ինչպե՞ս կարող ենք պաշտպանել և զորացնել մեր ընտանիքները:
- Խորհեք տան ղեկավարման գործում ծնողների գործընկերներ լինելու մասին Նախագահ Հանթերի ուսմունքների վերաբերյալ (տես բաժին 2): Ինչպե՞ս կարող են այս ուսմուքներն օգնել թե հայրերին, թե մայրերին: Ինչպե՞ս կարող են ծնողները միաբան դառնալ իրենց երեխաներին մեծացնելիս: Մտածեք, թե ինչպես կարող եք բարելավել ձեր տան «հոգևոր մթնոլորտը»:
- Բաժին 3-ում Նախագահ Հանթերը տալիս է խորհուրդ ուժեղ ընտանիք հիմնելու մասին: Ինչպե՞ս կարող ենք ստեղծել ավելի մեծ «ընտանեկան միասնություն և ամբողջականություն»: Ինչպե՞ս է ընտանեկան երեկոն օրհնել ձեր ընտանիքը: Ինչպե՞ս կարող է սուրբ գրությունների ուսումնասիրությունն ու ընտանեկան աղոթքն օրհնել մեր ընտանիքները:
- Ինչպե՞ս կարող է Նախագահ Հանթերի ուսմունքների բաժին 4-ն օգնել այն երեխայի ծնողներին, ով շեղվել է: Ինչպե՞ս կարող են ծնողները, ովքեր վիշտ և ցավ են տանում, դարձնեն այն օգտակար օգտագործման համար: Ի՞նչ կարող են անել ծնողները, տատիկ պապիկները, երիտասարդության ղեկավարները և մյուսները՝ օգնելու երեխաներին, ովքեր մոլորվում են:
- Բաժին 5-ը կարդալուց հետո, մտածեք Նախագահ Հանթերի ուսմունքների մասին՝ տները «սուրբ վայրեր» դարձնելու վերաբերյալ: Որո՞նք են այն մարտահրավերները, որոնց առնչվում ենք մենք՝ այդ անելիս: Ինչպե՞ս կարող ենք ձգտել մեր տները սուրբ վայրեր դարձնել:

Սոնչվող սուրբ գրություններ

Ելից Ի.12, Երկրորդ Օրինաց Զ.4–7, Սաղմոս ՃԻԷ.3–5, Եփեսացիս Զ.1–4, Ենովս 1.1–3, Մոսիա 4.14–15, Ալմա 56.45–48, 3 Նեփի 18.21, ՎևՈւ 68.25–28, 93.40, 121.41–46

Օգնություն ուսուցչին

Խնդրեք դասարանի անդամներին զույգերով աշխատել և ծրագրել, թե ինչպես ուսուցանեն գլխի մի բաժին տնային ընտանեկան երեկոյի ժամանակ: Ինչպե՞ս կարող ենք ուսմունքները համապատասխանեցնել երեխաներին և երիտասարդությանը: Հրավիրեք որոշ զույգերի՝ կիսվել իրենց ծրագրերով դասարանի հետ:

Հղումներ

1. See Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), -48.
2. In Knowles, *Howard W. Hunter,* 81.
3. In Knowles, *Howard W. Hunter,* 109.
4. In Knowles, *Howard W. Hunter,* 252; see also 251.
5. "Being a Righteous Husband and Father," *Ensign,* Nov. 1994, 50.
6. "*Exceeding Great and Precious Promises,*" *Ensign,* Nov. 1994, 9.
7. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 144.
8. "Parents' Concern for Children," *Ensign,* Nov. 1983, 65.
9. In Conference Report, Apr. 1960, 125.
10. "Being a Righteous Husband and Father," 50.
11. "Being a Righteous Husband and Father," 50, 51.
12. "Being a Righteous Husband and Father," 50.
13. "Being a Righteous Husband and Father," 50–51.
14. "Being a Righteous Husband and Father," 51.
15. "Standing As Witnesses of God," *Ensign,* May 1990, 61–62.
16. First Presidency letter, Aug. 30, 1994 (Howard W. Hunter, Gordon B. Hinckley, and Thomas S. Monson).
17. In Mike Cannon, "'*Be More Fully Converted,' Prophet Says,*" *Church News,* Sept. 24, 1994, 4; see also *The Teachings of Howard W. Hunter,* 37.
18. In Conference Report, Apr. 1960, 125-26.
19. "Being a Righteous Husband and Father," 51.
20. "Parents' Concern for Children," 63, 64–65.
21. "Parents' Concern for Children," 64, 65.
22. *The Teachings of Howard W. Hunter,* 155.
23. *The Teachings of Howard W. Hunter,* 156.



Տասը պատվիրանները ներառում են հետևյալ հրդրդրը.«Քո դրացու դեմ սուտ վկայություն մի տուր»:(Ելից Բ.16):

Մենք հավատում ենք ազնիվ լինելուն

«Եթե մենք կամենում ենք ունենալ Տիրոջ ընկերակցությունը և Սուրբ Հոգու Ոգին, մենք պետք է ազնիվ լինենք ինքներս մեզ հետ, ազնիվ Աստծո հետ և մեր մերձավորի հետ»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Մինչ Նախագահ և Քույր Հանթերները մեկ այլ զույգի հետ սպասում էին շրջայց կատարելու Հրրսթ Քասլում Կաքլիֆոռնիայում, նրանք մեքենան քշեցին դեպի մի փոքրիկ խանութ: Երբ նրանք շրջում էին խանութում, Երեց Հանթերը գնաց վաճառասեղանի մոտ հաշվեց մի քանի մատուտակ [և] վճարեց վաճառողին 10 պեննի: Այնուհետև երկու զույգերը վերադարձան ավտոմեքենա և սկսեցին վարել մեքենան դեպի ամրոցը շրջայց կատարելու համար: Ճանապարհին «Երեց Հանթերը բոլորին փոխանցեց մատուտակը մեկ անգամ, իսկ հետո կրկին և ապա հանկարծ նրա համար պարզ դարձավ, որ նա հավանաբար սխալ էր հաշվել, քանի որ մենք վերջում 11 կտոր հաշվեցինք 10-ի փոխարեն, որի համար նա վճարել:

Նա հեշտորեն կարող էր սխալին ուշադրություն չդարձնել: Ի վերջո դա ընդամենը մի պեննի էր, և մենք մի քիչ շտապում էինք այդ ժամանակ որպեսզի հասցնեինք շրջայց կատարել: Ո՞վ կզգար տարբերությունը կամ ուշադրություն կդարձներ: Բայց նա նույնիսկ չվարանեց այդ հարցում: Նա մեքենան շրջեց հակառակ ուղղությամբ և քշեց դեպի խանութ: . . . Նա բացատրեց խնդիրը մեկ այլ վաճառողի, ներողություն խնդրեց սխալի համար և վճարեց լրացուցիչ պեննին ցարմացած վաճառողին»:[1]

Հովարդ Վ. Հանթերի համար կարևոր էր ազնիվ լինել ինչպես փոքր այնպես էլ մեծ հարցերում:

Նա ուսուցանում էր իր որդիներին օրինավորության մասին իր օրինակով: «Այն, ինչ ես գիտեմ ազնվության և օրինավորության մասին, մեծ մասամբ լսել եմ հայրիկիս մասին մարդկանց ինձ պատմածից»,- ասել է Ռիչարդ Հանթերը: Մի անգամ Ռիչարդը իր հայրիկի հետ գնաց մի գործնական հանդիպման, որտեղ մի բարդ նախագիծ էր քննարկվում: Մինչ դրսում էինք ընդմիջման համար, Ռիչարդը և մարդկանցից մեկը խոսում էին ժողովի մասին: Ռիչարդն ասաց, որ երևի պիտի երկար սպասեին մինչև նախագիծը սկսվեր, որովհետև այն կպահանջեր հսկայական քանակությամբ պաշտոնական թղթային աշխատանք: Մարդն ուղղեց Ռիչարդին՝ ասելով, որ նախագիծը կարող էր սկսվել նախքան թղթային աշխատանքի ավարտվելը, որովհետև մարդիկ գիտեին, որ Հովարդ Հանթերը կաներ այն, ինչ նա ասել էր, որ կանի:[2]

1962 թվականին Նախագահ Հանթերը դիմեց Եկեղեցու երիտասարդներին և արտահայտեց իր համոզվածությունը ազնիվ լինելու կարևորության մասին:

«Երջանիկ կյանք կգա մեզանից յուրաքանչյուրին, եթե միայն ազնիվ լինենք՝ ազնիվ մեր հայրերի և մայրերի հետ, որդյո՞ք դա վերաբերում է մեր ժամադրվելուն, համալսարանական գործերին, երեխաներին, որոնց հետ վազում ենք, թե եկեղեցի հաճախելուն. ազնիվ լինենք մեր եպիսկոպոսների հետ՝ հետևելով նրանց խորհրդին, պատմելով նրանց ճշմարտությունը մեր մասին, վճարելով մեր ազնիվ տասանորդը, ապրելով մաքուր, անբիծ կյանքով, ազնիվ լինենք մեր դասերում, երբեք չխարդախելով մեր գործունեության որևէ հատվածում՝ լինի դա լսարանում, թե համալսարանում, ազնիվ մեր ճանապարհի համար վճարելիս՝ լինի դա խաղերում, կինոդիտման ժամանակ, թե երեկույթի պարտականությունների մեր բաժինը կատարելիս, լինենք ազնիվ մեր ընկերների և ընկերուհիների հետ՝ երբեք նրանց չշահագործելով, չխաբելով, գայթակղության չտանելով, լինենք ազնիվ հենց Իր՝ Տիրոջ հետ: [3]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Տերը հորդորում է, որ մենք ազնիվ լինենք:

Սուրբ գրությունները լի են ազնիվ լինելու հորդորներով և անհամար պատվիրաններով այն մասին, որ մենք պետք է ազնիվ լինենք: Մենք մտածում ենք դրանց մասին թավատառով. ՄԻ ԱՆԻՐ, Մի գողանար, սուտ վկայություն մի անիր, մի ցանկանար [տեսելից Ի.15–17]: . . .

Անազնվության ամենասովորական տեսակներից մի քանիսն են .

1. *Գողանալը* Ես հազվադեպ եմ կարդում լրագրեր առանց դրանց մեջ գտնելու մի շարք տեղեկություններ կոտրանքով գողության, կողոպուտի, գրպանահատության, խանութից գողության, ավտոմեքենայի գողության և հազարավոր այլ բաների մասին: Նույնիսկ մեր ժողովարաններում կան տեղեկություններ մանր գողության մասին:

2. *Խաբելը* Լրագրերը տալիս են նմանատիպ պատմություններ անվտանգության գործերում, գործարարության մեջ խարդախ գործարքների, կեղծարարություն ներդրումներում և այլ բաներում, որոնց վրա հրավիրվում է հասարակայնության ուշադրությունը: Կան մարդիկ, ովքեր խաբում են դպրոց գնալու ճանապարհածախսը չվճարելով, իսկ ոմանք էլ խաբում են քննությունների ժամանակ:

3. *Իմաստության Խոսքի չափանիշների խախտում* Սրանք են Եկեղեցու չափանիշները: Դրանք աշխարհիկ չափանիշների խախտումներ չեն: Բայց ձեզ տրվել է Տիրոջ խոսքը այս նյութի վերաբերյալ:

4. *Երթևեկության կանոնների խախտումներ:* Մարդը չի կարող հիմնականում ազնիվ լինել և խախտել օրենքները, որոնք ձևավորվել են հասարակության և կառավարության կողմից՝ մյուս մարդկանց բարօրության համար:[4]

«Քո դրացու դեմ սուտ վկայություն մի տուր» [Ելից Ի.16]: Հիմնականում այս պատվիրանը վերագրվել է դատական ատյաններում կեղծ վկայություն տալուն, բայց այն տարածվում է բոլոր դեպքերի վրա, որոնք փաստորեն կեղծ են: Որևէ անճշտություն,

որը միտում ունի վնասել մեկ ուրիշին՝ նրա ապրանքներին, անձին կամ բնութագրին, դեմ է սույն օրենքի ոգուն և տառին: Ճշմարտության կասեցումը, որն առաջացնում է նույն վնասը, նույնպես այս պատվիրանի խախտում է:

«Մի ցանկանար քո դրացու տանը, քո դրացու կնոջը կամ նրա ծառային՝ կամ նրա աղախնին՝ կամ նրա եզին՝ կամ նրա էշին և քո դրացու ոչ մի բանին» [Ելից Ի.17]: Ցանկանալը նշանակում է փափագել, ձգտել, տենչալ նրան, ինչը պատկանում է մեկ այլ մարդու: Լավ բաներ ձեռք բերելու ցանկությունը խախտում չէ, բայց մեկ ուրիշից վերցնել ցանկանալը անօրինական ձևով՝ սխալ է: Այս տեսակետից մեզ համար լավ է հասկանալ, որ բարին կամ չարը սկսվում է ոչ թե այն ժամանակ, երբ գործողությունն է կատարվում, այլ երբ մարդ դնում է իր սիրտը ինչ- որ բանի վրա: [5]

Տերն ատում է հպարտ նայվածքը, ստախոս լեզուն, սիրտ, որը հնարում է չար պատկերացումներ, ոտքեր, որոնք արագ վազում են վնասելու, կեղծ վկա, որը ստեր է խոսում, [և] նա ով տարաձայնություններ է սերմանում:[տես Առակաց Զ.16–19]: Որպես Վերջին Օրերի Սրբեր, կարո՞ղ ենք մենք թույլ տալ անել որևէ բան, որը Տերն ատում է: Որքան հաճախ է նա խոսել անազնվության դեմ: [6]

2

Մենք սերմանում ենք ազնվություն կյանքի փոքրիկ, սովորական բաներում:

Եթե մենք զգայուն ենք Փրկչի հետ մեր փոխհարաբերությունում, մենք պետք է ազնիվ լինենք ինչպես փոքր բաներում՝ այնպես էլ մեծ: [7]

Երբ մենք ձգտում ենք ձեռքերումների և հաջողության, այնքան ժամանակ ենք վատնում՝ մտածելով և ուսումնասիրելով բարդ բաները, որ հազվադեպ ենք ժամանակ հատկացնում պարզին՝ պարզ , փոքր բաներին, որոնք իրականում այն հիմքն են, որի վրա մենք կառուցում ենք և առանց որի չի կարող գոյություն ունենալ ուժեղ հիմք: Որևէ կառուցվածք կարող է խոյանալ դեպի երկինք և մենք հնարավոր է նայենք դրան հիացմունքով՝ դրա տեսքի և վիթխարի բարձրության պատճառով, սակայն այն

չի կարող կանգնել, մինչև դրա հիմքը խարսխված չլինի ժայռի, կամ պողպատի ու բետոնի վրա։

Բնավորությունը պետք է ունենա այդպիսի հիմք։ Ես ձեր ուշադրությունը հրավիրում եմ ազնվության սկզբունքի վրա։ Ինչո՞ւ է այդպես, որ այնքան շատերն են հավատում ազնվության բարձր և վեհ սկզբունքներին, սակայն այնքան քչերն են հոժար՝ խստորեն ազնիվ լինել։

[Շատ] տարիներ առաջ, մեր աղոթատների նախասրահներում և շքամուտքերում կային ազդագրեր, որոնք վերնագրված էին «Ազնիվ եղեք ինքներդ ձեզ հետ»։ Դրանցից մեծ մասը վերաբերում էին կյանքի փոքրիկ, սովորական բաներին։ Սա այն տեղն է, որտեղ ազնվության սկզբունքն է մշակվում։

Ոմանք կընդունեն, որ բարոյապես սխալ է անազնիվ լինելը մեծ բաներում, սակայն հավատալ, որ ներելի է, եթե այդ բաները ավելի քիչ կարևորության են։ . . .

Ես հիշում եմ մի երիտասարդ տղամարդու, ով մեր ցցում էր, երբ ես ծառայում էի որպես ցցի նախագահ։ Նա ճանապարհորդում էր շրջակայքում մի բազմության հետ, որը մտածում էր, որ խելամիտ էր անել բաներ, որոնք ճիշտ չէին։ Մի քանի առիթներով նա բռնվել էր փոքր օրինազանցություններ կատարելիս։ Մի օր ես զանգ ստացա ոստիկանությունից և ինձ ասացին, որ նրան բերման էին ենթարկել երթևեկության կանոնները խախտելու համար։ Նա գերազանցել էր արագությունը, ինչը արել էր մի քանի անգամ այս դեպքից առաջ։ Իմանալով, որ այն բաները, որոնք նա անում էր կարող էին խանգարել իր միսիա գնալուն, նա ուղղվեց, և երբ 19 տարեկան էր, նա ստացավ իր կանչը։

Ես երբեք չեմ մոռանա այն խոսակցությունը, որ մենք ունեցանք, երբ նա վերադարձավ։ Նա ինձ ասաց, որ միսիայի ընթացքում հաճախ էր մտածել այն խնդիրների մասին, որ նա պատճառել էր այն սխալ համոզմունքի պատճառով, որ փոքր բաները խախտելը կարևոր չէ։ Բայց մեծ փոփոխություն էր տեղի ունեցել նրա կյանքում։ Նա եկել էր այն եզրակացության, որ օրենքը խախտելու մեջ ոչ մի հաճույք չկա՝ լինի դա Աստծո օրենքը, թե հասարակության կողմից մեզ պարտադրվող օրենքները։ [8]

Յոբը հայտարարեց. «Մինչև մեռնելս չեմ ձգելու ինձանից իմ [ուղղամտությունը]» (Յոբ ԻԷ.5):

3

Մենք կարող ենք ծառայել Աստծուն՝ լինելով ազնիվ և շիտակ մեր անձնական և աշխատանքային գործարքներում:

Կրոնը կարող է մեր ամենօրյա աշխատանքի մի մասը լինել. մեր գործի, մեր առք ու վաճառքի, կառուցելման, երթևեկելու, արտադրելու, մեր արհեստի կամ մասնագիտության կամ որևէ այլ բանի, որ մենք անում ենք: Մենք կարող ենք ծառայել Աստծուն ազնվությամբ և շիտակ վարքով մեր աշխատանքային գործարքներում նույն ձևով, ինչպես մենք անում ենք կիրակնօրյա երկրպագության ժամանակ: Քրիստոնեության սկզբունքները չեն կարող լինել առանձին և բաժան՝ գործարարությունից ու մեր ամենօրյա գործերից:[9]

Եթե կրոնը ինչ որ բան նշանակում է մեզ համար, այն պետք է գործոն, որը խթանում է մեր կյանքը: Ես չեմ հավատում, որ կրոնը կարող է իջեցվել մինչև մի քահանայի կիրակնօրյա մեկժամյա քարոզի մակարդակի և ինչ- որ բան նշանակել մեր կյանքում: Եթե այն չի մտնում մեր անձնական կյանք, մեր ընտանեկան կյանք և այն ամենի մեջ, ինչ մենք անում ենք, ապա կրոնը քիչ

բան է նշանակում մեզ համար և այն ուղղակի դառնում է մի կուռք՝ դրվելու մի բարձր տեղում և երկրպագվում միայն ժամանակ առ ժամանակ։

Ինչպիսի մեծ փոփոխություն կգար աշխարհի վրա, եթե մենք բոլորս վստահեինք մյուսներին՝ ազնվության առումով։ Մարդիկ կունենային կատարյալ վստահություն միմյանց հանդեպ անձնական և գործարար հարաբերություններում։ Չէր լինի . . . անվստահություն աշխատանքի և կառավարման միջև։ Կլիներ մաքրություն հասարակական հաստատություններում և կառավարության գործերում, և հարաբերույթունները կգոյատևեին ավելի շուտ խաղաղության մեջ, քան խառնաշփոթության , որում ներկայումս գտնվում է աշխարհը։ . . .

Գործարար հարաբերություններում կան մարդիկ, ովքեր գուցե անազնվորեն օգտվեն հանգամանքից, եթե այն տրվում է նրանց։ Նրանք նպատակահարմարեցնում են և արդարացնում իրենց դիրքը՝ ասելով, որ գործարարության մեջ մարդը պետք է օգտվի ամեն առաջարկված հնարավորությունիցից։ Այդպիսի գործարքները կարող են բերել մեծ գումարներ, բայց սկզբունքորեն դրանք չեն տարբերվում գանձապահի ավել վճարած մեկ կոպեկը վերադարձնելու ձախողումից այն մարդու կողմից, ով նկատել է սխալը։ Դա խաբեության մի ձև է։[11]

Կարո՞ղ եմ առաջարկել «պատվավոր աշխատանքի» մի սահմանում։ Պատվավոր աշխատանքը ազնիվ աշխատանքն է։ Ազնիվ արժեքը տրվում է և չկա խարդախություն, խաբեություն կամ սուտ։ Դրա արտադրանքը կամ ծառայությունը բարձր որակի է և գործատուն, հաճախորդը, պատվիրատուն կամ հիվանդը ստանում է ավելին, քան սպասում էր։ Պատվավոր աշխատանքը բարոյական է։ Այն չի ներառում որևէ բան, որը կարող է վտանգել հասարակական բարօրությունը կամ բարոյականությունը։ Օրինակ, այն չի ներառում ալկոհոլի օգտագործում, արգելված թմրամիջոցներ, կամ դրամախաղ։ Պատվավոր աշխատանքն օգտակար է։ Այն ապահովում է ապրանքներ և ծառայություններ, որոնք դարձնում են աշխարհը, ավելի լավ տեղ՝ ապրելու համար։[12]

4

Ուղղամտությունը պաշտպանում է մեզ չարից, օգնում է մեզ լինել հաջողակ և կփրկի մեր հոգիները:

Չարի գայթակղությունները շրջապատում են մեզ ամեն կողմից: Առանց ուղղամտության պաշտպանություն, մենք բոլոր տեսակի մեղքերի և անիրավությունների իշխանության ներքո ենք:

Յոբը չուներ դժվարություն այս խնդիրներում: Նա պաշտպանված էր իր իսկ ուղղամտությամբ: Այդպես էր նա զգում:

«Քանի որ տակավին շունչս ինձանում է, եւ Աստուծոյ հոգին կայ իմ ռնգացը մէջ,

Իմ շրթունքները անիրաւութիւն պիտի չխոսեն, եւ լեզուս պիտի նենգութիւն չխորհէ, . . .

Արդարութիւնս բռնել եմ պինդ, եւ բաց չեմ չեմ թողուլ, իմ խիղճն ինձ չէ տանջում օրերիցս մէկին համար էլ» (Յոբ ԻԷ. 3-4,6):

Ինչքան ոգեշնչող է: Իր ուժի շնորհիվ նա մտահոգություն չուներ առօրյա գայթակղությունների համար, որոնց պատճառով մարդկանց մեծ մասն անկում է ապրում: Յոբը իր իսկ կյանքում կառուցել էր այնպիսի ուժ և բավարարվածություն, որ սատանան ինքը չկարողացավ կործանել: Հետաքրքիր է նաև տեսնել, թե ինչպես էր Աստված հրճվում նրանով. «Նորա նմանը չկայ երկրի վերայ՝ կատարեալ եւ ուղիղ մարդ, աստուածավախ եւ չարութիւնից հեռացող , և տակաւին բռնած է իր կատարելութիւնը» (Յոբ Բ.3):

Ազնվության այս մեծ հատկանիշը լիովին մատչելի է մեզ համար: Եթե արդյունավետորեն օգտագործվի, այն կլուծի բոլոր մեր խնդիրները կառավարությունում, կրոնի, արդյունաբերության մեջ և մեր անձնական կյանքում: Այն կսրբի հանցագործության, ապահարզանի, աղքատության և թշվառության սոսկալի պատուհասը: Այն կդարձնի մեզ հաջողակ այստեղ և կփրկի մեր հոգիներն ապագայում:

Ամենամեծ ձեռքբերումներից մեկը մեր կյանքում ազնիվ, անկեղծ ուղղամտության խթանումն է մեր մեջ: Սա նշանակում է մենք դառնում ենք հոգեպես առողջ, բանականությամբ անկեղծ, բարոյապես ազնվ և միշտ անձնապես պատասխանատու Աստծուն: Ուղղամտությունը այն ոսկե բանալին է, որը կբացի դուռը գրեթե ամեն հաջողության առջև:[13]

5

Ճշմարիտ ուրախությունը գալիս է ինքներս մեզ հետ, ուրիշների և Աստծո հետ ազնիվ լինելուց:

Մենք հաճախ ենք խոսում սուրբ գրքի այս մեջբերման մասին «Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» [2 Նեփի 2.25]: Կա ուրախություն, որը գալիս է ազնիվ լինելուց: Թույլ տվեք ասել թե ինչպես: Այս միջոցով դուք կարող եք ունենալ Վարդապետի ընկերակցությունը և դ Սուրբ Հոգու Ոգին: Ազնվության օրենքի խախտումները կզրկեն ձեզ այս երկու մեծ օրհնություններից: Կարո՞ղ եք հավատալ, որ նա ով ստում է կամ խաբում. . . կարող է ունենալ Վարդապետի ընկերակցությունը կամ ունենալ Սուրբ Հոգու Ոգին:

. . . Մենք պետք է միշտ հիշենք , որ մենք երբեք մենակ չենք: Չկա գործողություն, որը չի նկատվում, չկա խոսք, որ չի լսվում, չկա մարդու մտքում առաջացող միտք, որը չի իմացվում Աստծո կողմից: Չկա խավար, որը կարող է թաքցնել բաները, որոնք մենք անում ենք: Մենք պետք է մտածենք նախքան գործելը:

Ձեր կարծիքով, դուք կարո՞ղ եք մենակ լինել, երբ անազնիվ գործ եք կատարում: Ձեր կարծիքով կարո՞ղ եք դուք աննկատ մնալ, երբ քննության ժամանակ խարդախում եք, չնայած դուք միակ մարդն եք սենյակում: Մենք պետք է ազնիվ լինենք ինքներս մեզ հետ: Եթե մենք կամենում ենք ունենալ Վարդապետի ընկերակցությունը և Սուրբ Հոգու Ոգին, մենք պետք է ազնիվ լինենք ինքներս մեզ հետ, ազնիվ Աստծո և մեր մերձավորի հետ: Սա բերում է ճշմարիտ ուրախություն:[14]

Տերը գիտի մեր ամենախորը մտքերը [տես ՎԿՈՒ 6.16]: Նա գիտի յուրաքանչյուր գործ, որ մենք անում ենք: Մենք մի օր կհանդիպենք Նրա հետ և կնայենք Նրա դեմքին: Արդյո՞ք մենք հպարտ կլինենք մեր կյանքի հիշատակարանով:

Մենք կատարում ենք այդ արձանագրությունն ամեն օր: Յուրաքանչյուր գործողություն, յուրաքանչյուր միտք դրա մի մասն է կազմում:. Մենք արդյո՞ք հպարտ կլինենք դրանով: Մենք կլինենք, եթե արել ենք հնարավորը, եթե մենք ազնիվ ենք եղել ինքներս մեզ հետ, մեր սիրելիների , մեր ընկերների , ողջ մարդկության հետ: . . .

Օրհնված են նրանք, ովքեր ազնիվ են: . . .

Օրհնված են նրանք, ովքեր հնազանդ են Տիրոջը:

Նրանք այն մարդիկ են, ովքեր ազատ են, ովքեր երջանիկ են, ովքեր կարող են իրենց գլուխը բարձր քայլել: Նրանք ունեն ինքնահարգանք: Նրանք ունեն այն մարդկանց հարգանքը, ովքեր բոլորից լավ են նրանց ճանաչում:

Եվ այդ ամենից բացի, նրանք ունեն Երկնային Հոր հարգանքն ու օրհնությունը: Հիսուսը հրավիրում է մեզ՝ հետևել Իրեն: Նրա ճանապարհներն ուղիղ են, մաքուր, շիտակ ու ազնիվ: Եկեք հետևենք Նրան դեպի՝ երջանկության առատ կյանք: Դա միակ ճանապարհն է:[15]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Վերանայեք անազնվության օրինակները, որոնք նշում է Նախագահ Հանթերը բաժին 1-ում: Որո՞նք են այդ անազնիվ արարքների հետևանքները: Ի՞նչ կարող են այդ հետևանքներն ուսուցանել մեզ այն մասին, թե ինչո՞ւ է Տերն այդքան մեծ շեշտ դնում ազնիվ լինելու վրա:
- Խորհեք փոքր բաներում ազնիվ լինելու Նախագահ Հանթերի ուսմունքների մասին և ինքներս մեզ հետ ազնիվ լինելու մասին (տես բաժին 2): Ինչո՞ւ մենք պետք է ազնիվ լինենք «փոքր բաներում»: Ի՞նչ է նշանակում ազնիվ լինել ինքներս մեզ հետ: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել գայթակղությունները՝ արդարացնելու նույնիսկ թվացյալ փոքրիկ անազնվության գործերը:
- Նախագահ Հանթերը շեշտում է կրոնը մաս դարձնելու այն ամենին, ինչ կատարում ենք մեր ամենօրյա կյանքում: (տես բաժին 2): Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ ապրել այս բաժնի ուսմունքներով: Ինչպե՞ս կարող ենք ավելի արդյունավետորեն ազնվություն ուսուցանել մեր տներում:
- Բաժին 4-ում Նախագահ Հանթերը նշում է մի քանի օրհնություններ, որոնք գալիս են ուղղամտությամբ ապրելուց: Ինչպե՞ս է մարդը զարգացնում ուղղամտություն: Ինչպե՞ս եք դուք օրհնվել, երբ ապրել եք Տիրոջ չափանիշներին հավատարիմ:

- Ինչպե՞ս է ազնիվ լինելը ուրախություն բերում մեզ: (Տես բաժին 5) Ինչո՞ւ է ազնիվ լինելն անհրաժեշտ մեզ՝ Սուրբ Հոգու ընկերակցությունն ունենալու համար: Ինչպե՞ս է ազնիվ լինելը մեզ ազատ դարձնում:

Առնչվող սուրբ գրություններ

Յոբ ԻԷ.5,ԼԱ.5–6,Սաղմոս ԺԵ,Առակաց Ի.7,Ալմա 53.20–21,ՎևՈւ 10.25–28,42.20–21, 27, 51.9, 124.15, 136.20, 25–26,Հավատո Հանգանակ 1.13

Օգնություն ուսումնասիրողին

Երբ կարդաք «ընդգծեք և նշեք խոսքերն ու արտահայտությունները, որպեսզի առանձնացնեք գաղափարները մեկ [հատվածում]: . . . Լուսանցքներում գրեք սուրբ գրության հղումները, որոնք հստակեցնում են հատվածները, որոնք դուք ուսումնասիրում եք» *(Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 23):

Հղումներ

1. Doug Brinley, "President Hunter Taught Value of a Penny's Worth of Integrity," *Church News,* Dec. 3, 1994, 11; see also "Loved by All Who Knew Him: Stories from Members," *Ensign,* Apr. 1995, 19–20.
2. See Don L. Searle, "President Howard W. Hunter, Acting President of the Quorum of the Twelve Apostles," *Ensign,* Apr. 1986, 24.
3. "We Believe in Being Honest" (transcription of an address given in the Youth Fireside Series, Apr. 10, 1962), 8–9, Church History Library, Salt Lake City; punctuation adapted.
4. «Ազնվության հիմնական սկզբունքներ»*New Era,* Feb. 1978, 4–5:
5. In Conference Report, Apr. 1965, 57–58; see also "And God Spake All These Words," *Improvement Era,* June 1965, 511–12.
6. «Մենք հավատում ենք ազնիվ լինելուն»,8:
7. «Ազնվության հիմնական սկզբունքներ»,5:

8«Ազնվության հիմնական սկզբունքներ», 4-5:

9. In Conference Report, Oct. 1961, 108.
10. *Հոլարդ Վ. Հանթերի ուսմունքները,* ed. Clyde J. Williams (1997), 261–62:
11. *Հոլարդ Վ. Հանթերի ուսմունքները,* 90–91:
12. "Prepare for Honorable Employment," *Ensign,* Nov. 1975, 122–23.
13. *Հոլարդ Վ. Հանթերի ուսմունքները,,* 92:
14. «Ազնվության հիմնական սկզբունքներ»,5:
15. *Հոլարդ Վ. Հանթերի ուսմունքները,* 88:

Ուղիներից մեկը, որով կարող ենք ցույց տալ մեր «լիարժեք պարտավորվածությունը» և «կատարյալ նվիրվածությունը» նրանց ծառայելն է, ովքեր կարիքի մեջ են:

Մեր պարտավորությունն Աստծո հանդեպ

«Հաջողված կյանքը . . . պահանջում է ողջ հոգով, խորապես համակող, հավերժորեն փայփայված նվիրվածություն սկզբունքներին, որոնք գիտենք, որ ճշմարիտ են Աստծո տված պատվիրաններում»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Երբ Հովարդ Վ. Հանթերը կանչվեց Տասներկուսի Քվորումի անդամ, նա հայտարարեց. «Ես առանց վերապահության ընդունում եմ կոչումը . . . իմ կողմից, և ես կամենում եմ նվիրել իմ կյանքը և այն ամենը ինչ ունեմ այս ծառայությանը»:[1]

Երեց Հանթերն ապրեց հավատարիմ իր պարտավորությանը: Առաքյալ ձեռնադրվելուց հետո, նա վերադարձավ Կալիֆորնիա՝ ավարտելու Եկեղեցու և բիզնեսի պարտականությունները և սկսեց պատրաստվել տեղափոխվելու Սոլթ Լեյք Սիթի: Երեց և Քույր Հանթերի համար դժվար էր թողնել իրենց ընտանիքը և ընկերներին Կալիֆորնիայում, իսկ Երեց Հանթերի համար իր իրավաբանական գործունեությունը: Երբ նա ավարտեց իր կարիերան որպես իրավաբան, նա գրեց.

«Այսօր ես ավարտեցի իմ աշխատանքի մեծ մասը գրասենյակում: Գրեթե բոլոր չվճռված հարցերն ավարտին են հասցված: Ես այսօր մենակ էի գրասենյակում՝ գիտակցելով, որ իմ իրավաբանական գործունեությունն այժմ ավարտվում է: Ես նշումներ կատարեցի մի քանի թղթապանակների վրա և թողեցի դրանք գրասեղանին: . . . Հոգնածության զգացում ունեցա, երբ թողնում էի գրասենյակը: Ես բավականություն եմ զգացել իրավաբանական գործունեությունից, և դա է եղել իմ կյանքը վերջին մի քանի տարիների ընթացքում, բայց, չնայած դրան ես

գոհ եմ և երջանիկ՝ արձագանքելու այն մեծ կանչին, որը եկել է ինձ Եկեղեցում»:[2]

Երեց Հանթերը գիտեր անձնական փորձառությունից, որ «Հոր կամքին ենթարկվելը միշտ չէ, որ հեշտ է»:[3]Այնուամենայնիվ, նա գիտեր Աստծուն լիովին նվիրվելու կարևորությունը: Այդ պարտավորության մասին նա գրել է. «Մարդկանց մեծ մասը չեն հասկանում, թե ինչու են մեր կրոնական հավատքի մարդիկ արձագանքում կանչերին, որոնք արվում են ծառայելու համար կամ պարտավորությունը, որ մենք վերցնում ենք տալու մեր բոլոր ունեցածը: Ես խորապես բավականություն եմ ստացել իրավաբանական գործունեությունից, բայց այս կանչը, որ եկավ ինձ, անհամեմատ կնսեմացնի մասնագիտության կամ փողային շահին հետամուտ լինելը»: [4]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Մեր Երկնային Հայրը պահանջում է մեր լիարժեք պարտավորվածությունը, ոչ թե ուղղակի ներդրումը:

Երբ ես մտածում եմ Աստծո օրհնությունների մասին, որ Նա տվել է մեզ և Հիսուս Քրիստոսի ավետարանի շատ գեղեցկությունների մասին, ես տեղյակ եմ, որ ուղու ընթացքում մեզանից խնդրվում է որոշակի նվիրատվություններ կատարել մեր հերթին, նվիրատվություններ ժամանակի կամ փողի կամ այլ ռեսուրսների: Սրանք բոլորը գնահատվում են և բոլորն անհրաժեշտ են, բայց դրանք չեն կազմում մեր լիակատար զոհաբերությունն Աստծուն: Ի վերջո այն, ինչ մեր Երկնային Հայրը կպահանջի մեզանից, ավելին է, քան նվիրատվությունը. դա լիարժեք նվիրվածությունն է, կատարյալ նվիրումը, որ ամբողջովին մենք կանք և կարող ենք լինել:

Խնդրում եմ հասկացեք, որ ես չեմ խոսում միայն Եկեղեցուն և նրա գործունեությանը նվիրված լինելու մասին, չնայած դա միշտ կարիք ունի զորացման: Ոչ, ես խոսում եմ ավելի որոշակիորեն մի նվիրվածության մասին, որ ցույց է տրվում մեր անհատական վարվելակերպով, մեր անձնական շիտակությամբ, տան և ընտանիքի ու համայնքի, ինչպես նաև Եկեղեցու հանդեպ մեր անձնվիրությամբ: . . .

Թույլ տվեք համառոտակի վերհիշելսուրբ գրությունների այն փառահեղ օրինակներից մեկը, որտեղ երեք համեմատաբար երիտասարդ մարդիկ պաշտպանեցին իրենց սկզբունքները և պահեցին իրենց շիտակությունը՝ չնայած ակնհայտ էր, որ այդ վարվելը նրանց կարժենար իրենց կյանքը:

Մոտավորապես 586 տարի մինչև Քրիստոսը, Նաբուգոդոնոսորը, Բաբելոնի թագավորը, արշավեց Երուսաղեմի վրա և նվաճեց այն: Նա այնքան էր տպավորված Իսրայելի երեխաների առանձնահատկություններով և գիտելիքներով, որ նրանցից մի քանիսին բերել տվեց թագավորի արքունիքը Բաբելոնում:

Իսրայելացիները դժբախտության մեջ ընկան այն օրը, երբ Նաբուգոդոնոսորը պատրաստել տվեց մի ոսկյա կուռք և հրամայեց բոլորին Բաբելոնի զավառում երկրպագել նրան, մի հրաման, որը երեք երիտասարդ Իսրայելացիները՝ Մեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը հանգիստ ձևով մերժեցին: Թագավորը լցված էր «ցասմամբ ու կատաղությամբ» և պահանջեց, որ նրանք բերվեն իր առջև: (Դան. Գ.13:) Նա տեղեկացրեց նրանց, որ եթե նրանք վայր չընկնեն ոսկյա կուռքի առջև նշանակված ժամին, «իսկոյն պիտի զցուին կրակով բորբոքուած հնոցի մեջը»: Այնուհետև որոշ ինքնագոհությամբ նա հարցրեց. «Եվ ո՞ր աստուածն է որ ձեզ ազատէ իմ ձեռքից»: [Դան. Գ.15:]

Երեք երիտասարդ տղաները պատասխանեցին բարեկիթ ձևով, բայց առանց տատանվելու.

« [Եթե այնպես լինի, որ դու սպառնում ես մեզ մահով], - ասացին նրանք,«Ահա մեր Աստուածը, որին մենք պաշտում ենք, կարող է մեզ ազատել կրակով բորբոքուած հնոցիցը, եւ քո ձեռքիցն էլ, ով թագաւոր, նա մեզ կազատէ:

Եւ եթե ոչ,[եթե ինչ որ պատճառով նա ընտրի չփրկել մեզ կրակից] թող քեզ հայտնի լինի, ով թագաւոր, որ քո աստուծուն մենք չենք պաշտում եւ քո կանգնեցրած արձանին երկրպագութիւն չենք անում: [Դան. Գ.17–18:]

Իհարկե Նաբուգոդոնոսորն ավելի կատաղեց, քան երբևէ և հրամայեց, որ հնոցներից մեկը յոթնապատիկ ավելի վառեն, քան թե սովոր էին վառել: Ապա հրամայեց, որ այս երեք քաջարի պատանիները լրիվ հագնված զցվեն կրակի մեջ: Թագավորն իրոք այնքան հաստատակամ էր, և բոցն այնքան

ուժեղ, որ զինվորները, որոնք վեր առան Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին մեռած վայր ընկան հնոցի տաքությունից, երբ նրանք առաջ հրեցին իրենց բանտարկյալներին։

Այդ ժամանակ տեղի ունեցավ այն մեծ հրաշքներից մեկը, որին հավատարիմներն են արժանանում՝ համաձայն Աստծո կամքի։ Այդ երեք պատանիները ոտքի կանգնեցին և հանգիստ քայլեցին հնոցի մեջ և չայրվեցին։ Իսկապես, երբ նրանք ավելի ուշ դուրս կանչվեցին հնոցից ապշած թագավորի կողմից, նրանց հագուստներն անվնաս էին մնացել, նրանց մաշկը զերծ էր այրվածքներից, նրանց գլխի մազերից ոչ մեկը չէր խանձվել։ Նույնիսկ ծխի հոտ չէր դիպել այս քաջարի, նվիրված պատանիներին։

«Օրհնեալ է Սեդրաքի, Միսաքի եւ Աբեդնագովի Աստուածը, որ ուղարկեց իր հրեշտակին եւ ազատեց իր ծառաներին, որոնք նորան ապաւինեցին եւ թագաւորի խոսքը անարգեցին, եւ իրենց մարմինները տուին, որպեսզի չպաշտեն եւ չերկրպագեն ոչ մի աստուծոյ, բացի իրենց Աստուածանից

. . . Այն ժամանակ թագավորը յաջողութիւն տուաւ Սեդրաքին, Միսաքին եւ Աբեդնագովին Բաբիլոնի գաւառումը։ (Դան. Գ.28, 30։)

Անչափ կարևոր է, որ կարողանաք ձեր սկզբունքները պաշտպանել, ապրել ազնիվ և հավատքով՝ ըստ ձեր համոզմունքերի, դա է այն, ինչը նշանակություն ունի, դա է տարբերությունը նվիրաբերման և նվիրվածության միջև։ Ճշմարիտ սկզբունքին այդ նվիրվածությունը՝ մեր անձնական կյանքում, մեր տանը և ընտանիքում և ամենուր, որտեղ հանդիպում և շփվում ենք այլ մարդկանց հետ, Աստված մեզանից ի վերջո պահանջում է այդ նվիրվածությունը։ . . .

Հաջողված կյանքը, լավ կյանքը, արդարակյաց Քրիստոնեական կյանքը պահանջում է ինչ որ բան ավելի, քան նվիրաբերումը, չնայած ամեն մի նվիրաբերում արժեքավոր է։ Վերջին հաշվով այն պահանջում է ողջ հոգով, խորապես համակող, հավերժորեն փայփայված նվիրվածություն սկզբունքներին, որոնք գիտենք, որ ճշմարիտ են Աստծո տված պատվիրաններում։ . . .

Եթե մենք ճշմարիտ լինենք և հավատարիմ մեր սկզբունքներին, ազնիվ և շիտակ կյանքին նվիրված, ապա ոչ մի թագավոր կամ մրցույթ կամ կրակով հնոց չի կարող վարկաբեկել մեզ։

Երկրի վրա Աստծո թագավորության հաջողության համար, թող որ մենք կանգնենք որպես վկաներ Նրա համար «բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ դուք կարող է լինեք, նույնիսկ միչև մահ»: (Մոսիա 18.9:)[5]

2

Եղեք նվիրված՝ Տիրոջը հնազանդվելիս, անկախ նրանից, թե ինչ են ուրիշները որոշում անել:

Երբ Յեսուին պատվիրվեց կործանել Երիքով քաղաքը, որը փռված էր [Իսրայելի ցեղերի առջև], քաղաքի հսկայական պատերը կանգնած էին որպես պատկառազդու և ֆիզիկապես անհնարին խոչընդոտ Իսրայելի հաջողության դեմ, կամ համենայն դեպս այդպես էր թվում: Չիմանալով միջոցները, բայց վստահ լինելով ինչ վերաբերում էր վախճանին, Յեսուն կատարեց հրահանգները, որոնք տրվել էին Տիրոջ սուրհանդակի կողմից: Նրա նվիրվածությունն էր կատարյալ հնազանդություն: Նրա մտահոգությունն էր կատարել ճշգրտորեն ինչպես հրահանգվել էր, որպեսզի Տիրոջ խոստումը իրականանար: Հրահանգներն անկասկած տարօրինակ էին թվում, բայց նրա հավատքն արդյունքի հանդեպ ստիպում էր նրան շարունակել: Արդյունքն իհարկե այն հրաշքների երկար շարքում ևս մեկն էր, որոնք Իսրայելացիները տեսել էին, երբ նրանք առաջնորդվել էին շատ տարիներ Մովսեսի, Յեսուի և շատ ուրիշ մարգարեների կողմից, ովքեր նվիրված էին՝ հետևելու Տիրոջ պատվիրաններին և հրահանգներին:

Երբ Յեսուն և նրա մարդիկ մոտեցան Երիքովին, Տիրոջ հրահանգներին հետևում էին ճշգրտորեն և համաձայն սուրբ գրքի պատմության «պարիսպները վայր ընկան եւ ժողովուրդը վեր ելաւ քաղաքը ամեն մեկը ուղիղ իր առաջ եւ քաղաքն առան»: (Յեսու Զ.20:)

Հիշատակարանը նշում է, որ Իսրայելացիները իրենց թշնամիների հետ պատերազմներից հանգստանալուց հետո , Յեսուն, ով այժմ շատ ծեր էր, ողջ Իսրայելին միասին հավաքեց: Իր հրաժեշտի ուղերձում նա հիշեցրեց նրանց, որ նրանք եղել էին հաղթական, որովհետև Աստված էր կռվել նրանց համար, բայց եթե նրանք այժմ դադարեին ծառայելՏիրոջը և պահել Նրա օրենքը, նրանք կկործանվեին: . . .

«Որքան գոհ պետք է որ լիներ Տերը, երբ Աբրահամը. . . ստեց ինչպես նրան հրահանգվել էր, առանց հարցի և առանց կասկածելու»:

Ռազմական և հոգևոր այս մեծ առաջնորդը այդ ժամանակ առաջ քաշեց մի պարտավորություն և պատրաստեց մեկն իր և իր ընտանիքի համար. «Ընտրեցէք այսօր ձեզ համար, թե ո՞րն էք պաշտելու. . . . բայց ես և իմ տունը Եհովային ենք պաշտելու»: (Յեսու ԻԴ.15:)

Այստեղ Աստծո հանդեպ մարդու, Տիրոջ հանդեպ մարգարեի ցանկությունների, իր Աստծո հանդեպ Յեսու մարդու լիակատար նվիրվածության մեծ հայտարարություն կար, ով նախկինում շատ անգամներ օրհնվել էր իր հնազանդության շնորհիվ: Նա ասում էր Իսրայելացիներին, որ անկախ նրանից, թե իրենք ինչպես կորոշեին, նա կաներ, ինչ գիտեր, որ ճիշտ էր: Նա ասում էր, որ Տիրոջը ծառայելու իր որոշումն անկախ էր, թե ինչ նրանք կորոշեին, որ նրանց գործողությունները չէին ազդի իր գործողությունների վրա, որ Տիրոջ կամքը կատարելու նրա նվիրվածությունը չէր փոխարինվելու որևէ բանով, որ նրանք կամ որևէ մեկ ուրիշը կաներ: Յեսուն հաստատապես վերահսկելու

էր իր գործողությունները և նրա աչքերը սևեռված էին Տիրոջ պատվիրանների վրա: Նա նվիրված էր հնազանդությանը:[6]

3

Այժմ որոշեք ընտրել խիստ հնազանդության ուղին:

Կարդալով և ուսումնասիրելով սուրբ գրքերը և մարգարեների խոսքերը՝ ավետարանի օրենքը և Տիրոջ կամքը հասկանալուց հետո, այնուհետև գալիս է հետագա ըմբռնում այն պատճառի վերաբերյալ, թե ինչու է հնազանդությունը հաճախ ակնարկվում որպես երկնքի առաջին օրենք և ինչու հնազանդությունն անհրաժեշտ է փրկվելու համար: Սա է բերում մեզ դեպի գերագույն ստուգումը: Արդյո՞ք մենք ցանկանում ենք դառնալ լիարժեք հնազանդ Աստծո օրենքին: Գալիս է մի ժամանակ մեր կյանքում, երբ որոշակի որոշում պետք է ընդունվի:[7]

Անշու՛շտ, Տերը սիրում է, ավելի քան որևէ այլ բան, իր խորհրդին հնազանդվելու անսասան վճռականությունը: Անշուշտ Հին Կտակարանի մեծ մարգարեների փորձառությունները գրի են առնվել՝ օգնելու մեզ՝ հասկանալ Երկնային Հոր կամքը կատարելու կարևորությունը: Որքան զոհ պիտի լիներ Տերը, երբ Աբրահամը իր միակ որդուն զոհաբերելու հրահանգը ստանալուց հետո, արեց՝ ինչպես նրան ասվել էր՝ առանց հարցի և տատանվելու: Հիշատակարանը նշում է, որ Աստված ասաց Աբրահամին.

«Առ քո սիրած մէկ հատիկ որդիդ Իսահակը եւ Մորիայի երկիրը գնա, եւ այն տեղ նորան ողջակէզ արա այն սարերից մէկի վերայ, որ ես քեզ կասեմ»: (Ծննդ. ԻԲ.2:)

Հաջորդ հատվածն ասում է հետևյալը.

«Եւ Աբրահամն առաւոտանց կանուխ վեր կացաւ. . . եւ վեր առաւ. . .իր որդի Իսահակին. . .եւ գնաց այն տեղը, որ Աստուած իրան ասել էր»: (Ծննդ. ԻԲ.3:)

Տարիներ հետո, երբ Ռեբեկային հարցրեցին, թե արդյոք նա կկամենար գնալ Աբրահամի ծառայի հետ՝ դառնալու Իսահակի կինը, և անկասկած իմանալով, որ ծառայի առաքելությունն ուներ Տիրոջ օրհնությունը, նա պարզապես ասաց. «Ես կգնամ»: (Ծննդ. ԻԴ.58:)

Մի սերունդ դրանից հետո, երբ Հակոբը հրահանգվեց վերադառնալ Քանանի երկիրը, որը նշանակում էր թողնել այն ամենը,

ինչի համար նա աշխատել էր շատ տարիներ, նա կանչեց Ռաքելին և Լիային դաշտը, որտեղ նրա հոտն էր և բացատրեց, թե ինչ էր Տերն ասել: Ռաքելի և [Լիայի] պատասխանը պարզ էր և ուղղակի ու հատկանշական [իրենց] նվիրվածությանը. «Ինչ որ Աստված քեզ ասել է արա» (Ծննդ. ԼԱ.16):

Հետո մենք ունենք օրինակներ սուրբ գրություններից, թե ինչպես մենք պետք է մտածենք և գնահատենք Տիրոջ պատվիրանները: Եթե մենք ընտրենք արձագանքել Յեսուի և Աբրահամի ու Ռեբեկայի և Ռաքելի [և Լիայի] նման, մեր պատասխանը կլինի, պարզապես գնալ և անել այն , ինչ Տերն է պատվիրել:

Կա լավ պատճառ կայացնելու մեր որոշումն *այսօր*՝ ծառայելու Տիրոջը: [Գերագույն համաժողովի] այս կիրակի առավոտյան, երբ կյանքի բարդություններն ու գայթակղությունները որոշ չափով հեռացվել են, և երբ մենք ունենք ժամանակ և ավելի շատ հակում ընտրելու հավերժական հեռանկար, մենք կարող ենք ավելի հստակորեն գնահատել, թե ինչը կարող է բերել մեզ մեծագույն երջանկությունը կյանքում: Մենք պետք է այժմ՝ առավոտվա լույսով որոշենք, թե ինչպես կգործենք, երբ գիշերվա խավարը ու գայթակղության փոթորիկները վրա հասնեն:

Ես աղոթում եմ, որ մենք ունենանք ուժ՝ որոշելու այժմ անելու, ինչ մենք պարտավոր ենք անել: Ես աղոթում եմ, որ մենք այժմ որոշենք ծառայել Տիրոջը:[8]

4

Միայն հավատքը բավական չէ, մենք նաև պետք է անենք Երկնային Հոր կամքը:

Խոսելով բազմությունների հետ Վարդապետն ասել է. «Ոչ թէ ամեն ինձ Տէր, Տէր ասողը կմտնէ երկնքի արքայությունը, այլ նա, որ կատարում է իմ Հոր կամքը, որ երկնքումն է:» (Մատթ. Է.21):

Երբ ես լսում եմ այս խոսքերը, ինձ թվում է, որ Տերն ասում է. «Ուղղակի այն պատճառով, որ մարդն ընդունում է իմ իշխանությունը կամ հավատք ունենում իմ աստվածային էության վերաբերյալ, կամ պարզապես արտահայտում հավատք իմ ուսմունքների հանդեպ կամ քավող զոհաբերության հանդեպ, որ ես արել եմ, չի նշանակում, թե նա կմտնի երկնային արքայություն կամ ձեռք կբերի ավելի բարձր վեհացման աստիճան»: Այդ առնչությամբ նա ասում է. «Միայն հավատքը բավական չէ»:

Ապա որոշակիորեն ավելացնում է. «. . . այլ նա, որ կատարում է իմ Հոր կամքը», այսինքն նա, ով աշխատում է և էտում խաղողի այգին, որպեսզի այն առաջ բերի բարի պտուղ: . . .

Ողջ բնությունը, որն Աստծո տիրապետությունն է, թվում է՝ պատկերում է այդ նույն սկզբունքը: Մեղուն, որ չի կամենում «անել» շուտով դուրս կքշվի փեթակից: Երբ նայում եմ զբաղված մրջյուններին արահետի վրա և մրջնակույտի մոտակայքում, ես զարմանում եմ այն փաստից, որ նրանք կատարողներ են և ոչ թե ուղղակի հավատացողներ: Հավի կչկչոցը չի արտադրում սերմեր, նա պետք է ճանկռի զետինը: Լճացած լողավազանը, որը կանաչել է ջրիմուռներից, անգործության փրփուրից, ճահճային հիվանդությունների բազմանալու վայր է, իսկ լեռնային մաքուր վտակը, որը սլանում է ժայռերի վրայով, երբ ոլորում է իր ուղին կիրճով դեպի ներքև՝ հրավերք է խմելու համար:

Վարդապետի խոսքերն առանց հիմքի տան վերաբերյալ ասում են ինձ, որ մարդը չի կարող ունենալ մակերեսային և անխոհեմ տեսակետ, որ ինքը բավական է իր համար և կարող է կառուցել իր սեփական կյանքը որևէ հիմքի վրա, որը հեշտ է և հաճելի [տես Մատթեոս Է.26–27]: Քանի դեռ եղանակը լավ է՝ նրա հիմարությունը գուցե ակնհայտ չլինի, բայց մի օր կգան ջրհեղեղները, անսպասելի ինչ որ կրքի ցեխոտ ջրերը, անկանխատեսելի գայթակղության սլացող հոսանքը: Եթե նրա բնավորությունը չունի հաստատուն հիմք, ոչ ավելի քան շրթունքների ծառայություն, նրա ողջ բարոյական կառուցվածքը կարող է փլվել:[9]

Սուրբ և անարատ կրօնասիրութիւնն Աստուծոյ և Հօր առաջին սա է. որբերին և այրիներին այցելել նորանց նեղութեան մէջ, իր անձն աշխարհիցից անարատ պահել» (Հակոբոս Ա.27):

Այլ խոսքով, կրոնը ավելին է, քան Աստծո մասին գիտելիքը կամ դավանանքը հավատքի, և դա ավելին է, քան աստվածաբանությունը: Կրոնը Աստծո խոսքը կատարելն է: Դա մեր եղբոր պահապանը լինելն է մյուս բաների շարքում: . . .

Մենք կարող ենք լինել կրոնասեր Հանգստյան օրը երկրպագության ժամանակ, և մենք կարող ենք լինել կրոնասեր մեր պարտականություններում շաբաթվա մյուս վեց օրերի ընթացքում: . . . [Որքան] կարևոր պետք է լինի, որ մեր բոլոր մտքերը, մեր խոսքերը, որ մենք խոսում ենք, մեր գործողությունները,

վարքը, հարևանների հետ հարաբերությունները, գործարարական գործարքները, և բոլոր մեր ամենօրյա գործերը նեղաշնակության մեջ լինեն մեր կրոնական համոզմունքների հետ: Պողոս Առաքյալի խոսքերով «Ինչ գործ էլ, որ անէք, ամեն բան Աստուծոյ փառքի համար արէք» (Ա Կորնթ. Ժ.31): Ուրեմն, կարո՞ղ ենք մենք վերացնել կրոնը մեր շաբաթվա օրերի գործերից և արտաքսել այն միայն կիրակի օրվան: Անշուշտ ոչ, եթե մենք հետևենք Պողոսի հորդորին:[10]

5

«Ապրող անդամները» ձգտում են ունենալ բացարձակ նվիրվածություն:

Տերը բացահայտել է Վարդապետություն և Ուխտերի նախաբանում, որ սա «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի երեսի վրա»: Այնուհետև նա ավելացրել է«որը, ես՝ Տերս ,հավանում եմ, խոսելով Եկեղեցու մասին հավաքապես և ոչ անհատապես»(ՎևՈւ 1.30): Սա պետք է հավերժական նշանակություն ունեցող հարց բարձրացնի մեր մտքերում. Մենք գիտենք, որ սա ճշմարիտ և կենդանի եկեղեցի է որպես հաստատություն, բայց ես արդյո՞ք ճշմարիտ և կենդանի անդամ եմ անհատապես:

. . . Երբ ես հարցնում եմ.«Արդյո՞ք ես ճշմարիտ և կենդանի անդամ եմ» իմ հարցն է. Արդյո՞ք ես խորապես և լիովին նվիրված եմ իմ ուխտերը պահելուն, որոնք ես կապել եմ Տիրոջ հետ: Արդյո՞ք ես բացարձակապես նվիրված եմ ավետարանով ապրելուն և խոսքը կատարող ե՞մ և ոչ թե միայն լսող: Արդյո՞ք ես ապրում եմ իմ կրոնով: Արդյո՞ք ես կմնամ հավատարիմ: Արդյո՞ք ես ամուր եմ կանգնած սատանայի գայթակղությունների դեմ: . . .

«Արդյո՞ք ես կենդանի անդամ եմ» հարցին հաստատապես պատասխանելը հաստատում է մեր նվիրվածությունը: . Դա նշանակում է, որ մենք այժմ և ընդմիշտ կսիրենք Աստծուն և մեր մերձավորներին՝ ինչպես մեզ: Դա նշանակում է՝ մեր գործողությունները կարտացոլեն, թե ով ենք մենք և ինչին ենք հավատում: Դա նշանակում է, որ մենք ամենօրյա Քրիստոնյաներ ենք, քայլելով ինչպես Քրիստոսն է կամենում, որ մենք քայլենք:

Կենդանի անդամները նրանք են, ովքեր ձգտում են ունենալ բացարձակ նվիրվածություն: . . .

Կենդանի անդամները ճանաչում են առաջ գնալու իրենց պարտականությունը: Նրանք մկրտվում են որպես իրենց ապրող ճանապարհորդության առաջին քայլ: Դա նշան է Աստծուն, հրեշտակներին և երկնքին, որ նրանք կհետևեն Աստծո կամքին: . . .

Ապրող անդամները ուշադրություն են դարձնում Հոգուն, որը կենդանացնում է ներքին կյանքը: Նրանք անընդհատ փնտրում են նրա առաջնորդությունը: Նրանք աղոթում են ուժի համար և հաղթահարում են դժվարությունները: Նրանց սրտերը դրված չեն այս աշխարհի բաների վրա, այլ անսահմանի վրա: Հոգևոր նորոգումը չի զոհաբերվում ֆիզիկական գոհացման համար:

Ապրող անդամներն առաջինը Քրիստոսին են դնում իրենց կյանքում, գիտենալով, թե որ աղբյուրից է գալիս իրենց կյանքն ու առաջընթացը: Կա միտում մարդու համար իրեն դնել տիեզերքի կենտրոնում և ակնկալել, որ ուրիշները հարմարվեն իր պահանջներին ու կարիքներին ու ցանկություններին: Սակայն բնությունը չի հարգում այդ սխալ ենթադրությունը: Կյանքի կենտրոնական դերը պատկանում է Աստծուն: Փոխարենը խնդրելու Նրան՝ կատարել մեր հրամանը, մենք պետք է ձգտենք բերել մեզ ներդաշնակության Նրա կամքի հետ և այդպես շարունակենք մեր առաջընթացը՝ որպես ապրող անդամ: . . .

Կենդանի անդամները, երբ նրանք դարձի են գալիս, կատարում են պատվիրանը՝ զորացնելու իրենց եղբայրներին և քույրերին [տես Ղուկաս ԻԲ.32]: Նրանք մտահոգ են կիսվել իրենց ուրախությամբ ուրիշների հետ, և նրանք երբեք չեն կորցնում այս ցանկությունը: . . .

Ապրող անդամները ընդունում են իրենց համոզմունքները գործի մեջ դնելու կարիքը: Այս Սրբերը խանդավառությամբ զբաղված են շատ բարի և ազնիվ գործեր իրականացնելով իրենց իսկ ազատ կամքով և համաձայնությամբ [տես ՎԵՌ 58.27]: . . .

Ապրող անդամները սիրում են միմյանց: Նրանք այցելում են հայրազուրկներին և այրիներին իրենց նեղությունների մեջ: Նրանք իրենց անբիծ են պահում աշխարհից [տես Հակոբոս Ա.27]: . . .

Մենք ամուր հավատք ունենք այն հայտարարության հանդեպ, որ սա ճշմարիտ և կենդանի Աստծո ճշմարիտ եկեղեցին

է: Հարցը, որին մենք դեռ պիտի պատասխանենք, հետևյալն է. Արդյո՞ք ես նվիրված և հավատարիմ, ճշմարիտ ու կենդանի անդամ եմ:

Թող որ մենք ամուր կանգնենք և լինենք Եկեղեցու ճշմարիտ և կենդանի անդամներ և ստանանք խոստացված պարգևը՝ լինելու նրանց շարքում, ում մասին խոսվում է Վարդապետություն և Ուխտերում «ովքեր եկել են Սիոն սարը, և կենդանի Աստծո քաղաքը՝ երկնային վայրը՝ [բոլորից] ամենասրբագույնը» (ՎևՈւ 76.66):[11]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները «նվիրաբերության» և «բացարձակ նվիրվածության» միջև տարբերության մասին: Ի՞նչ տարբերություն է առաջացնում մեր կյանքում, երբ մենք բացարձակապես նվիրված ենք Աստծուն: Ի՞նչ կիրառումներ կարող են ունենալ Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի պատմությունը մեզ համար:
- Վերանայեք Նախագահ Հանթերի պատմությունը Յեսուի մասին բաժին 2-ում: Ի՞նչ կարող եք դուք սովորել Աստծուն լիովին նվիրված լինելու այս պատմությունից: Ինչպե՞ս կարող ենք զարգացնել նվիրվածություն՝ հնազանդվելու Աստծուն անկախ նրանից, թե ինչ են ուրիշներն անում: Ինչպե՞ս կարող ենք օգնել երեխաներին և երիտասարդներին՝ զարգացնել այս նվիրվածությունը:
- Որո՞նք են ձեր տպավորությունները, երբ դուք վերանայում եք սուրբ գրությունների պատմությունները բաժին 3-ում: Սուրբ գրքիուրիշ ինչ հնազանդության օրինակներ են ազդել ձեր վրա: Ինչո՞ւ եք կարծում «Տերը սիրում է . . . անսասան վճռականություն՝ հնազանդվելու իր խորհրդին»:
- Խորհեք բաժին 4-ում գտնվող Նախագահ Հանթերի ուսմունքների մասին: Ինչո՞ւ միայն հավատքը «բավարար չէ»: Ինչպե՞ս է Երկնային Հոր կամքը կատարելն օգնում մեզ՝ պատրաստվել փորձանքի դեպքում: Ինչպե՞ս կարող ենք կիրառել Նախագահ Հանթերի ուսմուքները մեր կրոնով ապրելու ժամանակ:

- Վերանայեք Նախագահ Հանթերի նկարագրություններից յուրաքանչյուրը «կենդանի անդամ»-ի վերաբերյալ բաժին 5-ում: Ինչպե՞ս ենք զարգացնում «կենդանի անդամների» այս հատկանիշները: Մտածեք, թե ինչպե՞ս կարող եք լինել Եկեղեցու ավելի լավ «ճշմարիտ և կենդանի անդամ»

Առնչվող սուրբ գրություններ

Ա Սամուել ԺԵ.22–23, Սաղմոս Ա.1–3, Հակոբոս Բ.14–26, 2 Նեփի 32.9, Օմնի 1.26, Մոսիա 2.41, Ալմա 37.35–37, 3 Նեփի 18.15, 18–20, ՎևՈւ 58.26–29, 97.8, Աբրահամ 3.24–26

Օգնություն ուսուցչին

Միասին կարդացեք մի քանի մեջբերումներ գլխից: Յուրաքանչյուր մեջբերում կարդալուց հետո, խնդրեք դասարանի անդամներին՝ կիսվել սուրբ գրքերի օրինակներով և իրենց սեփական փորձառություններով, որոնք կապված են մեջբերումների ուսմունքների հետ:

Հղումներ

1. In Conference Report, Oct. 1959, 121.
2. See Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 153.
3. "*The Opening and Closing of Doors,*" *Ensign,* Nov. 1987, 54.
4. In Knowles, *Howard W. Hunter,* 151.
5. "Standing As Witnesses of God," *Ensign,* May 1990, 60–62.
6. "Commitment to God," *Ensign,* Nov. 1982, 57–58.
7. "Obedience" (address given at the Hawaii Area Conference, June 18, 1978), 5, Church History Library, Salt Lake City.
8. "Commitment to God," 58.
9. In Conference Report, Oct. 1967, 11, 12, -13.
10. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 111–12.
11. "*Am I a 'Living' Member?" Ensign,* Apr. 1987, 16-18):

Հիսուս Քրիստոսը «ուսուցանեց սիրո դասեր և հաճախակի անշահախնդիր ծառայություն ցույց տվեց ուրիշներին: Բոլորը Նրա սիրո ստացողներն էին»:

Քայլել Փրկչի գթության ուղիով

«Կարեկցանքի փորձաքարը մեր աշակերտության չափանիշն է, դա Աստծո հանդեպ և միմյանց հանդեպ մեր սիրո չափանիշն է»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ուսուցանել է, որ Փրկիչը տվեց մեզ Իր սերը, Իր ծառայությունը, և Իր կյանքը: . . . Մենք պետք է ձգտենք տալ՝ ինչպես որ Նա տվեց»[1] Ամենայն մանրամասնությամբ Նախագահ Հանթերը խրախուսեց Եկեղեցու անդամներին՝ իրենց ամենօրյա կյանքում հետևել Փրկչի գթության օրինակին:

Գթության գործերը բնորոշ կողմ էր Հովարդ Հանթերի իրավաբանական մասնագիտության նրա կարիերայում: Մի ընկերակից փաստաբան բացատրել է.

«Նա շատ ժամանակ էր տրամադրում մատուցելով [անվճար] իրավաբանական ծառայություն . . . որովհետև նրա սիրտը ուղղակի չէր տանում չեկ ուղարկել: . . .Նրան համարում էին որպես ընկեր, առաջնորդ, խորհրդատու և մասնագետ, ով ավելի շատ մտահոգվում էր, որ մարդիկ օգնություն ստանային, որի կարիքը նրանք ունեին, քան թե որ դրա համար նա փոխհատուցում ստանար»: [2]

Գթությունը բնորոշ գիծ էր նաև Նախագահ Հանթերի Եկեղեցու ծառայության մեջ: Մի կին, ով ասաց, որ նա իր ամենաազդեցիկ ուսուցիչն էր, բացատրեց մի քանի պատճառներ:

«Ես միշտ նկատել եմ, որ այդ մարդը սիրում էր ուրիշներին՝ դնելով նրանց բարձր առաջնահերթության մեջ, լսելով՝ հասկանալու համար և կիսվելով իր փորձառություններով մյուսների հետ, որը նրան մեծագույն բավականություն էր պատճառում: Նա սովորեցրել է ինձ՝ հասկանալ այս արժանիքների կարևորությունը և ուրախություն զգալ դրանք կիրառելիս:

Մեկ այլ կին Նախագահ Հանթերի ցցից Կալիֆոռնիայում մատուցեց հարգանքի այս տուրքը։

«Նախագահ Հովարդ Վ. Հանթերը մեր ցցի նախագահն էր տարիներ առաջ, երբ մեր ընտանիքն ապրում էր Պասադենա Ցցում։ Հայրս մահացել էր, թողնելով մայրիկիս մենակ՝ հոգ տանելու մեծ քրոջս և ինձ։ Չնայած մենք նշանավոր ընտանիք չէինք ցցում, որը զբաղեցնում էր հսկայական աշխարհագրական տարածք, Նախագահ Հանթերն այնուամենայնիվ մեզ անձնապես գիտեր։

Իմ ամենակարևոր հիշողությունը նրա մասին այն է, որ նա իմ մեջ սերմանեց արժանապատվության զգացում։ Ցցի յուրաքանչյուր համաժողովից հետո մենք սովորություն ունեինք սպասել՝ հերթով սեղմելու նրա ձեռքը։ Նա միշտ բռնում էր մայրիկիս ձեռքը և ասում.«Ինչպե՞ս եք Քույր Սիսոնս, իսկ ինչպե՞ս են Բեթին և Քերոլայնը»։ Ինձ հուզմունք էր պատճառում լսել, թե նա ինչպես էրմեզ անուններով կոչում։ Ես գիտեի, որ նա գիտեր մեզ և հոգ էր տանում մեր բարօրության համար։ Այդ հիշողությունը դեռ ջերմացնում է իմ սիրտը»։[4]

Նախագահ Հանթերը մի անգամ ասել է. «Ես զգում եմ՝ մեր առաքելությունն է ծառայել և փրկել, շենացնել և վեհացնել։[5]Տասներկուսի Եղբայրների կողմից արված մեկնաբանությունները ցույց են տալիս, թե որքան լավ է նա կատարել այդ առաքելությունը։ «Նրա պահելածևը , մարդկանց օգնում է անկաշկանդ զգալ։ Նա լավ ունկնդիր է»։ Մեկ ուրիշն ասաց. «Երբ դուք ճանապարհորդում եք նրա հետ, նա միշտ հսկում է՝ հավաստիանալու, որ յուրաքանչյուրի մասին հոգ է տարվում և որ ոչ ոք անհարմարավետ կամ անտեսված չի զգում»։ Մեկ ուրիշը պատմում է. «Նա մտահոգված է և զգայուն ուրիշների հանդեպ։ Նա գթություն և ներող սիրտ ունի։ Նա ավետարանի, մարդկության և մարդկային բնության ուսանող է։[6]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Երկու մեծ պատվիրանները Տիրոջ փորձաքարն են՝ մեր աշակերտության համար։

Հնադարյան ժամանակներում, ոսկու մաքրության ստուգում էր կատարվում հարթ, սև, սիլիցիումի քարով, որը կոչվում էր

փորձաքար։ Երբ ոսկին շփում էին փորձաքարի վրա, դրա մակերեսին առաջացնում էր հետք կամ նշան ։ Ոսկերիչը համեմատում էր այդ նշանը իր աղյուսակում դասակարգված գույների հետ։ Նշանն ավելի կարմիր էր լինում, երբ պղնձի կամ ալյումինի պարունակությունը շատ էր լինում ոսկու մեջ և ավելի դեղին էր լինում, երբ ոսկու տոկոսը մեծանում էր։ Այս պրոցեսը շատ ճշգրտորեն ցուց էր տալիս ոսկու մաքրությունը։

Ոսկու մաքրությունը փորձաքարով ստուգելու մեթոդն արագ էր և բավարար՝ մեծապես գործնական նպատակների համար։ Բայց ոսկերիչը, ով դեռ կասկածիտակ էր առնում մաքրությունը, կատարում էր մի ավելի ճշգրիտ ստուգում՝ օգտագործելով մի գործընթաց, որը ներառում էր կրակը։

Ես ենթադրում եմ, որ Տերը փորձաքար է պատրաստել ձեզ համար և ինձ համար։ Մի արտաքին չափորոշիչ ներքին աշակերտության, որը նշում է մեր հավատարմությունը և կդիմանա կրակներին, որոնք դեռ գալու են։

Մի անգամ, երբ Հիսուսն ուսուցանում էր ժողովրդին, մի օրինագետ մոտեցավ նրան և տվեց այս հարցը. «Վարդապետ, ի՞նչ գործեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»։

Հիսուսը՝ վարպետ ուսուցիչը, պատասխանեց այդ մարդուն, ով ակնհայտորեն լավ տիրապետում էր օրենքին, հակադիր հարցով.«Օրէնքումն ի՞նչ է գրուած, ի՞նչպէս ես կարդում»։

Մարդը պատասխանեց անվարան ամփոփելով երկու մեծ պատվիրանները. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտիցը, և քո բոլոր անձիցը, քո բոլոր զորութիւնիցը և քո բոլոր մտքիցը. եւ քո ընկերին քո անձի պէս»։

Քրիստոսը հավանություն տալով պատասխանեց. «Այդ արա՝ եւ կապրես»(Ղուկաս Ժ.25-28)։

Հավերժական կյանքը, Աստծո կյանքը, այն կյանքը, որին մենք ենք ձգտում, արմատավորված է երկու պատվիրաններում։ Սուրբ գրություններն ասում են, որ «այս երկու պատվիրանքից կախված են բոլոր օրենքը և մարգարերքը» (Մատթեոս ԻԲ.37–40)։ Սիրեք Աստծուն և սիրեք ձեր ընկերոջը։ Այդ երկուսն աշխատում են միասին, դրանք անբաժան են։ Բարձրագույն իմաստով դրանք կարելի է համարել որպես հոմանիշներ։ Եվ

դրանք պատվիրաններ են, որոնցով մեզանից յուրաքանչյուրը կարող է ապրել։

Հիսուսի պատասխանը օրինագետին կարելի է համարել, որպես Տիրոջ փորձաքարը։ Մեկ այլ առիթով Նա ասել է. «Որովհետև այս իմ փոքր եղբայրներից մեկին արեցիք, ինձ արեցիք» (Մատթեոս ԻԵ.40)։ Նա կչափի մեր նվիրվածությունը Իր հանդեպ, թե ինչպես ենք մենք սիրել և ծառայել մեր ընկերակիցներին։ Ինչպիսի՞ նշան ենք մենք թողնում Տիրոջ փորձաքարի վրա։ Արդյո՞ք մենք իսկապես լավ ընկերներ ենք։ Արդյո՞ք ստուգումը ցույց է տալիս 24 կարատանոց ոսկի, թե հետքը ցույց է տալիս կեղծ ոսկի։[7]

2

Փրկիչն ուսուցանել է մեզ սիրել բոլորին, ներառյալ նրանց, ում գուցե դժվար լինի սիրել։

Կարծես Վարդապետից ներում հայցելով այդպիսի հասարակ հարցի համար, օրինագետը ձգտեց արդարացնել իրեն՝ շարունակելով հարց տալ։ «Եւ իմ ընկերն ո՞վ է» (Ղուկաս Ժ.29)։

Մենք բոլորս պետք է հավերժ երախտապարտ լինենք այդ հարցի համար, քանի որ Փրկչի պատասխանում եկավ ամենակարևոր և ամենազնահատված առակներից մեկը, մեկը, որը մենք բոլորս կարդացել ենք և լսել կրկին ու կրկին։

«Մի մարդ Երուսաղէմից իջնում էր Երիքով. եւ աւազակների ձեռքն ընկաւ. նորանք էլ մերկացրին նորան եւ խոցոտեցին նորան, կիսամահ թողեցին գնացին։

Եվ դիպուածով մի քահանայ էր իջնում նոյն ճանապարհովը, եւ նորան տեսաւ՝ անցաւ։

Նույնպես էլ Ղեւտացին այն տեղը հասաւ եկաւ եւ տեսաւ՝ անցաւ։

Մի Սամարացի էլ, որ ճանապարհորդում էր, եկաւ այնտեղ եւ նորան տեսնելով գթաց։

Եվ մօտ եկաւ՝ նորա խոցերը փաթաթեց՝ վերան ձէթ եւ գինի ածելով և իր անասունի վերայ դրած տարաւ նորան մի իջեւան, եւ նորան հոգ տարաւ։

Եւ հետեւյալ օրն երբոր այն տեղիցը դուրս էր գնում, երկու դահեկան հանեց եւ իջեւանի տիրոջը տուաւ եւ ասեց նորան. Դորան հոգ տար, եւ ինչ որ աւելի ծախք անես, ես միուս անգամ ետ դառնալիս կվճարեմ քեզ»(Ղուկաս Ժ.30-35)։

Այնուհետև Հիսուսը հարցրեց օրինագետին. «Հիմա այն երեքից որն է երեւում քեզ թե ընկեր է եղել այն աւազակների ձեռքն ընկած մարդին»։ (Ղուկաս Ժ.36)։ Այդտեղ Վարդապետը ի ցույց է դնում Քրիստոնեության փորձաքարը։ Նա խնդրում է, որ մեր նշանը որոշվի դրա վրա։

Քրիստոսի առակում ինչպես քահանան այնպես էլ Ղևտացին պետք է որ հիշեին օրենքի պահանջը «Երբոր տեսնես քո եղբոր էշը կամ եզը ճանապարհի վերայ ընկած, նորանց անտես չանես, անպատճառ նորա հետ վեր կանգնեցնես»(Երկ.Օր. ԻԲ. 4) Եվ եթե եզը, որքան ավելի շատ պետք է մարդ պատրաստակամ լինի օգնել եղբորը կարիքի մեջ։ Բայց ինչպես Երեց Ջեյմս Ի. Թալմիջը գրել է. «Արդարացումները [այդ չանելու համար] հեշտ է գտնել, դրանք ծլում են այնպես արագորեն և այնպես առատորեն, ինչպես մոլախոտերը ճանապարհի եզրին»(*Jesus the Christ,* 3d ed., Salt Lake City: The Church of Jesus Christ of Latter-day Saints, 1916, p. 431)։

Սամարացին տվել է մեզ մաքուր Քրիստոնեական սիրո օրինակ։ Նա կարեկցանք ուներ, նա գնաց մարդու մոտ, որին ավազակները վնասվածքներ էին հասցրել և կապեց նրա վերքերը։ Նա տարավ նրան մի իջևան, հոգ տարավ նրան, վճարեց նրա ծախսերը և առաջարկեց ավելին, եթե անհրաժեշտ էր նրա ծախսերի համար։ Սա մի ընկերոջ սիրո պատմություն է իր ընկերոջ հանդեպ։

Հին աքսիոման ասում է, որ մարդը, ով «ամբողջովին փաթաթվում է ինքն իր մեջ մի փոքրիկ կապոց է դառնում»։ Սերը փոքրիկ կապոցը մեծ դարձնելու յուրահատուկ ձև ունի։ Բանալին մեր ընկերոջը սիրելն է, ներառյալ այն ընկերոջը, ում դժվար է սիրել։ Մենք պետք է հիշենք, որ չնայած մենք ենք ընկերներ գտնում, Աստված մեզ համար ընկերներ է դրել ամենուրեք։ Սերը չպետք է սահմաններ ունենա, մենք չպետք է ունենանք սահմանափակ նվիրվածություն։ Քրիստոսն ասել է. «Որովհետեւ՝ եթէ ձեզ սիրողներին սիրէք, ի՞նչ վարձք ունիք։ Չէ՞ որ մաքսաւորներն էլ նոյնն են անում» (Մատթեոս Ե.46)։[8]

Տերը «մեր նվիրվածությունն Իր հանդեպ կչափի նրանով, թե ինչպես ենք մենք սիրում և ծառայում մեր ընկերակիցներին»:

3

Մենք պետք է սիրենք և ծառայենք ուրիշներին իրենց չարչարանքների մեջ:

Զոզեֆ Սմիթը մի նամակ գրեց Սրբերին, որը տպագրվեց«*Messenger and Advocate»-ում,* միմյանց սիրելու մասին, որպեսզի արդարացվենք Աստծո առջև թեմայով: Նա գրել է.

«Սիրելի եղբայրներ, դա մի պարտականություն է, որը յուրաքանչյուր Սուրբ պարտավոր է կատարել իր եղբայրների հանդեպ անվճար՝ միշտ նրանց սիրել, և միշտ սատարել նրանց: Որպեսզի Աստծո առջև արդարացվենք, մենք պետք է սիրենք միմյանց, մենք պետք է հաղթենք չարին, մենք պետք է այցելենք հայրազուրկներին և որբևայրիներին իրենց չարչարանքների մեջ, և մենք պետք է անբիծ պահենք մեզ աշխարհից, քանի որ այդպիսի արժանիքները հոսում են մաքուր կրոնի մեծ աղբյուրից: Զորացնելով մեր հավատքը, ավելացնելով ամեն բարի հատկանիշ, որը զարդարում է օրհնյալ Հիսուսի զավակներին, մենք կարող ենք աղոթել աղոթքի պահին, մենք կարող ենք սիրել մեր ընկերոջը ինչպես ինքներս մեզ, և լինել հավատարիմ նեղությունների մեջ, իմանալով, որ այդպիսիների վարձքն

ավելի մեծ է երկնքի արքայությունում։ Ինչպիսի մխիթարություն։ Ինչպիսի ուրախություն։ Թույլ տվեք ապրել արդարի կյանքով, և թող իմ վարձքը սա լինի» (*History of the Church,* 2:229)։

Այս երկու արժանիքները՝ սերը և ծառայությունը պահանջվում են մեզանից, եթե մենք պետք է լավ ընկերներ լինենք և խաղաղություն գտնենք մեր կյանքերում։ Անշուշտ դրանք կային Երեց Վիլլարդ Ռիչարդսի սրտում։ Երբ Քարթեջի բանտում էին, Ջոզեֆի և Հայրումի նահատակության օրվա կեսօրին բանտապահն առաջարկեց, որ նրանք ավելի ապահով կլինեին խցերում։ Ջոզեֆը շրջվեց դեպի Երեց Ռիչարդսը և հարցրեց. «Եթե մենք գնանք խցերը, դու կգա՞ս մեզ հետ»։

Երեց Ռիչարդսի պատասխանը սիրով էր լցված. «Եղբայր Ջոզեֆ, դուք չխնդրեցիք ինձ անցնել զետը ձեզ հետ, դուք չխնդրեցիք ինձ գալ ձեզ հետ Քարթեջ, դուք չխնդրեցիք ինձ ձեզ հետ գալ բանտ, իսկ հիմա դուք կարծում եք ես կլքե՞մ ձեզ այժմ»։ Բայց ես կասեմ ձեզ, թե ես ինչ կանեմ, եթե դուք դատապարտվեք «դավաճանության» համար, ես կկախվեմ ձեր փոխարեն և դուք կազատվեք»։

Դա պետք է որ ասված լիներ բավականին հուզմունքով և դա զգալով Ջոզեֆը պատասխանեց. «Բայց դու չես կարող»։

Որին Երեց Ռիչարդսը հաստատակամորեն պատասխանեց. «Ես կանեմ» (տես B. H. Roberts, *A Comprehensive History of the Church,* 2:283)։

Երեց Ռիչարդսի ստուգարքը գուցե ավելի մեծ էր, քան մեզանից շատերը կդիմակայեն, ավելի շուտ կրակով ստուգում, քան փորձաքարով։ Բայց եթե մեզ խնդրվի այդպես անել, կարո՞ղ ենք մենք վար դնել մեր կյանքերը մեր ընտանիքների համար, մեր ընկերների, մեր մերձավորների համար։

Կարեկցանքի փորձաքարը մեր աշակերտության չափորոշիչն է, դա Աստծո և միմյանց հանդեպ մեր սիրո չափորոշիչն է։ Մենք արդյո՞ք կթողնենք մաքուր ոսկու նշան, թե քահանայի և Ղևտացու նման կանցնենք կողքով մյուս կողմից։[9]

4

Մենք պետք է քայլենք ավելի վճռականորեն գթության արահետով, որը Հիսուսն է ցույց տվել։

Նավուի Վերջին Օրերի Սրբերին ուղղված մի կարևոր ուղերձում իր ողբերգական և անժամանակ նահատակությունից հենց մեկ տարի առաջ, Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է.

«Եթե մենք կամենում ենք ամրացնել և մշակել սեր մյուսների հանդեպ, մենք պետք է սիրենք ուրիշներին, նույնիսկ մեր թշնամիներին, ինչպես նաև ընկերներին։ . . . Քրիստոնյաները պետք է դադարեն վիճաբանել և հակաճառել միմյանց, և մշակեն միաբանության և ընկերության սկզբունքներ իրենց մեջ»։ (*History of the Church,* 5:498–99.)

Դա այսօր էլ սքանչելի խորհուրդ է, ճիշտ ինչպես [այն ժամանակ] էր։ Աշխարհը, որում մենք ապրում ենք, լինի դա մեր տանը մոտիկ, թե հեռվում, Հիսուս Քրիստոսի ավետարանի կարիքն ունի։ Այն ապահովում է միակ ուղին, որով աշխարհը երբևէ կճանաչի խաղաղությունը։ Մենք պետք է ավելի բարի լինենք միմյանց հետ, ավելի մեղմ և ներող։ Մենք պետք է լինենք դանդաղ՝ բարկանալիս և ավելի արագ՝ օգնելիս։ Մենք պետք է պարզենք ընկերասիրության ձեռք և դիմակայենք հաշվեհարդարի ձեռքին։ Կարճ ասած, մենք պետք է սիրենք միմյանց Քրիստոսի մաքուր սիրով, անկեղծ գթությամբ և կարեկցանքով և եթե անհրաժեշտ է, կիսենք տառապանքը, քանի որ Աստված այդպես է սիրում մեզ։

Մեր երկրպագության ծառայության ժամանակ, մենք հաճախ ենք երգում մի գեղեցիկ օրհներգ, որը գրվել է Սյուզան Էվանս Մաքքլաուդի կողմից։ Կարելի՞ է վերհիշեմ մի քանի տող այդ օրհներգից ձեզ համար։

Փրկիչ, թող Քեզ սիրել ես սովորեմ,
Քո ցույց տված ուղիով քայլեմ,
Մարդկանց օգնեմ և բարձրացնեմ,
Իմ իսկ ուժից վեր ուժ գտնեմ։ . . .

Ո՞վ եմ ես, որ դատեմ ուրիշին,
Երբ ինքս եմ անկատար։
Հանգիստ սրտում թաքնված
Վիշտ կա, որ աչքը չի կարող տեսնել։ . . .

Եղբորս պաշտպանը կլինեմ,
Կսովորեմ բժշկելու արվեստը,
Վիրավորին և հոգնածին
Բարի սիրտ կցուցաբերեմ,
Եղբորս պաշտպանը կլինեմ,
Տեր, Քեզ կհետևեմ:

(*Օրհներգեր,* 1985, հ. 220)

Մենք պետք է ավելի վճռականորեն և ավելի շատ կարեկցանքով քայլենք ուղին, որը Հիսուսն է ցույց տվել: Մենք պետք է «կանգ առնենք և բարձրացնենք մեկ ուրիշին» և անշուշտ մենք կգտնենք «մեր [իսկ ուժից] վեր ուժ»: Եթե մենք կամենանք անել ավելին՝ սովորելու «բժշկողի արվեստը», կլինեն անասելի հնարավորություններ՝ օգտագործելու այն, դիպչելու «վիրավորին և հոգնածին» և բոլորին ցույց տալու [ավելի] բարի սիրտ: Այո, Տեր, մենք պետք է հետևենք Քեզ:[10]

5

Գթությունը Քրիստոսի մաքուր սերն է և այն չի խափանվի:

«Նոր պատվիրան եմ ձեզ տալիս, ասել է [Հիսուսը]. «Որ դուք սիրեք մեկ մեկու, . . . Սորանով կգիտենան ամենքը, թե իմ աշակերտներն եք, եթե իրար վերայ սեր ունենաք»: (Հովհաննես ԺԳ.34-35): Այս սերը, որ մենք պետք է ունենանք մեր եղբայրների և քույրերի հանդեպ մարդկության ընտանիքում, և որը Քրիստոսն ունի մեզանից յուրաքանչյուրիս հանդեպ, կոչվում է գթություն կամ «Քրիստոսի մաքուր սերը»: (Մորո. 7.47): Դա այն սերն է, որն առաջացրեց Քրիստոսի տառապանքն ու զոհաբերությունը: Դա բարձրագույն զգացմունքն է, որ մարդկային հոգին կարող է հասնել և մարդկային սրտի խորագույն արտահայտությունը:

. . . Գթությունը պարփակում է բոլոր մյուս աստվածային արժանիքները: Այն բնորոշում է ինչպես սկիզբը, այնպես էլ փրկության ծրագրի վերջը: Երբ բոլոր մյուս բաները խափանվեն, գթությունը՝ Քրիստոսի սերը, *չի* խափանվի: Այն բոլոր աստվածային հատկանիշներից, մեծագույնն է:

Իր սրտի առատությամբ Հիսուսը խոսեց աղքատների, ոտնատակ եղածների, որբևայրիների, փոքրիկ երեխաների, գյուղացիների, ձկնորսների և նրանց հետ, ովքեր արածացնում էին այծերի

և ոչխարների, օտարների և պանդուխտների, հարուստների և, քաղաքականապես հզորների, ինչպես նաև անբարյացկամ փարիսեցիների և դպիրների հետ: Նա ծառայեց աղքատներին, քաղցածներին, զրկյալներին, հիվանդներին: Նա օրհնեց կաղերին, կույրերին, խուլերին, և այլ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող այլ մարդկանց: Նա դուրս հանեց դևերին և չար ոգիներին, որոնք առաջացրել էին մտավոր և հուզական հիվանդություններ: Նա մաքրեց նրանց, ովքեր բեռնավորված էին մեղքով: Նա ուսուցանեց սիրո դասեր և բազմիցս անշահախնդիր ծառայություն դրսևորեց ուրիշների հանդեպ: Բոլորը Նրա սերը ստացողներ էին: Բոլորը «արտոնյալ էին, մեկը մյուսի նման, և ոչ ոքի արգելված [չէր]: (2 Նեփի 26.28): Այս բոլորը Նրա անսահման գթության արտահայտություններն էին և օրինակները:

Աշխարհը, որում ապրում ենք մենք, մեծապես կօգտվեր, եթե տղամարդիկ և կանայք ամենուրեք գործադրեին Քրիստոսի մաքուր սերը, որը բարի է, հեզ, և համեստ: Այն առանց նախանձի է կամ հպարտության: Այն անձնազոհ է, որովհետև ոչինչ չի ակնկալում փոխարենը : Այն չի խրախուսում չար կամ վատ արարք, ոչ էլ ուրախանում է անօրինությամբ, այն տեղ չունի մոլեռանդության, ատելության կամ բռնության համար: Այն հրաժարվում է հաշտվել ծաղրանքի, զոհեհիկության կամ արտաքսման հետ: Այն խրախուսում է տարբեր մարդկանց ապրել միասին Քրիստոնեական սիրո մեջ՝ անկախ կրոնական հավատքից, ռասայից, ազգությունից, ֆինանսական դիրքից, կրթությունից կամ մշակույթից:

Փրկիչը պատվիրել է մեզ սիրել մեկ մեկու՝ ինչպես Նա է սիրել մեզ, հագնել «գթության կապը» (ՎևՈւ 88.125), Ինչպես Ինքը հագավ : Մեզ կոչ է արվել մաքրել մեր ներքին զգացմունքները, փոխել մեր սրտերը, մեր արտաքին գործողությունները և տեսքը համաձայնեցնել նրա հետ, ինչին մենք ասում ենք, որ հավատում ենք և ինչը զգում ներքուստ: Մենք պետք է լինենք Քրիստոսի ճշմարիտ հետևորդները:[11]

6

Ուրիշներին սիրելը «ավելի կատարյալ ուղի» է:

Երբ երիտասարդ էր, Եղբայր Վերն Քրոուլին ասաց, որ նա սովորել էր որոշ բան Մարգարե Ջոզեֆի կարևոր դասերից, որոնք

նա ուսուցանել էր վաղ Սրբերին Նավուում, երբ նա ասել էր նրանց. «Միրեք ուրիշներին, նույնիսկ մեր թշնամիներին, ինչպես նաև ընկերներին»: Սա լավ դաս է մեզանից յուրաքանչյուրիս համար:

Հոր հիվանդանալուց հետո Վերն Քրոուլին իր վրա վերցրեց ավտոապամոնտաժման ընտանեկան բակը վարելու գործը, չնայած նա ընդամենը տասնհինգ տարեկան էր: Որոշ հաճախորդներ երբեմն անազնվորեն օգտվում էին նրա երիտասարդ լինելու հանգամանքից և ավտոմասերն անհետանում էին կայանատեղից գիշերվա ընթացքում: Վերնը բարկացած էր և խոստացել էր բռնել այդ մեկին և պարսավանքի ենթարկել նրան: Իրենն էր լինելու վրեժխնդրությունը :

Հենց որ նրա հայրը սկսեց ապաքինվել հիվանդությունից, Վերնը մի գիշեր փակելու ժամանակ շրջայցեր կատարեց բակում : Գրեթե մութ էր: Հողատարածքի հեռավոր մի անկյունում նա նկատեց մեկին, ով մի մեծ կտոր մեխանիզմ էր տանում դեպի ցանկապատի ետևի կողմը: Նա չեմպիոն մարզիկի նման վազեց և բռնեց երիտասարդ գողին: Նրա առաջին միտքն էր զայրույթը թափել իր բռունցքներով, իսկ հետո քարշ տալ տղային դեպի դիմացի գրասենյակը և ոստիկանություն կանչել: Նրա սիրտը լցված էր բարկությամբ և վրեժխնդրությամբ: Նա բռնել էր գողին և նա մտադիր էր ստանալ իր արդար հատուցումը:

Չգիտես որտեղից հայտնվեց Վերնի հայրը, դրեց իր թույլ և տկար ձեռքը իր որդու ուսին, և ասաց.«Տեսնում եմ դու մի քիչ հուզված ես, Վերն: Կարո՞ղ եմ ինքս զբաղվել սրանով»: Այնուհետև նա քայլեց դեպի ենթադրյալ երիտասարդ գողը և ձեռքը դրեց նրա ուսին, մի պահ նայեց նրա աչքերի մեջ և ասաց. «Որդիս, ասա ինձ, ինչո՞ւ ես դա անում: Ինչո՞ւ էիր փորձում գողանալ այդ շարժահաղորդիչը: Ապա Պր. Քրոուլին սկսեց քայլել դեպի գրասենյակը իր ձեռքով տղային կիսագրկած, քայլելու ընթացքում հարցնելով երիտասարդ տղայի մեքենայի խնդիրների մասին : Մինչև նրանք կհասնեին գրասենյակ, հայրն ասաց. « Դեհ, ես կարծում եմ քո կցորդիչը մաշվել է և դա խնդիր է ստեղծում քեզ համար»:

Այդ ընթացքում Վերնը իրեն չէր գտնում: «Ո՞ւմ հոգն է նրա կցորդիչը», մտածում էր նա: «Եկեք ոստիկանություն կանչենք և ավարտենք այս ամենը»: Բայց նրա հայրը շարունակում էր ուղղակի խոսել: «Վերն, նրա համար մի կցորդիչ բեր: Նրա համար

բեր նաև առանցքակալ: Բեր սեղմող մետաղյա ափսե: Դա պետք է որ խնդիրը լուծի»: Հայրը տվեց բոլոր այդ մասերը երիտասարդ տղային, որը փորձել էր գողանալ և ասաց.«Վերցրու սրանք: Ահա և շարժահաղորդիչը: Դու կարիք չունես գողանալու, երիտասարդ: Ուղղակի խնդրիր: Ելք կա ամեն խնդրից: Մարդիկ հոժար են օգնել»:

Եղբայր Վերն Քրոուլին ասաց, որ նա այդ օրը սովորեց սիրո մի հավեժական դաս : Այդ երիտասարդը հաճախ էր վերադառնում կայանատեղ: Ինքնակամ, ամիս առ ամիս, նա վճարեց բոլոր մասերի համար, որ Վիկ Քրոուլին տվել էր նրան՝ ներառյալ շարժահաղորդիչը: Այդ այցելությունների ժամանակ նա հարցրեց Վերնին, թե ինչո՞ւ էր նրա հայրը այդքան յուրահատուկ և ինչո՞ւ նա արեց այն, ինչ արեց: Վերնը նրան որոշ բաներ պատմեց իրենց Վերջին Օրերի Սրբերի համոզմունքների մասին, և թե որքան շատ էր իր հայրը սիրում Տիրոջը և մարդկանց: Ի վերջո ենթադրյալ գողը մկրտվեց: Վերնը հետագայում ասել է.«Այժմ դժվար է նկարագրել այն զգացումները, որոնք ես ունեցա և ինչի միջով ես անցա այդ փորձառության ժամանակ: Ես ևս երիտասարդ էի: Ես բռնել էի իմ խաբեբային: Ես պատրաստվում էի հասնել առավելագույն պատժին: Բայց հայրս սովորեցրեց ինձ ուրիշ մի ուղի:

Մի տարբեր ուղի: Մի ավելի լավ ուղի: Մի ավելի բարձր ուղի: Մի ավելի կատարյալ ուղի: Օհ, որքան աշխարհը կարող էր օգտվել այդպիսի հիասքանչ դասից: Ինչպես Մորոնին է հայտարարում.

«Ուստի ով հավատում է Աստծուն, կարող է անկասկած հուսալ ավելի լավ աշխարհի համար: . . .

Բայց իր Որդու պարգևով Աստված պատրաստել է ավելի գերազանց ուղի»: (Եթեր 12.4, 11):[12]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ի՞նչ ի նկատի ունի Նախագահ Հանթերը վկայակոչելով երկու մեծ պատվիրանները որպես «Տիրոջ փորձաքար»: (Տես բաժին 1:) Մտածեք թե ինչպես դուք կպատասխանեիք Նախագահ Հանթերի հարցերին, որոնք նա հղում է բաժին 1-ի վերջում:
- Վերանայեք Նախագահ Հանթերի պատմությունը Բարի Սամարացու մասին առակի վերաբերյալ (տես բաժին 2): Ի՞նչ կարող ենք սովորել մեր ընկերներին սիրելու վերաբերյալ այս ուսմունքներից: Ինչպե՞ս կարող ենք մեծացնել մեր սերը նրանց հանդեպ, ում կարող է դժվար լինի սիրել:
- Բաժին 3-ում Նախագահ Հանթերն ուսուցանում է, որ մենք պետք է սիրենք և ծառայենք ուրիշներին նրանց չարչարանքների ժամանակ: Ինչպե՞ս եք օրհնվել ինչ որ մեկի կողմից, ով սիրել է և ծառայել ձեզ կարիքի ժամանակ:
- Խորհեք Նախագահ Հանթերի ուսմունքների մասին հետևելով Փրկչի գթության օրինակին (տես բաժին 4): Ինչպե՞ս կարող ենք զարգացնել ավելի մեծ սեր ուրիշների հանդեպ: Որո՞նք են որոշ ուղիները, որոնցով մենք կարող ենք ավելի ակտիվորեն ցույց տալ մեր սերը:
- Բաժին 5-ում Նախագահ Հանթերը վերանայում է ուղիներից մի քանիսը, որոնցով Քրիստոսը ցույց տվեց Իր սերը: Ե՞րբ եք զգացել Փրկչի սերը ձեր կյանքում: Ի՞նչ օրհնություններ են եկել, երբ դուք «գործադրել եք Քրիստոսի մաքուր սերը»:
- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Նախագահ Հանթերի պատմած Վերն Քրոուլիի պատմությունից: (Տես բաժին 6:) Ինչպե՞ս կարող ենք փոխարինել «բարկության և վրեժխնդրության» զգացումները գթության զգացումներով: Ի՞նչ փորձառություններ են օգնել ձեզ սովորել, որ գթությունը «ավելի գերազանց ուղի է»:

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս ԻԵ.31–46, Ա Կորնթացիս ԺԳ, Եփեսացիս Դ.29–32, Ա Հովհաննես Դ.20, Մոսիա Դ.13–27, Ալմա 34.28–29, Եթեր 12.33–34, Մորոնի 7.45–48, ՎևՈ 121.45–46

Օգնություն ուսումնասիրողին

«Գործելով ձեր սովորածի համաձայն, դուք մշտապես խորացող հասկացողություն ձեռք կբերեք (տես Հովհաննես Է.17)» (*Քարոզիր Իմ Ավետարանը* [2004], 19): Մտածեք հարցնել ինքներդ ձեզ, թե ինչպես կարող եք կիրառել ավետարանի ուսմունքները տանը, աշխատանքում և ձեր Եկեղեցու պարտականություններում:

Հղումներ

1. "The Gifts of Christmas," *Ensign,* Dec. 2002, 18.
2. John S. Welch, in Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), 119.
3. Betty C. McEwan, "My Most Influential Teacher," *Church News,* June 21, 1980, 2.
4. Carolyn Sessions Allen, in *"Loved by All Who Knew Him: Stories from Members," Ensign,* Apr. 1995, 20.
5. In Thomas S. Monson, "President Howard W. Hunter: A Man for All Seasons," 33.
6. In Knowles, *Howard W. Hunter,* 185.
7. "The Lord's Touchstone," *Ensign,* Nov. 1986, 34.
8. "The Lord's Touchstone," 34–35.
9. "The Lord's Touchstone," 35.
10. "A More Excellent Way," *Ensign,* May 1992, 61.
11. "A More Excellent Way," 61–62.
12. "A More Excellent Way," 62.

Հավատք և վկայություն

«Կյանքի մեծագույն ձեռքբերումը Աստծուն գտնելն է և իմանալը, որ Նա ապրում է»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Հովարդ Վ. Հանթերը սկսեց զարգացնել իր վկայությունը վաղ մանկության շրջանում Այդահո նահանգի Բոյս քաղաքում : Չնայած նրա հայրը այդ ժամանակ Եկեղեցու անդամ չէր, մայրը նրան դաստիարակեց ավետարանով: «Նրա ծնկի վրա մենք սովորեցինք աղոթել»,հիշում էր նա: Ես վկայություն ստացա, երբ տղա էի մայրիկիս ծնկի վրա:[1]

Հովարդի վկայությունն աճեց տարիների ընթացքում: Երբ նա արդեն քսանն անց էր և ապրում էր Լոս Անջելոսում՝ Կալիֆորնիայի նահանգ, նա սկսեց ճանաչել ավետարանի լուրջ ուսումնասիրության կարևորությունը: Նա գրել է. «Չնայած ես հաճախում էի Եկեղեցու դասերին իմ կյանքի մեծ մասը, իմ առաջին իսկական զարթոնքը ավետարանի հանդեպ եկավ Կիրակնօրյա Դպրոցի դասի ժամանակ Ադամսի ծխում, որն ուսուցանում էր Եղբայր Փիթեր Ա. Քլեյթոնը: Նա հարուստ գիտելիքներ ուներ և ունակություն՝ ոգեշնչելու երիտասարդներին: Ես ուսումնասիրում էի դասերը, կարդում էի դասից դուրս հանձնարարությունները, որոնք նա տալիս էր մեզ և մասնակցում էի հանձնարարված նյութերի վերաբերյալ քննարկմանը: . . . Ես հիշում եմ կյանքիս այս շրջանը որպես մի ժամանակ, երբ ավետարանի ճշմարտությունները սկսեցին բացվել: Ես միշտ վկայություն եմ ունեցել ավետարանի մասին, բայց հանկարծ ես սկսեցի հասկանալ»:[2]

Շատ տարիներ անց Նախագահ Հանթերը բացատրել է. «Գալիս է մի ժամանակ, երբ մենք հասկանում ենք մեր ստեղծման սկզբունքները և թե ով ենք մենք: Հանկարծ այս բաները լուսավորվում են մեզ համար, և մեր սրտերի լարերը սկսում են



«Մեծագույն ձգտումը Աստծուն փնտրելն է՝ որոշելու Նրա իրական լինելը, Նրա անձնական հատկանիշները և ապահովելու գիտելիք Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի վերաբերյալ»:

իսկապես թրթռալ։ Սա այն ժամանակն է, երբ վկայությունը մտնում է մեր բուն հոգիները, և մենք անկասկած իմանում ենք, որ Աստված մեր հայրն է, որ Նա ապրում է, որ Նա իրականություն է, որ մենք տառացիորեն նրա զավակներն ենք»։[3]

Նախագահ Հանթերի հավատքի և վկայության վերաբերյալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

«Նախագահ Հանթերի համար . . . կար հավատքի հզոր ուժ։ Կար աստվածային բաների և հավերժական բաների գիտության վերաբերյալ վստահություն։ . . . [Նա] ուներ վստահ ու համոզված վկայություն Աստծո՝ մեր Երկնային Հոր ապրող իրականության մասին։ Նա մեծ համոզմունքով բարձրաձայնեց իր վկայությունը Տեր Հիսուս Քրիստոսի՝ մարդկության Քավիչի աստվածայնության մասին»։[4]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Հավատքի միջոցով մենք կարող ենք գտնել Աստծուն և իմանալ, որ Նա ապրում է։

Կյանքում մեծագույն ձեռքբերումն է՝ գտնել Աստծուն և իմանալ, որ Նա ապրում է։ Ինչպես որևէ այլ արժանավոր նվաճում, սա կարող է միայն ձեռք բերվել նրանց կողմից, ովքեր կհավատան և հավատք կունենան այն բաների հանդեպ, որոնք սկզբում չեն կարող ակնհայտ լինել։[5]

Երբ մարդու մտքերը դառնում են դեպի Աստված և այն ամենը, որոնք վերաբերում են Աստծուն, մարդը ենթարկվում է հոգևոր փոխակերպման։ Այն բարձրացնում է նրան առօրյայից և տալիս նրան ազնիվ ու Աստվածանման բնավորություն։ Եթե մենք հավատք ունենք առ Աստված, մենք օգտագործում ենք կյանքի մեծ օրենքներից մեկը։ Մարդկային էության ամենահզոր ուժը հավատքի հոգևոր զորությունն է։[6]

Մեծագույն ձգտումը Աստծուն փնտրելն է՝ որոշելու Նրա իրական լինելը, Նրա անձնական հատկանիշները և ապահովել գիտելիք Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի վերաբերյալ։ Հեշտ չէ գտնել Աստծո կատարյալ ըմբռնում։ Որոնումը պահանջում է հետևողական ջանքեր և կան մարդիկ, ովքեր երբեք չեն շարժվում՝ հետամուտ լինելու այս գիտելիքին։ . . .

Լինի գիտական ճշմարտությունների վերաբերյալ գիտելիք որոնելը, թե Աստծուն բացահայտելը, մարդ պետք է հավատք ունենա: Սա է դառնում մեկնարկային կետը: Հավատքը սահմանվել է շատ ձևերով, բայց ամենադասական սահմանումը տրվել է Եբրայեցիներին գրված նամակի հեղինակի կողմից այս իմաստալի խոսքերով.«Հավատքն էլ յուսացած բաների հաստատութիւնը՝ եւ չերեւացող բաների ապացոյցն է»: (Եբր. ԺԱ.1:) Այլ խոսքով ասած, հավատքը դարձնում է մեզ վստահ նրանում, ինչի հույս ունենք և համոզված նրանում, ինչ մենք չենք տեսնում: . . . Նրանք, ովքեր լրջորեն որոնում են Աստծուն, չեն տեսնում Նրան, բայց նրանք գիտեն Նրա իրական լինելու մասին հավատքով: Դա ավելին է, քան՝ հույսը: Հավատքն է դարձնում դա համոզմունք՝ ապացույց այն բաների, որոնք անտեսանելի են:

Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը՝ [Պողոս Առաքյալը], շարունակում է. «Հավատքով ենք իմանում, որ աշխարհքներն Աստուծոյ խոսքովը հաստատուեցան, որ չերեւողներիցն այս տեսնուողներս եղած են»: (Եբր. ԺԱ.3:) Հավատքն այստեղ նկարագրվում է որպես հավատալը կամ համոզմունք ունենալը, որ աշխարհը ստեղծվել է Աստծո խոսքով: Վկայություններ չեն կարող ստեղծվել այս փաստն ապացուցելու համար, բայց հավատքը տալիս է գիտելիք, որ այն, ինչ տեսնում ենք երկրագնդի հրաշալիքներում և ողջ բնությունը արարվել է Աստծո կողմից: . . .

Ես ունեմ դրական համոզմունք, որ Աստված իրականություն է, որ Նա ապրում է: Նա մեր Երկնային Հայրն է, և մենք Նրա հոգևոր զավակներն ենք: Նա է ստեղծել երկինքն ու երկիրը և բոլոր բաները երկրի վրա և հեղինակն է հավերժական օրենքների, որոնց միջոցով կառավարվում է տիեզերքը: Այս օրենքները հայտնագործվում են քիչ- քիչ, երբ մարդը շարունակում է իր որոնումը, բայց դրանք գոյություն են ունեցել միշտ և հավերժ կմնան անփոփոխ:[7]

2

Աստծո իրական լինելու մասին գիտելիք ձեռք բերելու համար մենք պետք է հավատարիմ ջանք գործադրենք, կատարենք Նրա կամքը և աղոթենք ըմբռնման համար:

Որպեսզի գտնենք Աստծուն որպես իրականություն, մենք պետք է հետևենք այն ուղուն, որը Նա է մատնանշել որոնման համար: Ուղին մեկն է, որը տանում է դեպի վեր. այն պահանջում

է հավատք և ջանք և հեշտ ուղի չէ։ Այդ պատճառով շատ մարդիկ չեն կամենում նվիրվել Աստծո իրականությունը իրենք իրենց ապացուցելու դժվարին խնդրին։ Ընդհակառակը, ոմանք բռնում են հեշտ ուղին և մերժում են Նրա գոյությունը կամ պարզապես հետևում են կասկածողի անորոշության ուղուն։ . . .

. . . Երբեմն հավատքը նշանակում է հավատալ, որ ինչ- որ բան ճիշտ է, որտեղ բավականաչափ ապացույց չկա գիտելիքը հաստատելու համար։ Մենք պետք է շարունակենք քննությունը և հետևենք հորդորին. «Հետևաբար, խնդրեք և դուք կստանաք. թակեք և կբացվի ձեզ. քանզի նա, ով խնդրում է, ստանում է. և նրա համար, ով թակում է, կբացվի»։ (Մատ. Է.7–8։) . . .

Դա համընդհանուր կանոն է, որ մենք չենք ստանում արժեքավոր բաներ, մինչև չենք վճարում գինը։ Ուսանողը չի դառնում գիտուն, մինչև չի տքնում և ջանք թափում հաջողության հասնելու համար։ Եթե նա չի կամենում անել այդպես, արդյոք նա կարո՞ղ է ասել՝ չկա այնպիսի բան, ինչպիսին կրթաթոշակն է։ . . . Ճիշտ նույնպես հիմարություն է մարդու համար ասել Աստված չկա, պարզապես այն պատճառով, որ նա հակում չի ունեցել որոնելու Նրան։

. . . Որպեսզի անձնավորությունը ձեռք բերի անսասան գիտելիք Աստծո իրական լինելու վերաբերյալ, նա պետք է ապրի պատվիրաններով և այն վարդապետություններով, որ հայտարարվել է Փրկչի կողմից Իր անձնական ծառայության ընթացքում։ . . . Նրանք ովքեր պատրաստակամ են՝ որոնում կատարելու, նրանք գործի են անցնում և կատարում Աստծո կամքը, կունենան գիտելիք, որը կգա նրանց՝ Աստծո իրական լինելու վերաբերյալ։

Երբ մարդը գտնում է Աստծուն և հասկանում Նրա ուղիները, նա իմանում է, որ ոչ մի բան տիեզերքում պատահական չի լինում, այլ բոլոր բաները առաջացել են աստվածանորեն նախասահմանված ծրագրով։ Ինչպիսի հարուստ իմաստավորում է գալիս նրա կյանք։ Հասկացողությունը, որը գերազանցում է աշխարհիկ գիտությունը, նրանն է։ Աշխարհի գեղեցկությունները դառնում են ավելի գեղեցիկ, տիեզերական համակարգը դառնում ավելի իմաստալի և Աստծո բոլոր արարչագործությունները ավելի հասկանալի, երբ նա ականատես է լինում, թե ինչպես Աստծո օրերը գալիս են և գնում և եղանակները հաջորդում են՝ յուրաքանչյուրն իր կարգով։ [8]

Քրիստոսն իր ծառայության ընթացքում բացատրեց այն եղանակը, թե մարդն ինչպես կարող է իմանալ ճշմարտությունն Աստծո մասին: Նա ասել է.«Եթե մեկը կամենում է նրա կամքն անել, նա կիմանա այս վարդապետության համար, թե արդեոք Աստվածանի՞ց է, կամ եթե ես իմ անձիցն եմ խոսում» (Հովհաննես Է.17): Վարդապետը նաև բացատրել է Հոր կամքը և մեծ պատվիրանն այս ձևով. «Սիրիր քո Տեր Աստուծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը» (Մատ. ԻԲ.37): Նրանք, ովքեր կկամենան ձգտել անել Աստծո կամքը և պահել Նրա պատվիրանները, կստանան անձնական հայտնություն, ինչ վերաբերում է Տիրոջ աշխատանքի աստվածայնությանը՝ բերելով վկայություն Հոր մասին:

Նրանց, ովքեր կամենում են հասկանալ, Հակոբոսի խոսքերը բացատրում են, թե ինչպես այն կարող է ձեռք բերվել. «Բայց եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կ'տրուի նորան»: (Հակոբոս Ա.5): Երևում է, Հակոբոսը նկատի չուներ գիտական իմաստով փաստացի գիտելիքը, այլ ավելի շուտ հայտնությունը, որը գալիս էր բարձրից, որը պատասխանում է մարդկանց հարցերին, որպես արդյունք հետևելով աղոթելու այս հորդորին: . . .

Այսպիսով մենք ունենք բանաձևը Աստծուն որոնելու համար և միջոցներ իրականացնելու այդ որոնումը՝ հավատք, սեր և աղոթք: Գիտությունը սքանչելի բաներ է արել մարդու համար, բայց այն չի կարող իրականացնել այն, որ նա պետք է ինքուրույն անի իր համար, որից մեծագույնը՝ Աստծո իրական լինելը գտնելն է: Խնդիրը հեշտ չէ, գործը թեթև չէ, բայց ինչպես նշվում է վարդապետի կողմից. «Մեծ պիտի լինի նրանց վարձքը և հավերժական պիտի լինի նրանց փառքը»: (ՎևՈւ 76.6):[9]

3

Մենք պետք է հավատանք, որպեսզի տեսնենք:

Թուխմասը կամեցավ տեսնել՝ մինչև իր հավատալը:

Հարության օրվա երեկոյան Հիսուսը հայտնվեց և կանգնեց Իր աշակերտների մեջտեղում՝ փակ սենյակում: Նա ցույց տվեց նրանց իր ձեռքերը, որոնք մեխվել էին և Իր կողը, որը խոցվել

էր նիզակով։ Թովմասը՝ տասներկուսից մեկը, ներկա չէր, երբ դա տեղի ունեցավ, բայց մյուսները պատմեցին նրան, որ իրենք տեսել էին Տիրոջը, և որ Նա խոսել էր նրանց հետ։ . . . Թովմասը թերահավատ էր։

«. . .Եթե նորա ձեռքերումն բեւեռների նշանը չտեսնեմ, եւ իմ մատը չդնեմ բեւեռների տեղը, եւ իմ ձեռքը չկոխեմ նորա կողը, չեմ հաւատալ» (Հովհաննես Ի.25։)

. . . Ինչ որ տեղ Թովմասը ներկայացնում է մեր դարի ոգին։ Նա չէր բավարարվի նրանով, որը նա տեսնել չէր կարող, չնայած եղել էր Վարդապետի հետ և գիտեր Նրա ուսմունքները՝ հավատքի և կասկածի վերաբերյալ։ . . . Հավատքը բարձր դիրք չի վերցնում կասկածի վրա, երբ մարդը պիտի զգա կամ տեսնի, որպեսզի հավատա։

Թովմասը չէր կամենում հիմնվել հավատքի վրա։ Նա կամենում էր փաստերի դրական ապացույց։ Նա կամենում էր գիտելիք, ոչ թե հավատք։ Գիտելիքը կապված է անցյալի հետ, որովհետև անցյալի մեր փորձառություններն այն բաներն են, որոնք մեզ գիտելիք են տալիս, բայց հավատքը կապված է ապագայի հետ՝ անիմանալիի հետ, որտեղով մենք դեռ չենք քայլել։

Մենք մտածում ենք Թովմասի մասին, որպես մեկի, ով ճանապարհորդել էր և զրուցել Վարդապետի հետ և ով ընտրվել էր Նրա կողմից։ Ներքուստ մենք ցանկանում ենք, որ Թովմասը կարողանար շրջվել դեպի ապագան՝ վստահությամբ այն բաների հանդեպ, որոնք այդ ժամանակ դեռ ոչ տեսանելի էին, փոխարենը փաստորեն ասելու. «Տեսնելը հավատալ է»։ . . .

Հավատքը մեզ տալիս է վստահություն
բաների հանդեպ, որոնք տեսանելի չեն։

Մի շաբաթ անց աշակերտները կրկին հավաքվեցին միասին՝ նույն տանը՝ Երուսաղեմում։ Այս անգամ Թովմասը նրանց հետ էր։ Դուռը փակ էր, բայց Հիսուսը եկավ և կանգնեց նրանց մեջտեղում և ասաց. «Խաղաղութիւն ձեզ։

Յետոյ Թովմասին ասեց. Բեր քո մատը այստեղ, եւ տես իմ ձեռքերը, եւ քո ձեռքը բեր եւ իմ կողը կոխիր, եւ մի լինիր անհավատ՝ այլ հավատացեալ։» (Հովհաննես Ի.26–27)։ . . .

«Յիսուսը նորան ասեց. Որովհետեւ տեսար ինձ՝ հավատացիր. երանի նորանց, որ չեն տեսել եւ հաւատում են։» ([Հովհաննես] Ի.29)։

Այս իրադարձությունը հանդիսանում է որպես բոլոր ժամանակների մեծ դասերից մեկը։ Թովմասն ասաց. «Տեսնելը հավատալ է», իսկ Հիսուսը պատասխանեց.«Հավատալը տեսնել է»։ . . .

Հավատքի դասական օրինակը վերագրվում է Պողոս Առաքյալին իր Եբրայեցիներին գրված նամակում.«Հավատքն էլ յուսացած բաների հաստատութիւնը՝ եւ չերեւացող բաների ապացոյցն է։» (Եբր. ԺԱ.1։)

Այս հայտարարությունը չի ենթադրում կատարյալ գիտելիք, այլ նկարագրում է հավատքը, որպես մի բան, որը տալիս է մարդուն համոզվածություն կամ վստահություն այն բաների հանդեպ, որոնք դեռ ապագայում են։ Այդ բաները կարող են գոյություն ունենալ, բայց հավատքի միջոցով է, որ դրանք իրականանում են։ Հավատքը տալիս է մեզ վստահություն բաների հանդեպ, որոնք տեսանելի չեն կամ ենթակա՝ դրական ապացույցի։

Կարող է թվալ, որ Թովմասը կորցրել էր իր վստահությունը ապագայի հանդեպ։ Նա նայում էր դեպի անցյալը։ Նա ուզում էր ապացույց այն բանի համար, որն այդ ժամանակ տեսանելի չէր։ Նրանք, ովքեր կորցնում են կամ չունեն հավատք, ապրում են անցյալում, կորցնում են հույսը ապագայի հանդեպ։ Ինչպիսի մեծ փոփոխություն է գալիս այն մարդու կյանք, ով գտնում է մնայուն հավատք՝ տալու համոզվածություն և վստահություն։

Կույր ծնված մարդը չկասկածեց, նա հաւատաց Փրկչին։

Եթե մենք ետ վերադառնանք Հովհաննեսի իններորդ գլուխը, կկարդանք մեկ այլ դեպքի մասին, որը տեղի ունեցավ Երուսաղեմում, որում մի մարդ, ով կույր էր ծնվել, ստացավ իր տեսողությունը։ Շաբաթ օր էր, և Հիսուսը հավանաբար տաճարի մոտակայքում էր, երբ նա տեսավ կույր մարդուն և նրա աշակերտները հարցրեցին նրան.

«. . .Ռաբբի, ո՞վ է մեղանչել, սա՞ թէ իրան ծնողքը, որ կոյր է ծնուել։

«Յիսուսը պատասխանեց. Ոչ դա է մեղանչել, եւ ոչ էլ իրան ծնողքը. այլ որ Աստուծոյ գործերը յայտնի լինին դորանում։

«Կույր մարդը հավատաց և [նրան] թույլ տրվեց տեսնել»:

Ինձ պետք է նորա գործերը գործել, որ ինձ ուղարկեց, քանի որ օր կայ. գիշերը գալիս է, որ այն ժամանակ ոչ ով կարող չէ գործել:

Քանի որ աշխարհքումն եմ, լոյս եմ աշխարհքի:» (Հովհաննես Թ.2–5:)

Այնուհետև Հիսուսը թքեց գետնին, և թուքը խառնեց հողի փոշու հետ և ցեխ շինեց: Նա ցեխը քսեց կույրի աչքերին և նրան ասաց, որ գնար և լվացվեր Սիլոամի ավազանում: Եթե դա լիներ Թովմասը, արդյո՞ք նա կգնար ինչպես իրեն պատվիրվեր, թե կտար այս հարցը. «Ի՞նչ օգուտ կարող է գալ այդ կեղտոտ ավազանի լճացած ջրում լվացվելուց» կամ «Ի՞նչ բուժական հատկություններ կարող է լինել թքի ու հողի փոշու խառնուրդի մեջ»: Սրանք կարող են թվալ խելամիտ հարցեր, բայց եթե կույր

մարդը կասկածեր և հարցեր տար, նա այդպես էլ կույր կմնար : Ունենալով հավատք, նա հավատաց և արեց՝ ինչպես իրեն հրահանգվեց: Նա գնաց և լվացվեց ավազանում և ետ դարձավ՝ տեսնելով: Հավատալը տեսնել է: . . .

«Երանի նորանց, որ չեն տեսել եւ հաւատում են»:

Կույր մարդը հավատաց և թույլ տրվեց տեսնել: Թովմասը կամեցավ տեսնել, մինչև իր հավատալը: Աշխարհը լի է Թովմասներով, բայց կան շատերը Երուսաղեմի կույր մարդու նման: Եկեղեցու միսիոներներն այս երկուսից էլ ամեն օր հանդիպում են, երբ նրանք տանում են իրենց ուղերձն աշխարհին, Հիսուս Քրիստոսի վերականգված ավետարանի ուղերձը: . . . Ոմանք հավատում են, ունեն հավատք և մկրտվում են: Ոմանք չեն կամենում ընդունել, որովհետև նրանք չեն կարողանում տեսնել կամ զգալ:

Չկա դրական, կոնկրետ, շոշափելի ապացույց, որ Աստված ապրում է, սակայն միլիոնավորներն ունեն գիտելիք, որ նա ապրում է այն հավատքի միջոցով, որը հանդիսանում է անտեսանելի բաների ապացույցը: Շատերն ասում են միսիոներներին.«Ես կընդունեի մկրտություն, եթե կարողանայի հավատալ, որ Ջոզեֆ Սմիթին այցելել են Հայրը և Որդին»: Այս փաստի համար չկա դրական, կոնկրետ, շոշափելի ապացույց, բայց նրանց համար, ում հպվում է Հոգին, հավատքը կկանգնի այդպիսի ապացույցի տեղում, այնպիսի բաների վերաբերյալ, որոնք անտեսանելի են: Հիշեք խաչված Վարդապետի խոսքերը, երբ Նա կանգնեց Թովմասի առջև.

«Երանի նորանց, որ չեն տեսել եւ հաւատում են» ([Հովհաննես] Ի.29):

Նրանք, ովքեր հավատում են, հավատքի միջոցով կտեսնեն:

Ես ավելացնում եմ իմ վկայությունը հազարավոր և հազարավոր միսոներների վկայությանը, որ Աստված իսկապես ապրում է, որ Հիսուսը աշխարհի Փրկիչն է, որ նրանք, ովքեր կհավատան, հավատքի միջոցով անպատճառ կտեսնեն:[10]

4

Մեր հավատքի վրա հիմնվելով գործելը կտանի դեպի անձնական վկայության:

Որպես երեխաներ, մենք որպես փաստ ընդունեցինք այն բաները, որոնք ասվել են մեզ մեր ծնողների կամ ուսուցիչների կողմից այն վստահության շնորհիվ, որ մենք ունեցել ենք նրանց հանդեպ: Մի փոքրիկ տղա կցատկի բարձր տեղից առանց վախենալու, եթե նրա հայրն ասի նրան, որ նա կբռնի իրեն: Փոքրիկ տղան ունի հավատք, որ իր հայրը չի թողնի, որ նա ընկնի: Երբ երեխաները մեծանում են, նրանք սկսում են մտածել ինքնուրույն, հարցնելու և ունենալու կասկածներ այն բաների վերաբերյալ, որոնք շոշափելի ապացույցի ենթակա չեն: Ես համակրանք ունեմ երիտասարդ տղամարդկանց և կանանց հանդեպ, երբ ազնիվ կասկածներ են մտնում նրանց միտքը, և նրանք զբաղվում են կասկածները լուծելու մեծ կոնֆլիկտով: Այս կասկածները կարող են լուծվել, եթե նրանք ազնիվ ցանկություն ունեն իմանալու ճշմարտությունը՝ գործադրելով բարոյական, հոգևոր և մտավոր ջանք: Նրանք դուրս կգան այդ կոնֆլիկտից ավելի ամուր, ավելի ուժեղ, ավելի մեծ հավատքով՝ պայքարի շնորհիվ: Նրանք գնացին փոքր, վստահող հավատքից կասկածի և կոնֆլիկտի միջով դեպի ամուր հիմնավոր հավատք, որը հասունանում է՝ դառնալով վկայություն: [11]

Ուսանողները ժամեր են անցկացնում գիտական լաբորատորիաներում փորձարկումներ կատարելով ճշմարտությունը գտնելու համար: Եթե նրանք անեն նույն բանը հավատքի, աղոթքի, ներման, համեստության և սիրո հետ, նրանք կգտնեն վկայություն Հիսուս Քրիստոսի՝ այդ սկզբունքները տվողի մասին:[12]

Հիսուս Քրիստոսի ավետարանը ուղղակի հավատքի ավետարան չէ, այն գործողության պլան է: . . . Նա չի ասել «դիտարկեք» իմ ավետարանը,Նա ասել է «ապրեք» դրանով: Նա չի ասել.«Ուշադրություն դարձրեք դրա գեղեցիկ կառուցվածքին և պատկերներին», Նա ասել է.«Գնացեք, արեք, տեսեք, զգացեք, տվեք, հավատացեք»: . . .

Գործողությունը անձնական վկայության գլխավոր հիմքերից մեկն է: Ամենահաստատուն վկայությունն այն է, որ գալիս է

անմիջապես անձնական փորձառությունից: Երբ հրեաները մարտահրավեր նետեցին Հիսուսի վարդապետությանը, որը Նա ուսուցանում էր տաճարում, նա պատասխանեց.«. . . իմ վարդապետութիւնն իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է»: Ապա Նա ավելացրեց բանալին՝ դեպի անձնական վկայություն. «Եթե մեկը կամենում է նրա կամքն անել, նա կիմանայ այս վարդապետութեան համար, թէ արդեոք Աստուածանի՞ց է, կամ եթէ ես իմ անձիցն եմ խոսում» (Հովհաննես Է.16–17:)

Արդյոք մենք լսո՞ւմ ենքՓրկչի այս հայտարարության հրամայականը: «Եթե որևէ մարդ *անի* . . . նա պիտի *իմանա*» Հովհաննեսը ըմբռնեց այս հրամայականի նշանակությունը և շեշտադրեց դրա իմաստը իր [թղթում]: Նա ասել է. «Ով որ ասում է թէ նորանում եմ բնակվում, պետք է, ինչպէս որ նա գնաց, ինքն էլ այնպէս գնա» (Ա Հովհաննես Բ.6):

Պարզապես ասելը, ընդունելը, հավատալը բավական չէ: Դրանք անավարտ են մինչև այն, ինչ դրանք նշանակում են, որ փոխակերպվեն ամենօրյա ապրելակերպի դինամիկ գործողության: Սա այդ դեպքում անձնական վկայության ամենահրաշալի աղբյուրն է : Մարդը գիտի, որովհետև նա զգացել է: Նա ստիպված չէ ասել.«Եղբայր Ջոնսն ասաց ճշմարիտ է և ես հավատում եմ նրան»: Նա կարող է ասել.«Ես ապրել եմ այս սկզբունքով իմ սեփական կյանքում, և ես գիտեմ անձնական փորձառությամբ, որ դա գործում է: Ես զգացել եմ դրա ազդեցությունը, ստուգել եմ դրա պրակտիկ օգտակարությունը և գիտեմ որ դա լավ է: Ես կարող եմ վկայել իմ սեփական գիտելիքից ելնելով, որ դա ճշմարիտ սկզբունք է:

Շատ մարդիկ կրում են այդպիսի վկայություն իրենց իսկ կյանքում և չեն ընդունում դրա արժեքը: Վերջերս մի երիտասարդ կին ասաց.«Ես վկայություն չունեմ ավետարանի մասին: Կուզենայի ունենալ: Ես ընդունում եմ դրա ուսմունքները: Ես գիտեմ, դրանք գործում են իմ կյանքում: Ես տեսնում եմ, որ դրանք գործում են ուրիշների կյանքում: Եթե միայն Տերը պատասխան տա իմ աղոթքներին և մի վկայություն տա, ես կլինեմ կենդանի մարդկանցից ամենաերջանիկներից մեկը: Այն, ինչ այս երիտասարդ կինն էր ուզում հրաշագործ միջամտություն էր, սակայն նա արդեն տեսել էր ավետարանի հրաշքը, որն ընդարձակել էր և բարձրացրել նրա իսկ կյանքը: Տերը պատասխանել*էր*նրա

աղոթքներին: Նա *իսկապես* ուներ վկայություն, բայց չէր ընդունում, թե ինչի համար էր դա: [13]

Որպես կարգված Առաքյալ և Քրիստոսի հատուկ վկա, ես տալիս եմ ձեզ հանդիսավոր վկայություն, որ Հիսուս Քրիստոսը փաստորեն Աստծո Որդին է: . . . Ես Սուրբ Հոգու զորությամբ է, որ բերում եմ իմ վկայությունը: Ես գիտեմ Քրիստոսի իրական լինելու մասին, կարծես տեսած լինեի իմ աչքերով և լսած լինեի իմ ականջներով: Ես գիտեմ նաև, որ Սուրբ Հոգին կհաստատի իմ վկայության ճշմարտացիությունը նրանց բոլորի սրտերում, ովքեր լսում են հավատքի ականջով:[14]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Նախագահ Հանթերն ուսուցանում է, որ «կյանքի մեծագույն ձեռքբերումն է գտնել Աստծուն և իմանալ, որ Նա ապրում է» (բաժին 1): Ո՞րն է հավատքի դերը այդ որոնումն իրականացնելու համար: Ի՞նչ փորձառություններ են օգնել ձեզ՝ գտնել Աստծուն և իմանալ, որ Նա ապրում է:
- Նախագահ Հանթերն ասում է. «Աստծո իրական լինելու վերաբերյալ գիտելիք ձեռք բերելու «խնդիրը հեշտ չէ» և «աշխատանքը թեթև չէ»: Ինչո՞ւ եք կարծում, որ նվիրված ջանքն անհրաժեշտ է մեզ՝ այդ գիտելիքը ձեռք բերելու համար: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր մեզ համար ճանաչել մեր թուլությունները: Ինչո՞ւ է պատվիրանները պահելը կարևոր Աստծուն ճանաչել սկսելու համար:
- Բաժին 3-ում Նախագահ Հանթերն օգտագործում է Թովմասի և կույր ծնված մարդու միջև հակադրությունը՝ ուսուցանելու, որ եթե մենք հավատանք, մենք կկարողանանք տեսնել: Ինչպե՞ս կարող են Նախագահ Հանթերի կռահումները այս պատմություններում կիրառում ունենալ ձեր կյանքում: Ինչպե՞ս է հավատք գործադրելը հնարավոր դարձրել ձեզ համար տեսնելը:
- Վերանայեք Նախագահ Հանթերի ուսմունքները, որ մեր հավատքի վրա հիմնվելով գործելը վկայություն ձեռք բերելու բանալին է (տես բաժին 4): Որո՞նք են այն ուղիները, որոնցով կարող եք գործել ձեր հավատքի վրա հիմնվելով: Ինչպե՞ս

կարող է հավատքը հաղթել կասկածին: Ինչպե՞ս է հավատքի վրա հիմնվելով գործելն օգնել, որ ձեր վկայությունն ավելի ուժեղ դառնա:

Սոնչվող սուրբ գրություններ

Հովհաննես ԺԷ.3, Եբրայեցիս ԺԱ.1–6, Ալմա 5.45–48, 30.40–41, 32.26–43, Եթեր 12.4, 6–22, Մորոնի 10.4–5, ՎևՈւ 42.61

Օգնություն ուսուցչին

«Ուղղեք հարցեր, որոնք պահանջում են սովորողներից գտնել պատասխաններ սուրբ գրություններում և վերջին օրերի մարգարեների ուսմունքներում» (*Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում* [1999], 62):

Հղումներ

1. In J M. Heslop, "He Found Pleasure in Work," *Church News,* Nov. 16, 1974, 4, 12.
2. See Eleanor Knowles, *Howard W. Hunter* (1994), -71.
3. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 48.
4. Gordon B. Hinckley, "A Prophet Polished and Refined," *Ensign,* Apr. 1995, 35.
5. "Faith as the Foundation of Accomplishment," *Instructor,* Feb. 1960, 43.
6. In Conference Report, Apr. 1960, 124-25.
7. "To Know God," *Ensign,* Nov. 1974, 96–97.
8. In Conference Report, Apr. 1970, 7-10.
9. "To Know God," 97.
10. In Conference Report, Oct. 1962, 22-24.
11. "Secretly a Disciple?" *Improvement Era,* Dec. 1960, 948.
12. *The Teachings of Howard W. Hunter,* 48.
13. In Conference Report, Apr. 1967, 115-16.
14. "An Apostle's Witness of Christ," *Ensign,* Jan. 1984, 70.

Ուսուցանել ավետարանը

«Ուսուցանման նպատակն . . . այն [է], որ մենք կարողանանք գործիք լինել Տիրոջ ձեռքում՝ փոխելով անձնավորության սիրտը»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

1972 թվականի ապրիլյան գերագույն համաժողովի ընթացքում Երեց Հովարդ Վ. Հանթերը՝ այն ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, նիստերից մեկի վերջին խոսնակներից էր: Նա մի ելույթ էր պատրաստել, բայց բավականաչափ ժամանակ չէր մնացել, որ նա խոսեր: «Նայելով ժամացույցին, Երեց Հանթերն ասաց. «Ես ծալում եմ այն նշումները, որոնք ես պատրաստել էի և դնում դրանք իմ ծոցագրպանը: Բայց թույլ տվեք՝ հատկացնել ինձ ուղղակի մի պահ՝ նշելու մի փոքրիկ դեպքի մասին, որը տպավորություն գործեց ինձ վրա, երբ ես մանուկ էի: Սա միտքս եկավ, երբ նշվեց, որ մեզ հետ այս կեսօրին ներկա են նվիրված մարդկանց մի մեծ խումբ, ովքեր ուսուցանում են մեր երիտասարդությանը:

«Ամառային վաղ առավոտն էր: Ես կանգնած էի պատուհանի մոտ: Վարագույրներն ինձ թաքցնում էին մարգագետնում գտնվող դրսի երկու փոքրիկ արարածներից: Մեկը մեծ թռչուն էր, իսկ մյուսը փոքրիկ թռչնակ, որն ակնհայտորեն հենց նոր էր դուրս եկել բնից: Ես տեսա, թե ինչպես մեծ թռչունը ցատկեց սիզամարգի վրա, ապա հարվածեց իր ոտքերով և շարժեց գլուխը: Նա հանեց մի մեծ, հաստ որդ սիզամարգից և ցատկոտելով ետ վերադարձավ: Փոքրիկ թռչունը լայն բացեց կտուցը, բայց մեծ թռչունը կուլ տվեց որդը:

Ապա տեսա, թե ինչպես մեծ թռչունը թռավ վեր՝ ծառի վրա: Նա որոշ ժամանակ կտցեց կեղևը և ետ եկավ մի մեծ միջատ իր բերանում: Փոքրիկ թռչնակը լայն բացեց իր կտուցը, բայց մեծ թռչունը կուլ տվեց միջատը: Ծղրտոց լսվեց՝ ի նշան բողոքի:

Երեխաներին եկեղեցում ուսուցանելն օգնում է ծնողների ուսուցանմանը տանը:

Մեծ թռչունը հեռու թռավ, և ես նորից նրան չտեսա, բայց ես հետևում էի փոքրիկ թռչունին: Մի քիչ անց փոքրիկ թռչնակը դուրս ցատկեց սիզամարգի վրա, հարվածեց ոտքերով, շարժեց գլուխը, և դուրս հանեց մի մեծ որդ սիզամարգից:

Աստված օրհնի բարի մարդկանց, ովքեր ուսուցանում են մեր երեխաներին և մեր երիտասարդներին»:

Երեց Հանթերի համառոտ ուղերձն ավելի ուշ տպագրվեց «Ուսուցիչը» վերնագրի ներքո: [1]

Հովարդ Վ. Հանթերը հաճախ շեշտում էր լավ ուսուցանման կարևորությունը Եկեղեցում: Նա ներկայացնում էր սկզբունքներ, ինչպես օրինակ՝ օրինակով ուսուցանելու կարևորությունը, լուսաբանելով թռչունների պատմության միջոցով, որը կարող էր օգնել ուսուցիչներին՝ դառնալ ավելի արդյունավետ նրանց կյանքն օրհնելիս, ում իրենք ուսուցանում էին: Նա հաճախ էր խոսում երեխաների և երիտասարդների ուսուցիչների հետ, օգնելով նրանց հասկանալ իրենց սրբազան պարտականությունը նրանց հանդեպ, ովքեր աճող սերնդից էին: Այդպիսի մի միջավայրում նա ասաց.

«Իմ առջև այժմ ես տեսնում եմ երկրագնդի ընտիր հոգիներից մի քանիսին: . . . Ես փորձում եմ տեսնել ձեզ [ուսուցիչներից] յուրաքանչյուրին աշխատելիս ձեր իսկ որոշակի հանձնարարություններում: Ես զարմանում եմ, թե ինչ պտուղ կտա ձեր աշխատանքը: Արդյոք այդ պտղի որոշ մասը կփչանա, քանի որ դուք ձախողվել եք փորել կամ մշակել հողը, որը վստահվել է ձեր խնամքին, թե ողջ հողը կմշակվի այնպես, որ այն կտա առավելագույն բարի բերք:

Ձեր համապատասխան ծխերից և ցցերից դուրս . . . ապրում են մեր Հոր զավակներից շատերը: Ձեզ նման նրանք լավագույնն են Նրա աչքում, բայց ի տարբերություն ձեզ, շատերն անփորձ են և շատերն էլ նոր են Ավետարանում: Ձեր պատասխանատվությունը նրանց հանդեպ իսկապես մեծ է: Նրանց կյանքերը ճկուն են, հեշտորեն են թեքվում, հեշտորեն ձևավորվում, հեշտորեն առաջնորդվում, եթե դուք կարողանաք ձեռք բերել նրանց վստահությունը և շահել նրանց սրտերը: Դուք նրանց «հովիվներն» եք: Դուք պետք է առաջնորդեք նրանց՝ դեպի «կանաչ արոտավայրեր»: . . .

«Ինչպիսի մարտահրավեր, ինչպիսի ուրախալի հանձնարարություն, ինչպիսի սրբազան պարտականություն է ձերն այժմ: . . .Որքան լրջամիտ, որքան հոգատար, որքան բարի, որքան քնքուշ, որքան սրտով մաքուր, որքան համակված այդ անշահախնդիր սիրով, ինչպես մեր Տերն էր համակված, որքան խոնարհ, որքան աղոթքով լի դուք պետք է լինեք, երբ դուք կրկին մտածեք զառներին արածեցնելու ձեր աշխատանքի մասին, ինչպես Տերն է ասում ձեզ անել»:[2]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Օգնեք ուսանողներին զարգացնել վստահություն սուրբ գրությունների հանդեպ:

«Ես վճռականորեն քաջալերում եմ ձեզ՝ օգտագործել սուրբ գրությունները ձեր ուսուցանելու ժամանակ և անել ամեն հնարավոր բան ուսանողներին օգնելու համար, որ օգտագործեն դրանք և հարմարվեն դրանց: «Ես կկամենայի, որ մեր երիտասարդները վստահություն ունենային սուրբ գրությունների հանդեպ, և ես կկամենայի, որ դուք մեկնաբանեիք այդ արտահայտությունը երկու ձևով:

Առաջինը, մենք ցանկանում ենք, որ ուսանողները հավատան սուրբ գրությունների ուժին և ճշմարտացիությանը, վստահ լինեն, որ իրենց Երկնային Հայրն իրոք խոսում է իրենց հետ սուրբ գրությունների միջոցով, և որ նրանք կարող են դառնալ դեպի սուրբ գրությունները և գտնել պատասխաններ իրենց խնդիրներին և իրենց աղոթքներին: Դա մի այնպիսի վստահություն է, որը, ես հուսով եմ, դուք տալիս եք ձեր ուսանողներին, որը դուք կարող եք տալ նրանց, եթե դուք ցույց տաք նրանց ամեն օր, ամեն ժամ, որ դուք վստահում եք սուրբ գրություններին հենց այդ ձևով: Ցույց տվեք նրանց, որ դուք ինքներդ վստահ եք, որ սուրբ գրություններն ունեն պատասխաններ բազմաթիվ խնդիրների, իրականում՝ կյանքի խնդիրների մեծամասնության համար: Այսպիսով, երբ դուք ուսուցանում եք, ուսուցանեք սուրբ գրություններից:

Ակնհայտորեն «վստահություն սուրբ գրությունների հանդեպ» արտահայտությունը պարունակում է ևս մեկ իմաստ: Այն է, որ ուսանողներն ուսուցանվեն կանոնիկ գրքերն այնքան խորը, որ

նրանք կարողանան դրանցով վստահությամբ շարժվել՝ սովորելով հիմնական սուրբ գրություններն ու քարոզները և տեքստերը, որոնք դրանք պարունակում են։ . . . Մենք հուսով ենք, որ ձեր ուսանողներից և ոչ մեկը դուրս չի գա դասարանից վախեցած կամ ամոթով, որ նրանք չեն կարող գտնել իրենց անհրաժեշտ օգնությունը, քանի որ նրանք բավականաչափ լավ չգիտեն սուրբ գրությունները՝ անհրաժեշտ հատվածները գտնելու համար։ Այս երիտասարդ մարդկանց տվեք բավականաչափ փորձառություն Աստվածաշնչում, Մորմոնի Գրքում, Վարդապետություն և Ուխտերում և Թանկագին Մարգարիտում, որպեսզի նրանք ունենան երկկողմանի վստահություն, ինչպես ես նշեցի։

Ես հաճախ եմ մտածել, որ մեր երիտասարդ մարդիկ Եկեղեցում շատ նման կլինեն ուրիշ երիտասարդների Եկեղեցուց դուրս, եթե նրանք չհաստատեն որոշակի վարպետություն և տիրապետում կանոնիկ գրքերի։ Դուք բոլորդ հիշում եք Մարգարե Ջոզեֆ Սմիթի գրած հատվածները Լիբերթի բանտի իր բանտարկության տեղից։ Դրանց շարքում նա գրել է.«Քանզի երկրի վրա դեռ շատերը կան, բոլոր աղանդների, խմբակցությունների և դավանանքների մեջ, որոնք կույր են դարձել մոլորեցնելու համար դարան մտած մարդկանց ճարպիկ խաբեությամբ, և*որոնք ճշմարտությունից հեռու են մնացել, միայն որովհետև չգիտեն, որտեղ գտնեն այն»* (ՎևՈ 123.12, շեշտադրումն ավելացված է)։

Մենք մեծ պատասխանատվություն ունենք որպես [ուսուցիչներ] Եկեղեցում, որպեսզի համոզված լինենք, որ մեր սեփական անդամները, մեր սեփական երիտասարդները չընկնեն այդ դժբախտ դասի մեջ, որում ներառված են կուրացած, բարի, հիանալի, արժանավոր երիտասարդ տղամարդիկ և կանայք, ովքեր սուրբ գրությունների ճշմարտություններից հեռու են պահվում, որովհետև նրանք չգիտեն, որտեղ գտնեն այդ ճշմարտությունները և չունեն վստահություն [օգտագործելու] իրենց կանոնիկ գրքերը։ [3]

2

Ուսուցանեք Հոգով

Նախապատրաստվեք և ապրեք այնպիսի ձևով, որպեսզի ունենաք Տիրոջ Հոգին ձեր ուսուցման ընթացքում։ Այնքան շատ բան կա մեր աշխարհում, որ կործանում է Հոգու զգացողությունը և այնքան շատ բան, որ [ետ] կպահի մեզ Հոգին մեզ հետ

ունենալուց: Մենք պետք է անենք ամեն բան, ինչ կարող ենք այս երիտասարդ մարդկանց համար, ովքեր հարձակման և տեղատարափի են ենթարկվում իրենց աշխարհիկ շրջապատի կողմից: Մենք պետք է անենք ամեն հնարավոր բան՝ թույլ տալու նրանց զգալ Տիրոջ Հոգու քաղցր, հուսադրող ներկայությունը: . . .

Այս տնտեսության ամենահիմնական հայտնություններից մեկում Տերն ասել է. «Եվ Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով. Եվ, եթե դուք չստանաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք»(ՎԵՈՒ 42.14):

Ես այնպես եմ հասկանում այս հատվածից, որ մենք ոչ միայն*չպետք է*ուսուցանենք առանց Հոգու, այլ նաև, որ մենք իսկապես*չենք կարող*ուսուցանել առանց նրա: Հոգևոր բաներ սովորելը պարզապես չի կարող տեղի ունենալ առանց Տիրոջ Հոգու ուսուցողական և հաստատող ներկայության: Թվում է՝ Ջոզեֆ Սմիթը համաձայն է. «Բոլորը պետք է քարոզեն ավետարանը Սուրբ Հոգու զորությամբ և ազդեցությամբ, և ոչ մի մարդ չի կարող քարոզել Ավետարանը առանց Սուրբ Հոգու» [*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները՝ Ջոզեֆ Սմիթ*(2007), 332]:

. . . Ես մտահոգվում եմ, երբ կարծես թե ուժեղ հույզերը կամ ազատ հոսող արցունքները հավասարեցվում են Հոգու ներկայության հետ: Անշուշտ Տիրոջ Հոգին կարող է առաջացնել ուժեղ հուզական զգացողություններ, ներառյալ արցունքներ, բայց այդ արտաքին դրսևորումը չպետք է շփոթել Հոգու՝ իր իսկ ներկայության հետ:

Ես հետևել եմ իմ եղբայրներից շատ շատերին տարիների ընթացքում, և մենք միասին կիսվել ենք որոշ հազվադեպ և անասելի հոգևոր փորձառություններով: Այդ փորձառություններից բոլորը եղել են տարբեր, յուրաքանչյուրը յուրովի իր իսկ ձևով և այդպիսի սրբազան պահեր, կարող են կամ չեն կարող ուղեկցվել արցունքներով: Շատ հաճախ դրանք ուղեկցվում են արցունքներով, բայց երբեմն էլ դրանք ուղեկցվում են բացարձակ լռությամբ: Ուրիշ անգամներ դրանք ուղեկցվում են ուրախությամբ: Դրանք միշտ ուղեկցվում են ճշմարտության մեծ դրսևորումներով, սրտին տրվող հայտնությամբ:

Տվեք ձեր ուսանողներին ավետարանի ճշմարտության զորությամբ ուսուցում. դա է նրանց հոգևոր փորձառություն տալու ուղին: Թող դա լինի բնականն ինչպես որ կլինի՝ գուցե արցունքներ

Փորձեք լավագույնը, որ կարող եք ստեղծել [ուսանողների] մասին անհատապես՝ թույլ տալու նրանց զգալ ինչ- որ անձնական և հատուկ մի բան ձեր՝ իրենց ուսուցչի վերաբերյալ:

թափելով, գուցեն ոչ: Եթե այն, ինչ ասում եք՝ ճշմարտություն է, և դուք դա ասում եք հստակորեն և ազնիվ համոզումով, այդ ուսանողները կզգան ճշմարտության ոգին ուսուցանվելիս և կընդունեն այն ոգեշնչումն ու հայտնությունը, որը գալիս է իրենց սրտերը: Ահա թե ինչպես ենք մենք հավատք կառուցում : Ահա թե ինչպես ենք զորացնում վկայությունները՝ Աստծո խոսքի զորությամբ, որն ուսուցանվում է անաղարտորեն և համոզումով:

Լսեք ճշմարտությունը, ականջ դրեք վարդապետությանը և թույլ տվեք, որ Հոգու դրսևորումը գա, ինչպես որ այն կարող է՝ իր բոլոր բազում և տարբեր ձևերով: Մնացեք հաստատուն սկզբունքներով, ուսուցանեք անաղարտ սրտով: Այդ ժամանակ Հոգին կներթափանցի ձեր միտքը և սիրտը և ձեր ուսանողների յուրաքանչյուրի միտքն ու սիրտը:[4]

3

Կոչ արեք ուսանողներին ուղղակիորեն որոնել Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին :

Համոզված եմ՝ դուք կընդունեք այն հնարավոր վտանգը . . . ձեր ուսանողների կողմից, ովքեր ավելի շուտ հավատարմություն կզգան ձեր հանդեպ, քան ավետարանի: . . . Այդ պատճառով դուք պետք է հրավիրեք ձեր ուսանողներին մտնել սուրբ գրությունների մեջ ինքնուրույն, ոչ թե տվեք դրանց ձեր մեկնաբանությունը և ներկայացումը: Այդ պատճառով դուք պետք է հրավիրեք ձեր ուսանողներին՝ զգալու Տիրոջ Հոգին, ոչ թե նրանց տալու դրանց վերաբերյալ ձեր անձնական անդրադարձը: Այդ պատճառով, ի վերջո դուք պետք է ուղղակիորեն հրավիրեք ձեր ուսանողներին դեպի Քրիստոս, ոչ թե ուղղակի դեպի մեկը, ով ուսուցանում է նրա վարդապետությունները, որքան էլ վարպետորեն դա անի: Դուք միշտ մատչելի չեք լինի այս ուսանողներին: . . .

Մեր մեծ խնդիրն է հիմնավորել այս ուսանողներին նրանում,ինչ *կարող է* գնալ նրանց հետ կյանքի ընթացքում՝ մատնանշելով նրանց դեպի Նա, ով սիրում է նրանց և կարող է առաջնորդել նրանց, ուր մեզանից ոչ մեկը չի գնա: Խնդրում ենք հավաստիացեք, որ այս ուսանողների հավատարմությունը սուրբ գրությունների հանդեպ է և Տիրոջ և վերականգնված Եկեղեցու վարդապետությունների հանդեպ: Մատնանշեք նրանց դեպի Հայր Աստված և Նրա Միածին Որդին՝ Հիսուս Քրիստոսը, և դեպի ճշմարիտ Եկեղեցու ղեկավարությունը: . . . Տվեք նրանց այն պարգևները, որոնք նրանց կտանեն այն բաների միջով, երբ նրանք ստիպված կլինեն միայնակ կանգնել: Երբ դուք անեք այս, ողջ Եկեղեցին կօրհնվի զալիք սերունդներում:[5]

4

Զգուշացեք օգնության հասնել անձնավորությանը:

Ես միշտ տպավորվել եմ այն բանից, որ Տերը մեզ հետ գործակցում է անհատապես, անձնապես: Մենք շատ բաներ խմբերով ենք անում Եկեղեցում, և մենք կարիք ունենք որոշակի չափերով կազմակերպությունների, որոնք թույլ կտան մեզ լավ կառավարել Եկեղեցին, բայց *առավել*կարևոր բաները արվում են անհատապես: Մենք օրհնում ենք մանուկներին՝ ամեն մեկին

առանձին, նույնիսկ, եթե նրանք երկվորյակներ են կամ եռյակներ: Մենք մկրտում և հաստատում ենք երեխաներին մեկական: Մենք հաղորդություն ենք ընդունում, կարգվում ենք քահանայության կամ անցնում տաճարային արարողությունների միջով՝ որպես անհատներ, որպես, մեկ անձ՝ զարգացնելով փոխհարաբերություն մեր Երկնային Հոր հետ: Այս փորձառություններում մեր կողքին կարող են լինել ուրիշներ, ինչպես ուրիշներ կան ձեր դասարանում, բայց երկնքի շեշտը յուրաքանչյուր անձնավորության վրա է, ամեն մի առանձին անձնավորության վրա:

Երբ Քրիստոսը հայտնվեց Նեփիացիներին, Նա ասաց.

«Բարձրացեք և առաջ եկեք ինձ մոտ, որ դուք կարողանաք մտցնել ձեր ձեռքն իմ կողը, և նաև, որ դուք կարողանաք շոշափել բևեռների նշաններն իմ ձեռքերի ու իմ ոտքերի վրա: . . .

Եվ եղավ այնպես, որ բազմությունն առաջ եկավ, և մտցրեց իրենց ձեռքերը նրա կողը, և շոշափեց բևեռների նշանները նրա ձեռքերի ու նրա ոտքերի վրա. և դա նրանք արեցին, *առաջ գալով մեկ առ մեկ*, մինչև որ նրանք բոլորն առաջ եկան *և տեսան իրենց իսկ աչքով, և շոշափեցին իրենց ձեռքերով,*, և իմացան անկասկած ու վկայեցին» (3 Նեփի 11.14–15, շեշտադրումն ավելացված է):

Այդ փորձառությունը ժամանակ խլեց, բայց կարևոր էր, որ յուրաքանչյուր անձ ունենար փորձառություն, որպեսզի յուրաքանչյուր զույգ աչքեր և յուրաքանչյուր զույգ ձեռքեր ունենային այդ վերահաստատող, *անձնական*վկայությունը: Հետագայում Քրիստոսը վերաբերվեց Նեփիացի երեխաներին ճիշտ նույն ձևով: «Եվ նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, *մեկ առ մեկ,* և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը» (3 Նեփի 17.21, շեշտադրումն ավելացված է):

Ձեզ համար դժվար կլինի տալ ձեր ողջ անձնական ուշադրությունը ձեր ուսանողներից մի քանիսին, ինչպես ցանկության, այնպես էլ կարիքի դեպքում, բայց փորձեք լավագույնը, որ կարող եք մտածել նրանց մասին անհատապես, թույլ տալու նրանց զգալ ինչ- որ անձնական և հատուկ մի բան ձեր մտահոգության մասին՝ որպես իրենց ուսուցիչ: Աղոթեք իմանալու, թե որ ուսանողը կարիք ունի ինչպիսի օգնության և զգայուն մնացեք այդ հուշումների հանդեպ, երբ դրանք գան: . . . Հիշեք,

Ամենապանի արդյունավետ ուսուցումը տանում է դեպի «մարդկային հոգու փոխակերպման»:

որ ամենալավագույն ուսուցումը մեկ առ մեկն է և հաճախ տեղի է ունենում դասարանից դուրս: . . .

Յուրաքանչյուր ուսանողի անձնապես ուսուցանելու ձեր որոնման ընթացքում դուք ամենայն հավանականությամբ կբացահայտեք, որ ոմանք այնքան էլ լավ չեն, ինչպես մյուսները, իսկ մի քանիսն ընդհանրապես չեն անում դա դասարանում: Անձնական հետաքրքրություն ցուցաբերեք այդպիսի ուսանողների հանդեպ, հավելյալ մղոնը գնալու ջանք գործադրեք՝ հրավիրելու և օգնելու ետ բերել կորած ոչխարին իր հոտը: «Հիշեք, հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում» (ՎԵՈՒ 18.10:) Մի անհաշվելի գին է վճարվել մեր Փրկչի կողմից մեզանից ամեն մեկի համար և մեզ վրա է դրված անել այն ամենը, ինչ կարող ենք՝ աջակցելու Նրան Իր աշխատանքում: Մեր վրա է դրված հավաստիանալ, որ Քավության պարգևը տարածվի յուրաքանչյուր երիտասարդ տղամարդու և կնոջ վրա, ում համար մենք պատասխանատվություն ենք կրում: Ձեր իրավիճակում, դա նշանակում է նրանց լրիվ ակտիվության մեջ պահել ձեր դասերի ընթացքում:

Հատուկ ուշադրություն հատկացրեք նրանց, ովքեր գուցե պայքարում են և դուրս գնում, երբ անհրաժեշտ է գտնել կորած ոչխարին: Մի գրված բացիկ, մի հեռախոսային զանգ կամ, եթե

հնարավոր է անձնական այցելությունը տուն, շատ դեպքերում կունենան սքանչելի արդյունք: Անձնական ուշադրությունը երիտասարդ անձնավորության հանդեպ, որը հենց նոր է սկսում շեղվել, կարող է խնայել ժամերի, իրականում տարիների ջանքեր՝ հետագայում այդ մարդուն գործունեության վերադարձնելու համար մեր փորձերում: Արեք այն ամենը, ինչ կարող եք՝ կոփելու ուժեղին և վերահաստատելու կամակորին այս հասակում: [6]

5

Ուսուցանեք օրինակով

Այնքան կարևոր է մեզ համար [որպես ուսուցիչներ] ճիշտ օրինակ հանդիսանալ, լինել ջանասեր և աչալուրջ մեր իսկ կյանքում, պահել Հանգստության օրը սուրբ, հարգել ծխի, ցցի և Եկեղեցու ղեկավարությանը: Ոչ մի անպատշաճ բան չպիտի դուրս գա մեր շուրթերից, որը որևէ երեխայի իրավունք կամ արտոնություն կտա սխալ գործելու: Իհարկե, եթե մենք ասենք կամ անենք որևէ սխալ բան, երեխաները իրավունք կվերապահեն հետևելու դրան:

Օրինակը կրում է իր հետ մի ազդեցություն, որը շատ ավելի ուժեղ է, քան պատգամը: Նա, ով համոզում է ուրիշներին ճիշտ գործել, ինքն էլ պետք է ճիշտ գործի: Ճշմարիտ է, որ նա, ով գործի է դնում բարի պատգամներ, որովհետև դրանք բարի են և թույլ չի տալիս, որ ինքն ազդեցություն կրի ուրիշների անարդար վարքից, ավելի առատորեն կպարգևատրվի, քան նա, ով ասում է և չի անում: . . . Երեխաները միտում ունեն ընդօրինակել նրանց, ում նրանք վստահում են: Որքան ավելի մեծ է նրանց վստահությունը, ավելի պատրաստակամորեն են նրանք ազդեցության տակ ընկնում բարու կամ չարի համար: Յուրաքանչյուր լավ Սուրբ հարգում է իսկական բարությունը, որտեղ էլ այն տեսնի և կփորձի ամեն լավ օրինակներն ընդօրինակել:[7]

Մեծ ուսուցչի համար բանաձևը միայն Տիրոջ պատվիրաններով ապրելը և Տիրոջ պատվիրանները պաշտպանելը չէ, այլ աղոթքով ուսուցանելու ոգին ձեռք բերելը: Երբ մենք ձեռք ենք բերում այդ ոգին և պահում Տիրոջ պատվիրանները՝ հնազանդությամբ քայլելով Նրա առջև, ապա նրանց կյանքը, ում մենք դիպչում ենք, փոխվում է, և նրանք հիմնավորվում են՝ ապրելու արդար կյանքով:[8]

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ունենա անձնական վկայություն, որ Աստված ապրում է, Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելության մասին և, որ Հոր և Որդու հայտնվելը Ջոզեֆ Սմիթին իրականություն էր: Ոչ միայն նա պետք է ունենա այդ գիտելիքը և վկայությունը, այլ նա պետք է ձգտի արտահայտել իր հավատքն առանց երկմտության նրանց, ովքեր գալիս են սովորելու: [9]

6

Եղեք գործիք Տիրոջ ձեռքերում՝ օգնելով ուսանողներին զգալ սրտի հրաշագործ փոփոխությունը:

Երբ ուսուցիչը կատարում է, ինչպես Տերն է նախատեսել, մի մեծ հրաշք է կատարվում: Եկեղեցու հրաշքն այսօր բժշկությունները չեն, որոնք այնքան լիառատ են, երբ կաղը քայլում է, կույրը տեսնում է, խուլը լսում կամ հիվանդը ոտքի կանգնում: Եկեղեցու և Աստծո թագավորության մեծ հրաշքը մեր օրերում և մեր ժամանակներում մարդկային հոգու փոխակերպումն է: Երբ մենք ճանապարհորդում ենք Եկեղեցու ցցերով և միսիաներով , սա այն է, ինչ տեսնում ենք՝ մարդկային հոգու փոխակերպում, որովհետև ինչ- որ մեկն ուսուցանել է ճշմարտության սկզբունքները:

Դա այնպես է, ինչպես Ալման հայտարարեց իր օրերում՝ ուսուցանելով ժողովրդին, երբ նա ասաց. «Եվ արդ ահա, ես հարցնում եմ ձեզ, եկեղեցու իմ եղբայրնե՛ր, ծնվե՞լ եք դուք Աստծուց հոգևորապես: Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին: Զգացե՞լ եք դուք այս հզոր փոփոխությունը ձեր սրտերում»: Ալմա 5.14:) Սա է ուսուցանման նպատակը: Սա է պատճառը, որ մենք այդքան տքնաջանորեն աշխատում ենք, որոնում Հոգին և նախապատրաստում մեր մտքերը բարի բաներով, ինչպես Տերն է պատվիրել, որ մենք կարողանանք գործիք լինել Տիրոջ ձեռքում՝ փոխելով անձնավորության սիրտը: Մեր նպատակն է երեխաների սրտերում սերմանել ցանկություն՝ լինել բարի, լինել արդարակյաց , պահել Տիրոջ պատվիրանները, համեստությամբ քայլել Նրա առջև: Եթե մենք կարողանանք գործիք լինել Տիրոջ ձեռքում՝ իրականացնելու այս հզոր փոփոխությունը երեխաների սրտում, ապա մենք իրականացրել ենք ուսուցչի այդ մեծ հրաշքը: Եվ իսկապես դա հրաշք է: Մենք չենք հասկանում, թե ինչպես է Տերը փոխում մարդկանց սրտերը, բայց Նա դա անում է: . . .

Ես բերում եմ ձեզ իմ վկայությունը Եկեղեցու անդամների կյանքում Հոգու վերածնող ուժի մասին: Ես աղերսում եմ ձեզ՝ . . . աշխատել անդադար արդարակեցության և սրբության մեջ Տիրոջ առաջ՝ իրականացնելով խնդիրը, որը հանձնարարված է ձեզ»: [10]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

Հիշեցում. Գուցե դուք կամենաք քննարկել հետևյալ հարցերից մի քանիսը իրենց երեխաներին ուսուցանող ծնողների տեսանկյունից:

- Նախագահ Հանթերը խրախուսում է ուսուցիչներին՝ օգնել ուսանողներին ձեռք բերել «վստահություն սուրբ գրքերի հանդեպ» (բաժին 1): Ե՞րբ են սուրբ գրքերն օգնել ձեզ ձեր կյանքում: Ե՞րբ եք պատասխաններ գտել ձեր հարցերին սուրբ գրքերում: Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին, ներառյալ նրանց, ովքեր մեր տներում են, սովորել սիրել սուրբ գրքերը և օգտվել դրանց զորությունից:
- Ի՞նչ կարող ենք սովորել 2-րդ բաժնից, Հոգով ուսուցանելու մասին: Ի՞նչ փորձառություններ եք ունեցել Հոգով ուսուցանելիս և սովորելիս: Ո՞րոնք են այն բաները, որ դուք կարող եք անել, օգնելու ձեզ Հոգու միջոցով ուսուցանելու համար:
- Ինչպե՞ս կարող է ուսուցիչն օգնել աշակերտներին՝ վստահություն ստեղծել սուրբ գրությունների և ավետարանի հանդեպ և ոչ թե իր հանդեպ: (տես բաժին 3:) Ինչպե՞ս կարող է ուսուցիչն օգնել՝ կենտրոնացնելու ուսանողներին դեպի Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը: Ինչպե՞ս կարող է ուսուցիչն օգնել ուսանողներին՝ հիմնավորված դառնալ ավետարանում, որպեսզի ուժեղ մնան, «երբ նրանք ստիպված լինեն մենակ կանգնել»:
- Խորհեք Նախագահ Հանթերի ուսմունքների մասին յուրաքանչյուր անձնավորության կարևորության վերաբերյալ: Ինչպե՞ս դուք կարող եք օգնել նրանց, ում ուսուցանում եք, զարգացնել վկայություն, որ Աստված գիտի և իրենց սիրում է անհատապես: Մտածեք, թե դուք որպես ուսուցիչ, ի՞նչ կարող եք անել օգնության հասնելու նրանց, ում դուք ուսուցանում եք:

- Նախագահ Հանթերը շեշտում է ուսուցանելու կարևորությունը օրինակի միջոցով: (տես բաժին 5): Ինչո՞ւ է մեր օրինակն ավելի հզոր, քան մեր խոսքերը: Ինչպե՞ս եք օրինվել մի ուսուցչով, ով լավ օրինակ է եղել: Ինչպե՞ս է ծնողների օրինակը ուսուցանում իրենց երեխաներին:
- Ե՞րբ եք զգացել այն «մեծ հրաշքը», որ Նախագահ Հանթերը նկարագրում է բաժին 6-ում, լինի դա ուսուցիչ, թե սովորող: Մտածեք այն ուսուցիչների մասին, ովքեր լավ ազդեցություն են եղել ձեր կյանքում: Ի՞նչն է նրանց դարձրել արդյունավետ ազդեցություն: Ինչպե՞ս կարող ենք ուսուցանել ավետարանը ավելի մեծ ուժով, լինի դա տանը, դասարանում, թե որևէ այլ միջավայրում:

Առնչվող սուրբ գրություններ

Հովհաննես ԻԱ.15–17, Ա Կորնթացիս ԺԲ.28, Բ Տիմոթեոս Գ.14–17, 2 Նեփի 33.1, Ալմա 17.2–3, 31.5, ՎևՈւ 11.21–22, 50.17–22, 88.77–80

Օգնություն ուսուցչին

Տարբեր թղթի կտորների վրա գրեք հարցեր գլխի վերջից կամ այլ հարցեր, որոնք կապված են գլխի հետ: Հրավիրեք դասարանի անդամներին՝ ընտրել մի հարց և փնտրել ուսմունքների այն գլուխը, որն օգնում է պատասխանել դրան: Խնդրեք նրանց կիսվել իրենց սովորածով:

Հղումներ

1. "A Teacher," *Ensign,* July 1972, 85.
2. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 210–11.
3. "Eternal Investments" (address to CES religious educators, Feb. 10, 1989), 2; si.lds.org.
4. "Eternal Investments," 3–4.
5. "Eternal Investments," 2-3.
6. "Eternal Investments," 4-5.
7. "Formula for a Great Teacher" (address given at Primary conference, Apr. 1965), 3–4, Church History Library, Salt Lake City.
8. "Formula for a Great Teacher," 1.
9. *The Teachings of Howard W. Hunter,* 188.
10. "Formula for a Great Teacher," 4–6.

«Ոչ պակաս պիտանի»

«Մեզանից շատերը կլինեն խոնարհ, համեմատաբար չճանաչված մարդիկ, ովքեր . . . անում են մեր աշխատանքն առանց փող հնչեցնելու: Ձեզանից նրանց, ովքեր դա զուցե համարեն . . . առանձնապես ոչ լավ, ես ասում եմ՝ դուք «ոչ պակաս պիտանի» եք, քան ձեր ազգու ընկերներից շատերը»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Նախագահ Հովարդ Վ. Հանթերը հայտնի էր ոչ միայն որպես նվիրված ղեկավար և սիրելի մարգարե, այլ նաև խոնարհությամբ ծառայելու իր եղանակով: Նա գիտեր, որ ծառայությունն ինքնին կարևոր էր՝ անկախ որևէ գնահատական ստանալուց: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելը մի անգամ նրա մասին ասել է. «Նախագահ Հովարդ Վ. Հանթերը խոնարհ մարդ է: . . . Նա այն նույն համեստ մարդն է, երբ ես արթնացա նրա հետ անցկացրած հոգնատանջ և փոշոտ օրվանից հետո Եգիպտոսում հանձնարարություն կատարելիս, ով լուռ փայլեցնում էր իմ կոշիկները, մի գործ, որը նա հույս ուներ անտես ավարտելու»:[1]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն առաջին անգամ նկատել է Նախագահ Հանթերի ծառայելու խոնարհ ուղին, երբ 1956թ. նվիրագործվեց Լոս Անջելես Կալիֆորնիա Տաճարը, որպես Առաքյալ նրանց կանչվելուց մի քանի տարի առաջ: Նա վերհիշել է.

«Իմ . . . առաջին հանդիպումը Նախագահ Հանթերի հետ տեղի ունեցավ, երբ նա ծառայում էր որպես Փասադենա Կալիֆորնիա Ցցի Նախագահ և պատասխանատվություն էր կրում համաձայնեցնելու տեղի կառավարությունների հետ պայմանավորվածությունները Լոս Անջելես (Կալիֆորնիա) Տաճարի նվիրագործման համար: Ես արտոնություն ունեի տպելու տոմսերը:

Կրանքը վիճող ծառայություն է մատուցվել շատերի կողմից, «ովքեր համբավ չունեն, ովքեր չեն արժանանում աշխարհի ուշադրությանը»։

Նրա հանձնարարությունը վիթխարի էր: Ես տեսա միայն այն մասը, որը վերաբերում էր տոմսերին, որոնք գունավորված էին, պիտակավորված և համարակալված ամենակարգապահ ձևով, որը ես երբևէ տեսել էի: Նա շռայլորեն գովաբանում էր ուրիշներին և ապահովում էր, որ իր անվանը չափից ավելի ուշադրություն չդարձվի, չնայած, որ նա խթանիչ ուժ էր հանդիսանում այս վիթխարի նախաձեռնության համար»:[2]

Տասներկուսի Քվորումից Երեց Ջեյմս Ի. Ֆաուստը հետագայում նկատում է. «Նա չուներ սեփական անձը կարևորելու կարիք: Իր ողջ իմաստությամբ նա կարող էր նստել իր եղբայրների հետ և շատ քիչ բան ասել: Նա ինքն իր հետ կատարյալ խաղաղության մեջ էր»:[3]

Նախագահ Հանթերը հասկանում էր, որ ցանկացած ծառայություն կարևոր է Աստծո աչքում, անկախ այն բանից, թե որքան աննկատ է այն: Նախագահ Հանթերի մահվանից մի քանի շաբաթ առաջ ընկերներից մեկը հարցրել է. «Թանկագին Նախագահ, ո՞րն է ամենավեհ պաշտոնը կամ կոչումը. թանկագին և վստահելի ընկեր լինելը, թե՞ Աստծո մարգարե լինելը»: Հարցը լսելուց հետո «Նախագահը լուռ խորհում էր, որը թվում էր, թե տևեց մի քանի րոպե, ապա դանդաղորեն ձեռքում սեղմելով ընկերոջ ձեռքը և շրջելով իր գլուխը դեպի նա, մինչ արցունքը սահում էր նրա անառողջ այտի վրայով, նա պատասխանեց. «դրանք *երկուսն* էլ վստահության սրբազան կոչումներ են»:[4]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Նրանք, ովքեր ծառայում են խոնարհաբար և առանց աչքի ընկնելու, «ոչ պակաս պիտանի» են, քան նրանք, ովքեր արժանանում են աշխարհի քաջալերանքին:

Երիտասարդ և անվեհեր Մորոնի Զորապետի մասին ասվել է. «Եթե բոլոր մարդիկ եղած լինեին, և մնային, և երբևէ լինեին Մորոնիի նման, ահա, նույնիսկ դժոխքի զորությունները հավիտյան կսասանվեին. այո, դևը երբեք զորություն չէր ունենա մարդկանց զավակների սրտերի վրա»: (Ալմա 48.17:)

Ինչպիսի հաճոյախոսություն հայտնի և ազդեցիկ մարդու համար: Ես չեմ կարող պատկերացնել ավելի մեծ գնահատական

մի մարդու կողմից՝ մյուս մարդուն ուղղված։ Երկու հատված հետո ակնարկ է արվում Հելամանի և նրա եղբայրների մասին, ովքեր ավելի քիչ ակներև դեր են խաղացել, քան Մորոնին. «Եվ ահա, Հելամանը և նրա եղբայրները ոչ պակաս պիտանի էին ժողովրդի համար, քան Մորոնին էր»։ (Ալմա 48.19։)

Այլ կերպ ասած, չնայած, որ Հելամանն այդքան էլ նկատելի կամ աչքի ընկնող չի եղել, ինչպես Մորոնին, նա նույնքան պիտանի էր. սա նշանակում է, որ նա նույնքան պատրաստակամ կամ օգտակար էր, որքան Մորոնին։

Ակնհայտ է, որ մենք մեծ օգուտ կարող ենք քաղել Մորոնի Զորապետի կյանքն ուսումնասիրելիս։ Նա հավատքի, ծառայության, նվիրվածության, մեծ վճռականության և շատ այլ աստվածային հատկանիշների օրինակ է։ Այս հոյակապ մարդու վրա կենտրոնանալու փոխարեն, այնուամենայնիվ, ես ընտրել եմ խորհել նրանց մասին, ովքեր չեն գտնվում ուշադրության կենտրոնում, ովքեր չեն արժանանում աշխարհի ուշադրությանը, սակայն նրանք «ոչ պակաս պիտանի» են, ինչպես ձևակերպված է սուրբ գրություններում։

Մեզանից ոչ բոլորն են նման լինելու Մորոնիին՝ արժանանալով մեր գործընկերների գովեստին ողջ օրվա ընթացքում ամեն օր։ Մեզանից շատերը կլինեն խոնարհ, համեմատաբար չճանաչված մարդիկ, ովքեր գալիս ու գնում են և անում են մեր աշխատանքն առանց փող հնչեցնելու։ Ձեզանից նրանց, ովքեր գուցե համարեն այդ [միտքը] վախեցնող կամ առանձնապես ոչ լավ, ես ասում եմ՝ դուք «ոչ պակաս պիտանի» եք, քան ձեր ազդու ընկերներից շատերը։ Դուք նույնպես Աստծո բանակի մասն եք։

Խորհեք օրինակ, հսկայական ծառայության մասին, որը մայրը կամ հայրը կատարում են խոնարհաբար և գաղտնաբար՝ որպես Վերջին Օրերի Սրբերի արժանի տուն։ Խորհեք Ավետարանի Վարդապետության ուսուցիչների, Երեխաների Խմբի երգչախմբի անդամների, սկաուտների ղեկավարների և Սփոփող Միության այցելող ուսուցիչների մասին, ովքեր ծառայում և օրհնում են միլիոնավոր մարդկանց, սակայն ում անունները երբեք չեն հնչի հասարակայնորեն կամ ցուցադրվի երկրի լրատվամիջոցների կողմից։

Տասնյակ հազարավոր չնկատված մարդիկ ամեն օր հնարավոր են դարձնում մեր հնարավորությունները և երջանկությունը: Ինչպես նշվում է սուրբ գրություններում, նրանք «ոչ պակաս պիտանի» են, քան նրանք, ում կյանքը թերթերի առաջին էջում է:

Պատմության և ներկա ժամանակների ուշադրությունը շատ հաճախ կենտրոնանում է *մեկի* վրա՝ *շատերի* վրա կենտրոնանալու փոխարեն: Անհատները հաճախ առանձնացվում են իրենց հասակակիցներից և բարձրացվում որպես հերոսներ: Ես գիտակցում եմ, որ այսպիսի ուշադրությունը ուղիներից մեկն է, որով կարող ենք բացահայտել այն, ինչը խորին հարգանք է առաջացնում կամ արժեք է ներկայացնում մարդկանց համար: Սակայն երբեմն այդ ճանաչմանը արժանի չեն լինում, կամ այն նույնիսկ կարող է գովերգել սխալ արժեքներ:

Մենք պետք է իմաստությամբ ընտրենք մեր հերոսներին և օրինակներին, ինչպես նաև շնորհակալություն հայտնենք ընկերների և քաղաքացիների այն բազմության համար, ովքեր այդքան էլ հայտնի չեն, սակայն ովքեր «ոչ պակաս պիտանի» են, քան մեր օրերի Մորոնիները:[5]

2

Սուրբ գրություններում շատ մարդիկ, ովքեր ծառայել են ուրիշների ստվերում, հսկայական ավանդ են ներդրել:

Հավանաբար դուք կարող եք ինձ հետ գտնել որոշ ուշագրավ մարդկանց սուրբ գրություններից, ովքեր չեն եղել ուշադրության կենտրոնում, սակայն ողջ պատմության ընթացքում ապացուցել են, որ իրենք իսկապես հերոսներ են:

Շատերը, ովքեր կարդում են մեծ մարգարե Նեփիի պատմությունը, գրեթե լիովին անտեսում են Լեքիի մեկ այլ արժեքավոր որդուն, ում անունը Սամ էր: Նեփին ողջ Մորմոնի Գրքի ամենահայտնի անձանցից մեկն է: Իսկ Սա՞մը: Սամի անունն այնտեղ նշվում է ընդամենը տասն անգամ: Երբ Լեքին խորհուրդներ տվեց և օրհնեց իր ժառանգներին, նա Սամին ասաց.

«Օրհնված ես դու և քո սերունդը. քանզի դու կժառանգես երկիրը քո եղբայր Նեփիի նման: Եվ քո սերունդը կհամարվի նրա սերնդի հետ. և դու կլինես ճիշտ քո եղբոր պես, և քո սերունդը՝ նրա սերնդի պես. և դու օրհնված կլինես քո բոլոր օրերում: (2 Նեփի 4.11:)

Երբ Աբիսը դիպավ լաևանացիների թագուհու ձեռքին, թագուհին բարձրացավ գետնից (տես Ալմա 19.15-29):

Սամը հիմնականում աջակցում և օժանդակում էր իր ավելի հանրաճանաչ երիտասարդ եղբորը, և նա, ի վերջո, ստացավ նույն օրհնությունները, որոնք խոստացվել էին Նեփիին և նրա ժառանգներին: Նեփիին խոստացված ոչ մի բան հետ չպահվեց հավատարիմ Սամից, չնայած, որ մենք շատ քիչ մանրամասներ գիտենք Սամի ծառայության և օժանդակության մասին: Նա գրեթե չճանաչված անձնավորություն էր կյանքում, սակայն նա ակնհայտորեն հաղթական առաջնորդ և հաղթող է հավերժության գրքում:

Շատերն իրենց ներդրումներն անում են խոնարհ ձևով: Իսմայելը ճամփորդեց Նեփիի ընտանիքի հետ անձնական մեծ զոհաբերության շնորհիվ, տանելով «շատ չարչարանքներ, քաղց,

ծարավ և հոգնածություն»: (1 Նեփի 16.35:) Ապա, այս բոլոր չարչարանքների ընթացքում, նա մահացավ անապատում: Մեզանից մի քանիսը նույնիսկ կարող են սկսել հասկանալ նման մարդու զոհաբերությունը այդ հին ժամանակներում և պայմաններում: Հավանաբար, եթե մենք լինեինք ավելի դյուրըմբռնող և հասկացող, մենք նույնպես կսգայինք, ինչպես նրա դուստրերն արեցին անապատում, քանի որ նման մի մարդ տվեց և հրաժարվեց շատ բաներից, որպեսզի մենք կարողանանք ունենալ Մորմոնի Գիրքն այսօր:

Նման տղամարդկանց և կանանց անուններ և հիշողություններ, ովքեր «ոչ պակաս պիտանի» էին, բազմաթիվ են Մորմոնի Գրքում: Լինի դա մայր Սարիան կամ աղախին Աբիսը՝ լամանացի թագուհու ծառան, յուրաքանչյուրը կատարել են ներդրումներ, որոնք աննկատ են եղել մարդկային աչքի համար, սակայն չեն վրիպել Աստծո աչքից:

Մենք ունենք սուրբ գրության ընդամենը տասներկու հատվածներ, որոնք վերաբերում են Մոսիայի՝ Զարահեմլայի երկրի թագավորի և հայտնի Բենիամին թագավորի հոր կյանքին: Այնուամենայնիվ, մարդկանց մատուցած նրա ծառայությունն էական նշանակություն ունեցավ: Նա առաջնորդեց մարդկանց «մեծաքանակ քարոզներով և մարգարեացումներով» և նրանք «շարունակ խրատվում էին Աստծո խոսքով»: (Օմնի1.13:) Լիմքին, Ամուղեկը և Պառանը, ում նամակում առկա էր մեծահոգություն չմեղադրել, երբ իրեն շատ անարդարացիորեն մեղադրել էին, այլ օրինակ են այնպիսի մարդկանց, ովքեր անձնվիրաբար ծառայել են ուրիշների փառքի ստվերի ներքո:

Զինվոր Թեանկումը, ով զոհաբերեց իր իսկ կյանքը, կամ Լաքոնիուսը՝ գլխավոր դատավորը, ով սովորեցրեց մարդկանց ապաշխարել Գադիանթոնի հետ կապված խնդիրների ժամանակ, կամ Օմներ և Հիմնի միսիոներները, որոնց մասին գրեթե ոչինչ չի նշվում, բոլորն էլ «ոչ պակաս պիտանի» էին, քան իրենց զուգընկերները, չնայած, որ նրանք սուրբ գրություններում շատ քիչ ուշադրության են արժանացել:

Մենք շատ բան չգիտենք Սիբլոնի՝ Ալմայի հավատարիմ որդու մասին, ում պատմությունը միախառնված է Հելամանի՝ ապագա առաջնորդի և Կորիանթոնի՝ օրինազանցի պատմության հետ. սակայն նշանակալից է այն, որ նա նկարագրվում

է որպես «արդար մարդ, [ով] քայլում էր ուղիղ Աստծո առաջ»: (Ալմա 63.2:) Մեծ մարգարե Նեփիին, ում մասին նշվում է Հելամանի գրքում, ուներ Լեքի անունով եղբայր, ում մասին թվում է, թե անցողակի է նշվում, սակայն նշվում է, որ «ամենևին հետ չէր մնում [Նեփիից], ինչ վերաբերում է արդարությանը պատկանող բաներին»: [Հելաման 11.19, տես նաև հատված 18:][6]

3

Չնայած, որ մենք միգուցե հայտնի չլինենք, մենք կարող ենք մեծ ծառայություն մատուցել թագավորությունում:

Իհարկե, մեր տնտեսությունում նույնպես կան պիտանի անհատների նման օրինակներ: Օլիվեր Գրենջերը խոնարհ, աջակցող անձնավորություն է վերջին օրերում, ում Տերը հիշել է Վարդապետություն և Ուխտերի 117 բաժնում: Օլիվերի անունը միգուցե անծանոթ լինի շատերին, ուստի, օգտվելով առիթից, ես կցանկանայի ներկայացնել ձեզ այս վաղ շրջանի աննկուն անձնավորությանը:

Օլիվեր Գրենջերը տասնմեկ տարով մեծ էր Ջոզեֆ Սմիթից և, ինչպես Մարգարեն, Նյու Յորքի հյուսիսից էր: Երբ Օլիվերը երեսուներեք տարեկան էր, խիստ ցրտերի ու ցրտահարության պատճառով նա գրեթե կորցրել էր իր տեսողությունը: Անկախ իր սահմանափակ տեսողությունից, նա երեք լիաժամկետ միսիա ծառայեց: Նա նաև աշխատեց Կիրթլենդի Տաճարի վրա և ծառայեց Կիրթլենդի բարձրագույն խորհուրդում:

Երբ Սրբերից շատերը ստիպված եղան հեռանալ Կիրթլենդից, Օհայո, Եկեղեցին որոշ պարտքեր թողեց չմարված: Օլիվերն ընտրվեց, որպեսզի ներկայացներ Ջոզեֆ Սմիթին և Առաջին Նախագահությանը, հետ վերադառնալով Կիրթլենդ՝ Եկեղեցու բիզնեսները կարգավորելու համար: Այս հանձնարարության մասին Վարդապետություն և Ուխտերում գրված է. «Հետևաբար, թող նա լրջորեն պայքարի իմ Եկեղեցու Առաջին Նախագահության փրկագնման համար, ասում է Տերը»: (ՎևՈւ 117.13:)

Նա այս հանձնարարությունը կատարելիս այնքան էր գոհացրել ներգրավված պարտատերերին, որ նրանցից մեկը գրել էր. «Հեռավոր Արևելք տեղափոխված մարդկանց անավարտ բիզնեսները կարգավորելիս Օլիվեր Գրենջերի ղեկավարությունը մարման նրանց խոստումը պահելու և դրանով նրանց անարատությունը հաստատելու հարցում իսկապես գովեստի

էր արժանի և խորին հարգանք ու երախտագիտության հուշեր են արթնացնում իմ մեջ»: (Horace Kingsbury, as cited in Joseph Smith, *History of the Church,* 3:174.)

Երբ Օլիվերը Կիրթլենդում էր, որոշ մարդիկ, ներառյալ ընդդիմացող Եկեղեցու անդամները, ջանքեր էին գործադրում Առաջին Նախագահությանը հեղինակազրկելու և նրանց ազնվությունը հարցականի տակ դնելու համար՝ տարածելով կեղծ մեղադրանքներ: Օլիվեր Գրենջերը իսկապես ամեն բան արեց «Առաջին Նախագահության փրկագնման համար»՝ իր հավատարիմ ծառայության միջոցով: . . . Օլիվեր Գրենջերի վերաբերյալ Տերն ասել է. «Նրա անունը պիտի պահվի սրբազան հիշողության մեջ՝ սերնդե-սերունդ՝ հավիտյանս հավիտենից»: (ՎԱՈ 117.12:) «Ես վեր կբարձրացնեմ իմ ծառա Օլիվերին, և լավ անվան կարժանացնեմ նրան երկրի վրա ու իմ մարդկանց մեջ՝ նրա հոգու ազնվության շնորհիվ»: (*History of the Church,* 3:350.)

Երբ 1841 թվականին նա մահացավ, չնայած, որ Կիրթլենդի տարածքում մի քանի Սրբեր և Սրբերի մի քանի ընկերներ էին մնացել, Օլիվեր Գրենջերի թաղման արարողությանը հարևան քաղաքներից եկել էին բազմաթիվ մարդիկ:

Չնայած, որ Օլիվեր Գրենջերն այդքան էլ ճանաչված չէ այսօր, ինչպես Եկեղեցու վաղ շրջանի այլ ղեկավարներ, այնուամենայնիվ, նա մեծ ու կարևոր մարդ էր այն ծառայության մեջ, որը մատուցեց արքայության համար: Եվ եթե նույնիսկ միայն Տերը հիշի նրա անունը, դա բավարար օրհնություն կլինի նրա համար, կամ մեզանից յուրաքանչյուրի համար:[7]

4

Նեփին մի օրինակ է, ով հիշում էր Աստծուն որպես իր ուժի և օրհնությունների աղբյուր:

Կարծում եմ, որ մենք պետք է գիտակցենք, որ հոգևոր վտանգ կարող է սպառնալ նրանց, ովքեր սխալ են հասկանում միշտ ուշադրության կենտրոնում լինելու առանձնահատկությունը: Նրանց մոտ կարող է հայտնի դառնալու ցանկություն առաջ գալ և այդպիսով մոռանան մատուցած ծառայության նշանակությունը:

Մենք մեզ չպետք է թույլ տանք կենտրոնանալ հայտնի դառնալու ցանկության վրա կամ հրապուրիչ փառասիրությամբ փոխարինենք աշխատանքի իրական էությունը, որը հաճախ

անհայտ է մնում, սակայն արժանանում է Աստծո ուշադրությանը, եթե նույնիսկ այն չի լուսաբանվում օրվա նորություններում: Ի դեպ, ծափահարությունների և ուշադրության արժանանալը կարող են հոգևոր առումով դառնալ Աքիլլեսյան գարշապար նույնիսկ մեր մեջ եղած առավել շնորհալիների համար:

Եթե երբևէ ձեր կյանքում դուք կբախվեք հայտնի դառնալու ցանկության հետ, լավ կլինի, որ դուք հետևեք սուրբ գրությունների այն մարդկանց օրինակին, ովքեր մեծ համբավ էին վայելում: Նեփին հրաշալի օրինակներից մեկն է: Այն ամենից հետո, ինչ նա իրականացրեց իր ընտանիքի հետ անապատում ճամփորդելիս, նա շարունակում էր կենտրոնացած մնալ բաների վրա, որոնք ամենակարևորն էին: Նա ասաց.

«Եվ երբ ես ցանկանում եմ ուրախանալ, սիրտս հառաչում է՝ իմ մեղքերի պատճառով. այնուամենայնիվ, ես գիտեմ՝ ում եմ ապավինել:

Իմ Աստվածն է եղել իմ ապավենը. նա իմ չարչարանքների միջով առաջնորդել է ինձ անապատում, և նա պահպանել է ինձ մեծ անդունդի ջրերի վրա:

Նա լցրել է ինձ իր սիրով՝ այն աստիճան, որ մարմինս այրվում է:

Նա ամաչեցրել է իմ թշնամիներին՝ ստիպելով նրանց դողալ իմ առջև»: (2 Նեփի 4.19-22:)

Ուշադրության կենտրոնում լինելը երբեք չկուրացրեց Նեփիին, որ նա հիշեր իր ուժի և օրհնությունների աղբյուրը:[8]

5

Երբ մենք հասկանում ենք, թե ինչու ենք ծառայում, մենք չենք մտահոգվի այն մասին, թե որտեղ ենք ծառայում:

Ուշադրության կենտրոնում եղած ժամանակ կարող է օգտակար լինել մեզ համար պատասխանելը հետևյալ հարցին՝ Ինչո՞ւ ենք մենք ծառայում: Երբ մենք հասկանանք, թե ինչո՞ւ, մենք չենք մտահոգվի այն մասին, թե որտեղ ենք ծառայում:

Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտ. ուսուցանել է այս կարևորագույն սկզբունքն իր իսկ կյանքում: Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթի մահից հետո 1951թ. գերագույն համաժողովի ժամանակ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը հաստատվեց որպես Եկեղեցու Նախագահ: Մինչ այդ Նախագահ Քլարկը ծառայել էր որպես

Մենք «ամենաերջանիկն ու ամենահաջողակն ենք կյանքում», երբ մեր «հետաքրքրությունները զուգորդվում են ուրիշներին աջակցելով և օգնելով նրանց՝ գտնելու ճանապարհը»։

Նախագահ Հեբեր Ջ. Գրանտի և հետո Նախագահ Ջորջ Ալբերտ Սմիթի Առաջին Խորհրդական։ Նախագահ Մակքեյը եղել էր Երկրորդ Խորհրդական այդ երկու մարդկանց համար։

Համաժողովի վերջին նիստի ժամանակ, երբ ներկայացվեցին Եկեղեցու գործերը, Եղբայր Ստեփան Լ. Ռիչարդսը կանչվեց ծառայելու Առաջին Նախագահությունում և հաստատվեց որպես Առաջին Խորհրդական։ Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտ. ուսուցանել է այս կարևորագույն սկզբունքն իր իսկ կյանքում։ Եկեղեցու պաշտոնյաներին հաստատելուց հետո Նախագահ Մակքեյը բացատրեց, թե ինչու էր նա այդ կարգով ընտրել իր խորհրդականներին։ Նա ասաց.

«Ես զգացի, որ այս ընտրությունում առաջնորդող սկզբունքը պետք է լինի [Տասներկուսի] Խորհրդում ավագությանը հետևելը։ Այս երկու մարդիկ նստած էին իրենց տեղերում Եկեղեցու այդ նախագահող օղակում, և ես զգացի, որ նպատակահարմար կարող էր լինել շարունակելը այդ նույն ավագության սկզբունքը

Առաջին Նախագահության նոր քվորումում»: (In Conference Report, 9 April 1951, p. 151.)

Այնուհետև, Նախագահ Քլարկին խնդրեցին խոսել Նախագահ Մակքեյից հետո: Այդ առիթով նա հակիրճ ելույթ ունեցավ, սակայն ուսուցանեց մի զորեղ դաս. «Տիրոջը ծառայելիս կարևոր չէ, թե որտեղ ես ծառայում, այլ թե ինչպես ես ծառայում: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մարդը գրավում է այն տեղը, որտեղ նա պատշաճ կերպով կանչվում է, որին նա ոչ ձգտում է, ոչ էլ հրաժարվում է: Ես խոստանում եմ Նախագահ Մակքեյին և Նախագահ Ռիչարդսին լիովին հավատարիմ նվիրված ծառայություն այն հանձնարարությունները կատարելիս, որոնք կտրվեն ինձ, իմ ողջ ուժի և կարողությունների սահմաններում, և այնքան ժամանակ, որքան նրանք ինձ հնարավորություն կտան կատարելու դրանք, որքան էլ ես անհամապատասխան լինեմ»: (Ibid., p. 154.)

Դասը, որն ուսուցանեց Նախագահ Քլարկը, մեկ այլ ձևով արտահայտված է Մեդի Մքգուայրի այս բանաստեղծության մեջ, որը կրկնվել է շատ անգամներ.

«Հայր, որտե՞ղ ես պետք է աշխատեմ այսօր»:
Եվ իմ սերը հորդեց ջերմ ու անշահախնդիր:
Ապա Նա նշեց մի փոքրիկ վայր
Եվ ասաց. «Հոգա դրա համար հանուն ինձ»:
Ես անմիջապես պատասխանեցի. «Օ՜, ոչ. ոչ դա:
Ինչու, ոչ ոք երբևէ չի տեսնի,
Նշանակություն չունի, թե որքան լավ կկատարվի իմ աշխատանքը.
Այդ փոքրիկ վայրն ինձ համար չէ»:
Եվ բառերը, որոնք Նա ասաց, խիստ չէին.
Նա քնքշորեն պատասխանեց ինձ.
«Օ՜, իմ փոքրիկ, քնքիր քո սիրտը:
Դու աշխատում ես նրա՞նց համար, թե՞ ինձ համար:
Նազարեթը փոքրիկ վայր էր,
Ինչպես նաև Գալիլեան»:

[Տես *Best-Loved Poems of the LDS People,* comp. Jack M. Lyon and others (1996), 152:]

Բենիամին թագավորը հայտարարել է.«Ահա, ես ասում եմ ձեզ՝ քանի որ ես ասացի, որ ես անցկացրել եմ իմ օրերը ձեզ ծառայելով, ես չեմ ցանկանում պարծենալ, քանզի ես միայն եղել եմ Աստծո ծառայության մեջ: Եվ ահա, ես ասում եմ ձեզ այս բաները, որ դուք կարողանաք իմաստություն սովորել. որ դուք կարողանաք սովորել, որ երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք»: (Մոսիա 2.16-17:)[9]

6

Մենք պետք է ծառայենք հավատարմորեն և խոնարհաբար՝ զգոն լինելով՝ անկախ ուրիշների գովասանքից:

Նա է ամենաերջանիկը և ամենահաջողակը կյանքում, ում հետաքրքրությունները զուգորդվում են ուրիշներին աջակցելով և օգնելով նրանց՝ գտնելու ճանապարհը:

Երկաթուղային անցումի ազդանշանը, որը զգուշացնում է մեզ կանգնել, նայել և լսել, կարող է ուղեցույց լինել մեզ համար: Կանգ առեք, մինչ մենք առաջ ենք սլանում այս կյանքում: Փնտրեք այն բոլոր ընկերական, մտահոգ, սիրալիր արարքները, որոնք մենք կարող ենք կատարել, և բոլոր փոքրիկ մարդկային կարիքները, որոնք մենք կարող ենք հոգալ: Լսեք ուրիշներին և ծանոթացեք նրանց հույսերի և խնդիրների հետ, որպեսզի մենք կարողանանք փոքր միջոցներով աջակցել նրանց հաջողություններին և երջանկությանը:[10]

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է . . . .«Քրիստոսանման ծառայությունը վեհացնում է: . . . Տերը խոստացել է, որ նրանք, ովքեր կորցնում են իրենց կյանքը ուրիշներին ծառայելով, կգտնեն իրենց: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է մեզ, որ մենք պետք է «մաշենք մեր կյանքը»՝ իրականացնելով Նրա նպատակները (ՎԵՈՒ 123.13)»: (*Ensign,* Nov. 1989, pp. 5–6.)

Եթե զգում եք, որ ձեր արած գործերից շատերը ձեզ շատ հայտնի չեն դարձնում, քաջացեք: Լավագույն մարդկանց մեծ մասը, ովքեր երբևէ ապրել են, նույնպես շատ հայտնի չեն եղել: Ծառայեք և աճեք՝ հավատարմորեն և խոնարհաբար: Զգոն եղեք՝ անկախ ուրիշների գովասանքից: Հիսուսը Լեռան Քարոզում ասել է.

«Զգոյշ կացէք, որ ձեր ողորմութիւնը մարդկանց առաջին չանէք, նորանցից տեսնուելու համար, եթէ ոչ՝ վարձք չունիք ձեր Հօրիցն, որ երկնքումն է:

Արդ՝ երբոր ողորմութիւն անես, փող մի հնչեցնիր քո առաջին. ինչպէս կեղծաւորներն են անում ժողովարանների մէջ եւ փողոցների մէջ, որ փառաւորուին մարդկանցից: Ճշմարիտն ասում եմ ձեզ. նորանք իրանց վարձքն առած են:

Բայց դու երբոր ողորմութիւն անես, թող չիմանայ քո ձախ ձեռքը, թե ինչ է գործում քո աջը.

Որպէս զի քո ողորմութիւնը ծածուկ լինի, եւ քո Հայրն՝ որ ծածուկ տեղը տեսնում է, յայտնապէս կհատուցանէ քեզ»: (Մատ. Զ.1-4:)

Թող որ մեր Երկնային Հայրը միշտ այդպես պարգևատրի ձեզ:[11]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Ի՞նչ է մեզ փորձում օգնել հասկանալ Նախագահ Հանթերը, նշելով, որ Հելամանը և նրա եղբայրները «ոչ պակաս պիտանի» էին, քան զորապետ Մորոնին: (Տես բաժին 1:) Ինչպե՞ս կարող է այս հասկացողությունն օգնել ձեզ:
- Ի՞նչ կարող են մեզ ուսուցանել բաժին 2-ի սուրբ գրքից բերված օրինակները: Ինչպե՞ս կարող են այս օրինակներն ազդել մեր իսկ զգացմունքների վրա, երբ մենք ծառայում ենք: Ինչպե՞ս եք դուք օրհնվել ուրիշների կողմից, ովքեր ծառայել են լուռ, առանց գովասանքի ակնկալիքի:
- Ի՞նչ կարող ենք սովորել այն պատմությունից, որը Նախագահ Հանթերը պատմում է Օլիվեր Գրենջերի մասին: (Տես բաժին 3:) Ինչո՞ւ մեզ չպիտի մտահոգի գնահատանքի արժանանալու փաստը, երբ մենք ծառայում ենք:
- Ինչպե՞ս կարող է «ուշադրության կենտրոնում լինելու, հանրաճանաչության» կամ համբավի ձգտումը վտանգավոր լինել: (Տես բաժին 4:) Ի՞նչ կարող է ձեզ ուսուցանել Նեփիի օրինակն այն մասին, թե ինչպես մնալ «հաստատուն այն բաներում, որոնք ամենակարևորն են»:

- Վերանայեք Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտ. պատմությունը բաժին 5-ում: Ի՞նչն է ձեզ վրա տպավորություն գործում Նախագահ Քլարկի վերաբերմունքի և խոսքերի հետ կապված: Խորհեք «Ինչո՞ւ եմ ես ծառայում» հարցին տրված ձեր պատասխանի շուրջ: Ինչպե՞ս մենք կարող ենք զարգացնել լավագույնը տալու վերաբերմունք՝ անկախ այն բանից, թե որտեղ ենք ծառայում:
- Բաժին 6-ում Նախագահ Հանթերն անդրադառնում է Տիրոջ խոստումին, որ «նրանք, ովքեր կորցնում են իրենց կյանքը ուրիշներին ծառայելով, կգտնեն իրենց» (տես Մատ. Ժ.39, 16.25): Ի՞նչ է դա նշանակում: Ինչպե՞ս եք համոզվել դրա ճշմարտացիության մեջ: Ինչպե՞ս է ծառայությունը ձեզ երջանկություն բերել:

Սոնչվող սուրբ գրություններ

Մատթեոս Զ.2–7, 24, Ի.25–28, Հակոբոս Ա.27, ՎԵՈՒ 76.5–7, 121.34–37

Օգնություն ուսումնասիրողին

«Կիսվեք նրանով, ինչ սովորում եք: Երբ դա անեք, ձեր մտքերն ավելի հստակ կդառնան և հիշողության մեջ պահելու ձեր ուժը կմեծանա» (*Ուսուցում. չկա ավելի մեծ կոչում* [1999], 17):

Հղումներ

1. Neal A. Maxwell, "Meek and Lowly" (Brigham Young University devotional, Oct. 21, 1986), 8; speeches.byu.edu.
2. Thomas S. Monson, "President Howard W. Hunter: A Man for All Seasons," *Ensign,* Apr. 1995, 31.
3. James E. Faust, "Howard W. Hunter: Man of God," *Ensign,* Apr. 1995, 27.
4. Jon M. Huntsman Sr., "A Remarkable and Selfless Life," *Ensign,* Apr. 1995, 24.
5. "No Less Serviceable," *Ensign,* Apr. 1992, 64–65.
6. "No Less Serviceable," 65.
7. "No Less Serviceable," 65–66.
8. "No Less Serviceable," 66.
9. "No Less Serviceable," 66-67.
10. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 267.
11. "No Less Serviceable," 67.

«Եթե մենք ցանկանում ենք հետևել Քրիստոսի օրինակին և քայլել նրա հետքերով, մենք պետք է ձգտենք անել նույն բաները, ինչ նա արեց»։

Հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին

«Ամեն հնարավոր առիթով մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. «Ի՞նչ կաներ Հիսուսը», և ապա լինենք ավելի խիզախ՝ գործելու պատասխանին համահունչ»:

Հովարդ Վ. Հանթերի կյանքից

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, ով ծառայել է որպես Նախագահ Հանթերի խորհրդական, ասել է, որ նա «ապրել է համաձայն այն ամենի, ինչ ինքն ուսուցանել է, հետևելով Փրկչի օրինակին, ում նա ծառայել է»:[1]

Մի մտերիմ ընկեր նշել է, որ «բնավորության գծերը, որոնք առկա են եղել մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի մեջ, գեղեցիկ ձևով նշանավորվել են Նախագահ Հանթերի ուշագրավ և անձնվեր կյանքում: Ողջ մարդկությանը նա իրեն ընկեր է համարել»:[2]

Մեկ այլ գործընկեր, ով սերտորեն համագործակցել է նրա հետ ավելի քան երեք տասնամյակ, ասել է. «[Նա] բնազդով գիտեր ուղին, որին պետք է հետևեր: Այդ ուղին կլիներ իր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հատկանիշներն ընդօրինակելը»:[3]

Իր ծառայության ընթացքում Նախագահ Հանթերը սիրով քաջալերել է Եկեղեցու անդամներին՝ հետևել Փրկչի օրինակին: Որպես Եկեղեցու Նախագահ իր առաջին ելույթի ժամանակ նա ասել է.

«Ես հրավիրում եմ Եկեղեցու բոլոր անդամներին ապրելու երբևէ ամենամեծ ուշադրությունը սևեռելով Տեր Հիսուս Քրիստոսի կյանքի և օրինակի, հատկապես Նրա ցուցաբերած սիրո, հույսի և կարեկցանքի վրա:

Ես աղոթում եմ, որ մենք կարողանանք ավելի շատ բարություն, ավելի շատ քաղաքավարություն, ավելի շատ խոնարհություն,

համբերատարություն և ներողամտություն ցուցաբերել միմյանց հանդեպ։ Մենք միմյանց հետ կապված մեծ սպասելիքներ ունենք, և բոլորս էլ կարող ենք կատարելագործվել։ Մեր աշխարհը խիստ կարիք ունի Աստծո պատվիրաններով կարգավորված կյանքի։ Սակայն ուղին, որով մենք պետք է խրախուսենք դա, ինչպես Տերն է ասել Մարգարե Ջոզեֆին Լիբերթի բանտի ցուրտ խորքերում, պետք է լինի «համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով. . . . առանց կեղծավորության և ասաց նենգության» (ՎևՈւ 121.41-42)»։[4]

Հովարդ Վ. Հանթերի ուսմունքները

1

Հիսուս Քրիստոսը կատարյալ օրինակ հանդիսացավ մեզ համար։

Լույս լինել նշանակում է օրինակ լինել, լինել մեկը, ով օրինակ է ծառայում և ում օրինակին կարող են հետևել ուրիշները։ . . . [Մենք ուխտել ենք] հետևել Քրիստոսին՝ մեծ օրինակին։ Մենք պարտավորություն ունենք սովորելու նրանից այն, ինչ նա ուսուցանել է և այն, ինչ նա արել է այս աշխարհում իր ծառայության ժամանակ։ Սովորելով այս դասերը՝ մենք պարտավորություն ենք կրում հետևելու նրա օրինակին, և սրանք են այն մի քանի օրինակները, որոնք նա տվել է մեզ.

1. Քրիստոսը հնազանդ և քաջ էր նախաերկրային կյանքում, ուստի արտոնություն ստացավ գալու մահկանացու կյանք և ստանալու մսից ու ոսկորից մարմին։

2. Նա մկրտվեց, որպեսզի բացվեր սելեստիալ արքայության դուռը։

3. Նա կրեց քահանայություն և ստացավ ավետարանի բոլոր փրկագործող և վեհացում տվող արարողությունները։

4. Հիսուսը մոտ երեք տարի ծառայեց, ուսուցանելով ավետարանը, վկայելով ճշմարտության մասին և ուսուցանելով մարդկանց, թե ինչ պետք է նրանք անեն, որ գտնեն ուրախություն և երջանկություն այս կյանքում և հավերժական փառք՝ գալիք աշխարհում։

5. Նա կատարեց արարողություններ, ինչպիսիք են երեխաներին օրհնելը, մկրտությունները, հիվանդներին սպասավորելը և քահանայության կարգումները։

6. Նա հրաշքներ կատարեց։ Նրա հրամանով կույրերը տեսնում, խուլերը լսում, կաղերը քայլում և մահացածները կենդանանում էին։

7. Ենթարկվելով Հոր մտածելակերպին և կամքին՝ Հիսուսն ապրեց կատարյալ կյանքով, առանց մեղքի, և ձեռք բերեց աստվածային բոլոր հատկանիշները։

8. Նա հաղթեց աշխարհին. այսինքն, նա սանձեց ամեն կիրք և բարձրացավ զգայական և ցանկասեր մակարդակից վեր, որպեսզի ապրեր ու քայլեր ըստ Հոգու առաջնորդության։

9. Նա իրականացրեց Քավությունը, որի միջոցով փրկագնեց մարդկանց [հոգևոր և ֆիզիկական] մահից, որն առաջ էր եկել Ադամի անկման պատճառով։

10. Այժմ, հարություն առած և փառավորված, նա ձեռք է բերել ողջ զորությունը երկնքում և երկրի վրա, ստացել է կատարելություն և մեկ է դարձել Հոր հետ։

Եթե մենք ցանկանում ենք հետևել Քրիստոսի օրինակին, մենք պետք է ձգտենք անել նույն բաները, ինչ նա արեց։[5]

Կարևոր է հիշել, որ Հիսուսը կարող էր մեղք գործել, որ նա կարող էր չդիմադրել, որ կյանքի և փրկության ծրագիրը կարող էր խափանվել, սակայն նա հավատարիմ մնաց։ Եթե չլիներ սատանայի գայթակղություններին զիջելու հնարավորությունը, ապա արդյունքում չէր լինի իրական փորձություն, իրական հաղթանակ։ Եթե նա զրկվեր մեղք գործելու կարողությունից, նա կզրկվեր իր ազատ ընտրության հնարավորությունից։ Նա էր, որ եկել էր պաշտպանելու և ապահովելու մարդու կամքի ազատությունը։ Նա պետք է պահպաներ մեղք գործելու կարողությունը և ունակությունը, եթե նա ցանկանար դա անել։[6]

Իր մահկանացու կյանքի վերջում Հիսուսը ցուցաբերում էր իր հոգու վեհությունը և իր ուժի մեծությունը։ Նույնիսկ այս վերջին պահերին նա եսասիրաբար չէր տարվել իր անձնական վշտով կամ վերահաս տանջանքների մտորումներով։ Նրան մտահոգում էին իր սիրելի հետևորդների ներկա և ապագա

կարիքները։ Նա գիտեր, որ նրանց անձնական ապահովությունը՝ անհատապես և որպես եկեղեցի, կախված էր միայն իրար հանդեպ իրենց անվերապահ սիրուց։ Թվում էր, թե Նրա ողջ եռանդն ուղղված էր նրանց կարիքներին, այսպիսով նա օրինակով սովորեցնում էր այն, ինչ ուսուցանում էր ցուցումներ տալով։ Նա նրանց ասում էր մխիթարության խոսքեր, տալիս էր պատվիրան և նախազգուշացում։[7]

Սուրբ երկրում իր հոտի մեջ մահկանացու կյանքի ծառայության ընթացքում, ինչպես նաև մահից հետո արևմտյան կիսագնդում իր ցրված ոչխարների մեջ ծառայության ընթացքում Տերը ցուցաբերեց իր սերը և մտահոգությունը անհատի հանդեպ։

Խմբված բազմության մեջ նա զգաց մի կնոջ եզակի հպումը, ով ազատում էր փնտրում մի հիվանդությունից, որի պատճառով տառապել էր տասներկու տարի։ (Տես Ղուկաս Ը.43-48։) Մեկ այլ առիթով, նա վեր կանգնեց նախապես լոկ դատապարտելու վրա կենտրոնացած ամբոխից և նրա մեղքից, ով կանգնած էր մեղադրանքի առաջ։ Հավանաբար զգալով ապաշխարելու նրա ցանկությունը՝ Քրիստոսն ընտրեց տեսնելու անհատի արժեքը և առաջ ուղարկելու նրան՝ այլևս մեղք չգործելու։ (Տես Հովհաննես Ը.1–11։) Մեկ այլ առիթով «նա վերցրեց նրանց փոքր երեխաներին, *մեկ առ մեկ,* և օրհնեց նրանց, և նրանց համար աղոթեց Հորը»։ (3 Նեփի 17.21, շեշտադրումն ավելացված է։)

Մինչ արագ մոտենում էին Գեթսեմանիի և Գողգոթայի տառապանքները, երբ շատ բաներ կային ծանրացած նրա մտքում, Փրկիչը ժամանակ տրամադրեց նկատելու համար որբևայրուն, ով իր լուման էր զցում գանձանակը։ (Տես Մարկոս ԺԲ.41-44։) Նմանապես, նրա սևեռուն հայացքից չվրիպեց ցածրահասակ Զաքեոսը, ով անկարող լինելով տեսնել Փրկչի շուրջը հավաքված բազմության պատճառով, բարձրացել էր ժանտաթզենու ծառը, որպեսզի տեսներ Աստծո Որդուն։ (Տես Ղուկաս ԺԹ.1–5։) Մինչ տանջվում էր խաչի վրա, նա կարողացավ նայել իր անձնական տառապանքներից այն կողմ և մտահոգվելով օգնության հասնել լացող կնոջը, ով իրեն կյանք էր տվել։ (Տես Հովհաննես ԺԹ.25-27։)

Ինչպիսի հրաշալի օրինակ, որին մենք կարող ենք հետևել։ Նույնիսկ մեծ անձնական վշտի ու ցավի մեջ, մեր Օրինակը օգնության հասավ օրհնելու ուրիշներին։ . . . Նրա կյանքը

կենտրոնացած չէր բաների վրա, որոնք նա չուներ։ Դա ուրիշներին օգնության հասնելու ծառայության կյանք էր։[8]

2

Եկեք հետևենք Աստծո Որդուն կյանքի բոլոր ուղիներում և քայլերում։

Ամենակարևոր հարցերից մեկը, որը երբևէ տրվել է մահկանացու մարդկանց, տվել է հենց ինքը՝ Աստծո Որդին՝ աշխարհի Փրկիչը։ Նոր Աշխարհում մի խումբ աշակերտների, մի խմբի, որը հուզված սպասում էր նրա կողմից ուսուցանվելուն և էլ ավելի հուզված, քանի որ նա շուտով հեռանալու էր նրանցից, նա հարցրեց. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել»։ Ապա, հենց նույն պահին նա տվեց այս պատասխանը. «Ճիշտ ինչպես ես եմ» (3 Նեփի 27.27)։

Աշխարհը լի է մարդկանցով, ովքեր ցանկանում են մեզ ասել. «Արա այն, ինչ ասում եմ»։ Անկասկած մենք պակաս չունենք խորհուրդ տվողների յուրաքանչյուր խնդրի շուրջ։ Սակայն այնքան քչերը կան, ովքեր պատրաստ են ասելու. «Արա այնպես, ինչպես ես եմ անում»։ Եվ իհարկե մարդկության պատմության մեջ միայն Մեկը իրավունք ուներ և պատշաճ էր, որ աներ այդ հայտարարությունը։ Պատմությունը տալիս է լավ տղամարդկանց ու կանանց բազմաթիվ օրինակներ, սակայն նույնիսկ ամենալավ մահկանացուներն ունեն այս կամ այն թերությունը։ Ոչ ոք չէր կարող ծառայել որպես կատարյալ օրինակ, ոչ էլ որպես անթերի օրինակ, որին կարելի էր հետևել, որքան էլ բարի լինեին նրանց նպատակները։

Միայն Քրիստոսը կարող է լինել մեր կատարյալ օրինակը, մեր «առաւօտեան պայծառ աստղը» (Հայտնություն ԻԲ.16)։ Միայն նա կարող է առանց *որևէ* վերապահման ասել. «Հետևեք ինձ, սովորեք ինձանից և արեք այն բաները, որոնք տեսաք ինձ անելիս։ Խմեք իմ ջրից և կերեք իմ հացից։ Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը։ Ես եմ օրենքը և լույսը։ Նայեք ինձ և դուք կապրեք։ Իրար սիրեք, ինչպես ես ձեզ սիրեցի» (տես Մատ. ԺԱ.29, ԺԶ.24, Հովհ. Դ.13–14, Զ.35, 51, Է.37, ԺԳ.34, ԺԴ.6, 3 Նեփի 15.9, 27.21)։

Օ՜հ, ինչպիսի պարզ և արձագանքող կոչ։ Ինչպիսի հստակություն և օրինակ՝ անորոշության և օրինակի բացակայության օրերում։ . . .

. . . Որքան երախտապարտ մենք պետք է լինենք, որ Աստված աշխարհ ուղարկեց իր Միածին Որդուն . . . ճիշտ ապրելակերպի, բարության, գթության և կարեկցանքի կատարյալ օրինակ ծառայելու համար, որպեսզի մնացած մարդկությունը կարողանա իմանալ, թե ինչպես ապրել, իմանալ, թե ինչպես կատարելագործվել և իմանալ, թե ինչպես դառնալ ավելի աստվածանման։

Եկեք հետևենք Աստծո Որդուն կյանքի բոլոր ուղիներում և քայլերում։ Եկեք դարձնենք նրան մեր օրինակը և մեր առաջնորդը։ Ամեն հնարավոր առիթով մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. «Ի՞նչ կաներ Հիսուսը», և ապա լինենք ավելի խիզախ՝ գործելու պատասխանին համահունչ։ Մենք պետք է հետևենք Քրիստոսին այդ բառի բուն իմաստով։ Մենք պետք է այնպես անենք իր աշխատանքը, ինչպես նա էր անում իր Հոր աշխատանքը։ Մենք պետք է փորձենք նմանվել նրան, ճիշտ ինչպես Երեխաների Խմբի երեխաներն են երգում. «Փորձեք, փորձեք, փորձեք» (*Children's Songbook,* p. 55)։ Այս մահկանացու կյանքում մեր ուժերի ներածին չափով մենք պետք է գործադրենք ամեն ջանք Քրիստոսին նմանվելու համար, միակ կատարյալ և անմեղ օրինակին, որին երբևէ ականատես է եղել այս աշխարհը։[9]

Կրկին ու կրկին մեր Տերը մահկանացու ծառայության ընթացքում կոչ արեց, որը մի ժամանակ հրավեր էր և մարտահրավեր։ Պետրոսին և նրա եղբայր Անդրեասին Քրիստոսն ասաց. «Իմ ետեւից եկէք, եւ ես ձեզ մարդկանց որսորդ կշինեմ»։ (Մատ. Դ.19։) Հարուստ երիտասարդին, ով հարցրեց, թե ինչ պետք է աներ, որ հավերժական կյանք ունենար, Հիսուսը պատասխանեց. «Գնա ունեցածներդ ծախիր եւ տուր աղքատներին . . . եւ եկ հետեւիր ինձ»։ (Մատ. ԺԹ.21։) Եվ մեզանից յուրաքանչյուրին Հիսուսն ասում է. «Եթէ մէկը ծառայէ ինձ, թող նա իմ ետեւից գայ»։ (Հովհաննես ԺԲ.26։)[10]

Եկեք ուսումնասիրենք Վարդապետի յուրաքանչյուր ուսմունքը և առավելագույնս ձգտենք հետևել նրա օրինակին։ Նա տվել է մեզ «այն ամենը որ կեանքի եւ աստուածապաշտութեան համար պետք է»։ Նա «մեզ կանչեց փառքով եւ առաքինութիւնով» և «ամենամեծ

Ուղիներից մեկը, որով մենք կարող ենք մեր կյանքում հետևել Փրկչի օրինակին, Պետրոսին տրված Նրա պատվիրանին հետևելն է. «Արածեցրու իմ ոչխարները» (Հովհաննես ԻԱ.15–17)։

եւ պատուական խոստմունքներ են տրուած մեզ որ նորանցով հաղորդակից լինինք աստուածային բնութեանը» (Բ Պետ. Ա.3.4)։[11]

Նրանք, ովքեր հետևում են Քրիստոսին, ձգտում են հետևել Նրա օրինակին։ Մեր մեղքերի, թերությունների, վշտերի և հիվանդությունների համար նրա կրած տառապանքները պետք է մղեն մեզ նման կերպ օգնության հասնել մեր շուրջը գտնվողներին՝ գթությամբ և կարեկցանքով։ . . .

. . . Փնտրեք ծառայելու հնարավորություններ։ Չափից ավելի մի մտահոգվեք ձեր հասարակական դիրքի համար։ Հիշո՞ւմ եք Փրկչի խորհուրդը ուղղված նրանց, ովքեր փնտրում են «առաջին աթոռները» կամ «առաջին բազմոցը»։ «Եւ ձեզանից մեծը թող ձեր ծառան լինի»։ (Մատթ. ԻԳ.6, 11։) Կարևոր է գնահատված լինելը։ Սակայն մենք պետք է կենտրոնացած լինենք արդարության, և ոչ թե գնահատանքի, ծառայության, և ոչ թե հասարակական դիրքի վրա։ Հավատարիմ այցելող ուսուցիչը, ով լուռ կատարում է իր աշխատանքն ամիս ամսվա ետևից, նույնքան կարևոր է

Տիրոջ աշխատանքում, որքան նրանք, ովքեր Եկեղեցում զբաղեցնում են, ինչպես ոմանք են տեսնում, ավելի աչքի ընկնող դիրք: Տեսանելիությունը չի հավասարեցվում արժեքի հետ:[12]

3

Մեր փրկությունը կախված է Փրկչին հետևելու մեր վճռականությունից:

Իրեն հետևելու Տիրոջ հրավերը անհատական և անձնական է, և դա համոզիչ է: Մենք չենք կարող ընդմիշտ կանգնած մնալ երկու կարծիքների միջև: Մեզանից յուրաքանչյուրը ինչ-որ մի ժամանակ պետք է կանգնի այդ վճռական հարցի առաջ. «Դուք ո՞վ էք ասում ինձ համար, թէ լինիմ»: (Մատթ. ԺԶ.15:) Մեր անձնական փրկությունը կախված է այդ հարցի մեր պատասխանից և այդ պատասխանին մեր հավատարմությունից: Պետրոսի հայտնած պատասխանը հետևյալն էր. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին» (Մատ. ԺԶ.16): Շատ, շատ վկաներ կարող են տալ նույնատիպ պատասխան նույն զորությամբ, և ես միանում եմ նրանց խոնարհ երախտագիտությամբ: Սակայն մեզանից յուրաքանչյուրը պետք է անձամբ պատասխանի այդ հարցին. եթե ոչ հիմա, ապա հետո, քանի որ վերջին օրը ամեն ծունկ պիտի ծալվի և ամեն լեզու պիտի խոստովանի, որ Հիսուսը Քրիստոսն է: Մեր առջև խնդիր է դրված տալու ճիշտ պատասխանը և համապատասխանաբար ապրելու, քանի դեռ չի եկել հավերժորեն անդառնալի այն պահը, երբ արդեն շատ ուշ է: Քանի որ Հիսուսը իրոք Քրիստոսն է, ի՞նչ պետք է մենք անենք:

Քրիստոսի ամենամեծ զոհաբերությունը կարող է լիարժեք ձևով ցանկալի արդյունք տալ մեր կյանքում, երբ մենք ընդունենք նրան հետևելու հրավերը [տես ՎևՈւ 100.2]: Այս կոչը անպատեհ, անիրական կամ անհնարին չէ: Որևէ անհատի հետևել նշանակում է ուշադիր նայել կամ լսել նրան, ընդունել նրա իշխանությունը, ընդունել նրան որպես ղեկավար և հնազանդվել նրան, աջակցել և կողմնակից լինել նրա գաղափարներին, և ընդունել նրան որպես օրինակ: Մեզանից յուրաքանչյուրը կարող է ընդունել այս մարտահրավերը: Պետրոսն ասել է. «Քրիստոս էլ չարչարուեցաւ եւ ձեզ էլ օրինակ թողեց որ նորա հետքերին հետեւիք» (Ա Պետրոս Բ.21): Ճիշտ ինչպես ուսմունքները, որոնք չեն համապատասխանում Քրիստոսի վարդապետությանը, սխալ

են, այդպես էլ կյանքը, որը չի համապատասխանում Քրիստոսի օրինակին, սխալ ուղղությամբ է ընթանում և չի կարող հասնել ճակատագրի իր բարձրագույն ներուժին: . . .

Արդարությունը պետք է սկսվի մեր իսկ սեփական կյանքում: Այն պետք է մուտք գործի ընտանիքի ապրելակերպի մեջ: Ծնողները պատասխանատվություն են կրում հետևելու Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներին և ուսուցանելու դրանք իրենց երեխաներին [տես ՎԵՈՒ 68.25–28]: Կրոնը պետք է լինի մեր կյանքի մի մասը: Հիսուս Քրիստոսի ավետարանը պետք է մղիչ ուժ հանդիսանա այն ամենի համար, ինչ մենք անում ենք: Պետք է ավելի շատ ձգտումներ ունենանք, որպեսզի հետևենք մեծ օրինակին, որը սահմանել է Փրկիչը, եթե ցանկանում ենք ավելի շատ նմանվել իրեն: Սա դառնում է մեր ամենամեծ մարտահրավերը:[13]

Եթե կարողանանք մեր կյանքում հետևել Վարդապետին և Նրա ուսմունքներն ու օրինակը դարձնենք մեզ համար գլխավոր օրինակ, մեզ համար դժվար չի լինի հաստատուն և հավատարիմ լինել կյանքի ամեն քայլափոխին, քանի որ մենք նվիրված կլինենք վարքի և հավատքի միակ սուրբ չափանիշին: Լինի տանը, թե խանութում, դպրոցում, թե դպրոցն ավարտելուց տարիներ անց, անկախ նրանից լիովին միայնակ կգործենք, թե մի խումբ մարդկանց հետ, մեր ուղին կլինի հստակ և մեր չափանիշները՝ ակնհայտ: Մենք որոշում ենք կայացրել, ինչպես Ալմա մարգարեն է ասել. «կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ [մենք] կարող է լինենք, նույնիսկ մինչև մահ»: (Մոսիա 18.9:)[14]

4

Մենք պետք է տեղ պատրաստենք Քրիստոսի համար:

Այն գիշեր Բեթլեհեմում տեղ չգտնվեց նրա համար իջևանատանը, և սա միակ դեպքը չէր իր մահկանացու կյանքի երեսուներեք տարիների ընթացքում, որ տեղ չէր գտնվում նրա համար: Հերովդեսը զինվորներ ուղարկեց Բեթլեհեմ՝ երեխաներին սպանելու համար: Հիսուսի համար տեղ չկար Հերովդեսի տիրապետության սահմաններում, ուստի նրա ծնողները նրան Եգիպտոս տարան: Իր ծառայության ընթացքում կային շատերը, ովքեր տեղ չպատրաստեցին նրա ուսմունքների համար, տեղ չկար նրա ուսուցանած ավետարանի համար: Տեղ չկար նրա հրաշքների

համար, նրա օրհնությունների համար, տեղ չկար աստվածային ճշմարտությունների համար, որոնց մասին նա խոսում էր, տեղ չկար նրա սիրո, ոչ էլ հավատքի համար։ Նա ասաց նրանց. «Աղուէսները որջեր ունին, եւ երկնքի թռչունները՝ բոյներ. բայց մարդի Որդին տեղ չունի որ իր գլուխը դնէ» (Մատթեոս Ը.20)։

Նույնիսկ մեր օրերում, չնայած անցել է երկու հազար տարի, կան շատերը, ովքեր ասում են նույն բանը, որ ասվել է այդ գիշեր Բեթլեհեմում։ «Տեղ չկա, տեղ չկա» (տես Ղուկաս Բ.7)։ Մենք տեղ ենք պատրաստում պարգևների համար, սակայն երբեմն տեղ չի պատրաստվում տվողի համար։ Մենք տեղ ունենք Սուրբ Ծննդյան շահամոլությունների և նույնիսկ Հանգստյան օրը գոհացնող բաներ փնտրելու համար, սակայն կան ժամանակներ, երբ տեղ չկա երկրպագության համար։ Մեր մտքերը լցված են այլ բաներով. տեղ չկա։[15]

Մինչդեռ գեղեցիկ է տեսնել Սուրբ Ծննդյան լույսերը . . . , ավելի կարևոր է, որ մարդկային կյանքերը պայծառ լուսավորված լինեն՝ ընդունելով նրան, ով աշխարհի լույսն է [տես Ալմա 38.9, ՎևՈւ 10.70]։ Իրոք որ մենք պետք է բարձրացնենք նրան որպես մեր առաջնորդ և օրինակ։

Նրա ծննդյանը նախորդող գիշերը հրեշտակները երգեցին. «Եւ երկրի վերայ՝ խաղաղութիւն, եւ մարդկանց մէջ հաճութիւն» (Ղուկաս Բ.14)։ Եթե մարդիկ հետևեն նրա օրինակին, սա կլինի խաղաղության և բոլոր մարդկանց հանդեպ սիրո աշխարհ։[16]

Ո՞րն է մեր պարտականությունն այսօր որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ։ Մենք պետք է ուշադիր լինենք, որ մեր անձնական կյանքում բառերը և գործերը արտացոլեն ավետարանը, ինչպես ուսուցանել է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսը։ Այն ամենը, ինչ մենք անում և ասում ենք, պետք է արտացոլի այն մեկ անմեղի օրինակը, ով քայլեց այս երկրի վրա, հենց Տեր Հիսուս Քրիստոսի։[17]

Ուսումնասիրության և ուսուցանման առաջարկներ

Հարցեր

- Վերանայեք զանազան ուղիները, որոնցով Փրկիչը օրինակ է սահմանել մեզ համար, ինչպես նշված է բաժին 1-ում: Ինչպե՞ս է Տիրոջ օրինակը ազդել ձեզ վրա: Ի՞նչ կարող ենք սովորել Իր մահկանացու կյանքի վերջին պահերին ցուցաբերած Նրա օրինակից:
- Նախագահ Հանթերը մեզ խորհուրդ է տվել «հարցնել ինքներս մեզ. «Ի՞նչ կաներ Հիսուսը», և ապա լինել ավելի խիզախ՝ գործելու պատասխանին համահունչ» (բաժին 2): Խորհեք, թե ինչպես կարող եք ավելի խիզախ լինել, երբ հետևում եք Փրկչի օրինակին: Ինչպե՞ս կարող ենք ուսուցանել այս սկզբունքը մեր ընտանիքներում:
- Ի՞նչ կարող են մեզ օգնել հասկանալ բաժին 3-ի ուսմունքները Հիսուս Քրիստոսին հետևելու մասին: Ի՞նչը կփոխվեր ձեր կյանքում, եթե դուք չունենայիք Փրկչի ուսմունքների և օրինակի ազդեցությունը: Ինչպե՞ս մենք կարող ենք դարձնել մեր կրոնը մեր ամենօրյա կյանքի ավելի մեծ մասը:
- Խորհեք, թե ինչ է ասում Նախագահ Հանթերը Փրկչի համար տեղ չլինելու մասին (բաժին 4): Ինչպե՞ս կարող ենք մեր կյանքում ավելի շատ տեղ պատրաստել Փրկչի համար: Ինչպե՞ս եք դուք օրհնվել, երբ ավելի շատ տեղ եք պատրաստել Նրա համար:

Առնչվող սուրբ գրություններ

Մատթեոս ԺԶ.24–27, Հովհաննես Ժ.27–28, ԺԴ.12–15, Ա Պետրոս Բ.21–25, 2 Նեփի 31.12–13, 3 Նեփի 12.48, 18.16, 27.20–22, ՎևՈւ 19.23–24

Օգնություն ուսուցչին

Յուրաքանչյուր անձնավորության տվեք երգարան: Հրավիրեք մասնակիցներին գտնել և կիսվել մի օրհներգով, որը վերաբերում է որոշակի հատվածների, որ նրանք կարդացել են այս գլխում:

Հղումներ

1. Thomas S. Monson, "President Howard W. Hunter: A Man for All Seasons," *Ensign,* Apr. 1995, 33.
2. Jon M. Huntsman Sr., "A Remarkable and Selfless Life," *Ensign,* Apr. 1995, 24.
3. Francis M. Gibbons, *Howard W. Hunter: Man of Thought and Independence, Prophet of God* (2011), 152.
4. In Jay M. Todd, "President Howard W. Hunter: Fourteenth President of the Church," *Ensign,* July 1994, 4–5.
5. *The Teachings of Howard W. Hunter,* ed. Clyde J. Williams (1997), 40–41.
6. "The Temptations of Christ," *Ensign,* Nov. 1976, 19.
7. "His Final Hours," *Ensign,* May 1974, 19.
8. "The Church Is for All People," *Ensign,* June 1989, 76–77.
9. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել։ *Ensign,* May 1994, 64; see also "He Invites Us to Follow Him," *Ensign,* Sept. 1994, 2–5; "Follow the Son of God," *Ensign,* Nov. 1994, 87.
10. "An Apostle's Witness of Christ," *Ensign,* Jan. 1984, 69.
11. "Exceeding Great and Precious Promises," *Ensign,* Nov. 1994, 8.
12. "To the Women of the Church," *Ensign,* Nov. 1992, 96–97.
13. "He Invites Us to Follow Him," 2, 4; see also "An Apostle's Witness of Christ," 69–71; Conference Report, Oct. 1961, 109.
14. "Standing As Witnesses of God," *Ensign,* May 1990, 60.
15. *The Teachings of Howard W. Hunter,* 41–42.
16. *The Teachings of Howard W. Hunter,* 44–45.
17. *The Teachings of Howard W. Hunter,* 45.

Տեսողական նյութերի ցանկ

Էջ 21. Լուսանկար ԲՅՀ Երուսաղեմի Կենտրոնի կողմից © Deseret News.

Էջ 44. *Կորած ոչխարը,* Դել Փարսոն

Էջ 47. Հատված *Հիսուսն ուսուցանում է ժողովրդին ափի մոտ* նկարից, Ջեյմս Տիսո:

Էջ 50. *Վախից դեպի հավատք,* Հովարդ Լայըն

Էջ 58. *Քամուն դեմ,* Լիզ Լեմոն Սվինդլ

Էջ 63. *Քանզի նա սիրեց նրան,* Ջեֆ Հայն

Էջ 72. *Քրիստոսը բժշկում է հիվանդին Բեթեզդայում,* Քարլ Հեյնրիխ Բլոխ, տրամադել է Բրիգամ Յանգ Համալսարանի պատկերասրահը

Էջ 76. *Ջոզեֆ Սմիթը Լիբերթի բանտում,* Գրեգ Ք. Օլսեն

Էջ 88. Հատված *Լավ խնամքի կարիք ունեցող պարզևը,* Վոլթեր Ռեյն

Էջ 102. *Ջոզեֆ Սմիթ Կրտսեր,* Էլվին Գիթինս

Էջ 108. *Ջոզեֆ Սմիթին տրված հայտնություն Եկեղեցու կազմակերպության մասին,* Ջուդիթ Ա. Մեր

Էջ 122. *Մի դիպչիր,* Մինեռվա Թեյչերթ

Էջ 185. *Ջոզեֆ Սմիթը տալիս է իր ձեռնափայտը Ջոզեֆ Նայթ Ավագին,* ՓոլՄան

Էջ 194. Հատված *Կորած ոչխարի փրկությունը,* Մինեռվա Թեյչերթ

Էջ 228. Հատված *Ի հիշատակ ինձ,* Վոլթեր Ռեյն, © IRI

Էջ 233. *Միշտ հիշեք Նրան,* Ռոբերտ Թ. Բարեթ

Էջ 256. Բուսաթ Ֆոտոգրաֆի

Էջ 268. *Մոկսես՝ օրենք տվողը,* Թեդ Հոնինգեր

Էջ 274. *Հոբը,* Գարի Լ. Քափ

Էջ 286. *Աբրահամը տանում է Իսահակին զոհաբերելու,* Դել Փարսոն, © IRI

Էջ 294. *Փոկչի զգեստի եզրին դիպչող կինը,* Ջուդիթ Ա. Մեր

Էջ 310. *Քրիստոսը բժշկում է հիվանդներին,* Ջեֆ Հայն

Էջ 317. *Կույր մարդու բժշկումը,* Քարլ Հեյնրիխ Բլոխ, տրամադրել է Ազգային պատմության թանգարանը, Ֆրեդերիկսբորգ դղյակ, Հիլրոդ, Դանիա: Չպատճենահանել

Էջ 342. *Ով Օրինյալ Հիսուս,* Ուոլթեր Ռեյն

Էջ 353. *Խոսքեր, որոնք չեն կարող գրվել,* Գարի Լ. Քափ

Էջ 359. *Արածեցրու իմ ոչխարները,* Կամիլ Քորի

Ցուցիչ

Ա

Ազնվություն
  Աստծո հետ, 275-76
  Նախագահ Հովարդ Վ. Հանթերի, 15-16, 269-70
  Տիրոջ հորդորները այդ մասին, 275-76
  անձնական արարքներում և գործարարության մեջ, 273-74
  բերում է ճշմարիտ երջանկություն, 275-76
  ինքներս մեզ հետ, 272, 275-76
  ձևավորվում է փոքր, սովորական բաներում, 276-277
  ուրիշների հետ, 275-76
  տաճար մտնելիս, 212
  տանը, 259
  Տես նաև Ազնվություն

Աղոթք
  Ջոզեֆ Սմիթի օրինակը, 88-89
  բոլոր ժամանակներում, 92-94
  երբ սկսում են ճանաչել Աստծուն, 312-14
  սուրբ գրությունների ուսումնասիրություն, 169, 175
  ստանալ գիտելիք և առաջնորդություն միջոցով, 89-90, 94-95
  տանը, 257, 259-60

Ամուսնություն
  Հովարդ Վ. Հանթերի և Քլեր Ջեֆսի, 9-10, 27-28, 179, 181, 239, 241, 253, 255
  Հովարդ Վ. Հանթերի և Քլեր Ջեֆսի, 27-28, 241
  ամրապնդել կապերը, 246-251
  անձնազոհություն, 248-49
  գթություն, 246
  երջանկություն, 245, 246-251
  խորհուրդ նրանց, ովքեր որոշում են, 242, 243
  կարգված է Աստծո կողմից և նախատեսված է հավերժական լինել, 241-42
  համագործակցությամբ Աստծո հետ, 242
  հավատարմություն, 246-47
  ձեռքբերովի վարվելակերպ է, 245
  միասնություն, 246
  մտերմության, 247-48
  ոչ մի օրհնություն չի մերժվի արժանավոր անձանց, ովքեր ամուսնացած չեն, 243-45
  պահանջում է մեր լավագույն ջանքերը ավետարանի սկզբունքներով ապրելու համար, 245
  սեր, 242, 245-47
  տաճարում, 214, 221, 242

Առաջին Տեսիլք, 76-79, 102-103

Ավետարան
  աշխարհի կարիքները, 61, 147, 301
  ապրել, ամուսնությունը երջանիկ է դարձնում, 245
  գործողության ծրագիր է, 318
  խոչընդոտները հաղթահարելը, 147-149
  հոգևոր աճի աստվածային ծրագիրն է, 96
  միակ ուղին է, որով աշխարհը կճանաչի խաղաղությունը, 73-76, 147, 301
  ուղերձ է բոլոր մարդկանց հանդեպ աստվածային սիրո մասին, 145

ուսուցում, 260-61, 323-335
վերականգնեց իր լրության մեջ, 105, 107, 136, 220
վերցնել, ուղղված ողջ աշխարհին, 143-152

Բ

Բարեվարքություն
Հոբի, 274-75
Հովարդ Վ. Հանթերի, 12-13, 269
Մեդրաք, Միսաք և Աբեդնագով, 282-83
պաշտպանում է մեզ չարից և օգնում է լինել հաջողակ, 274-75
տաճար մտնելիս, 212

Բարօրության ծրագրեր, 18

Բրիգամ Յանգի Համալսարանի Երուսաղեմի Կենտրոնը Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների համար, 28-30, 57, 144

Գ

Գթություն
Նախագահ Հովարդ Վ. Հանթեր, 295-96
ամուսնության մեջ, 246
աշխարհը մեծապես կշահի, 305
բերում է ուրախություն, 61
ընդգրկում է բոլոր մյուս աստվածային արժանիքները, 302
չի խափանվի, 304-305
քայլել ուղիով, ավելի վճռական, 303-304
Տես նաև Սեր

Ե

Երեխաներ
ծնողների պարտականությունները, 255-266
ովքեր շեղվել են ուղուց, 261-64
ուսուցանել, ավետարանը, 325
ուսուցանել օրինակով, 323, 325, 332
ուսուցանում. տաճարի մասին, 214

Երկնային Հայր
աղոթել, 93-96
գտնելը, կյանքի գերագույն նվաճումներից մեկն է, 311-12
խոստանում է օգնել և առաջնորդել մեզ, 88
հայտնվել է Առաջին Տեսիլքի ժամանակ, 102-103
ուսուցիչները հրավիրում են ուսանողներին փնտրել, 284-85
պարտավորություն, 281-292
սեր, 119-120, 145-48
ստանալ գիտելիք, պահանջում է ջանք, հնազանդություն և աղոթք, 312-314

Երուսաղեմի Կենտրոնը. *Տես* Մերձարևելյան ուսումնասիրությունների Բրիգամ Յանգ Համալսարանի Երուսաղեմի կենտրոնը

Երջանկություն
ամուսնության մեջ, 245, 246
գալիս է Հիսուս Քրիստոսին ճանաչելուց և հետևելուց, 45
գալիս է ազնվությունից, 270, 276
գալիս է մյուսներին ծառայելուց, 349
գալիս է պատվիրանները պահելուց, 79
դժվար պահերին, 76
սխալ համեմատությունները կարող են ոչնչացնել, 178-181

Զ

Զատիկ, 120, 231-234

Ը

Ընտանեկան երեկո, 13-15, 259
Ընտանեկան պատմության աշխատանք
  Հովարդ Վ. Հանթերի սերը դեպի, 217, 219
  եղեք խիզախ, 193-95
  նպատակն է, 222-23
  պետք է արագացնել, 39, 223-25
Ընտանիք
  աղոթք, 260
  ամենակարևոր միավորն է Եկեղեցում և հասարակության մեջ, 255-256
  գերազանցում է ամեն մի այլ հետաքրքրություն կյանքում, 255
  խորհուրդ, 260
  ծնողները գործընկերներ են ղեկավարման մեջ, 256-58
  ծնողները պետք է պաշտպանեն և սիրեն երեխաներին, 256-58
  սուրբ գրությունների ուսումնասիրություն, 166-67, 168, 169, 170
  օրհնվում է տաճարային աշխատանքի միջոցով, 212-15

Խ

Խաղաղություն
  Հիսուսը մեր աղբյուրն է, 48, 59-70
  ավետարանն է ապահովում միակ ճանապարհը, որով աշխարհը կիմանա, 60-63, 147, 301
  գալիս է Փրկչին առանց պայմանների ենթարկվելուց, 61
  դժվար պահերին, 64-66
  զարգացնել, կենդանի ավետարանով, 60-63
  տաճարը ուսուցման վայր է, 3, 205, 215
Խոնարհություն
  Հովարդ Վ. Հանթերի, 179, 181, 337, 340
  դժվարություններն օգնում են մեզ զարգանալ, 36, 72, 75, 92

Ծ

Ծառայություն
  Աստծուն մեր նվիրման չափման միավորն է, 297
  բերում է երջանկություն, 349
  բերում է երջանկություն, 62
  բերում է ճշմարիտ մեծություն, 179, 181, 184, 186-87
  զգոն եղեք անկախ ուրիշների գովասանքից, 350-51
  լուռ և աննկատ, 337, 339-349, 350-51
  կապված է ինչու, ոչ թե որտեղ հարցի հետ, 348-350, 358
  ուրիշներին նրանց դժվարությունների մեջ, 299-301
  փնտրել հնարավորություններ, 358
  փոքր և հասարակ ճանապարհներով, 339-349
Ծնողներ
  երեխաների, ովքեր շեղվել են ուղուց, 261-63
  համագործակցություն, 256-58
  պետք է ուսուցանեն իրենց երեխաներին ավետարանը, 256-60, 359
  պետք է պաշտպանեն և սիրեն երեխաներին, 256-58

Հ

Հաղորդություն
  Հովարդ Վ. Հանթերը բաժանում և օրհնում է, 4-5, 227, 231
  թարմացնել ուխտերը ճաշակելով, 149, 232-35
  հաստատվել է Փրկչի կողմից, 120, 232

Հայր Աստված. *Տես* Երկնային Հայր
Հայրեր
  պարտականություններ, 168, 170, 256-58, 260
  Տես նաև Ընտանիք; Ծնողներ
Հանթեր, Դորոթի (քույրը), 3-6, 20
Հանթեր, Ինիս Բերնիս Էգան Սթենթոն (երկրորդ կին), 34-35, 241
Հանթեր, Կլարա Քլեր Մեյ Ջեֆս (առաջին կինը), 8-10, 14, 15, 27-30, 57, 155, 179-181, 239, 241, 253, 255
Հանթեր, Հովարդ Վ.
  Ազնվություն, 12-13, 269-270
  Միարոնյան Քահանայության կարգում, 5, 227
  Բրիգամ Յանգի համալսարանի մերձարևելյան ուսումնասիրությունների Երուսաղեմի կենտրոնը, 23-25, 57, 144
  Գթություն, 5-6, 295-96
  ամուսնություն, Ինիս Սթենթոնի հետ, 34-35, 241
  ամուսնություն, Քլեր Ջեֆսի հետ, 9-10, 27-30, 179, 181, 239, 241, 253, 255
  առողջական խնդիրներ, 26, 28, 30, 53
  արձագանքներ, ռմբակոծման ահազանգին, 35-36, 57, 59
  դառնում է Եկեղեցու Նախագահը, 36-41, 131, 133
  դառնում է լրիվ տասանորդ վճարող, 155
  երաժշտական ընդունակություններ, 6, 7, 10, 253
  ծառայություն, Յուտայի Ծագումնաբանական Միությունում, 22, 39, 219
  ծառայություն, որպես Պոլինեզիական Մշակութային Կենտրոնի նախագահ, 22-24
  ծառայություն, որպես Տասներկուսի Քվորումի Նախագահ, 34-36
  ծառայություն, որպես Տասներկուսի Քվորումի անդամ, 20-22, 281-282
  ծառայություն, որպես եպիսկոպոս, 14-16
  ծառայություն, որպես պատմաբան, 23-24
  ծառայություն, որպես պատմաբան, 15-18
  ծնողներ, 4-8, 20-21, 203, 218
  ծնունդը, 3
  կազմակերպում է ցցեր Մեխիկո Սիթիում, 27, 40
  կարիերա, որպես իրավաբան, 15, 17-19, 22, 42, 281-82, 295
  կնքվել, ծնողների հետ, 20-21, 203
  համեստություն, 179, 181, 337, 340
  մահը, 41-42
  մանկությունը, 4-6
  մկրտություն, 4-5, 227
  ներքին խաղաղություն, 35-36, 57, 59, 340
  ոլորտ, 5, 15, 18
  որպես ամուսին, 28-29, 57, 179, 181, 239, 241
  որպես հայր և պապ, 14, 253, 255
  սեր, ավետարանի ուսումնասիրության հանդեպ, 8, 165, 309
  սեր, ընտանեկան պատմության հանդեպ, 217, 219
  սեր, սուրբ գրությունների հանդեպ, 165-66
  սեր դեպի, Սուրբ Երկրի հանդեպ, 24-25, 45-46

սովորում է աղոթել իր մորից, 4, 87
վաստակում է Իգլ Սքառութ մրցանակը, 5
վկայություն, 4, 36, 37, 42, 45, 72, 103, 105, 117, 119, 309, 311
օրհնում և բաժանում է հաղորդությունը, 5-6, 227, 231

Հանթեր, Հովարդ Վիլիամ Կրտսեր (Բիլի) (որդի), 12-13, 117

Հանթեր, Նելի Մարի Ռասմուսեն (մայր), 3-5, 20-21, 203, 218

Հանթեր, Ջոն Վիլիամ (Վիլ) (որդի), 3-4, 6-7, 20-21, 203, 218

Հավատք
Փրկչի հանդեպ ամենակարևորն է աշխարհում, 49-50
Փրկչի հանդեպ դժվարությունների մեջ, 50-53, 62-70, 87-88
գործել ըստ, վկայություն է տալիս, 318-19
թույլ է տալիս գտնել Աստծուն և իմանալ, որ Նա ապրում է, 311-13
մարդու կողմից, ով կույր է ծնվել, 315-16
մեզ տալիս է վստահություն բաների հանդեպ, որոնք տեսանելի չեն, 313-14

Հարություն, 49, 52, 117, 119, 121-129, 234

Հիսուս Քրիստոս
Եկեղեցու գլուխն է, 131, 133
Իր վրա վերցրեց մեր մեղքերը, թուլությունները, վիշտը և ցավը, 119-120
Խաչելությունը, 120
Հարությունը, 49, 117, 119, 121-129, 234
Քավություն, 49, 117, 119-121, 148-49, 234
աստվածային առաքելությունը, 45
խաղաղության մեր աղբյուրն է, 48, 59-70
կարիք իմանալու, 46-47
կենտրոնացնել մեր կյանքը, 1, 51-53
հայտնվել է Առաջին Տեսիլքի ժամանակ, 90, 103-104
հավատք, 49-52, 62-70, 78-79
հետևել օրինակին և ուսմունքներին, 1, 40, 49-50, 181, 276, 301-302, 353-361
հույսի և ուրախության միակ աղբյուրն է, 47-48
միակ հաստատուն ճանապարհն է, 45, 195
ուսուցիչները հրավիրում են ուսանողներին փնտրել, 328-29
սեր, 119-120, 295, 302-303, 355-356
սուրբ գրությունների ուսումնասիրությունը մեզ մոտեցնում է, 175
սպասավորում էր հաղորդությունը, 120, 232
վերահաստատել է Իր Եկեղեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, 105-106
տեղ պատրաստել, 360
օգնում է մեզ դժվարությունների ժամանակ, 53-57, 59-70, 78-79, 120

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի
Հիսուս Քրիստոսը գլուխն է, 131, 133
առաջնորդվում է հայտնությամբ, 134, 135, 137-38
ավետարանը բոլոր ազգերին ուսուցանելու առաքելությունը, 148-150
վերահաստատվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, 104-105

Հնազանդություն
Աբրահամի, 286-87
Հեսույի, 284-85
անկախ նրանից, թե ինչ են անում ուրիշները, 284-85
ընտրել խստության ուղին, 285-87
պետք է ուղեկցի հավատքին, 287-289
սուրբ գրությունների ուսումնասիրություն, 167-68
Տես նաև Պարտավորություն

Զ

Զախորդություն
Հովարդ Վ. Հանթերի փորձառությունները, 36, 41-42, 117
Ջոզեֆ Սմիթի փորձառությունները, 75-76
Քավությունն օգնում է մեզ, 53-57, 58-66, 87-88, 120
անհրաժեշտ մասն է մահկանացու կյանքի, 51, 64
դիմակայել, դառնալ իսկական մեծություն, 186-187
լինել լավատես, 76
կարող է խոնարհեցնել և կատարելագործել մեզ, 36, 72, 75, 92
մեր աճի և փորձառության համար է, 75-76
մեր առաջընթացի համար Աստծո ծրագրի մասն է, 71-74
շրջվել դեպի Փրկիչը, 36, 50-53, 62-70, 87-88

Մ

Մայրեր
պարտականություններ, 168, 170, 256-58
Տես նաև Ընտանիք; Ծնողներ

Մարգարեներ
ականջ դնելը, բերում է հոգևոր առատություն, 136
ականջ դնելը, պահում է մեզ ճիշտ ուղու վրա, 136-38
ընտրվել էին դեռ ծնվելուց առաջ, 134
հաստատում, 211
ճշմարտության ուսուցիչներ, 107
շարունակական հայտնություն, 131-141
որպես Աստծո խոսնակ բոլոր տնտեսություններում, 107, 133-34
որպես տեսանողներ, 107-108
ուղղություն է տալիս այսօր, 134-35

Մաքրաբարոյություն, 207

Մեծություն
աշխարհիկ սահմանումը, հաճախ մոլորեցնող է, 178-181
գալիս է, երբ անում ենք այն բաները, որ Աստված է սահմանել որպես կարևոր, 191-92
գալիս է, երբ հետևողական ենք փոքր բաներ անելիս, 183-84
գալիս է ծառայելու այն ձևերից, որոնք հաճախ աննկատ են մնում, 186-187
գալիս է հաստատակամ լինելու հետևանքով, 186-187
գալիս է փոքր քայլերիցՏերկար ժամանակի ընթացքում, 190
ցույց է տվել Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից, 184-86

Միսիոներական աշխատանք
Եկեղեցու առաքելությունն է, 146-47
Տիրոջ ձեռքը, 143
անձնական պարտավորություն է, 148-49
բոլոր ազգերի համար է, 144-48
խոչընդոտները հաղթահարելը, 149-150
և Քավություն, 148-49

Մկրտություն
Հիսուսի, 354
Հովարդ Վ. Հանթերի հայրը, 6–8, 203
Նախագահ Հովարդ Վ. Հանթեր, 4–5, 227
ճիշտ ձևը, 242
ուխտ, 149, 196, 200

Մկրտություններ մահացածների համար, 214, 220-21

Մորմոնի Գիրքը, 166, 175-76

Յ

Յուտայի Ծագումնաբանական Միություն, 22, 39, 219

Ն

Նոուել, Նենսի (նախամայր), 103

Ո

Ուսուցանել
Հոգով, 327-28
բարիք անելու կարևորությունը, Եկեղեցում, 323-24
օրինակով, 323, 325, 332

Ուսուցիչներ
կոչ են անում ուսանողներին որոնել Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին, 328-29
ձգտում են օգնության հասնել անձնավորությանը, 329-31
ուսուցանում են Հոգով, 327-28
ուսուցանում են օրինակով, 323, 325, 332
չպետք է ստեղծեն նվիրվածություն իրենց հանդեպ, 328-29
օգնում են ուսանողներին ապրել սրտի փոփոխություն, 335-36
օգնում են ուսանողներին զարգացնել վստահություն սուրբ գրությունների հանդեպ, 326-27

Պ

Պարտավորություն
Աբրահամի, 286-87
Հեսույի, 284-85
Մեդրաք, Միսաք և Աբեդնագով, 282-83
ապրող անդամները ձգտում են ունենալ բացարձակ, 291-92
ավելին է, քան սոսկ ներդրում, 282-84
ցույց տալ, անկախ նրանից, թե ինչ են անում ուրիշները, 284-85

Պոլինեզիական Մշակույթի Կենտրոն, 22-24

Ջ

Ջոզեֆ Սմիթ. *Տես* Սմիթ, Ջոզեֆ

Ս

Սեմինարիայի ծրագիր, 17

Սեր
ամուսնության մեջ, 242, 245-47
աշակերտության հիմնաքար, 296-97, 300-301
ավելի կատարյալ ուղի, 303-306
բոլոր մարդկանց համար է, 60-61, 145-47, 296-307
դժվարությունների մեջ գտնվողների համար, 299-301
ընտանիքում, 256-266
նրանց հանդեպ, ում կարող է դժվար լինել սիրել, 298-299
Տես նաև Գթություն

Սմիթ, Ջոզեֆ
Առաջին Տեսիլք, 88-89, 103-104
Եկեղեցին վերահաստատվեց, 105-106
դժվարությունները, 75-76
կյանքը և գործերը, 109-113
հոգ էր տանում և ծառայում ուրիշներին, 184-86

մարգարե էր, տեսանող և հայտնող, 107-108
օրինակ, աղոթելիս, 88-89
օրինակ, սուրբ գրություններին դիմելիս, 88-89

Սուրբ Երկիր, 21-24, 39-40

Սուրբ Հոգի
ազնվություն, որը պահանջվում է Հոգին ունենալու համար, 275-76
արագացնում է տեսանողիների հոգևոր տեսադաշտը, 109
ուսուցանել, 342-343
տալիս է հոգևոր գիտելիք, 90-91, 95, 169

Սուրբ գրություններ
խորացված ուսուցման օրինակ, 173-75
հասկանալ, պահանջում է հետևողական ուսումնասիրության աղոթքով, 170-72
ուսումնասիրել, ամենաշահավետն է բոլոր ուսումնասիրություններից, 166-67
ուսումնասիրել, ընտանիքներում, 166-67, 168, 169, 170
ուսումնասիրել, օգնում է մեզ սովորել և հնազանդվել Աստծո կամքին, 167-68
ուսումնասիրություն, մեզ մոտեցնում է Քրիստոսին, 175-76
ուսումնասիրություն, օգնում է ուսուցանվել ի վերուստ, 88-89
ուսուցանել, 328-29
օգնել ուրիշներին զարգացնել վստահություն, 326-27

Վ

Վկայություն
ինչպես ստանալ, 311-319
հասկանալ, 319
հավատքի վրա հիմնվելով գործելը կտանի դեպի, 318-19

Տ

Տաճար
ամուսնություն, 214, 221, 242
անդամակցության խորհրդանիշ, 1, 39, 203-206
աշխատանք, պետք է արագացնել, 39, 225-27
արարողություններ, անհրաժեշտ են փրկության համար, 219-220
արժանի լինել երաշխավորագրին, 1, 205-207
լինել տաճար այցելող ժողովուրդ, 1, 3, 214-15, 225-27
խաղաղության վայր է, 3, 205, 215
մկրտություններ մահացածների համար, 220-21
տաճարային աշխատանքի օրհնությունները, 207-10

Տասանորդ
Հովարդ Վ. Հանթերը դառնում է լրիվ տասանորդ վճարող, 155
Տիրոջ սահմանումը, 156
վճարելը, արտոնություն է, ոչ թե բեռ, 158-59
վճարելու օրհնությունները, 160-61
օգտագործումը, 158-59
օրենքը, գոյություն է ունեցել սկզբից ի վեր, 156-57
օրենքը, պարզ է, 156
և պարզն է, և պարտականություն, 158-59

Տնային ուսուցում, 6–8, 203-204, 219, 256

Տուն
բարեվարքություն, 259
ծնողները գործընկերներ են ղեկավարման մեջ, 256-58
ծնողները ձևավորում են հոգևոր մթնոլորտը, 257

ծնողները օրինակ են սահմանում, 257
հաջողությունը, պետք է լինի ամենամեծ նպատակը, 266
պետք է լինի սիրո, աղոթքի և ավետարանի ուսուցման վայր, 260-61
պետք է սուրբ վայր լինի, 229-30
քահանայություն, 256-57

Փ

Փորձություններ. *Տես* Զախորդություն

Ք

Քահանայություն
ամուսնության մեջ, 246, 263
տանը, 257-58, 260
և տաճարում, 219-220, 221-22

Քավություն. *Տես* Հիսուս Քրիստոս, Քավություն

Քրիստոս. *Տես* Հիսուս Քրիստոս

Օ

Օրինակ
ծնողների, 257
ուսուցում, 323, 325, 332

Վ

վերջին օրեր
հավատարիմ Սրբերը չպետք է վախենան վերջին օրերի նեղություններից, 79-86
մեծ հույսի և հուզումնալի ժամանակ, 81-83

Ք

քիչ ակտիվ անդամներ
հրավիրել է վերադառնալ Եկեղեցական ակտիվությանը, 39, 195-201
փնտրել կորած ոչխարներին, 196-201

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ENGLISH
4 02088 61000 1
08861 000